Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Llin
1986

1999

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ՍԿՍԵԱԼ Ի ՄԱՀՈՒԱՆԷ ՄԵԾԻՆ ԱԻԳՈՍՏԵՈՍ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՏՆ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1473

ԱԱ-0861

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1872

4 1986-60

ЗВ 1993

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ.

Տակիտոս համարի ծնեալ 'ի Թերնի քաղաք մերձ 'ի Հռովմ, և ոչ ամ ծննդեան նորա և մահուան է գիտելի. զի գրեթէ վաստակօք ևեթ իւրովք ծանօթ է նա մեզ։ Եկեաց յաւուրս Վեսպասիանոսի կայսեր. և էր սակաւ ինչ երիցագոյն քան զկրտսերն Պլինիոս, որպէս 'ի միոջէ 'ի նամականւոյ սորա է յայտ։ Վասն հանճարոյ և իմաստութեան իւրոյ 'ի ժամանակակցաց իսկ իւրոց մեծարեալ էր. և յաւուրց անտի Վեսպասիանոսի սկսաւ ամբառնալ յաւագութիւն, և առ յաջորդօք նորա եհաս մինչև 'ի բղեշխութիւն։

Գլուխ վաստակոց նորա են Տարեգիրքն, որ բովանդակեն զժամանակ չորից ինքնակալաց, Տիբերի, Կալիգուլայ, Կլաւդեայ, և Ներոնի. բայց Կալիգուլայ ժամանակին պատմութիւն կորուսեալ է ամբողջ, իսկ Կլաւդեայն վերջին մասն ևեթ հասեալ առ մեզ։ Ոչ ոք 'ի պատմագրաց հաւասարէ ոճոյ նորա. ամենայն ուրեք 'ի պատմութեան իւրում սիրելի առնէ զառաքինութիւն, և ատելի զյոռութիւն. տեսութիւնք նորա հանճարեղք և խորաղնինք, պեղէ զխորս սրտից առանց ճգան և բռնի հետազօտութեան։ Ի համառօտութեան անդ իւրում հզօր են ասացուածք նորա. և նկարագիր կենդանատիպք և ճշգրիտք՝ առանց արուեստակեալ զարդուց. և է յամենայն ժամանակի գովեալ առ իմաստունս որպէս օրինակ պատմագրաց։

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ Ա.

Ա. Այրքայք 'ի սկզբանէ կացին 'ի Հռովմ. զաղա-
տութիւն ապա անդ և զբդեաշխս կացոյց Բրուտոս։
Իշխանապետք անդ սահմանեալ ժամանակաւ ընտ-
րէին, և ոչ տասնպետաց իշխանութիւն քան զեր-
կեամ՛մի և անդր ապարթանէր։ Հազարապետաց զօ-
րականին սաստ բդեշխական ոչ ընդերկարեաց։ Ոչ Կին-
նայ և ոչ Սիլլայի եղև երկարատև հրամատարութիւն.
Պոմպէի և Կրասոսի վաղ 'ի Կեսար անց իշխանու-
թիւն. և սպառազինութիւնք Լեպիդեայ և Անտոնիո-
սի յանկ էլին յԱւգոստ, որ իշխանական անուամբ
զաշխարհն՝ պարտասեալ յընտանի գժտութեանց՝ ընդ
իւրև նուաճեաց։

Վաղնջականի ազգին Հռովմայեցւոց յաջողութիւնք
և արկածք յականաւոր մատենագրաց արձանագրե-
ցան. և ոչ պակասեցին արք գերահանճարք ժամանա-
կագրել զկրս Աւգոստեայ, մինչչև շողոմից զվերհերոտու-
թիւն 'ի ներքս մուծեալ։ Վասն որոյ Տիբերի, Կալիգու-
լեայ, Կլաւդեայ, և Ներոնի պատմութիւնք առ ինքնա-
կալութեամբն նոցա առ երկիւղի, և յետ մահու նո-
ցա՝ զի դեռ ևս վառ և բորբոք էր ատելութիւն՝ ստա-

յոդք աւանդեցան։ Այսր աղագաւ խորհեցայ սակաւուք և զԱւգոստեայ աւուրցն վերջնոց անցանել, և ապա զՏիբերի և որ զհետ նորին ինքնակալաց՝ի գրի առնել զպատմութիւն, յերկաքանչիւրոցն ևս անայլայլակ՝ յատելութենէ և յաչառութենէ, որոց պատճառք քաջ՝ի բացեայ են յինէն։

Բ. Յետսպանութեան Բրուտոսի և Կասիոսի, յորժամ անզէն և անզօր կայր աշխարհն, և Պոմպէոս՝ի Սիկիլիա նկուն լեալ, Լեպիդոս կապուտ կողոպուտ, Անտոնիոս՝ի կենաց զրաւեալ, և՝ի կուսակցաց Կեսարու չէր ոք մնացեալ զօրավար բաց յԱւգոստեայ, սա հրաժարեալ յերապետական անուանէ՝ բդեաշխ լոկ զանձն ընծայեցոյց. և իբր այն թէ՝ի պաշտպանութիւն ռասկին հազարապետականաւ ևեթ շատացեալ իշխանութեամբ, զզօրականն պարգևօք, զժողովուրդն համբարովք, և զամենեսեան բարեկենդանութեամբ խաղաղութեան յինքն յանկուցեալ, գլուխ՝ի վեր տակաւ ամբառնայր, զիշխանութիւն ծերակուտին զաւագանւոյն և զօրինաց յինքն գրաւել՝ առանց ուրուք նմա ընդդէմ դառնալոյ։ Զի հզօրագոյնք անկեալ էին՝ի ձակատամարտի, կամ վտարանդի լեալ. իսկ յայլոց աղնուականաց որք միանգամ յօժարագոյնք էին՝ի ծառայութիւն, բարձի և մեծութեանց հասանէին. և՝ի յեղափոխելոյ պետութեան բարգաւաճեալք, որ ինչ՝ի ձեռին կայր՝ աներկեան քան զնախնին կեղակարծ լաւագոյն համարէին։ Կուսակալութեանց իսկ այս կարգ պետութեան ոչ ինչ անհաճոյ թուէր, քանզի երկնչէին յիշխանութենէ ծերակուտին և ժողովրդեան, վասն գժտութեան ընդ միմեանս զօրաւորաց և ապահովութեան աւագանւոյն, և ոչ ինչ օգնէին օրէնք՝՝՝ի զօրութենէ՝՝՝ի փառամոլութենէ և՝՝՝ի կաշառոյ բռնաբարեալք։

Գ. Բայց Ավգոստ՝ի հաստատութիւն տէրութեան իւրոյ զԿլաւդիոս Մարկելլոս՝ զքեռորդի իւր դեռ ևս պատանեակ՝ ամբարձ՝ի քրմապետութիւն, և շինուածապետ արքունի զնա կացոյց. զՄ. Ագրիպպաս զանազան հայրենեաց, զնշանաւոր՝ի մարտի և զհամահարզ՝ի յաղթութիւնս իւր, ամբարձ կրկին՝ի բդեշխութիւն. և՝ի մեռանել Մարկելլեայ, զնա ինքն իւր փե-

սայացոյց, և զՏիբերիոս Ներոն և զԿլաւդիոս Դրուսոս, զերկոսին խորթ որդիս իւր, ինքնակալս մեծարանաց անուամբ կոչեաց՝ մինչդեռ պայծառանայր ազգատոհմ իւր։ Զի զորդիս Ագրիպպայ զԿայիոս և զԼուկիոս 'ի կայսերազունս ընկալեալ էր, և մինչև նոցա զզգեստ մանկութեան 'ի բաց մերկացեալ՝ իշխանս մանկտուոյն կամակար զնոսա փութացեալ էր կոչել, և սահմանել զնոսա 'ի բդեշխութիւն, թէպէտ և վեր 'ի վերոյ ժրխտելնոցա զայն պատճառեալ։

Բայց Ագրիպպաս վաղամեռիկ լեալ, Լ. Կեսար'ի գընալ իւրում 'ի բանակն սպանիական, և Կայիոս 'ի դառնալ իւրում 'ի Հայաստան աշխարհէ խոց կարեվէր՝ կանխահաս օրհասիւ կամ մօրուին իւրեանց Լիւիայ նենգութեամբն զբաւեալ 'ի կենաց, և Դրուսոս վաղ իսկ յառաջագոյն վախճանեալ, Տիբեր ևեթ 'ի խորթ որդւոց Աւգոստեայ մնայր ժառանգ ամենայնի, որդեգրեալ 'ի նմանէ, և գահակից ինքնակալութեանն և հաղորդ հազարապետական իշխանութեան յանդիման ամենայն բանակին ընկալեալ, ոչ ևս որպէս յառաջն գաղտնածածուկ հնարիւք մօրն՝ այլ յայտնի նորին սադրանօք։ Զի այնպէս տիրեալ էր նա ծերութեանն Աւգոստեայ, մինչև տալ նմա տարագրել 'ի Պլանասիա կղզի զմիակ թոռն իւր զԱգրիպպաս Պոստումոս. որ թէպէտ և յառաքինութիւնս տարտամ և 'ի կորով մարմնոյ խիզախ, այլ ոչ իւիք էր վնասապարտ։ Սակայն Աւգոստ զորդի Դրուսոսի զԳերմանիկ կացոյց զօրավար ութից լեգէոնաց, որ յածէին զեզերքք Հռենեայ. և ստիպեաց զՏիբեր առնուլ զնա իւր յորդեգիր, թէպէտ էր նորա 'ի տան որդի հասեալ 'ի պատանեկութիւն. այլ պատսպարանս իւր ամենայն ուստեք հնարէր Աւգոստ հայթայթել։ Ոչ ուրեք զայնու ժամանակաւ մղէր պատերազմ, բայց միայն ընդ գերմանացիս. և այն առ 'ի բառնալ զնախատինս կոտորածի զօրացն Կուինտիլեայ Վարոսի, քան առ տենչ զսահմանս ինքնակալութեանն ընդարձակելոյ, կամ արժանի ինչ քաջութեան մրցանակի գործելոյ։ Խաղաղութիւն էր առ տնին, նոյն անուանք աւագորերոյ. մանկտին առ հասարակ յետ ակտիական յաղթութեան և բազումք ի ծերոց 'ի քաղաքական պատերազմունս ծնեալ, նուա-

զունք ոմանք մնային՝ որոց տեսեալ էր զՀասարակապետութիւն։

Դ. Այսպէս կարգ քաղաքին յեղափոխեալ, նախնին և անեղծ սովորութիւն անհետ լեալ, և հաւասարութիւն քաղաքացոց 'ի բաց բարձեալ, ակնարկութեան և հրամանաց իշխանին ամենեքեան պատկառկային. և չէր ինչ ուստեք կասկած երկիւղի, ցորչափ Աւգոստ առոյգ հասակաւ՝ անձին և ընտանեաց և խաղաղութեան աշխարհին պահ ունէր։ Այլ իբրև 'ի վերայ հասեալ ծերութեան հանդերձ հիւանդութեամբ սպառնայր նմա վախճան, և փոփոխութեան կարգաց պետութեան արծարծանէր յոյս, կէսք ընդ վայր զբարութեանց ազատութեան զրոյցս առնէին, բազումք կասկածէին 'ի պատերազմաց, այլք ցանկային. և բազմագոյնք յոյժ այնոքիկ էին, որք զՀանդերձեալ տերանցն պէսպէս վՃիռս տուեալ՝ ասէին. Ագրիպպաս դժնեայ, և արհամարհանօքն և ևս դժնէացեալ, ոչ տիովքն և ոչ 'ի փորձոյ բաւական է այնքանոյ բեռին. Տիբերիոս Ներոն, թէպէտ և հասուն տիովք և քաջ 'ի մարտի, այլ ընդաբոյս ազգատոհմին Կլաւդեայ հնացեալ գոռոզութիւն և նշանք անգթութեան ստէպ 'ի նմա 'ի յայտ գան՝ որչափ և ինքն ծածկել ջանայցէ։ Մնեալ յարքունիս 'ի մանկութենէ, և յաստիս տիոցն 'ի բդեշխութիւն և 'ի յաղթանակս սովորեալ, 'ի ժամանակի իսկ՝ յորում պատՃառանօք առանձնութեան տարագրեալ կայր 'ի Հռոդոս՝ ոչ յայլ ինչ պարապէր, բայց 'ի քինախնդրութիւն 'ի մեղմեխանս և 'ի գաղտագողի գարշանս։ Հանդերձ սոքիմբք և մեր նորա կանայի փառամոլութիւն, որով հասանէ մեզ կալ ընդ ձեռամբ կնոջ միոյ և մանկանց երկուց, որ ընկՃեալ կեղեքեսցեն զՀասարակապետութիւնն։

Ե. Այսոքիկ և սոցին սակի բանք յածէին 'ի բերանս։ Բայց Աւգոստեայ զայրանայր ախտն, և կասկած եղեռան էր զԼիւիայ, քանզի լու եղև՝ Աւգոստեայ ամնովք յառաջ յայտնեալ զխորհուրդ իւր ընտրելոց մտերիմ բարեկամաց, և երթեալ էր 'ի Պլանասիա յայց Ագրիպպայ, ուղեկից ընդ իւր առեալ միայն զՓաբիոս Մաքսիմոս։ Արտասուք բազում երկուսեք հեղեալ էին անդ և գութք յուզեալ, ուստի

ակնկալութիւն էր դարձի պատանւոյն'ի տուն հայրենի. և Մաքսիմոսի յայտնեալ էր զայն կնոջ իւրում Մարկեայ, և Մարկեայ 'ի վերը հանեալ զայն Լիւիայ։ Իրաւեկ եղև Աւգոստ. և 'ի մեռանել Մաքսիմոսի, զորմէ գոյր կասկած բռնամահ գոլոյ, յողբս Մարկեայ 'ի յուղարկաւորելն լսելի եղև՝ զի բողոքէր զանձնէ մահաւիթ առն իւրում լեալ։

Իցէ այս որպէս և է, սակայն Տեբերի այն ինչ'ի Լիւրիկէ հասեալ՝ արագարագ մօրն նամականւով յետս կոչեցաւ, և չէ իսկ յայտ թէ 'ի ժամանել նորա'ի Նոլա՝ տակաւին կենդանի էր Աւգոստ թէ մեռեալ։ Բանզի Լիւիայ շուրջ պատեալ զապարանսն զօրք, և զնա նապարհս արգելեալ փակեալ, լուրս աւետաւորս ստէպ հրատարակէր, մինչև պատրաստեաց զամենայն ըստ թելադրելոյ ժամանակին. և ապա նոյնօրին միանգամայն ծանուցաւ օրհաս Աւգոստեայ, և Ներոնի առնուլ զիշխանութիւնն։

Զ. Ինքնակալութեան Ներոնի նախկին եղեռն եղև մահ Աւգրիպպայ Պոստումեայ։ Հարիւրապետն՝ թէպէտ և արիասիրտ՝ յեղակարծումն 'ի վերայ հասեալ, սակայն ոչ դիւրաւ կարաց զնա սպանանել։ Ոչ ինչ Ներոն զնորա սպանմանէն ասաց 'ի ծերակուտին, իբր այն թէ 'ի հօրէ իւրմէ յԱւգոստեայ այնպէս պատուէր տուեալ հազարապետին՝ որ 'ի պահ կայր նմա, ընդ պարզել ոգւոյն՝ զրաւել զնա 'ի կենաց։ Բազում ապաքէն և դառնապէս բողոք կալեալ էր Աւգոստեայ զգնացից պատանւոյն, և զտարագրութիւն իսկ նորա վճռով ծերակուտին սահմանեալ, այլ չէր երբէք յայն դժնէութիւն հասեալ'ի մահ մատնել զոք յիւրոցն. և չէ իսկ կարծել զի յապահովութիւն ըրջուին զթոռն իւր 'ի մահ վճարեալ ինչ։ Հաւանելի ևս է, Ներոնի և Լիւիայ ձեպեալ զմահ պատանւոյն՝ որ կասկածելին էր նոցա և դժպհի, միոյն յահէ և միւսոյն'ի մօրուա կան ատելութենէ դրդեալ։

Ի գալ հարիւրապետին բերել զրոյց ըստ զինուորական օրինի զկատարման հրամանին, պատասխանի ետ ինքնակալն՝ թէ չէր իւր տուեալ հրաման այնպիսի, և թէ համար զայնմանէ մնայր նմա տալ ծերակուտին։ Զայն իբրև գիտաց Սալլուստիոս Կրիսպոս՝ որ գիտակն

էր գաղտնեացն, և իւր իսկ զՀրովարտակ հրամանին առ հազարապետն յղեալ, երկեաւ զի զիւրև եղեռնն անկանիցի. և երկուստեք'ի վերայ հասեալ վտանգ, թէ պէտ զկեղծիսն և թէ զՀշմարտութիւն յայտնեսցէ, ազգ արար Լիւիայ՝ մի զառտնին գաղտնիս, մի զիսորհուրդս մտերմաց, և մի զպաշտօն զօրականին հրապարակել. մի և Տիբերի զզօրութիւն իշխանութեանն բեկանել՝ յատեան ծերակուտին հանելով զամենայն, ուր ինքնակալութեան նախամանութիւն էր՝ միում եթէ և ոչ բազմաց տալ համար։

Է. Բայց բդեաշխք 'ի Հռովմ, ատենակալք և ասպետք 'ի կոր կործանեալ, և որչափ երևելագոյն ոք էր՝ այնչափ առաւել կեղծաւորեալ, ելևելս զիրերօք առնէին զդէմն յարդարել, զի մի զուարթք ընդ մահ ինքնակալին Աւգոստեայ, և մի տխուրք ընդ ինքնակալութիւն Տիբերի Թուիցին, զարտօսր ընդ խնդութիւն և զգանգատ ընդ շողոմն խառնելով։ Նախ քան զամենեսին Սեքստոս Պոմպէոս և Սեքստոս Ապուլէոս բբդեաշխք երդումն ետուն ինքնակալին, և զհետ նոցա Սեւոս Ստրաբոն և Կ. Տուրրոնիոս, նա ատենական գնդաց հրամատար և սա համբարապետ. և ապա ծերակոյտն զօրականն և ռամիկ։ Զի 'ի ձեռն բդեշխից, որպէս 'ի նախնումն հասարակապետութեան, սկսանէր Տիբեր զամենայն. և զի չև ևս էր աներկեւան ինքնակալութիւն իւր, զՀրովարտակ իսկ յատեան զծերակոյտն գումարելոյ, հազարապետական իշխանութեամբն՝ զոր առ Աւգոստեաւ ընկալեալն էր՝ արար, և զայն սուղ և անիշխանական բանիւք՝ խորհուրդ 'ի ծերակուտէն խնդրելով 'ի սպաս մեծարանաց հօր իւրոյ Աւգոստեայ, և ոչ 'ի դիականէ նորա կամելով մեկնել՝ զայն եթէ 'ի հասարակաց պաշտամանց պահեալ անձին։

Սակայն 'ի մեռանել Աւգոստեայ՝ նշանս ատենական գնդաց ըստ օրինի ինքնակալաց էր բաշխեալ, Թիկնապահս զիւրև սպառազէն առեալ և զայլ սպասս ինքնակալութեան. զօրք զհետ նորա 'ի հրապարակի, և զօրք յարքունիս. և հրովարտակս ինքնակալօրէն առ զօրականն արարեալ, ոչ ուրեք կասկած ցուցանելով բայց միայն 'ի խօսել իւրում'ի ծերակուտին։ Բանզի

խիթայը թէ գուցէ Գերմանիկ, յոգնախումբ լեգէոնս և նիզակակցաց անբաւ զօրութիւն ունելով ընդ ձեռամբ և շնորհ մեծ առ ժողովրդեան, անդստին ինքնակալել կամիցի քան թէ սպասել մնալ ինքնակալութեան։ Թնամէր և զհամբաւ իւր, իբր թէ հրաւիրանաւ հասարակաց քան 'ի փառասիրութենէ կնոջ և որդեգրութեամբ զառամելոյ ուրուք ածեալ յինքնակալութիւն։ Միւս և ս պատճառք կեղծեացն երկմտութեան ելին ապա 'ի յայտ, զի զխորհուրդս սրտից աւագանւոյն հետազօտէր, զբանս և զդէմս նոցա դիտելով, և յեղեռն համարեալ նոցա զայն՝ պահէր 'ի մտի։

Ը. Յառաջնումն ատենի ծերակուտին ոչ այլ ինչ առաջի արար 'ի խորհուրդ, բայց միայն սահմանել զբնպաս մեծարանաց Աւգոստեայ։ Ի կուսանաց Եստեայ ածաւ կտակ նորա 'ի մէջ, յորում զՏիբեր և զԼիւիա ժառանգս իւր յայտ առնէր, որդեգրեալ զԼիւիա յազգատոհմն յուլեան, և անուն յաւելեալ նմա Աւգոստա. իսկ զհետ նոցա զԹոռունս և զԹոռնեայս, և ապա զաւագորեար քաղաքին՝ յորոց բազումք ատելի էին նմա, այլ 'ի պարծանս և 'ի փառաւորութիւն իւր առ յապայս՝ կացուցանէր զնոսա իւր ժառանգս։ Հրիտակք նորա ոչ ինչ աւելի էին քան զհասարակաց քաղաքայնոց. բայց միայն զի Թողոյր նա ժողովրդեան զերեքարիւր երեսուն բիւր սեստերտ, և ռամկին հինգ բիւր. հազար դահեկան մէն մի զինուորի ատենական գնդաց, իսկ լեգէոնականաց իւրաքանչիւր քաղաքայնոց երեքարիւր։

Յայնժամ խորհուրդ կալան որ ինչ 'ի մեծարանս Աւգոստեայ արժան էր սահմանել. և այսոքիկ գլխաւորապէս սահմանեցան։ Ըստ առաջարկութեան Գալլոսի Ասինեայ, զհանդէս յուղարկաւորութեանն ածել ընդ դուռն յաղթանակաց. և ըստ Լ. Ալբոնտեայ զտախտակս օրինաց սահմանելոց 'ի նմանէ և զանուանս պարտելոց ազանց տանել առաջի։ Յաւել Վալերիոս Մեսսալա, զի նորոգել արժան էր ամ ըստ ամէ վերբստին զուխտ հաւատարմութեան առ Տիբեր. և 'ի հարցանել նորա՝ թէ ո՞յր հրամանաւ առաջարկէր զայն, ետ պատասխանի՝ թէ ինքնօրէն, և զի որ ինչ հասա-

բակապետութեանն էն պատկանաւոր՝ ինքնահրաման զայնցանէ օրէն էր նմա խորհել, թէպէտ և դժպհի այլոց թուեցեալ։ Նոր էր օրինակ շողումին։ Զայն բարձին ապա խորհրդականք առ հասարակ, զի Աւգոստեայ բառնալ՝ի յուս և՝ի խարոյկ անդր տանել։ Ցեղի էտ նոցա ինքնակալն իբր ակամայ, գոռոզաբար իմն ակնածութեամբ. և հրովարտակ արար ժողովրդեան, մի որպէս երբեմն առ յոյժ մեծարանաց աղմկեալ էր նոցա զՀանդէս յուղարկաւորութեան դիւցազնին Կեսարու՝ խնդրել և արդ զդիակն Աւգոստեայ այրել՝ի հռովմէական հրապարակին, այլ՝ի դաշտն արիսական՝ որ՝ի գերեզման նորին էր սահմանեալ։

Յաւուր Հանդիսի յուղարկաւորութեանն անցեալ կացին զօրքն որպէս թէ՝ի պահ, ուժգինս՝ի ծաղը դրդեալ զայնոսիկ՝ որոց ականատես լեալ էր կամ ականջալուր՝ի հարց իւրեանց դեռ այն ինչ ծառայութեանն, և ձախողելոյ դարձին իւրեանց յազատութիւն, յաւուր յորում իշխանապետին Կեսարու սպանումն թուէր կիսոց ոճիր մեծեղեռն, իսկ այլոց արութիւն դիւցազնական։ Եւ ծիծաղէին, զի յայնժամ՝ի պահ ալևորի ինքնակալին՝ որոյ երկայնաւուրս թագաւորեալ և ժառանգս իւր ընդդէմ հասարակապետութեան հզօրացեալս էր թողեալ՝ կային զօրք սպառազէնք, զի մի դամբանականն հանդէս աղմկեսցի։

Թ. Զհետ այսորիկ բազում բանք յաղագս Աւգոստեայ եղեն, յոգունց զնմանէ տեսութիւնս առնելով անոտիս, իբր զի ինքնակալութիւն նորա և օրհաս՝ի նմին աւուր էին պատահեալ, և զի՝ի Նոլա՝ի նմին սենեկի զկեանսն էր վճարեալ, յորում և հայր իւր Ոկտաւիոս։ Դարձեալ և՝ի պարծանս համարէին նմա, զի այնքանիցս կացեալ էր բդեաշխ՝ որչափ Վալերիոս Կորուլինոս և Կ. Մարիոս միանգամայն էին կացեալ, և զի՝ի հաղարապետական իշխանութեան երկարատևեալ էր զամս երեսուն և եօթն, և զանուն ինքնակալի քսանիցս միով աւելի ընկալեալ, և՝ի բազում յայլ աւագութիւնս հնարեալս կամ յաւելեալս վասն նորա։ Բայց՝ի խոհականագունից կէսք գովէին, այլք պարսաւէին զվարս նորա։ Առաջնոցն գովել, զի գութ հայրասէր և կարիք հասարակապետութեան՝

որ լուծանեն զօրէնս՝ ստիպեալ էին զնա 'ի քաղաքա-
կան պատերազմ, յոր չէ մարթ ձեռնարկել ըստ օրինաց
և ոչ զդէմ ունել. և զի կարի ինն ներողամիտ ընդ Ան-
տոնիոս և ընդ Լեպիդոս 'ի վրէժխնդրութիւն սպանո-
ղաց հօր իւրոյ լեալ էր։ Այլ զի սա 'ի վատութիւն
և նա 'ի զեղխութեան եղերունս զառաջաւ, չինայր
երկպառակութեան հայրենեացն այլազգ ինչ ելս հնա-
րից գտանել, բայց միոյ ուրուք ունելով զիշխանու-
թիւն, ոչ զթագաւորի և ոչ զիշխանապետի, այլ զիշ-
խանի ևեթ ընկալեալ զանուն 'ի հաստատութիւն հա-
սարակապետութեան։ Եւ դարձեալ զի ովկիական ա-
լեաք և գետովք հեռաստանեաք շուրջ զսահմանս ինքնա-
կալութեան պարսպեաց. զի զլեգէոնս, զգաւառս, զնա-
ւատորմս, և զամենայն ինչ ընդ իրեարս կցորդեալ
ամրացոյց. զի զիրաւունս ընդ քաղաքացիս, և հաւասա-
րութիւն ընդ նիզակակիցս արար. և զի զՀռովմ զարդա-
րեալ պայծառացոյց, ոչ ուրեք 'ի բռնութիւն ձեռն-
արկեալ՝ բայց 'ի տնօրինել աշխարհին զխաղաղու-
թիւն։

Ժ. Այլք ընդհակառակն'ի բաղբաղայս նման զգութ
հայրասէր և զկարիս հասարակապետութեան համա-
րէին, և թարմատար պատանւոյն առ իշխանասիրու-
թեան զհինաւուրց զօրականն զիւրև ասէին ածեալ
պարգևաք, զօր գումարեալ, բանակ կազմեալ, զլե-
գէոնս Անտոնիոսի կաշառաբեկ արարեալ, և 'ի նպաստ
կուսակցացն Պոմպէի կեղծաւորեալ։ Եւ ապա իբրև
զիշխանութիւն դատաւորի և զխուրձս վՀռով ծերա-
կուտին 'ի բուռն էարկ, 'ի մեռանել Հիրտիոսի և Պան-
սայ, (Թէպէտ 'ի Թշնամեաց կենդանեաւ, կամ թէ թոյն
'ի վերս Պանսայ հեղեալ, և Հիրտիոս յիւրմէ զօրա-
կանէն դաւով ինքնակալին իցէ սպանեալ,) զզօրս եր-
կաքանչիւրոցն գրաւեաց. և զբդեշխութիւն յակա-
մայս ծերակուտին զբռամբ ածեալ, զզէնս՝ զորս ընդ-
դէմ Անտոնիոսի ընկալեալ էր՝ շրջեաց ընդդէմ հասա-
րակապետութեան։ Թո՛ղ զտարագրութիւն քաղաքաց-
ւոց, և զբաշխս անդաստանաց, զորս այնոքիկ իսկ՝ որ
առնէին՝ պարսաւէին։ Շնորհեալ հայրենի վրէժխնդ-
րութեանն նորա զԿասիոսի և զԲրուտեանց մահ, (Թէ-
պէտ և զհեռ անձնական պարտ էր նմա 'ի բաց դնել

յօգուտ հասարակաց,) սակայն զՊոմպէոս պատՁառանօք խաղաղութեան, և զԼէպիդոս կեղծեօք բարեկամութեան դաւեաց. և Անտոնիոս դաշնադրութեամբն 'ի Տարենտոն և 'ի Բրունդիսիոն, և հարսանեօք քեռն խաբեալ, զնենգաւոր խնամութեանն մահուամբ ելոյծ զպատուհաս։ Յաջորդեաց ապաքէն խաղաղութիւն, այլ արեամբ ներկեալ. արտաքոյ նախՁիրք Լոլլիոսի և Վարոսի, և 'ի ներքս 'ի քաղաքին սպանեալ Վարրոնեանք Եգնատեանք և Յուլեանք։

Եւ ոչ յառտնին գնացս նորա խնայէին. զի յափշտակեալէր նորա զկին Ներոնի, և խաղ զքրմապետօք ասարարեալ՝ հարցանելովք թէ օրէն էր ամուսնաւորել զկին յղացեալ յայլմէ, և չև զզաւակ 'ի լոյս ընծայեալ։ Նմա գրէին 'ի մեղս և զզեղխութիւնս Տեդեայ և զԼեդիոսի Պոլլիոնի, և զգնացս Լիւիայ՝ զի էր հասարակապետութեան մայր դժնեայ, և կայսերականի ազգատոհմին մօրու դժնէագոյն։ Եւ զի ոչ ինչ եթող նա պահել դից 'ի պաշտօն, մեհենաք և դրօշելովք պահանջեալ պաշտել 'ի քրմաց և 'ի Փլամինեանց։ Եւ զի զՏիբեր իսկ ոչ առ սիրոյ նորա, և ոչ առ խնամոյ հասարակապետութեան կացոյց իւր յաջորդ, այլ գիտելով զգոռոզութիւն նորա և զանգթութիւն՝ խորհէր փառս անձին առ յոռեգոյն յաջորդաւն հայթայթել։ Քանզի Աւգոստ՝ ամաք ինչ յառաջ խնդրեալ 'ի ծերակուտէն կացուցանել միւսանգամ հաղարապետ զՏիբեր, ինչ ինչ զձևոյ նորա զբարուց և զգնացից 'ի ներբողէն զնա յաւելեալ էր, որովք 'ի վերին երեսս ջատագովելով պարսաւէր զնա։

ԺԱ. Ի կատարել յուղարկաւորութեան ըստ օրինի, սահմանեցաւ Աւգոստեայ մեհեան և պաշտօն դիցական։ Եւ ապա յաղաչել ամենեցուն զՏիբեր 'ի դահակալութիւն, նա ընդ բանս ածէր, զընդարձակութիւն ինքնակալութեանն և զապիկարութիւն իւր 'ի ներքս բերէր, դիւցազնին ևեթ Աւգոստեայ զօրութեան մոռացն ասէր զայնքանոյ բեռին բերել ծանրութիւն. և զի 'ի յանձանձանս մասին ինչ իրաց աշխարհին կոչեցեալ 'ի նմանէ, զփորձ առեալ գիտէր թէ քանի՛ դժուարին և բազմավտանգ բեռն էր հանուրց իրաց տեսչութիւն. և զի 'ի քաղաքի՝ ուր էր այնքան որեալ

երևելի՝ էր պարտ զամենայն 'ի մի ոք առնել ապաստան, զի օգնականութեամբ իրերաց դիւրագոյն զկրս հասարակապետութեան յանձանձել կարէին յոգունք։ Այլ այս ամենայն վեր 'ի վերոյ քան թէ ճշմարտութեան էին բանք. այն զի ուր անկեղծութեամբն իսկ բարբառէր, 'ի բնութենէ՞ թէ 'ի սովորութեանէ՝ չունիմ ասել, բայց տարտամ և մթին էին խօսք նորա. իսկ աստ զի ամենևին ծածկել զմիտն հնարէր, ևս քան զևս կեղակարծ և երկդիմի իմաստք բանիցն լինէին։

Բայց ատենակալք որոց այն ևեթ էր երկիւղ՝ զի մի կասկածել ինչ ընդ բանս նորա թուիցին, աղերս և արտասուս և աղաչանս բազկատարածք առ պատկեր Աւգոստեայ և առ ոտս նորին իսկ Տիբերի հեղուին։ Յայնժամ հրաման ետ ածել և ընթեռնուլ զմատեանս՝ յորս արձանագրեալ կային ստացուածք հասարակապետութեան, թէ քանի՞ քաղաքացիք էին նորա, քանի՞ նիզակակիցք, քանիո՞ն տորմիղք նաւաց և թագաւորութիւնք և գաւառք, քանի՞ հասք և մուտք, քանի՞ ելք և պարգևք, զորս Աւգոստեայ իւրով իսկ ձեռամբ գրեալ էր զամենայն, և խրատ 'ի վերայ յաւելեալ՝ մի՞ ևս զսահմանս ինքնակալութեան ընդարձակել, առ ահի՞ արդեօք թէ առ նախանձու՝ ոչ է յայտ։

ԺԲ. Եւ մինչդեռ ծերակոյտն յայնպիսի անարդ աղաչանս խոնարհէր, ել ընդ շրթունս Տիբերի՝ չբաւել ինքնին 'ի յանձանձանս համօրէն ինքնակալութեանն, այլ որ ինչ և մասն սահմանեսցի նմա՝ զայնորիկ յանձն առնուլ զհոգ։ Յայնժամ Ասինիոս Գալլոս ասէ. Եւ զո՞ր մասն հասարակապետութեան կամիցիս, Կեսար։ Իսկ նա յեղակարծ հարցուածո

թեան ընդ այնչափ ամն վաստակեալն էր՝ 'ի մէջ էած։ Այլ ոչ կարաց ողոքել զՏիբեր, որ վաղ իսկ զայրացեալն էր ընդ նա վասն գեր'ի վերոյ քան զկարգ քաղաքացւոյ թեակոխելոյ նորա, ածեալ իւր կին զՎիպսանիա դուստր Մարկոսի Ագրիպպայ՝ որ իւր իսկ յաւաջագոյն լեալ էր կին, և զգոռոզութիւն Պոլլիոնի Սինիոսի հօր իւրոյ յանձին բերելոյ։

ԺԳ. Յետ այնորիկ Լ. Արոնտիոս ոչ բազում ինչ ընդհատ 'ի բանից Գալլոսի գրգռեաց զցասումն Տիբերի. իբր ոչ եթէ հեռ ինչ յառաջագոյն էր Տիբերի ընդ նմա, այլ զի Ճոխ էր Արոնտիոս և Ճարտար, և վասն մեծամեծ բարեմասնութեանցն գերահամբաւեալ՝ կասկածելի էր նմա։ Քանզի Աւգոստ 'ի յետին զրուցատրութիւնս իւր 'ի խօսելն զայնցանէ, որ կարողքն են և ոչ թեկն ածեն զիշխանութեան, և որ ապիկարք և ցանկան իշխել, և որք կարեն և ցանկան, յաւել. Մարկոս Լեպիդոս կարող իսկ է, այլ ոչ ինչ հոգայ զիշխանութենէ. Գալլոս Սինիոս ցանկայ իշխանութեան, այլ անկարող է. իսկ Արոնտիոս չէ անարժան, այլ ձեռնեարկց է 'ի բուռն ածելոյ զիշխանութիւն, եթէ դէպ տայցէ։

Ի միաբանել ատենին զառաջնոցն, կէսք փոխանակ Արոնտեայ առաջարկէին զԿնէոս ոմն Պիսոն. բայց ապա ամենեքին, բաց 'ի Լեպիդեայ, վասն ամբաստանելոյ իւրեանց յայլևայլ յանցանս զՏիբեր՝ ցուցան պարտաւորք. ևս և Կուինտոս Ատերիոս և Մարկոս Սկաւրոս կասկածոտի առնն եղեն դժպհի. Ատերիոս, զի ասաց. Մինչև ցե՞րբ, Կեսար, թողուցուս անիշխան զհասարակապետութիւնն. և Սկաւրոս, զի ասաց. Ցուսալի է զի մի 'ի դերև լիցին աղաչանք ծերակուտին առ այն, որ ոչ երբէք հազարապետականաւն իշխանութեամբ զդէմ կալաւ խորհրդոց բդեշխիցն։ Զ Ատերիոս անդէն և անդ կշտամբեաց. իսկ առ Սկաւրոս, ընդ որում ոչ անհաշտ մթերեալ պահէր 'ի սրտի, լուռ եթէ եկաց։ Եւ յաղաղակէ ամենեցուն և յաղաչանաց իւրաքանչիւրոցն պարտասեալ, զիջանէր տակաւ՝ ոչ յանձն առնուլ զինքնակալութիւն, այլ դադարել 'ի հրաժարելոյ ևս յայնմանէ, և վախճան առնել թախանձանաց։ Ատերիոսի 'ի խնդիր թողութեան մտեալ 'ի

պալատն, յանկանել առ ոտս Տիբերի՝ որ զգնայրն անդ, փոքր միս ևս՝ և հասանէր մահ 'ի Թիկնապահաց. զի ըստ դիպաց կամ 'ի բազկաց աղաչաւորին գԹեալ, գլորեցաւ Տիբեր։ Այլ և ոչ վտանգաւ կենաց այնքա- նոյ առնն ցածեաւ նա 'ի ցասմանէն. մինչև Ատերիոսի դիմել առ Աւգոստա, և 'ի յոգնաԹախանձ պաղատանս նորա գտանել պատասպարան։

ԺԴ. Ոչ խնայեցին 'ի փաղաքշանս և առ նոյն ինքն Աւգոստա. ոմանք ասէին կոչել զնա մայր, այլք՝ յորջորջել զնա ծնօղ հայրենեաց, և բազումք ևս՝ յաւելուլ յանուն կայսերն որդի Յուլեայ։ Բայց ինքնակալն վեր 'ի վերոյ պատճառելով 'ի չափու ունել զմեծարանս կանանց, և նովին չափաւորուԹեամբ յիւրսն իսկ վարել, այլ ստուգիւ առ նախանձու և զփառս կնոջ համարելով իւր կորանս, ոչ նուիրակ եԹող նմա սահմանել, ոչ բագին որդեգրուԹեան, և ոչ այլ ինչ յայսպիսեաց աստի։ Այլ խնդրեաց տալ Գերմանիկեայ կեսարու զփոխանակի բդեշխի իշխանուԹիւն, և յղել պատգամաւորս՝ տանել առ նա զՀրովարտակ իշխանուԹեանն, միանգամայն և զտրտմակցուԹիւն իւր ընդ մահ Աւգոստեայ։ Իսկ վասն Դրուսոսի չխնդրեաց ինչ, զի կարգեալ էր նա բդեաշխ, և անդ իսկ 'ի քաղաքին էր։ Անուանեաց և երկոտասանս՝ տուեալ իշխանուԹիւն՝ 'ի նոցանէ ընտրելոյ կուսակալս, ըստ Թուոյ՝ որ սահմանեալն էր յԱւգոստեայ. և 'ի յորդորել զնա ծերակուտին յաւելուլ և այլս, հրաժարեաց երդմամբ՝ չելանել ըստ սահման։

ԺԵ. Զայս առաջին նուագ իշխանուԹիւն ազգային ժողովոյ 'ի բանակէն 'ի ծերակոյտն էանց. զի ցայսժամ ԹԷպէտ և կարևորագոյնք յիրաց 'ի կամաց ինքնակալին սահմանէին, սակայն և ինչ ինչ 'ի միաբանուԹենէ ցեղից սահմանէր։ Ռամիկն ոչ ինչ զկորստենէ իրաւանցն արար բողոք, բայց մնոտի ևԹ քրԹմնջանօք. իսկ ծերակոյտն մտադիւր զայն յինքն գրաւեաց, զերծեալ 'ի բաշխոյից և 'ի վատ աղերսանաց, շատանալով Տիբերի արս ևԹ չորս առաջարկել յընտրուԹիւն, առանց հետամտուԹեան ընտրելիս։ Ցայսժամ խնդրեցին ռամկապետք ծախիւք իւրեանց հանդիսել զխաղս, որք յանուանէ Աւգոստեայ 'ի տարե-

1473

գիրս անցեալ, աւգոստականք յորջորջեսցին։ Այլ յաշխարհին գանձուց սահմանեցան ծախք, առ 'ի ձև յաղթականաց երևել նոցա յասպարիզին, բայց ոչ 'ի կառս։ Եւ ապա հանդէս խաղուց տարեկանաց էանց յատենակալ անդր, որում հասանէր դատել 'ի մէջ քաղաքացնոց և եկաց։

ԺԶ. Մինչ դեռ այս իրք էին 'ի Հռովմ, վտարանջեցին զօրք 'ի Պաննոնիա. և վտարանջութեանն ոչ այլ ինչ պատճառք էին, բայց զի 'ի փոխել իշխանին՝ տեղի գտանեն աղմուկք, և մարտ քաղաքական ընծայէ յոյս ձոխութեան։ Լեգէոնք երեք կային 'ի միասին 'ի զօրանիստս ամարայնի, և զօրավար նոցա էր Յունիոս Բլեսոս. որոյ 'ի լուր մահուն Աւգոստեայ և թագաւորելոյ Տիբերի՝ յաւուրս սգոյ և խնդութեան խափանեալ էր զօրինաւոր հրահանգս զօրականին։ Աստի յառաջ եկն 'ի զօրս անդ համարձակութիւն, հերձուած, հրապոյրք խորհրդոց չարաց, իղձք զեղխութեան և պարապոյ, և ատելութիւն կրթութեան և աշխատութեան։ Էր 'ի բանակի անդ Բերկենիոս ոմն, տեսարանական ձևացութեանց երբեմն վերակացու, և ապա ռամիկ զինուոր, յանդգնախօս և 'ի վարժս գուսանաց ուսեալ զխռովարարութիւն։ Սա զանփորձս, և որք 'ի մահուն Աւգոստեայ կասկածէին ձախողելոյ հանգամանաց զօրականին՝ գրգռէր տակաւ 'ի գիշերային խօսակցութիւնս, կամ յերեկոյի ժողովեալ զիւրև զապիրատս՝ յորժամ լաւ որեարն մեկնէր 'ի բաց։ Եւ իբրև յաւել ընդ իւր և այլ խռովարարս, խօսեցաւ ընդ զօրսն և ասէ.

ԺԷ. Ընդէր ելդ մեզ հարիւրապետաց ոմանց և սակաւագունից և հազարապետաց հնազանդել. Երբ իշխիցեմք, եթէ ոչ առ նորով ինքնակալաւս՝ մինչդեռ իշխանութիւն յերերի կայ՝ ելս իրացդ աղերսանօք կամ զէն 'ի ձեռին առնել։ Շատ իսկ է այսքանեաց ամաց վատութիւնս երեսնամեայ և քառասնամեայ ծառայութեան՝ յորում ծերացեալս եմք, և բազումք ևս 'ի մէնք խեղք և վիրաւորք մարմնով։ Զի և ոչ յարձակելս մերում 'ի զինուորութենէ՝ վախճան առնի ծառայութեանս. այլ կալեալք ընդ դրօշիւ, զնոյն աշխատանս այլով անուանակոչութեամբ կրեմք։ Եւ եթէ

յետ բաղում այնքան արկածից տոկայցեն և ուրուք կեանք, տարաշխարհիկ այնուհետև վարեալ՝ զՀախինս դաշտաց կամ զխոպանս լերանց իբրև ագարակս ընդունի 'ի վարձ։ Զինուորութիւնս ինքնին տաժանաւոր է և անբեր. տասն դանկաց 'ի սակ առօրեայ վաճառեմք զհոգի և զմարմին. սովաւ զձորձ զգէնս զվրան, սովաւ զփրկութիւն 'ի հարստահարութենէ հարիւրապետաց և զխուն ինչ հանգիստ 'ի վաստակոց հասանէ մեզ գնել։ Զիք իսկ գանից և վիրաւորութեան, ձմերայնոյ դառնութեան և տաժանաւոր ամարայնոյ, արիւնախանձ մարտի և ամուլ խաղաղութեան, չիք իսկ և չիք վախճան։ Մի այն մնայ մեզ Հար, պայմանօք մտանել 'ի զինուորութիւն, սահմանեալ սակ առօրեայ՝ դենար մի, և ազատութիւն 'ի ծառայութենէ 'ի լրումն վեշտասան ամի, անտի և անդր մի՛ և յանձն առնուլ կալ ընդ դրօշիւ. և 'ի պատերազմի՝ վարձ առ ձեռն պատրաստ։ Գումարտակք՝ ատենականք՝ որոց դենարքն երկու մէն միոյ զինուորի են վարձք, և որք յետ վեշտասան ամաց դառնան 'ի տունս իւրեանց, մի՛թէ առաւելագունի՞ց քան զմեզ դիմագրաւեն վտանգաց. ոչ ընդ վայր հարկանեմ զվաստակս պահակապանաց քաղաքայնոց. այլ մեք բանակեալք 'ի մէջ ազգաց վայրենեաց, 'ի խորանաց աստի մերոց տեսանեմք զթշնամին։

ԺԸ. Յայնժամ ռամիկապայ զօրականն զաղաղակ հարեալ խառնաձայն, 'ի բողոք պէսպէս՝ ոմն զկապուտակս գանիցն և այլք զալիս, կէսք զձորձս մաշեալս և այլք զմերկութիւնս մարմնոյ ցուցանէին։ Եւ 'ի զայրանալ և և աղմկին՝ խորհեցան լեգէոնքն երեքին խառնել 'ի մի. այլ փառասիրութիւն արգել զխորհուրդ նոցա, իւրաքանչիւր ուրուք 'ի լեգէոնաց զնախադասութեան թեկն ածեալ։ Ապա այլ խորհուրդ կալեալ, զարծուէնշանսն զերեսին և զդրօշս գումարտակաց 'ի մի վայր ածին, և կանգնէին հողաբլուր դալարազգեստ, բեմ 'ի վերայ ամբառնալ, հեռագոյն և առնել զկայս իւրեանց երևելի։ Ի շտապ տագնապի գործոյն 'ի վերայ հասեալ Բլեսոս, սաստէր, մերթ զմին և մերթ զմիւսն արգելոյր, և գոչէր. Յիս մանաւանդ զձեռս ձեր շաղախեցէք, թեթևագոյն լիցի եղեռն սպանանել զզօրավար ձեր քան դրժել ինքնակալին. կամ հա-

ւատարիմն կենդանեաւ իմով զնեգէոնադ կալայց, կամ մահուամբ հասուցից ձեզ հուպ ընդ հուպ ապաշաւ։

ԺԹ. Բայց զօրականն ոչ դադարէր 'ի կանգնելոյ զՀողաբլուրն, մինչև հասուցին զայն գրկաւ չափ 'ի բարձրութիւն. ապա յետ այնորիկ յաղթեալք 'ի հաստատութենէ զօրավարին, ձեռնթափ եղեն 'ի գործոյն։ Եւ Բլեսոս ձարտարիսուութեամբ բազմաւ՝ յաւել. Ոչ աղմկաւ և ամբոխիւք արժան է ըղձից զօրականին առ կայսր հասանել. ոչ առաջնոց առ նախնի ինքնակալս, և ոչ ձեր իսկ առ Աւգոստ խնդիր ինչ այսպիսի անակընկալ արարեալ է. ոչ իսկ է 'ի դէպ 'ի սկզբան աստ իշխանութեան նորա յաձախել նմա հոգս։ Իսկ եթէ փորձ ինչ փորձել կամիցիք 'ի խաղաղութեան, զոր և ոչ յաղթողք 'ի քաղաքական պատերազմունս խնդրեցին, ընդէ՞ր առ ոտն կոխելով զհնազանդութիւն և զզինուորական օրէնս՝ 'ի բռնութիւն մտաբերէք։ Ընտրեցէ՛ք պատգամաւորս, և յաւելէ՛ք նոցա աստէն ինձ լու 'ի լու հրահանգս։ Ի ձայն բարձր սահմանեցին արձակել 'ի հրեշտակութիւնն յայն զորդի Բլեսեայ զՀաղարապետ զօրաց, խնդրել ևեթ զարձակուրդ յետ վերշտասան ամի զինուորութեան, զայլ խնդիրս պահեալ առյապայ՝ յետ ընդունելոյ զառաջինն։ Երթ պատանուոյն արար վայրիկ մի խաղաղութիւն. բայց զօրականն խրոխտանայր՝ 'ի տեսանել զորդի զօրավարին աղերսանացն իւրոց լեալ պատգամաւոր, զփորձ առեալ ածելոյ ուժգին զբռամբ՝ զոր չկարէրն ածել հնազանդելով։

Ի. Բայց գունդք՝ որ յառաջ քան զաղմուկն յղեալ էին 'ի Նաւպորտ առ 'ի պահ ուղեաց և կամրջաց, և վասն այլոց պիտոյից, իբրև գիտացին զվտարանջութիւն բանակին՝ խլեցին զդրօշս, սկսան աւար հարկանել շուրջ 'ի գիւղորէս, և 'ի Նաւպորտ իսկ՝ որ սակաւ ինչ ընդհատ էր 'ի գիւղորէից, յարձակեցան ծաղու և թշնամանօք, և ապա հարուածովք իսկ 'ի հարիւրապետս՝ որք արգելուին զնոսա. և մանաւանդ ընդ Աւսիւ ատեն Հռուփոս հրամատար բանակին զայրագնեալ՝ յափշտակեցին զնա 'ի կառաց, բարձին 'ի նա կարասի, և վարէին զնա զառաջեաւ՝ հարցանելով նմա ընդ խաղ. Հաձի՞ լցէ քեզ գնալ ծանրաբեռն ընդ երկայնութիւն

ուղղոյդ։ Քանզի Հռուփոս ընդ ռամիկսպային կացեալ ընդերկար, և ապա հարիւրապետ, և յայնժամ հրամմտար լեալ բանակին, զհին և զնիստ հրահանգս նոր ոգէր. և ծերացեալ'ի Ճիգն և 'ի վաստակս, այնչափ խստագոյնս վարէր ընդ զօրականն, որչափ առաւել վաստակեալն էր։

ԻԱ. Ի գալ հասանել սոցա՝ վերատին յուզեալ աղմուկ, ասպատակք սփռեցան շուրջանակի։ Ցոմանս 'ի նոցանէ Բլեսոս, մանաւանդ զաւարառուս, յահարկու թիւն այլոց հրամայեաց գան հարկանել և արկանել'ի բանտ. քանզի տակաւին լսէին նմա հարիւրապետք և լաւք'ի զօրականէն։ Նոքա ընդդէմ դարձեալ ունելեացն՝ փարէին զծնգովք որոց շուրջն կային, մերթ յանուանէ զնոսին ձայնեալ, և մերթ իւրաքանչիւր ոք զիւր գումարտակ զգունդ և զլեգէոն յորմէ էրն՝ գոչելով, զի ամենեցուն նոյն աղէտք'ի վերայ կային։ Միանգամայն և թշնամանս'ի զօրագլուխն արձակեալ՝ զերկինս և զդիս վկայ կոչէին, և ոչ թողուին ինչ առ 'ի գրգռել զհեռ զգուած զերկիւղ և զզայրոյթ։ Եւ խուռն դիմեալ՝ ըզբանտս խորտակեցին, զկապեալս արձակեցին, և ընդ դասալիքս և ընդ մահապարտս խառնեցան։

ԻԲ. Ցայրանայր և ևս աղմուկն, յաճախէին պետք ապստամբաց. և Վիբուլենոս ոմն 'ի ռամիկ զօրականէն յանդիման Բլեսեայ ամբարձեալ'ի վերայ ուսոց զինուորակցացն, 'ի մէջ ամբոխին՝ որ գէտակն կայր տեսանել որ ինչ առնելոցն էր, ասէ. Դուք անմեղացս այսոցիկ և հիքաց հատուցիք զլոյս և զշունչ, այլ ո՞ եղբօր իմում տացէ կեանս, ո՞ զեղբայր իմ ինձ դարձուսցէ.'ի գերմանական բանակէն յղեալ էր նա առ ձեզ վասն իրաց հասարակաց, և 'ի գիշերիս յայսմիկ եւ Բլեսոս փողոտեալ զնա սուսերաւորացն՝ որ կան առ նմա զինեալ 'ի կորուստ զօրականին։ Այլ տուր Բլեսոս պատասխանի, ո՞ւր զդի նորա ընկեցեր. և ոչ թշնամիք 'ի մարտի զրկեն զոք 'ի թաղմանէ. թո՛ղ ինձ համբուրիւ և արտասուօք ամոքել զցաւս իմ, և ապա սրախողխող կորո և զիս. բայց միայն զի լեցի սոցա տալ զմեզ հողոյ, ոչ ինչ այլ ունելով մեր յանցանս, բայց զի զօգուտ լեգէոնացն խնդրէաք։

ԻԳ. Եւ զօրացուցանէր զՀրապոյրս զայսոսիկ արտա-

սուրբ, զկուրծս և զերեսս բաղխելով բռնցի։ Եւ ապա ինքեալ յուսոց կրելեացն զնա, և անկեալ Թաւալեալ առ ոտս միոյ միոյ 'ի զօրականէն, այնպիսի արհաւիրս 'ի նոսա և զայրոյթ արկանէր, զի կէսք 'ի նոցանէ զթիկ նապահս սուսերաւորս Բլեսեայ, և կէսք զայլս 'ի սպասաւորացն նորին կալեալ կապէին, այլք 'ի խնդիր դիականն շուրջ սփռեալ։ Եւ եթէ չհաւաստէր հուպ ընդ հուպ ոչ ուրեք գտանել զդիակնն, և սպասաւորքն 'ի տանջանս մատուցեալ՝ եթէ ոչ ուրանային զսպանութիւնն, և ոչ եղբայր ոք երբէք Վիրուլենեայ լեալ թէ գայր 'ի յայտ, փոքր միւս ևս՝ և սպանանէին զզօրավարն։ Բայց զհազարապետս և զվերակացու բանակին 'ի բաց վարեալ՝ զկարասի նոցա կողոպտեցին, և սպանին զՎուկիլլիոս հարիւրապետ՝ որում անուն ըստ զինուորական կատականաց կոչէին Միւս այլ. զի 'ի բեկանել գանաձեծիւ զօրականին զգաւազան իւր ուռենի՝ միւս այլ խնդրէր բարձրաձայն, և զհետ երկրորդին՝ միւս այլ (1)։ Եւ 'ի խոյս տալ այլոց՝ զմի ևեթ 'ի նոցանէ կալան զԿլեմէս Յուլիոս, որ արագամտութեամբն թուէր աջողակ բերան լինելոյ զօրականին. մինչև լեգէոնք ինքնին ութերորդն և հնգետասաներորդ ընդդէմ միմեանց 'ի զէն պատրաստէին, խնդրելով նոցա 'ի մահ զհարիւրապետն մականուանեալ Սիրպիկիոս՝ որում սոքա պաշտպան կային, եթէ ոչ ինն երորդի լեգէոնին զօրականն աղերսէր հանդերձ սպառնալեաք՝ եթէ աղերսանաց ոչ լսէին։

ԻԴ. Տիբեր՝ որ 'ի Թաքստեան կայր, և զձախողակրս առ հասարակ Թաքուցանէր, ստիպեցաւ 'ի լուր արկածիցն զորդի իւր ընդ գլխաւորս քաղաքին՝ հանդերձ երկոքումբք թիկնապահ գումարտակաք՝ յղել անդր, ոչ ինչ յայտնի տուեալ նոցա հրաման, որպէս զի ըստ հարկի իրացն կարասցեն գործել։ Եւ գումարտակացն աւելի քան զօրէն հանապազօր տուաւ օժանդակ այրընտիր 'ի զօրականէն. յաւելաւ և մեծ մասն թիկնապահ այրուձիոյն, և գունդ հզօր 'ի գերմանացւոց՝ որք 'ի պահ կային յայնժամ ինքնակալին։

(1) Ուռ կամ բարուռնակ որթոյ նշանակ էր հարիւրապետաց և նովաւ գանաձեծ առնէին զյանցաւորս 'ի զօրականէն։

Եւ ատենապետն Ելիսոս Սեանոս, այր մեծարոյ առ Տիբերի, աջակից Ստրաբոնի հօր նորա, խորհրդական տուաւ պատանւոյն, և դատաւոր այլոց 'ի վարձ և 'ի պատիժ։ Ի մերձենալ Դրուսոսի՝ Էլին նմա ընդ առաջ լեգէոնք առ 'ի սպաս, այլ ոչ զուարթք որպէս սովոր էին, և ոչ դրօշուք վառեալ, այլ խառնիխուռն տխրատեսիլ, և 'ի դէմն նոցա ընդ կերպարանօք թախծութեան երևէր ստահակութիւն։

Իե. Իբրև եմուտ նա 'ի բանակեստղ անդր, պահս 'ի դրունս կացուցին, և գունդս սպառազէնս յայլ և այլ կողմանս բանակին. իսկ այլք առհասարակ խուռն բազմութեամբ շուրջ պատէին զատեանն։ Կայր Դրուսոս 'ի միջի, խնդրէր ձեռամբացի լուութիւն. նոքա մերթ զաչս 'ի բազմութիւն իւրեանց դարձուցեալ՝ գոչէին սպառնալից, և մերթ դարձուցեալ 'ի Կեսար՝ զահի հարկանէին. և հծծիւն խառնաձայն և աղաղակ սոսկալի, և յանկարծակի լուութիւն զմիմեանս փոխանակէին. և 'ի յոյզս այլևայլ կրից՝ մերթ ահարկու և մերթ ահաբեկ լինէին։ Եւ ապա 'ի հանդարտել առ վայր մի ամբոխին՝ ընթերցաւ Դրուսոս զհրովարտակ հօրն, յորում գրեալ էր. Մեծապէս ինձ հոգ է զհզօր լեգէոնացդ, որովք յաղթութիւնս 'ի բազում պատերազմունս տարեալ է իմ։ յանդորրանալ հոգւոյ իմոյ 'ի տրտմութենէ՝ առաջի արարից ծերակուտին զինդիրս ձեր։ Այժմ յղեմ առ ձեզ զորդի իմ, շնորհել ձեզ անյապաղ որ ինչ այժմէն մարթ է շնորհել, զայլսն պահեալ առաջարկել ծերակուտին. զի առանց նորին հաւանութեան ոչ շնորհ ինչ և ոչ պատուհաս օրէն է ինձ սահմանել։

Ի՛զ. Պատասխանի ետ զօրականն՝ զի Կլեմոյ հարիւրապետի յանձն էր ցուցանել նմա զամենայն։ Յայնժամ հարիւրապետն խօսել կալաւ, և խնդրէր տալ զօրականին յետ վեշտասան ամի զինուորութեան արձակուրդ և մրցանակ, և թոշակ նմին առօրեայ՝ դենար մի, և մի ևս հինաւուրց զօրականին կալ ընդ դրօշիւ։ Եւ յասել Դրուսոսի՝ թէ պարտ էր մնալ վճռոյ ծերակուտին և հօր իւրոյ, աղմկեաց զբանս նորա զօրականն աղաղակելով. Եւ առ ի՞նչ ապա եկիր այսր, եթէ չկարիցես ոչ զթոշակ մեր յաւելուլ և ոչ զվիշտս ամոքել։

չիք ուրեմն ումեք հրաման բարերարելոյ, իսկ զան հարկանելոյ և 'ի մահ մատնելոյ ապաքէն ամենեցուն է հրաման։ Վաղ իսկ Տիբերի կալեալ զանուն Աւգոստեայ՝ առ 'ի դերև առնելոյ զինդիրս զօրականին, և արդ զնոյն հնարս և Դրուսոս 'ի կիր արկանէ։ Մինչև ցերբ յաջորդեսցեն որդիք հպատակք. զարմանք են, զի ինքնակալն զշնորհս ևեթ զօրականին հանէ 'ի ծերակոյտն. թող յատեան անդր ելցեն և պատուհասք և պատերազմունք. մի թէ զմրցանակս ևեթ հրամանաւ, իսկ զպատիժս ինքնահրամանն օրէն իցէ տալ։

ԻԷ. Թողին ապա և գնացին. և որոց և հանդիպէին 'ի Թիկնապահ զօրաց կամ 'ի բարեկամաց Դրուսոսի, ձեռն 'ի վեր առնուին ընդդէմ նոցա սպառնալեօք՝ գրգռել զնոսա 'ի կռիւ և 'ի զէն։ Ոխային մանաւանդ ընդ Կնէոսի Լենտուլեայ, որ էր այր մեծարոյ տիրոջք և փառաց մարտի, համարելով զնա խրատտու պատանւոյն, և զի նա առաւել քան զայլս էր զայրացեալ ընդ խեռութիւն զօրականին։ Յետ սակաւ միոյ 'ի մեկնել նորա ընդ Դրուսոսի և յահէ վտանգին դառնալ 'ի ձմերոց, շուրջ եղեն զնովաւ և ասեն. Յո՞ էր թաս, 'ի ծերակոյտն թէ առ ինքնակալ՝ խափան լինել և անդ ինդրոց զօրականին։ Եւ յարձակեալ 'ի նա, տեղային զնովաւ քարինս. մինչև յարիւնռուշտ հարուածոց անտի սպառնայր նմա կորուստ, եթէ զօրաց Դրուսոսի չէր 'ի վերայ հասեալ և ապրեցուցեալ զնա։

ԻԸ. Զգիշերն սպառնալից և զմօտալուտ եղեռնն դէպք բարեպատեհք խափանեցին. զի 'ի ջինջ երկնի այլագունեալ յանկարծ երևէր լուսին։ Զօրականն անդէտ երևութին, 'ի հմայս առաջնակայից իրացն զնուաղումն աստեղն նշանակ աղետից իւրոց վարկուցեալ, 'ի դառնալ ևեթ լուսոյ և պայծառութեան դիցուհւոյն՝ 'ի յոյս ելից իրացն քաջալերեր։ Հապա 'ի հնչիւն պրղընձեաց և եղջերեայց փողոց դղրդեն զօդս. և ըստ աձել կամնուաղել լուսոյն՝ զուարթս կամ տխուրս էր զնոսա տեսանել։ Եւ իբրև ամպք հոծեալ՝ գողացան զնա յաչաց և թուէր խաւարեալ 'ի սպառ, քանզի միտք ահաբեկեալք դիւրամէտք են 'ի նանրահաւատ կարծիս, ողբային՝ համարելով գուժել դից աղէտս անսպառ, զայրացեալ ընդ ոճիրս իւրեանց։

Դրուսոսի պատեհ առեալ զարհաւիրս նոցա, և ըզ-
գօնութեամբ 'ի կիր արկեալ՝ որ ինչ դէպք մատուցա-
նէին նմա նպաստ, հրաման ետ այց առնել 'ի վրանս՝
յղեալ անդր զԿլեմէս հարիւրապետ, և որ այլք Ճար-
տարմտութեամբ իւրեանց շնորհս ունէին առ ռամիկն։
Նոքա խաւնեալ ընդ գիշերապահս, ընդ պահանորդս
և ընդ բարապանս, քաջալերէին զնոսա համայն և ա-
հացուցանէին. Յե՞րբ իցէ մեզ պաշարեալ պահել զոր-
դի ինքնակալին, ե՞րբ զրաւ լիցի մարտիս. իցէ՞ թէ
Պերկենտեայ և Վիբուլենեայ պարտիցիմք տալ երդու-
մնն, մի՛ թէ նոցա՞ իցէ տալ թոշակ զօրականին և ա-
գարակս վաստակաւորաց. ապաքէն փոխանակ Նե-
րոնեանց և Դրուսեանց նոքա տիրեսցեն ժողովրդեան
Հռովմայ։ Յետինք 'ի յանցաւորս ընդէ՞ր լինիմք առա-
ջինք 'ի զղջացեալս. յամեն միշտ շնորհք հասարակաց,
առանձնականք շնորհին անդէն ընդ արժանի լինել
ուրուք այնց։ — Ի բանից աստի յորդորեցաւ զօրականն,
և հերձուած 'ի նոսա անկեալ՝ համբակք 'ի ծերունեաց
և լեգէոն 'ի լեգէոնէ երկպառակեցան. և տակաւ
դարձեալ 'ի հնազանդութիւն՝ թողին ազատ զել և
զմուտ, և զդրօշս՝ զոր 'ի սկզբան ապստամբութեանն
'ի մի վայր ածեալ էր՝ դարձուցին յիւրաքանչիւր տե-
ղիս։

ԻԹ. Դրուսոս 'ի ծագել առաւօտուն գումարեաց
զզօրականն. և թէպէտ նուազ 'ի պերճախօսութենէ՝
այլ ընդաբոյս ազնուականութեամբն գանգատ կա-
լեալ զանցելոց, գովեաց զառաժամայն գնացս նոցա, և
յաւել. Ահարկութիւն և սպառնալիք ոչ ինչ ազդեն
յիս. եթէ 'ի հլութիւն և յողոք տեսից զձեզ խո-
նարհեալ, գրեցից առ հայր իմ։ և զիջեալ լուիցէ ա-
ղաչանաց ձերոց։ — Եւ ըստ խնդրոյ նոցա յղեցան դար-
ձեալ առ ինքնակալն որդի Բլեսոսի և Ապրոնիոս աս-
պետ հռովմայեցի 'ի գնդէն Դրուսոսի, և Կատոն հա-
րիւրապետ 'ի նախադաս գնդաց։ Եւ եղև յայնժամ տա-
ռաձայնութիւն. կէսք ասէին՝ ողոքով գնալ ընդ զօրս
մինչև 'ի դարձ պատգամաւորացն. իսկ այլք՝ խսաիւ
վարել ընդ նոսա, իբր զի ռամիկն ոչ գիտէ կալ 'ի չա-
փու. և երկիւղալի է, եթէ չիցէ 'ի վերայ նորա սաստ
երկիւղի. իսկ 'ի սասանել նորա ահիւ, մարթ իսկ է

արհամարհել զնովաւ աներկիւղ։ Մինչդեռ ահաբեկեալ կայ նանրահաւատ երկիւղիւ, պարտ է յաւելուլ 'ի նա զահարկութիւն իշխանութեան և բառնալ զառաջնորդս ապստամբութեան 'ի միջոյ։ Դրուսոս դիւրամիտ 'ի խստութիւն, կոչեաց զԼիբուլենոս և զՊերկենիոս. և ետ զնոսա սպանանել 'ի խորանի անդ՝ որպէս աւանդեն բազումք, և արկանել ընդ հողով. իսկ ըստ այլոց՝ արտաքոյ պատնիշաց զդիակունս նոցա ընկենուլ 'ի տեսիլ զօրականին։

Լ. Յայնժամ խնդրեցան պետք խռովարարաց, և կէսք արտաքոյ բանակին 'ի հարիւրապետաց և յատենական գնդին զինուորաց սպանան, և զոմանս նոքին իսկ զօրք առ 'ի ցոյց հաւատարմութեան իւրեանց մատնեցին 'ի մահ։ Յաճախէր և ևս զաղմուկ զօրականին ձմեռն կանխահաս. անձրևք յաճախաւորք և թանձրատարափք ոչ ներէին նոցա ելանել 'ի մի վայր ժողովել. հաղիւ կարէին պահել զդրօշս 'ի մրրկաց և յուղխից, և տակաւին ևս զարհուրեալք յերկնաւոր ցասմանէն՝ ասէին. Ոչ վայրապար նուաղին աստեղք ընդդէմ ամպարշտաց, և ոչ 'ի զուր տեղան մրրիկք. չէք այլ հնար՝ բայց մեկնել մեզ յեղեռնաւոր և 'ի ժանտ բանակէս, և քաւեալք զոհիւ՝ դառնալ 'ի ձմերոցս իւրաքանչիւր։ — Եւ նախ լեգէոնն ութերորդ, և ապա հնգետասաներորդն մեկնեցան 'ի բաց. իսկ ինն երորդն ձայնէր մնալ պատասխանուոյ ինքնակալին. բայց 'ի մեկնել այլոցն՝ անօգնական մնացեալ, կանխեաց խոյս ետ և ինքն 'ի մօտալուտ հարկէն։ Յայնժամ Դրուսոս ոչ ևս սպասեալ դարձի պատգամաւորացն, քանզի շատ իսկ լեալ էր խաղաղութիւն, դարձաւ 'ի Հռովմ։

ԼԱ. Զայնու ժամանակաւ վասն նոցին իրաց խռովեցան և լեգէոնք դերմանականք. և ըստ առաւելագոյն բազմութեան նոցա սաստիկ ևս խռովութիւն նոցա եղև։ Յուսային զի Գերմանիկոսի կեսարու չհանդուրժեալ այլոց ուրուք ինքնակալութեան՝ ապաւինեսցի 'ի լեգէոնս անդր, բովանդակ յինքն գրաւել նոքօք զինքնակալութիւն։ Կրկին բանակք էին առ Հռենոսիւ, վերնակողմեանն ընդ հրամանաւ Կ. Սիլիոսի, և ստորին կողմանն ընդ զօրավարութեամբ Ա. Կեկինայ. բայց երկաքանչիւրոցն բարձրագոյն իշխանութիւն էր

'ի ձեռս Գերմանիկեայ, որ կայրն յայնժամ 'ի բաշխս հարկաց 'ի Գալլիա։ Զօրք Սիլիոսի յերկմիտս տատանեալ՝ դէտակն ունէին ելից վտարանջութեան միւսոյ բանակին. ուր 'ի զայրոյթ կատաղութեան ապստամբեալ նախ քսանևմիոյ և հինգերորդ լեգէոնին, զհետ իւր ձգեալ էր և զառաջին և զքսաներորդ լեգէոնս. զի 'ի նմին ամարանոցի չորեքին ևս 'ի սահմանագլուխս ուբիացւոց կային անդործ կամ հարևանցի զբաղեալ։ Ի լուր մահուանն Աւգոստեայ գուգազն հռովմայեցի դեռընտիր՝ սովորեալ 'ի ցոփութիւն և վաստակոց դըժոխըմբեր՝ գրգռեաց զանկիրթ միտս զօրականին, և ասէր. ժամէ արդ ծերունեաց արձակուրդ խնդրելոյ 'ի զինուորութենէ, համբակաց թոշակ առատագոյն, և ամենեցուն թեթևութիւն աշխատութեան, և անգթութեան հարիւրապետաց պատուհաս։ Ոչ ևս մի ոք, որպէս Պերկենիոս 'ի պաննոնական լեգէոնս, և ոչ յերկիւղագին ունկն զինուորաց՝ որք հզօր բանակս զհետ իւրեանց տեսանէին, այլ աստանօր բազմապատիկ ապստամբութեանն էր բերան և բարբառ, որ ցուցանէր 'ի նոսա ապաստան զբախտ ժողովրդեան հռովմայ, 'ի յաղթութիւնս նոցա զպայծառութիւն աշխարհին, և 'ի համբաւ նոցա զզօրավարացն։

ԼԲ. Եւ ոչ զօրավարն սրտապնդէր զդէմ ունել, սասանեալ արիութեան նորա յամբոխն և 'ի կատաղութենէ նոցա. և ահա յանկարծ մոլեգնեալք սուսերամերկ յարձակեցան 'ի հարիւրապետս, որ նպատակք էին միշտ ատելութեան զօրականին և կատաղութեան նորա առձեռն Ճարակ։ Եւ զգետնեալ զնոսա՝ գանիւք վիրաւորեցին, վաթսուն այր ընդդէմ միոյ միոյ մաքառեալ ըստ թուոյ հարիւրապետաց անձնիւր լեգէոնի. և կարեվէրս արիւնաթաթաւս զկէսս 'ի նոցանէ առ պատնիշաւն կամ 'ի Հռենոս, դիտապաստ ընկեցին և և զՍեպտիմիոս՝ յապաստանել նորա 'ի բեմ անդր առ ոտս Կեկինայ՝ ուժգին պահանջէին, մինչև հարկ լինել Կեկինայ մատնել զնա 'ի ձեռս նոցա 'ի կորուստ։ Կասիոս Քերեայս, ականաւորն առյապայ սպանմամբ Կայիոսի կայսեր, պատանի դեռ ևս յայնժամ քաջայանդուգն, ընդ մէջ սպառազէն հակառակամարտից եբաց իւր ուղի։ Ոչ ևս գնային հրամանք, ոչ հարիւրապե-

տին և ոչ զօրավարի բանակին. զպահս, զկայս, և որ այլ ինչ առժամայն պէտք պահանջէին, զօրականն ինքնին բաշխէր։ Եւ որք միանգամ զինուորականի հոգւոյն էին քաջահմուտք, տեսանէին անդ ծանու և աննուաճելի ապստամբութեան ցոյց. մանաւանդ զայն, զի ոչ ցրիւ ինչ և ոչ սակաւուց գրգռութեամբ՝ այլ միաբարբառ գոչիւն և 'ի միասին էր լռութիւն, այնպէս միաբան և միօրինակ՝ զի թուէին ինն 'ի միոջէ հրամանէ վարեալ։

ԼԴ. Յայնմ ժամանակի Գերմանիկոս, որ կայրն 'ի Գալլիա՝ որպէս ասացաք, յօրինագրութիւն հարկաց աշխարհին, լուաւ զմահ Աւգոստեայ՝ զորոյ զթոռնն զԱգրիպպինա ածեալ էր կնութեան, և որդիս բազումս 'ի նմանէ ընկալեալ, եղբօրորդի ինքն գոլով Տիբերի, որդի Դրուսոսի, թոռն Աւգոստայ։ Այլ'ի տագնապի կայր վասն հօրեղբօր իւրոյ և հաւոյն լռելեայն ատելութեանն ընդ իւր, որ այնու իսկ ոխերմագոյն էր՝ զի էր անիրաւ։ Զի մեծարոյ էր առ հռովմայեցիս յիշատակ Դրուսոսի, քանզի համարէին՝ զի եթէ հասեալ էր նա իշխանութեան, շնորհէր ազատութիւն ինքեանց. նմին իրի և Գերմանիկ սիրելի էր նոցա, զնոյն և 'ի նմանէ ակն ունելով. զի և պատանին ռամկասէր և հեզահամբոյր էր, քաջ'ի բաց 'ի գոռոզ և 'ի խոժոռ դիմաց և խօսից Տիբերի։ Յաւելուին առ այս և կանացի մախանք Լիւիայ մօրուին ընդդէմ Ագրիպպինայ, և սորա դիւրագրգիռ բնաւորութիւն, որ եթէ ոչ զգօնութեամբ և սիրով առն իւրոյ ամոքէր՝ աննուաճելի ինն էր։

ԼԴ. Բայց Գերմանիկեայ որչափ առ ձեռն կայր ինքնակալութիւն, այնչափ նա ինքն մտադիւրագոյն վասն Տիբերի գուն գործէր։ Զսեկուանացւոց՝ որ շուրջ բնակէին, և զբելգացւոց քաղաքս կացոյց նմա'ի հնազանդութեան. և ապա լուեալ զաղմուկ լեգէոնացն, խաղաց գնաց առ նոսա. և ոչ ինչ հեռի 'ի բանակէն հանդիպեալ զօրականաց, որք զաչս 'ի խոնարհ ունէին՝ գոգցես ինն զղջացեալք, եմուտ 'ի բանակ անդր։ Լսելի եղեն յայնժամ տրտունջք պէսպէս. կիսոց բուռն հարեալ զձեռանէ նորա իբր առ 'ի հանբոյր, զմատունս նորա 'ի շրթունս իւրեանց ածէին՝ առ 'ի տալ նմա շո-

շափել զլընդերսն մերկս յատամանց. այլք զմէջս իւ-
րեանց ցուցանէին նմա կորացեալս'ի ծերութենէ։ Նա
'ի բեմ անդր հասեալ, հրաման ետ խառնիխուռն զո-
րականին կարգել կալ'ի գունդս՝ առ'ի դիւրաւ լսե-
լոյ զբարբառ իւր, և զդրօշսն բարձեալ բերել՝ առ'ի
կարելոյ գոնեա զգունդս ճանաչել. և հազիւ ուրեմն
հնազանդեցան զօրքն։ Յայնժամ սկսեալ նորա 'ի մե-
ծարանաց Աւգոստեայ, անց 'ի յաղթութիւնս և 'ի
յաղթանակս Տիբերի. և դրուատեալ մանաւանդ զքա-
ջայաղթ պատերազմունս՝ զորս մղեալ էր նորա անդ 'ի
Գերմանիա նոքիմբք իսկ լեգէոնօք, նեբրոդեաց ապա
զհնազանդութիւն Իտալաց և զհաւատարմութիւն
Գալլիացւոց, յորս չէր ուրեք լեալ աղմուկ և հեր-
ձուած։

Ա։ Զայսոսիկ մինչև ցայս վայր, հծծելով ևեթ ընդ
աղօտ, լուաւ զօրականն լռութեամբ. այլ իբրև սկսաւ
խօսել զապատամբութենէ նոցա և ասել. Ո՞ւր հպա-
տակութիւն զինուորական, ո՞ւր նախնոյ բարեկարգու-
թեանն է վայելչութիւն, ո՞ւր հազարապետք, ուրանօ՞ր
հարիւրապետք, մերկացեալ յայնժամ ամենեցուն ըզ-
մարմինս իւրեանց՝ զսպիս վիրացն ցուցանէին և զկա-
պուտակս գանից, և խառնաձայն աղաղակաւ բողո-
քէին զնուազութենէ ռոճկին, զծանր գնոց ազատու-
թեան, և զխստութենէ աշխատանաց՝ 'ի համար ար-
կեալ մի ըստ միոջէ զպատնէշս զփոսս զճարակ զխուլ
զփայտակոյտս, և որ այլ ինչ'ի պէտս բանակին և առ
'ի չկալոյ անգործ՝ կրէին վաստակս։

Դժոգակագոյն ևս հինաւուրց զօրականին էր աղա-
ղակ, որոց աւելի քան զերեսուն ամս կացեալ'ի զի-
նուորութեան, վաստակաբեկ անդամոցն խնդրէին
դարման՝ չև մահուն 'ի վերայ հասեալ, վախճան դը-
ժուարակիր զինուորութեան և հանգիստ անկարօտ։
Եղեն ևս որք զառ 'ի յԱւգոստեայ թողեալ զգումար
արծաթոյն պահանջէին, յաւելեալ իղձս բարեգուշա-
կրս Գերմանիկեայ, և պատրաստս ընծայելով զան-
ձինս՝ եթէ ինքնակալել կամիցի։ Յայնժամ Գերմա-
նիկ ընդոստուցեալ'ի դուրս յատենէն, իբր'ի յեղեռն
մնաբերելոյ, խոյս տայր 'ի բաց. բայց զօրականն ար-
գել զնա զինուք, սպառնացեալ նմա մահ՝ եթէ ոչ յա-

տեան անդր դառնայր։ Այլ նա՝ Մեռայց մանաւանդ քան թէ գոլ հաւատադրուժ՝ գոչելով, ձգեաց յազգէրկ զսուր, և մեր զայն'ի կողիւր՝ եթէ ոչ որք մերձն կային, բուռն հարեալ զաջոյ նորա, արգելուին։ Այլ'ի միւս ծայր բանակին խառնեալ կէսք 'ի զօրաց, և ոմանք մերձ իսկ առ նա մատուցեալ՝ (դէպք չհաւատալի) յորդորէին զնա գնալ զիւրովին։ Եւ մի ոմն'ի նոցանէ՝ Կալուսիդիոս անուն՝ հանեալ մատուցանէր նմա զսուսերիւր, ասելով. Այրասուր ևս է սա։ Որ մոլեգնելոյ զօրականին իսկ խիստ թուեցաւ. և յայնմ վայրի բարեկամք Գերմանիկեայ յափշտակեալ տարան զնա 'ի խորան իւր։

ԼԶ. Ընդ 'ի խորհուրդ մտին՝ առնուլ զառաջս չարեացն, զի ապատամբք պատրաստէին հրեշտակութիւն առնել՝ ձգել յինքեանս զբանակ վերնակողման Հռենոսի, եդեալ'ի մտի հարկանել զաւան ուբիացւոց, և լցեալ աւարաւ ասպատակել'ի Գալլիա։ Յաճախէր զերկիւղ վտանգին և այն, զի թշնամին տեղեակ էր աղմկին հռովմայեցւոց, և 'ի մեկնել նոցա'ի գետափանց անտի՝ կարէր դիմել'ի վերայ նոցա. իսկ եթէ զօժանդակ գունդս և զնիզակակիցս ընդդէմ վտարանջելոց լեգէոնացն զինէին, բորբոքէր պատերազմ քաղաքական։ Բազմավտանգ էր խստութիւն, և ամօթապարտ՝ զինջու�'ի շնորհել նոցա և 'ի ժխտել զամենայն՝ 'ի վտանգի կայր պետութիւնն։ Քաջիկ երկուստեք զիրսն կշռադատելով, խորհուրդ կալան՝ որպէս թէ գիր յինքնակալէն ընկալեալ՝ շնորհել արձակուրդ որոց քսան ամ էր զինուորութեան, իսկ որոց վեշտասան՝ լուծեալ յերդմանէն՝ կալ ընդ դրօշիւ ազատ յամենայն վաստակոց, բաց 'ի վանելոյ զթշնամին. 'ի վերայ այսոցիկ և զհրիտակ Աւգոստեայ, զոր խնդրէին, տալ նոցա կրկնապատիկ։

Լէ. Զգաց զօրականն զառժամայն հնարիցն հայթայթանս, և վաղընդ փոյթ զկատարումն իրացն պահանջէր։ Փութացան հազարապետք տալ զարձակուրդ, իսկ զտուրս լեգէոնաց խոստանային բաշխել'ի ձմերոցս. այլ ոչ տեղի եւուն հինգերորդն և քսան և մի լեգէոն, մինչև յամարանոցս անդ հարկ լինել Գերմանիկեայ զարծաթ իւր և զբարեկամացն սպառել'ի հա-

տուցումն նոցա։ Զքսանեբորդ և զառաջին լեգէոնս էած Կեկինա 'ի քաղաքն ուբէացւոց, գունդ ապիրատ՝ որ ընդ դրօշս և ընդ արծուիս հռովմէականս տանէր զաւարն հարեալ 'ի զօրավարէն։ Գերմանիկ 'ի վերնակողմեան բանակն Հռենոսի երթեալ, զերկրորդն զերեքտասաներորդ և զվեշտասաներորդ լեգէոնս՝ երդմնի արար, առանց ինչ նոցա ընդ բանս ածելոյ՝ չորեքտասաներորդին ևեթ վայրիկ մի երկմտելով. և մինչև խնդրեալ նոցա, շնորհեաց արձակուրդ և մերցանակ։

ԼԸ. Ի քաւկիացիս ևս եղև սկիզբն ապստամբութեան՝ յուզեալ 'ի դրօշակիր զօրականէն լեգէոնացն վտարանջելոց. այլ արագարագ պատուհասիւ երկուց ոմանց 'ի նոցանէ՝ ցածեաւ առ վայր մի աղմուկն։ Մենեսիոսի հրամատարի բանակին ըստ ոչ իշխանութեան տուեալ էր զհրամանն զայն առ 'ի խրատ. և 'ի զայրանալ անդրէն ամբոխին՝ իբրև խոյս տայր նա 'ի փախուստ, գիտաց զի չկայր յակաստանի, և 'ի յանդգնութեան խնդրեալիւր ապաստան՝ գոչեաց. Ոչ յիս յարձակիք, այլ 'ի զօրավար ձեր 'ի Գերմանիկ և յինքնակալ ձեր 'ի Տիբերը։ Եւ յերկչոտել յարձակելոցն, յափշտակեալ զդրօշ՝ դէպ ուղիղ 'ի գետափն խաղայր, զօցտեալս 'ի գնդէն ընդ դասալիքս համարել սպառնացեալ. և էած զնոսա 'ի ձմերոց՝ առանց իշխելոյ ինչ նոցա հետել, թէպէտ և խռով կային։

ԼԹ. Յայնմ վայրի դարձան 'ի ծերակուտէն պատգամաւորքն, և եկին գտին զԳերմանիկ վաղ իսկ հասեալ 'ի բագին ուբիացւոց։ Լեգէոնք կրկին՝ առաջինն և քսանեբորդ, և հինաւուրց զօրականն՝ որոյ այն ինչ ընկալեալ էր արձակուրդ, ձմերէին անդ ընդ դրօշիւ. և 'ի խղճէ չարեացն կալով նոցա յերկիւղի, կասկածէին պատգամ՝ 'ի ծերակուտէն բերեալ հրեշտակաց՝ 'ի դերև առնել որ ինչ ապստամբութեամբն յափշտակեալ էր նոցա շնորհս։ Եւ որպէս սովորութիւն է ռամկին՝ կասկածանաց իւրոց ևս և զուր տարապարտուց պարտաւոր առնել զայլս, առիթ վնռոյ ծերակուտին համարեցան զառաջնորդ հրեշտակութեանն զՄոնատիոս Պլանկոս երբեմն բդեաշխ։

Զհասարակ գիշերաւ 'ի գոչիւն աղաղակի խնդրէին

զդրօշն որ յապարանս Գերմանիկեայ պահէր, և խրա-
նեալ առ դրունս նորա խորտակեցին զայն. և մտեալ
ձգեալ զնա յանկողնոց, մահու սպառնալեօք բռնադա-
տէին տալ զդրօշն 'ի բաց։ Ցրուեալ ապա ընդ փողոց,
դիպան պատգամաւորացն՝ որք 'ի լուր աղմկին դիմէին
առ Գերմանիկ. Թշնամանեցին զնոսա, և խնդրէին
սպանանել, մանաւանդ զՊլանկոս՝ որ անարգանս իւր
համարեալ էր փախչել։ Զգոյր նմա այլ ապաստան՝
բաց 'ի բանակէ առաջնոյ լեգէոնին. անդր դիմեալ,
գիրկս զդրօշիւ և զարծուո

արկեալ, 'ի կրօնս ապա-
վինէր։ Եւ եթէ ոչ արծուէկիրն Կալպուրնիոս զմոլե-
գին բռնութիւնն խափանէր, (դէպք և 'ի մէջ Թշնա-
մեաց դուն, ուրեք պատահեալ), հռովմէական ժողո-
վրդեանն պատգամաւոր 'ի բանակետղ հռովմայեց-
ւոց արեամբ իւրով զբագինս ներկանէր։

Ապա 'ի ծագել առաւօտուն, և 'ի յայտ ածել զզօրա-
վարն և զզօրական, և զիրս՝ որ գործէին, Գերմանիկեայ
մտեալ 'ի բանակն՝ հրամայեաց ածել առ ինքն զՊլան-
կոս, և ընկալաւ զնա 'ի բեմի անդ. և զեղեռնաւոր մո-
լեգնութիւն նոցա յանդիմանեալ, 'ի զայրոյթ դիցն
քան զօրականին զպատճառս իրացն հանելով, յայտ
արար զվասն էրն գալստեան պատգամաւորացն և ձար-
տարնկարագրեաց զՊլանկոսի ընդդէմ իրաւանց հրեշ-
տակութեանն զծանր և զտարապարտ Թշնամանսն, և
թէ 'ի քանի նախատինս լեալ էր այն լեգէոնին։ Եւ
մինչդեռ յապշութեան կային քան թէ հանդարտեալ,
զհրեշտակս Թիկնապահ այրուձիով 'ի բաց արձա-
կեաց։

Խ. Զայնու աղմկաւ ստգտանէր յամենեցունց Գեր-
մանիկ վասն ոչ դիմելոյ նորա 'ի վերին բանակն՝ ուր
գտանէր հնազանդութիւն և նպաստ 'ի կռիւ ընդդէմ
ապստամբաց։ Եւ առաւել ևս յանցուցեալ զնա ասէին
առատաձեռնութեամբն և չնորհիւ ազատութեան և
կարի յոյժ զլիզմամբ. զի եթէ 'ի կեանս իսկ իւր ոչ խր-
նայէր, ընդէր և զորդեակն, ընդէր և զամուսին իւր
յղի, 'ի մէջ մոլեգնելոյն և որք զամենայն մարդկային
իրաւունս առ ոտն կոխէին, 'ի վտանգ արկանէր. դէթ
վասն ինքնակալին և աշխարհին պարտ էր նմա խնա-
յել 'ի կեանս նոցա։ Գերմանիկ յերկբայս եկաց ընդ-

երկար. քանզի Աղրիպպինա չառնոյր յանձն մեկնել 'ի նմանէ. Դիւցազնին Աւգոստեայ զաւակ եմ, ասէր, և ոչ ուրեք 'ի վտանգաց օտարախորթ 'ի նմանէ։ Այլ յետոյ ուրեմն բազում արտասուօք գիրկս արկեալ նմա և որդեկին, յուղարկեաց զնա։ Գնայր գունդ տառապելոց կանանց, հարսն զօրավարին որդեկաւն 'ի գրկի փախստական, և շուրջ զնովաւ հարսունք բարեկամացն կականաւորք հետեւեալ. և ոչ ողբ մնայինն՝ նուազ քան զնոսա էին թաղծեալ։

ԽԱ. Ոչ ևս իբր 'ի բանակետղ յաղթական կայսեր, ոչ ևս որպէս 'ի բնիկ բանակի, այլ իբրև 'ի քաղաք պարտեալ՝ կերպարանք տխրագինք ողբք և հառաչանք զզօրացն իսկ զաչս և զլսելիս յինքեանս շրջէին. որոց ելեալ 'ի խորանացն՝ հարցանէին. Զինչ են այդոքիկ ողբոց հնչմունք, զինչ աղէտք իցեն։ Եւ ահա տեսանեն կանանի ազնուագունդ, և ոչ մի 'ի հարիւրապետաց և ոչ զինուոր 'ի պահ նոցին. և տիկնոջ իսկ զօրավարին ոչ թիկնապահք ըստ օրինի կամ զառաջաւորք, առ Տրեւիրս օտարս գէմ եդեալ. զարթեաւ 'ի նոսա ամօթ և գութ, յիշէին զՀայր նորա Աղրիպպաս, և զԱւգոստ հաւ նորին, զաներ նորա զԴրուսոս, և զիւր իսկ բարեբաստիկ բեղնաւորութիւն և զգերազանց պարկեշտութիւն, և զմանուկն 'ի նմանէ 'ի բանակի անդ ծնեալ և 'ի խորանս լեգէոնաց մնեալ՝ զոր ըստ զինուորական յորջորջանաց Կալիգուլա ձայնէին. զի առ ընտելացուցանելոյ զնա անդ ռամիկսպայ զօրականին՝ ազուցանէին նմա կալիգուլ, այսինքն կօշիկ զինուորական. արդ այս ամենայն ընդոստոյց զնոսա, այլ առաւել ևս՝ նախանձ ընդ Տրեւիրս։ Աւրգելուին, աղաչէին դառնալ կալ մնալ նմա. կէսք զառաջս ունէին Աղրիպպինայ, այլոց առ հասարակ դիմեալ առ Գերմանիկ. իսկ նա դեռևս վիշտ և զայրոյթ 'ի սրտի, խօսեցաւ առ որս շուրջն կային և ասէ.

ԽԲ. Հարսն և որդի չեն ինձ քան զՀայր և քան զՀայրենիս սիրելագոյնք. իցեն իսկ հօր իմում փառք իւր, և ինքնակալութեան Հռովմայ այլ բանակք՝ որ պաշտպանեսցեն նոցա։ Ձկին և զորդի, զորս 'ի փառս ձեր սիրելի էր ինձ նուիրել, զերծուցանեմ 'ի կատաղութենէ ձերմէ. որպէս զի որ առաջիդ կայ ոձիր՝ ի-

մուկ եւ թագաւորաց, եւ մի մահուամբ թողնորդացն Աւգոստեայ եւ սպանմամբ նուագն Տիբերի պարտաւորագոյնք գտանիցիք։ Զի զինչ յաւուրս յայսոսիկ ոչ իշխեցիք գործել, զինչ ոչ առ ոտն կոխել։ Զինչ կոչեցից զձեզ. զօրականս, որք զորդի ինքնակալին ձերոյ շուրջ պաշարեցիք զինուք. քաղաքացիս, որք 'ի բաց մերժէք զիշխանութիւն ծերակուտին, որք զթշնամեաց իսկ իրաւունս, զսրբութիւն հրեշտակութեան, և զօրէնս աղգաց լուծիք։ Դիւցազնն Յուլիոս միով բանիւ զասպստամբութիւն բանակին ցածոյց, Կուիրինեանս ձայնելով զայնոսիկ՝ որք երդմնազանցքն լեալ էին. և դիւցազնն Աւգոստ սաստիւ եւթ դիմացն և ակնարկութեամբ զլեգէոնսն ակտիականս ահացոյց։ Թէպէտ չև ևս հաւասար նոցին՝ այլ նոցին սերունդ եմ. եթէ սպանիկն իսկ և ասորի զօրականն զիս արհամարհէր՝ զարմանք թուէին և դժպհի. իսկ դուք առաջին և քսաներորդ լեգէոնք, մինդ դրօշս 'ի Տիբերեայ ընկալեալ, և միւսդ 'ի բազում պատերազմունս մարտակից նմին, և այնքան մրցանակօք 'ի նմանէ Հոխացեալ, զայդ պերճ փոխարէն զօրավարիդ ձերում հատուցանէք։ Զայս ուրեմն մնայ ինձ ածել առ հայր իմ զրոյց, (մինչդեռ 'ի գաւառաց առ հասարակ ընդունի զրոյցս աւետաւորս,) զի նորին իսկ զօրք՝ նորին իսկ հինաւուրց զօրական՝ ոչ շատ համարին զարձակուրդ և զմրցանակ, և ասա եթէ գործին սպանութիւնք հարիւրապետաց, մերժումն հազարապետաց, բռնաբարութիւն պատգամաւորաց. ասա պատնէշք և գետք արեամբ ներկեալ, ասա իբրև 'ի մէջ թշնամեաց մնայ ինձ ժամ 'ի ժամ սպասել մահու։

Խգ. Ընդէր յառաջնումն իսկ աւուր ատենի ոչ թողէք ձգել ինձ 'ի կող զերկաթն զայն բարեկամքդ խորհրդակորոյսք. բարեկամադոյն քան զձեզ էր և բարերար, որ զսուսերն ինձ մատուցանէր։ Զի լաւ էր ինձ մեռանել յայնժամ, չև զայսքան եղերունս զօրացն իմոց տեսեալ, և ընտրեալն 'ի ձէնջ զօրավար թողոյր արդեօք անպատուհաս զիմ մահ, այլ զՎարոսին և զերեցունց լեգէոնացն խնդրել խնդրեր զվրէժ։ Մի նեբեսցեն դիք յափշտակել բեղացուոց, որ պատրաստ կան, զփառս և զպարծանս ձեռնտուութեան հուսալ

մէական պետութեան առ՝ի նուաճել զաղգս Գերմանիոյ։ Հոգի քոյին աստուածարեալ՝ դիւցազնդ Աւգոստէ, և պատկեր քո՝ հայր իմ Դրուսէ, յիշատակ քոյ զզօրականիս՝ որ զամօթի հարեալ կայ՝ի սէր փառաց՝ քաւեսցեն զբիծ, և՝ի կորուստ թշնամեաց շրջեսցեն զգայրոյթ քաղաքական։ Իսկ դուք, զորոց փոխեալ արդ նկատեմ զդէմս և զսիրտ, եթէ ծերակուտին զհրեշտակս, զօրավարիդ զհնազանդութիւն, և ինձ զկին և զորդի կամիք հատուցանել, ՝ի բաց կացէք՝ի խռովարարաց այսր։ այդ առհաւատչեայ ստերջանաց, այդ իսկ հաւատարմութեան ձերոյ լիցի գրաւական։ —

ԽԴ. Զայսոսիկ լսելով զօրացն, յողոք անկեալ խոստովան եղեն՝ յիրաւի կրել կշտամբանս. և աղաչէին պատուհասել զմեղապարտս, ներել գթելոց, և ածել զինքեանս ընդդէմ թշնամեաց. յետս կոչել զկին իւր, և դարձուցանել զսան զօրականին՝ զի մի պատանդ՝ի ձեռս գալլիացւոց մատնեսցի։ Գերմանիկ ոչ յանձն էառ զդարձ Ագրիպպինայ վասն մօտալուտ երկանցն և ամբոյնոյ. այլ զորդի իւր խոստացաւ դարձուցանել, զայն ամենայն՝ի նոսա թողեալ։ Նոքա զգաստացեալ դիմեն՝ի խռովարարս, և կապեալս զնոսա տան՝ի ձեռս Կ. Կետրոնեայ՝ առաջնոյ լեգէոնին հրամատարի, որ զդատաստան և զպատուհաս իւրաքանչիւրոց արար այսպէս։ Շուրջ զատենիւն կային լեգէոնք սուսերամերկ. հարիւրապետն ածէր՝ի տեսիլ գյանցաւորն՝ի բեմի, և՝ի գոչել զօրացն թէ մահապարտ է, մղեալ արկեալ զնա՝ի ստոր՝ փողոտէին ուրախութեամբ, իբր թէ սպանմամբ նոցա զեղեւն իւրեանց քաւելով. և ոչ արգելոյր կեսար զնոցայն ինքնահրաման անգթութիւն և ատելութիւն։ Ըստ օրինակի նոցա և հինաւուրց զօրականն հպատակեալ, յետ ոչ բազում աւուրց յղեցաւ՝ի Հռետիա, պատճառանօք՝ առ՝ի պահել զգաւառն՝ի յարձակմանէ Սուեւաց, այլ ստուգութեամբ՝ վասն հեռացուցանելոյ զնա՝ի բանակէն, որ դեռ ևս կասկածելին էր, ոչ միայն վասն սաստկութեան դեղոցն՝ այլ և վասն եղեռանն յիշատակի։ Ընտրեցան ապա հարիւրապետք. և իւրաքանչիւր՝ի նոցանէ ձայնեալ՝ի զօրավարէն՝ յայտ առնէր զանուն իւր և զկարգ, զհայրենիս և զամն զինուորութեան իւրոյ

առաքինաբար 'ի մարտս պատերազմաց կատարեալ, և մրցանակս տարեալ։ Եթէ հազարապետն և լեգէոն վկայէին վաստակոց նորա և լաւութեան, մնայր նա 'ի կարգին. իսկ ամբաստանեալ 'ի նոցանէ 'ի զոշաքաղութիւն և յանգթութիւն, դադարէր 'ի պաշտամանէ։

ԽԵ. Այսպէս ասա զօրավարին բարեկարգեալ զամենայն, մնայր նմա տակաւին ոչ ինչ նուազ դժուարին՝ նուաճել զվայրենութիւն հինգերորդի և քսանևմիոյ լեգէոնին, որ ձմերէին վաթսուն մղոնաւ հեռի 'ի տեղւոջ՝ որ կոչէրն Վէտերա. Քանզի սոքա, որոց նախաձեռն արարեալ էր ապստամբութեան և զգժնդակագոյն ոճիրն գործեալ, յամառեալ դեռ ևս կային՝ ոչ պատուհասիւ զինուորակցացն ահաբեկեալ, և ոչ 'ի զգօնութիւն մտաբերեալ։ Վասն որոյ խորհեցաւ կէսար խաղացուցանել զբանակն հանդերձ նաւատորմաւ և նիզակակից գնդօք 'ի Հռենոս, 'ի մտի եդեալ՝ մարտիւ զնոսա նուաճել, եթէ հեստէին։

Խզ. Բայց հռովմայեցիք ելից իրացն անդէտք՝ որ ինչ 'ի Լիւրիկէ լեալ էր, և զլեգէոնացն՝ որ 'ի Գերմանիա էին՝ լուեալ զապստամբութիւն, խռովեցան և մեղադրէին Տիբերի՝ զի մինչդեռ պատճառանօք երկմտութեան խաղ առնէր զանզօր ծերակուտիւն և զանղէն ռամկաւ, զօրքն վտարանջէին. և սաստիւ երկոցունց չև 'ի տիս հասելոց պատանեաց չէր մարթ նոցա նուաճել. պարտ էր նմա գնալ առ նոսա իւրովի, և զկայսերական փառն յանդիման առնել, զի յերեսաց ինքնակալին՝ որ բազմամեայ փորձիւն մեծարոյ էր, և ինքնիշխան 'ի պատուհասել և 'ի վարձատրել, տեղի արդեօք տային. զի Աւգոստեայ այնքանիցս 'ի ծերութեան ուղևորեալ 'ի Գերմանիա, իսկ Տիբեր յաստիս ամիսոն բազմէր 'ի ծերակուտին պարսաւադէտ ատենակալացն բանից. զի շատ իսկ խնամարկեալ 'ի գերութիւն Հռովմայ, պարտ էր նմա յանձանձել յայնժամ զոգի զօրականին՝ առ 'ի կալ նոցա 'ի խաղաղութեան։

Խէ. Տիբեր անտատան 'ի բանից ատի կացեալ 'ի յանձանձանս իրաց, ոչ զինքն և ոչ զաշխարհն կամեցաւ դնել 'ի վտանգի. զի և հոգք բազումք և պէս-պէսք նեղէին զնա։ Բանակն Գերմանիոյ հզօրագոյն էր, իսկ Պաննոնիայն մերձաւորագոյն. նա 'ի գալլիացիս հաստ զթիկունս արարեալ, և սա սպառնայր Իտա-

լիոյ։ Վասն որոյ կասկածէր ինքնակալն նախոսդասել զմի յերկոցունց, թէ գուցէ միւսն արհամարհեալ զայրանայցէ. այլ՝ի ձեռն որդւոցն իւրոց՝ հաւասարապէս երկոցունցն այց արարեալ, աննուազելի զփառս ինքնակալութեան պահէր՝ որ մեծարոյ ևս է՝ի հեռուստ։ Սր այս և պատանեացն Թողուլ ինչ ինչ իշխանութեան հօր իւրեանց ներելի էր, և մարթէր նմա զհետեալս ընդդէմ Գերմանիկեայ և Դրուսոսի ողոքել ինքնին կամ նուաճել. իսկ եթէ ընդդէմ ինքնակալին հետէին, որ այլ օձան մնայր՝ի միջի։ Սակայն Տիբեր որպէս թէ առ՝ի գնալ՝ ընտրեաց զուղեկիցս իւր, ետ պատրաստել զկահ կարասի, և կազմել զնաւս. և ապա պատճառանօք ձմերայնոյ և իրաց կարևորաց՝ առ ժամն զխորագէտս, ապա զռամիկն, և ընդերկար զգաւառս խաբեաց։

ԽԸ. Բայց Գերմանիկեայ համախմբեալ զզօրս իւր, և կազմեալ պատրաստեալ՝ի վրէժխնդրութիւն ընդդէմ ապստամբաց, դեռ ևս առ՝ի տալ նոցա ժամանակ ըստ օրինակի այլոցն զգաստանալոյ, գրեաց առ Կեկինա՝ զի ահա գայր հասանէր զօրու ծանու. և եթէ ոչ կանխէին պատուհասել զչարս, խառն՝ի վերայ նոցա ածէր կոտորած։ Կեկինա ընթերցաւ զգիրն զայն գաղտ՝ի լուր արծուէկրաց և դրօշակրաց և որոց լաւքն էին՝ի բանակին, և յորդորեաց զնոսա խնայել զամենեսին՝ի նախատանաց, և զանձինս՝ի մահուանէ. զի՝ի խաղաղութեան է, ասէր, ընտրել զվաստակ և զփնաս.՝ի խանձել մարտի, խառն՝ի խուռն և անպարտականք ընդ պարտաւորս կորնչին։ Նոքա, զորոց պատշաճն համարէին՝ հետազօտեալ զմիտս, և զմեծ կէս մասն լեգէոնաց հաւատարիմ գտեալ, ժամ եդին ընդ հրամատարին ընդ սուր հանել զստահակս և զխռովարարս. տուեալ յայնժամ նշան իրերաց՝ յարձակեցան՝ի խորանս, և սրակոխ արարին զնոսա յանզգաստից, ոչ ուրուք բաց՝ի համախոհին գիտացեալ՝ երբ սկիզբն և երբ վախճան կոտորածին լինէր։

ԽԹ. Յամենայն քաղաքական պատերազմաց, որ ուրեք երբէք լեալ, այլազան պատերազմիս այսորիկ էր կերպարան։ Ո՛չ ճակատամարտիւ յերկուց հանդիպակաց բանակաց, այլ՝ի նոյն հանգրուանաց, արք՝

որոց յերկիր հացակից լեալ էր միմեանց և զգիշեր 'ի միասին հանգուցեալ՝ ելանէին զէնս 'ի միմեանս արկանել։ Աղաղակ, վէրք, նախճիրք արեան յայտ յանդիման, իսկ վասն երն անյայտ, և բախտ տնօրէն։ Անկան ոմանք և 'ի լաւաց, 'ի գիտել չարաց զգէմ մարտին և 'ի զէն առնուլ. ոչ հրամատար անդանօր և ոչ հաղարապետ ուղղիչ, այլ թողեալ ազատութիւն զօրականին և վրէժինդրութիւն ցյագուրդ։ Իբրև եհաս Գերմանիկ 'ի բանակ անդր, ոչ հնարս իրաց՝ այլ նախճիրս համարեալ զայն, և արտասուս բազումս հեղեալ, հրամանն ետ այրել զդիակունս։ Բայց եռանդն զօրականին չևևս էր շիջեալ, և 'ի քաւութիւն մոլեգնութեան իւրեանց յանկային դիմել 'ի թշնամիս. զի ոչ այլազգ զհոգիս զինուորակցացն հաշտ առնել համարէին, բայց վերս արիականս յարիւնախանձ սիրտս իւրեանց ընդունելով։ Ոչ անփոյթ արար Գերմանիկ զեռանդն զօրականին. այլ կամուրջ արկեալ, խաղացոյց յայնկոյս երկոտասան հազար այր 'ի լեգէոնաց, քսանևվեց գումարտակս 'ի նիզակակցաց, և վեց գունդս այրուձիոյ՝ որոց 'ի ժամանակի վտարանջութեան անստգիւտ և հնազանդ կացեալ էր։

Ծ. Մինչդեռ մեք 'ի սուգ մահուանն Աւգոստեայ և ապա 'ի հերձուածս էաք, գերմանացիք ոչ ինչ 'ի բացեայ կային ուրախամիտք։ Բանակն հռովմէական վաղ ընդփոյթ անցեալ ընդ կեսեան մայրիս, եմուտ 'ի մարտկոցն ածեալ 'ի Տիբերեայ, և բանակեցաւ անդ՝ յառաջոյ և յետկուսէ պատնիշիւք և երկուստեք յանտառաց պատսպարեալ։ Այնտի 'ի նեմատուէր անտառ անդր միջամուխ լեալ, տարակուսէր ընդ որ յերկուղեաց գնալ. ընդ կարճոյ և ընդ կուռ ճանապարհ, թէ ընդ մացառախիտ և անկոխ՝ որում ոչն զգուշանայր թշնամին։ Եւ ընտրեալ զուղին երկայնագոյն, ճեպեցոյց զընթացս. քանզի լրտեսաց ածեալ էր զլրոյց՝ տան 'ի գիշերին յայնմիկ խմբել գերմանացւոց, և 'ի հանդէս կոչնոց և խաղուց պարապել։ Հրաման ետ Կեկինայ յառաջել մեկնակաղէն զօրաբն, հարթել զմացառախիտս, և լեգէոնաց սուղ ինչ 'ի բացէ հետեւել նոցա։ Այսոեղափոյլ գիշերոյ օժանդակեալ նոցա, հասին 'ի գիւղս Մարսից, և շուրջ պատեցան զնոքաբ։ Նոքա

զքնով անկեալ կամ՝ ի խնջոյս՝ զեռ ևս կային աներ-
կևան, առանց պահս ուրեք կացուցանելոյ, լքեալ
թողեալ շուրջանակի զամենայն. զի էր նոցա կասկած
մարտի, և հանդիստ նոցա էր թմրութիւն ընկղմելոց
և մեղկելոց յարբեցութեան։

ԾԱ. Կեսար առ՝ ի տալ յատիշտակասէր լեգէոնացն
ընդարձակագոյն աւարառութիւն, բաժանեաց զնոսա
՝ի չորս առաջս՝ ասպատակել ընդ յիսուն մղոն, ապա-
կանել զերկիրն՝ ի հուր և՝ ի սուր, մի՝ ի կանայս և մի
՝ի տղայս խնայել, զսուրբ և զանսուրբ մի խտրել, մին-
չև զգերահոչակեալն յայնոսիկ զՑանփանայ մեհեանն
հարթայատակ առնել։ Եւ դառնայր զօրականն ան-
խոց, զնիրհեալսն անզէնս և սփիւռս կոտորեալ։ Ի կո-
տորածէ անտի զայրացեալ բրուքտերացիք տուբան-
տացիք և ուսիպիացիք դարանէին յանտառս, ընդ որս
հասանէր դարձ առնել զօրուն։ Այդ եղև զօրավարին,
և խաղացոյց զզօրականն ըստ Ճակատու պատերազմի.
կէս այրուձիոյն և գունդք օժանդակք գնային առա-
ջապահ, զհետ նոցա առաջին լեգէոնն, իսկ՝ ի բուն
բանակին էին աղեք.՝ի ձախումթևի լեգէոնն քսան-
ևմի, և հինգերորդն յաջում, քսաներորդն վերջա-
պահ, և զհետ նորա այլք՝ ի նիզակակցաց։ Կացին մնա-
ցին թշնամիք մինչև՝ ի մտանել զօրուն յանտառն. և
թեթև ինչ յարձակմունս՝ ի Ճակատ անդր և՝ ի թևս
արարեալ, անկան ապա համօրէն զօրութեամբ՝ ի վեր-
ջապահս։ Մինչդեռ գունդք գերմանացւոց պնդա-
կազմք խառվեին զմեկնակազէն գումարտակս, եհաս
Կեսար առ քսաներորդն լեգէոն, և մեծաձայն բար-
բառով ասէ. ժամէ անյիշատակ առնելոյ զապստամ-
բութիւնդ, հապա փութացարուք զեղերունս՝ ի փառս
յեղաշրջել։ Վառեցան ոգիք նոցա, և միով յարձակ-
մամբ հերձեալ զթշնամիս, և վանեալ զնոսա՝ ի դաշտ
բացարձակ, կոտորեցին։ Յայնմ վայրի առաջ բանակին
էլ՝ ի դուրս յանտառէն, և շուրջ ամրացեալ՝ գնայր
այնուհետև հանդարտաքայլ. և զօրականն խրոխտա-
պանծ ընդ յաղթութիւնն՝ ի մռռացօնս արկեալ զան-
ցեալսն, զկայ էառ՝ ի ձմերոցս։

ԾԲ. Բայց համբաւ իրացն յաւել ընդ խնդութեան
և հոգս ինքնակալին։ Ուրախ լինէր ընդ նուաճումն

ապստամբութեանն. այլ Գերմանիկեայ սիրելի լինել զօրականին առատաձեռնութեամբ և կանխելով զարձակուրդ, և փառք յաղթութեան նորա տաղնապէին զնա։ Սակայն եցոյց ծերակուտին զիրսն, պատմեալ բազում բանիւք զքաջութիւն նորա, և այնու նեբբողենիւ՝ զի չհաւատալի թուէր լսելեաց։ Սակաւուք և զԴրուսոս. և զելս լիւրիկեան մարտին գովեաց, այլ առաւելագոյն եռանդեամբ և հաւատարիմ բանիւք։ Հաստատեաց և որ ինչ Գերմանիկեայ շնորհեալն էր զօրականին, յաւելեալ զնոյն շնորհս և զօրացն որ 'ի Պաննոնիա։

ԾԳ. Ի նմին ամի մեռաւ Յուլիա, որ վաղ ուրեմն 'ի հօրէ իւրմէ յԱւգոստեայ վասն զեղծ գնացիցն աքսորեալ էր 'ի Պանդատերիա կղզի, և ապա 'ի Հռեգիոն քաղաք 'ի սիկուլեան ծովուն։ Յուլիա ամուսնաւորեալ ընդ Տիբերի մինչդեռ պայծառանային Կայիոս և Լուկիոս կայսերք, արհամարհէր զնա յետոյ որպէս ոչ արժանի իւր. և այն իսկ եղև ստոյգ պատճառ մեկնելոյ Տիբերի 'ի Հռոդոս։ Եւ ապա Տիբեր յինքնակալել իւրում տարագրեաց զնա. և յետ սպանութեան Պոստումոսի Ագրիպպայ՝ յորում էր ամենայն յոյս նորա, թշուառութեամբ և տվալլուկ կորոյս զնա՝ երկար աքսորանօքն թագուցանել կարծեցեալ զմահ նորա։ Նոյն պատճառք եղեն անգթութեան նորա և 'ի Սեմպրոնիոս Գրակքոս. քանզի սա այր տոհմիկ և արագամիտ, չարաչար զՀարտարիսօսութիւն իւր 'ի կիր արկեալ, զնոյն ինքն զՅուլիա՝ յորժամ էրն կին Մ. Ագրիպպայ՝ հրապուրեաց։ Եւ ոչ աստ զեղծագործութեան նորա զկայ առեալ, այլ և յամուսնանալ Յուլեայ ընդ Տիբերի՝ հանապազորդեալ 'ի նոյն, զրգռէր զնա ընդդէմ առն իւրոյ 'ի հեռ և 'ի յամառութիւն. և նամականին իսկ, զոր Յուլիա առ հայր իւր Աւգոստ գրեաց ընդդէմ Տիբերի, 'ի Գրակքոսէ համարի սադրեալ։ Այդ սա վարեալ 'ի Կերկիրնա կղզի 'ի ծովն ատրիկեան, զամս չորեքտասան եկաց անդ յաքսորս. և զինուորքն յղեալք 'ի սպանութիւն նորին՝ գտին զնա 'ի ծայր ծովեղերն ոչ աւետեաց ինչ ակնկալ։ Ի հասանելնոցա՝ խնդրեաց նա վայրիկ մի առ 'ի գրել զյետին հրամանն առ կին իւր Ամիարէ. և ապա մատոյց դահճաց զպարանոց իւր

արիական մահուամբ, ոչ անարժան անուանն Սեմպրոնեայ՝ յորմէ վարուք օտարացեալն էր։ Ոմանք զզինուորսն զայնոսիկ ոչ՝ի Հռովմայ, այլ՝ի Լ. Ասպրենայ փոխանակէ բդեշխին Աֆրիկեայ աւանդեն յղեալ՝ հրամանաւ Տիբերի, որ՝ի զուր յուսայր զհամբաւ սպանութեանն յԱսպրենաս հանել։

ԾԴ. Ի նմին ամի նոր պաշտամունք սահմանեցան, և յաւելան քուրմք աւգոստականք, որպէս երբեմն Տ։ Տատիոսի զտիտեանսն էր սահմանեալ՝ի պաշտօն սրբութեանցն սաբինացւոց։ Ի գլխաւորաց քաղաքին ընտրեցան վիճակաւ քսանեմի այր, և յաւելան՝ի նոսա Տիբեր, Դրուսոս, Կլաւդիոս և Գերմանիկ։ Խաղք աւգոստականք զայս առաջին նուագ՝ի նախանձընդդէմ գուսանացն գժտութենէ աղմկեցան։ Աւգոստեայ՝ի շնորհս Մեկենասայ, որում սիրելին էր յոյժ Բաթիլլոս, ներեալ էր և զայն ազգ խաղուց. և ինքն իսկ՝ի զբօսանաց անտի չհրաժարէր, ռամկասիրութիւն համարեալ զբօսակից գոլ ռամկին։ Բայց թէպէտև այլ ազգ էին բարք Տիբերի, սակայն չևևս իշխէր առնել խստութիւն ընդ ժողովուրդն՝ որ յայնքան ամաց հետէ սովորեալ էր՝ի թուլութիւն։

ԾԵ. Առ բդեշխութեամբն Դրուսոսի Կեսարու և Կ. Նորբանոսի սահմանեցաւ յաղթանակ Գերմանիկեայ, չև ևս զբաւ եղեալ մարտին։ Յոր մինչդեռ պատրաստէր նա զօրութեամբ մեծաւ արշաւել յամարայնի, ոչ ինչ ընդհատ՝ի սկիզբն գարնայնոյ դիմեաց յանկարծ՝ի Կատտիս, յուսացեալ յերկպառակութիւն թշնամեաց. զի կէսք յԱրմինիոս, այլք՝ի Սեգեստէս յարեալ էին. երկաքանչիւր անուանիք՝ մին հաւատարմութեամբն ընդ մեզ, իսկ միւսն հաւատադրժութեամբ։ Արմինիոս խռովէր զԳերմանիա, իսկ Սեգեստէս զեկուցանէր մեզ յաճախ զսպառնալիս ապրստամբութեան, ՝ի վերջին իսկ կոչունս՝ ուստի՝ի զէն ընթացան. և խրատ տայր Վարոսի ձերբակալառնել և զինքն և զԱրմինիոս և զայլ գլխաւորս. զի ռամիկն չիշխէր ինչ առանց նոցին, և մարթէր զօրավարին ընտրել պարապով զանպարտս յեղեռնաւորաց։ Բայց Վարոս վարեալ՝ի ճակատագրէն ընդ հարուածոմն Արմինեայ անկաւ։ Սեգեստէս թէպէտ և յաշ-

խարհական պատերազմն ձգեալ՝ սակայն կայր և մնայր տարախոհ, եւ և վասն ատելութեանն ընդ Արմինեայ. զի նորա զգուստը իւր՝ զխօսեցեալն ընդ այլում՝ յափշտակեալ, փեսայ ատելի անելոյ իւրում էր Թշնամւոյ. և որ զոդն էր սիրոյ ընդ բարեկամն՝ գրգիռ ցասման լեալ էր ընդ Թշնամիս։

ԾԶ. Գերմանիկ լեգէոնս չորս, հինգ հազար այր 'ի նիզակակցաց, և գուգազս 'ի գերմանացւոց յայսկոյս Հռենոսի խառն 'ի խուռն ժողովեալ ետ Կեկինայ. և լեգէոնս նոյնչափ, և գունդս կրկնապատիկ 'ի նիզակակցաց առեալ ընդ իւր, յարոյց ամրոց 'ի վերայ որմոց՝ զորս հօր նորա 'ի Տաւրոս լերին կանգնեալ էր, և անբեռն բանակաւ խաղաց 'ի Կատտիս, Թողեալ զհետ իւր զԱպրոնիոս 'ի պահ Ճանապարհաց և գետոց։ Քանզի երաշտ և նուազութիւն ջուրց, որ դժուարադէպ 'ի նահանգն յայնոսիկ պատահէ, անարգել պատրաստէին նմա Ճանապարհ. բայց երկնչէր հանդիպել 'ի դարձին անձրևաց և գետոց յորդելոյ։ Եւ այնպէս յեղակարծում 'ի Կատտիս հասեալ, զի ապիկարը առ հասարակ տղայք և կանայք 'ի գերութիւն կամ 'ի մահ մատնեցան. իսկ հասակն առոյգ ընդ Ադրանա 'ի լոյղ անկեալ, արգելուլ ջանային զհռովմայեցիս՝ որոց կամուրջ զգետոնն սկսեալ էր արկանել։ Բայց 'ի կազմածոց և 'ի նետից վանեալ, և 'ի զուր փորձեալ խօսել 'ի խաղաղութիւն, կէսք անկան առ Գերմանիկ, այլք Թողեալ զգիւղս և զսանս՝ ցրուեցան յանտառս։ Իսկ Կեսարու հրկէզ արարեալ զբուն նոցա զՄատտիոն, և զերկիրն աւար հարեալ, դարձաւ 'ի Հռենոս. և ոչ իշխեաց Թշնամին նեղել զնա յետկուսէ, որպէս սովոր էր, 'ի նահանջել իւրում նենգաւ քան յերկիւղէ։ Քերուսկացւոց խորհուրդ կալեալ ձեռն տալ 'ի Կատտիս, երկեան 'ի Կեկինայ՝ որ աստի և անտի յարձակէր 'ի նոսա զինուք. որ և զՄարսս յանդգնեալս 'ի դիմամարտ՝ արգել յաղթող պատերազմաւ։

ԾԷ. Յետ սակաւ միոյ հրեշտակք 'ի Սեգեստեայ հասին խնդրել օգնութիւն ընդդէմ զօրութեան ռամկին՝ որ շուրջ պատեալ պաշարէր զնա, զի հղօրագոյն առ նմա էր Արմինիոս 'ի գրգռել զնա 'ի պատերազմ։ զի որչափ ոք ձեռնարկէց է յանդգնութեամբ, այնչափ

առաւել վստահին 'ի նա խուժադուժք, և տիրապետէ նա 'ի խռովութեան։ Սեգեստեայ և զորդի իւր զՍեգիմոնդ յաւելեալ էր ընդ պատգամաւորս, այլ թախիծք մտաց ընկրկէին զպատանին. զի յամին՝ յորում վտարանջեաց Գերմանիա՝ կացեալ նա քուրմ բագնին ուբիացւոց՝ զապարօշն սրբազանս խզեալ, առ ապրստամբս անդր փախուցեալ էր։ Սակայն 'ի յոյս հռովմէական գթութեան եբեր զպատգամն հօրն, և մարգասիրապէս ընկալեալ՝ յղեցաւ թիկնապահօք մինչև յափունս Գալլիոյ։ Հարկ եղև Գերմանիկեայ դառնալ զօրքն. և մարտ ընդ պաշարօղս եղեալ, զերծոյց զՍեգեստէս բազմութեամբ ազգականացն և որոց ընդ ձեռամբ նորա էին՝ տիկնայք ազնուականք, ընդ որս և կին Արմինիոսի, դուստր Սեգեստեայ, համաբարոյ առն իւրում քան թէ հօր, որ զհետ գայր՝ ոչ յարտասուս շարժեալ և ոչ յաղերս, այլ ձեռս զմիմեամբ 'ի կուրծս ածեալ, զաչս 'ի վայր արկեալ 'ի մանկիկն՝ զոր կրէր յարգանդի։ Բարձեալ բերէին և բանակին Վարոսի կողոպուտք, մեծաւ մասամբ անկեալ աւարամասն այնոցիկ՝ որ անձնատուրք յայնժամ գային լինել։ Ընդ նոսին և ինքն Սեգեստ երևեալ հսկայազօր, որ անդրժելի նիզակակցութեանն յիշատակաւ աներկևան, խօսեցաւ և ասէ.

ԾԸ. Այս ինձ ոչ առաջին օր է հանդիսի հաւատարմութեան և հաստատութեան ընդ հռովմայեցիս՝ յորմէ հետէ դիւցազնին Աւգոստեայ շնորհիւ զքաղաքացւոյ ընկալայ պատիւ, զբարեկամ և զթշնամի ըստ օգտի ձերում ընտրեցի. իբր ոչ եթէ ատելով զհայրենիս, քանզի մատնիչք ատելի այնոցիկ իսկ են՝ յորս ձեռն տան, այլ նոյն զՀռովմայ և զԳերմանիոյ համարեալ զօգուտ, զխաղաղութիւն նախամեծար քան զպատերազմ արարի. վասն որոյ և զյափշտակող դստերն իմոյ, զուխտադրուժն առ ձեզ զԱրմինիոս, առաջի Վարոսի՝ որ յայնժամ զօրավարէրն՝ պարտաւոր կացուցի. այլ դանդաղանօք զօրավարին յամեալ, և օգնականութիւն և ոչ մի յատենէ անտի գտեալ, խնդրեցի զիս և զԱրմինիոս դաւակցօքն հանդերձ ունել 'ի կապանս. վկայ է ինձ գիշերն այն, որ իցէ՛ ոչ ևս ինձ լուսանայր։ Որ ինչ յետ այնորիկ գործեցան, ողբալ մանաւանդ քան

պաշտպանել մարթ է. արկի զԱրմինիոս'ի կապանս, և 'ի դաւակցաց նորին կրեցի կապանս։ Այլ այն ինչ տուաւ ինձ յանդիման լինել քեզ, զՀինն նորոյն և խառ վութեան զխաղաղութիւն նախադասեմ։ ոչ առ շահ ինչ օգտի անձին, այլ առ'ի բաց քերել յանձնէ զկեղտ դրժանաց, և գոլ միջնորդ պատկանաւոր գերմանաց-ւոց, եթէ զապաշաւ քան զկորուստ ընտրեսցեն։ Նե-րել մաղթեմ մանկութեան և անգիտութեան որդւոյ իմոյ. խոստովանիմ զդուստր իմ այսր առ Հարկի ածեալ. քո է դատել, որպէս կին յղացեալ յԱրմինեայ՝ թէ որ պէս դուստր ծնեալ'ի Սեգեստեայ առաւել ի՞նչ խը-նայելոյ արժանի։ Որում մարդասիրապէս պատասխա-նեալ Կեսար, փրկութիւն որդւոյ նորա և ազգակա-նաց, և բնակութիւն նմա յառաջնումն գաւառի խոս-տացաւ։ Եւ դարձոյց նա զզօրս իւր, և զզօրավարու-թեան 'ի Տիբերեայ ընկալաւ զանուն։ Եւ կին Արմի-նեայ ծնաւ արու, և մնաւ մանուկն'ի Հռաւենննա։ Իսկ որ ինչ ապա բախտին ընդ նմա արկածք, պատմեցից 'ի ժամանակի։

ԾԹ. Համբաւ անձնատուր լինելոյ և մարդասէր ընդ-ունելութեան Սեգեստեայ ազգեաց յոյս կամ տրրտ-մութիւն յազգս, ըստ կամելոյ նոցա կամ ըստ դրժ-կամակութեան ընդ պատերազմ։ Բայց Արմինիոս 'ի վերայ բնածին վայրենութեանն, յափշտակութեամբ կնոջն և գերութեամբ մանկանն անդստին յարգանդէ մօր՝ և ևս վայրենացեալ, շրջէր առ քերուսկացիս՝ զէն ընդդէմ Սեգեստեայ, զէն ընդդէմ Կեսարու խնդրե-լով, և ոչ'ի թշնամանս խնայելով՝ ասէր. Զարմանալի հայր, զօրավար սքանչելի. բանակ մեծազօր և բա-զուկք այսքան գումարեալ առ 'ի յափշտակել զկին մի տկար։ Սակայն լեգէոնս երիս, և երիս զօրավարս արկի տապաստ. ոչ մատնութեամբ, և ոչ ընդդէմ յղի կանանոյ, այլ ընդդէմ սպառազինաց համարձակ ձա-կատամարտեալ։ Դրօշք հռովմէականք յանտառս Գեր-մանիոյ կան 'ի տեսիլ, կախեալք յինէն 'ի նուէր ար-գադիր դիցն հայրենեաց։ Թող բնակեսցէ Սեգեստ յափունս գերեալս, թող քուրմ զորդի իւր կացուսցէ. արք գերմանացիք ոչ հանդուրժեսցեն տեսանել ընդ Ալբիս և ընդ Հռենոս զխուրձ զտապար և զպատմու-

Ճան։ Ազգք, որոց անծանօթ է իշխանութիւն հռովմէական, անփորձք են պատուհասից և անգէտք հարկաց. զորս թօթափեալ յանձանց գերմանիկք, և ձեռնունայն արձակեալ'ի բաց զաստուածարեալն Աւգոստ և զընտրեալն Տիբեր, երկիցէն նոքա յանփորձ մանկանէ, երկիցէն'ի բանակէ խռովայոյզ մարդկան։ Եթէ հայրենիք և ազգականք քան զտեարս, եթէ նախնին կարդ քան զգաղթականս նորս սիրելի իցեն նոցա, Աբ մինեայ՝ որ'ի փառս և յաղատութիւն ածէ զնոսա, քան Սեգեստեայ՝ որ յապիրատ ծառայութիւն, զհետ դիմեսցեն։

Կ. Ի բանից աստի գրգռեալ ոչ միայն քերուսկացիք՝ այլ և շուրջ բնակեալ ազգք, և Ինգուիոմեր հօրեղբայր նորին իսկ Աբմինեայ՝ մեծարոյ'ի բազմաց հետէ առաջի հռովմայեցւոց, յարեցան'ի նա. որով յաւելաւ երկիւղ կայսերն։ Եւ առ'ի պառակտել զթշնամին, զի մի միանգամայն ամենայն զօրութիւն բանակին անկցի զիւրև, զԿեկինա քառասուն գումարտակօք հռովմայեցւոց յղեաց ընդ սահմանս Բրուկտերաց'ի գետեզերս Ամիսեայ, զՊետոն զօրավար խաղաղոյց հեծելազօրօք'ի սահմանս փրիսացւոց, իսկ ինքն ջորիւք լեգէոնօք նաւարկեաց ընդ լիճն. և համայն հետևակազօրն և այրուձի և նաւատորմիղ եկին հասին'ի գետ անդր։ Քաւկիացիք, որոց յանձն առեալ էր գալ յօգնութիւն, խառնեցան'ի բանակն։ Լ. Ստերտինիոս յղեալ'ի Գերմանիկեայ մեկնակազէն գնդաւ, եհար զԲրուկտերս՝ որք հրոյ Ճարակ տային զերկիրն իւրեանց. և'ի նախճիրս կոտորածին և յաւար հարկանել անդ՝ եգիտ զմետասաներորդի լեգէոնին զդրօշ արծուէնշան զկորուսեալն ընդ Վարոսի։ Խաղաց այնուհետև բանակն մինչև ցեզերս սահմանաց Բրուկտերաց, և հար ապականեաց զամենայն երկիրն ընդ Ամիսիա և ընդ Լուպպիա գետ, ոչ ինչ հեռի'ի տեւտոբուրգեան անտառէն՝ յորում դիակն Վարոսի և լեգէոնացն անթաղ մնացեալ համբաւէին։

ԿԱ. Եւ ցանկայր Կեսար զվերջին սպասն մատուցանել զօրավարին և զօրականին. ընդ նմա'ի գութ շարժեալ և բանակն առ հասարակ վասն ազգականացն իւրեանց և բարեկամաց, մտախոհք'ի պատահարս

պատերազմաց և 'ի բախտ մարդկան։ Յղեցաւ նախ Կեկինա հետազօտել զխորս անտառին, և կամուրջս և լիր արկանել 'ի Ձախձախուտս անդր և յանհաստատ դաշտավայրս. և ապա միջամուխ եղեն 'ի տխուր անտառ անդր, սոսկալի 'ի տեսիլ և 'ի յիշատակ։ Բանակետղ Վարոսի ընդարձակապատ 'ի չափ զինարանին՝ ցուցանէր զվաստակ ձեռին երից լեգէոնաց։ Անդր ևս պատնէշ կիսաւեր և փոս Թերալից՝ գուշակէին զամփոփեալ անդ զդիակունս. և 'ի մէջ դաշտին խաղաղակոյտ ոսկերաց, և ոսկերոտի սպիտակ ցան և ցիր, զփախստականին և զմարտուցելոց տային գուշակել զամբոխս։ Անկեալ դնէին անդ բեկորք զինուց խառն ընդ անդամս ձիոց, և 'ի կոձեղս ծառոց գլուխք մարդկեղէնք վարսեալ. և շուրջ յանտառին բագինք խուժադուժք, յորս ածեալ էին 'ի սպանդ հազարապետք զօրաց և գլխաւորք 'ի հարիւրապետաց։ Եւ ապրեալք ոմանք 'ի կոտորածէ մարտին և մազապուրծք 'ի գերութենէ պատմէին՝ ուր զօրավարք անկեալ, ուր արծուէդրօշք յափշտակեալ, ուրանօր Վարոսի զնախկին վերն ընկալեալ, և յորում տեղւոջ չարաբաստիկն զիւրովին երթեալ. ուր ուրեք Արմինեայ առ զօրսն ատենախօսեալ, քանի կախաղանս գերուոյն, քանիսն վիհս հրամայեալ, և ի՞նչ զդրօշս և զարծուիս խրոխտագոյնս թշնամանեալ։

ԿԲ. Արդ բանակն հռովմէական զերեամ մի յետոյ քան զկոտորածն զայն 'ի տեղի անդր հասեալ, զոսկերս երից լեգէոնացն ընդ հողով արկանէր՝ ոչ գիտելով զիւրոցն թէ զօտարաց, այլ որպէս զազգականաց և զարենակցաց թաղելով զաճիւն, տխուրք առ հասարակ և ոխերիմք՝ ևս քան զևս ընդդէմ թշնամեաց զայրագնեալք։ Կանգնեցին անդ շիրիմ հողաբլուր, Կեսարու զառաջին գուշն արկանելով, սպաս շնորհապարտ վախճանելոցն, արտասուակցորդք կենդանեաց։ Բայց Տիբերի ոչ հաճոյ թուեցաւ գործն այն. ոչ միայն զի զՊերմանիկեայ զամենայն ինչ չարոյ մասին վարկանէր, այլ և զի 'ի պատկեր կոտորելոցն և անթաղ նոցին դիականց զօրականն տաղտուկ 'ի պատերազմ և ահաբեկ 'ի թշնամեաց դտանէր, և զի դարձեալ ոչ 'ի դէպ թուէր նմա՝ զօրավարի ումեք սրբա-

զան Հանդիսիւ և Հայրենաւանդ արարողութեամբք 'ի մեռելոցն պատարագել։

ԿԳ. Բայց Գերմանիկոս հետամուտ լինէր Արմինեայ ընդ առապարս. և պատեհ գտեալ, զօրահատոյց արար զայրուձին՝ տիրել դաշտին, ուր նայն բանակեալ էր։ Արմինիոս հրաման տուեալ իւրոցն ամփոփել մերձ յանտառն, դարձոյց զնոսա յանկարծակի, դարանելոցն ևս յանտառի անդ նշան տուեալ յառաջ խաղալ։ Բանակն այն անակնկալ խռովեցոյց զայրուձին. և գումարտակք, որ յօգնութիւն նոցա առաքեցան, ձգեալ ընդ գունդս փախստէից՝ յաւելին զխռովութիւն, և մղեալ վարէին 'ի Ճախճախուտ անդր ծանօթ յաղթականին, և բազմավտանգ որոց էրն անծանօթ, եթէ չէր Գերմանիկեայ 'ի Ճակատ զլեգէոնս կարգեալ. որով ահ անկեալ 'ի թշնամիս, և մերոցն խրախոյս առեալ, մեկնեցան 'ի միմեանց հաւասար մարտիւ։ Եւ խաղացոյց Գերմանիկ զբանակն յԱմիսիա, և 'ի նաւատորմ անդր՝ որով ածեալ էր զլեգէոնս՝ դարձոյց զնոսա, մասին հեծելազօրուն պատուէր տուեալ զափամբք ովկիական ծովուն հասանել 'ի Հռենոս։ Կեկինա թէպէտ և տեղեակ էր Ճանապարհացն ընդ որ զզօրսն ածէր, հրամայեցաւ փութալ անցանել ընդ երկայն կամուրջն՝ որ 'ի լայնատարր Ճահիճս անդ լիր երբեմն արկեալ էր 'ի Լ. Դոմիտեայ. երկուստեք տրղմուտք էին թանձրախոր մօրից և առուաց բազմավտանգ, և անտառք շուրջանակի զառ 'ի վեր տակաւ ամբառնային, զորս յայնժամ Արմինիոս ելից զօրօք՝ ընդ կարձոյ Ճանապարհ Ճեպընթացս ածեալ զնոսա անդրը կանխաժամանն քան զզօրս մեր ծանրաբեռինս զինուք և կահիւք։ Կեկինայ վարանեալ զի հարկ էր նմա և զկամուրջն՝ կիսաւեր 'ի հնութենէ՝ նորոգել և վանել զթշնամին, խորհուրդ կալաւ հարկանել բանակ առ ետեղ, որպէս զի կէսք 'ի վաստակն՝ այլք 'ի պատերազմ ձեռն արկցեն։

ԿԴ. Գուն գործէին խուժադուժք բեկանել զպահս մեր, և 'ի վերայ վաստակաւորացն անկանել, յարձակեալ շուրջանակի 'ի կողմանց և 'ի հանդիպոյ։ Թառնին աղաղակք գործաւորացն և մարտկաց. ամենայն ինչ դժպատեհ հռովմայեցւոյ, տիղմն լցրծուտ անկայ

ընդ ոտիւք, և զօրք սպառազէնք ծանրաբեռինք՝ որք և ոչ տէգընկէց 'ի միջոյ ձահձաց կարէին լինել. իսկ քերուսկացիք սովորք 'ի մօրուստս անդ պատերազմել, յաղթանդամք, և նիզակք նոցա երկայնաձիգք հարկանել 'ի հեռուստ։ Մինչդեռ լեգէոնք ընկրկէին, զի՛ շեր զնոսա 'ի ձախողակ մարտէն զերծոյց։ Գերմանացիք յաջողութեամբն անխոնջք՝ զուղխս, 'ի շրջակայ բլրոց իջեալս, 'ի ձոր անդր դարձուցանէին. ուստի հովիտն ողողեալ և գործն աւերեալ, կրկնապատկեր զվաստակ զօրականին։ Այն քառասնեւորդ ամէր կենկինայ զինուորութեան 'ի հնազանդել և 'ի հրամայել, յաջողութեան և արկածից փորձ, նովին և անվեհեր։ Ցմտաւ ածեալ որ ինչ դէպք կարէին տալ, ոչ այլ ինչ իմացաւ հնարս՝ բայց արգելուլ զթշնամին յանտառի, մինչև վիրաւորք և գունդք ծանրաբեռինք յառաջանցանիցեն։ Էր հովիտ երկայնաձիգ ընդ բլուրսն և ընդ ձահիձս, ուր մարթէր ձակատ անձուկ յարդարել. կացոյց անդ զհինգերորդ լեգէոնն յաջմէ, և զահեակն քսան և միումն լեգէոնի ետ. նմա՝ դիմել 'ի պատերազմ, և սմա՝ զհետ հասանել։

ԿԵ. Անհանգէտ 'ի յոյզս երկուստեք անցուցին զգիշերն. խուժադուժք 'ի խրախուսս կոչնոց զուարթ երգովք և ահագին գոչմամբք զստորակայ ձորն և զձայնատուր անտառս լնուին. իսկ առ հռովմայեցիս հրատք առ կայծեալք, բարբառք ընդհատք, և զօրք այսր անդր ընկողմանեալք 'ի պատնիշին, կամ 'ի վրանս թափառականք, չկարէին տալ քուն աչաց քան թէ հսկէին։ Երաշ անդոհական զարհուրեցոյց զզօրավարն. քանզի թուէր նմա տեսանել զԿուինտիլիոս Վարոս արիւնաթաթաւ 'ի ճաց անտի 'ի վեր երևեալ, և լսել ձայնի նորա՝ զի կոչէր զինքն, և չլինէր լսելի. աջ կարկառէր, և մերժէր 'ի բաց։ Ի լուսանալ աւուրն լեգէոնք 'ի թևս անդ կարգեալք՝ առ ահի կամ առ հեստելոյ՝ լքեալ զկայս իւրեանց, փութացան անցին յայնկոյս մօրիցն, և զկայ առին 'ի դաշտի։ Արմինիոս թէպէտև կարէր անխափան 'ի վերայ յարձակել, ոչ փութացաւ. այլ յընկղմել կարասւոյն խորասոյզ 'ի տիղմն և յաղմկել զօրացն շուրջանակի և 'ի դրօշուցն շփոթել կարգաց, ժամ պատեհ համարեցաւ ձայն տալոյ զերմանացւոց 'ի յարձակումն, յորժամ իւրաքանչիւր որ զան

ձամբ պատաղեալ՝ ոչ ևս լսէր զօրավարին։ Ահա Վարոս, ահա նոյն Ճակատագիր դարձեալ զլեգէոնս մատնէ 'ի պարտութիւն. ասաց, և ընտրելովք զօրականին պատառեալ զռաղմն, եհար մանաւանդ զձիանն։ Ոչք սահեալ ընդ երկիրն Ճախճախուտ և արեամբ իւրեանց ողողեալ՝ կործանէին զվերելեակս, ցան և ցիր զհանդիպեալս կացուցանէին, և առաթուր կոխէին զնոսա։ Առաւելագոյն Ճիգն 'ի վերայ արծուէնշան դրօշուցն գործեցաւ, զորս չէր մարթ ածել ընդ թանձրատարափս նետից, և ոչ 'ի տղմուտն կանգնել զնոսա։ Կէկինայ, մինչդեռ խրախուսէր զՃակատն, անկաւ ձին ընդ նովաւ. և ինքն յերկիր կործանեալ, պաշարէր 'ի թշնամեաց՝ եթէ ոչ լեգէոնն առաջին զդէմ ունէր նոցա։ Օգնեաց նմա ագահութիւն թշնամեաց. զի նոքա թողեալ զկոտորածն՝ զհետ եղեն աւարառութեան, և լեգէոնք զերծան ընդ երեկս 'ի դաշտ արձակ և 'ի տրամ։ Այլ և ոչ ասա զկայ առնուին չարիք. հարկ էր պատնէշս շուրջ ածել, կանգնել հողաբլուրս, և կահք և գործիք պեղելոյ զերկիր և զսիզաբոյս հատանելոյ կորուսեալ էին առաւելագոյն մասամբ. ոչ ևս գոյին ոչ խորանք զօրականին, և ոչ դարման վիրաւորաց, զպարէնս շաղախեալս 'ի սիղմ և յապաժոյժ բաշխէին 'ի կերակուր։ Արհաւիրք աղետաւոր գիշերոյն, և բիւրաւորաց առ վաղուն պատրաստեալ վախճան, ընուին զբանակն ողբովք։

ԿԶ. Մի յերիվարաց յայնժամ ըստ դիպուածոյ կապակոտոր, և 'ի շռինդն ամբոխին զահանդեալ փախըստական, առաթուր զոմանս 'ի հանդիպելոցն սատակեալ, սարսափ այնպիսի 'ի զօրսն էարկ, իբր թէ գերմանացւոց 'ի վերայ իւրեանց հասեալ. և դիմեցին առ հասարակ 'ի դրունս, մանաւանդ 'ի տամնորդականն հեռի 'ի թշնամւոյն և ապահովագոյն։ Կէկինայ 'ի վերայ հասեալ՝ զի ընդունայն արհաւիրքն էին, և ոչ կարացեալ ոչ սաստիւք, ոչ աղերսանօք, և ոչ զօրութեամբ զդէմ ունել խափանել զզօրականն, առ սեամն դրանն անկաւ տարածեալ, արկանել անցից նոցա խոչ զգթութիւն. զի հարկ էր նոցա զզօրավար իւրեանց առ ոտն կոխել. և հազարապետք զօրացն և հարիւրապետք փարատեցին զտարապարտ երկիւղ նոցա։

ԿԷ. Յայնժամ 'ի զինարան անդր բանակին զզօրն ժողովեալ, և հրամայեալ լուութեամբ կալ'ի լուր, ազդարար նոցա որ ինչ ժամանակն և հարկ պահանջէին, զի 'ի զէնս ևեթ էր նոցա փրկութիւն, այլ խմաստութեամբ զայնոսիկ պարտ էր 'ի կիր արկանել. զի պարտ էր նոցա կալ'ի բանակին մինչև թշնամիք յուսով ըզբռամբ ածելոյ զայն՝ հուպ մատիցեն, և յայնժամ յամենայն կողմանց 'ի վերայ յարձակեալ՝ մարթ իցէ ինքեանց հասանել զհետ նոցա մինչև 'ի Հռենոս. զի 'ի փախստի անդ անտառք բազումք, լիճք թանձրախորք և դժնեայ թշնամիք առաջի կային նոցա, այլ յաղթականաց մնայր փառք և համբաւ։ Յաւել ևս յուշ ածել նոցա որ ինչ սիրելի առտնին և որ ինչ պանծալի էր 'ի զինուորութեան, լռեալ զարկածից։ Եւ ապա զձիանն զօրագլխաց և հազարապետաց, սկսեալ յիւրոցն, ետ քաջագունից 'ի մարտի անաչառապէս. որպէս զի նախայարձակ հեծեալքն լիցին 'ի թշնամիս, հետևակաց զհետ նոցա դիմելով։

ԿԸ. Ոչ ինչ նուազ և գերմանացիք յուսով և ցանկութեամբ, և զօրավարացն տարաձայնութեամբ, տագնապէին։ Արմինիոս կամէր մնալ ելանելոյ արտաքս հռովմայեցւոց, և դարձեալ'ի մօրուտս անդ դժուարակոխս'ի վերայ հասանել նոցա։ Դժնէագոյն էր խորհուրդ Ինգուիոմերի, և հաճոյ խուժադուժ զօրականին, շուրջ պատել զպատնէշս զինուք, և առձեռնպատրաստ զյաղթութիւն խոստանայր, և գերի բազում և աւար լիուլի։ Հապա, 'ի ծագել առաւօտուն, ընուն զփոսս՝ ոստս 'ի նեբքս ամայեալ, սողոսկին ընդ պատնէշս 'ի վեր, ուր նուազունք ոմանք 'ի զինուորաց՝ դոգցես իմն անշարժք առ ահին արձանացեալ կային։ Իբրև այն ինչ հասին կացին առ շրջապատնէշ բանակին՝ նշան ետ զօրացն Կեկինա, հնչեցին միանգամայն փողք և շեփորայք, և 'ի դոչիւն աղաղակի գրոհ տուեալ պաշարեցին յետկուսէ զգերմանացիս՝ ձայնարկեալ առ նոսա. Ոչ անտառք են աստ և ոչ ճահիճք, հաւասար է ասպարէզ և հաւասար դիք։ Կարծէին թշնամիք գտանել անդ աւար անչափ և նուազունս ոմանս մեկնակաղէնս. այլ'ի հնչիւն փողոց և 'ի շողիւն զինուց զահի մեծի յանկարծակի հարեալ՝ խուռվեցան վա-

տասրտեալք 'ի ձախողութեան, որպէս էին 'ի յա-
ջողութեան յանդգնութիւն։ Արմինիոս մաղապուր, Ին-
գուիոմեր կարեվէր, խոյս ետուն 'ի մարտէն. և ռամիկ
սպայն սրոյ եղև Ճարակ ցորչափ տիւն և կատաղու-
թիւն տևեցին։ Գիշերախառն ապա դարձան լեգէոնք.
և թէպէտ առաւելագոյն վիրօք և հաւասար սովով
վտանգեալք, այլ զամենայն ինչ և զզօրութիւն և
զառողջութիւն և զլիութիւն գտանէին 'ի յաղթու-
թեան։

ԿԹ. Յայնժամ հռչակ զպաշարմանէ բանակին գը-
նայր, և զգերմանացւոց յաղթականաց դիմելոյ 'ի Գալ-
լիա. և եթէ չէր Ագրիպպինայ արգելեալ զկամուրջն
Հռենոսի բեկանել, գտանէին ձեռներէցք առ ահի յա-
պիրատութիւնն յայն։ Այլ կին արիասիրտ զպաշտօն
զօրավարի յաւուրսն յայնոսիկ յանձին բերեալ, ձորձ
և դարման չքաւոր և վիրաւոր զօրականին առատա-
ձեռնէր։ Կ. Պլինիոս գերմանական պատերազմացն
պատմիչ՝ աւանդէ, զի կացեալ նորա 'ի խելս կամրջին՝
դրուատիս և շնորհակալիս լեգէոնացն դարձելոց մա-
տուցանէր։ Բայց Տիբեր 'ի խոր խոցեցաւ ընդ այն, զի
ասէր. Ոչ անկեղծութեամբ ինչ այդ ամենայն խնամքդ
իցեն, և ոչ ընդդէմ օտարաց պատրաստեալ զինուորու-
թիւն. չմնայ ինչ ինքնակալաց, եթէ կին հանդէս առ-
նիցէ զօրականին, զդրօշուք գայցէ, պարգևս զինուո-
րաց բաշխեսցէ. որպէս թէ չէր բաւական 'ի ցոյց ռամ-
կասիրութեան զորդի զօրավարի ածել 'ի Ճեմ՞ի ձև զի-
նուորի, և անուանել Կալիգուլա զԿեսար։ Հզօրագոյն
ուրեմն առաջի զօրականին քան զզօրավարս և քան ըզ-
հրամատարս է Ագրիպպինա.'ի ձեռն կնոջ ցածեաւ
ապստամբութիւն՝ զոր փառք ինքնակալի չկարացին
ցածուցանել։ — Գրգռէր ևևս և յաճախէր զկասկա-
ծանսն Սէանոս. և հմուտ բնաւորութեանն Տիբերի՝
տածէր թաքթաքուր 'ի սրտի նորա զատելութիւն, առ
'ի յայտ ածել զայն 'ի զայրանալն։

Հ. Բայց Գերմանիկոս վասն թեթևընթաց գործե-
լոյ զնաւատորմիղն ընդ ծանծաղուտս, և զի մի խրեսցի
'ի տեղատութեան, զերկրորդն և զչորեքտասանե-
րորդ գունդս լեգէոնաց՝զորս ածեալ էր ընդ ծով՝ ետ
Պ. Վիտելլիոսի ածել ընդ ցամաք։ Վիտելլիոս 'ի սկզբ-

բան անդ խաղացոյց զնոսա ընդ ծովեզերս՝ զոյգն ինչ թացեալս յալեաց. այլ ապա մրրիկ հիւսիսոյ և աստղ հասարակօրէին, որ ուռուցանէ զՈվկիանոս, յափշտակեալ վարէր զգունդն։ Երկիր ծածկեալ յալեաց, ծով և ծովեզր և դաշտավայր զնոյն բերելով կերպարան՝ չէր մարթ ընտրել ընդ լոյծ և ընդ կուռ, ընդ խոր և ընդ ծանծաղ։ Կործան անկանէր զօրականն յալեաց, սուզանէր 'ի յորձանս ձիան և կարասի, և դիակունք ծփէին ընդ ռազմն զօրաց. գունդք ընդ իրեարս շփոթեալ, և զօրականն մերթ կողուք չափ և մերթ պարանոցաթաղ յալիս ընկղմեալ, և էր զի պակասէր ընդ ոտիւք նոցա երկիր, և ցան և ցիր ընդ միանուն խորասոյզք լինէին։ Ի զուր էր նոցա ձայն տալ միմեանց, ոչ ինչ ընդդէմ ալեաց օգնէր խրախոյս. ընդ արին և ընդ վատասիրտ, ընդ հմուտ և ընդ անփորձ, ընդ խոհեմ և ընդ յախուռն ոչ էս գոյր խտիր, ամենայն ինչ 'ի նոյն թափ բռնութեան վարեալ։ Յետոյ ապա Վիտելլիոս 'ի բարձրաւանդակ ուրեք հասեալ, անդր զգունդն ժողովեաց, և կացին անդ զգիշերն զայն անսուաղ, և առաւելագոյնք 'ի նոցանէ մերկանդամք և խեղանդամք, ոչ ինչ նուազ ողորմելիք քան զպաշարեալս 'ի թշնամեաց. զի սոցա մահ փառաւորեալ, իսկ նոցա կորուստ անփառունակ հասանէր։ Ցիւ 'ի տեսիլ զերկիրն էած, և հասեալ յեզր Ոնսինդ գետոյ՝ ուր Կեսարու զնաւատորմն ածեալ էր, մտին 'ի նաւ լեգէոնքն՝ որ ծովակուրք համբաւէին, և ոչ ոք հաւատաց փրկութեան նոցա մինչև տեսեալ զնոսա ընդ Կեսարու դարձաւորս։

ՀԱ. Վաղ իսկ Ստերտինեայ առաքեալ էր ընդունել զՍեգիմեր զեղբայր Սեգեստեայ՝ որ անձնատուր եղեալն էր, ածել զնա հանդերձ որդւովն 'ի քաղաք անդր ուրիացւոց։ Երկաքանչիւրոց տուաւ թողութիւն, Սեգիմերեայ դիւրագոյն, որդւոյ նորա յամրագոյն, քանզի ոտնհար 'ի դիակն Վարոսի համբաւէր լեալ։ Բայց առ 'ի ընուլ զտոյժս բանակին Գալլիա Սպանիա և Իտալիա նախանձընդդէմք իրերաց մատուցին զէն և ձիան, և ոսկի՝ որչափ ինչ կարացին։ Գերմանիկեայ գովեալ զնախանձ նոցա, զղէնս և զձիանն մարդիկ 'ի պատերազմ ընկալաւ, բայց դրամն յընչից իւրոց ետ զօրականին։ Եւ առ 'ի սիրել զնոսա մար-

դասիրապէս 'ի վերայ աղէտիցն, այլ առնէր վիրաւորաց, դրուատէր զառն առն զքաջութիւնս, և զվերս նոցա զննեալ՝ զոմն յուսով, զայլ ոմն փառաք, և զամենեսեան բանիւք և գգուանաքյինքն յանկուցանէր և պատրաստէր 'ի պատերազմ։

ՀԲ. Սահմանեցան յայնմ ամի փառք յաղթանակի Ա. Կեկինայ, Լ. Ապրոնիոսի, և Կ. Սիլլոսի, վասն պատերազմացն՝ զորս հարեալ էր նոցա 'ի Գերմանիա։ Տիբեր չէառ յանձն անուանիլ հայր հայրենեաց, որպէս ստէպ ողջունէրն 'ի ժողովրդենէ, և ընդդէմ դարձեալ վճռոյ ծերակուտին՝ ոչ ներեաց երդնուլ յանուն իւր, զամենայն ինչ մահկանացուաց յողդողդս ասելով, և դիւրակործանս ըստ աւաւելութեան փառաց. այլ ոչ ումեք հաւատարիմ կարէր առնել՝ թէ իցէ անփոյթ փառաց, յետ նորոգելոյ իւրոյ զքրիստական օրէնս։ Զի թէպէտ և օրէնքս այս նոյնպէս և առ նախնիս կոչեցեալ՝ բայց սահմաներ յայնժամ 'ի պատուհասել զեղեռնագործութիւնս միայն, զմատնութիւն զօրաց, զխռովութիւն ռամկին, և զանիրաւութիւնս՝ որ թշնամանս ածէն հռովմէական ժողովրդեան. իսկ բանիւք և էթ յանցուցեալք անպատուհաս անցանէին։ Աւգոստ նախ ընդ սովին օրինաք էարկ զպարսաւագիրս, սրտմտեալ ընդ յանդգնութիւն Կասիոսի Սևերեայ՝ որոյ զարս և զտիկնայս երևելիս ժպիրհ գրուածովք չարահամբաւեալ էր։ Եւ Տիբեր հարցեալ 'ի Պոմպոնիէ Մակերոսէ դատաւորէ՝ եթէ պարտ էր ընդունել զամբաստանութիւնս քրիստական յանցանաց, ետ պատասխանի՝ կատարել զօրէնս. զի և ինքն զայրացեալ էր յանանուն տաղից հրատարակելոյ ընդդէմ անգթութեան իւրոյ և հպարտութեան, և ընդ մօրն գժտութեան։

ՀԳ. Ոչ աւելորդ ինչ թուէսցի պատմել աստանօր որ ինչ զՓալանեայ նախ և զՀռուփրիոսէ զանազան աստուտաց հռովմայեցւոց 'ի փորձ մատուցան ամբաստանութիւնք. որովք 'ի միտ առնուլ է՝ ուրպէս և որպիսի ճարտարութեամբ Տիբերի աղէտքս ծանուցեալ մտին, և իբր առ ժամանակ մի խափանեալ՝ բորբոքեցան ապա համանձարակ։ Դատախազն Փալանիոսի ամբաստանէր, իբր թէ ընդ պաշտօնատարս Աւգոստեայ որք

'ի տունս իւրաքանչիւր ուխտաւորէն ժողովէին՝ ընկալեալ նորա զԿասիոս ոմն գուսան եղծապիղծ. և զի դարձեալ 'ի վաճառել զպարտէզ իւր՝ ընդ նմին և զանդրի Աւգոստեայ վաճառեալ էր։ Իսկ Հռուբրիոս ամբաստանէր ստերդումն լեալ յանուն Աւգոստեայ։ Որոց 'ի վերայ հասեալ Տիբերի, գրեաց առ բդեաշխս՝ զի ոչ 'ի կորուստ քաղաքացեաց հայր իւր ընդ դիս էր դասակարգեալ. և զի Կասիոս կատակագուսան սովոր էր ընդ համարուեստս իւր հանդիսանալ և 'ի խաղս և յիշատակ Աւգոստեայ 'ի մօրէ իւրմէ նուիրեալս. զի չէր ընդդէմ կրօնից՝ զպատկեր նորա որպէս զայլոց դից՝ տալ 'ի վաճառս պարտիզաց և տանց. և զի սրտերդումն զայն պարտ էր համարել՝ եթէ զԴիոս ոք խաբիցէ, իսկ զԹշնամանաց դից ինքեանք դիք խընդրեսցեն զվրէժ։

ՀԴ. Եւ ոչ յետ բազմաց ինչ աւուրց Կրանիոս Մարկելլոս կուսակալ Բիւթանիոյ 'ի քրէական յանցանս ամբաստանեցաւ 'ի գանձապետէ իւրմէ 'ի Կեպիոնէ Կրիսպինեայ, միաբանելով ընդ նմա և Ռոմանոսի Հիսպոնի։ Հիսպոն եղև գտիչ հնարից ինչ կենաց, զոր ապա Թշուառութիւն ժամանակաց և ժպրհութիւն մարդկան ևևս զարգացուցին։ Զքաւոր աննշան անխաղաղասէր, 'ի ձեռն պարսաւագրոց ընդ միտ մտեալ վայրենաբարոյ իշխանին՝ տակաւ աւագագունից համբաւոյ դարան գործեաց. և հզօր առ միումն, ատեցեալ յամենեցունց, եկաց օրինակ՝ որում նմանօք յաղքատութենէ 'ի ճոխութիւն, յարհամարհութենէ յահարկութիւն ամբարձեալ, կորստեան այլոց եղեն պատճառք, յետոյ ապա և ինքեանց։ Հիսպոն ամբաստանէր զՄարկելլեայ՝ թշնամանեալ նորա զՏիբեր 'ի խօսս իւր։ Զարախօսութիւն անխուսելի. զտիպս կենաց իշխանին զևս զարհուրելիս ընտրեալ դատախազն դնէր 'ի բերան ամբաստանելոյն. և ըստ իրացն ճշմարտութեան հաւատարիմ ամբաստանութիւնքն լինէին։ Յաւել Հիսպոն՝ Մարկելլեայ զանդրի իւր բարձրագոյն քան զկայսերայն կանգնեալ, և զմիոյ յանդրեաց Աւգոստեայ բարձեալ զգլուխ, և զՏիբերեայն 'ի նմա փոխանակեալ։ Ընդ որ յոյժ սրտմտեալ կեսարու, և ոչ ևս կարացեալ լռել, աղաղակեաց՝ զի 'ի դատա-

պարտութիւն նորին ինքն ևս տայր բարձրաբարբառ և երդմնակուռ վարկ։ Որով հարկ առնէր և այլոց 'ի նոյն։ Բայց օրհասականի ազատութեան մնային դեռ ևս հետք. որով կն. Պիսոն համարձակեալ ասաց. Եւ զոր կարդ 'ի տալ զվարկ քո ունիցիս, Կեսար. եթէ զառաջին, կարացից հետևել. իսկ թէ զյետին, երկեայց տարաձայնել յանդգնաբար։ Ի բանից աստի 'ի միտս լեալ կայսեր՝ զի յանզգոյշ 'ի ցաստումն բրդեալ էր, և 'ի ստրջանաց 'ի հեզութիւն ածեալ, եթող արձակել զպարտաւորն 'ի քրէական դատապարտութենէ. իսկ վասն հարստահարութեանցն՝ ածաւ յատեան վերակացուաց։

Հե. Եւ ոչ շատացեալ ընդ հարցափորձս ծերակուտին, կայր 'ի լուր դատաստանաց ևս՝ բազմեալ յանկեան ուրեք ատենին, զի մի զատենապետն ի ջուսցէ յաթոռոյ իւրմէ. և բազում ինչ առաջի նորա ընդդէմ հնարից և աղերսանաց աւագանւոյ սահմանեցան. այլ 'ի նպաստել ճշմարտութեան՝ կորնչէր ազատութիւն։ Ցայնու ժամանակաւ Պիոս Աւրելիոս ատենակալ բողոքէր, զի 'ի յարդարել զփողոցս քաղաքին և զջրանցս՝ վտանգեալ էր տուն իւր, և խնդրէր նպաստ յատենէն։ Եւ 'ի հակառակել գանձապետաց՝ օգնեաց Կեսար, և զգինս տանն ինքն ետ Աւրելեայ. քանզի սիրելի էր նմա 'ի պատշաճն 'ի կիր արկանել զարծաթ, և զառաքինութիւնս զայս պահեաց ընդերկար՝ 'ի հեռանալ իսկ յայլոյն։ Պրոպերտեայ Կելերի ատենակալի, որ վասն չքաւորութեանն խնդրէր հրաժարել յատենէ, հարիւր բիւր սեստերտս առատաձեռնեաց. քանզի ծանօթ ամենեցուն էր հայրենի կարօտութիւն նորա։ Եւ 'ի փորձել այլոց ևս զնոյն, հրամայեաց նոցա ցուցանել ատենին զպատճառս խնդրոյ իւրեանց, առ 'ի ցոյց խստութեան դժնէացեալ և 'ի բարերարելն։ Վասն որոյ լաւ համարեցան այլք լռել յաղքատութեան, քան խոստովանութեամբն այնուիկ ընդունել զբարերարութիւն։

Հզ. Ցայս ամ յանընդհատ անձրևաց յորդեալ Տիբերի, ողողեաց զԼոնարհագոյն կողմանս քաղաքին. և 'ի դառնալն յետս՝ արար աւեր տանց և կորուստ մարդկան։ Ցայնժամ Աւսինիոս Գալլոս 'ի մատեանս Սիբիլլայի 'ի դէպ համարէր դիմել. բայց Տիբերիոս

ընդդէմ դարձաւ, անհետաքննելի և 'ի կրօնս որպէս 'ի քաղաքավարութեան։ Սահմանեցաւ ապա Աթէոս մի Կապիտովայ և Լ. Սրբոնտեայ հայթայթել հնարս զգեստն նուաճելոյ։ Աքայիա և Մակեդոնիա խնդրէին նուազել զհարկս. և հաճոյ թուեցաւ բառնալ առ ժամն 'ի նոցանէ զփոխանակն բդեշխի, և արկանել զնոսա ընդ ինքնակալութեամբ կայսեր։ Դրուսոսի սուսերամարտս յանուն Գերմանիկեայ եղբօր իւրոյ և իւր 'ի հանդէս ածեալ՝ հանդիսադիր նոցին ինքն եկաց, այնպէս ընդ հեղումն արեանցն բերկրելով՝ թէպէտ և աննշանից, զի սոսկացաւ ռամիկն ընդ այն. և աւանդեն հօր նորա կշտամբեալ զնա։ Իսկ չերևելոյ Տիբերի 'ի հանդիսին՝ այլք այլ ինչ տային պատճառս. կէսք՝ զի տաղտկալի էին նմա հանդէսք, և կէսք՝ զի տրտում էր, և խիթայր երևել աննման Աւգոստեայ՝ որ զուարթադէմ 'ի հանդէսս անդր գայր։ Ոչ կարծեմ առ 'ի ցոյց խստութեան որդւոյն և առ 'ի սարտուցանել 'ի նմանէ զսիրտ ժողովրդեան, թէպէտ այս ևս կարծիք եղեն զնմանէ։

ՀԼ. Անկարգութիւնք տեսարանաց 'ի հերուն հետէ սկսեալ՝ զայրացան յոյժ, սպանութեամբք ոչ միայն ռամիկ որերոյ՝ այլ և զօրականաց, և ուրուք 'ի հաբիւրապետաց իսկ. վիրաւորեցաւ և մի 'ի հազարապետաց 'ի կամէն ցածուցանել զամբոխն, և խափանել զարհամարհութիւն ծերակուտին։ Խորհուրդ 'ի ծերակուտին լեալ զաղմկէն, 'ի դէպ թուեցաւ տալ դատաւորաց իշխանութիւն դան հարկանելոյ զգուսանս. բայց Աստերիոս Սգրիպպաս հազարապետ ժողովրդեան հակառակ եկաց, և Ասինիոս Գալլոս ուժգինս ընդդէմ նորա խօսեցաւ, լուռ ևեթ կալով Տիբերի՝ որ զառաստուերադիր ազատութիւնն զայն շնորհէր ծերակուտին։ Սակայն յաղթեաց հակառակութիւն Սգրիպպայ այնու, զի դիւցազնին Աւգոստեայ սահմանեալ երբեմն էր զազատութիւն գուսանաց 'ի դանից. և բանք Աւգոստեայ պատգամք անլուծանելիք էին Տիբերի։ Բազում ինչ օրինադրութիւնք եղեն 'ի չափաւորութիւն վարձուց գուսանաց, և ընդդէմ համարձակութեան կուսակցաց նոցա. յորոց գլխաւորքն էին՝ զի մի ոք 'ի հարց ծերակուտին մտցէ 'ի տուն գուսա-

նաց. մի յելանել գուսանաց հեծեալք հռովմայեցիք գնասցեն նոցա զառաջաւորք. և մի ինքեանք արտաքոյ տեսարանաց ածցեն ձևացութիւնս 'ի տեսիլ։ Եւ դատաւորաց տուաւ իշխանութիւն պատուհասելոյ զխռովարարս 'ի հանդիսատեսից աքսորանօք։

ՀԸ. Մեհեան Աւգոստեայ, ըստ խնդրոյ սպանիացւոց, հրաման եղև կանգնել 'ի տարակոնեան դաղթականի յօրինակ ամենայն գաւառաց։ Ցհարկ տասանորդի վաճառաց, սահմանեալ յետ քաղաքական պատերազմաց, խնդրեր ժողովուրդն թողացուցանել. և հրովարտակաւ յայտ արար Տիբեր, զի այն ևեթ էր նպաստ զինուորականի դանձուն, և չբաւէր իսկ՝ եթէ հինաւուրց զօրականն նախ քան զքսաներորդ ամ արձակէր 'ի զինուորութենէ։ Այսպէս եղծան այնուհետև օրէնքն անխորհուրդ 'ի վերջնումն խռովութեան բռնաբարեալ, ազատելոյ զօրականին յետ վեշտասան ամաց զինուորութեան։

ՀԹ. Բնեցաւ ապա 'ի ծերակուտին ըստ առաջարկութեան Աբրոնտիոսի և Ատրէոսի, եթէ արժան էր առ 'ի նուաճել զյորդութիւն Տիբեր գետոյ դարձուցանել զլիճս և զվտակս՝ որ Թափէին 'ի գետ անդր։ Հրաման եղև պատգամաւորաց ազատակից քաղաքաց և դաղթականաց խօսելոյ. և խնդրէին փլորենտացիք՝ մի զԿլանիս դարձուցանել 'ի ձորոյ իւրմէ յԱրնոս գետ, յորմէ հասանէր նոցա վտանգ։ Համաձայն նոցին և Միլագետացիք՝ յաւելին. Դաշտորայք Իտալիոյ արգաւանդք կորիցեն, եթէ Նար 'ի վտակս բաշխեալ՝ որպէս խորհէին առնել՝ ողողանէր զայնոսիկ։ Խօսեցան և Հռէատացիք, չառեալ յանձն զվերլինեան լճին խնուլ զելս՝ ընդ որ Թափէրն 'ի Նար, զի հասանէր վտանգ 'ի շրջակայ դաշտս զեղանելոյ. զի իմաստութեամբ օգուտ մարդկութեանս տնօրինեալ 'ի բնութենէ՝ սահմանեալ էին գետոց իւրաքանչիւր ելք և դնացք, սկիզբն և վախճան. և զի ակն ածելեաս արժան էր 'ի կրօնից նիզակակից ազգաց, որոց զոհս և անտառս և բագինս հայրենի գետոց էր նուիրեալ. զի ինքն իսկ գետն Տիբեր չառնոյր յանձն ապահարկ 'ի մերձաւոր գետոց հոսել անփառունակ։ Ազերս արդեօք գաղթականաց, կամ դժուարութիւն իրացն, և կամ նանրահաւատ երկիւղածու-

թիւն զօրացուցին զԽորհուրդ Պիտանի, որ մի՛ ինչ ասէր յեղափոխել։

Զ. Պոպպէոս Սաբինոս թողաւ 'ի կուսակալութեան Միւսիոյ, յաւելեալ յայն և զԱքայիա և զՄակեդոնիա։ Այս ևս Տիբերի էր սովորութիւն՝ ընդերկարել զիշխանութիւնս, և թողուլ ցկեանս զբաղումն 'ի զօրավարութեան կամ 'ի կուսակալութեան։ Այլ և այլ առ այս աւանդին պատճառք. կէսք առ տաղտկութեան նորանոր ընտրութեան զմիանգամ ընտրեալս ասեն կալեալ'ի սպառ, և այլք թէ առ նախանձու՝ զի մի՛ մեծասցին յոգունք։ Են ևս որք համարին զնա ընդ խորագիտութեան իւրում լեալ և կասկածոտ. զի ոչ խնդրէր գերազանց առաքինութիւնս, բայց և զյոռութիւնս ատէր.'ի լաւ որեբոյ վտանգ անձին, և 'ի չարաց նախատինս աշխարհին կասկածէր։ Ի վարանաց այսոքի զառաջեալ, կացոյց և կուսակալս՝ որոց չէր ներելոց մեկնել'ի Հռովմայ։

ԶԱ. Զբդեշխիցն ընտրութեան ժողովոյ, որ ընդ իշխանութեան Տիբերի կամ յաւուրս նորա սկսաւ, չիշխեմ ասել ինչ հաւաստեաւ. զի տարաձայնս զայնմանէ ոչ միայն 'ի պատմագիրս, այլ և 'ի նորին իսկ Ճառս գտանեմ։ Մերթ առանց անուանելոյ զընտրելիս՝ զազգ նոցա, զվարս, և զպատերազմունս իւրաքանչիւրոց 'ի նոցանէ նկարագրէր, որով'ի յայտ գային. և մերթ առանց տալոյ ինչ զնոցանէ ծանօթս՝ յորդորէր զնոսա, մի՛ զաւագութեան թեկն ածեալ՝ խռովել զժողովն, խոստանալով ինքնին զնոցանէ ունել խնամ։ Յաճախ ևս զայնոսիկ միայն ասէր տեսեալ, զորոց անուանս տուեալն էր բդեշխից, ուր այլոց ևս օրէն էր երևել նմա եթէ էր նոցա վստահութիւն'ի շնորհս և'ի վաստակս իւրեանց։ Գեղեցիկ բանք, այլ մնոտիք և կամ պատիրք. որչափ առաւել ազատութեան կերպարանք վեր 'ի վերոյ ծածկեալք, այնչափ բռնաւորագոյն ծառայութիւն 'ի նոսա դարանեալ։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Յեղափոխութիւնք պետութեանն Հռովմայ մինչև ցԱւգոստ։
Բ. Աւգոստեայ համեստ պատճառանաք յինքն ամփոփել զամենայն իշխանութիւն։
Գ. Հնարք ապահովելոյ նորա և մշտնջենաւորելոյ զինքնակալութիւն յազգատոհմի իւրում։ Աղդեցութիւն Լիւիայ, Տիբերի, Ներոնի, և Կլաւդեայ։ Դրուսոսի կոչումն ինքնակալ։ Գերմանիկեայ կալ զօրավար ուրեմն լեգէոնաց առ Հռենոսիւ։
Դ. Ուխտ և երկիւղ հռովմայեցւոց 'ի մերձենալ մահուն Աւգոստեայ։
Ե. Կարծեցեալ այցելութիւն նորա առ Պոստումոս Ագրիպպաս 'ի կղզւոջն Պլանասեայ. մահ Աւգոստեայ, և կոչ Տիբերի։
Զ. Մահ Պոստումոսի Ագրիպպայ. խորհուրդ Սալլուստիոսի Կրիսպեայ զկարևորութենէ գաղտնեայց առ ամենակալ իշխանութիւն։
Է. Ամենայն կարգք պաշտօնէից տան երդումն Տիբերի. կոչել նորա զծերակոյտն 'ի Ժողով վասն սահմանելոյ զսպասս 'ի պատիւ յիշատակին Աւգոստեայ. կեղծիք ստատմութեան նորա առաջի ատենակալաց։
Ը. Ծերակուտին յետ լսելոյ զկտակ Աւգոստեայ՝ սահմանել զաբարոյութիւնս յուղարկաւորութեան նորա. մտածութիւնք հռովմայեցւոց 'ի տեսիլ զսրականին զինուք առընթեր կալոյ դամբանական հանդիսին։
Թ. Ժ. Զրոյցք հակասականք զհրապարակական և զառանձնական կենաց Աւգոստեայ։
ԺԱ. Տիբերի 'ի վերին երեսս մերժել զթախանձանս ծերակուտին ընդունելոյ զինքնակալութիւն։ Հրամայել նորա ընթեռնուլ յոր հանգամանս թողեալ էր Աւգոստեայ զզօրականն, զնիզակակիցս, և զել և զմուտ գանձուց աշխարհին։
ԺԲ. ԺԳ. Ծերակուտին դարձեալ թախանձել զՏիբեր, և նորա յետոյ ապա հաւանութիւն։ Բազմաց 'ի ծերակուտէն անկանել 'ի շնորհաց նորա։
ԺԴ. Մերժել Տիբերի զպատիւս, զոր կամէին սահմանել Լիւիայ. խնդրել նորա տալ Գերմանիկեայ զիշխանութիւն փոխանակի բգեշխի, և առաջարկել երկոտասան գանձապետս։
ԺԵ. Ընտրութիւն աւագանւոյ բարձեալ 'ի Ժողովրդենէ՝ շնորհի ծերակուտին. և վասն աւգոստական խաղուց։
ԺԶ. Խլրտումն վտարանջութեան 'ի բանակին Պաննոնիոյ. հնարք Պերկիննիոսի։
ԺԷ. Խռովարար ճառիւք գրգռել նորա զզօրս։
ԺԸ. ԺԹ. Բլեսեայ ջանք 'ի խաղաղել զնոսա. և որդւոյ նորա առաքումն առ ինքնակալն 'ի հրեշտակութիւն։

Ի. ԻԳ. Գնդացն, որ ձմերէին 'ի Նաւպորտ, ապստամբութիւն. դիմել նոցա 'ի բանակն, և զայրագին ևս վերասին յառնել աղմկին։ Ստել Վիբուլենեայ. մահ կամ փախուստ հարիւրապետաց։

ԻԴ. Տիբերի արձակել զորդի իւր զԴրուսոս ընդ Սէանու ընդդէմ վտարանջելոց լեգէոնաց, առեալ նմա զունդս յատենական զօրաց։

ԻԵ. Դրուսոսի ընթեռնուլ 'ի լուր զօրաց զթուղթ հօր իւրոյ վասն շահելոյ ժամանակ։

ԻԶ. Խնդրել զօրացն դիմել առժամայն 'ի պատերազմ։

ԻԷ. Վասնզն՝ յոր խիզախէ Կն. Լենտուլոս բարեկամ Դրուսոսի։

ԻԸ. Նուաղումն արեգական, յորմէ զօրքն ահաբեկեալ՝ յորդորին 'ի հնազանդութիւն։

ԻԹ. Խոստանայ նոցա Դրուսոս 'ի հօրէ իւրմէ անյիշաչարութիւն յանցանաց նոցա, եթէ դառնայցեն 'ի պարտս իւրեանց։ Վերըսալին հրեշտակութիւն առ Տիբեր. պատուհաս Պերկենիոսի և Վիբուլենեայ։

Լ. Ոխերմագունիցն 'ի խռովարարաց սպանութիւն։ Աղմուկք 'ի զօրս վասն խստութեան ձմերայնոյ, և դարձ նոցա 'ի ձմերոցս։

ԼԱ. Խլտուումն չորից լեգէոնաց ստորինն Գերմանիոյ, վտահացեալ 'ի զօրութիւն իւրեանց և 'ի փառասիրութիւն Գերմանիկեայ, որ չէր անդ յայնժամ։

ԼԲ. Խոզխոզել նոցա զհարիւրապետս, և ոչ ևս կամել կալ ընդ զօրապետաւք։

ԼԳ. Գերմանիկոսի անկանել 'ի շնորհաց Տիբերի հօրեղբօր իւրոյ, և Լիւիայ հանոյ իւրոյ, վասն խնդրելոյ ունել շնորհս առ ժողովրդեան։ Ատելութիւն ընդ միմեանս Լիւիայ և Ագրիպպինայ տիկնոջ Գերմանիկոսի։

ԼԴ. Հասանել Գերմանիկեայ 'ի բանակն, և ընդունելութիւն նորա 'ի զօրացն, և ատենաբանութիւն։

ԼԵ. Բողոք նոցա զերկարաձգութենէ և զխստութենէ աշխատութեան. կամել նոցա կացուցանել զնա ինքնակալ, և հրաժարել նորա և հազիւ խուսել 'ի ձեռաց նոցա։

ԼԶ. Խորհուրդ նորա 'ի ցածուցանել զապստամբութիւն, և ստիպիլ 'ի խոստմունս։

ԼԷ. Զօրականին խնդրել զառժամայն կատարումն խոստմանցն։ Հատուցանել նորա 'ի գոյից իւրոց և բարեկամաց զհրիտակս Աւգոստեայ, և ածել զերկուս 'ի լեգէոնաց 'ի քաղաքն ուբիացւոց։

ԼԸ. Աղմուկ դրօշակրաց պահակապան զօրականին 'ի Քաւկիս, և վազ ընդ փոյթ նուաճումն։

ԼԹ. Վերասին յառնել խռովութեան յառաջնումն և 'ի քսաներորդ լեգէոնի, և Մինուտիոսի Պլանկոսի, զոր ծերակուտին յղեալ էր անդր, անկանել 'ի վտանգ մահու։

Խ. Գերմանիկեայ հաւանել խորհրդոց բարեկամացն, և հեռացուցանել զԱգրիպպինա 'ի բանակէն։

ԽԱ. Տրամութիւն զօրականին ընդ մեկնել նորա, և ամաչելզի գնայր նա խնդրել առ Տրևիրս ապաստան։

ԽԲ. ԽԳ. Առենախօսութիւն Գերմանիկեայ առ երկոսին լեգէոնս։

ԽԴ. Խռովարարաց գալ 'ի յայտ, և 'ի նոցունց զօրաց պատուհասիլ։

ԽԵ. Գերմանիկեայ պատրաստել ոտպատակ 'ի վերայ վեստերացւոց, առ 'ի հնազանդել զՀինգերորդ և զքսաներորդ առաջին լեգէոնն յամառ 'ի վտարանջութիւն։

ԽԶ. Եպերի Տիբերի 'ի Հռովմ վասն չերթալոյ իւրոյ անձամբ առ զօրսն վտարանջեալս, և յղելոյ փոխանակ իւր զերիտասարդս, զԻրուսոս'ի Պաննոնիա և զԳերմանիկ 'ի Հռենոս:

ԽԷ. Տիբերի 'ի մոի եդեալ մի մեկնել'ի Հռովմայ, խաբել զամենեսին պատրաստութեամբն 'ի չու:

ԽԸ. ԽԹ. Զև Գերմանիկեայ հասեալ'ի Վետերս, կիսոց 'ի զօրականէն մեկնել'ի խռովարարաց և սպանանել զնոսա: Գերմանիկեայ մուտ'ի բանակն, զդիակունս սպանելոցն այրել, և անցանել ընդ Հռենոս:

Ծ. Խաղալ բանակին 'ի Գերմանիա, և յեղակարծում հասանել 'ի վերայ Մարսից:

ԾԱ. Առպատակել նորա զերկիրն, պարտել զԲրուքտերս զտուբացիս և զուսիբացիս, և դառնալ խաղաղութեամբ 'ի ձմերոցս:

ԾԲ. Տիբերի տալ համար ծերակուտին զայսմ ամենայնէ, և հաստատել զնոստմունս Գերմանիկեայ առ զօրսն: Նախանձ նորա ընդ գերմանիկ, և առաւել միտումն 'ի Փրուսոս:

ԾԳ. Յուլեայ դստեր Աւգոստեայ կորնչել սովալուկ և թշուառ յաքսորանս իւր 'ի Հռեգիոն. Սեմպրոնեայ Գրակքոսի սպանումն 'ի հրամանէ Տիբերի 'ի Կերկինա կղզւոջ, ուր էրն աքսորեալ 'ի չորեքտասան ամաց հետէ:

ԾԴ. Դաս քրմաց կարգեալ 'ի պատիւ Աւգոստեայ: Սկիզբն անկարգութեանց 'ի նախանձընդդէմ մրցելոյ գուսանաց:

ԾԵ. Պատրաստութիւն Գերմանիկեայ խաղալ զօրութեամբ ընդդէմ գերմանացւոց: Առելութիւն Սեգեստեայ և Արմինիոսի ընդ միմեանս:

ԾԶ. Բանակին յարձակումն յանկարծ 'ի Կատտիս, և յաղթութիւն, և դարձ 'ի Հռենոս:

ԾԷ. Սեգեստ պաշարեալ 'ի համազգեաց՝ խնդրէ օգնութիւն 'ի Գերմանիկոսէ. բանակին հռովմայեցւոց զերծուցանել զնա հանդերձ դստերաւն՝ որ էր կին Արմինեայ, ընդ բազում ձեռասունս և աղգականս նորա:

ԾԸ. Խօսք Սեգեստեայ առ Գերմանիկ, և ընդունել սորա զմեծարանաց անուն ինքնակալի:

ԾԹ. Կ. Արմինեայ գրգռել զգերմանացիս 'ի վրէժխնդրութիւն, և յարուցանել ազգս բազումս: Առպատակել Գերմանիկեայ ընդ ամենայն երկիրն, որ ընդ Ամիսիա և ընդ Լուպպիա:

ԿԱ. ԿԲ. Յուզարկաւորել բանակին զաճիւն Վետոսի և լեգէոնաց նորա. և դժկամակել Տիբերի ընդ այն:

ԿԳ. Գերմանիկեայ ածել զհետևակազօրն ընդ ծով յԱմիսիա, հասանել անտի 'ի Հռենոս. հեծելազօրուն քերել զծովափամբ Ովկիանու: Կեկինայ ածել զզօրս իւր յերկայն կամուրջս:

ԿԴ. Յարձակել 'ի նա բարբարոսաց յեղտիւրս:

ԿԵ. Նկարագիր բանակին հռովմայեցւոց և Արմինեայ յայնմ գիշերի յետ պատերազմին: Յարձակել անդրէն Արմինեայ 'ի վաղիւ անգր, և ընդ երեկս հասանել լեգէոնաց 'ի տրամ երկիր:

ԿԶ. Միոյ յերիվարաց յանկարծակի փախստեամբն ահ արկանել 'ի բանակն:

ԿԷ. Կեկինայ խրախուսել զզօրս իւր, և պատուիրել նոցա մնալ յարձակման թշնամեաց 'ի պատնէշս անգր, և ապա ելանել արտաքս առ 'ի բեկանել զնոսա:

ԿԸ. Գերմանացւոց փորձ փորձել ընդ այգն 'ի բեկումն բանակին

թշնամեաց վանել զնոսա զօրութեամբ, և առնել կոտորած մինչև ցգիշեր։

ԿԹ. Ըստ ստայօգ համբաւոյ բեկման բանակին, պատրաստիլ պահապանաց կամրջին Հռենոսի 'ի խորտակել զայն։ Ագրիպպինայ արգելուլ զայն։ Տիբերի գժգոհել ընդ ծառայութիւնն մատուցեալ 'ի նմանէ անդ։

Հ. Երկոցունց լեգէոնացն, զորս Գերմանիկոս ի ջոյց մերձ 'ի ծովեզր առ 'ի թեթևաբեռնել զնաւս, հասանեն 'ի վերայ մրրիկք հասարակաւորութեան՝ մինչև գրեթէ ընկղմել նոցա։

ՀԱ. Գալլիացիք, Սպանիացիք և իտալացիք ելևէջս առնեն զիրերօք առ 'ի ընուլ զկորուստս բանակին։

ՀԲ. Տիբերի հրաժարել 'ի կոչելոյ հայր հայրենեաց. և վերստին հաստատել նորա զօրէնս ընդդէմ քրէական յանցանաց։

ՀԳ. Փալանիոս և Հռուփրիոս ասպետք հռովմայեցիք ամբաստանին ըստ այսմ օրինաց. Ներողամտութիւն Տիբերի առ 'ի ցոյց։

ՀԴ. Հարցփորձ Կրանիոսի Մարկելլեայ. Կրիսպինոս Կեպիոն առաջին եղեալ 'ի չարախօսութիւն, ատելի զանձն կացուցանէ։

ՀԵ. Առատաձեռնութիւնք Տիբերի։

ՀԶ. Յորդել Տիբեր գետոյ։ Դրուսոսի ածել զսուսերամարտս 'ի հանդէս։

ՀԷ. Անկարգութիւնք ծանունք 'ի տեսարանի. և վճիռք ծերակուտին ընդդէմ այնոցիկ։

ՀԸ. Կառուցումն մեհենից 'ի պատիւ Աւգոստեայ 'ի գաւառս։ Խընդրել ժողովրդեան զբարձումն տասանորդի 'ի վաճառաց, և չլինել լսելի։

ՀԹ. Ծերակուտին խորհել 'ի ջրադարձ Տիբերի, առ 'ի խափանել զյորդումն գետոյն։

Զ. Պոպպէոսի Սաբինոսի կալ մնալ 'ի կուսակալութեան Միւսիոյ։ Դժկամակութիւն Տիբերի 'ի փոխել զատենակալս ընտրեալս յիւրմէ։

ԶԱ. Տիբերի զայս առաջին նուագ գումարել զժողով ընտրութեան բդեշխից։

Եւ ունին գիրքս այս զանցս ժամանակի իբր երկուց ամաց. յորս կացին բդեաշխս։

Սէքստոս Պոմպէոս և Սէքստոս Ապուլէոս, Դրուսոս Կեսար և Նորբանոս Փլակկոս։

Ա. Հ. 767.
Ն. Փ. 15.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ Բ.

Ա. Ի բդեշխութեան Սիսեննայ Ստատիլիոսի Տաւրոսի և Լ. Լիբոնի, աղմկեցան պետութիւնք արևելից և մարգք հռովմայեցւոց, սկիզբն 'ի Պարթևաց առեալ. որոց խնդրեալ Թագաւոր 'ի Հռովմայ և ընկալեալ՝ անարգէին զնա որպէս օտարազգի, Թէպէտ և արշակունի յազգէ։ Եւ էր նա Վոնոն, զոր Փրաատայ պատանդ տուեալ էր Աւգոստեայ. քանզի Փրաատ Թէպէտ և հալածեալ զզօրս և զզօրավարս հռովմայեցւոց, սակայն 'ի սպաս մեծարանաց Աւգոստեայ զոմանս յորդւոց իւրոց յղեալ էր առ նա յուխտ բարեկամութեան, առ կասկածանաց յիւրոցն քան առ երկիւղի 'ի մէնջ։

Բ. Յետ մահուն Փրաատայ և յաջորդելոց զհետ նորա Թագաւորաց, աւագանին Պարթևաց տաղտկացեալ յընտանի պատերազմաց՝ արար հրեշտակութիւն 'ի Հռովմ, խնդրել զՎոնոն զերիցագոյն որդի Փրաատայ։ Փառս իւր համարեցաւ զայն կէսար, և մեծապարգև յուղարկեաց զնա. և բարբարոսքն ընկալան զնա, որպէս գրեթէ զայլս 'ի Թագաւորաց, խընդութեամբ։ Այլ ընդ հուպ յաջորդեաց ամօթ, նուաստ

տութիւն համարեալ պարթևական ազին խնդրել թագաւոր 'ի տար աշխարհէ, զայր ապականեալ 'ի բարուց թշնամեաց։ Եւ ասէին. Մարզ ուրեմն Հռովմայեցւոց համարի և է աթոռն արշակունեաց. և ուր մնան փառք դիւցազանց նոցա՝ որք զԿրասոս սպանին և զՄարկոս Անտոնիոս հալածեցին, եթէ ձերբազատ ոք կայսեր թագաւորեսցէ 'ի վերայ Պարթևաց՝ յետ այնչափ ամս կալոյ 'ի ստրկութեան։ Յաճախէր և ևս զդժկամակութիւն նոցա ինքն իսկ Վոնոն՝ այլազգ 'ի նախնեացն սովորութենէ վարելով, յամր 'ի յորս, տաղտուկ 'ի հեծելութիւն, դեսպակաւ 'ի քաղաքի երևեալ, և արհամարհեալ զինչոյս հասարակաց։ Ծաղր ինա և վասն Հելլէն սպասաւորացն առնէին, և 'ի վերայ անարգ կահուց զկնիք իւր դնելոյ։ Դիւրամատոյցն իսկ գոլ և հեղ, անծանօթ առ Պարթևս առաքինութիւն, 'ի պարսաւ համարէր նմա. զի օտար 'ի սովորութենէ իւրեանց՝ բարին և չար հաւասարապէս ատելի էին նոցա։

Գ. Ամբարձաւ յայնժամ Արտաւան յազգէ արշակունեաց՝ որ մնեալն էր 'ի Դահս, և կազդուրեալ զզօրութիւնս իւր բեկեալս յառաջնումն ճակատամարտի՝ զբռամբ էած զթագաւորութիւն։ Իսկ Վոնոն պարտեալ, խոյս եառ 'ի Հայաստան՝ որ անտէրունչն էր յայնժամ; և ընդ զօրութիւն Պարթևաց և Հռովմայեցւոց տարակուսեալ տատանէր վասն եղեռանն Անտոնիոսի՝ որոյ նենգաւ բարեկամութեան կալեալ զԱրտաւազդ արքայ Հայոց, և արկեալ 'ի շղթայս, և ապա սպանեալ էր. վասն որոյ որդի նորա Արտաշիսաս յիշատակաւ հօրն ոխացեալ ընդ մեզ, զօրութեամբ արշակունեաց զպետութիւն իւր և զանձն կացոյց յաստանի։ Այլ ապա յիւրոցն սպանեալ դաւով, տուաւ 'ի կայսերէ թագաւոր Հայոց Տիգրան. և Տիբերիոս Ներոն էած զնա 'ի Հայաստան։ Ոչ Տիգրան և ոչ որդիք նորա ընդերկար կալան զաթոռն, թէպէտ և զազգ և զթագաւորութիւն ըստ արտաքնոցն սովորութեան խառնեալ էր նոցա հարսանեաք ընդ միմեանս։ Զհետ նոցա հրամանաւ Աւգոստեայ թագաւորեալ Արտաւազդ, մերժեցաւ և նա՝ ոչ առանց մերոցն կոտորածի։

Դ. Յայնժամ ընտրեցաւ Կ. կեսար, առնել խաղաղ-

զութիւն Հայաստանի։ Սա զԱրիոբարզան ազգաւ Մար, զայր անձնեայ և արիասիրտ, կացոյց Թագաւոր Հայոց ըստ կամաց նոցա. այլ'ի յանկարծամահն լինել նորա, ոչ յանձն առին Հայք Թագաւորել որդւոյ նորա։ Այսպա և զիշխանութեան Երատովայ ուրումն կնոջ զփորձ առեալ, զնա ևս մերժեցին. և տարակուսեալ լքեալ անտէրունչք քան Թէ ազատք, զփախըստականն Վռնոն կացուցին Թագաւոր։ Բայց Արտաւան սպառնայր, և ոչ զօրէին Հայք ընդդէմ նորա. և եԹէ մեք նմա պաշտպանէաք, հարկ լինէր մեզ ընդդէմ ՊարԹևաց դրդել պատերազմ։ Յայնժամ Կրետիկոս Սիլանոս կուսակալ Ասորւոց ձգեալ զնա 'ի գաւառ իւր, կալաւ զնա 'ի դիպահոջ, Թողեալ նմա զանուն և զսպաս Թագաւորի։ Եւ Թէ զիաՀրդ նա 'ի նախատանաց աստի խոյս ետ, յիւրում տեղւոջն պատմեսցուք։

Ե. Բայց Տիբերի ոչ անհաճոյ եղեն աղմուկք արևելից, զի այնու պատՀառանօք յաջողէր նմա բառնալ զԳերմանիկ 'ի լեգէոնաց անտի իւրոց, և կացուցեալ յայլ գաւառս՝ արկանել զնա դարձեալ'ի վտանգս դաւոյ և արկածից։ Այլ Գերմանիկ, որչափ յաՀախէր 'ի նա սէր զօրականին և հօրեղբօրն հակառակութիւն՝ այնչափ առաւել փութացեալ'ի յաղԹութիւն, խորհէր 'ի դէպս մարտին՝ որ ինչ զերեամ յաջողութիւն և արկածք էին պատահեալ։ Խորհէր զի գերմանացիք'ի պարտութիւն միշտ մատնեալ'ի դիւրի և 'ի Հակատամարտի՝ յանտառս և'ի Հախինս ապաստանէին, զի կարՀէր ամառն, և ձմեռն 'ի վերայ հասանէր, զի բանակ իւր ոչ այնչափ 'ի սրոյ Թշնամեաց՝ որչափ 'ի ձիգ արշաւանաց և 'ի կորստենէ զինուց տկարանայր, զի Գալլիոյ ոչ ևս գոյր ձիան առ'ի տալ նմա, և զի երկայնաձիգ չուկարասւոյ դժուարին 'ի պաշտպանել՝ տեղի տայր դարանակալութեան Թշնամւոյն. իսկ ընդ ծով արագ և յեղակարծ յաջողէր յարձակումն 'ի Թշնամին՝ 'ի ձեռն արկելն վաղընդփոյԹ 'ի պատերազմ, յածել զլեգէոնս և զպաշար 'ի միասին, և 'ի հասուցանել ընդ գետ զայրուձին անխոնջ 'ի միջերկրայս Գերմանիոյ։

Զ. Վասն որոյ այսմ ուշ եղեալ, զՊ. Վիտելլիոս և զԿ. Անտիոս յղեաց հարկահանս 'ի Գալլիա, և զՍիլիոս և զԱնտէոս և զԿեկինա կարգեաց վերակացուս՝

կառուցանել նաւատորմիղ։ Հազար մի նաւաց բաւա-
կան թուեցաւ, և պատրաստեցան վաղ. կէսք կարճք
և լայնափորք՝ յառաջակողմն և 'ի խելս կոյս 'ի շեշտ
անկեալ, դիւրագոյն զդէմ ունելոյ ալէկոծութեան.
այլք տափանիստք անվտանգ 'ի խրուտս. առաւելա-
գոյնք երկուղղեակ, առ 'ի կարող լինելոյ արագ-
արագ յոր կոյս և կամք էին հասանել՝ շրջեալ ըզ-
թիակս. բազումք ևս յարկածածուկք առ 'ի բերել
զկազմածս մեքենայից, և կրել ձիան և կարասի. բը-
նաւք քաջ առագաստեալք երագաթևք 'ի թի. և ե-
ռանդն զօրականին յաճախէր զհիացումն և զահար-
կութիւն։ Տեղի զօրաժողովոյ սահմանեցան կղզիք Բա-
տաւաց դիւրամատոյցք քաջադէպք յելս զօրաց 'ի նաւ
և նաւարկելոյ ընդ ծովեզերս։ Քանզի Հռենոս մինչև
անդր միահետ կղզիս ևեթ մանուսն ընդգրկեալ, 'ի
մուտս Բատաւիոյ բաժանի յերկուս առաջս. մին ընդ
Գերմանիա հոսեալ՝ պահէ զանուն իւր և զսուր ըն-
թացս, մինչև երթեալ թափի յՈվկիան. իսկ միւսն լայ-
նագոյն և հանդարտագոյն՝ թանայ զսահմանագլուխ
Գալլիոյ, անուն 'ի բնակչաց անտի ընկալեալ Վահալ,
և ապա փոխեալ զայն 'ի Մոսա՝ յոր խառնի, և ընդ լայ-
նածաւալ բերան նորա հոսէ 'ի նոյն ծով ովկիական։

Է. Մինչդեռ նաւատորմիղն համախմբէր, առա-
քեաց կեսար զՍիլիոս մեկնակազէն գնդաւ 'ի վերայ
Կատտաց. իսկ ինքն լուեալ զպաշարումն ամրոցին՝ որ
յեզր Լուպպեայ գետոյ, անդր եհաս վեց լեգէոնօք։
Սիլեայ ոչ աւելի ինչ յաջողեցաւ վասն անձրևաց 'ի
վերայ հասանելոյ, բայց դոյզն ինչ առնուլ աւար հան-
դերձ կնաւ և դստերաւ Արպոսի իշխանին Կատտաց։
Իսկ կեսարու չեղև իսկ հարկ պատերազմի. զի որք
պաշարէինն զամրոցն՝ 'ի լուր գալստեան նորա ցրուե-
ցան 'ի բաց։ Բայց աւերեալ էր նոցա զնորակերտն շի-
րիմ լեգէոնացն Վարոսի, և զնուիրականն Դրուսոսի
բագին բազմամեայ. զոր նորոգեաց կեսար, և 'ի սպաս
հօրն ընդ լեգէոնս իւր եղև պաշտօնակից. այլ ոչ կա-
մեցաւ կանգնել անդրէն զշիրիմն։ Եւ յաւել ածել
շուրջ զվայրոքն, որ ընդ ամրոցն Ալիսոն և ընդ Հռենոս
գետ, պատնէշս և հողաբլուրս։

Ը. Ի հասանել նաւատորմին յուղարկեաց Գերմա-

նիկ յառաջոյ զկարասին, և զլեգէոնս և զգունդս նի-
զակակիցս բաշխեալ՝ի նաւս, խաղաց ընդ դրուսեանն
յորջորջեալ լիմ, պաղատելով առ հայր իւր Դրուսոս
հաշտ լինել ընդ իւր՝ որ՝ի նմանութիւն նորին խրա-
խուսէրն, և օգնել յիշատակաւ հնարիցն և օրինա-
կի քաջութեանցն իւրոց։ Եւ աջողակի նաւարկու-
թեամբ ընդ լիմն և ընդ Ովկիան եհաս յԱմիսիա
գետ. և թողեալ անդ զնաւատորմն յահեակ գե-
տեզերս, սխալեաց չնաւարկել ընդ գետն՝ի վերս, և
ի ջոյց անդր զզօրն՝ ընդ աջմէ գետոյն չու առնել, և
զաւուրս բազումս կորոյս՝ի կառուցումն կամրջաց։
Ասյրուձին և լեգէոնք, մինչչև էր ծոմն յաձման, ան-
ցին աներկիւղ. այլ վերջապահ գունդք օժանդակք, և
բատաւիկք՝ որ ընդ նոսա, արհամարհեալ զալիս՝ի
ցոյց ձարտարութեան իւրեանց՝ի լոյզ՝ խուճապեցան,
և ոմանք՝ի նոցանէ կորեան ջրահեղձոյց։ Եւ մինչդեռ
Կեսար զձակատուն յօրինէր կարգ, ազդ եղև նմա
վտարանջել Անդրիւարաց յետ կուսէ. և վաղվաղակի
զԱտերտինտիոս հեծելագնդաւ և մեկնակազէն զօրօք
արձակեալ, պատուհասակոծ արար զնոսա՝ի հուր և
՝ի սուր։

Թ. Բայց ընդ հռովմայեցիս և ընդ քերուսկացիս
անջրպետեր Վզուրկ գետ։ Արմինիոս ընդ այլս յաւա-
գաց եկն եկաց յեզր նորին՝ի խնդիր Կեսարու. և իբրև
գիտաց՝ զի անդ էր, խնդրեաց՝ի նմանէ հրաման խօսել
ընդ եղբօր իւրում՝ որ կոչէր Փլաւիոս, այր հաւա-
տարիմ՝ որոյ ամօք ինչ յառաջ զմի յաչացն կորուսեալ
էր՝ի մարտի՝ զինուորեալ Տիբերի։ Հրաման եղև նմա.
և իբրև յառաջ մատեաւ, ողջունեաց զնա Արմինիոս.
և արձակեալ զթիկնապահս իւր, խնդրեաց՝՝ի բաց կալ
աղեղնաւորաց որք կարգեալ կային առ գետեզերբն։
Եւ իբրև մեկնեցան, եհարց ցեղբայր իւր՝ թէ ընդ-
էր նիհարեալ էր. իսկ նա զբանակետղն եցոյց և
զպատերազմ։ Եհարց դարձեալ՝ թէ զինչ ընդունէր
վարձ. և Փլաւիոսի պատմելով նմա զյաւելուած ռոճ-
կին, զքառամանեակն և զպսակ և զայլ մրցանակս,
զարմացաւ Արմինիոս ընդ առնուլ նորա յանձն այնպէս
դիւրագնի զծառայութիւն։

Ժ. Եւ՝ի վերջ եկեալ՝ սա զմեծութիւն հռովմայեց-

ւոց ցուցանէր, զզօրութիւն Կեսարու, զվրէժս ծանանուս՝ որ պահին պարտելոց, զգթութիւն առ խոնարհեալս, և առ կին և որդիս իւր զմեծարանս. իսկ նա զպարտս առ հայրենիս յուշ առնէր, զաղատութիւն հայրենի, զդիս պահապանս Գերմանիոց, և զմօրն ընդ իւր զաղաչանս, զի մի դասալիք լինել յանձն առցէ և մատնիչ ընտանեացն և ազգականաց և ազգին՝ քան հրամանատար։ Եւ 'ի զայրանալ վիճին տակաւ 'ի թշնամանս, թէպէտ և գետ 'ի միջի կայր՝ սակայն 'ի կռիւ կամէին գալ, եթէ ոչ աճապարէր Ստերտինիոս արգելուլ զՓլաւիոս, որ ձի և զէն ածել հրամայէր. և անտի Արմինիոս սպառնալից ձայնատուր լինէր 'ի մարտ, յաւելեալ բազում ինչ բառս 'ի լատին բարբառ, զորս 'ի բանակի հռովմայեցւոց 'ի զօրավարել համազգեացն իւրոց ուսեալ էր։

ԺԱ. Ի վաղիւ անդր գերմանացիք Ճակատեցան յայնկոյս Վզուրկ գետոյ։ Խորհեցաւ Կեսար՝ զի չէր պարտ զօրավարի 'ի վտանգ արկանել զլեգէոնս առանց ունելոյ կամուրջս և պատսպարան յետկուսէ. վասն որոյ հրաման ետ հեծելագնդին խաղալ ընդ ծանծաղ։ Ստերտինիոս, և հարիւրապետ նախագնդին Եմիլիոս, ածէին զնոսա ընդ այլևայլ հուն հեռի 'ի միմեանց՝ առ 'ի բաժանել զզօրութիւն թշնամւոյն։ Կարիովալտ զօրավար Բատաւաց յարձակեցաւ ընդ հուն գետոյն, ուր առաւել հոսէ սրընթաց։ Քերուսկացիք զփախուստ կեղծաւորեալ, ձգեցին զնա զհետ 'ի դաշտ՝ շրջապատեալ յանտառաց. և ելեալ 'ի դարանաց, և պաշարեալ զզօրս նորա ամենուստ, զդիմամարտս սպանին և զփախրստեայս հալածեցին. և 'ի գնդել նոցա շրջաբոլոր՝ զկէս կռուով, զայլս 'ի հեռուստ 'ի խուճապ տագնապի կացուցանէին։ Կարիովալտ ընդդէմ բռնութեան մարտին ժուժկալեալ ընդ երկար, խրախոյս ետ ապա իւրոցն՝ կուռ ընդ միմեանս մածեալ, ընդ գունդս թշնամեաց թափ անցանել. և ինքն ընդ ռազմն նոցին պնդակազմն խիզախեալ դիմադրաւ նեռից, և ձին ընդ իւրև կարեվէր, ընդ բազումս յաւագ զօրականէն Բատաւաց անկաւ. այլք մաղապուր եղեն քաջութեամբ, և Ստերտինեայ և Եմիլիոսի այրուձիոյն օգնականութեամբ՝ որ եհաս նոցա 'ի թիկունս։

ԺԲ. Կեսարու անցեալ ընդ Վղուրկ, գիտաց յումեքէ 'ի փախստէից զտեղի Ճակատուն՝ զոր Արմինեայ ընտրեալ էր, և զի այլք ևս յաղգաց 'ի մի վայր ընդ նմա եկեալ էին յանտառն նուիրական Հերակլի, և պատրաստէին տալ գիշերախառն պատերազմ ընդ հռովմէական բանակին։ Հաւատարիմ թուեցաւ վկայութիւն նորա, զի և խարոյկք երևէին, և լրտեսք մերձ ևս մատուցեալ անդր՝ զխրխինջ երիվարաց ասէին լսել, և զխառնաձայն ամբոխի մեծի յոյժ։ Վասն որոյ մինչչև մատուցեալ 'ի վտանգն՝ որ զելս իրացն սահմանելոց էր, կարևոր համարեցաւ հետազօտել զսիրտ զօրականին. խորհէր 'ի դժուարութիւն գիտելոյ զայն ստուգութեամբ, զի հազարապետք և հարիւրապետք սովոր էին զրոյցս բարեաց քան զՃշմարտութիւն պատմել, զի ազատելոց 'ի ստրկութենէ ծառայաբարոյ էր բնաւորութիւն, զի բարեկամք շողոմէին, զի ժողով ևս եթէ կոչէր՝ զսակաւուց ոմանց բանս երկրորդէին այլք, և զի ոչ այլազգ մարթէր զմիտս զօրականին գիտել՝ բայց 'ի Ճաշել նոցա միայնակ անտես և անլուր 'ի զօրապետաց, ուր զյոյս և զերկիւղ իւրեանց յայտ առնէին։

ԺԳ. Յառաջնումն պահու գիշերոյն էլ նա 'ի հմայարանէն ընդ դուռն գողուզի զանխուլ 'ի գիշերապահից, միով ևեթ ընկերաւ, մորթ անասնեղէն արկեալ զիւրև. անցեալ ընդ միջնաշաւիղս բանակին՝ զկայ էառ առ խորանաք, և ծանեաւ ստուգիւ՝ զի մեծարոյ էր զօրականին։ Քանզի կէսք զաղնուականութիւն նորա գովասանէին, այլք զվայելչութիւն, առաւելագոյնք զերկայնմտութիւն նորա, զՀեզութիւն և զանյեղլի բնաւորութիւն 'ի յանձանձանս իրաց և 'ի զբօսանս. և ամենեքեան խոստանային փոխարինել նմա 'ի Ճակատամարտին, և զՀաւատադրուժս 'ի վրէժ նորա և 'ի փառս սատակել։

Յայնմ վայրի մի 'ի զօրաց թշնամեաց ձիավարեալ մինչև 'ի պատնէշս, բարբառելով լատիներէն, խոստանայր մեծաձայն 'ի դիմաց Արմինեայ՝ կանայս և անդաստանս, և ոռՃիկ առօրեայ մինչև ցվախՃան մարտին սեստերտս հարիւր՝ որոց հատուածէինն առ թշնամիս։ Բորբոքեցաւ ցասումն լեգէոնացն 'ի թշնամանաց ան-

տի, և ասէին. Գայցէ օր, և պատերազմաւ առցուք զանդաստանս գերմանացւոց և զկանայս, ընդունելի էն մեզ հմայքդ, մեր լիցին աւար և կանայք և գանձք թշնամեաց։ Ջերրորդ պահու գիշերոյն յարձակեցան թշնամիք 'ի բանակ անդր. այլ իբրև տեսին զգունդս զօրաց խիտ առ խիտ զպատնիշօք, և զամենայն կողմանս ամրացեալ, ընկրկեցան առանց ձգելոյ և նետ մի։

ԺԴ. Գիշերոյն այնորիկ զուարթարար եղև հանգիստ Գերմանիկէայ։ Թուէր նմա 'ի տեսլեան զոհ մատուցանել. և 'ի ցայտել արեան զոհին զձորձով իւրով, միւս այլ գեղեցկագոյն մատուցանէր նմա Աւգոստա հանիւր։ Քաջալերեալ աւետաւոր գուշակութեամբն՝ զոր և հաւահմայք հաստատէին, համախմբեաց զզօրականն, ետ նոցա նախահոգ իմաստութեամբ հրահանգս վասն առաջիկայ պատերազմին, և ասէ. Մի կարծէք թէ դաշտավայրք ևեթ նպաստամատոյցք լիցեն հռովմայեցւոյ զօրականին, այլ և մայրիք և անտառք՝ եթէ գիտիցէ յօգուտ 'ի կիր արկանել զայնս։ Բարբարոսացն ասպարք անարդիւք և նիզակք երկայնաբունք չէն ինչ դիւրակիրք 'ի թփուտս և յանտառախիտս որպէս զտէգ և զսուսեր և զբրահս պատշաճեալս 'ի մարմին։ Յաճախեցէք զհարուածս, 'ի տէգ նիզակի որոնեալ զդէմս. գերմանացւոց ոչ զրահք էն և ոչ սաղաւարտք, և ասպարք իսկ նոցա ոչ երկաթապատք և ոչ ձօշիւք ամրացեալ՝ այլ ոզորահիւս, այլ տախտակ նուրբ նկարէն։ Առաջին ևեթ ռազմ ձակատու նոցա է նիզակաւոր, այլոց լախտս ևեթ մխեալս 'ի հուր կամ գեղարդունս կարճաբունս կրելով։ Մարմին նոցա դժնեատեսիլ սուղ ինչ տոկայ ընդդէմ յարձակման. չկարեն նոքա ժուժկալել հարուածոց, անզգայք էն նախատանաց, անսիրթք հաճոյ լինելոյ զօրավարաց, դասալիքք, փախստեայք, ահաբեկք 'ի ձախողակս, և ոտնհարք իրաւանց աստուածայնոց և մարդկայնոց 'ի յաջողութեան։ Եթէ խոնջք 'ի նաւարկութենէ՝ ցանկայք վախճան առնել աշխատութեան, 'ի ձակատամարտի պատրաստեալ կայ այն։ Մերձ կայք յԱլբիս քան 'ի Հռենոս. անդ վախճան լիցի պատերազմի, եթէ զզօրավար ձեր՝ որ զհետ քաջութեան հօր իւրոյ և հօրեղբօր նկրտի՝ յաղթող 'ի նմին երկրի կացուցանի-

ցէք։— Ի բանից աստի վառեցաւ Եռանդն զօրականին, և փող հարաւ 'ի պատերազմ։

ԺԵ. Անտի և Արմինիոս և զօրավարքն գերմանաց-ւոց խրախուսէին զզօրս իւրեանց, և ասէին. Հռովմա-յեցիքդ, քան զբանակն Վարոսի վատք, առ 'ի խուսել 'ի պատերազմէ՝ յապստամբութիւն մոռաբերեն։ Կէսք վիրաւորեալք 'ի Թիկունս, այլք յալէկոծութենէ և 'ի մրրկաց խեղեալք, գան դարձեալ ձայնատուր լինին վրէժխնդրութեան թշնամեաց և սրտմտութեան դից, 'ի նաւս ապաստանեալ և յանգնաց ուղին ովկիական՝ զի մի՛ ոք զդէմ ունել կարասցէ կամ հալածել զինքեանս. այլ յորժամ պատերազմ խառնեսցի, ոչ օգնեսցեն պարտելոց հողմք և թիակք։ Յուշ լիցի ձեզ ազահութիւն նոցա, անգթութիւն և դոռոզութիւն. զի՞նչ այլ մնայ ձեզ, բայց պաշտպանել ազատութեան կամ մեռանել նախ քան զգերութիւն։ —

ԺԶ. Այսպէս նոցա յեռանդն պատերազմի զզօրս վառեալ՝ իջուցին զնաւս 'ի դաշտն անուանեալ Իդիստաւիս, որ ընդ Վզուրկ և ընդ բլուրս ընդարձակի և անձկանայ ըստ շրջանի գետոյն և ըստ լերանցն առաւել կամ նուազ տարածութեան։ Յառնէր յետ կուսէ անտառ մեծածառ, այլ ընդ բուն ծառոց երկիրն 'ի միջի էր ազատ։ Բանակն բարբարոսաց զտեղի էառ 'ի դաշտի անդ 'ի մուտս անտառին. քերուսկացիք ևեթ կալան զբարձունս, անկանել անտի 'ի վերայ հռովմայեցւոց 'ի սաստկանալ մարտի։ Իսկ կարգ չուոյ բանակին մերոյ էր այս. օժանդակ գունդք գալլիացիք և գերմանացիք յառաջոյ, զՀետ նոցա աղեղնաւորքն հետևակք, ապա լեգէոնք չորս, և Գերմանիկ երկոքումբք գումարտակօք թիկնապահ զօրաց և ընտիր հեծելազնդաւ. և ապա այլ ևս քառեակ լեգէոնք, հետևակազօրն մեկնակազէն, և աղեղնաւորքն հեծեալք՝ ընդ այլս 'ի նիզակակցաց։ Կազմ և պատրաստ կայր զօրականն Ճակատել 'ի նշան մարտի։

ԺԷ. Գերմանիկ՝ 'ի տեսանել զՀրոսակս Քերուսկաց վայրենաբար յարձակեալս, հրաման ետ ընտիր այրուձիոյն դիմել 'ի նոսա առ 'ի կողէ, մինչդեռ Ստերտինիոս մնայորդօք հեծելազօրուն շուրջ պատեալ, յարձակէր 'ի նոսա յետ կուսէ. իսկ ինքն մնայր 'ի դէպ

ժամանակի հասանել նոցա յօգնութիւն։ Յայնմ վայրի գուշակ բարեհնչան տեսեալ զօրավարին՝ արծուիս ութ, որ յանտառն կոյս թռուցեալ մտանէին անդր, գոչեաց մեծաձայն առ զօրականն. Օ՛ն երթայք զհետ հռովմէականացդ հաւուց, բնիկ դից լեգէոնացդ։ Եւ նոյնհետայն հետևակազօրն յառաջ խաղաց, մինչդեռ այրուձին վաղ արձակեալ հարկանէր զթշնամին 'ի թիկանց և 'ի կողաց։ Դէպք նորահրաշ. երկոքին թևք թշնամեաց տարադէմ փախստականք՝ որք յանտառի անդ էին՝ դիմէին 'ի դաշտն, և որք 'ի միջավայրի երկոցունց թևոց 'ի բլուրս կային՝ 'ի վայր դիմեցին, և նշանաւոր 'ի նոսա Արմինիոս՝ ձեռօք ձայնիւ և վիրօք իւրովք զօրացուցանէր զմարտն։ Անկաւ նա 'ի վերայ գնդի աղեղնաւորաց. և յաջողէր նմա բեկանել զայն, եթէ ոչ գունդք Հռետաց և Վենդելաց և գալլիացւոց զդէմ ունէին. սակայն կորովութեամբ իւրով և թափով երիվարին էանց ընդ այն, արեամբ վիրացն զերեսս իւր թաթաւեալ՝ զի մի ծանիցի։ Բայց աւանդեն ոմանք ծանուցեալ զնա Բաւկաց՝ որ ընդ օժանդակ զօրս հռովմայեցւոց զինուորէին, և թողեալ զնա ազատ։ Նոյն քաջութիւն կամ նենգ յաջողեաց փախստեան Ինգուիոմերի. իսկ այլք խառն 'ի խուռն սպանան. և յոգունք 'ի լոյղ ընդ Վզուրկ ջանացեալ անցանել, նետահար կամ յորձանասոյզ կամ 'ի բեռանէ իրերաց կամ ընդ թումբս համակործան, կորեան ջրահեղձոյց։ Բազումք ևս 'ի բարձունս ծառոց վատօրէն գուն գործեալ ընդ սաղարթիւք ծածկել, աղեղնաւորացն նետից եղեն նշաւակ, կամ հարեալք ընդ ծառս տապաստ անկան։ Մեծ եղև յաղթութիւնն, և ոչ բազմաց ինչ մերոցն արեանհեղութեամբ։

ԺԸ. Ի հինգ ժամէ աւուրն մինչև ցգիշեր անկանէին թշնամիք, և ծածկէր երկիր դիակամբք և զինուք շուրջանակի ցբիւր մի քայլ։ Գտան ընդ կապուտն և շղթայք, զորս թշնամիք վասն հռովմայեցւոց էին բերեալ գերելեաց՝ աներկբայք ընդ յաղթութիւն։ Անդէն առետեղ ինքնակալ զՏիբեր կարդացին զօրքն, և ամբարձեալ հողաբլուր՝ կանգնեցին 'ի նմա ախոյեան 'ի զինուց, արձանագրեալ 'ի ստորև զանուանս սպարտելոց ազգաց։

ԺԹ. Քան զվերս, քան զմահունս, և քան զխուժան աւերանաց, տեսիլն այն առաւելագոյն ներգործեաց 'ի գերմանացիս վիշտ և զայրոյթ. և որք ահա 'ի խուսել պատրաստէին յերկրէ իւրեանց յայնկոյս Ալբեայ՝ կամին արդ պատերազմ, զէն առնուն մանկտին և ալևոյթ, ռամիկն և աւագանի. յառնեն դիմեն յանկարծակի 'ի գունդն հռովմէական, և վեր 'ի վայր հարեալ աղմկեն զայն։ Ցեղի Ճակատու ընտրեցին նոքա դաշտավայր անձուկ և Ճախին ընդ անտառս և ընդ գետն. շուրջ զանտառովքն պատէր ծովալիճ, բաց 'ի կողմանէն՝ ուր կանգնեալ էր Անդրիւարաց հողաբլուր լայնանիստ ընդդիմարգել Քերուսկաց։ Անդ զկայ էառ հետևակազօրն. իսկ այրուձին յանտառս դարանէր, յարձակել յետ կուսէ 'ի լեգէոնս 'ի մտանել նոցա անդր։

Ի. Ոչ ինչ 'ի հնարից նոցա զանխուլ էր 'ի Կեսարէ. գիտաց նա և զխորհուրդս նոցա և զդիրս վայրաց զերևելիս և զաներևոյթս, և 'ի գլուխս թշնամեաց զհընարս նոցա շրջէր։ Զայրուձին և զդաշտավայր Սէոսի Տուբերոնի զօրավարի յանձն արար. իսկ զհետևակազօրն այնպէս դասակարգեալ, զի կէսք 'ի նոցանէ ընդ կողմն դիւր յանտառ անդր 'ի ներքս դիմեսցեն՝ 'ի յարձակել այլոց 'ի հողաբլուրն. զդժուարինն անձին պահեալ, զայլն ամենայն եթող 'ի զօրագլուխս։ Որոց միանգամ ընդ դիւր դէպ եղ'է գնալ, հեշտեաւ 'ի ներքս խաղացին. իսկ որոց 'ի հողաբլուր անդր դիմէին, որպէս այն թէ 'ի պարիսպս յարձակելոց, հարուածք հաստոյրք 'ի վերուստ անտի 'ի վերայ թօթափէին։ Իբրև ետես զօրավարն զի անհանգէտ 'ի մօտոյ էր մարտն, հեռացոյց սակաւիկ մի զլեգէոնս 'ի բաց, և պարսաւորաց և աղեղնաւորաց հրաման ետ նետահարս խուճապել զթշնամիս։ Անդուստ և 'ի կազմածոց մեքենայից գեղարդունք ոստուցեալք կարեվերս զվերամարտիկս արկանէին, որչափ նոքա առաւել նշաւակք նետիցն կային։ Ինքն նախ Կեսար թիկնապահ գնդաւն կալեալ զպատնէշն, յանտառ անդր յարձակեցաւ՝ դէմ ընդ դէմ մարտնչել անդ ընդ թշնամիս։ Լիճ զնոսա 'ի թիկանց, գետ և լերինք զհռովմայեցիս արգելեալ փակէին. հարկ 'ի տեղւոջ

անդ երկաբանչիւրոցն 'ի վերայ կայր՝ զայս 'ի քաջութեան և զփրկութիւն դնել 'ի յաղթութեան։

ԻԱ. Ոչ ինչ ընդհատ և գերմանացւոցն էր քաջութիւն, այլ եղանակ մարտին և զինուց անգործ առնէր զայն։ Այնքաւ բազմութիւն նոցա յանձուկ վայրի՝ ոչ ձգել և ոչ ամիոփել զերկայնաբուն նիզակսն կարէր, ոչ ընդոստ յարձակել և ոչ զձնապուկ անդամոցն թեթևութիւն 'ի կիր արկանել. այլ հարկ էր նոցա պահ ևեթ ունել անձանց անշարժելի, ուր զօրականն հռովմայեցի՝ ասպար 'ի կուրծս, սուսեր 'ի ձեռին, կուռ զբարբարոսացն յաղթանդամ մարմինս և զդէմս անպատրսպարս հարկանէր կարեվէր, և կոտորածիւ նոցա բանայր իւր ճանապարհ։ Լքաւ եռանդն Ամինեայ 'ի հետընդհետ վտանգաց, թուլացեալ թերևս 'ի նորոգ վիրառնութենէ. և Ինգուիոմեր, որ ընդ ճակատն ողջոյն ճախր առնոյր, 'ի բախտէն քան յարիութենէ թողանայր։ Յայնժամ Գերմանիկեայ հանեալ զսաղաւարտն՝ զի դիւրաւ ծանիցի, գոչէր առ իւրսն՝ մի դադարել 'ի կոտորածէ. Զեն ինչ պէտք գերուց, ոչ լիցի զբաւ մարտիս առանց 'ի սպառսպուռ սատակման ազգիդ։ Եւ ընդ երեկս նահանջեցոյց 'ի ճակատէ մարտին զմի 'ի լեգէոնաց՝ զակիշ գործել. իսկ այլք մինչև ցգիշեր յագեցան արեամբ թշնամեաց։ Բայց այրուձիոյն 'ի կշիռ եկաց յաղթութիւն։

ԻԲ. Գերմանիկեայ հրապարակաւ զյաղթողն դրրուատեալ, 'ի սպառազինութեանց կուտելոց ետ կանգնել ախոյեան՝ արձանագիր հոյակապ 'ի վերայ եղեալ զայս.

Յաղթաճարեալ զազգս ընդ Հռենոս և ընդ Այբիս ինքնակալին Տիբերի բանակ, զյիշատակս զայս Արիսի Արամազդայ և Աշգոստեայ կանգնէ 'ի նուէր։

Ոչինչ յաւել զանձնէ առ ահի նախանձու, և կամ զմտաց վկայութիւն քաջութեան շատ համարեալ։ Ապա նոյնհետայն պատերազմ ընդդէմ Անգրիւարաց հրամայեաց Ստերտինեայ, եթէ ոչ կանխեալ անձնատուր լինէին. այլ նոքա աղերս արկեալ, զամենայն ինչ յանձն առեալ, ընկալան թողութիւն ամենայնի։

ԻԴ. Ամառն 'ի վերջկոյս խոնարհէր, և կէսք 'ի լեգէոնաց արձակեցան ընդ ցամաք 'ի ձմերոցս. իսկ զմեծ կէս մասն նոցա նաւատորմաւ ընդ Ամիսիա գետ ինքնին կեսար էած յՈվկիան։ Ծովն 'ի սկզբան անդ հանդարտ, 'ի բաղխիւն թիակաց ևեթ բազմութեան նաւաց շառաչէր, և 'ի թևս առագաստիցն յառաջ վարէր. այլ ապա յանկարծ 'ի կուտակելոց թուխ ամպրոպաց թօթափեալ կարկուտ, և մրրիկք շուրջանակի յարուցեալ զալիս, ծածկէին յաչաց զամենայն, զդէմ իսկ նաւարկութեան խափանեալ։ Զօրականն անփորձ ծովու ահաբեկեալ՝ խռովեցուցանէր զնաւաստին, կամ ձախողակի օգնականութեամբ զնաւավարացն անգործ առնէր ձարտարութիւն։ Եւ ահա հարաւահողմն ընդ երկին առ հասարակ և ընդ ծով տիրապետեալ, և 'ի խոնաւուտ ափանց Գերմանիոյ, 'ի յորձախոր գետոց, և յամբաւութենէ ամպոց հալածականաց զայրացեալ, բռնաւորագոյն 'ի խստութենէ մերձակայ հիւսիսախառն նահանգին՝ յափշտակեաց դիր և տար յանդունդս Ովկիանու զնաւս կացոյց, կամ 'ի կղզիս շրջապատեալս 'ի ժայռից, և 'ի խարակս անելեւոյթս ընդ ալեօք, յորոց բազում ձգամբ հազիւ կարացին ապրել. այլ 'ի մակընթանալ ալեաց 'ի հողմն կոյս՝ ոչ ևս կարացեալ նոցա կալ 'ի խարսխի, և ոչ զալիսն 'ի ներքս զեղեալս արտաքսել, զձիանն, զգրաստս, զկարասին և զզէնս իսկ 'ի ծով ընկեցին՝ թեթևաբեռնել զողնափայտն, յոր ընդ հերձս կողից և ընդ տախտակամածն 'ի վերուստ զեղուին ալիք։

ԻԴ. Որչափ Ովկիան բռնագոյն քան զայլ ծովս է, և երկինք Գերմանիոյ որչափ քան զայլս 'ի նահանգաց դժնդակագոյն, այնչափ առաւելան արկածքն՝ յեղակարծ և ահագին աղետիւք։ Թշնամիք շուրջանակի ծով եղերք, և ծով այնպիսի ծայրածաւալ և անդնդախոր՝ որ տիեզերաց թուէր սպառուած, և ոչ ևս ուրեք անտի և անդր երկիր։ Կէսք 'ի նաւաց անտի ընկլան յանդունդս, և առաւելագոյնք 'ի կղզիս հեռաստանեայս վարեցան, ուր զօրականն յանմարդի յանմշակ երկրին կորեաւ սովամահ, կամ դիակամբք ձիոց 'ի ծովեզերս անդր խրելոց պարենաւորեր։

Եռաթին ևեթ Գերմանիկեայ անկաւ յերկիրն Քաւ-

կաց. ուր նա 'ի Ժայռս և 'ի Հրուանդանս զայն ամենայն աւուրս դեգերեալ, զցայգ և զցերեկ բողոքէր զանձնէ՝ ինասապարտ այնքանոյ աղէտից զինքն համարեալ. և հազիւ արգելին զնա իւրքն առ 'ի չկորուսանելոյ զանձն 'ի ծովանդը գահավէժ։ Յետոյ ապա 'ի տեղի տալ ալեաց, և 'ի շնչել աջոզակ հողմոյ, մնացորդք նաւատորմին ջաղջախեալք, սակաւուք ոմանքք Թիւավարօք, ձորձս փոխանակ առագաստից պարզեալ, դարձ առնէին. կէսք 'ի նոցանէ 'ի նուազ խորտակելոցն 'ի քարշ ածեալ։ Ցորս Գերմանիկեայ փուԹանակի նորոգել հրամայեալ, արձակեաց 'ի կղզիս անդր 'ի խընդիր այլոցն։ Սովին խնամով բազումք 'ի նաւակոծելոց անտի Ժողովեցան. բազումն ևս Անդրիւարք, փոքր մի յառաջ դաշնակցեալք, գրաւաԹափս 'ի միջերկրայց անտի դարձուցին. իսկ որք միանգամ մինչև 'ի Բրիտանիա վարեալքն էին, յիշխանաց երկրին յետս առաքեցան։ Եւ որչափ ոք 'ի հեռաստանէ դառնայր, հրաշապատումն զմրրկաց, զհաւուց անծանօԹից, զնհանգաց ծովայնոց, և զմարդադէմ գազանաց տեսեալոց կամ առ ահին երևուԹացեալոց՝ վիպէր։

ԻԵ. Ի լուր կորստեան նաւատորմին՝ գերմանացիք առին խրախոյս 'ի պատերազմ։ Գերմանիկոս առ 'ի սանձահարել զյանդգնուԹիւն նոցա, արձակեաց զԿ. Սիլիոս երիւք բիւրուք հետևակաց և երեքարիւր հեծելովք ընդդէմ Կատտաց. իսկ ինքն առաւելագոյն ևս զօրօք խաղաց 'ի Մարսս։ Եւ 'ի Մալլովենդեայ զօրավարէ նոցա, որ դեռ ևս լեալ էր անձնատուր, գիտաց՝ զի արծուէնշան դրօշ լեգէոնին Վարոսի Թաղեալ կայր 'ի մերձակայ ուրեք անտառի՝ փոքու զնդի պահ ունելով անդ. և զօրահատոյց արար անդր վաղվաղակի՝ ձգել յառաջ զԹշնամին, և այլոց յետկուսէ հասանել պեղել բառնալ զդրօշն. և յաջողեցին երկաքանչիւրոց իսկ ելք իրացն։ Քաջալերեալ այնուիկ կեսար խաղաց 'ի նեբքս, հար աւար, կոտորեաց զԹշնամիս՝ առանց իշխելոց նոցա 'ի մարտ. իսկ եԹէ ուրեք զդէմ ունել յանդգնէին, հալածէր վանէր անխնայփան. ոչ այլ ուրեք երբէք այնպէս նոցա ահաբեկեալ, ըստ վկայելոց գերւոյն։ Զի անպարտելի յամենայն արկածից զհռովմայեցիս խոստովանէին, որոց կորուսեալ նաւք և զէնք,

և ձիոց նոցա և զօրաց դիակամբք ծովեղերք ծածկեալ, դեռ ևս նովին քաջութեամբ նովին կատաղութեամբ՝ իբր այն թէ առաւելեալք խիզախէին։

ԻԶ. Դարձաւ զօրականն'ի ձմերոցս ուրախամիտ, զարկածից ծովուն աջողակի ասպատակաւն ընկալեալ զփոխարէն։ Յաւել Կեսար առատաձեռնել որչափ ինչ իւրաքանչիւր ոք'ի նոցանէ յայտ առնէր կորուսեալ։ Ոչ ևս էր երկբայել՝ զի Թշնամին վհատեալ խնդրեացէ խաղաղութիւն, և զի միւս ևս չու զրաւ արասցէ պատերազմին։ Բայց Տիբեր գրէր ստէպ առ Գերմանիկ՝ դառնալ'ի հանդէս յաղթանակին սահմանեալնմա, և ասէր. Շատ էն արկածքդ, շատ իսկ պատահարք. մեծ և քաջայաղթ պատերազմունս հարեր, այլ յուշ լիցին քեզ մրրիկքն և ալիք. որ թէպէտ և ոչ զօրավարին յանցանք, այլ զեանք այնոցիկ ծանունք էն և դժընդակք։ Իմ իսկ ինչիցս'ի դիւցազնէն Աւգոստեայ առաքեալ'ի Գերմանիա, բազում խորհրդով քան զինուք է գործեալ. այսպէս զսիգամբրացիս նուաճեալ, այսպէս և զՍուեւս և զարքայն Մարոբոդով յուխտ խաղաղութեան հարկաւորեալ։ Եւ քանզի ինքնակալութեանս խնդրեցաւ վրէժ, մարթ է թողուլ զքերուսկացիս և զայլս'ի վտարանջելոց ազգաց յառտնին պատերազմունս իւրեանց։ — Եւ'ի խնդրել Գերմանիկեայ զամ՝մի առ'ի կատարել զսկսեալն, սաստկագոյն ևս Տիբեր չափաւորութեան նորա ետ հարուած, առաջարկեալ նմա զբդեշխութիւն՝ գալ ընուլ անձամբ զպարտս պաշտամանն, և յաւելոյր. Զի եթէ հարկ իսկ լիցի պատերազմի, տացէ եղբօր իւրում Դրուսոսի տեղի փառաց. զի առ'ի չգոյէ այլոց թշնամեաց՝'ի Գերմանիա ևեթ մարթ էր նմա արժանի լինել ինքնակալ կոչելոյ։ Ոչ ևս յաւեաց Գերմանիկ, թէպէտ և հասու լեալ զի առ նախանձու հնարէր զպատճառանն՝ առ'ի բառնալ յիւրմէ զպատրաստեալ պարծանս աշխարհակալութեան։

ԻԷ. Զայնու ժամանակաւ Լիբոն Դրուսոս, 'ի սկրիբոնեան տանէ, ամբաստանեցաւ'ի նորաձևութիւնս։ Մանրապատում զսկիզբն զկարգ և զվախճան իրացս առնեմ, զի նորաձևութիւնքս այսոքիկ յայնժամ նախ'ի վեր երևեալ՝ ընդ այնչափ ամն ապա նեղեցին զհասա-

բակապետութիւնն։ Փիրմիոս Կատոս ատենակալ, մոեբիմ բարեկամ Լիբոնի, մոլորեցոյց զանխորհուրդ և զդիւրահաւան պատանին'ի խոստմունս քաւդեայց, 'ի խորհուրդս մոգաց, և'ի հմայս երազոց. երևեցուցանելով նմա 'ի ցնորս զՊոմպէոս նախահաւ և զՍկիպիոնիա հօրաքոյր նորա՝ երբեմն կին Սէգոստեայ, և զինքնակալս արենակիցս, և լի զտուն նորա ուրուականօք. և զառածեցուցանէր զնա 'ի զեղխութիւն և 'ի փոխառութիւն, ընկերշակելով ախտից նորա և շռայլութեանց, առ 'ի կաշկանդելոյ զնա ընդ բազումս։

ԻԸ. Եւ 'ի հայթայթել վկայս ըստ բաւականին և 'ի ստրկաց անտի գիտակս ամենայնի, խնդրեաց յանդիման լինել կայսեր՝ ծանուցանելով նմա զվնաս և զանուն ամբաստանելոյն 'ի ձեռն Փլակկոսի Վէսկուլարեայ ասպետի հռովմայեցւոյ, որոյ համարձակութիւն բազում էր առ Տիբերի։ Ոչ մերժեաց Կեսար զամբաստանութիւնն, այլ չկամեցաւ ընդունել զամբաստանողն՝ ասելով զի մարթ էր նմա'ի ձեռն նորին ինքեան Փլակկոսի յայտ առնել զբանս իւր։ Իսկ ինքն զԼիբոն մեծարեալ իշխանութեամբ՝ սեղանակից իւր առնէր, առանց այլայլութեան ինչ'ի դէմն և'ի բանս իւր երևելոյ, այնպէս զզայրոյթ սրտին քօղարկեալ. և զամենայն զբանս նորա և զգործս լրտեսէր, տալով նմա համարձակութիւն։ Մինչև Յունիոսի ուրուն փորձեալ զնա՝ 'ի ձեռն կախարդանաց զստուերս սանդարամետականս վերակոչել, զեկոյց զայն Փուլվինեայ Տրիոնի՝ որ հռչակաւոր 'ի չարախօսս էր հանձարով, և ցանկացօղ չարահամբաւելոյ։ Սա'ի վերայ եհաս պարտաւորին, մատեաւ առ բդեաշխս, և խնդրէր ատեան. կոչեցան ատենակալք, յսուելեալ'ի կոչ անդր՝ զի մեծի և դժնդակ իրի խորհուրդ առաջի կայր։

ԻԹ. Յայնժամ Լիբոն զգեցեալ հանդերձ սգոյ, ընդ տիկնայս մեծուհիս դրանէ 'ի դուռն շրջէր խնդրել օգնականութիւն յազգականաց իւրոց, և պաշտպանութիւն ընդդէմ վտանգին. այլ հրաժարէին նոքա պէս պէս պատճառանօք, նոքին երկիւղիւ ամենեքեան ըզդուշացեալ։ Եհաս օր ատենին. ինքն'ի հոգոց և յերկիւղէ ախտակրեալ, կամ ըստ ոմանց՝ զախտ պատճառելով, դեսպակաւ մինչև'ի դրունս դատարանին ա-

ծեալ, յեց յեղբայր իւր 'ի բեմ անդր մատչէր՝ ձեռս և բարբառ աղերսաւոր առ Տիբեր ամբարձեալ։ Իսկ կայսրն անայլայլելի դիմաք ընկալեալ զնա, ընթեռնոյր զամբաստանութիւնսն և զանուանս դատախազից այնու եղանակաւ, զի մի՛ մեղմել և մի՛ սաստկացուցանել զյանցանսն Թուեցի։

Լ. Յաւելան 'ի դատախազս ընդ Կատոսի և ընդ Տրիոնի Փոնտէոս Ագրիպպաս և Կ. Վիբիոս, վիճեալով ընդ իրեարս Թէ ո՞ւմ անկ իցէ դատախազել ընդդէմ ամբաստանելոյն։ Տեսեալ Վիբիոսի՝ զի ոչ ոք ուրեք տեղի տայր, և զի Լիբոն առանց փաստաբանի յատեան անդր եկեալ էր, ծանոյց զի զգլուխս ևեթ ամբաստանութեանցն կարգաւ յայտ առնէր. և 'ի մէջ էած նամականի անհանձար յոյժ, որպէս Թէ Լիբոնի հարցանել զիղձս՝ իցէ՞ Թէ յաւուր միում լիցի նմա ստանալ մեծութիւնս այնքան, զի ծածկել դրամովք կարասցէ զապպեանն արահետ մինչև 'ի Բրունդիսիոն։ Ոչ ինչ ընդհատ անմտականք և մնոտիք, մանաւանդ Թէ եղկելիք և այլ ամբաստանութիւնքն էին։ Զմի ևեթ 'ի նամականւոյ անտի յանդիման առնէր իբր ձեռագիր Լիբոնի, յորում նա զկայսերաց և զատենակալաց անլուրս և դժնդակս գրէր։ Ա. յլ 'ի ժխտել զայն Լիբոնի, հաձոյ Թուեցաւ 'ի հարցփորձ խիստ մատուցանել զստրուկս՝ որ ձանաչէին զգիր նորա։ Եւ քանզի վՀռով ծերակուտին վաղնջականաւ արգելեալ էր՝ մի՛ զոք 'ի ստրկաց ընդդէմ տեառն իւրոյ հարցափորձել, խորամանկութիւն Տիբերի հնարագէտ նորոյ իմն իրաւանց՝ ետ վաձառել զնոսա գործակալաց հասարակաց, որպէս զի առանց անցանելոյ ըստ վՀիռ ծերակուտին՝ մարթ իցէ ստիպել զնոսա 'ի վկայութիւն ընդդէմ Լիբոնի։ Յայնժամ ամբաստանեալն խնդրեաց ժամանակ օր մի, և դարձ արարեալ 'ի տուն՝ մատոյց կայսեր 'ի ձեռն Պ. Կուիրինեայ ազգականի իւրոյ վերջին աղերս. և ընկալաւ պատասխանի՝ յանդիման առնել ատենին զաղերս իւր։

ԼԱ. Յայնժամ զօրականքն շուրջ պատեցին զտուն նորա. հնչէր դաւիթն աղաղակաւ, և լսելի լինէին բանք նոցա։ Իսկ Լիբոնի անդէն 'ի խնջոյս՝ յորում զյետին բերկրանսն խնդրէր, հանդիպեալ վՀտաց՝ հայցէր

զմահ՝ բուռն հարեալ զստրկաց, և սուր'ի ձեռս նոցա տուեալ բռնի։ Եւ յընկերկել նոցա զարհուրանօք և տապալել զՀրագն՝ որ կայր'ի վերայ սեղանոյն, յօրհասական խաւարի անդ հարուածս կրկին ետ անձամբ անձին։ Ի լուր հեծութեան նորա յանկանելն՝ դիմեցին ազատագիրքք. և զօրականն'ի տեսիլ մահու նորա զկայ էառ. սակայն դատ նորա ոչ ինչ նուազ խստիւ յատենի անդ վարեցաւ. և Տիբեր երդնոյր՝ զի կեանս նմա'ի ՀԱՍԱՍԱՊԱՐՏ իսկ գտանել նորա խնդրելոց էր, եթէ ոչ կանխէր նա երթալ զիւրովին։

ԼԲ. Ինչք նորա'ի դատախազս բաժանեցան, և կուսակալութիւնք ըստ ոչ սովորութեան տուան ատենակալաց։ Յայնժամ Մեսսալինոս Կոտտաս առաջարկեաց՝ մի զպատկեր Լիբոնի ածել'ի յուղարկաւորութեան որդւոց նորա և թոռանց, և Կն. Լենտուլոս՝ մի ումեք'ի սկրիբոնեանց առնուլ կոչումն'ի Դրուսեայ։ Ըստ առաջարկութեան Պոմպոնիոսի Փլակկոսի սահմանեցան աւուրք պաղատանաց. և ըստ Լ. Պոբլեայ, Ասինիոսի Գալլոսի, Պապիոսի Մոտիլեայ, և Լ. Ապրոնիոսի՝ մատուցանել նուէրս Դիոսի, Արիսի, և դիցն միաբանութեան, և տօնախմբել զՀնդէտասան սեպտեմբերի՝ յորում աւուր չոգաւ Լիբոն զիւրովին։ Ցգործ և զանուանս մարդահաճոյիցս'ի ներքս ածեմ առ'ի յայտ առնել, զի վաղեմի'ի հասարակապետութեան են չարիքս։ Եւ այլ ևս վճռովք ծերակուտին'ի բաց հալածեցան Յիտալիոյ դէտք և ախտարք. մի'ի նոցանէ Լ. Պիտուանիոս գահավէժ ընդ տարպեան ժայռն արկաւ, և միւս ևս Պ. Մարկիոս՝ հրամանաւ բդեշխից ածեալ արտաքոյ Եսկուիլեան դրան, և դատակնիք նորա'ի ձայն փողոյ հրատարակեալ, ըստ վաղեմի սովորութեան սպանաւ։

ԼԳ. Ի միւսում ժողովի Կ. Ատեր՝ երբեմն բդեաշխ, և Ոկտաւիոս Փրոնտոն՝ երբեմն կուսակալ, բազումս ընդդէմ զեղխութեան Հռովմայ ճառեցին. և սահմանեցաւ՝ մի ևս'ի սպաս ոսկեհոյլ պաշտել կերակուր'ի սեղանի, և մի մեղկանալ արանց'ի ձորձս բեհեզեայս։ Փրոնտոնի յառաջ ևս մատուցեալ խնդրեաց սահմանել որ ինչ իւրաքանչիւր ումեք օրէն էր ունել արծաթ և կարասի և ծառայս։ Յատենակալաց ևս ոչ սակաւք ա-

ռաջարկէին սահմանել որ ինչ օգտակար թուէր հասարակապետութեան։ Ընդդէմ նորին խօսեցաւ Գալլոս Սպինիոս և ասէ. Ի մեծանալ ինքնակալութեան՝ աձեցին և մեծութիւնք իւրաքանչիւրոց. և այս ոչ նոր ինչ է, այլ ըստ վաղեմի սովորութեան. զի այլ մեծութիւնք էին յաւուրս Փաբրիկեանց, և այլ Սկիպիոնեանց։ Սմենայն ինչ ըստ հանգամանաց հասարակապետութեան է. յաղքատութեան նորա անձուկ էին տունք քաղաքայնոց, իսկ 'ի հասանելն յայս պայծառութիւն՝ ընդարձակեցան։ Ծառայից և արծաթոյ և ամենայն պիտոյից՝ կարին և դոյզն ըստ իւրաքանչիւր գոյից է կշռելի. զի այլ ատենակալաց են հասք, և այլ ասպետաց. իբր ոչ եթէ վասն այլևայլ բնութեան նոցին, այլ առ 'ի զանազանել նոցա տեղեաւ, կարգաւ, իշխանութեամբ և որով իւիք մարթ իցէ նոցա ունել անդորրութիւն մտաց և առողջութիւն մարմնոյ։ Զի զաւագորեարն, որոց հոգ բազում և առաւելագոյն վտանգ 'ի վերայ յաւելուն, չէին կամք զրկել 'ի սփոփանաց հոգոցն և վտանգաց։ — Դիւրահաւան եղև ատեանն բանիցս այսոցիկ Գալլոսի, ընդ բարեքիկ պատճառանօք խոստովանեալ զախտս իւր և զհասարակաց բարուց մասնակցութիւն. և յաւել Տիբեր. Զէ ժամանակս յուղղութիւն ածելոյ զբարս, և ոչ 'ի զառաջանել նոցին՝ պակասեսցէ ուղղիչ։

ԼԴ. Յայնժամ Լ. Պիսոն ընդդէմ դարձեալ հնարից ատենին, աչառանաց դատաստանի, փաստաբանիցն անգթութեան և սպառնական չարախօսութեանց, և յայտ արարեալ՝ զի տեղի տայր 'ի քաղաքէն գնալ հեռի ուրեք յանծանօթ վայրի մեկուսանալ, եկ 'ի բաց յատենէն։ Յորմէ շարժեալ Տիբերի, ողոք բանիւք գուն գործէր ցածուցանել զնա. և զազգականս ևս նորա յորդորէր խափանել զնա զօրութեամբ և աղաչանօք։ Ոչ ինչ նուազ արիականի ցասմանն առհաւատչեայ յետ սակաւ միոյ ետ Պիսոն, եկակոչ առնելով Որգոլանիայ, զոր պաշտպանութիւն Աւգոստայ գեր 'ի վերոյ օրինաց կացուցանէր։ Նա փոխանակ 'ի կոչն գնալոյ, արհամարհեալ զՊիսոն՝ չոգաւ յարքունիս կայսեր. այլ ոչ դադարէր Պիսոն 'ի կոչելոյ զնա՝ 'ի գանգատել իսկ Աւգոստայ ընդ բռնաբարութիւն արքունեացն

և ընդ արհամարհանս իւր։ Տիբերի այսչափ ինչ'ի նպաստ մօրն զիջանել օրէն համարեալ որպէս քաղաքացի, կամեցաւ գնալ ինքնին յատեան պաշտպանել Որգոլանիայ, և եկ յարքունեացն՝ հրամայեալ զինուորաց գալ զհետ իւր 'ի բացէ։ Եւ էր տեսանել զնա շուրջ պատեալ'ի ժողովրդենէ, անայլայլակ դիմաք յամբոխով զՀանապարհայն 'ի խօսս, մինչև ընդունայն գուն գործեալ ազգականացն Պիսոնի խափանել զնա՝ հատուցանէր Աւգոստա զարծաթն խնդրեալ։ Այս եղեն եկեալ իրացն 'ի փառս Պիսոնի և յառաւելագոյն հռչակ համբաւոյն կեսարու։ Բայց Որգոլանիայ այնչափ էր զօրութիւն'ի քաղաքին, զի'ի վկայութիւն կոչեցեալ իրաց ինչ՝ որ դատէր 'ի ծերակուտէն՝ չէառ յանձն գնալ, և միւմ յատենակալաց հարկ եղև երթալ'ի տուն նորա 'ի հարցփորձ, ուր և Եստեայ կուսանք 'ի վաղնջուց սովորութենէ գայլին յատեան՝ տալ հրապարակաւ վկայութիւն։

Ա։ Լռէի զիրաց՝ որ յայսմ ամի յերկարաձգեցան, եթէ չէր կարեւոր գիտել զայլեայլ խորհուրդս Կն. Պիսոնի և Աբինեայ Գալլոսի զայնցանէ։ Ի յայտ առնել կեսարու զմեկնել իւր առ ժամանակ մի, Պիսոն այնր իսկ աղագաւ պարտ համարէր ժրագոյնս գործել, և փառս հասարակապետութեան՝ պարապել ատենակալաց և ասպետաց 'ի բացակայութեան ինքնակալին 'ի գործ իւրաքանչիւր։ Իսկ Գալլոս, քանզի զպարծանս ազատութեան յափշտակեալ էր Պիսոնի'ի նմանէ, ոչ փառս և ոչ արժան համարէր հռովմէական ժողովրդեան գործել ինչ առանց ինքնակալին. և զվէճս՝ յորս դիմէրն Իտալիա և խռնէին գաւառք, պարտ վարկանէր սահմանել առաջի Տիբերի, և լուռ եւթ կալով նորա 'ի լուր սնդագոյնս երկուստեք վիճաբանելոց նոցա զայսցանէ, յերկարեցան իրքն։

Ա։ Ընդ ինքնակալն իսկ և ընդ Գալլոս անկաւ վէճ. զի սնդէր սա հնգամեակ ընտրել ատենակալս, և լեգէոնապետաց եւ՝ որոց յառաջ քան զայն զինուորութիւն չէր կացեալ ատենակալ՝ ունել իրաւունս ատենակալութեան, և ինքնակալին արս երկոտասան ամի ամի առաջարկել յընտրութիւն։ Խորհեցաց էր ապաքէն խորհուրդն, և տկարացուցանէր զսաստ ինքնակալու-

թեան. սակայն Տիբեր, իբր այն թէ յաւելոյր այնու իշխանութիւն իւր, ասէ. Ծանր է չափաւորութեանս իմում ընտրել որեար այնչափ, և զայլս մերժել. հաւ զիւ զտարեւոր ընտրութիւն առանց տհաճելոյ զոք հնար է առնել, ուր յոյս մերձաւոր սփոփէ զմերժումն. քանի՛ առաւել դրդեսցէ զատելութիւն մերժումն հրնդամեայ, և որպէս ի՛ցէ գուշակել որ ինչ այնքան ժամանակի մարթ է առնել յեղափոխութիւն մտաց և ընտանեաց և գոյից։ Եթէ գոռոզանայ այր՝ տարեւոր իսկ իշխանութեամբ, որչափ ևս առաւել եթէ զամս հինգ իշխեսցէ. և 'ի հնգապատկել այդուիկ ատենակալաց՝ տապալէն օրէնք, որ սահմանեն ընտրելեաց զժամանակ հնարից հետամուտ լինելոյ և զբռամբ ածելոյ զիշխանութիւնն։

ԼԷ. Այսու բանիւ, որ վեր 'ի վերոյ նպաստաւորն թուէր ժողովրդեան, պինդ կալաւ զզօրութիւն ինքնակալութեան։ Յաւել ևս զհասս ոմանց յատենակալաց. վասն որոյ առաւել թուեցան զարմանք խստանալ նորա առ խնդիր Մ. Որտալեայ ազատորդւոյ, որոյ յայտնի էր չքաւորութիւն։ Էր նա թոռն Որտենսեայ փաստաբանի. և Աւգոստեայ առատաձեռնելով նմա հարիւր բիւր սեստերտ, հաւանեցուցեալ էր զնա յամուսնութիւն առ 'ի ծնանել որդիս, զի մի՛ շինցի ազգատոհմն երևելի։ Արդ չորեցունց որդւոց նորա կալով առ սեամն դատաստանարանին՝ ուր գումարեալ էր ատեանն, իբրև ի՛հաս նմա խօսել, մերթ 'ի պատկեր Որտենսեայ հայեցեալ՝ զորով փաստաբանք կային, և մերթ յԱւգոստ, ասէ. Հարք ատենակալք, զդոսա՝ զորոց տեսանէք զթիւ և զմանկութիւն՝ ոչ կամակար ածի ես 'ի լոյս, այլ ըստ խրատու ինքնակալին, և զի նախնիք իմ արժանի էին յաջորդութեան թոռանց։ Քանզի ինձ, որում յեղափոխութիւն ժամանակաց չէթող ժառանգել, և ոչ ստանալ, ոչ մեծութիւնս, ոչ շնորհ առաջի ժողովրդեան, և ոչ զձարտարիսօսութիւն զազգատոհմիս մերոյ վիճակ, շատ իսկ էին ինքք՝ եթէ աղքատութիւնս չլինէր ինձ յամօթ, և ոչ այլում ումեք 'ի բեռն. 'ի հրամանէ ինքնակալին ածի կին, և ահա այնքանեաց բդեշխից և իշխանապետաց ազգ և սերունդ։ Զայսոսիկ ոչ 'ի ստգիւտ ինչ ասեմ, այլ առ 'ի

գութ շարժել. ընդ պայծառութեամբ քով, կեսար, ընկալցին զաւագութիւն՝ զոր շնորհեսցես նոցա. առ այժմ զկ. Որտենսեայ զթոռունս, զդիւցազնին Աւգոստեայ սանս փրկեա 'ի չքաւորութենէ։

ԼԸ. Յօժարութիւն ծերակուտին 'ի նպաստ՝ յաւել խստացուցանել զՏիբեր ընդդէմ նորին, և այսպիսի բանիւք ետ պատասխանի. Եթէ չքաւորաց ամենեցուն լեցի գալ այսր՝ խնդրել որդւոց իւրեանց արծաթ, չքաւորեսցի հասարակապետութիւնս, և իւրաքանչիւրոց ոչ լցցին պէտք։ Ոչ այնու զի շնորհեցաւ 'ի նախնեաց ելանել երբեմն արտաքոյ առաջարկութեան, և ըստ կարգի հասանելոյ ումեք խօսել՝ առաջարկել զօգուտ հասարակաց, օրէն իցէ և զընտանեաց իւրոց հայթայթել աստ զպէտս, և ստգտանելի կացուցանել զծերակոյտն և զինքնակալ'ի շնորհել նոցա զայն կամ'ի մերժել։ Զի ոչ աղերս ինչ արկանել է այդ, այլ ժտութիւն տարաժամ և յեղակարծ, ուր առ այլ ինչ գումարին Հարք՝ յառնել կալ'ի միջի, և բազմութեամբ և տիոմբ որդւոց բռնաբարել զգթութիւն ծերակուտին, և զնոյն բռնութիւն ներգործել յիս, խորտակելով զոգցես զփականս գանձուց. զորս եթէ առ կարեկցութեան սպառիցեմք, հարկ լեցի մեզ ընուլ եղեռամբ։ Դիւցազնն Աւգոստ ետ քեզ արծաթ, Որտալէ, այլ ըստ պահանջանաց, և ոչ զպարտ յանձն առեալ տալոյ միշտ։ Յուլանայ Ճարտարութիւն, տածի ծուլութիւն, 'ի դադարել յուսոյ կամ երկիւղի իւրաքանչիւր ուրուք յանձնէ. և ամենայն ոք վստահացեալ յօգնութիւն այլոց՝ անձին լինի անօգուտ, և մեզ'ի բեռն։ — Աչսոքիկ և այսպիսի բանք Թէպէտ և ընդունելի եղեն այնոցիկ՝ որք զամենայն ինչ իշխանաց զիրաւ և զանիրաւ սովոր են գովել, սակայն բազումք լռութեամբ կամ ընդ միմեանս հծծանօք լսէին. և զգացեալ զայն Տիբերի, և վայրիկ մի լուռ կացեալ, ապա ասէ. Եւ տու պատասխանի Որտալեայ, այլ եթէ հաճոյ թուի Հարց՝ տացեն միում միում յուստերաց նորա երկերիւր սեստերտ։ Եւ'ի շնորհ ունել այլոց՝ Որտալոս լուռ եւեթ կայր առ ահի, կամ զհայրենի ազնուականութիւն յարկածս խակ բախտին յանձին բերելով։ Ոչ ևս այնուհետև զթացաւ Տիբեր, Թէպէտև յամ-

թալի չքաւորութիւն զտուն Որտենսեայ անկեալ տե-
սանէր։

ԼԹ. Ի սմին ամի 'ի յանդգնութենէ ստրկի ուրուք
ձերբազատի՝ 'ի հերձուածս և 'ի քաղաքական մարտս
կործանէր հասարակապետութիւնն, եթէ չէր նորա
ժամանեալ զառաջս առնուլ չարեացն։ Կլեմէս, Պոս-
տումոսի Ագրիպպայ սպասաւոր, 'ի լսել զմահ Աւգոս-
տեայ՝ մտաբերեաց 'ի խորհուրդ 'ի վեր քան զծառա-
յականն պայման, դիմել 'ի Պլանասիա կղզի, և դա-
ւով կամ բռնի յափշտակել զԱգրիպպաս ածել 'ի բա-
նակն գերմանական։ Զխորհուրդն յանդգնութեան
խափանեաց յամեցումն ծանրաբեռն նաւին, զի յայնմ
վայրի սպանաւ Ագրիպպաս։ Յայնժամ նորա 'ի յան-
դգնագոյն ևս և 'ի բազմավտանգ խորհուրդ զմիտս
յեղաշրջեալ, գողացաւ զդի սպանելոյն, ած 'ի Կոսա
հրուանդան Ետրուրիոյ, և թագեաւ աներևոյթ մինչև
աձեցին հերբ իւր և մորուք. զի ըստ տիոցն և կերպա-
բանաց չէր ինչ աննման տեառն իւրում։ և 'ի ձեռն հա-
մախոհից իւրոց, արանց պատկանաւորաց 'ի գործն,
լուր եհան՝ զի կենդանի էր Ագրիպպաս, 'ի սկզբան
անդ հծծանօք՝ որպէս արգելելաւքն սովորաբար համ-
բաւին, ապա 'ի բարբաւ տարտամ 'ի դիւրապատրաստ
լսելիս ռամկին ընդունելի, և հուսկ յետոյ 'ի լուր խռո-
վաստիրաց՝ որք յեղափոխութեան են ցանկացողք։ Ինքն
իսկ գնայր 'ի քաղաքս նսեմաւ, առանց երևելոյ 'ի հրա-
պարակի և առանց ուրեք յամելոյ։ Կանխէր ամենայն
ուրեք քան զլուր հասանելոյ իւրոյ անդր, և 'ի համ-
բաւոյ իւրմէ խուսէր, գիտելով զի որպէս ճշմարտու-
թիւն պարապով և քննութեամբ գայ 'ի յայտ, նոյն-
պէս և ստութիւն ձեպով և ծածկութեամբ զօրանայ։

Խ. Ըստ այսմ օրինակի համբաւէր յայնժամ ընդ Ի-
տալիա՝ դիցն շնորհիւ պահեալ Ագրիպպաս, և հաւա-
տարիմ լինէր համբաւն 'ի Հռովմ. և ինքն Կլեմէս
նաւարկեալ Պոստիա՝ ընդունելի լինէր բազմաց, և 'ի
գաղտագողի ժողովս հռչակէր 'ի Հռովմ։ Իսկ Տիբեր
'ի տարակուսի կայր, զինուն զօրութեամբ նուաճել ըզ-
ծառայն՝ թէ ժամանակին թողուլ զսնոտի դիւրահա-
ւանութիւն 'ի յայտ ածելոյ. մերթ արհամարհել ինչ
ոչ օրէն համարէր, և մերթ խիթալ յամենայնէ ոչ

պարտ համարեալ՝ ընդ ամենի և ընդ երկիւղ դեղևէր, մինչև ապա 'ի Սալուստիոս Կրիսպոս զկրսն յանձն առար։ Սա ինքն 'ի ձեռասուն որերոյ իւրմէ ընտրեալ երկուս, զորս ոմանք զօրականս ասեն լեալ, խրատ ետ նոցա գնալ առ նա կեղծեօք, ընծայել նմա արծաթ, և խոստանալ հաւատարմութիւն՝ զվտանգ յանձն առեալ։ Որոց կատարեալ զհրամանն, և զգիշեր անբզգոյշ 'ի պահապանաց օգնական գտեալ, հասանեն 'ի վերայ բաւական գնդաւ, և կապեալ զնա բերանախից ածեն յարքունիս։ Եւ 'ի հարցանել զնա Տիբերի թէ որպէս եղեր դու Ագրիպպաս, աւանդեն՝ պատասխանեալ նորա թէ որպէս դու եղեր կեսար։ Բայց չեղև հնար ստիպել զնա 'ի յայտնել զդաւակիցս իւր. և ոչ իշխեալ Տիբերի յայտնի զնա պատուհասել, 'ի ծածուկ անկեան ուրեք արքունեացն ետ սպանանել, և զգի նորա գաղտ 'ի բաց տանել։ Եւ թէպէտ գիտացեալ՝ զի բազմաց յարքունի տանէ և 'ի կարգէ ասպետաց օգնեալ էր նմա արծաթով և խորհրդով, սակայն ոչ ինչ զումբէ արար այց և խնդիր։

ԽԱ. Ի վերջկոյս ամին կամար յաղթական մերձ 'ի սատուրնեանն մեհեան կանգնեցաւ 'ի յիշատակ գիւտի արծուեացն կորուսելոց 'ի Վարոսէ, որ խնամքք Տիբերի և զօրավարութեամբ Գերմանիկոսի առան անդրէն. և մեհեան դիցուհւոյն Անակիկալ քաղդի յեզը գետոյն Տիբերի 'ի բուրաստանս, զորս իշխանապետն Կեսար թողեալ էր կտակաւ ժողովրդեան Հռովմայ. և սրբարան 'ի Բովիլլաս 'ի պատիւ յուլեան ազգատոհմին, և պատկեր դիւցազնին Աւգոստեայ։ Առ բդեշխութեամբ Կ. Կեկիլեայ և Լ. Պոմպոնեայ, նախ քան զեօթնեներորդ օր կաղանդացն յունիսի, Գերմանիկոս կեսար արար հանդէս յաղթանակի վասն յաղթութեանն 'ի վերայ Քերուսկայ, Կատտեայ, Անդրիւարայ, և որ այլ ևս մինչև ցԱլբիս բնակեն ազգք։ Գնային առաջի յաղթողին աւար և գերի, և պատկերք լերանց և գետոց և Ճակատամարտից. և համարեցաւ կատարեալ նորա զպատերազմն՝ որոյ խափանեալ էր կատարումն։ Առաւել ևս ձգէր յինքն զաչս տեսողաց կերպարան նորա մեծավայելուչ, և հնգեբին որդիքն նորա 'ի կառս։ Այլ տխուր կասկածանք 'ի սիրտ ան-

կանէին՝ յածել զմտաւ զձախողակի էլս սիրոյ հասա-
ռակաց ընդ Դրուսոսի հօր իւրոյ, և զՄարկելլեայ հօր-
եղբօր՝ վաղամեռիկ 'ի սիրալիր խանդից ռամկին յա-
փշտակելոյ, և զարագավախճան և զչարաբախտիկ
իղձս ժողովրդեանն Հռովմայ։

Խբ. Բայց Տիբեր սեստերտս երեքարիւր յանուն
Գերմանիկոսի միւմ միւմ 'ի ժողովրդենէ բաշխեաց,
կամելով իշխանակից իւր զնա 'ի բդեշխութեան։ Այլ
և ոչ այսուիկ անկեղծ թուեցաւ սէր իւր. վասն որոյ
պատճառանօք պատուոյ խորհեցաւ ընդ հուպ հեռա-
ցուցանել զնա, պատեհ ինչ առ այն գտեալ կամ հնա-
րեալ։ Աղբեղայոս, որ 'ի յիսնից ամաց հետէ թագա-
ւորեր 'ի Կապադովկիա, ատելի էր Տիբերի. զի չէր
նորա մեծարեալ զՏիբեր յորժամ էր նա 'ի Հռոդոս։
Իբր ոչ եթէ առ հպարտութեան ինչ անմեծար արա-
րեալ զնա, այլ 'ի բարեկամացն Աւգոստեայ այնպէս
խրատեալ, որք 'ի զօրանալ Կայիոսի կեսարու և յառա-
քել նորա յարևելս՝ ոչ անվտանգ զբարեկամութիւն
Տիբերի համարէին։ Տիբեր 'ի բնաջինջ լինել ազգա-
տոհմի կայսերաց ինքնակալեալ, ետ մօր իւրում առնել
գիր առ թագաւորն, յորում յայտնի ցուցանելով նմա
զցասումն որդւոյ իւրոյ՝ խոստանայր նմա թողութիւն,
թէ գայր նա 'ի Հռովմ աղերսել զայն։ Նա անգէտ դա-
ւոյն, և եթէ գիտէր իսկ՝ երկուցեալ 'ի զօրութենէ,
փութացաւ անդր. և խստիւ յինքնակալէն ընկալեալ,
և դատափետեալ յատենի ծերակուտին, ինքնակամ
կամ օրհասիւ զրաւեցաւ 'ի կենաց. ոչ վասն յանցանաց՝
որովք զրպարտէրն, այլ յաղետիցն և 'ի ծերութենէ
ընկճեալ, և զի դարձեալ հաւասարութիւն իսկ դժոխ-
ըմբեր է թագաւորաց՝ թող թէ հպատակութիւն։ Աշ-
խարհ նորա եղև 'ի մարզ հռովմէական պետութեան.
և 'ի հասից անտի սահմանեաց Տիբեր նուազել զհա-
րիւրորդ հարկաց, և ասա զերկհարիւրորդ։ Զայնու
ժամանակաւ 'ի մեռանել Անտիոքոսի արքային Կոմա-
գենաց, և Փիլոպատորի արքային կիլիկեցւոց, անկաւ
խռովութիւն 'ի նոսա, կիսոց ընդ ձեռամբ հռովմա-
յեցւոց կամելով կալ, այլոց խնդրելով անդրէն թա-
գաւոր։ Դարձեալ և գաւառք Ասորւոց և Հրէաստանի
ընկճեալք ընդ ծանր հարկօք, խնդրէին թեթևա-
բեռնել։

Խգ. Զայսմ ամենայնէ, և զՀայաստանեայց՝ զորմէ վերագոյն ասացաք, խօսեցաւ Տիբերի'ի ծերակուտին և յաւել. Ոչ է մարթ խաղաղութիւն առնուլ արևելից, բայց իմաստութեամբն Գերմանիկեայ. զի հասակ իմ խոնարհի, և Դրուսեայն չև է լցեալ։ — Յայնժամ վը-ճիռ ծերակուտին սահմանեաց Գերմանիկեայ զգա-ւառս՝ որ յայնկոյս ծովուն, և իշխանութիւն նմա՝ ա-մենայն ուրեք առաւել քան զայլոց իշխանաց՝ ընտրե-լոց վիճակաւ կամ յինքնակալէն։ Բայց Տիբերի հեռա-ցուցեալ յԱսորւոց զՍիլանոս Կրետիկ, որոյ դուստր խօսեցեալ ընդ Ներոնի անդրանկին Գերմանիկոսի՝ կցորդէր զնա ընդ սմա խնամութեամբ, 'ի տեղի նո-րա կացուցեալ էր զԿնէոս Պիսոն զայր դժնեայ և ան-աչառ, ժառանգաւոր գոռոզութեան հօր իւրոյ Պի-սոնի, որոյ 'ի քաղաքական մարտին զօրավիգն լեալ էր պարտելոցն վերատին յառնելոյ յԱփրիկէ՝ հզօր օգնա-կանութեամբ ընդդէմ Կեսարու, և որ ապա պատե-րազմակից եղև ընդ Բրուտոսի և ընդ Կասիոսի, և հրա-ման ընկալեալ դառնալոյ 'ի Հռովմ՝ հրաժարեաց 'ի խնդրելոյ բարձ և պատիւ, մինչև ապա ըստ աղաչա-նաց այլոց ընկալաւ զբդեշխութիւն՝ տուեալ նմա յԱ-գոստոսէ։ Առաւել ևս զայրանայր 'ի նմա հայրենին իւր գոռոզութիւն՝ վասն Պլանկինայ կնոջ իւրոյ ազ-նուականութեան և ճոխութեան։ Հազիւ տեղի տայր նա Տիբերի, և զորդիս նորա 'ի վայր յոյժ քան զինքն համարէր, և ոչ ինչ երկբայէր ընդ առաքումն իւր 'ի կուսակալութիւն Ասորւոց՝ առ 'ի սանձահարել զփառասիրութիւն Գերմանիկեայ։ Ոմանք համարին և պատուէրս գաղտնիս ընկալեալ նորա 'ի Տիբերէ. այլ դշխոյին ստուգիւ իսկ նախանձու կանացեաւ խրատեալ էր զՊլանկինա՝ խոնարհել զգոռոզութիւն Ագրիպպինայ։ Վասն զի երկպառակ էին արքունիք, կէսք Դրուսեայ ձեռն տալով և կէսք Գերմանիկեայ լուելեայն կուսակիցք. Տիբեր նպաստեր Դրուսոսի որպէս որդւոյ իւրում. իսկ զԳերմանիկ սիրելի ևս այլոց՝ մօրեղբօրն հակառակութիւն կացուցանէր. և պայծառութեամբ ևս մայրենի ազգին գերազանցէր նա, զի Մ. Անտոնիոս հաւ նորա էր, և Աւգոստ հա-նոյն եղբայր. ուր Դրուսեայ նախահաւ Պոմպոնիոս

Ատտիկոս յասպետաց ևեթ Հռովմայեցւոց՝ անարգանս իմն պատկերացն Կլաւդեանց ածէր. դարձեալ զի և Ագրիպպինա կին Գերմանիկեայ բեղնաւորութեամբ և համբաւով գլեր զԼիւիա կին Դրուսոսի։ Սակայն խաղաղութեամբ ընդ իրեարս կային եղբարք երկոքին, յաղգականացն հակառակութենէ անսասանք։

ԽԴ. Յետ ոչ բազում ժամանակի առաքեցաւ Դրուսոս 'ի Լիւրիկէ վարժել անդ 'ի մարտ, և սիրելի լինել զօրականին. զի 'ի գրգանաց զեղխութեան Հռովմայ անվտանգ 'ի բանակի համարէր Տիբեր զպատանին, և զանձն ևս յապահովի՝ 'ի հրամայել երկոցունց որդւոց իւրոց 'ի վերայ լեգէոնաց. պատճառս ածեալ իբր թէ ըստ աղաչանաց Սուեւաց կամէր օգնել նոցա ընդդէմ Գերմանացւոց։ Զի 'ի մեկնել Հռովմայեցւոց՝ ազգքն երկոքին աներկիւղ լեալ յարտաքնոց, և 'ի սովորութիւն իւրեանց դարձեալ, և զնախանձ փառաց 'ի նոյն յաւելեալ, յիրեարս զզէնս իւրեանց դարձուցեալ էին։ Հաւասար երկաքանչիւրոցն էր զօրութիւն, և քաջութիւն զօրավարաց նոյն. բայց Մարոբոդ թագաւոր էր, և ատելի անունն այն զնա կացուցանէր ազատասիրաց. իսկ Արմինիոս վրէժխնդիր ազատութեան՝ սիրելի իւրոցն էր։

ԽԵ. Վասն որոյ ոչ միայն քերուսկացիք և նիզակակիցք նոցա հինաւուրց զօրք Արմինեայ առին ընդ նմա զէն, այլ և 'ի սահմանաց Մարոբոդայ ազգք սուեւացիք՝ Սեմնոնք և Լանգոբարդք հատան 'ի նա. որովք աւելագոյր նա, եթէ Ինգուիոմերի չէր ապաստանեալ իւրովքն 'ի Մարոբոդ, դժկամակեալ ևեթ կալ ընդ ձեռամբ եղբօրորդւոյ իւրոյ պատանւոյ՝ ծերունի ինքն գոլով և հօրեղբայր նորա։ Ճակատեցան երկուստեք հաւասար յուսով. ոչ ևս որպէս երբեմն ընդդէմ գերմանացւոց հէնք թափառականք կամ ցիրուցան գումարտակք, զի ընդերկար ընդդէմ մեր զինուորեալ՝ ուսան կալ ընդ դրօշիւ, ունել զօրս պահեստի, և լսել զօրավարաց։ Արմինիոս ձիավարեալ ընդ ռազմն բանակէն, ուր և հասանէրն՝ ցուցանէր զվերստին ստացեալն ազատութիւն, զլեգէոնս փլուզեալս, զաւար և զզէնս կորզեալս 'ի Հռովմայեցւոց՝ որ դեռ ևս կային 'ի ձեռս բազմաց։ Եւ ընդ հակառակն յորջորջէր փախստական

զՄարոբոդ, անփորձ մարտի՝ յանտառախիտս Հերկինիոյ ապաստանեալ, և անտի ընծայիւք՝ի ձեռն աղերսաւորաց դաշինս խաղաղութեան խնդրեալ, մանկիչ Հայրենեաց, և արբանեակ կեսարու, ընդ որում պարտ էր նոցա նովին վրէժխնդրութեամբ վարել՝ որով սպանին զԿուինտիլիոս Վարոս. և յուշ առնէր նոցա զայն ամենայն պատերազմունս, որոց եղեալ հալածմամբ հռովմայեցւոց շատ իսկ յայտ առնէին՝ ոյր լեալ էր յաղթութիւն մարտին։

ԽԶ. Ոչ ինչ ընդհատ՝ի նմանէ և Մարոբոդ զպարծանս իւր մեծացուցանէր, պարսաւելով զհակառակորդս, և կալեալ զձեռանէ Ինգուիոմերի, ասէր. Ահա արդարև դիւցազնն Գերուսկաց, զի որ ինչ իրք յաջողեցին նոցա՝ խորհրդոց սորա են արդասիք։ Իսկ զԱրմինիոս կոչէր կատաղի և անփորձ՝ յայլոց փառս պանծացեալ, զի զերեսին խոռեալ լեգէոնս և զյանդուգն զօրագլուխս նոցա՝ի դաւ ըմբռնեալ էր՝ յաղէտս Գերմանիոյ և՝ի նախատինս իւր, զի դեռ ևս կին և որդիք նորա կային՝ի գերութեան։ Իսկ զանձնէ ասէր, զի՝ի յարձակել՝ի վերայ իւր երկոտասան լեգէոնաց զօրավարութեամբ Տիբերի՝ անեղծ զփառս գերմանացւոց պահեալ էր, և ապա հաւասար պայմանօք դաշինս ընդ նոսա կռեալ՝ ոչ ինչ ստրջանայր ընդ առնել իւր ապաստան՝ի կամս հասարակաց զընտրութիւն ընդ պատերազմ ընդդէմ հռովմայեցւոց՝ ամբողջ դեռ ևս զզօրութիւն իւրեանց ունելով, կամ ընդ խաղաղութիւն առանց արիւնհեղութեան։ Հանդերձ սոքիմբք և այլ պատճառք առանձնականք գրգռէին զզօրս երկուստեք։ Գերուսկացիք և լոմբարտացիք մարտնչէին ընդ իրեարս վասն նախնի փառաց կամ արդի աղատութեան. իսկ Սուեւք վասն ընդարձակելոյ զտէրութիւն իւրեանց։ Ուժգին քան զամենայն ձակատամարտս եղև բաղխիւն նոցա, և քան զամենայն ելս մարտի երկբայելի եղեալ նորին, վասն խորտակելոյ աջոյ թևի երկաքանչիւրոցն կողմանց։ Եւ մինչդեռ մնայր ձակատել նոցա միւսանգամ, Մարոբոդ ած՝ի բլուրս զբանակն՝ի նշանակ պարտութեան. և՝ի թօթափել տակաւ զօրացն՝ի նմանէ՝ մեկնեալ՝ի Մարկոմանս, հրեշտակս արար առ Տիբեր յաղերս օգնականութեան.

և ընկալաւ պատասխանի չունել երաւունս խնդրելոյ օգնականութիւն 'ի Հռովմայեցւոց ընդդէմ Բերուսկաց, զի չէր նորա օգնեալ 'ի պատերազմել Հռովմայեցւոց ընդդէմ նոցա։ Բայց առաքեցաւ Դրուսոս, որպէս ասացաք, հաստատել 'ի նոսա խաղաղութիւն։

Խէ. Ի նմին ամի երկոտասան քաղաքք Ասիոյ հռչակաւորք կործանեցան 'ի սասանութենէ երկրի գիշերային, որով առաւել ևս անակնկալ և ծանրագոյն եղեն աղէտքն. և ոչ մարթէր, որպէս յարկածս այսպիսիս սովորութիւն է, 'ի դաշտս անշէնս ապաստանել. զի պատառեալ երկիր ընկլուզանէր զփախստեայս։ Պատմեն՝ խոնարհեալ յայնժամ բարձրաբերձ լերանց, և դաշտաց լեռնացեալ, և 'ի փլատակաց հուր բղխեալ։ Դիժընդակագոյն սարդիացւոցն հարուած առաւելագոյն եգիտ ողորմութիւն. զի հազար բիւր սեստերտս խոստացաւ նոցա կեսար, և զամն հինգ ապահարկս կացոյց զնոսա գանձուն և արքունեաց։ Յետ սարդիացւոց առաւելագոյն տոյժս, ըստ նմին և նպաստս՝ ընկալաւ սիպիլեանն Մագնեսիա։ Նոյնչափ ամս կացին ապահարկ և տեմնացիք, փիլադելփացիք, եգէացիք, ապոլոնիդացիք, և Մոստենքն անուանեալք կամ մակեդոնեան վրկանիկք, երոկեսարացիք, միլինացիք, Կիմենք և Տմոլք։ Եւ սահմանեցաւ գնալ անդր ումեք 'ի ծերակուտէն, քննել տեսանել խնամել զաղէտսն. և ընտրեցաւ Մ. Ալետոս, որ կուսակալ միայն կացեալ էր յառաջագոյն, զի մի նախանձ 'ի հաւասարս անկեալ՝ խափան լիցի բարւոյ, քանզի մի 'ի բդեշխից հրամայէր յԱսիա։

ԽԸ. Ի հասարակաց 'ի մեծագործ առատաձեռնութիւն իւր յաւել կեսար ոչ ինչ նուազ հաճոյական պարգևս յիւրմէ։ Ինչք Եմիլեայ Մուսայի մեծափարթամ տիկնոջ, որ առանց կտակի վախճանեալն էր, գնային 'ի գանձ արքունի. այլ նա Եմիլիոսի Լեպիդեայ, որ համարէր ազգական վախճանելոյն, պարգևեաց զայն. և զինչս Պատուլեայ ասպետի հռովմայեցւոյ մեծատան, որոյ ժառանգակից զինքն կացուցեալ էր կտակաւ, Եթող ամբողջ Մ. Սերուիլիոսի՝ զոր միայն կացուցեալ էր նորա յառաջագոյն վաւերական կտակաւ ժառանգ. քանզի պարտ է, ասէր, օգնել երկաբանչիւրոցն առ 'ի

պահել զազնուականութիւն իւրեանց։ Եւ ոչ երբէք ընկալաւ հրիտակս, որոց չէր արժանի լեալ բարեկամութեամբ. զի զանծանօթից և զորոց առ ատելութեան իւրեանցայնոցն ժառանգ զինքն կացուցանէին, մերժէր 'ի բաց։ Այլ որպէս զանմեղաց սփոփէր զկարօտութիւն, նոյնպէս և զԼիբիդիոս Վարրոն, զՄարիոս Նեպոս, զԱպպիոս Ապպիանոս, զԿուռնելիոս Սուլլա, և զԿ. Վիտելլիոս մերժեաց 'ի ծերակուտէն կամ հրաժարեցոյց, զի վասն շռայլութեան և ախտից անկեալ էին 'ի կարօտութիւն։

Խթ. Զայսու ժամանակաւ զմեհեանս դից, որ 'ի հնութենէ կամ 'ի հրդեհէ եղծեալ էին, և զորս Աւգոստեայ սկսեալ էր կանգնել, կատարեաց կեսար. զԴիոնիսեայն, զՊերսեփոնեայն և զԴեմետրեայ մերձ 'ի կրկէսն մեծ, զորս Ա. Պոստումեայ իշխանապետի ուխտեալն էր։ Ի նմին վայրի և զմեհեան Փլորայ 'ի Լուկիոսէ և 'ի Մարկոսէ Պոբլիկեանց կառուցեալ, և զտաճար Յանոսի մերձ 'ի վաճառանոց արմտեաց կանգնեալ 'ի Կ. Դուիլլիոսէ՝ որ զհռովմէական զէնս ընդծուլ ինքն նախ արար յաղթական, և նաւական յաղթանակի ընդդէմ փիւնիկեցւոց եղև արժանի, նորոգեաց։ Իսկ զմեհեանն Յուսոյ, զոր Ատիլիոսի 'ի նմին մարտի էր ուխտեալ, կատարեաց Գերմանիկոս։

Ծ. Զօրանային յայնժամ օրէնք քրէականք, և Ապուլէա Վարիլլիա թոռն քեռ Աւգոստեայ, քանզի խեղկատակութեամբ զդիւցազնն Աւգոստ, զՏիբեր, և զդշխոյ մայր նորա թշնամանեալ էր, և համարէր ապականեալ շնութեամբ զարիւն կայսերական, յանցաւոր ընդդէմ քրէական օրինաց ամբաստանեցաւ։ Շնութեան նորա յանցանք 'ի յուլեան օրինաց բաւականապէս դատեալ համարեցան. իսկ զքրէականն խնդրեաց կեսար զանազանել, պատժել եթէ ինչ ընդդէմ Աւգոստեայ արարեալ էր թշնամանս, իսկ զիւր թշնամանսն անտես առնել։ Եւ 'ի հարցանել զդեշխին թէ զինչ զթշնամանաց մոր իւրոյ դշխոյի դատեր՝ յոր ամբաստանէրն Վարիլլիա, լռեաց. և ապա 'ի միւսանգամ ժողովել ծերակուտին՝ յանուն ևս դշխոյին խնդրեաց, զի որ ինչ բանս թշնամանաց զնմանէ ևս ասացեալ էր Վարիլլեայ՝ մի՛ վասն այնորիկ դատափետեսցի։ Որով զեր-

ծոյց զԱարիլիա 'ի քրիստական յանցանացն պատուհասէ, և զշնութեանն իսկ ինդրեաց մեղմել զպատուհաս, հաւանեցուցեալ զընտանիս նորա հեռացուցանել զնա 'ի Հռովմայ, ըստ օրինակի նախնեացն իւրեանց, անդր քան զերկերիւր մղոն։ Եւ հմանուոյ նորա Մանլիոսի արգել 'ի վերայ եդաւ՝ մի կոխել յԻտալիա և յԱփրիկէ։

ԾԱ. Յընտրութիւն կուսակալի փոխանակ Վիպսանեայ, որ զբաւեալն էր 'ի կենաց, յարեաւ վէճ։ Գերմանիկ և Դրուսոս, որք 'ի Հռովմ էին յայնժամ, կամէին զԱտերիոս Ադրիպպաս՝ որ ազգական էր Գերմանիկոսի. բողոքէին ընդ հակառակն բազումք, ընտրել 'ի հետամտից՝ որոյ ուրուք բազմագոյն էին որդիք, որպէս օրէնք հրամայէին։ Սիրելի էր Տիբերի տեսանել զծերակոյտն ընդ որդիս իւր և ընդ օրէնս տարակուսեալ. տեղի ետուն օրէնք, որպէս չէր ինչ երկբայելի, այլ ոչ նոյնհետայն և ոչ բազումինչ առաւելութեամբ քուէից, որպէս 'ի ժամանակի իսկ զօրութեան իւրեանց տեղի տային։

ԾԲ. Ի սմին իսկ ամի սկիզբն եղև պատերազմին յԱփրիկէ. և զօրավարէր Թշնամեաց Տակփարինաս, ազգաւ Նումիդացի, դասալիք 'ի Հռովմէական բանակէ՝ յորում զինուորէրն յօգնական գունդս։ Ի սկզբան անդ գումարեաց ընդ իւր հէնս թափառականս սովորեալս 'ի գաղտագողի աւարառութիւն և 'ի յափշտակութիւն. ապա մարզեալ զնոսա զինուորեցոյց ընդ դրօշիւ՝ կարգեալ 'ի գունդս. և ապա ոչ ևս խառնամբոխ զօրաց, այլ մուսուլեցւոց եկաց զօրավար։ Ազգս այս հզօր մերձ յանապատս Աֆրիկէայ, որոյ չև ևս էր քաղաք, զէն առեալ՝ ձայն ետ դրացեաց իւրոց Մաւրեաց գումարել ընդ իւր 'ի պատերազմ։ Մածիպպաս զօրավար էր նոցա. և բաժանեցին զբանակն, Տակփարինայ զընտիրս 'ի զօրաց 'ի ձև հռովմայեցւոց զինեալս ունել 'ի պատնիշի 'ի հրահանգս և 'ի հնազանդութեան, և Մածիպպայ մեկնակազէն զօրօք շուրջ ամենայն ուրեք ածել հուր սուր և արհաւիրս։ Եւ մինչդեռ ստիպէին և զկինութացիս գումարել ընդ իւրեանս, զազգ ոչ արհամարհ, եկն եհաս 'ի վերայ նոցա Փուրիոս Կամիլլոս փոխանակն բդեշխի աշխարհին աֆրիկեցւոց, համախմբեալ զլեգէոնս և որչափ ինչ գունդք ընդ ձեռամբ նորա էին

օգնականք։ Եւ թէպէտ առաջի բազմութեան Նումի-դաց և Մաւրեաց սակաւաձեռն ինչ գունդ էր բանակ նորա, այլ նա զգուշանայր ամենևին չարկանել ահ 'ի թշնամիս՝ զի մի՛ խոյս տացեն 'ի Ճակատամարտէ, այլ զի յուսով յաղթութեան 'ի պարտութիւն մատնեսցին։ Սրդ լեգէոնն 'ի բուն բանակին, և թեթևազէն գունդք և թևք երկոքին յաջմէ և յահեկէ կարգեցան կացին։ Տակիտարինաս ոչ հրաժարեաց 'ի մարտէ. պարտեցան Նումիդացիք, և զիտաւս զինուց յետ բազում ամաց վերըստին ստացաւ ազգատոհմն փուրեան. քանզի յաւուրց Փուրիոսի փրկչին Հռովմայ, և որդւոյ նորա Կամիլլեայ, փառք յաղթութեան պատերազմաց յայլ ազգատոհմն անցեալ էին, և Փուրիոսս այս համարէր անփորձ պատերազմի։ Վասն որոյ Տիբեր մտադիւրագոյնս գովեաց զքաջութիւն նորա 'ի ծերակուտին. և սահմանեցին նմա Հարք զօրէնս պատուոյ յաղթանակի, որ չեղեն նմա 'ի միւսս՝ վասն չափաւորութեամբ կենցաղավարելոյ նորա։

ԾԳ. Ի միւսումն ամի կացին զդեսպան Տիբեր երրորդ անգամ, իսկ Գերմանիկ զայս երկրորդ անգամ։ և ընկալաւ զիշխանութիւնն զայն 'ի Նիկոպոլիս քաղաք Ակքայիոյ, ուր երթեալն էր 'ի նաւարկելն ընդ ծովեզերս Լիւրիկեցւոց, այլ արարեալ 'ի Դալմատիա եղբօր իւրում Դրուսոսի, և կրեալ արկածս 'ի Հանդրին և 'ի յոնական ծովու տաժանաւոր նաւարկութեամբ։ Վասն որոյ զաւուրս ինչ 'ի բեղեկ նաւատորմին լինէր անդ. և յաւուրսն յայնոսիկ էլ նա տեսանել զծոյն՝ ակտիական յաղթութեամբն լեալ հռչակաւոր, և զարձանս կանգնեալս անդ յԱւգոստեայ, և զբանակետղ Մ. Անտոնիոսի 'ի յիշատակ նախնեացն իւրոց։ Զի էր նա, որպէս ասացի, թոռն Անտոնիոսի, և եղբայր հաւոյ նորա Աւգոստ, և վայրն այն նմա յիշատակարան մեծ՝ աղետից և յաղթանակաց։ Անտի գնաց նա յԱթէնս, և 'ի մեծարանս վաղեմի և նիզակակից քաղաքին՝ նուիրակաւ ևեթ միով անդ երևեցաւ։ Մեծապատիւ մեծարեցին զնա Յոյնք, զնախնեաց նորա զքաջութիւնս 'ի մէջ բերելով՝ առ 'ի տալ շողոմիցն իւրեանց զօրութիւն։

ԾԴ. Ի քաղաքէն աթենացւոց անց յԵւբիա, և անդ

տի 'ի Լեսբոս, ուր Ադրիպպինա 'ի լոյս էած զՅուլիա՝ զվերջին երկունսն լուծեալ։ Ապա երթեալ մինչև 'ի ծագս Ասիոյ, շրջեցաւ 'ի քաղաքս Թրակիոյ, 'ի Պերինթոս և 'ի Բիւզանդիոն, և անցեալ ընդ կիրճ Պրոպոնտեայ եմուտ 'ի բերան Եւքսինեայ. զի ցանկայր տեսանել զվայրսն զայնոսիկ վաղեմիս հռչակաւորս։ Միանգամայն և խնամէր զպէտս գաւառացն այնոցիկ պառակտելոց, կամ հարստահարելոց 'ի բռնութենէ կուսակալաց։ Կամէր 'ի դառնալն իւրում՝ լինել և 'ի խորհրդատօնս 'ի Սամոթրակէ. այլ հողմք հիւսիսոյ զարտուղի զնա անտի վարեցին։ Եւ յԻլիոն նկատեալ զյեղափոխութիւն բախտի, և մեծարեալ զխանձարուրս մեր, 'ի դառնալ ընդ ծովեզերս Ասիոյ՝ մատեաւ 'ի Կոլոփոն, առնուլ հրաման պատասխանւոյ 'ի կլարեանն Ապոլոնէ։ Ոչ քրմուհի ոք է անդ հարցուկ որպէս 'ի Դելփիս, այլ յազգատոհմից ոմանց քուրմ ընտրեալ, սովորաբար 'ի միլետացւոց։ Հարցանէ նա զթիւ ևեթ և զանուանս եկաւորաց. և ինքեալ 'ի քարայր անդր, և 'ի խորհրդական աղբերէն արբեալ, տգէտ իսկ յաձախ 'ի դպրութենէ և 'ի տաղից, պատասխանէ չափաւ զկրաց՝ զոր ընդ միտ ոք ածիցէ։ Եւ աւանդեն գուժեալ նորա զկանխահաս մահ Գերմանիկեայ յերկդիմի բարբառ պատգամաց։

ԾԵ. Բայց Կն. Պիսոն առ 'ի սկսանել վաղագոյն որ ինչ երկնէրն 'ի մտի, զաթենացիս ահաւոր գալստեամբն իւրով պակուցեալս սաստիւ կշտամբեաց, 'ի Գերմանիկ ևս զյանդիմանութիւնն ձգելով՝ զի 'ի նախատինս հռովմէական անուան այնու առաւելագոյն մարդասիրութեամբն մեծարեալ էր նորա, ոչ զաթենացիս 'ի նախձիրս արեան զրաւեալս 'ի կենաց, այլ զխաժամուժն՝ որ խառնամբոխ յամենայն ազգաց գումարեալ էին ընդ Միհրդատայ ընդդէմ Սիլլայի, և ընդ Անտոնիոսի ընդդէմ Աւգոստեայ։ Յիշեցուցանէր և որ ինչ 'ի նախնի արկածս պատերազմաց ընդ Մակեդոնիոյ բռնութիւնս արարեալ էր աթենացւոց ընդդէմ քաղաքայնոցն իւրեանց. և ինքն իսկ դառնացեալ ընդդէմ նոցա՝ զի չէր նոցա շնորհեալ աղաչանաց իւրոց զԹէոփիլոս ոմն դատապարտեալ յԱրիսպագէն 'ի խաբդախութիւն։ Եւ ապա փութանակի նաւարկեալ ընդ

Կիւկլադայս ընդ կարձոյ ճանապարհ, եհաս զհետ Գերմանիկեայ 'ի Հռոդոս։ Ոչ անգիտանայր սա քանի թշնամանեալ էր նորա զինքն, այլ հեզութիւն այնպիսի յանձին բերէր, զի 'ի վարել զնա մրրկի 'ի ժայռս՝ ուր կորուստ թշնամւոյն համարէր հասեալ յարկածից՝ արձակեաց եռաթիս յօգնութիւն առ 'ի փրկել զնա։ Այլ և ոչ այնու ողոքեալ Պիսոն, և հազիւ օր մի անդ համբերեալ, եթող զԳերմանիկ. և կանխեալ յԱսորիս, յինքն յարեցոյց զլեգէոնս առատաձեռնութեամբ և զհաճոյս նոցա առնելով։ Զի յետնոց 'ի զօրականէն ձեռնտու լինէր, և փոխան հինաւուրց հարիւրապետաց և քաջայաղթ զօրավարաց զձեռասունս իւր և զարս անօրէնս կացուցանէր, անտես առնէր զյուլութիւն զօրաց 'ի բանակին, զհամարձակութիւն 'ի քաղաքս, զթափառական և ցոփագնաց վարել կեանս զինուորաց 'ի գիւղորէս. յայն անկարգութիւն հասեալ, զի հայր լեգէոնաց զնա ամենեքեան կոչէին։ Եւ ոչ Պլանկինայ 'ի պատշաճս անաւագ բնութեանն կալով՝ 'ի հրահանգս հեծելազօրուն և 'ի հոլովմունս գումարտակաց լինէր հանդիսադիր, և թշնամանս յԱգրիպպինա և 'ի Գերմանիկ արձակէր։ Ի լաւագունաց իսկ զօրականին կէսք հպատակէին 'ի չարիս, զի շշունջ գաղտնի ընթանայր՝ ոչ անհրաման յինքնակալէն առնելոյ նոցա զամենայն։

ԾԶ. Գիտեր իսկ Գերմանիկ զամենայն, այլ ստիպէր յայնժամ փութալ 'ի Հայս։ Անդուստ 'ի սկզբանէ կեղակարծ էր հաւատարմութիւն Հայոց ըստ բնաւորութեան իւրեանց և ըստ դրից աշխարհին. զի 'ի բազում գաւառաց մերոց պատեալ՝ մինչև 'ի Մարս տարածանի 'ի մէջ երկուց մեծամեծ ինքնակալութեանց, գրգռեալ յաձախ՝ ընդ հռոմայեցիս ատելութեամբ, և ընդ Պարթևս նախանձու։ Յետ ընկենլոյ զՎոնոն 'ի թագաւորութենէ՝ չէր նոցա թագաւոր, և խնդրէին զՉենոն որդի Պոլեմոնի արքային պոնտացւոց. զի սա 'ի մանկութենէ ըստ բարուց և ըստ սովորութեանց նոցա կենցաղավարեալ՝ յորոս և 'ի խրախուն և որ այլ ինչ ախորժելի են բարբարոսաց, սիրելի լեալ էր աւագանւոյն և ռամկին։ Արդ Գերմանիկ յԱրտաշատ քաղաքի, ըստ հաւանութեան ազատանւոյն, առաջի բազմութեան եդ 'ի գլուխ նորա

զԹագ արքունի, և ամենեքեան ողջունեցին զնա Թագաւոր՝ կոչելով զնա յանուանէ քաղաքին Արտաշէս։ Կապադովկիա ևս մարզ կացեալ Հռովմայ, ընկալաւ 'ի կուսակալ զկ. Վերանոս, և դիւրութիւն ինչ արարաւ հարկաց արքունի՝ առ 'ի ցուցանել մարդասիրագոյն զՀռովմէականն ինքնակալութիւն։ Եւ 'ի վերայ Կոմագենայց կացուցաւ Կ. Սերուէոս, 'ի կարգ կուսակալութեան յայնժամ աշխարհ նոցա անցեալ։

ԾԷ. Բայց Թէպէտ և ամենայն ինչ յաջողութեամբ 'ի նիզակակիցս բարեկարգեալ, սակայն չէր ինչ գոհ Գերմանիկ վասն գոռոզութեան Պիսոնի՝ որում հրամայեալ էր ածել զմանն ինչ լեգէոնին 'ի Հայաստան, կամ ընդ որդւոյ իւրում յղել, և ոչ ոք յերկաքանչիւրոցն երևէր։ Յետոյ ապա 'ի Ամերոցի տաճերորդ լեգէոնին 'ի Կիլիկիա 'ի մի վայր եկին, երկաքանչիւր կալեալ զդէմն անայլայլակ, Պիսոն առ 'ի ծածկել զերկիւղ, և Գերմանիկ զի մի սպառնալ Թուիցի։ Չի Թէպէտ և հեզաբարոյ էր, որպէս ասացի, այլ բարեկամք իւր Ճարտարք 'ի գրգռել զնա՝ ստուարացուցանէին զստոյգ Թշնամանս և յաւելուին ստայօդս, զբպարտելով զՊիսոն և զՊլանկինա և զորդիս նոցա պէսպէս բարբանօք։ Էին անդ ոմանք յընտանեաց նորա, և լու 'ի լու նոցին խօսել կալաւ կէսաբ որպիսի ինչ ցասումն և կեղծիք Թելադրէին. և Պիսոնի ըմբոստագոյն պատՃառանս ածեալ նման 'ի դէմն, մեկնեցան 'ի միմեանց ոչ 'ի սրտի։ Դուն ուրեք այնուհետև երևեցաւ Պիսոն յատենի ընդ Գերմանիկեայ. և եԹէ բազմէր անդ ընդ նմա, խոժոռ և ընդդիմախօս յայտնապէս երևէր, և 'ի խրախուն ուրեք արքային նաբատացւոյ, ուր պսակ ոսկի ծանրակշիռ մատուցաւ Գերմանիկեայ և տիկնոջ նորա Ագրիպպինայ, իսկ Պիսոնի և այլոց ԹեԹևակշիռ, լաւի եղև բարբառ նորա զի գոչէր. Ոչ 'ի պատիւ արքայորդւոյն ՊարԹևաց, այլ իշխանորդւոյ Հռովմայեցւոյ լինէին խրախունքն։ Եւ արկեալ զպսակն 'ի բաց, բազում ինչ դառն կշտամբանս յաւել ընդդէմ զեղխութեան, որոց համբեր Գերմանիկ։

ԾԸ. Յայնմ վայրի հասին հրեշտակք Արտաւանայ արքային ՊարԹևաց, որոյ յիշեցուցանելով զուխտ և զնիզակակցութիւն երկուց պետութեանցն՝ ցանկայր և

ինքն նորոգել զայն, և հրաւիրեր մեծարանօք զԳերմանիկ մինչև յեզր Եփրատայ, այլ խնդրեր բառնալ յԱսորւոց զՎոնոն, զի մի՛ ի նախարարս պետութեան իւրոյ մերձակայութեամբն արկցէ հերձուած՝ ի ձեռն արբանեկաց։ Պատասխանի վերհ արար Գերմանիկ զնի-զակակցութենէ հռովմայեցւոց ընդ Պարթևս, և վայելչական չափաւորութեամբ զգալստենէ թագաւորին ընդ առաջ իւր՝ ի մեծարանս։ Եւ յղեցաւ Վոնոն՝ ի Պոմպէոպոլիս, ծովեզերեայ քաղաք Կիլիկիոյ, ոչ՝ ի հնորհս ևեթ Արտաւանայ, այլ և՝ ի թշնամանս Պիսոնի՝ որում սիրելի յոյժ լեալ էր Վոնոն, սպասուք և պարգևօք յինքն յանկուցեալ զՊլանկինա։

ԾԹ. Առ բդեշխութեամբ Մ. Սիլանեայ, և Լ. Նորբանոսի խաղաց Գերմանիկ յԵգիպտոս պատճառանօք ինամելոյ զպէտս աշխարհին, այլ ստուգիւ առ՝ ի տեսանել զվաղեմի յիշատակս Եգիպտացւոց։ Նուազեցոյց անդ զգինս ցորենոյ՝ բացեալ շտեմարանս, և արար բազում ինչ՝ ի հաճոյս ռամկին. զի շրջէր առանց թիկնապահ զօրաց, և՝ ի ձև յունական ագանէր ձորձ և կօշիկս, որպէս Սկիպիոնի աւանդէն արարեալ՝ ի Սիկիլիա մինչդեռ սաստկանայր ընդ փիւնիկեցիս պատերազմ։ Տիբերի մեղմով ստգտեալ զձև և զզարդ նորա, զայրացաւ ընդ մուտս նորա յԱղեքսանդրիա ինքնահրաման ընդդէմ աւգոստեան օրինաց։ Զի Աւգոստեայ ընդ այլ օրէնս պետութեան սահմանեալ էր և զայն՝ ատենակալաց և աւագ ասպետաց մի՛ անհրաման գնալ յԵգիպտոս, դժուարամատոյց առնելով զաշխարհն՝ զի մի՛ գուցէ սովեսցի Իտալիա յերեսաց փառամոլութեան տիրելոյ ուրուք անդ, ուստի զփականս ծովու և ցամաքի՝ ի ձեռին ունելով՝ մարթէր նմա սակաւաձեռն գնդաւ զդէմ ունել յաճախագունդ բանակի։

Կ. Բայց Գերմանիկ, ոչ գիտելով զի՝ ի յանցանս համարէր նմա ուղևորութիւն իւր, դառնայր ընդ Նիլ՝ եկեալ՝ ի նաւ՝ ի Կանոպ քաղաք, կառուցեալ՝ ի սպարտացւոց՝ ի յիշատակ նաւապետին իւրեանց Կանոպայ, որ՝ ի վարել Մենելայոսի՝ ի մերկէ՝ ի ծովեզր Լիբիոյ՝ ի գնալն յԵլլադա՝ թաղեալ էր անդ։ Այնտի Գերմանիկ մտեալ՝ ի մերձակայ բերան գետոյն նուիրականի Հերակլեայ, զոր ընդիկք տեղւոյն աւանդեն ծնեալ անդ

վաղ քան զամենայն դիւցազունս՝ որ հաւասարեալ քա-
ջութեան նորա կոչեցան յանուն իւր։ Այլ արար և
աւերակացն Թեբայիտայ, ուր տառք եգիպտականք՝ 'ի
մեացորդս մեծակառոյց շինուածոց դրոշմեալք՝ վկա-
յեին վաղնջականի քաղաքին Ճոխութեան։ Եւ 'ի հրա-
մայել միում 'ի ծերունեաց անտի քրմաց բացատրել
զՀայրենի արձանագրութիւնն, յայտ արար նա՝ զի բնա-
կէին երբեմն 'ի քաղաքի անդ եօթանասուն բիւր այր
պատերազմի, զի զօրավարեալ նոցա Հռամսէս արքայ՝
նուաճեալ էր զԼիբիա, զԵթովպիա, զՄարս, զՊարսս,
զԲակտրիս և զՍկիւթս, և զի երկիրն առ հասարակ՝
յորում բնակէին Ասորիք և Հայք, և սահմանակից
նոցին Գամիրք, և 'ի ծովէն Բիւթանիոյ մինչև 'ի ծոփ
Լիկիոյ լեալ էր ընդ իշխանութեամբ նորա։ Արձանա-
գրեալ կային անդ մանրապատում և հարկք 'ի վերայ
ազգացն այնոցիկ արկեալք, կշիռ ոսկւոյ և արծաթոյ,
թիւ զինուց և երիվարաց, նուէրք մեհենաց փղոսկր և
ծխանելի, ցորեան և ամենայն պաշար՝ զոր ազգաց իւ-
րաքանչիւրոց պարտ էր հատուցանել ոչ ինչ ընդհատ
յայնցանէ՝ զորս արդ պարթևական զօրութիւն և իշ-
խանութիւն հռովմէական հանեն հարկս։

ԿԱ. Նկատէր անդ Գերմանիկ և զՀրաշակերտս,
յորս էին երևելի պատկերն Մեմնոնի վիմարդեան,
որ 'ի ծագել անդր Ճառագայթից արեգական՝ հնչիւն
մարդկեղէն բարբառոյ արձակէր, բրգունքն լեռնա-
հանգէտք 'ի մեծահարուստ թագաւորաց նախանձընդ-
դէմ կառուցեալք 'ի հողմավար աւազուտս գոգցես
անմատչելիս, ծովալնջքն պեղեալք յընդունարան յոր-
դելոց ալեացն Նիլոսի, և դարափունք՝ ընդ որ գնայ
գետն խորայատակ, զորոյ չէ ումեք զխորն չափել։ Այլ
տի էանց յԵլեփանտիս և 'ի Սիեն, որ էին երբեմն սահ-
մանք հռովմէական պետութեան՝ ընդարձակելոյ արդ
ցծոփն Կարմիր։

ԿԲ. Մինչդեռ Գերմանիկ զամառն զայն անցուցա-
նէր 'ի մարզս, ոչ դոյզն ինչ պարծանս արար իւր Դրու-
սոս՝ հերձուածս արկանելով 'ի գերմանացիս, և մարտ
'ի վերայ յարուցանելով 'ի կործանումն Մարոբոդեայ՝
որ վաղ իսկ սասանեալն էր։ Էր 'ի Գոթոնս պատանի
ոմն ազատազգի Կատուալդ անուն, փախուցեալ էր-

բեմն յերեսաց զօրութեան Մարոբոդեայ, և յայնժամ յարկածս ոսոխին համարձակեալ՝ ի վրէժխնդրութիւն Սա՝ ի սահմանս Մարկոմանաց յարձակեալ զօրօք, և կաշառօք զգլխաւորս նոցա յինքն յանկուցեալ, եմուտ յարքունիս և յամուրս շրջակայս, և եգիտ անդ աւար վաղ ուրեմն շեղջակուտեալ՝ ի Սուեւաց, և պարենապահս և վաճառականս՝ ի մերոց գաւառաց, զորս ազատութիւն վաճառականութեան, շահասիրութիւն, և մոռացօնք հայրենեաց՝ ի բաց ձգեալ էին՝ ի բնակութենէ իւրեանց յերկիր թշնամեաց։

ԿԳ. Մարոբոդ լքեալ յամենեցունց՝ գիմեաց՝ ի գթութիւն Տիբերի, անց ընդ Դանուբ՝ ուր գետն այն թանայ զՆորիկա գաւառ, և գրեաց առ կայսր՝ ոչ որպէս փախստեայ աղաչաւոր, այլ յիշեցուցանելով զնախնին իւր պայծառութիւն՝ գերահամբաւեալ՝ ի Թագաւորս, և զի յազգաց բազմաց հրաւիրեալ յօգնականութիւն, զբարեկամութիւն հռովմայեցւոց նախամեծար առնէր։ Պատասխանի ետ նմա կեսար՝ զի ապաւէն անքոյթ և ոչ անփառունակ պատրաստ կայր նմա Իտալիա, եթէ կամէր կալ անդ. և մարթէր նմա գնալ անտի աղատ՝ որպէս և եկեալն էր, եթէ այլուր հրաւիրէր զնա յաջողութիւն։ Եւ՝ ի ծերակուտին ասաց զնմանէ, զի ոչ Փիլիպպոս՝ աթենացւոց, և ոչ Ժողովրդեանն Հռովմայ՝ Պիւռոս և Անտիոքոս այնպէս ահարկու լեալ էին։ Ստենաբանութիւն նորա կայ և մնայ. մեծացուցանէ նա անդ զՄարոբոդ, ցուցանէ զանընկճելի զօրութիւն ազգացն՝ զորս նուաճեաց, զմերձակայութիւն թշնամեաց այնպիսւոյ հուպ Իտալիա, և զհնարս իւր՝ ի կործանումն նորին։ Եւ բնակեաց Մարոբոդ՝ ի Հռաւենն, որպէս թէ պատրաստ կալով անդ առ՝ ի դառնալ՝ ի Թագաւորութիւն իւր՝ ի նշկահել Սուեւաց. այլ ոչ երբէք մեկնեցաւ Իտալիոյ ընդ ամն ութուտասն, ծերացեալ յաքսորանս անդ, և նուաղեալ ոչ սակաւ՝ ի փառաց վասն կորի սիրելոյ ըղկեանս։ Նոյն դէպք անցին և ընդ Կատուալդ, և նոյն եղև նորա ապաւէն. և՝ ի հալածել ընդ հուպ ոսոխի նորա՝ ի զօրաց Եսմենդուրաց՝ զօրավարութեամբ Վիբիլլիոսի, ինքն ձեռնկալեալ՝ ի հռովմայեցւոց՝ յղեցաւ՝ ի Փրկոն դաղթական նաբբոնեանն Գալլիոյ։ Այլ

զի մի բարբարոսք՝ որք ընդ Երկոսին արքայս Եկեալն էին՝ խառնեալ ընդ ազգս Երկրին խռովեսցեն զխաղաղութիւն գաւառացն, յայնկոյս Դանուբ գետոյ տուաւ նոցա բնակութիւն ընդ Մար և ընդ Կուս, և ընկալան 'ի Թագաւոր զՎաննիոս յազգէ Կուատաց։

ԿԴ. Ազդ եղև 'ի Հռովմ Թագաւորեցուցանել Գերմանիկեայ զԱրտաշիս 'ի վերայ Հայոց, և վճռեաց Ծերակոյտն Գերմանիկեայ և Դրուսոսի մտանել յաղթանակաւ 'ի քաղաքն, երկուստեք մեհենի Վրէժխնդիրն Արիսի կանգնեալ կամարս յաղթականս հանդերձ պատկերօք նոցին։ Տիբեր առաւել ուրախանայր ընդ հաստատել իւր իմաստութեամբ զխաղաղութիւն, քան ընդ զրաւել մարտին յաղթութեամբ. վասն որոյ և ընդդէմ Հռեսկուպորեայ արքային Թրակիոյ նովին հնարիւք վարեցաւ։ Հռեմետալկէս տիրէր բովանդակ աշխարհին. և 'ի մեռանել նորա, Աւգոստ զկէս աշխարհին ետ Հռեսկուպորեայ եղբօր նորին, և զմիւս կէսն որդւոյ նորա Կոտեայ։ Ի մասին սորա էին անդաստանք և քաղաքք և վայրք սահմանակիցք Եւլադայ. իսկ 'ի միւս մասին անապատք մացառախիտք և սահմանակիցք Թշնամեաց, վայրք համեմատք բարուց Թագաւորացն երկոցունց. զի մին հեզահամբոյր, իսկ միւսն անհամբոյր էր և փառամոլ, և հաւասարակցի դժոխոյ ոգեբ։ Ի սկզբան անդ կացին 'ի կեղծ միաբանութեան. այլ ընդ հուպ Հռեսկուպորիս անց ըստ սահմանս իւր՝ գրաւել զմասն եղբօրորդւոյն, և 'ի կալ նորա հակառակ՝ բռնանայր։ Յաւուրս Աւգոստեայ, որով երկաքանչիւր Թագաւորեալ էին, խէթ 'ի մտի ունէլով՝ չիշխեր նշկահել, երկուցեալ 'ի վրէժխնդրութենէ նորա. այլ 'ի փոխել կայսեր՝ համարձակեալ, ասպատակս արձակէր յերկիր իշխանակցին, և աւերէր զամուրս նորա՝ առ 'ի գրգռել զնա 'ի պատերազմ։

ԿԵ. Ոչ ինչ առաւել տագնապ էր Տիբերի քան տեսանել ուրեք վրդովեալ զխաղաղութիւն։ Առաքեաց զմի 'ի հարիւրապետաց առ նոսա խափանել զպատերազմ։ Կոտիս արձակեաց վաղվաղակի զգունդս ժողովեալս, իսկ Հռեսկուպորիս վեր 'ի վերոյ խաղաղասիրութեամբ խնդրէր 'ի մի վայր գալ, իրաւախոհ լինել։ Ոչ դժուարին եղև սահմանել զժամանակ և զտե-

զի, և ապա զպայմանս. զի աստի յօժարութիւն և անտի նենգութիւն դիւրաւ տեղի տային, և ընդունէին զամենայն։ Հռեսկուպորիս պատճառանօք կռելոյ դաշինս՝ արար կոչունս. և յերկարել համադամոյ և բաժակաց զիրարախուսնան մինչև 'ի գիշեր խոր, անագան յայնժամ գիտաց Կոտիս զդաւն յեղակարծ. և 'ի զուր երդմնեցուցեալ զդաւաճանն 'ի սրբութիւն Թագի, 'ի հասարակաց Թերափս ընտանեկանս և 'ի սեղանն ասպընջական, արկաւ 'ի շղթայս։ Ոսոխ նորին տիրապետեալ բոլորումն Թրակիոյ՝ գրեաց առ Տիբեր, զի վասն դաւոյ ընդդէմ իւր նիւթելոյ յեղբօրորդւոյն, հարկ լեալ էր իւր զառաջս չարեաց ունել. և իբր Թէ 'ի պատերազմ ընդդէմ Բաստարնաց և Սկիւթաց կազմելով յաւելոյր իւր գունդս հետևակաց և հեծելոց։

Կզ. Տիբեր գրեաց առ նա մեղմ պատասխանի, զի եթէ աննենգ գործեալ էր նորա զայն, արժան էր նմա վստահել յանմեղութիւն իւր. այլ ոչ իւր և ոչ ծերակուտին մարթ էր առանց իրացն քննութեան ընտրել ընդ իրաւունս և ընդ անիրաւութիւն. վասն որոյ պարտ էր նմա տալ 'ի ձեռս զԿոտիս, և գալ ինքնին ցուցանել զնա մեղապարտ։ Լատինիոս Պանդոս՝ փոխանորդ կուսակալին Մեսիոյ՝ առաքեաց առ նա ըզդիրս զայս հանդերձ զինուորօք, ընդունել զԿոտիս։ Հռեսկուպորիս վարանեալ վայրիկ մի ընդ երկիւղ և ընդ զայրոյթ, ընտրեաց տալ պատասխանի վասն լիոյ քան Թերի եղեռան. և տուեալ սպանանել զԿոտիս, հրատարակեաց երթեալ նորա զիւրովին։ Բայց Տիբեր ոչ դադարեաց 'ի հնարիմաց քաղաքավարութենէն. այլ 'ի մեռանել Պանդոսի, զոր Հռեսկուպոր թշնամի ամբաստանէր իւր, կացոյց փոխանակ նորա զՊոմպոնիոս Փլակկոս, զայր փորձ 'ի պատերազմունս, և մտերմութեամբն ընդ Թագաւորին՝ պատկանաւոր 'ի խաբել զնա. վասն որոյ և կացոյց զնա 'ի վերոյ Մեսիոյ։

Կէ. Փլակկոս անցեալ 'ի Թրակիա, և մեծամեծ խոստմամբք ցածուցեալ զերկիւղ Հռեսկուպորեայ՝ որ 'ի խղձէ չարեացն կայր 'ի կասկածանս, ձգեաց զնա յամուրս Հռովմէականս՝ ուր իբրև 'ի մեծարանս շուրջ եղէն զնովաւ զօրք. և ապա հաղարապետք և հարիւրապետք ըստ յառաջադէմ գնալ նորա յորդորմամբ և

համոզելով յաւելին յայտնագոյն զնովաւ պահ. և 'ի լինել նորա խելամուտ անհրաժեշտ հարկին՝ ձգեցին զնա 'ի Հռովմ. և դատախազեալ յատենի ծերակուտին 'ի կնոջէն Կոտեայ, պարտաւորեցաւ գնալ հեռի յաթոռոյ իւրմէ յաքսոր։ Եւ բաժանեցաւ Թրակիա ընդ որդի նորա Հռեմետալկ՝ որ ընդդէմ կացեալ էր հօրն խորհրդոյ, և ընդ որդիս Կոտեայ. որոց կրտսեր դեռ ևս գոլով՝ տուաւ նոցա ոստիկան Տրեբելլիեն Հռուփոս՝ երբեմն կուսակալ, վարել առ ժամն զԹագաւորութիւնն ըստ օրինակին Մարկոսի Լեպիդոսի՝ որ յղեալ էր երբեմն ոստիկան որդւոցն Պտոլոմեայ Յեգիպտոս։

ԿԸ. Ի սմին ժամանակի Վոնոն, աքսորեալն 'ի Կիլիկիա ըստ նախապատուէն իմոյ բանիս, կաշառեալ զպահապանս՝ հնարէր փախչել 'ի Հայս, անտի յԱղուանս և 'ի Հենիոքս, և ապա առ Թագաւորն սկիւթացւոց՝ որ էր ազգական իւր. վասն որոյ պատճառանաք որսոց դիմեաց 'ի ծովեզերաց յանտառս, և սրավար երիվարաւն եհաս 'ի Պիրամ գետ։ Ազգ եղև բնակչաց երկրին փախուստ նորա, և հատին զկամուրջ գետոյն, զի անհուն էր գետն. և Վիբիոս Փրոնթոն զօրագլուխ հեծելոց ձերբակալ արար զնա և արկ 'ի շղթայս։ Յետ սակաւ միոյ Հռեմմիոս, մի 'ի հինաւուրց զինուորաց արձակելոց, որ յառաջագոյն 'ի պահ կայր Թագաւորին, սուր 'ի կող նորա ձգեաց իբր առ զայրոյթ. այլ յայտնի եղև՝ վասն համախոհութեանն ընդ նմա և առ երկիւղի յայտնութեան յանցանացն սպանեալ զնա։

ԿԹ. Բայց Գերմանիկ դարձ արարեալ Յեգիպտոսէ, եգիտ բարձեալ կամ յեղափոխեալ զամենայն կարգս՝ զոր եդեալ էր 'ի լեգէոնս և 'ի քաղաքս. վասն որոյ թշնամանս բազումս արար ընդդէմ Պիսոնի։ Եւ ոչ Պիսոն ընդհատ ինչ 'ի նմանէ թշնամանեալ զնա, խորհուրդ կալաւ մեկնել յերկրէ անտի Ասորւոյ. այլ արգելաւ 'ի հիւանդութենէ Գերմանիկեայ. և 'ի լուր առողջութեան նորա, յորժամ ուխտք վասն կենաց նորա մատչէին յԱնտիոք, խափանեալ զզոհս և զսպասս պատարագաց 'ի ձեռն նուիրակաց, զտօնախմբութիւն անտիոքացւոց աղմկեաց։ Ի դառնալ ապա հիւանդութեան Գերմանիկեայ՝ չոգաւ 'ի Սելեւկիա, մնալով անդ ելից իրացն։ Ցասաստկութիւն ախ-

տին յաւելոյր կասկած դեղառութեան 'ի Պիսոնէ. երևէին յարքունիս անդ ընդ որմն և ընդ գետին ոսկերք մարդկեղէնք ՝պեղեալք 'ի գերեզմանաց, տաղք կա-խարդասարք և նզովք, տախտակք կապարեայք՝ վեր-բերելով զանուն Գերմանիկեայ, աճիւնք մեռելոց կիսակէզք ներկեալք յարիւն թուխ, և այլ ևս նշանք դիւթականք՝ որոց ընծայի զօրութիւն նուիրելոյ դից սանդարամետականաց զոգիս։ Դարձեալ և զհրեշտա-կաց յղելոց ամբաստանութիւն էր, զի գայիր լրտե-սել զզայրացումն ախտին։

Հ. Ա. յս ամենայն ազդէին 'ի Գերմանիկ զայրոյթ և երկիւղ, թէ գուցէ պաշարեսցի 'ի տան, և մեռցի առաջի աչաց թշնամեաց, և զինչ այնուհետև պատա-հիցէ հարսին իւրում հիքի, զինչ որդւոց իւրոց տղա-յոց, և ասէր. Յամել թուի ոսոխին իմում մահադեղն, ձեպէ նա զմահ իմ առ 'ի տիրել միայնակ գաւառաց և լեգէոնաց. բայց Գերմանիկ չև ևս լքեալ է ցայնվայր, և վարձ սպանութեան ոչ մնասցէ 'ի ձեռս սպանողին։

— Յայնժամ յայտ արար Պիսոնի գրով՝ զի հրաժարէր 'ի բարեկամութենէ նորա. յաւելուն բազումք՝ զի հրա-մայէր ևս նմա ելանել 'ի բաց 'ի գաւառէ անտի։ Պիսոն ոչ ևս յամեալ՝ ուղղոյ եղև ընդ ծով. այլ յուշիկ հեռանայր, առ 'ի դառնալ վաղագոյն ընդ բանալ մահուն Գերմանիկեայ առաջի իւր զԱսորիս։

ՀԱ. Գերմանիկեայ վայրիկ միյոյս առեալ կենաց, անկաւ ապա 'ի սպառ յուժոյ. և 'ի պարզել ոգւոցն՝ խօսեցաւ առ բարեկամս իւր՝ որ կային անդ, և ասէ. Ի տալ իմում տեղի Ճակատագրին՝ օրէն լիցի ինձ բո-ղոքել առ դիս, զի տարաժամ մահու 'ի տիս մանկու-թեան յափշտակիմ 'ի բաց 'ի ծնողաց յորդւոց և 'ի հայրենեաց։ Դաւաճանեալ 'ի Պիսոնէ և 'ի Պլանկի-նայ զվերջին աղերս իմ հեղում առ ձեզ. պատմեցէք հօր իմում և եղբօր՝ յորմէ դառնութեանց կեղեքեալ, յորմէ դաւանաց պարանեալ, զրաւիմ չարաչար մա-հուամբ յաղետաւոր կենաց իմոց։ Զորս միանգամ ակնկալութիւն և արենակցութիւն կարեկից առ-նէն թշուառութեանս իմում, և նոքին իսկ՝ որք կեն-դանեաւ իմով մախային ընդ իս, լացցեն զիս. զի որ երբեմն պայծառացեալ և յայնքան պատերազմունս

ապրեալ՝ արդ դաւով կնոջ միոյ վճարիմ 'ի կենաց։ Լիցի ձեզ յատենի ծերակուտին բողոք հարկանել, և կարդալ զօրէնս յօգնականութիւն։ Երիցագոյն 'ի պարտս բարեկամութեան՝ ոչ արտօսր անարգասաւոր ընծայել է վախճանելոյն, այլ յիշել որ ինչ կամք էին նորա, և զհրամանս նորա կատարել։ Լացցեն զԳերմանիկ և անծանօթք. այլ դուք զվրէժ նորա խնդրեսջիք, եթէ զնա և ոչ զբախտ նորա սիրէիք։ Ցուցէք ժողովրդեան Հռովմայ զթոռնեակ դիւցազնին Աւգոստեայ զհարսն իմ։ ցուցէք մի ըստ միոջէ զվեցեսին որդեակս իմ։ Արասցի ողորմութիւն ընդ դատախազս. այլ եթէ ստութիւն ածցէ 'ի մէջ պատուէրս եղեռնաւորս, մի՛ լիցին հաւատարիմ, և մի՛ ներելի։ — Բարեկամք կեսարու աջ 'ի կիսակենդան աջ նորա տուեալ՝ երդուան մեռանել մանաւանդ, և մի՛ վերջանալ 'ի խնդրելոյ զվրէժ նորա։

ՀԲ. Եւ ապա դարձեալ 'ի կին իւր՝ աղերս էարկ, երդմնեցուցեալ զնա 'ի յիշատակ իւր և յանուն որդւոց իւրոց՝ 'ի բաց դնել զհեստութիւն, հպատակել արկածից բախտին, և 'ի դառնալն 'ի Հռովմ մի՛ խիզախել ընդ հզօրագոյն նախանձորդին 'ի վէճ։ Զայսոսիկ լու 'ի լու ամենեցուն խօսեցեալ, յաւել ինչ ինչ և 'ի ծածուկ, որովք կարծի յայտ արարեալ զերկիւղ իւր 'ի Տիբերեայ։ Եւ յետ սակաւ միոյ վախճանեցաւ 'ի սուգ ամենայն բնակչաց գաւառին և շրջակայ ազգաց. լացին զնա ժողովուրդք և թագաւորք օտարք, զի էր նա մարդասէր յոյժ ընդ նիզակակիցս, հեզահամբոյր ընդ թշնամիս, դիմաք և բանիւք ակնածելի. զի գիտէր զմեծութիւն և զծանրութիւն 'ի բարձու իշխանութեանն 'ի չափու ունել, և 'ի նախանձուէ և 'ի գոռոզութենէ խոյս տալ։

ՀԳ. Ցուղարկաւորութիւն նորա անշուք և առանց պատկերաց՝ փառաւորեցաւ գովութեամբ վարուցն և յիշատակաւ առաքինութեանցն։ Էին որք զդէմս նորա և զհասակ, զօրինակ մահուն և զմերձաւորութիւն տեղւոյն՝ յորում մեռաւն, ճակատագրի մեծին Աղեքսանդրի համեմատէին։ Զի երկոքեան իսկ գեղեցկադէմք, երկաբանչիւր ազնուազգիք, այն ինչ զերեսնամենիւք անցեալ՝ դաւաճանեցան յիւրեանցայոցն 'ի

մէջ ազգաց օտարաց։ Բայց Գերմանիկ քաղցրաբարոյ էր ընդ բարեկամս, բարեխառն 'ի ցանկականին՝ շատացեալ միով հարսանեաւք, և հայր օրինաւորաց ևեթ զաւակաց. սակայն և ոչ ընդհատ 'ի նմանէ պատերազմող, այլ ոչ իբրև զնա քաջայանդուգն. և թէպէտ խափանեալ 'ի նուաճելոյ զԳերմանիա, այլ յետ հարկանելոյ զնա բազմապատիկ յաղթութեամբք։ Եթէ ինքնիշխան էր, և անուն և իրաւունք թագաւորի էին 'ի ձեռս նորա, վաղու ևս հաւասարեալ էր դիւցազնին այնմիկ 'ի փառս զինուց, զորով գթութեամբ և բարեխառնութեամբ և այլովքն ևս առաքինութեամբք քաջ 'ի բաց գերազանցէր։ Մարմին նորա չև այրեցեալ՝ եդաւ մերկ 'ի հրապարակի քաղաքին անտիոքացւոց, 'ի տեղւոջ՝ ուր թաղելոցն էր։ Հաւաստիք մահադեղոյն ոչ յայտնի երևեցան 'ի նմա. գութ ընդ նա, և կանխակալ կարծիք հակառակ կամ նպաստաւոր Պիսոնի, ներհակախոհ զայնմանէ ետուն դատաստան։

ՀԴ. Խորհուրդ արարին փոխանորդք ընդ ատենակալս՝ որ էին անդ, կացուցանել զոք 'ի վերայ Ասորւոց. և յերկբայս եկաց խնդիրն ընդերկար ընդ Վիբիոս Մարսոս և ընդ Կն. Սենտիոս, զայլովքն համառօտիւ անցեալ։ Յետոյ ապա տեղի ետ Վիբիոս Սենտեայ, որ երիցագոյն քան զինքն էր հասակաւ, և հզօրագոյն հետամուտ իշխանութեանն։ Էր 'ի քաղաքի անդ Մարտինա ոմն անուն կին դեղատու չարահամբաւ, սիրով սիրեցեալ 'ի Պլանկինայ։ Սենտիոս յղեաց զնա 'ի Հռովմ ըստ խնդրոյ Վիտելլիոսի և Վերանոսի և այլոց բարեկամաց Գերմանիկեայ, որոց վաղ իսկ բողոք և ամբաստանութիւն պատրաստեալ էր ընդդէմ դաւակցաց որպէս ընդդէմ յայտնի մահապարտից։

ՀԵ. Ագրիպպինա թէպէտ 'ի սուգ համակեալ, թէպէտ և խօթ, սակայն չհանդուրժեալ յամելոյ վրէժխնդրութեան՝ եկ 'ի նաւ, առեալ ընդ իւր զաճիւն Գերմանիկեայ և զորդիս իւր։ Ամենեքեան կարեկից լինէին նմա, զի տիկին վեհագն, ոչ 'ի բազում ամաց ամուսնացեալ երջանկագոյն հարսանեաւք, շուրջ պատեալ 'ի սպասահարկուաց և 'ի մեծարանաց, բարձեալ բերելով արդ զմոխիր վաղամեռիկ առն իւրոյ՝ երթայր տարադէմ, ոչ աներկեան ընդ հատուցումն

արդարութեան, հոգ'ի մտի ունելով ընդ կեանս իւր, և հէք վասն բեղնաւորութեան իսկ իւրոյ՝ որով առաւելագոյն կայր'ի վտանգի արկածից բախտին։ Այդ եղև Պիսոնի 'ի Կով՝ մահ Գերմանիկեայ, և չկարաց թագուցանել զհրձուանս իւր. դիմեաց 'ի մեհեանս, զոհս մատոյց. և յանժոյժ ինդութիւն նորա յաւել Պլանկինա զանձահագոյնն, զգենուլ հանդերձս ուրախութեան՝ մինչդեռ 'ի սգի կայր վասն մահուան քեռ իւրոյ։

Հզ. Հասանէին խռնէին հարիւրապետք, զհաւատարմութիւն լեգէոնացն պատրաստ առաջի առնելով նմա, առ 'ի նուաճել անդրէն զգաւառն բարձեալ'ի նմանէ անիրաւութեամբ և զանիշխան մնացեալ։ Եւ'ի վարանել նորա թէ զի՞նչ արժան էր առնել, Մ. Պիսոն որդի նորա խորհուրդ ետ փութալ դառնալ'ի Հռովմ, և ասէ. Զիք քո գործեալ ինչ աններելի, մի՛ 'ի տարտամ կասկածանաց և'ի մնոտի զրուցաց լիցի քեզ խիթալ. տարաձայնութիւն քո 'ի Գերմանիկեայ իցէ թերևս ատելի, այլ ոչ պատժոց արժանի։ Յապիշտակութեամբ գաւառիդ առին թշնամիք զվրէժ իւրեանց. եթէ կամիցիս մտանել անդր վերստին, հակառակութիւն Սենտիոսի յարուցէ մարտ քաղաքական։ Հարիւրապետաց և զօրականին չէ ինչ երկարատև հաւատարմութիւն. յիշատակ զօրավարին իւրեանց դեռ ևս անմոռաց, և վաղեմի յարնչութիւն նոցա 'ի կայսերս յաղթեսցեն նոցա։

Հէ. Ընդ հակառակն Դոմիտիոս Կելեր, մի 'ի մըտերմագոյն բարեկամաց նորա, ասէ. Պարտ է յօգուտ 'ի կիր արկանել զպատեհութիւն. Պիսոն և ոչ Սենտիոս է կուսակալ յԱսորիս, նմա խուրձք և իրաւունք մարզպետութեան, նմա տուեալ են լեգէոնք. եթէ հասանիցէ վանել զթշնամիս, ո՞ւմ առաւել պարտ է զէն առնուլ՝ ուր նա ինքն է փոխանորդ, և նմին ինքեան տուեալ են հրահանգք։ Պարտ է տալ ժամանակ զառամելոյ զրուցաց. բազում այն է զի անմեղք ընկճին յարդի նախանձուէ։ Եթէ անցեալ 'ի գլուխս բանակի՝ յաւելցես զզօրս, բազում ինչ յեղակարծից իրաց մարթ է պատահել'ի յաջողութիւն։ Զի՞ է մեզ փութալ հասանել ընդ աձիւն Գերմանիկեայ'ի Հր-

ռովմ: Թերևս զի չև խօսեցեալ քո և տեղի ընկալեալ պատասխանւոյ՝ ընկճեսցէ՞ն զքեզ 'ի նախնում աղմկի ողբք Ագրիպպինայ և ռամիկն անիրագէտ։ Համախոհ ընդ քեզ է դշխոյն, և կայսրն քեզ նպաստաւոր՝ Թէպէտ 'ի ծածուկ. և առաւելագոյնք այնոքիկ են սգաւորք Գերմանիկեայ առ 'ի ցոյց, որք առաւելապէսն խնդան ընդ մահ նորա։

ՀԸ. Պիսոն՝ որ յօժարէրն 'ի բուռն ձեռնարկութիւնս՝ դիւրաւ 'ի խորհուրդ Դոմիտեայ ձգեալ, նամակագիր եղև առ Տիբեր՝ ամբաստանելով զԳերմանիկ 'ի զեղխութիւն և 'ի գողոզութիւն. և յաւելոյր զի 'ի նմանէ 'ի բաց վարեալ առ 'ի չլինելոյ խափան փառամոլութեան խորհրդոց նորա, յանձն առնոյր անդրէն զհոգբանակին նովին հաւատարմութեամբ՝ որով վարեալն էր յառաջագոյն։ Միանգամայն արձակեաց եռաթիով զԴոմիտիոս յԱսորիս, պատուէր տուեալ հեռի 'ի ծովեզերաց անցանել առ կղզեօք՝ ընդ խորս նաւարկեալ։ Զդասալիքս դիմեալս ամենուստ առ ինքն՝ կազմեաց 'ի գունդ, զինուորեաց զսպասաւորս բանակին, և մատուցեալ նաւատորմաւն 'ի ցամաք՝ կալաւ զգուգազ դեռակիրթ զինուորաց՝ որ գնային յԱսորիս. և առ արքայս Կիլիկիոյ փոքրկունս արար պատուէր՝ յղել իւր զօրս յօգնականութիւն։ Ոչ ինչ նուազ 'ի պատրաստութիւն մարտին վաստակէր, որ հակառակն կացեալ էր պատերազմի որդին Պիսոնի։

ՀԹ. Ի քերեն զափամբք Լիկիոյ և Պամփիլիոյ նաւատորմն Պիսոնի՝ հանդիպեցաւ նաւուն, որ բարձեալ տանէր զԱգրիպպինա։ Երկուստեք զայրագին պատրաստեցան նախ 'ի զէն. այլ երկուցեալ 'ի միմեանց՝ ոչ աւելի ինչ քան զթշնամանս իշխեցին առնել իրերաց։ Մարսոս Վիբիոս հրաւիրէր զՊիսոն 'ի Հռովմ, տալ ընդ անձին պատասխանի. իսկ նա պատասխանէր հեգնելով՝ գնալ 'ի կոչն 'ի ժամադրել կուսակալին, որ տեղեակն էր դեղստուութեանն, զօր յանդիման լինելոյ ատենին՝ ամբաստանելոյն և դատախազից։ Յայնմ վայրի եհաս Դոմիտիոս 'ի Լաւոդիկէ քաղաք Ասորւոց. և 'ի դիմել նորա 'ի ձմերոց վեցերորդի լեգէոնին՝ որ թուէր նմա յօժարագոյն 'ի կատարումն խորհրդոց իւրոց, ժամանեաց անդր Պակովիոս փոխանորդ։ Սեն-

տիոս զԷկոյց զայն Պիսոնի գրով, և աղդ առնէր՝ մի՛ և ս կաշառօք զզօրականն և զինուք զգաւառն փորձել։ Եւ ժողովեալ զամենեսեան՝ որոց սիրելի էր յիշատակ Գէր մանիկեայ, և ատելի էին թշնամիք նորա, յիշեցոյց նոցա զփառս ինքնակալին. և յայտ արարեալ՝ զի ընդդէմ հասարակապետութեան էր պատերազմն, գումարեաց ընդ իւր բանակ հզօր՝ կազմ՝'ի պատերազմ։

Զ. Ոչ ինչ նուազ և Պիսոն, թէպէտ և ձախողեալ՝'ի խորհուրդս իւր, գուն գործէր. և զապահովագոյն հնարս ըստ հանգամանաց ժամանակին՝'ի կիր առեալ՝ գրաւէր զմեծամուր դղեակն Կիլիկիոյ զԿելենդեր։ Զի՝'ի համախմբել զդասալիքս և զգուգազն վայրիկ մի յառաջ ընկալեալ և զստրուկս իւր և զՊլանկինա ընդ գունդս յղեալս յարքայից փոքրկանց Կիլիկիոյ, լցեալ էր զթիւ լեգէոնաց։ Եւ փոխանորդ կայսեր զինքն յայտ արարեալ, ասէր. Զգաւառ՝ զոր ետ ինձ կեսար՝ ոչ լեգէոնք բարձին յինէն, զի հրաւիրանաւ նոցա գամ; այլ Սենտիոս՝ ընդ ստայօդ յանցանօք զատելութիւն իւր պատրուակեալ. յերևեալ իմում՝'ի Ճակատու, զէն ընկէց լիցին զօրք Սենտիոսի տեսեալ զՊիսոն՝ զոր երբեմն հայր իւրեանց կոչէին, զՊիսոն՝ որ հզօրագոյնն է ըստ իրաւանց, և ոչ անզօր ըստ զինուց։ — Տարածեաց ապա զգունդս իւր առ պատնիշաւք ամրոցին՝'ի սեպացեալ յանմատոյց բլրի, զի յայլ ամենայն կողմանց շրջապատեր զնովաւ ծով։ Իսկ՝'ի հանդիպոյ հինաւուրց զօրք Սենտիոսի՝'ի բազում առաջս բաժանեալ, և օժանդակ գնդիւք յաւելեալ՝'ի զօրութիւն։ Աստի զօրականին, և անտի տեղւոյն էր դժնէութիւն. այլ ոչ արիութիւն էր անդ, ոչ խրախոյս և ոչ զէնք, անապատական աշխատութեանց ևեթ կահք հապճեպ շեղջակուտեալ։ Վասն որոյ՝'ի խառնել Ճակատուցն ոչ ինչ աւելի տևեաց մարտն, քան որչափ ժամանակ կարևոր էր հռովմէական գնդաց ընդ բլուրն՝'ի վեր կրթելոյ։ Կիլիկեցիք խոյս ետուն, և ամրացան՝'ի դղեակն։

ԶԱ. Յայնմ վայրի Պիսոն ընդդէմ նաւատորմին, որ ոչինչ անտի՝'ի բացեայ կայր, փորձ փորձեալ ընդունայն՝ դարձաւ յամրոցն. և՝'ի բարձուէ պարսպացն մերթ մորմոք՝'ի դէմն բերելով, մերթ յանուանէ զմի մի՝'ի զօրաց անտի յորջորջելով, և պարգևս նոցա խոս-

տանալով, յորդորէր զնոսա յապստամբութիւն՝ այն-
չափ հրապուրեալ, մինչև դրօշակրի վեցերորդ լեգէո-
նին ածել առ նա զդրօշն։ Յայնժամ Սենտիոս ետ
հարկանել զփողս և զշեփորայս, և հրաման ետ դիմել
'ի պատնէշս, կանգնել սանդուղս, քաջասրտաց վերե-
լակել, այլոց տեգս վիրդս և ջահս հրաբորբոքս մեքե-
նայիւք 'ի ներքս արձակել։ Բեկաւ ուր ուրեմն յամա-
ռութիւն Պիսոնի, յանձն էառ զէնրնկէց լինել, բայց
միայն կալ և մնալ յամրոցին՝ մինչև սահմանեսցէ կե-
սար ուստ զԱսորիս յանձն առնել։ Զեղև պայմանն ընդ-
ունելի. շնորհեցան ևեթ նմա նաւք և աներկևան
երթ 'ի Հռովմ։

ԶԲ. Բայց 'ի հռչակել հիւանդութեան Գերմանի-
կեայ 'ի Հռովմ՝ չարագոյժ կուտակութեամբ, որպէս
սովորութիւն է առնել համբաւոյ 'ի հեռուստ, գրգռէր
ցաւ և զայրոյթ, և յաճախէր ամենուստ քրթմնջիւն,
զի ասէին. Ա՞յսր աղագաւ 'ի ծագս երկրի յղեցաւ
նա, սմի՞ն իրի յանձնեցաւ գաւառն 'ի Պիսոն. այս էին
ապա ծածկախօսութիւնք դշխոյին ընդ Պլանկինայ.
բարւոք ծերունիք մեր ասէին զԳրուսոսէ, զի թա-
գաւորք ոչ ներեն որդւոց իւրեանց ռամկասէրս գոլ։
Գերմանիկ հանգոյն հօր իւրոյ լուծաւ 'ի կենաց, և
ոչ վասն այլ ինչ իրիք երկաքանչիւր անկան յարևէ,
բայց զի գուն գործէին տալ իրաւանց և ազատութեան
տիրել 'ի վերայ ժողովրդեան Հռովմայ։ — Ի շշունջ
գանգատանացս այսոցիկ լսելի լեալ մահ Գերմանի-
կեայ՝ ևս քան զևս զայրացոյց զաղմուկն. մինչև նախ
քան զՀրովարտակ ատենակալաց և յառաջ քան ըղ-
վՀիռ ծերակուտին դադարեցին գործառնութիւնք,
լքան ատեանք, փակեցան տունք, և էր ամենայն ու-
րեք լռութիւն կամ ողբ՝ ոչ առ 'ի ցոյց ինչ ևեթ. զի
քան զնշանակս սգոյ՝ զորս կրէին՝ խորագոյն ևս 'ի սիրտս
ամենեցուն կրէր տրտմութիւն։ Դէպ եղև վաՀառա-
կանաց ոմանց, մինչդեռ կենդանի էր Գերմանիկ, մեկ-
նել յԱսորւոց, և զոյց աւետաւոր զողջունէ նորա բե-
րել։ Հաւատարիմ եղև համբաւն և տարածեցաւ. և
որք լուանն 'ի հարևանցի՝ պատմէին զայն այլոց, և նո-
քա բազմաց՝ յաւելուածովք հանդերձ։ Դղրդեցաւ քա-
ղաքն, բռնաբարէին զդրունս մեհենաց, գիշեր օգ-

նական եղև դիւրահաւանութեան, և պատրաստագոյն 'ի խաւարի հաստատութիւն։ Եւ ոչ Տիբեր արդեւ ըզ-համբաւն սուտ, թողեալ ժամանակին ցրել զայն. և ժողովուրդն որպէս միւսանգամ զԳերմանիկ կորուսեալ՝ դառնագոյնս մորմոքեցաւ։

ԶԳ. Իւրաքանչիւր ոք 'ի ծերակուտէն ըստ սիրոյ սրտին ընդ Գերմանիկեայ, և ըստ հանձարոյ մտացն հնարէր նմա պատիւս։ Եւ սահմանեցաւ նուագել զանուն նորա 'ի պարերգութիւնս, արկանել նմա աթոռ ընդ գահոյս քրմաց աւգոստականաց, և 'ի վերայ նոցա դնել պսակս կաղնեայս. տանել յառաջոյ զպատկեր նորա փղոսկրեայ 'ի կրկիսական խաղս. մի քուրմ և մի հաւահմայ փոխանակ նորա կարգել, բայց 'ի յուլեան ազգատոհմէ։ Եւ դարձեալ կանգնել նմա 'ի Հռովմ և առափամբ Հռենոսի, և 'ի լերինն Ամանայ յԱսորիս կամարս յաղթականս՝ արձանագրութեամբ քաջութեանց նորա, և փոխանակելոյ 'ի վերայ հասարակապետութեան զկեանս իւր։ Յաւելուլ նմա և շիրիմ յԱնտիոք՝ ուր դիակն նորա այրեցաւ, և բեմ յԵպիդափնիս՝ ուր մեռաւ։ Իսկ զանդրիս և զվայրս պաշտման նորա չէ ինչ դիւրին ածել 'ի համար։ Բայց յառաջարկել այլոց և վահան ոսկի նուիրել նմա որպէս վեհագունի 'ի ձարտարախօսս, պինդ եկաց Տիբեր՝ հանգիտապատիւ եւեթ այլոց առնել զնա. մի զձարտարխօսութիւն ըստ աւագութեան և բարձի սահմանել, շատ համարեալ նմա զփառս ընդ նախնի մատենագիրս դասելոյ։ Աստպետաց կարգ յանուն Գերմանիկեայ կոչեաց զՀեծելաշօրն՝ որ պատանեաց անուանէր գունդ, և սահմանեաց տանել զառաջեաւ զպատկեր նորա 'ի հեծելութիւնս հնգետասանեւորդի աւուր յուլիսի։ Բազումք 'ի սահմանադրութեանց աստի տեւեն ցարդ, այլք խափանեցան, կամ ժամանակն արկ զայնոսիկ 'ի մոռացօնս։

ԶԳ. Մինչդեռ 'ի սուգ տրտմութեան կայր Հռովմ, Լիւիա քոյր Գերմանիկեայ, հարսն Դրուսոսի, ծնաւ ուստերս երկուորեակ։ Ընդ անսովոր բարեբախտութիւնն, որ հասարակաց իսկ տանց է ուրախարար, այնպէս ուրախ եղև Դրուսոս, մինչև յառաւելութենէ խնդութեան պարծել 'ի ծերակուտի, ոչ ուրուք 'ի Հռովմայեցւոց աւագաց երկուորեակս յառաջ քան

զինքն ածեալ 'ի լոյս։ Զի զամենայն ինչ, ևս և զդիպաց արգասիս, առնոյր նա 'ի պարծանս իւր. այլ 'ի ժամանակին յայնմիկ յաւելոյր ընդ այն տրտմութիւն ժողովրդեան, զի 'ի բազմանալ որդւոց Դրուսասի՝ առաւել ընկճէր տուն Գերմանիկեայ։

Զե. Ի սմին ամի ծերակոյտն արար հրովարտակս սաստիկս առ 'ի սանձահարել զցոփութիւն կանանց. և արգել զվաճառաշահ մարմնոյ, որոց հաւ կամ հայր լեալ էին ասպետ հռովմայեցի։ Քանզի Վիստիլեայ 'ի դատաւորական աղգատոհմէ յանձն առեալ էր զպոռնկութիւն առաջի շինուածապետաց ըստ օրինի՝ որ ընդունելի էր առ նախնիս, որք բաւական համարէին 'ի պատիժ կանանց անպարկեշտից զարուեստն զայն ապիրատ։ Տիտիդիոս Լաբէոն՝ այր Վիստիլեայ՝ կոչեցաւ 'ի հարցփորձ, վասն չինդրելոյ նորա զվրէժ օրինաց 'ի կնոջէ իւրմէ յայտնապէս յանցուցելոյ. և 'ի պատասխանել նորա զի չև ևս լցեալ էին աւուրք վաթսուն շնորհեալք յօրինաց 'ի հայթայթանս հնարից, սահմանեաց ծերակոյտն տարագրել զՎիստիլիա 'ի Սերիփոն կղզի։ Խորհուրդ կալաւ բառնալ 'ի բաց և զեգիպտական և զհրէական խտրանս. և վճռով Հարցն վարեցան 'ի Սարդինիա կղզի չորեքհազար այր 'ի ձերբազատից 'ի մնոտի կրօնսն զառածելոց՝ կարողք 'ի զինուորութիւն, խափանել անդ զյափրշտակութիւնս. զի կորնչել նոցա 'ի ՀԱսասակարութենէ օդոց անտի, սակաւ ինչ համարէր Հնաս։ Իսկ այլոց հրամայեցաւ մեկնել յԻտալիոյ, եթէ ոչ յայլափառ կրօնից՝ նախ քան զլնուլ սահմանեալ ժամանակին՝ հրաժարէին։

Զզ. Յետ այսորիկ առաջարկեաց կեսար ընտրել զոք յօրիորդաց փոխանակ Ոկկեայ, որ զամն յիսուն և եօթն անբծդիւտ կուսութեամբ կատարողապետ Եստեայ պաշտամանցն կացեալ էր։ Եւ շնորհս կալաւ Փոնտէոսի Ագրիպպայ և Դոմիտիոսի Պոլլիոնի, որք ելևէլս զմիմեանսք արարեալ 'ի սպաս հասարակապետութեան՝ մատուցանէին զդստերս իւրեանց։ Եւ ընտրեցաւ դուստր Պոլլիոնի վասն այն ևեթ, զի Պոլլիոն կացեալ էր ընդ մօր նորա 'ի սպառ, իսկ Ագրիպպայ բաժանմամբն 'ի կնոջէն նուազեցուցեալ զփառս տանն։ Բայց կեսար 'ի սփոփանս մերժելոյ օրիորդին հարիւր բիւր սեստերտս ետ յօժիտ։

ԶԷ. Ի բողոքել ռամկին զծանրագնութիւնէ պարե-
նից, սահմանեաց կեսար վասն գնողաց զսակ ցորենոյ.
իսկ վաճառականաց խոստացաւ տալ ինքնին սեստեր-
տրս երկուս առ գրիւ։ Հանդերձ այսու ամենայնիւ
հրաժարեաց նա 'ի կոչելոյ հայր հայրենեաց, զոր և
յառաջագոյն ընծայէին նմա զանունն զայն. և սաս-
տիւ կշտամբեաց՝ որք դիւցական զգործս նորա, և զնա
ինքն կոչէին Տէր. զի անձուկ և լպիրծ էր մուտ խօսից
առ իշխանի, որ խիթայրն յազատութենէ և ատեայր
զմարդահաճութիւն։

ԶԸ. Ա. Ռ մատենագիրս և առ ատենակալս ժամանա-
կին աւանդի՝ ընթերցեալ 'ի ծերակուտի թուղթ մի
Ադգանդեստրեայ իշխանին Կատտաց, որ խոստանայր
զմահ Արմինեայ՝ եթէ յղէին առ նա զմահադէղն. և
ընկալեալ պատասխանի՝ զի ժողովուրդ Հռովմայ ոչ
դաւով և ոչ ծածուկ հնարիւք խնդրէր վրէժ 'ի թըշ-
նամեաց, այլ յայտնապէս և զինուք։ Որով հաւասա-
ցեր Տիբեր նախնի զօրավարաց 'ի փառս, որք արդելին
չթունաւորել զՊիւռոս՝ զեկուցանելով նմա զդաւն։
Բայց Արմինիոս 'ի մեկնել հռովմայեցւոց 'ի բաց, և 'ի
հալածել իւր զՄարոբոդ, զարքայութեան թեկն ա-
ծեալ՝ յարոյց ընդդէմ իւր զազատասիրութիւն ժողո-
վրդականաց. ընդ որս պատերազմեալ, 'ի յեղափոխել
բախտի զինուց՝ դաւաճանեցաւ յիւրոցն։ Ազատա-
բար Գերմանիոյ եկաց այրս այս աներկբայապէս. և
ոչ 'ի սկզբան անդ հռովմէական ժողովրդեան, որ-
պէս այլք 'ի թագաւորաց և 'ի զօրավարաց, այլ ընդ
հզօրացեալ պետութեան նորա ժուժկալեաց 'ի պա-
տերազմ։ Եկեաց նա զամն երեսուն և եօթն, թագա-
ւորեալ զամն երկոտասան։ Նուազի նա ցարդ առ բար-
բարոսս, անծանօթ 'ի տարեգիրս Յունաց՝ որք զիւրեանս
ցայինս ևեթ պանծացուցանեն, և ոչ առ մեզ լեալ
հռչակաւոր՝ որք զնախնիս ևեթ բարձրացուցանեմք՝
ապախտ արարեալ զարդիս։

Դիւակարգութիւն գրոց։

Ա.Բ. Սպասամբութիւնք յարևելս։ Վոնոնի արքային Պարթևաց արհամարհութիւն յիւրոցն՝ վասն կալոյ իւրոյ ընդերկար պատանդ 'ի Հռովմ։

Գ.Դ. Գնալ նորա յերեսաց Արտաւանայ փախստական 'ի Հայս։ Աղմուկք 'ի հայաստան, և Վոնոնի թագաւորել անդ։ Սպառնալիք Արտաւանայ ընդդէմ նորա, և անօգնական 'ի Հայոց՝ մեկնել գնալ նորա յԱսորիս՝ ձգեալ անդր 'ի կուսակալէն հռովմայեցւոյ, և մատնել 'ի գերութիւն։

Ե. Առաջարկութիւն Տիբերի յղելոյ զԳերմանիկ յարևելս. և նորա խորհել 'ի հնարս նուաճելոյ զԳերմանիա, մինչև հօրեղբօր իւրոյ բարձեալ զնա 'ի զօրավարութենէ լեգէոնաց։

Զ. Կառուցանել նորա տորմիղ հազար նաւաց, առ 'ի մտանել 'ի Գերմանիա ընդ Ովկիան։

Է. Մինչև 'ի համախմբել նաւատորմին, ասպատակ առնել նորա հարևանցի յայնկոյս Հռենոսի։

Ը. Հրամայէ բանակին ելանել 'ի նաւս, և ածէ զնոսա 'ի բերան գետոյն Ամասեայ. խստալ զօրացն անդր քան զգետն։

Թ.Ժ. Բանակցութիւն Արմինեայ ընդ եղբօր իւրում Փլաւիոսի, որ զօրավարէրն 'ի հռովմէական բանակին, և դրդռիլ նոցա ընդ միմեանս 'ի կռիւ, Արմինիոսի կալով յաջոյ եզր Վղուրկ գետոյ, և Փլաւիոսի 'ի ձախումբ։

ԺԱ. Գերմանիկեայ անցուցանել զհեծելազօրն ընդ Վղուրկ գետ։ Օ-ժանդակ գնդին բատաւացւոյ անկանել յորոգայթ։ Կարիովալգեայ զօրավարի նոցա աներկիւղ արիութիւն։

ԺԲ. Գերմանիկեայ բանակել յայնկոյս Վղուրկ գետոյ. հետազօտել նորա զյօժարութիւն բանակին մինչև գիմեալ 'ի պատերազմ։

ԺԳ. Յառաջնումս պահու գիշերոյն անցանել նորա ծպտեալ ընդ միջնաշաւիղս բանակին, և լսել զնոսա զօրացն 'ի վրանս 'ի գովեստ իւր։

ԺԴ. Երազել նորա 'ի նմին գիշերի զյաղթութիւն. համախմբել նորա զզօրս, և առնաբանել առ նոսա։

ԺԵ. Արմինիոս և այլ զօրավարք բարբարոսաց խրախուսեն և նոքա զզօրս իւրեանց։

ԺԶ. Ասպարեզ մարտին յԻգիստաւիս. և կայք երկոցունց բանակացն։

ԺԷ. Լիուլի յաղթութիւն հռովմայեցւոյ։

ԺԸ. Անուանել բանակին ինքնակալ զՏիբեր, և կանգնել նմա ախոյեան։

ԺԹ. Ի. Միւս այլ Ճակատամարտ, յորում դարձեալ խորտակին գերմանացիք:

ԻԱ. ԻԲ. Գերմանիկոս կանգնէ տխոյեան՝ հոյակապ արձանագրաւ: Սաեբինիոս ընդունի փոխարէն զԱնգրիւարս:

ԻԳ. ԻԴ. Մեկնել բանակին 'ի ձմերոցս: Կէսք 'ի զօրաց, որ գային ընդ ծով, հարեալ 'ի մրրկէ՝ նուաբեկին:

ԻԵ. Ի լուր արկածիցն խրախոյս առնուլ թշնամեաց. և Գերմանիկեայ մատնել դարձեալ յերկիր նոցա յահարկութիւն: Կոչուսելոյ արծուոյն Վարոսի գիւտ:

ԻԶ. Դարձ բանակին 'ի ձմերոց: Գերմանիկոս կոչեցեալ 'ի Տիբերէ՝ սակայն հնազանդել, թէպէտ և զամ մի ևեթ խնդրեալ էր նորա վասն ածելոյ յամբոկ զնուաճումն գերմանացւոց:

ԻԷ. Փիրմիոս Կատոս գուն գործէ դրդել զԴրուսոս Լիբոն բարեկամ իւր 'ի հնարս փառասիրութեան, առ 'ի կացուցանել զնա յանցաւոր և մատնել 'ի կորուստ: Նախասկիզբն չարաբուեստ հնարից նոցա, 'ի զրգիռ համախոհից մատն լինելոյ չարեացն:

ԻԸ. Լիբոն ածի առ Տիբեր, և ապա յատեան ծերակուտին:

ԻԹ. Խնդրել նորա պաշտպանս և ոչ գտանել: Տիբերի ընթեռնուլ 'ի ծերակուտին վերս 'ի վերոյ անաչառութեամբ զնամականին ամբաստանութեան և զանուանս վկայից:

Լ. Անոտի ամբաստանութիւնք ընդդէմ Լիբոնի: Հնարագիտութիւն Տիբերի ընդդէմ օրինաց մատուցանելոյ 'ի խոշտանգանս հարցափորձի զբաստրուկս Լիբոնի, և ելելոյ զչարախօսութիւնս նոցա զտեառնէ իւրեանց:

ԼԱ. Լիբոնի յերեսաց անխուսափելի մահուն՝ անձին առնել. և Տիբերի կեղծաւորութեամբ յայտ առնել՝ զի խնդրելոյ էր զնորս վասն նորա 'ի ծերակուտէն, եթէ ոչ երագէր նա զմահ իւր:

ԼԲ. Բաժանումն ընչից Լիբոնի յամբաստանողս նորա: Ասատեղագիտաց տարագրութիւն Յիտալիոյ, և երկուց 'ի նոցանէ պատուհաս մահու:

ԼԳ. Խորհուրդ ծերակուտին ընդդէմ զեղխութեան կոչնոց և զգեստուց: Խնդիր այլոց ևս օրինաց, որոց հակառակ կայ Տիբեր:

ԼԴ. Հաստատութիւն Լ. Պիսոնի յօգուտ հասարակապետութեան, և դատ ընդ Որգուլանեայ մատրմին Աւգոստայ:

ԼԵ. Խափանել Ժողովոյ ծերակուտին վասն չլինելոյ անդ Տիբերի:

ԼԶ. Տիբերի չառնուլ յանձն զընտրութիւն հնգամեայ դատաւորաց միահաղոյն:

ԼԷ. ԼԸ. Որտալոսի թոռին Որտենսիայ խնդրել օգնութիւն, և մերժումն խնդրոյ նորա:

ԼԹ. Խ. Սուտանուանն Ագրիպպաս ըմբռնի, և մատնի 'ի մահ յարքունիս անդ Տիբերի:

ԽԱ. Նաւակատիք հասարակաց շինուածոց բազմաց: Յաղթանակ Գերմանիկեայ:

ԽԲ. Արքեղայոս արքայ Կապադովկիոյ կոչեցեալ 'ի Հռովմ գրով Աւգոստայ, և խոժոռ ընկալեալ յինքնակալէն՝ մեռանի, թերևս ինքնակամ. Կապադովկիոյ լինել 'ի մարզ Հռովմայ: Աղմուկք 'ի Կոմագենս և 'ի Կիլիկիա: Ասորիք և Հրէաստան խնդրեն նուազումն հարկաց:

ԽԳ. Հրամատարութիւն Գերմանիկեայ Պիսոնի կուսակալի Ասորւոց 'ի վերայ արևելից. գոռոզ բնաւորութիւն նորա. հրա-

հանգք, զորս կարծի ընկալեալ 'ի Տիբերէ ընդդէմ Գերմանիկեայ. հրաման Աւգոստայ առ կին նորա Պլանկինա խոնարհեցուցանելոյ զԱգրիպպինա:

ԽԴ. Դրուսոս առաքի 'ի Լիւրիկէ պատճառանօք խնդրելոյ Սուէւաց օգնականութիւն ընդդէմ քերուսկացւոց:

ԽԵ. ԽԶ. Պատճառք խնդրոյ նոցա. պատերազմ Արմինեայ ընդդէմ Քերուսկաց, օգնականութեամբ լոմբարդացւոց, սոմմոնացւոց և Մարոբոդեայ արքային Սուէւաց: Մարոբոդեայ բեկումն և խոյս տալ առ Մարկոմանս:

ԽԷ. Կործանումն երկոտասան քաղաքաց յարևելս 'ի սասանութենէ, և ընդունել նոցա օգնութիւն արծաթով կամ ապահարկութեամբ:

ԽԸ. Առատաձեռնութիւնք Տիբերի, և արհամարհութիւն շահուց: Ատենակալաց ոմանց մերժումն 'ի ծերակուտէն, կամ ինքնակամ հրաժեշտ:

ԽԹ. Նաւակատիք մեհենաց բազմաց:

Ծ. Ապուլէա Վարիլիա, թոռն քեռ Աւգոստեայ, ամբաստանի 'ի քրէական յանցանս. ներողամտութիւն Տիբերի առ նա:

ԾԱ. Վէճ 'ի ծերակուտին յընտրութիւն դանձապետի ուրուք. և դոյզն ինչ թուոյ առաւելութեամբ 'ի նպաստ նորա յաղթել օրինաց:

ԾԲ. Տակիտարինաս նուիրագի, դասալիք 'ի բանակէն հռովմայեցւոց, զէն առնու յԱֆրիկէ. բեկումն նորա 'ի ձեռն Փուրիոսի Կամիլլեայ:

ԾԳ. Գերմանիկոս բդեաշխ կացեալ 'ի Նիկոպոլիս, այց առնէ ախոյենաց յԱկտիոն, և հասանէ յԱթէնս:

ԾԴ. Հանապազորդութիւն ուղևորութեան նորա, և տեսանել զՊերինեթոս, զԲիւզանդիոն և զԻլիոն, և խնդրել պատգամ 'ի կլաբեանն Ապոլոնէ:

ԾԵ. Պիսոն 'ի գնալն յԱսորիս՝ անցանէ ընդ Աթէնս զհետ Գերմանիկեայ, հասանէ նմա 'ի Հռոդոս, և յառաջէ քան զնա: Մեծախոհութիւն Գերմանիկեայ 'ի փրկել զնա 'ի նաւաբեկութենէ, թէպէտ և ոչ անգէտ թշնամութեան դնացից նորա ընդդէմ իւր: Պիսոն զեղծուցանէ զզօրս իւր առատաձեռնութեամբ, ազատութեամբ, և անդործութեամբ: Թշնամանք Պլանկինայ ընդդէմ Ագրիպպինայ և Գերմանիկեայ:

ԾԶ. Ըստ աղաչանաց Հայոց՝ Գերմանիկոս շնորհէ նոցա զԶենոն 'ի թագաւոր, զոր ողջունեն նոքա Արտաշիսս:

ԾԷ. Խօսակցութիւն Գերմանիկեայ ընդ Պիսոնի, և մեկնել նոցա 'ի միմեանց յաւելեալ 'ի թշնամութիւն:

ԾԸ. Արտաւան արքայ Պարթևաց խնդրէ խօսել ընդ Գերմանիկեայ յեզր Եփրատայ: Վոնոն, որոյ մերձակայութիւն կասկածելի էր Արտաւանայ, աքսորի 'ի Պոմպէոպոլիս ծովեզերեայ քաղաք Կիլիկիոյ:

ԾԹ. Կ. Ուղևորութիւն Գերմանիկեայ յԵգիպտոս: Տիբերի համարեալ նմա զայն 'ի յանցանս: Այց առնել նորա աւերակացն Թեբայ, և բրգանց, և այլոց հրաշակերտից Եգիպտոսի:

ԿԱ. ԿԲ. Դրուսոսի պառակտեալ զգերմանացիս: Կատուալդ զօրավար Գոթոնաց մտանէ 'ի սահմանս Մարկոմանաց, և հալածէ անտի զՄարոբոդ:

ԿԳ. Մարոբոդ ապաստանի յԻտալիա, և մեռանի 'ի ծերութենէ 'ի

Հռաւենոնա յեռ ուԹեւտան ամի։ Կատուաղդ հալածեալ յԵրմոնդուրց՝ գտանէ ինքն ընդունելուԹիւն 'ի սահմանս ինքնակալուԹեան, և առաքի 'ի Փրէոն։

ԿԴ. Սպասք սահմանեալք Դիոմանիկեայ և Դրուսոսի 'ի Ծերակուտէն։ Աւգոստեայ բաժանել զԹրակիա ընդ Հռեսկոպոր և ընդ Կոտիս։ ԴժուարԹեան երկոցունց Թագաւորացս սատակագոյնս գրգռել յեռ ինքնակալուԹեան Տիբերի։

ԿԵ. Կեղծ հաշտուԹիւն նոցա, որով Հռեսկոպոր զբռամբ ածեալ զԿոտիս՝ տիրէ ամենայն Թրակիոյ։

ԿԶ. Տիբերի պահանջել 'ի Հռեսկոպորէ զԿոտիս. և նորա սպանեալ զԿոտիս՝ համբաւել զնա երԹեալ զիւրովին։

ԿԷ. Պոմպոնիոս Փլակկոս կուսակալ Մեսիոյ արկանէ զՀռեսկոպոր յորոգայԹ, և ածէ զնա 'ի Հռովմ։ Հռեսկոպորի սպանումն յԱղէքսանդրիա, ուր աքսորեալն էր։

ԿԸ. ՍպանուԹիւն Վոնոնի, որ փախուցեալն էր 'ի Կիլիկիոյ։

ԿԹ. Դիոմանիկեայ 'ի դառնալն յԵգիպտոսէ՝ գտանել աւերեալ 'ի Պիսոնէ որ ինչ բարերարեալն էր։ Անկանել նորա 'ի խօԹուԹիւն. և կասկած դեղեալ լինելոյ 'ի Պիսոնէ։

Հ. Երկիւղ Դիոմանիկեայ վասն կնոջ իւրոյ և որդւոց. գիր նորա առ Պիսոն անհաշտ ԹշնամուԹեան։ Պիսոն մեկնի ընդ ծով, իբր ԹէԹողեալ զԱսորիս, այլ կազմ և պատրաստ կայ առ 'ի մտանել անդր ընդ մեռանել Դիոմանիկեայ։

ՀԱ. Խօսք Դիոմանիկեայ 'ի մեռանելն. երդումն բարեկամաց նորա 'ի վրէժինդրուԹիւն։

ՀԲ. Յետին խրատք նորա առ Ագրիպպինա կին իւր. կոծ հասարակաց ընդ մահ նորա։

ՀԳ. ՅուղարկաւորուԹիւն նորա. համբաւուԹիւն կենաց նորա ընդ Աղէքսանդրի. անստուգուԹիւն դեղամահ լինելոյ նորա։

ՀԴ. Խորհուրդ Ասորիս կացուցանելոյ 'ի վերայ աշխարհին զԱենոբոս։ Առաքել սորա 'ի Հռովմ զՀռչակաւոր ումն կին դեղատու՝ սիրելի յոյժ Պլանկինայ։

ՀԵ. Ագրիպպինայ նաւարկել 'ի Հռովմ, առեալ 'ի միասին զորդիս իւր և զաճիւն Դիոմանիկեայ։ ԽնդուԹիւն Պիսոնի և Պլանկինայ 'ի լուր մահուանն Դիոմանիկեայ, զոր լուան 'ի Կով կղզւոջ։

ՀԶ. ՀԷ. Պիսոն խորհի դառնալ յԱսորիս. Մարկոս որդի նորա, և Դոմեթիոս բարեկամ իւր, հակառակ կան խորհրդոյն։

ՀԸ. Գիր Պիսոնի առ Տիբեր ընդդէմ Դիոմանիկեայ, և յայտ առնել զդարձ իւր 'ի հրամատարուԹիւն գաւառին Ասորւոց, և զօրաժողով նորա։

ՀԹ. Նաւատորմին Պիսոնի հանդիպել նաւաց, որ ածէին զԱգրիպպինա։ Սենոբոս պատրաստի վանել զՊիսոն յԱսորւոց։

Զ. ԶԱ. Պիսոն 'ի գերև ելեալ 'ի փորձ զօրուԹեան իւրոյ՝ խօսի 'ի հաշտուԹիւն, և նաւս ևեԹ ընդունի 'ի նմանէ և խոստումն առ 'ի դառնալ խաղաղուԹեամբ 'ի Հռովմ։

ԶԲ. Արհաւիրք 'ի Հռովմ 'ի լուր խօԹուԹեան և մահուանն Դիոմանիկեայ։

ԶԳ. Պատիւք մեծամեծք սահմանեալք յիշատակի նորա։

ԶԴ. Լիւիա քոյր նորա ծնանի երկուորեակս Դրուսոսի։ Տիբերի խընդալ ընդ այն, և տրամել ժողովրդեան։

ԶԵ. ՕրինագրուԹիւնք ծերակուտին ընդդէմ լկտուԹեան կանանց։ Ճիգն բառնալոյ յԻտալիոյ զկրօնս եգիպտացւոց և Հրէից։

ԶԶ. ԸնտրուԹիւն դատեր Պոլլիոնի 'ի Թիւ եռտեան կուսանաց։

ՁԷ. Ինքնակալին նուազեցուցանել զդինս ցորենոյ, լցեալ զոսոյժս վաճառականաց։ Հրաժարել նորա միւսանգամ՝ի կոչելոյ Հայր հայրենեաց, և ցանուելընդ այնոսիկ՝ որ ոչնչանային զնա Տէր։

ՁԸ. Արմենիոսի, որ կամէրն Թագաւորել՝ի Գերմանիա, նենգաւ իւրոցն սպանումն։

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից չորից ամաց, յորս կացին բդեաշխ Տ. Սատատիլիոս Սիսեննա Տաւրոս, և Տրիբան Լիբան։ Կ. Կեկիլիոս Հռուփոս, և Լ. Պոմպոնիոս Փլակկոս, Տիրեր Ներոն կեսար Աւգոստ Գ. և Գերմանիկ կեսար Բ. Մ. Յունիոս Սիլանոս, և Կ. Կլաիկոս Նորբան։

Ա. Հ. 769.
Ն. Ք. 16.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ Գ.

Ա. Առանց ձմերայնոյն խափան լինելոյ նաւարկութեանն Աֆրիպպինայ, եհաս նա 'ի Կորկիւրա կղզի՝ որ կայ հանդէպ Կալաբրիոյ. և եղև անդ զաւուրս քանի մի, սփոփել յանմխիթար տրտմութենէն։ Ի լուր դարձի նորա՝ մտերիմ բարեկամք, և զօրք զինուորեալք Գերմանիկեայ, և անծանօթք իսկ բազումք 'ի մերձակայ քաղաքաց, կէսք առ 'ի հաճել զկեսար, և յոգունք ևս նոցին հետևելով, դիմեցին 'ի Բրունդիսիոն՝ ուր մօտագոյնն էր և ապահովագոյն մատոյց նաւաց 'ի ցամաք։

Ընդ երևել նաւատորմին 'ի հեռուստ՝ ոչ միայն նաւահանգիստ և ծովեզր, այլ և պարիսպք և տանիք և ուստ ուստեք նշմարէր ծով, ծածկեցան յամբոխէ՝ որք տրտմութեամբ հարցանէին միմեանց, լռելեայն թէ աղաղակաւ ցնծութեան պարտ էր ընդունել զեկաւորն։ Եւ մինչդեռ յորպէսն խորհէին, մատեաւ նաւատորմն մեղմով 'ի նաւահանգիստ անդր, ոչ զուարթ թիավարեալ ըստ սովորութեան, այլ սուգ ամենևին ազդելով։ Եւ յելանել նորա 'ի նաւէ անտի ընդ երկուս որդիս իւր, աչք 'ի խոնարհ, բարձեալ բերելով զսա-

փորն անիւնակիր, բարբառ հեծեծանաց յամենեցունց լսելի լինէր. և չէր մարթ խտրել զաղգականաց կամ զօտարաց, զարանց կամ զկանանց ողբումն. բայց միայն զի ուղեկցացն Ագրիպպինայ յերկայն տրտմութենէն նուաղեալ էին ողբք, իսկ ընդ առաջ էլեալցն սաստկագոյն՝ վասն այն ինչ տրտմութեանն։

Բ. Տիբերի կրկին գունդս ատենականս անդր յղեալ էր, պատուէր տուեալ աւագանւոյն Կալաբրիոյ, Ապուլիոյ, և Կամպանիոյ, մատուցանել յիշատակի եղբօրորդւոյն սպասս մեծահանդէս։ Ձաձիւն նորա ուսով բարձեալ բերէին հազարապետք և հարիւրապետք, և յառաջոյ գնային դրօշք անշուք, և խուրձք գլխիվայր։ Ցանցանել նոցա ընդ քաղաքս գաղթականս՝ ժողովուրդն սգազգեաց, և ասպետք 'ի ձև յաղթական, ըստ Ճոխութեան քաղաքացն այրէին ձորձս և խունկս անուշունս, և որ այլ ինչ նուիրի մեռելոց 'ի սպաս։ Բնակիչք քաղաքաց իսկ արտուղեաց գային ընդ առաջ, բազինս կանգնէին, մատուցանէին զոհս գիցն ուրուականաց, և զսուգ իւրեանց արտասուօք և կականաւ յայտ առնէին։ Դրուսոս մինչև 'ի Տերրակինա եկն ընդառաջ ընդ Կլաւդեայ եղբօր Գերմանիկոսի, և ընդ որդիս նորա՝ որ կային 'ի Հռովմ։ Մ. Վալերիոս և Կ. Աւրելիոս բդեաշխք վաղ իսկ մտեալք 'ի պաշտօն, ծերակոյտն և բազումք յոյժ 'ի ժողովրդենէ գիմեցին 'ի Ճանապարհ անդր խառն 'ի խուռն, ողբս առեալ իւրաքանչիւր ոք առանձինն. զի չէր անդ տեղի մարդահաձուութեան, քաջ գիտելով ամենեցուն զիրընդունութիւն Տիբերի 'ի սրտէ ընդ մահ Գերմանիկեայ, թէպէտ և թագուցանէր նա զայն։

Գ. Տիբեր և Աւգոստա չերևեցան արտաքոյ՝ անարժան համարելով վերհափառութեան իւրեանց առաջի ամենեցուն ողբալ, և կամ զի մի գուցէ 'ի զնին աչաց ամենեցուն 'ի յայտ գայցէ ողբոցն ստութիւն։ Իսկ յաղագս Անտոնեայ մօր Գերմանիկոսի չգտանեմ ինչ առպատմագիրս, և ոչ յօրագիրս, զի երևեալ իցէ նա ուրեք յերևելի ինչ պաշտաման, ուր ընդ Ագրիպպինայ և Դրուսոսի և Կլաւդեայ յիշատակին յանուանէ և այլ ազգականք։ Թերևս առ խօթութեան արգելեալ կայր նա առ տնին, կամ չհանդուրժէր առ վշտին կալ 'ի

զնին դառնութեան աղետիցն։ Այլ ինձ հաւանելի ևս թուի, զի Տիբերի և Աւգոստայ կալով յարքունիս՝ կալեալ լցեն և զնա անդ բռնաղբօս, որպէս զի 'ի հաւասարել նորա ընդ իւրեանս 'ի սուգ, մօրն օրինակաւ արդարասցի և հանոյն և հօրեղբօր չերևել 'ի հանդիսի։

Դ. Օրն, յորում ածաւ աձիւն Գերմանիկեայ 'ի շիրիմն Աւգոստեայ, մերթ 'ի խոր լռութեան և մերթ յողբս և 'ի հեծութիւնս էանց։ Փողոցք քաղաքին լի 'ի խռանկ, և ջահք բիւրաւորք ընդ դաշտն Արիսի բորբոքեալ. զօրականն 'ի զէնս, աւագանին մերկացեալ զօրէնս պատուոյ, ժողովուրդն կարգեալ ըստ ցեղից, գոչէին. Անկաւ ընդ Գերմանիկեայ հասարակապետութիւնն, չիք ոչ ևս նմա յոյս կանգնելոյ։ Որպէս զի 'ի սաստկութենէ և 'ի համարձակութենէ բողոքոյ նոցա թուէր՝ ոչ ևս յիշել նոցա զտեարս իւրեանց։ Սակայն ոչ ինչ այնպէս կարեվէր եհար զՏիբերը, որպէս զգութ և զմեծարանս ժողովրդեան առ Ագրիպպինա. զի կոչէին զնա փառս հայրենեաց, հարազատ արիւն Աւգոստեայ, և միակ նախատիպ նախնեացն առաքինութեան։ Եւ զաչս 'ի վեր ամբարձեալ հայցէին 'ի դից պահպանել զորդիս նորա, և երկարակեաց առնել զնոսա քան զհալածիչս նոցա։

Ե. Եղէն ոլոր փառաւորագոյն զհանդէս յուղարկաւորութեանն ցանկային, համեմատեալ զայն ընդ մեծաշուք փառս՝ զոր Աւգոստեայ արարեալ էր ընդ Դրուսոս հայր Գերմանիկեայ։ Յիշէին զերթ նորա 'ի խոր ձմերայնի մինչև 'ի Տիկինոն ընդառաջ, և անմեկնելի 'ի դիականէն զմուտս նորա 'ի միասին 'ի Հռովմ. զպատկերս կլաւդեանց և յուլեանց ածեալս շուրջ զդագաղաբն, զողբս 'ի հրապարակին և զներբող 'ի բեմին. և որ ինչ 'ի նախնեաց անտի սահմանեալ, և որ ինչ 'ի յետնոց յաւելեալ 'ի սպաս մեռելոց՝ զամենայն արարեալ ընդ Դրուսոս. իսկ ընդ Գերմանիկ և ոչ զսովորականս, և ումեք ազնուականի անկաւորս։ Եւ յաւելուին՝ զի եթէ վասն հեռաւորութեան վայրաց յօտար երկրի հարկ լեալ էր վարկպարագի կանգնել նմա խարոյկ, ևս առաւել պարտ էր ընել յայնժամ զթերին։ Եղբայր նորա, ասէին, միոյ ևեթ աւուր ճանապարհ չոգաւ ընդ առաջ, իսկ հօրեղբայր նորա և ոչ

մինչև 'ի դրունս։ Ո՞ւր նախնեացն սահմանադրութիւնք, պատկերք 'ի վերայ դաղաղացն, տաղք 'ի յիշատակ առաքինութեանց նորա, և գովասանութիւնք և արտասուք և որ այլ ևս սգոյ նշանակք։ —

Զ. Սգդ եղև Տիբերի քրթմնջիւն ժողովրդեանն, և առ 'ի խափանել զայն՝ արար հրովարտակ այսպիսի. Յոգունց 'ի հռովմայեցւոց զանձինս 'ի վերայ հայրենեաց փոխանակեալ, ոչ ոք 'ի նոցանէ այսպիսի սգով յուղարկաւորեցաւ, որ նմա և ամենեցուն յաճախէ փառս 'ի չափուն կալով։ Զի ոչ նոցն ինչ վայելէ վերհից իշխանաց և իշխեցող ժողովրդեան, որ ինչ հասարակաց տանց և քաղաքաց. նորոգ ցաւոց 'ի դէպ է սուգ և արտասուաց սփոփումն. այլ ժամ է արդ քաջալերելոյ, որպէս երբեմն դիւցազնն Յուլիոս զրկեալ 'ի միաձին դստերէ իւրմէ, և որպէս դիւցազնն Աւգոստ 'ի կորուսանել զթոռունս իւր, 'ի բաց եդին զտրտմութիւն։ Զեն ինչ պէտք վաղնջուց օրինակաց. քանի՛ցս ժողովուրդ Հռովմայ արիաբար տարաւ կոտորածի բանակաց, մահու զօրավարաց, և բնաջինջ կորստեան ազնուական ազգատոհմից։ Մեռանին իշխանք, այլ հասարակապետութիւն անմահ է. վասն որոյ արժան է 'ի սովորական հանդէսս դառնալ, ևս և 'ի բերկրական։ — Զի մերձ իսկ էին յայնժամ Կիբեղեան տօնք խաղուց։

Է. Հապա բացան ատեանք, դարձաւ իւրաքանչիւր ոք 'ի գործ իւր, և Դրուսոս մեկնեցաւ գնալ անդրէն առ զօրս 'ի Լիւրիկէ՝ ամենեցուն ակն ունելով վրէժխնդրելոյ նորա 'ի Պիսոնէ, և ստէպ բողոքելով՝ զի նա ընդ զուարճալի վայրս Ասիոյ և Աքայիոյ յածեալ, յանդուգն և նենգաւոր յամեցմամբ զհաւաստիս եղերանցն ցրէր։ Զի համբաւէր Մարտինայ ականաւոր դեղատուի, որ առաքեցաւն 'ի Կն. Սենտիոսէ, որպէս ասացի, յանկարծամահ լեալ 'ի Բրունդիսիոն, և թոյն 'ի հիւսս վարսից նորա դտեալ թագուն, առանց ինչ նշմարանաց դեղառելոյ 'ի մարմնի նորա։

Ը. Բայց Պիսոն յղեաց նախ զորդի իւր 'ի Հռովմ, թելադրեալ նմա որովք մարթէրն ողոքել զինքնակալն. և ինքն չոգաւ առ Դրուսոս, զոր համարէր ոչ այնչափ ընդդէմ իւր վասն կորստեան եղբօրն զայրացեալ՝ որ-

չափ 'ի բառնալ նախանձորդին ողոքեալ ընդ իւր։ Տիբերը առ 'ի ցոյց անաչառ դատաստանի՝ ընկալեալ մարդասիրապէս զպատանին, արար նմա պարգևս՝ որպէս սովոր էր առնել ազատորդւոց։ Իսկ Դրուսոս պատասխանեաց Պիսոնի. Եթէ Ճշմարիտ ասէ համբաւն, առաւել յոյժ վիշտ է ինձ ընդ այն. այլ ցանկամ ստուգեան նորին, զի մի՛ ումեք մահ Գերմանիկեայ գոցի լեալ 'ի կորուստ։ Զայս լու 'ի լու ամենեցուն ասաց, զգուշացեալ յամենայն բանից գաղտնեաց. և ոչ ոք երկբայէր՝ 'ի տեսանելն յանզգոյշ և 'ի համարձակախօս պատանին զզգուշութիւն ալեաց, զի խրատեալ էր նա 'ի Տիբերեայ։

Թ. Պիսոնի նաւարկեալ ընդ ծով Դալմատիոյ, և թողեալ զնաւս իւր յԱնկոնա, անց ընդ Պիկենոն և եհաս ընդ Ճանապարհ փլամինեան զհետ միոյ 'ի լեգէոնաց՝ որ գայր 'ի Պաննոնիոյ 'ի Հռովմ, ուստի գնալոց էր յԱփրիկէ։ Զրոյցք բազումք եղեն զգնացից նորա ընդ զօրսն, իբր թէ ստէպ ընծայեցուցանէր զանձն նոցա 'ի կալ նոցին և 'ի գնալ. այլ նա առ 'ի չտալոյ կասկածանս, և կամ զի երկչոտաց յողդողդ են միտք, նաւարկեաց 'ի Նարնեայ ընդ Նար և ընդ Տիբեր գետս. որով առաւել ևս զայրացոյց զռամիկն, մատչելով 'ի շիրիմն կայսերաց։ Անդր 'ի տուէ 'ի խռան ամբոխին՝ որ ծածկէր զգետեզրն, յառաջ մատեան զուարթադէմ; ինքն շուրջ պատեալ 'ի ձեռասուն բարեկամաց, և Պլանկինա 'ի տիկնայց։ Ամենայն ինչ գրգռէր զատելութիւն. ապարանք նոցա 'ի վերայ հրապարակին, և հանդէս տօնից և խրախուն և կոչունք, և յայտ յանդիմանութիւն ամենայնի երևելութեամբ տեղւոյն։

Ժ. Ի վաղիւ անդր Փուլկինիոս Տրիոն ամբաստանեաց զդեշխից զՊիսոն. իսկ Վիտելլիոս, Վերանոս, և այլ բարեկամք ոչ անկ համարելով զայն Տրիոնի, ինքեանք յառաջ մատեան, ոչ որպէս դատախազք՝ այլ որպէս յայտարարք և վկայք կամացն Գերմանիկեայ։ Վասն որոյ Տրիոն հրաժարեաց 'ի դատախազութենէ անտի, և թողաւ նմա ամբաստանել զառաջնոց և եթէ կենայ Պիսոնի։ Բնութիւն իրայն յանձն եղև Տիբերի. և Պիսոն յանձն էառ զայն՝ երկուցեալ 'ի հակառակութենէ ժողովրդեան և ծերակուտին, յուսացեալ ար-

համարհելոյ Տիբերի զզրոյցս համբաւոյ՝ մնահաճու-
թեամբ համախոհութեան մօրն, և դիւրագոյն հա-
մարեալ միում ումեք ընտրել ընդ Ճշմարիտն և ընդ
սուտ՝ վասն ատելութեան և նախանձու տեղի գտա-
նելոյ 'ի բազումս։ Ոչ անդիտանայր Տիբեր քանի՛ ծանր
էր հարցափորձն այն, և որպիսի՛ կասկածանաց հասա-
նէր նմա նեղբոյ անկանել։ Ի լուր սակաւուց ոմանց
պալատականաց լուաւ զսպառնալիս դատախազիցն,
և ապա զաղերս Պիսոնի. և 'ի ծերակոյտն եթող բո-
վանդակ զդատաստանն։

ԺԱ. Յաւուրսն յայնոսիկ Դրուսոս դարձ արարեալ
'ի Լիւրիկեայ, և թողեալ այլում ժամանակի զյաղթա-
նակն սահմանեալ 'ի ծերակուտէն վասն նուաճելոյ
իւրոյ զՄարոբոդ և վասն յաղթութեանց իւրոց 'ի յետ-
նումն պատերազմի, եմուտ առանց հանդիսի 'ի Հռովմ։
Յայնժամ Պիսոն խնդրեաց 'ի պաշտպանութիւն իւր
զԼ. Արրունտիոս, զՏ. Վինիկիոս, զԱսինիոս Գալլոս,
զԵսերնինոս Մարկելլոս, և զՍեքստոս Պոմպէոս։ Եւ
'ի հրաժարել նոցա այլևայլ պատճառանօք, Մ. Լե-
պիդոս, Լ. Պիսոն, և Լիւինեոս Հռեգուլ յանձն առին
պաշտպան կալ նմա։ Դէտակն ունէր քաղաքն ամե-
նայն ցո՛ր վայր բարեկամք Գերմանիկեայ կացցեն հա-
ւատարիմ, ո՛ր վստահութեան պարտաւորին լինին ելք,
և ո՛րպէս Տիբեր կարասցէ բռնազբօսել ծածկել զոր
կրէրն 'ի սրտի։ Այսոցիկ ևեթ ժողովուրդն ուշ է-
դեալ, ոչ ևս խնայէր զինքնակալն 'ի գաղտնի քրթմնջ-
ջանաց և 'ի չարակասկած լռութենէ։

ԺԲ. Եւ 'ի ժողովել ծերակուտին՝ խօսեցաւ Տիբեր
հնարիմաց զգուշութեամբ, և ասէ. Փոխանորդ հօր
իմոյ և բարեկամ էր Պիսոն, և յօգնականութիւն Գեր-
մանիկեայ ետու զնա հաւանութեամբ ծերակուտին 'ի
յանձանձանս իրաց Արևելից։ Եթէ զայրացոյց նա անդ-
ըմբոստութեամբ և հակառակութեամբ զպատանին,
եթէ խնդաց ընդ մահ նորա, եթէ դաւեաց զկեանս
նորա, քննելի է անաչառապէս։ Փոխանորդ՝ որ ան-
ցեալ ըստ սահման իշխանութեան իւրոյ՝ ոչ ևս մեծարէ
զինքնակալ իւր, և ընդ մահ նորա և ընդ սուգ իմ խընդ-
դայ, ատելի է ինձ և արտաքսելի 'ի տանէ իմմէ, և վը-
րէժ խնդրեցից 'ի նմանէ, ոչ զինքնակալի՝ այլ զիմ։ Իսկ

եթէ եղեռն մահապարտութեան՝ վասն ոյր և իցէ 'ի մահկանացուաց սպանութեան գայցէ 'ի յայտ, դուք ինքնին ձեզ և որդւոց Գերմանիկեայ և մեզ ազգակացաց նորա տուք զարդար սփոփանս։ Ինչնեցէք դարձեալ թէ արդարև Պիսոնի խռովարար և ապստամբեցուցիչ լեալ իցէն գնացք 'ի բանակի, թէ ինդրեաւ իցէ նա փառամոլութեամբ շնորհս գտանել առաջի զօրականին, թէ զինուք անդրէն 'ի բուռն ածեալ իցէ զգաւառս. իսկ եթէ այս ամենայն զրպարտութիւնք յանիրաւի իցեն կուտակեալք 'ի դատախազից, առաւելագանց նախանձայուզութիւն նոցա դժպհի է ինձ։ Զինչ արժան էր զդի Գերմանիկեայ ածել 'ի զնին ամբոխին, և դեղամահ լեալ համբաւել զնա առ օտարս, մինչդեռ անստոյգ է այն և քննելի։ Լամ ապաքէն և լացից միշտ զեղբօրորդեակն իմ. այլ ոչ արգելում ամբաստանելոյն ածել 'ի մէջ որ ինչ զանմեղութիւն իւր յայտ առնեն, կամ զանիրաւութիւն Գերմանիկեայ՝ եթէ իցէ իւիք պարտաւոր։ Եւ զձեզ աղաչեմ, մի առ վշտին իմում՝ որ կցորդ է ընդ դասատանիդ՝ զամբաստանութիւն եւեթ եղեռան համարիցիք 'ի հաւաստիս։ Եթէ արենակցութիւն կամ բարեկամութիւն տայ պաշտպանս Պիսոնի, որչափ ինչ զօրէ ոք Ճարտարիսօսութեամբ և ջանիւք՝ օգնեսցէ նմա 'ի վտանգին։ Ի նոյն Ճիգն և 'ի նոյն հաստատութիւն յորդորեմ և զդատախազս. զայս եւեթ տնօրինեալ Գերմանիկեայ՝ զի 'ի խորհրդարանի քան 'ի հրապարակի, առաջի ծերակուտին քան դատաւորաց, լիցի զնմանէ դատաստան. անաչառ հաւասարութեամբ և այլն ամենայն վՃարեսցի. մի ոք յարտասուս Դրուսոսի, մի ոք 'ի տրտմութիւն իմ հայեսցի, և մի յոր ինչ զրպարտութիւն կեղծէ 'ի մեզ։

ԺԳ. Սահմանեցաւ այնուհետև դատախազից յերկուս աւուրս 'ի մէջ բերել զամբաստանութիւնսն. և յետ վեց աւուր շնորհել զաւուրս երիս յանցաւորին՝ առ 'ի տալ վասն անձին պատասխանի։ Յայնժամ Փուլկինիոս 'ի մէջ էած զհին և զանուն չարախօսութիւնս՝ փառամոլութեամբ և ագահութեամբ վարելոյ նորա 'ի Սպանիա. զորս եթէ ցուցանէր իսկ հաւաստեաւք, ոչ ինչ ստնանէին նմա՝ յարդարանալ նորա յարդի ամբաստանութեանցն, և ոչ 'ի ցրեալն զայնս՝ ազատէր նա 'ի

պարտաւորութենէ ծանրագոյն եղեռանց։ Զհետ նորա Սերուէոս, Վերանոս և Վիտելլիոս հաւասարք 'ի զայրոյթ, բայց Վիտելլիոս հզօրագոյն Ճարտարիսօսութեամբ, 'ի դէմն ածին՝ զի Պիսոնի ատելութեամբն ընդ Գերմանիկեայ, և խորհրդով յեղափոխութեան իրաց, համարձակութիւն տալով սինկքոր զօրականին 'ի հարստահարութիւն նիզակակցաց, այնպէս ապականեալ էր զնոսա՝ մինչև 'ի յոռեգունից 'ի զօրացն հայրակոչ լինել. ուր ընդ հակառակն հալածէր զլաւագոյնս, մանաւանդ 'ի զինուորակցաց և 'ի բարեկամաց Գերմանիկեայ. և դարձեալ զի և զնա ինքն հմայիւք և դեղով սպանեալ էր, և գոհութիւն դից և զոհս վասն այնորիկ ընդ Պլանկինայ մատուցեալ. դարձեալ քանզի ընդդէմ հասարակապետութեան զէն առեալ էր, օրէն էր ձգել զնա յատեան որպէս 'ի պարտութիւն մատնեալ 'ի պատերազմի։

ԺԴ. Յայլում ամենայնի տկարացաւ պաշտպանութիւն Պիսոնի. զի ոչ զփառամոլութիւն զինուորական, ոչ զգաւառին հարստահարութիւն 'ի վատթար զօրականէն, և ոչ զթշնամանսն ընդդէմ ինքնակալին ուրանալ կարաց. բայց զեղեռն մահադեղոյն համարեցաւ ցրել, քանզի և ոչ դատախազք հաւաստիս զայնմանէ ըստ բաւականին 'ի մէջ բերին։ Զի ասին՝ Պիսոնի 'ի կոչունս Գերմանիկեայ 'ի վերոյ քան զնա բազմելով ինքնին դեղ 'ի կերակուրս անդր խառնեալ. այլ անտեղի թուէր յանդգնել նորա յայն, շուրջ պատեալ յօտար սպասաւորաց, յանդիման այնչափ բազմականաց, 'ի տեսիլ նորին իսկ Գերմանիկեայ. և զի ամբաստանեալն ինքնին խնդրէր՝ զսպասաւորս և զպաշտօնեայս սեղանոյն 'ի հարցփորձ մատուցանել։ Բայց դատաւորք վասն այլ և այլ պատճառաց էին անողոքելիք. Տիբերը վասն մղելոյ նորա պատերազմ Յ.սորիս, և Ծերակոյտն ոչ երբէք համոզեալ՝ զի առանց դեղոյ զրաւեալ իցէ Գերմանիկ 'ի կենաց. և առ դրան խորհրդարանին լսելի լինէր բարբառ ժողովրդեան՝ ինքնին առնելոյ զիրաւունս, եթէ չտայր Ծերակոյտն ընդդէմ Պիսոնի դատակնիք։ Ընդստին իսկ խլէին զպատկերս նորա՝ ածել արկանել 'ի վիհն գեմոնեան, եթէ չէր կեսարու հրամայեալ զերծուցանել զայնոսիկ և կանգնել անդրէն. և

'ի դարձուցանել զնա հաղարապետի ատենական գրնդին դեսպակաւ, հծծէին ընդ միմեանս՝ 'ի պաՀ կենաց նորա գնայցէ, թէ վերակացու մահուն։

ԺԵ. Ոչ ինչ նուազ և Պլանկինա էր ատելի, այլ առաւելագոյն էր նորա պաշտպանութիւն, և անգիտելի թէ ո՞րչափ ինչ իշխանութիւն էր կայսերն 'ի վերայ նորա։ Մինչդեռ տակաւին յոյս էր Պիսոնի, խոստանայր Պլանկինա անմեկնելի 'ի նմանէ կալ յորու�և իցէ վտանգի, և մեռանել իսկ ընդ նմա եթէ հարկ լինէր։ Այլ իբրև դշխոյին Լիւիայ գաղտ աղաչանօք ընկալաւ զթողութիւն, ուծանայր տակաւ յառնէն, և բաժանէր զդատ իւր 'ի նորայոյն։ Գիտաց յանցաւորն թէ քանի՞ փնասակար էր իւր այն. և մինչդեռ վարանեալ կայր այնուհետև 'ի փորձ, քաջալերեալ յորդւոյն և սրտապնդեալ՝ յանդիման եղև դարձեալ ծերակուտին։ Եւ 'ի կրկնել ամբաստանութեանցն, և 'ի կշտամբել զնա Հարց, համբերեալ ամենայն հակառակութեան և թշնամանաց, ոչ իւիք այնպէս լքեալ վՀատեցաւ՝ որպէս 'ի տեսանել զՏիբերը կացեալ առանց գթոյ և առանց սրտմտութեան, անյողդողդ և անկարեկիր ամենևին։ Եւ ածեալ անդրէն 'ի տուն, գրեաց սուղ ինչ՝ իբր թէ 'ի պատասխանի վասն վաղուին պատրաստեալ. և կնքեալ զայն ետ ազատագրին իւրում։ Եւ ապա զսովորական խնամս մարմնոյ իւրոյ արարեալ, 'ի մէջ գիշերի յելանել կնոջ իւրոյ 'ի սենեկէն՝ հրամայեաց փակել զդուրս. և յառաւօտուն գտաւ սրախողխող, և սուսեր առ նմա 'ի գետնի։

ԺԶ. Ցիշեմ իսկ լուեալ 'ի ծերունեաց՝ ստէպ 'ի ձեռին Պիսոնի տեսեալ նոցա գիրս, զորոց չէր նորա երբէք յայտնեալ ումեք զգաղտնիս. այլ ըստ վկայելոյ բարեկամացն էին այնոքիկ նամակք Տիբերի, և պատուէրք 'ի նոսա ընդդէմ Գերմանիկեայ, զրոս կամէր հանել 'ի ժողով ծերակուտին 'ի յանդիմանութիւն ինքնակալին, եթէ չէր 'ի մտոտի խոստմունս Սէանոսի ըմբռնեալ։ Վասն որոյ ոչ անձին ինչ արարեալ նորա, այլ 'ի պատուիրակէ համարին զնա սպանեալ։ Ոչ զայս և ոչ զայն հաստատեմ, այլ և ոչ արժան համարիմ լռել զաւանդութիւն վկայից՝ որք մինչև ցաւուրս մանկութեան մերոյ կէին։ Կեսարու զտրտմութիւն 'ի դէմս

կեղծաւորեալ, ողբաց 'ի Ծերակուտին զմահ՝ որ ատելի զինքն կացուցանէր, և հարցափորձս բազում վասն յետին տունջեան և գիշերոյ կենացն Պիսոնի արար ազատագրին։ Եւ Թէպէտ բազում զգօնութեամբ տայր ազատագիրն պատասխանի, այլ 'ի յաւելուլ նորա ինչ ինչ անզգոյշ՝ ընթերցաւ Տիբեր զյետին գիր Պիսոնի, որոյ այսպիսի էր պատՃէն. «Համախոհութեամբ և ատելութեամբ թշնամեաց 'ի սուտ եղեռն զրպարտեալ, քանզի չիք տեղի Ճշմարտութեան և անմեղութեան իմոյ՝ վկայս ինձ զդիս կոչեմ անմահս, կեսար, զի կեցի հաւատարիմ առ քեզ, և ոչ ինչ նուազ տիրասէր առ մայր քո։ Քեզ զորդիս իմ յանձն առնեմ։ որպիսի ինչ դատաստան և առնիցի զինէն, այլ Կնէոսի Պիսոնի չիք ընդ իս մասն, զի զայն ամենայն ժամանակս ոչ մեկնեցաւ նա 'ի Հռովմայ. իսկ Մարկոս հակառակ եկաց դիմելոյ իմոյ յԱսորիս. և իցէ՛ տեղի տայի որդւոյ իմում պատանւոյ, քան թէ նա հօր իւրում զառամելոյ. վասն որոյ թախանձագին աղաչեմ, մի՛ զյանցանաց իմոց լուծանել անմեղին զվրէժ։ Վասն քառասուն և հնգից ամաց ծառայութեանս իմոյ, վասն 'ի միասին ընդ քեզ կալոյ իմոյ բդեաշխ, վասն դիւցազնին Աւգոստեայ հօր քո՝ որում եղէ մեծարոյ, և վասն բարեկամութեանս մերոյ, շնորհեա որդւոյ իմում հիքի զինդրուած իմ, որ ոչ ևս ինչ խնդրելոց եմ 'ի քէն »։ Իսկ զՊլանկինայ յաւելոյր և ոչ ինչ։

ԺԷ. Զպատանին Մարկոս անպարտ 'ի քաղաքական մարտէն կացոյց Տիբեր, հրամանաց հօրն անմարթ համարեալ որդւոյ անլսող լինել. և ապա աւաղեաց ըզբախտ աղնուական ազգատոհմին, և զնորին իսկ Պիսոնի դառն աղէտս, որ թէպէտ պարտաւոր և թէ անպարտ կրէր զայն։ Իսկ զՊլանկինայ ամօթով և կորանօք խօսեցաւ, զաղաչանս մօրն 'ի նեղքս ածեալ. վասն որոյ լաւաց առհասարակ բոլոր 'ի ծածուկ ընդդէմ Լիւիայ առաւել զայրանայր, և ասէին. Օրէն ուրեմն իցէ հանոյ զսպանողն թոռին իւրոյ տեսանել զերեսս, խօսակից լինել ընդ նմա, և կորզել զնա յատենէ ծերակուտին. Գերմանիկեայ ևեթ ժխտիցեն օրէնք, որ քաղաքաց ամենեցուն շնորհի։ Մինչդեռ Վիտելլիոս և Վերանոս խնդրեն զվրէժ Կեսարու, Պլանկինա յինքնակալէն և

յԱւգոստայ պաշտպանեալ և զփորձ առեալ յաջող ելից դեղատուութեանն և կախարդանայ, 'ի կիր արկցէ զայն և յԱգրիպպինա և յորդիս նորա, յագեցուցանել արեամբ հէք աղգատոհմին զբարեգութն հան և զհօրեղբայր։ — Վասն որոյ հարցփորձ վեր 'ի վերոյ եղև զնմանէ զաւուրս երկուս, ստիպելով Տիբերի զորդիս Պիսոնի պաշտպան կալ մօր իւրեանց։ Եւ 'ի խօսել դատախազիցն և վկայից առաւել քան զառաւել, և 'ի չպատասխանել ուրուք, փոխանակ սրտմտութեան յաձախէր կարեկցութիւն։ Եւ նախ քան զամենեսին հարցեալ Աւրելիոս Կոտտաս բդեաշխ, (քանզի յառաջարկել կեսարու՝ օրէն էր և ատենակալաց տալ վճիռ,) ասաց ընջել զանուն Պիսոնի 'ի մատենից, զկէս ընչից նորա գրաւել 'ի գանձ արքունի, և զկէս շնորհել որդւոյ նորա Կնէոսի Պիսոնի՝ փոխելով նորա զմականուն իւր. իսկ զՄարկոս Պիսոն ընկեցեալ յիշխանութենէ, և տուեալ նմա հինգհարիւր բիւր սեստերտ, աքսորել յամն տասն. և Պլանկինայ շնորհել ըստ աղաչանաց դշխոյին ազատութիւն։

ԺԸ. Մեղմեաց յոյժ ինքնակալն զայս վճիռ, ոչ նեբելով ընջել զանուն Պիսոնի 'ի մատենից՝ յորոց ոչ Մարկոսի Անտոնիոսին՝ որոյ ընդդէմ հայրենեաց առեալ էր զէն, և ոչ Յուլեայ Անտոնեայն ընջեալ էին անուանք։ Եւ զորդի նորա զերծոյց 'ի նախատանաց՝ տալով նմա զժառանգութիւնն հայրենի. քանզի անհրապուրելի էր յագահութիւն՝ որպէս բազում ուրեք ասացի, և յօժարագոյն աստ 'ի գթութիւն՝ վասն ամօթոյ անդաստապարտ արձակմանն Պլանկինայ։ Նոյն ինքն յառաջարկել Վալերեայ Մեսալինոսի նուիրել պատկեր ոսկի 'ի բագին վրէժինդրին Արիսի, և Կեկինայ Սևերոսի՝ կանգնել բագին դիցն Վրէժինդրութեան, արգել զայն՝ արտաքնոցն յաղթութեանց 'ի դէպ համարեալ զնուէրսն, իսկ զընտանի աղէտս ծածկել տրտմութեամբ։ Յաւելոյր Մեսալինոս՝ մատուցանել Տիբերի և Աւգոստայ, Անտոնեայ, Աղրիպպինայ և Դրուսոսի շնորհակալիս վասն խնդրելոյ նոցա զվրէժ Գերմանիկեայ, առանց յիշատակելոյ ընդ նոսա զԿլաւդիոս։ Եւ 'ի հարցանել Լ. Ասպրենասայ առաջի ծերակուտին՝ թէ կամաւ լուեալ էր նորա զԿլաւդիոս, յաւելաւ և

անուն նորա 'ի վՀռին։ Յաճել զմտաւ զնախնեացն և զարդեաց գործս, յամենայնի զմահկանացուացս իրաց խաղս է նկատել. զի ըստ համբաւոյ և յուսոյ և մեծարանաց՝ այլոց մանաւանդ թուէր անկ ինքնակալութիւն, 'ի ծածուկ ունելով բախտին զսահմանեալն։

ԺԹ. Յետ սակաւ աւուրց առաջարկեաց Տիբեր ծերակուտին՝ տալ քրմութիւն Վիտելլիոսի, Վերանոսի և Սերուէոսի. իսկ Փուլկինեայ խոստացեալ օգնել 'ի պատիւ աւագութեան, խրատեաց զնա՝ մեղմել զթափ ճարտարխօսութեան իւրոյ։ Այս վախճան եղև վրէժխնդրութեան մահուն Գերմանիկեայ, ոչ միայն յայնժամ այլ և առյապայ, վասն պէս պէս համբաւելոյ իրացն. այսչափ և երևելիքն իսկ դէպք երկբայելիք են, կիսոց դիւրահաւան գոլով որոց և իցէ զրուցաց, այլոց ստելով զճշմարտութիւն, և երկաքանչիւրոցն յաճախելով զերկբայս առ յետինս։ Դրուսոս ելեալ 'ի քաղաքէն՝ 'ի նաւակատիս իշխանութեան իւրոյ եմուտ անդր ընդ հուպ յաղթանակաւ. և յետ աւուրց ինչ մեռաւ Վիպսանիա մայր նորա, ինքն միայն յորդիս Ագրիպպայ օրհասիւ վախճանեալ. զի այլք սրա խողխող՝ որպէս է հաւաստի, կամ դեղամահ կամ սովալլուկ՝ որպէս համբաւի, վախճանեցան։

Ի. Ի նմին ամի Տակիտարինաս, որ 'ի հերուն ամբայնի հարեալ էր 'ի Կամիլլոսէ՝ որպէս ասացի, յարոյց անդրէն պատերազմ յԱֆրիկէ։ Ի սկզբան անդ այսր անդր ասպատակէր՝ երագութեամբն անպատուհաս, ապա աւար հարկանէր զգիւղօրէս՝ կողոպուտ բազում զհետ իւր ածեալ, մինչև ապա պաշարեաց զգունդ հռովմայեցւոց ոչ ինչ հեռի 'ի Պագիդայ գետոյ։ Վերակացու ամրոցին Դեկրիոս, անվեհեր 'ի զէն, փորձ 'ի պատերազմունս, թշնամանս զպաշարումն զայն համարեցաւ. և քաջալերեալ զզօրականն պատերազմել 'ի բացի, ճակատեցոյց զնոսա առ պատնիշաբ։ Ի նախկին թափոյ յարձակման թշնամեաց ընկրկէր գունդն. յայնժամ Դեկրիոս ընդ տարափովք նետից ընդդէմ փախստականացն յառաջ մատուցեալ՝ կշտամբէր զդրօշակիրս ասելով. Ամօթ հռովմայեցւոց զօրականին է՝ 'ի յելուզակաց և 'ի դասալիք զօրաց երկնչել, և թիկունս դարձուցանել։ Եւ թէպէտ վերս ընկալեալ և զմի յա-

ջացն կորուսեալ, սակայն դիմէր յարձակէր 'ի Թշնամիս. և ոչ պարտեցաւ պատերազմն, մինչև անկաւ նա լքեալ յիւրոցն։

ԻԱ. Իբրև գիտաց զայն Լ. Ապրոնիոս, որ յաջորդեալն էր Կամիլլոսի, վշտացեալ ընդ նախատինս իւրոցն քան ընդ փառս Թշնամեաց, ըստ օրինակի նախնեացն խստութեան՝ որ անսովորն էր յայնմ ժամանակի, զտանջերորդս վատ գնդին գանաձեծս ետ սպանանել։ Օգուստ այնպիսի մեծ 'ի խստութենէ աստի լեալ, զի գունդ մի միայնակ հինաւուրց զօրականաց՝ իբր հինգհարիւրոց՝ պարտեաց զնոյն գունդս Տակփարինայ, յարձակեալս 'ի վերայ ամրոցին՝ որ կոչէր Թալա։ Ի նմին մարտի Հելուիոս Հռուփոս, 'ի սինլքոր զօրականէն, արար իւր պարծանս՝ փրկութեամբ միոյ 'ի քաղաքացնոց, և ընկալաւ յԱպրոնեայ 'ի պարգև նիզակ և քառամանեակ։ Յաւել կեսար տալ նմա և պսակ քաղաքական, ոչ 'ի յանդիմանութիւն ինչ Ապրոնեայ, այլ կարի իմն վարկուցեալ զզգուշութիւն նորա. զի ըստ իրաւանց փոխանակի բդեշխի՝ օրէն էր նմա տալ և զայն։ Բայց Տակփարինայ տեսանելով զիւրսն լքեալս և դժկամակս 'ի պաշարումն, սփռեաց զպատերազմն. և ուր նեզէրն 'ի Թշնամեաց, տեղի տուեալ անտի ընկըրկէր. այսու օրինակաւ խաղ առնելով զհռովմայեցիս, պարտասեցուցանելով զնոսա զրավաստակ։ Ա.յլ'ի հասանելն 'ի ծովեզերեայս՝ հարկ եղև նմա զկայ առնուլ, հարկանել բանակ վասն բեռանց աւարին։ Յայնժամ Ապրոնիոս Կեսիանոս արձակեալ 'ի հօրէ իւրմէ հեծելազօրօք և օժանդակ գնդօք, յաւելեալ 'ի նոսա և զերագունս 'ի լեգէոնականաց, եհար զնումիդացիս, և հալածեաց զնոսա յանապատս։

ԻԲ. Բայց 'ի Հռովմ տիկինն Լեպիդա, որ 'ի վերայ փառաց Եմիլեան տոհմին՝ և Թոռն էր Սիլլայի և Պոմպէի, ամբաստանեցաւ ծնեալ Պ. Կուիրինեայ առն իւրում Ճոխի և անորդւոյ՝ որդի անհարազատ։ Յաւելուին նմա 'ի յանցանս շնութիւնք և դեղատուութիւնք և կախարդանք 'ի ձեռն քաւդեայց ընդդէմ կայսերական ազգատոհմին։ Պաշտպան եկաց նմա եղբայր նորա Մանիոս Լեպիդոս. և Թշնամութիւն Կուիրինեայ ընդ նմա յետ մերժելոյ զնա 'ի կնու-

թենէ՝ շարժեաց զամենեսին 'ի կարեկցութիւն, թէ-
պէտ և պարտաւոր էր նա և անուանարկ։ Զէր ինչ
դիւրին գուշակել 'ի վերայ այսորիկ զմիտս ինքնակա-
լին, այնպէս գիտաց նա մերթ զցաստման և մերթ ըզ-
գթութեան բերել յանձին զդէմս։ Աղերս 'ի սկզբան
արկ ծերակուտին, մի 'ի յանցանս գրել նմա զարքու-
նական փառացն թշնամանս. ապա զՄ. Սերուիլիոս,
երբեմն բդեաշխ, և զայլս ոմանս կացոյց դատախազս՝
վկայել զնրաց, զորոց ինքն որպէս թէ կամէր լռել։
Եւ դարձեալ զսպասաւորս Լեպիդայ 'ի զինուորական
պահպանութենէ 'ի բդեշխականն ետ, և չեթող 'ի
տանջանս հարցափորձի մատուցանել զնոսա զնրաց՝ որ
'ի տուն իւր հայէին։ Արդեալ դարձեալ՝ զի մի Դրուսոս,
որ 'ի բդեշխութիւն սահմանեալն էր, տացէ նախ
վճիռ. զոր կէսք 'ի նպաստ ժողովրդեան համարեցան՝
զի մի 'ի նորին կարծիս ստիպեսցին այլք, իսկ կէսք 'ի
խստութիւն՝ իբր զի չհրաժարէր նա 'ի պաշտամանէն
առանց դատապարտութեան։

ԻԳ. Բայց Լեպիդայ յաւուրս խաղուց՝ յորս դադա-
րէին ատեանք՝ երթեալ ընդ տիկնայս երևելիս 'ի
թատր, և կական բարձեալ՝ զնախահարս իւր կար-
դալով, և զինքն իսկ զկառուցող թատերն զՊոմպէոս՝
որոյ շուրջ կային պատկերք 'ի տեսիլ, այնպէս 'ի գութ
շարժեաց զորս անդն կային՝ մինչև արտասուք թշնա-
մանել նոցա և նոզովել զԿուիրինոս, թէ ընդէր զա-
ռամելոյն այնմիկ անզաւակի և անտոհմի մատնեալ
էր վիճակեալն երբեմն 'ի կնութիւն Լ. կեսարու, և
'ի հարանութիւն դիւցազնին Աւգոստեայ։ Այլ ապա
'ի յայտնել ապիրատութեանց նորա 'ի խոշտանգե-
լոց ծառայիցն, ընդունելի եղև վճիռ Հռուփելլեայ
և Բլանդոսի՝ որ արդելոյր նմա զհուր և զջուր։ Ո-
րում Դրուսոս հաւանեցաւ, թէպէտ և այլք մեղ-
մագոյն տային վճիռ. և շնորհեցաւ Սկաւրոսի, որում
լեալ էր դուստր 'ի նմանէ, մի զինչս նորա գրաւել
'ի գանձ արքունի։ Յետոյ ուրեմն յայտնեաց և Տի-
բեր զոր 'ի սպասաւորաց Պ. Կուիրինեայ էր տեղե-
կացեալ, զի Լեպիդայ զուն գործեալ էր դեղամահ
առնել զնա։

ԻԴ. Փոխարէն արկածիցն, որ գրեթէ 'ի նոյն ժա-

մանակս միանգամայն հասին երկոցունց ազնուական տոհմից՝ բառնալով զՊիսոն 'ի կալպուրնեանց և զԼԷ-պիդա յեմիլեանց, դարձուցաւ յազգատոհմն յունեան Դ. Սիլանոս. զորոյ համառօտիւ պատմեցից զդէպս։ Դիւցազնին Աւգոստեայ բախտ, որպէս յաջողեաց ընդդէմ հասարակապետութեան, նոյնպէս և ձախողեաց առանին վասն անկարգութեան դստերն իւրոյ և Թոռին. մինչև տարագրել զնոսա 'ի Հռովմայ, և զհոմանիս նոցա պատուհասել մահուամբ կամ աքսորմամբ։ Զի խստագոյն քան զնախնիս և քան զօրէնս իսկ իւր դատեր նա զանօրէնութիւնն յաձախեալ ընդ արս և ընդ կանայս, ամպարշտութիւն կոչելով զայն և քրէական յանցանս։ Զայլոցն պատուհաս ընդ այլ դէպս այնր ժամանակի պատմեցից, եթէ յամբոկ առաջարկութեանս հասեալ՝ այլոց ևս վաստակոց բաւեսցեն ինձ կեանք։ Ա.յլ Դ. Սիլանոս, Թոռին Աւգոստեայ հոմանի, Թէպէտ և ոչ աւելի ինչ կրեաց պատուհաս քան 'ի շնորհայ ինքնակալին անկանել, սակայն զի-տաց զի հարկ էր նմա գնալ յաքսոր. և ոչ իշխեաց, բայց յաւուրս ինքնակալութեան Տիբերի, առնել աղերս առ ծերակոյտն, և առ նա ինքն՝ զօրութեամբ եղբօր իւրոյ Մ. Սիլանեայ, որ երևելին էր ձարտարխօսութեամբ և վեհ ազնուականութեամբ։ Բայց Տիբեր, որում Մարկոս մատուցանէր շնորհակալիս, զայս 'ի ծերակուտի անդ ետ պատասխանի. Ուրախ եմ և ես ընդ դարձ եղբօր քո 'ի հեռաստանեայ նժդեհութենէն, որպէս իրաւունք իսկ էին նմա դառնալոյ. զի ոչ վճռով ծերակուտին, և ոչ յօրինաց անտի դատապարտեալ էր յաքսոր. այլ թշնամանք հօր իմոյ կան մնան առ իս, և ոչ դարձիւ Սիլանեայ դադարէ ցասումն Աւգոստեայ։ — Եւ եկաց նա 'ի Հռովմ առանց աւագութեան իմիք հասանելոյ։

ԻԵ. Առաջարկեցաւ ապա մեղմել զխստութիւն պապեան պոպպեան օրինաց, զորս Աւգոստեայ 'ի ծերութեան իւրում յաւելեալ էր յօրէնս Յուլեայ՝ 'ի հաստատութիւն պատժոց ընդդէմ ամուրեաց, և 'ի ձոխութիւն արքունի գանձուն. զի ոչ այնու յաւելուին հարստանիք և որդւոց դաստիարակութիւն, 'ի զօրանալ անզաւակութեան։ Ա.յլ օր ըստ օրէ յաձախէր բազմու-

թիւն վտանգելոց, զի կործանէին տունք առ հասա-
րակ 'ի բանսարկութենէ, վնասեալ յայնժամ յօրինաց
անտի՝ որպէս յառաջագոյն յանօրէնութեանց։ Եւ այս
ինձ հարկ առնէ 'ի սկիզբն անդր օրինացս 'ի վեր ելա-
նել, և զայսքանեաց անբաւ յաճախութեան և զանա-
զանութեան օրինաց պատմել զպատճառս։

ԻԶ. Որեարն նախնի մինչև էր զակատեալ 'ի զեղ-
խութիւն, առանց չարագործութեան՝ վասն որոյ և
անպատուհաս և անբռնադատ վարէր կենցաղ։ Եւ ոչ
վարձուց ինչ անդ պէտք էին, զի իւրաքանչիւր ոք կա-
մակար հպատակէր պատշաճից. և որ ոչն իմիք ցան-
կայր ընդդէմ լաւութեան, չիսափանէր երբէք եր-
կիւղիւ յիմեքէ։ Այլ 'ի բառնալ հաւասարութեան,
և 'ի փոխանակել փառամոլութեան և բռնութեան
ընդ չափոյից և ընդ լաւութեան, հասին միահեծան
պետութիւնք, և առ բազում յաղագս յարատևեցին։
Կէսք 'ի նոցանէ նոյնհետայն, այլք յետ տաղտկանալոյ
'ի թագաւորաց, խնդրեցին օրէնս. և օրէնքն 'ի սկզբ-
բան անդ, ըստ պարզմտութեան այնր ժամանակի
մարդկան, պարզք էին. յորս ականաւորք կրետացւոցն՝
զորս ետ նոցա Մինոսն, սպարտացւոցն՝ զորս ետ Լի-
կուրգոս, և յետոյ ապա աթենացւոցն՝ 'ի Սողոնէ ե-
դեալ, նրբագոյնք էն և բազմապատիկք։ Իսկ առ մեզ
Հռոմուլոս ըստ հաճոյս իւր ինքնակալեաց, և յետ նո-
ցա Նումա 'ի ձեռն կրօնից և դիցատուր հրամանաց
զժողովուրդն նուաճեաց։ Ցսկզբունս ինչ օրինաց Տուլ-
լոս և Անկոս հանձարեցին, այլ նախկին օրէնսդիր
եկաց առ մեզ Սերուիոս Տուլլիոս, զթագաւորս իսկ
հպատակս կացուցանելով օրինաց։

ԻԷ. Յետ վարելոյ 'ի բաց զՏարկուինիոս, ժողովուրդ
Հռովմայ ընդդէմ պառակտման աւագանւոյ բազում
ինչ հոգացաւ, առ 'ի պահպանել զազատութիւն և հաս-
տատել զմիաբանութիւն։ Տանպէտք կարգեալ, որ ինչ
ուրեք ցայն վայր բարւոք էր սահմանադրեալ՝ 'ի կիր ա-
ռին, յօրինել զերկոտասան տախտակն՝ արդար իրա-
ւանց լրումն։ Զի որ ինչ յետ այնորիկ օրէնք, թէպէտ
երբեմն և ընդդէմ չարագործաց առ 'ի սանձահարել
զեղեռն սահմանեալք, այլ բազում այն է՝ զի վասն տա-
ռաձայնութեան աւագանւոյ և ռամկին, վասն փառա-

մոլութեան անիրաւ իշխանութեան և հալածելոյ զարս երևելիս, կամ այլոց ինչ չարեաց աղագաւ բռնի ե-դան։ Աստի Գրակքեանք և Սատուրնեանք խռովիչք ժողովրդեան, և ոչ ինչ նուազ քան զնոսա Դրուսոս ա-ռատապարգև 'ի դիմաց ծերակուտին. և նիզակակիցք կաշառեալք յուսով, կամ մերժմամբ զայրացեալք։ Ոչ պատերազմն իտալական, և ոչ զհետ այնորիկ քաղա-քականն, արգել զսահմանադրութիւն յաձախելոց և ներհական օրինաց. մինչև Լ. Սիլլայի իշխանապետի խափանեալ կամ փոփոխեալ զառաջինն, և յաւելեալ 'ի նոսա նորանորս, դադարումն արար իրացն՝ այլ ոչ եր-կարատև. զի ընդ հուպ Լեպիդեայ խռովարար առաջ-արկութիւնք, և յետ սակաւ մոյ ազատութիւն անդ-րէն շնորհեալ հազարապետաց ժողովրդեան, շրջէին զնա յոր կոյս և կամէին։ Ոչ ևս այնուհետև հասարա-կաց՝ այլ ընդդէմ իւրաքանչիւրոց սահմանէին օրէնք, ըստ ապականեալ հասարակապետութեան բազմա-պատկեալք։

ԻԸ. Յայնժամ Կն. Պոմպէի, 'ի կալ նորա երրորդ անգամ բդեաշխ, յանձնեցաւ յուղղութիւն ածել ըզ-բարս։ Որոյ օրէնք ճնասակարագոյն քան զանօրէնու-թիւնս եղեն. և ինքնին իսկ օրէնսդիրն տապալիչ օրի-նացն իւրոց կացեալ, զորս զինուքն պաշտպանէր՝ զի-նուք և կորոյս։ Ընդ ամն քսան տիրեցին այնուհետև հերձուածք. ոչ ուրեք լաւութիւն, ոչ իրաւունք, ան-պատուհաս ո՛ր և է չարիք, և մահաւիթ բազմաց ա-ռաքինութիւն։ Աւգոստ կէսար վեցերորդ անգամ կա-ցեալ բդեաշխ, աներկիւղ ընդ իշխանութիւն իւր՝ ե-բարձ զոր յեռապետութեանն իւրում օրինադրեալ էր, և սահմանեաց իրաւունս՝ առ 'ի վարել մեզ զկեանս 'ի խաղաղութեան ընդ իշխանաւ։ Խստագոյնք այնուհե-տեւ յաւելան կապանք, և օրինապահք՝ ըղձակերտք մրցանակաց պապեան պոպպեան օրինաց. զի ժառան-գութիւնք զրկելոց 'ի հայրենի իրաւանց՝ անկանէին ժողովրդեան Հռովմայ, որպէս հօր հասարակաց, ինչք անտէրունչք։ Խորամուխ 'ի ներքս մտին յայնժամ բան-սարկութիւնք, և տիրեցին 'ի Հռովմ, Իտալիա, և որ այլ ուրեք էին քաղաքակիցք. զբազմաց կործանեցին զտունս, յամենեսին արհաւիրս արկանէին. մինչև Տի-

բեր առ՝ի խափանել զչարիսն՝ հինգ այր՝ի կացելոց երբեմն բդեաշխ, և հինգ յորոց կացեալ էին երբեմն կուսակալ, և նոյնչափ՝ի ծերակուտէն ընտրեաց վի-ճակաւ, լուծանել զբաղումն՝ի կապանաց անտի. ո-րով փոքր մի սփոփումն եղև արդեաց։

ԻԹ. Զայնու ժամանակաւ ինքնակալն զմի յորդւոց Գերմանիկեայ զՆերոն յանձնեաց ծերակուտին, վար-ժել զնա՝ի պաշտօն քահանայապետութեան. և ոչ առանց ծաղու լսողաց խնդրէր ընդունել զնա՝ի հետամուտս գանձապետութեան, հինգ ամաւ յառաջ քան զՀա-սակն սահմանեալ յօրինաց, զնոյն ասելով շնորհեալ ինքեան և եղբօր իւրում ըստ խնդրոյ Աւգոստեայ։ Այլ ոչ ինչ երկբայիմ զի և յայնժամ ընդ խնդիր Աւ-գոստեայ լեալ իցեն ժպտօղք լռելեայն. սակայն կայ-սերաց դեռ այն ինչ յայնմ ժամանակի նշողէին փառք, դեռ յաչս նոցա էր նախնին սովորութիւն, և հօրուի ընդ երջուի ոչ այնպէս անձուկ է զօդ՝ որպէս հաւոյ ընդ թռուին։ Յաւել ծերակոյտն տալ նմա և քրմապետու-թիւն. և յաւուր՝ յորում Եմուտ Ներոն յատեան՝ ե-ղէն բաշխոյք ռամկին, որ՝ի տեսիլ հասանելոյ զաւա-կին Գերմանիկեայ յարքունս՝ մեծապէս ուրախանային։ Եւ առաւելաւ ուրախութիւն նորս հարսանեօքն Ներ-ոնի ընդ Յուլեայ դստեր Դրուսոսի։ Այլ որպէս հա-ճոյ թուեցաւ այս ամենեցուն, նոյնպէս և դժպհի եղև նոցա լինել Սէանոսի զոքանչ ուստեր Կլաւդեայ. զի համարէին նուաստացուցանել այնուիկ Տիբերի զաղնուականութիւն տան իւրոյ, և կարի ամբառնալ զկեղակարծելին վասն փառամոլութեանն։

Լ. Ի կատարած ամին վախճանեցան Լ. Վոլուսիոս և Սալուստիոս Կրիսպոս, արք ականաւորք։ Աղգատոհմն Վոլուսեայ, թէպէտ և վաղեմի, չէր ընկալեալ աւելի ինչ քան զկուսակալութիւն. ինքն եկաց բդեաշխ, և զհամարակալութեան ևս արար զպաշտօն՝ առ՝ի կազ-մել հեծելագունդս տասնաւորս, և ինքն սկսաւ մթե-րել գանձս՝ որովք աղգատոհմ իւր ամբաւ ճոխու-թեամբ պայծառացաւ։ Կ. Սալուստիոս, իրաց հռով-մայեցւոց գերահռչակ պատմիչ, զՍրիսպոս թոռն քեռ իւրոյ յաղգէ ասպետաց ընկալաւ իւր յորդեգիրս. որում թէպէտ և բաց էր ուղի հասանելոյ յաւագու-

թիւնս, այլ ինքն նախանձաւոր լեալ Մեկենասայ՝ առանց ատենակալութեան 'ի ծերակուտին՝ զբաղմաք 'ի յաղթականայ և 'ի բդեշխից դերազանցէր կարողութեամբ։ Այլազան 'ի նախնեաց էր նորայն կենցաղ, դարմանէր զանձն և պաճուճէր, և ճոխութիւն նորա և առատութիւն 'ի տան՝ գրեթէ հաւասարէր զեղխութեան. այլ բերէր ընդ նոքաքյանձին կորով ոգւոյ ձեռնհաս 'ի մեծամեծս. և այնչափ առաւել էր գործունեայ, որչափ թուէրն քնեաց և դանդաղ։ Վասն որոյ ցորչափ կեայրն Մեկենաս՝ երկրորդ էր 'ի մտերմութիւն ինքնակալաց, այլ ապա եղև առաջին խորհրդակից գաղտնեաց նոցա, և համախոհ գտաւ սպանութեան Պոստումեայ Ագրիպպայ։ Բայց 'ի ծերութեան զկերպարանս քան զզօրութիւն մտերմութեան ունէր առ ինքնակալին, որպէս և Մեկենաս. բախտին իշխանաց դուն ուրեք յարատևելով, թէ արդեաք և տաղտկանալով նոցա շնորհել զամենայն մտերմաց իւրեանց, կամ սոցա 'ի պատահել ամենայն ըղձից իւրեանց։

ԼԱ. Յետ այսորիկ չորրորդ անգամ Տիբեր, և երկրորդ անգամ Դրուսոս կացին բդեաշխ, ըստ ոչ սովորութեան հայր ընդ որդւոյ իշխանակից. զի թէպէտ զերկեամ մի յառաջ և Գերմանիկ իշխանակից կացեալ էր ընդ Տիբերի, այլ ոչ հաճութեամբ հօրուին և ոչ անձուկ արենակցութեամբ։ Ի սկզբան ամին Տիբեր պատճառանաք հաստատելոյ յառողջութիւն՝ մեկնեցաւ 'ի Կամպանիա, անդստին երկնեալ 'ի մտի կալ ընդերկար և անընդհատ 'ի բացեայ, առ 'ի թողուլ զԴրուսոս միայնակ առանց օգնականութեան իւրոյ 'ի պաշտօն բդեշխութեան։ Դէպք ինչ դուշնաքեայ, այլ բազում վիճից առիթ, պատճառս ետուն պատանւոյն յինքն յանկուցանելոյ զսիրտ քաղաքայնոց։ Դոմիտիոս Կորբուլոն, երբեմն կուսակալ, բողոք կալաւ 'ի ծերակուտի՝ զի 'ի տեսարանս խաղուց սուսերամարտի ազատորդին Սիլլա չէր տուեալ նմա տեղի։ Կորբուլոնի իրաւունս տային հասակ նորա, սովորութիւն հայրենի, և ալեաց մեծարանք. իսկ Սիլլայի օգնէին Մամերկոս Սկաւրոս, Լ. Աբրոնտիոս, և այլ ազգականք նորին։ Երկուստեք բանակռուութիւնք եղեն, օրինակս ածեալ 'ի նախնեաց՝ որք վճիռս ծանուցանս պատուհա-

սից ածէին արհամարհոտ մանկտուց անաչառապէս. մինչև Դրուսոս հաշտարար բանիւք հանդարտեցոյց զամենեսեան, և զԿորբուլոն ցածոյց 'ի ձեռն Սկաւրոսի՝ որ հօրեղբայր էր Սիլլայի միանգամայն և յօրայ, և վեհագոյն 'ի Ճարտարախօսս ժամանակին։

Նոյն ինքն Կորբուլոն բողոք ունէր անդադար ըզՃանապարհաց Իտալիոյ, որք գործակալացն զօշաքաղութեամբ և ատենակալաց անհոգութեամբ կային աւեր և անգնալի. և մտադիր յանձն էառ զհոգ այնոցիկ։ Այլ ոչ այնչափ օգուտ աշխարհին որչափ տոյժս հասոյց բաղմաց, զրկեալ զնոսա յընչից և 'ի համբաւոյ՝ դատափետութեամբ, և ածելով զինչս նոցա 'ի վաճառ հասարակաց։

ԼԲ. Յետ ոչ բազում ժամանակի ծանոյց ծերակուտին Տիբեր նամականուով զաղմկել անդրէն Աֆրիկեայ 'ի յարձակմանէ Տակֆարինայ, և յանձն առնէր նոցա ընտրել զոք փոխանակ բդեշխի հմուտ զինուորութեան և հուժկու 'ի տոկ մարտի։ Զայն պատեհ էառ Սէքստոս Պոմպէոս 'ի Թափել զատելութիւն իւր ընդդէմ Մանիոսի Լեպիդեայ, վատ զնա ամբաստանելով և պըղերգ 'ի նախատինս նախնեաց իւրոց, և ոչ արժան համարելով յղել զնա փոխանակ բդեշխի յԱսիա։ Այլ ոչ հաճոյ թուեցաւ այն ծերակուտին՝ որ զԼեպիդոս հեզոք ճանաչէր քան թէ վատ, և զհայրենի չքաւորութիւն նորա՝ որով ոչ ինչ յազնուականութենէ իւրմէ վերջացեալն էր՝ ի փառս նմա քան 'ի նախատինս համարէր։ Վասն որոյ յղեցաւ նա յԱսիա. իսկ 'ի կուսակալութիւն Աֆրիկեայ նմին իսկ կայսեր ապաստան արարին ընտրել զոք։

ԼԳ. Յայնժամ Սևերոս Կեկինա եհարց՝ թէ չէր արդեօք արդելեալ՝ ածել կուսակալն զկին իւր 'ի դաւառ կուսակալութեան իւրոյ, և յաւել. Ի և իմ ամուսին, վեցից որդւոց մայր, և զոր պահանջեմն յայլոց՝ արարի ինձէն, թողեալ զնա միշտ յԻտալիա՝ 'ի մղել իմում քառասուն պատերազմունս յայլևայլ դաւառս։ Ոչ վայրապար սահմանեալ էր երբեմն՝ մի զկանայս ածել զհետ յաղգս նիզակակիցս կամ օտարոտիս. զի ընկերութիւն կանանց աղմկէ զխաղաղութիւն զեղխութեամբ, և զպատերազմ արհաւրօք. և զբանակն

հռոմէական՝ բարբարոսականացն հաւասարէ։ Բնու-
թիւն կանացի տկար և անզօր 'ի վաստակ, 'ի գտանելն
ազատութիւն՝ անգթանայ, փառամոլն և տիրապե-
տել ցանկայ. Ձեմին արդ կանայք ընդ ռազմն զօրա-
կանին, հրամայեն հարիւրապետաց, և ոչ բազումժա-
մանակք են՝ զի մի 'ի կանանց հանդիսադիր վարժից
զօրականին և լեգէոնաց կայր։ Գիտէ իսկ ծերակոյտդ,
զի յամենայն դատաստանս հարստահարութեանց բա-
զումն այն է՝ զի և կանայք գտանին ամբաստանեալք. առ
նոսա դիմեն նախ ապիրատագոյնք գաւառին, նոքա
յանձանձեն զիրս և նոքա սահմանեն. երկուց ոմանց
հարկանի սպաս, կրկին ատեանք դնին, և հզօրագոյն
և անդարձ կանանուոյն են վճիռք։ Որք երբեմն ոպ-
պեան օրինօքն կապեալք, արդ լուծեալ'ի կապանաց
անտի՝ առտնին, յատեանս, և 'ի բանակս իսկ հրա-
մայեն։—

ԼԴ. Սակաւուց ոմանց հաձոյ թուեցան բանքս. այլք
բազումք բողոք բարձին՝ զի ոչ զայնմանէ էր առաջար-
կութիւնն, և ոչ Կեկինայ իշխանութիւն դատելոյ
զայն։ Յայնժամ Վալերիոս Մեսալինոս, որոյ հանգու-
նատիպ հօրն իւրոյ Մեսալայ էր Ճարտարխօսութիւն,
պատասխանի ետ և ասէ. Խստութիւնք նախնեաց բա-
զումք ամոքեալ՝ 'ի լաւ անդր ընկալան փոփոխումն. զի
ոչ արդ՝ որպէս երբեմն՝ առ դուրս հասանեն մեզ պա-
տերազմունք, և ոչ գաւառք Հռովմայ թշնամիք են
նմա։ Սակաւ ինչ և կարևորութեան կանանուոյ շնոր-
հեսցի, որ ոչ նիզակակցաց և ոչ արանց իւրեանց ա-
ծեն բեռն. զի և յայլում ամենայնի ընդ արս 'ի միա-
սին կան, առանց ինչ խափան լինելոյ խաղաղութեան։
Ապաքէն ազատ 'ի հոգոց պարտ է գոլ երթելոց 'ի պա-
տերազմ. այլ յետ վաստակոց պատերազմի՝ զինչ հա-
մեստագոյն սփոփումն.քան զկենակցութիւն ամուսնոյ։
Իցեն ոմանք 'ի նոցանէ 'ի փառամոլութիւն կամ յա-
գահութիւն զակատեալ. այլ'ի նոցունց իսկ 'ի կուսա-
կալաց չիցեն բազումք պէսպէս ցանկութեանց ներքոյ
անկեալ, և սակայն առաքին 'ի կուսակալութիւն. 'ի
յոռութենէ կանանց եղծան յաձախ արք, այլ մի՛ թէ
անէ՞ղծք իցեն ամուրիք ամենեքեան։ Ոպպեան օրէնք
ընդունելի երբեմն էին, հասարակապետական ժամա-

նակին զայն այնպէս պահանջելով. ամոքեցան ապա և մեղմեցան, զի այսպէս օգուտն պահանջէր։ Ի զուր զվատութիւն մեր այլաբանութեամբ պատրուակեմք. արանց են յանցանք՝ ելանել կանանց ըստ սահման. օրէն ի՞նչ՝ վասն միոյ ուրուք կամ երկուց փոքրոգութեան՝ զրկել զայր՝ի կցորդութենէ կնոջ իւրոյ յարկածս և՝ի յաջողութեան։ Դարձեալ զի և չէ պարտ թողուլ զանաւագ բնութիւնն՝ի վտանգ իւրոյին ցանկութեան, և վրնջանաց այլոց. եթէ առընթեր իսկ կալով՝ հազիւ անարատ պահին հարսանիք, զի՞նչ լիցի եթէ զամն բաղումն՝ որպէս թէ ապահարզանիւ՝՝ի մոռացօնս անկանիցին։ Ի խնամել որ ինչ այլուր պատահեն չարիք, պարտ է և զքաղաքիս յիշել զառածանս։— Յաւել համառօտիւ և Դրուսոս զանձնէ. Պարտ է իշխանաց՝՝ի ծագս ինքնակալութեան յաճախ գնալ. քանիցս և դիւցազնն Աւգոստ յարևմուտս և յարևելս՝՝ի միասին ընդ Լիւիայ չոգաւ. ինձ իսկ եղև՝՝ի Լիւրիկէ՝ ըստ հարկի իրաց երթալ, և յայլ գաւառս. այլ ոչ ևս երթայց մնադիւր, եթէ հասանէ ինձ մեկնել յամուսնոյ իմմէ սիրով սիրեցելոյ՝ որ այպանեաց ինձ որդւոց է մայր։— Եւ այսպէս մերժեցաւ առաջարկութիւն Կեկինայ։

Ա. Ի միւսանգամ ժողովել ծերակուտին՝ Տիբեր՝՝ի ձեռն նամականոյ, յեղանակաւ իմն յանդիմանեալ զՀարս՝ զի զամենայն հոգ ինքեան թողուին, առաջարկեր զՄ. Լեպիդոս և զՅունիոս Վլեսոս՝ ընտրել զմի յերկոցունց փոխանակ բդեշխի յԱֆրիկէ։ Լեպիդոս յոգնաթախանձ աղերսանօք հրաժարեաց՝ զանառողջութիւն իւր՝՝ի մէջ բերեալ, զմանկութիւն որդւոցն, և զդուստր իւր հարսնացու։ Ուստի՝՝ի միտ առնուլ էր զոր լռէրն, զի Վլեսոսի անկ համարեր նախամեծար լինել՝ եղբօրորդի գոլով Սէանոսի։ Վլեսոս ևս պատճառէր հրաժարել, այլ ոչ նոսրին հաստատութեամբ. և վասն մարդահաճոյից համախոհութեան՝ չեղև հրաժեշտ նորա ընդունելի։

ԼԶ. Առաջարկեցան ապա որ ինչ առանձինն ցայն վայր լինէին՝՝ի բազմաց տրտունջք. զի ապիրատ ոք քան զամենեսին, եթէ միայն զպատկեր ինքնակալին կրէր, կարէր անպատուհաս զլաւորեարն նախա-

տել և թշնամանել։ Զերբաղատից իսկ և ծառայից մարթ էր սպառնալեօք և ձեռընձգութեամբ ահ արկանել ազատչաց իւրեանց և տերանց։ Վասն որոյ Կ. Կեստիոս ատենակալ խօսեցաւ և ասէ. Զդէմս դից բերեն իշխանք. այլ դիք ոչ լսեն, բայց միայն արդար աղերսանաց. և ոչ'ի Կապիտոլ կամ յայլս'ի մեհենից ոք ապաստանի՝ գործել յամրի անդ ոճիրս։ Եղծան և'ի հիմանց տապալեցան օրէնք՝ յորմէհետէ Անիա Հռուփիլլա դատապարտեալ'ի դաւ, առ սեամն ատենին թշնամանօք սպառնայր ծերակուտին՝ առանց իշխելոյ Հարց բողոքել, վասն առարկելոյ նորա ընդդէմ զպատկեր ինքնակալին։ Ոչ ինչ ընդհատ և այլք ոմանք դժնդակագոյնս աստի և անտի բողոքէին՝ աղաղաչելով զԴրուսոս առնել վրէժխնդրութիւն առ'ի խրատ. մինչև Հռուփիլլա կոչեցեալ յատեան, և պարտաւորեալ արկաւ'ի բանտ։

ԼԷ. Կոնսիդիոս Եկուոս և Կելիոս Կուրսոր, ասպետք հռովմայեցիք, որոյ զՄեկիոս Կեկիլիանոս կուսակալ'ի քրիստեական յանցանս զրպարտեալն էր, պատուհասեցան ըստ խնդրոյ ինքնակալին՝ հրովարտակաւ ծերակուտին։ Երկոքին իսկ դէպքս այսոքիկ եղեն'ի փառս Դրուսոսի. և զի սա'ի քաղաքամիջի'ի ժողովս և'ի խօսակցութիւնս ընդելեալ՝ զհօրն անընդելութիւն ամոքէր, ոչ անհաճոյ թուէր բերումն պատանւոյն'ի հաճոյս, և ասէին. Լաւ իցէ նմա ըստ իւրումն յօժարութեան զտիւ'ի տեսարանս և զգիշեր'ի խրախունս հանել, քան մենաւոր անխոսիան'ի հաճոյից՝ տքնել տխրագին'ի հնարս չարեաց։ —

ԼԸ. Զի ոչ Տիբեր, և ոչ դատախազք պարտասէին երբէք։ Անգարեայ Պրիսկոսի ամբաստանեալ էր զԿեսիոս Կորդոս, զփոխանակն բդեշխի'ի Կրետէ,'ի հարբաստահարութիւն՝ որ ամենայն ամբաստանութեանց լրումն էր, և եղեռն քրիստական։ Տիբերի գիտացեալ զի Անտիստիոս Վետեր՝ մի յաւագաց Մակեդոնիոյ՝ արձակեալ էր յատենի'ի յանցանաց շնութեան, կրշտամբեալ զդատաւորսն՝ ետ ածել զնա անդրէն յատեան որպէս խռովարար համախոհ Հռեսկոպոլի'ի սպանութիւն եղբօր իւրոյ Կոտեայ, և'ի պատերազմ ընդդէմ մեր։ Վասն որոյ արգելեալ յանցաւորին զհուր

և զՋուր, պատուէր տուաւ ունել զնա 'ի կղզւոջ ուրեք հեռի 'ի Թրակիոյ և 'ի Մակեդոնիոյ. զի Թրակիա, յորմէ հետէ բաժանեալն էր պետութիւն աշխարհին 'ի Հռոմեոտալկէս և յորդիս Կոտեայ՝ որոց խնամակալ վասն մանկութեան տիոցն էր Տրեբելլիենոս Հռուփոս, հետէր մեզ և մեղադրէր Հռոմեոտալկեայ և Տրեբելլիենոսի՝ զի զԹշնամանս ժողովրդեանն Թողուին անպատուհաս։ Կելէտք և Ոտրուսք և այլ ազգք հզօրք զէնս առին, կացեալ նոցա զօրավարք ոչ ինչ ընդհատ 'ի միմեանց աննշանք. որոց անմիաբանութեամբ չեղև ինչ դժուարայաղթ պատերազմն։ Կէաք զերկիրն յարուցին 'ի զէն, այլք հատին անցին ընդ լեառն Հեմոս՝ դրդել զազգս հեռաւորս. և բազմագոյնք՝ քաջակիրթք 'ի զէն՝ պաշարեցին զԹագաւորն 'ի Փիլիպպոպոլիս քաղաք, կառուցեալ 'ի Փիլիպպեայ մակեդոնացւոյ։

ԼԹ. Այդ եղև Պ. Վէլլէոսի, որ մերձաւորագունի բանակին էր զօրավար, և արձակեաց զՀեծելագունդս Թևոց բանակին և զգունդս մեկնակազէնս ընդդէմ հրոսակաց՝ որք ասպատակէին յաւար կամ 'ի գիւտ օգնականութեան. իսկ ինքն ընիւ հետևակազօրուն խաղաց գնաց բառնալ զպաշարումն 'ի բաց։ Դէպք 'ի բարի ամենայն ուրեք յաջողեցին նմա, ասպատակք հարեալ, հերձուած 'ի զօրս՝ որ պաշարէին՝ անկեալ, Թագաւորին 'ի դէպ ժամու 'ի դուրս յարձակեալ, և լեգէոնական զօրացն յօգնականութիւն հասեալ. որպէս զի ոչ ձակատամարտ և ոչ պատերազմ արժան էր կոչել զայն, զի զօրք մեկնակազէնք և վարատականք եղէն անդ սրախողխող՝ առանց մերոցն արիւնհեղութեան։

Խ. Ի նմին ամի քաղաքանին գալլիացւոց 'ի ծանրութենէ պարտեաց նեղեալ՝ յապրստամբութիւն մտաբերեցին, որոց հզօրագոյն դրդիչք եղէն Յուլիոս Փլորոս 'ի Տրևիրայ, և Յուլիոս Տակրովիր յԵդուեանց. երկոքին ևս ազնուականք, որոց նախնիք վասն բարերարութեանցն արժանի լեալ էին իրաւանց հռովմէական քաղաքակցութեան, 'ի ժամանակի՝ յորում իրաւունքս այս առաքինութեան ևեթ էր վարձ։ Ի գաղտնի բանակցութիւնս ժողովէին դյանդգնագոյնս, կամ որոց

առ կարօտութեան կամ երկիւղի պատուհասից հարկ էր ձեռնարկել յեղեռնագործութիւն. խորհուրդ կալան՝ յարուցանել Փլորեայ զբելգացիս, և Սակրովիրի զգալլիացիս մերձաւորս իւր։ Արդ յատեանս իւրեանց և'ի ժողովս զրոյց խռովարար 'ի մէջ առեալ զանսպառելի հարկաց, զվաշխից ծանունց, զխստութենէ և զգոռոզութենէ կուսակալաց, յեղյեղելին զի տարաձայնութիւն էր 'ի զօրս մերյետ մահուն Գերմանիկեայ, և զի դէպ ժամանակ էր դառնալոյ ինքեանց յազատութիւն, իբր թէ հզօրք էին ինքեանք քան զչքաւորեալն Իտալիա և քան զկնատեալ ժողովուրդ Հռովմայ, և զի բանակաց մերոց ամենայն զօրութիւն յայլազգի զօրս էր։

ԽԱ. Զեկաց գրեթէ և ոչ մի 'ի քաղաքաց զերծ 'ի լուցկեաց ապստամբութեան. այլ առաջինք 'ի յարձակումն եղեն Անդեկաւք և տուրոնացիք։ Զառաջինն հալածեաց Ակիլիոս Աւիոլա մարզպետ, խաղաղուցեալ ընդդէմ նոցա զգունդն՝ որ նստէր 'ի պահ Լուգդունի. իսկ զտուրոնացիս նոյն ինքն Աւիոլա լեգէոնական զօրօք, զորս Վեսիլեայ Վարրոնի՝ ստորինն Գերմանիոյ կուսակալի՝ յղեալն էր, նուաճեաց. յորս յաւելան և ազնուականք ոմանք 'ի գալլիացւոց անտի, ծածկելով զվտարանքութիւն իւրեանց՝ պատեհագոյն ժամանակի պահեալ զայն։ Սակրովիր բացաւ գլխով պատերազմէր 'ի վերայ հռովմայեցւոց 'ի ցոյց քաջութեան, որպէս պարծէրն. այլ 'ի գերելոց անտի ծանուցաւ՝ 'ի նշանակ իւր արարեալ այնպէս, առ 'ի զերծանել 'ի նեռից։ Տիբերի հարցեալ զայնմանէ՝ չետ կասկածանացն տեղի, և երկբայութեամբ իւրով յամեցոյց զպատերազմն։

ԽԲ. Փլորոս պինդ 'ի խորհուրդս իւր կացեալ, 'ի փորձ մատոյց զթև հեծելազօրուն՝ որ խմբեալ 'ի Տրևիրաց և ըստ մերումն զինուորական օրինի հրահանգեալն էր՝ նախաձեռն առնել մարտին, կոտորածիւ վաճառականաց հռովմայեցւոց. ոմանք 'ի նոցանէ տեղի ետուն հրապուրանացն, բազմագոյնք պատկառ կացին պարտուցն իւրեանց։ Այլ ամբոխ պարտապանաց նորա և պաշտպանելոց 'ի նմանէ զէն առեալ, դիմէին յանտառն Արդուենեայ. յորոց վերայ հասեալ յայլ

Լայլ կողմանց լեգէոնք երկոցունց բանակացն Վիսելլեայ և Կ. Սիլիոսի, արգելին զանցս նոցա։ Եւ Յուլիոս Ինդոս քաղաքակից Փլորեայ, ոխերիմ նորին, վասն որոյ և սաստկագոյն ընդդէմ նորա պատերազմակից ընդ մեզ, զօրահատոյց լեալ այրընտիր գնդաւ ցրուեաց զգուգաղն խառնակոյտ՝ չև ևս կրթեալ։ Փլորոս 'ի խորշս անծանօթս խոյս 'ի յաղթականացն տուեալ, 'ի տեսիլ շրջապատելոյ զօրաց զտեղեաւն՝ ուր ապաստանեալ էր՝ չոգաւ զիւրովին։ Այս եղև Տրևիրացն վտարանջութեան ելք։

ԽԳ. Ծանրագոյն եղուացուցն եղև պատերազմ, զի հզօր էր քաղաք նոցա, և զօրութիւն մեր հեռի՝ առ 'ի նուաձել զնոսա։ Սակրովիրի սպառազէն գնդիւք կալեալ էր զԱւգոստոդոն մայրաքաղաք, և զազատորդիս գալլիացւոց՝ որ անդ ազատական վարժից պարապէին. որպէս զի 'ի ձեռն պատանդիցն զծնողս նոցա և զմերձաւորս յինքն յարեցուցեալ. և բաշխեալ էր մանկտւոյն զէնս դարբնեալս 'ի ծածուկ։ Եւ եղեն քառասուն հազար զօրք. որոց հինգերիր մասն լեգէոնական զինուք վառեալ, իսկ այլք շամիրօք և այլովք որսորդական զինուք։ Յաւելան 'ի նոսա և ստրուկք 'ի սուսերամարտ սահմանեալք, որ երկաթակուռքն ըստ սովորութեան երկրին կոչէին, երկաթի զրահիւք համակ ծածկեալք, անաջողք 'ի հարկանել՝ այլ հարուածոց անտեղիտալի։ Յաւելուին և ևս զօրք արամբք, որք 'ի մօտակայ քաղաքաց գային ինքնամատոյցք՝ չև քաղաքացնոցն յայտնեալ զհամախոհութիւն, և տարաձայնութեամբ զօրավարացն հռովմայեցւոց՝ որ վիճէին երկաբանչիւր առաջնորդել պատերազմին, մինչև Վարրոնի տկարացելոյ 'ի ծերութենէ տեղի տալ Սիլեայ՝ որ յաստիս երիտասարդութեանն էր։

ԽԴ. Բայց 'ի Հռովմ ոչ զՏրևիրացն ևեթ և զեղուացւոց, այլ զվաթսուն և վեց այլ ևս քաղաքաց գալլիացւոց վտարանջելոյ հնչէր համբաւ՝ առաւելութեամբ, որպէս սովորն է, և գերմանացւոց ևս միաբանելոյ ընդ նոսա, և սպանիացւոց գայթ 'ի գայթի կալոյ։ Լաւ ուրեարն հոգովք աշխարհին տխրեալ կայր. բազումք տժգոհք զտեսչութենէ ժամանակին՝ ըղձիւք յեղափոխութեան ընդ վտանգս իսկ իւրեանց ուրախանային,

և Թշնամանէին զՏիբեր, զի յայնքան աղմուկ աշխարհին՝ 'ի նամականի չարախօսացն ամբաստանութեան պարապէր, և ասէին. Թող զՅուլիոս Սակրովիր՝ քրէական եղեռան պարտաւոր՝ տացէ ածել յատեան. էն՝ որ զինուք զարիւնռուշտ նամականին արգելուցուն. լաւ է պատերազմ քան զԹշուառս զայս խաղաղութիւն։— Բայց Տիբեր, իբր թէ յապահովի, առաւել ևս անշարժ 'ի կայից և անխռով դիմաք անցուցանէր զաւուրս իւր՝ որպէս միշտն, արիութեամբ սրտապնդեալ, և կամ զի իրազեկ լեալ էր թեթևագոյն քան զհռչակ համբաւոյն զկրացն գոլ պատահումն։

ԽԵ. Յայնմ վայրի Սիլիոս երկոքումբք լեգէոնօք յառաջ խաղացեալ՝ արձակելով առաջի իւր զօգնական գունդս, ասպատակէր 'ի շէնս սեկուացւոց, որ սահմանակիցք գոլով և նիզակակիցք եղուացւոց՝ զէն ընդ նոսա առեալ էին։ Անտի դիմեաց յԱւգոստոդոն՝ վաբեալ զբանակն շտապաւ, դրօշակրաց եւևելս առնելով զմիմեամբք 'ի փոյթ, և զօրականին չհանդուրժեալ յամել 'ի սովորական կայս և 'ի հանգիստ գիշերոյ՝ առ 'ի հասանել վաղ առ Թշնամիս, զի երևել իսկ նոցա շատ էր 'ի յաղթութիւն։ Ձերկոտասաներորդ մղոնաքարիւ երևեցան Սակրովիր և զօրք նորա 'ի դաշտի. 'ի ձակատու կացուցեալ էր նորա զերկաթազէնս, զհետևակազօրն 'ի թևս, և վերջապահ զմեկնակազէնս. իսկ ինքն ամենի երիվարաւն՝ շուրջ պատեալ 'ի զօրապետաց՝ ձեմ առնոյր, զնախնեացն գալլիացւոց յուշ ածելով զփառս՝ որ ինչ հռովմայեցւոց հասուցեալ էին արկածս, և թէ քանի՛ գեղեցիկ էր յաղթողաց ազատութիւն, և քանի՛ դժոխրմբեր պարտելոց ծառայութիւն։

ԽԶ. Ձայսոսիկ ոչ ինչ երկարաբանեաց, և ոչ զուարթութեամբ լսելի եղև. զի հասանէր լեգէոնացն ձակատ, և զօրքն խառնակոյտ՝ անհմուտք 'ի զէն, գուգազ 'ի շինականացն կազմեալ, ոչ տեսելոցն և ոչ լսելեաց զգային։ Իսկ Սիլիոս, թէպէտ և կանխակալ յուսոյն բարձեալ էր զամենայն պէտս խրախուսանաց, սակայն գոչէր ստէպ. Ամթ է յաղթականացս Գերմանիոյ՝ իբրև 'ի Թշնամիս ահաւորս 'ի վերայ գալլիացւոց դիմել. ջոկատիւ միով ահա բեկաւ տուրոնացին ապստամբ. մի 'ի թևոց նուաձեաց զՏրևիրս, և սակա-

ւաձեռն գունդք բանակիս հարին զսեկուացիս. Ե-
դուացւոց այնչափ նուազ է զօրութիւն, որչափ առա-
ւել է փարթամութիւն և զեղխութիւն 'ի գրգանս.
յաղթահարեցէք զնոսա, հալածեցէք փախստեայս։ —

Զօրքն առ հասարակ խրախոյս բարձին. հեծելազօրն
շուրջ պատեաց զթեւս թշնամւոյն, հետևակազօրն յար-
ձակեցաւ 'ի բուն անդր բանակին. վաղ բեկան թեւքն,
սուղ ինչ զդէմ կալան երկաթազէնք՝ զրահիւքն ան-
թափանցք սուսերաց և նիզակաց։ Բայց զօրականին
բուռն հարեալ 'ի սակր և 'ի տապար՝ Եհերձ, որպէս
խրամատ 'ի պարիսպս գործելով, զպահպանակս և զպ-
պահպանեալս ընդ նոքօք. այլք ձանկովք և լծակօք
զթանձրադանդաղ բլուրսն կործանէին, որք իբր ան-
կենդան դիակունք տապաստ անկեալ մնային անյա-
ւիր։ Սակրովիր մեկնեցաւ 'ի սկզբան յԱւգոստոսէն.
այլ ապա առ ահին՝ թէ գուցէ ստիպեսցի անձնատուր
լինել՝ դիմեաց ընդ հաւատարիմս իւր 'ի մերձակայ
ուրեք ամրաստան. ուր ինքն անձին սրար, և այլք
զիրեարս հարեալ սպանան. և տունն հրդեհեալ 'ի նո-
ցանէ՝ եղև 'ի խարոյկ բոլորից։

Խէ. Յայնժամ ապա գրեաց Տիբեր առ ծերակոյտն
զսկիզբն և զկատարած մարտին, առանց լռելոյ ինչ, և
առանց յաւելուածոյ։ Այլ 'ի վերայ ածէր՝ հաւատար-
մութեան և քաջութեան տեղակալացն, և հրահան-
գաց յիւրմէ տուելոց կանգնեալ զյաղթանակն. և յա-
ւելոյր՝ վասն որոյ իրաց ոչ ինքն և ոչ Դրուսոս երթեալ
էին 'ի պատերազմ անդր, զմեծվայելչութիւն ինքնա-
կալութեանն բարձրացուցեալ, առ 'ի ցուցանել՝ զի ոչ
վայելէր ինքնակալի՝ վասն վտարանչութեան միոյ կամ
երկուց քաղաքաց՝ մեկնել 'ի Հռովմայ, ուստի գնան
հրամանք 'ի տեսչութիւն տիեզերաց, և զի յայնժամ
ոչ ևս յերկիւղէ ստիպեալ՝ գնայր տեսանել զիրս կողմ-
անց աշխարհին, այլ առ 'ի հաստատել անդ զխաղա-
ղութիւն։ Ծերակոյտն սահմանեաց ուխտս վասն դար-
ձի նորա, և համաշխարհի պաղատանս, և որ ինչ այլ
պատշաճքն էին։ Կուռնելիոս Դոլաբելլա յառաջ ևս
էանց, և 'ի դժպատեհ մարդահաճութիւն զառածեալ՝
առաջարկէր, 'ի դառնալ ինքնակալին 'ի Կամպա-
նիոյ՝ յաղթանակաւ մտանել նմա 'ի Հռովմ։ Վասն որոյ

հրովարտակ արար կէսար, զի զաղգս գոռ պատերազ-
մողս նուաճեալ, և զայնքանեաց յաղթանակաց ընկա-
լեալ 'ի մանկութենէ կամ մերժեալ զփառս, չառնոյր
յանձն յալիս ծերութեան զնաւիաւռ մրցանակ՝ շուրջ
զքաղաքաւ 'ի Հռոմ ելանելոյ։

ԽԸ. Զայնու ժամանակաւ խնդրեաց նա 'ի ծերա-
կուտէն մեծարել զմահ Սուլպիկիոսի Կուիրինեայ
հանդիսիւ յուղարկաւորութեան։ Կուիրինոս ծնեալ
էր 'ի Լաւինիոն. էր նա 'ի վաղեմի ազնուական տոհմէ
սուլպիկեանց, այլ վասն քաջութեան իւրոյ 'ի մարտի
և 'ի գործս դժուարինս յաջողութեան՝ կացեալ էր
յաւուրս դիւցազնին Աւգոստեայ բդեաշխ, և յաղթա-
նակս մեծամեծս կալեալ նուաճմամբ ամրոցացն Հո-
մոնադեայց 'ի Կիլիկիա, խորհրդական լեալ Կայիոսի
կեսարու 'ի հրամայել նորա 'ի Հայս, և սպասաւորեալ
Տիբերի 'ի մեկնել գնալ նորա 'ի Հռոդոս։ Զորս ինքնա-
կալին 'ի մէջ ածեալ 'ի ծերակուտի, և գովեալ զհա-
ւատարմութիւն նորա ընդ իւր, կշտամբէր զՄ. Լոլ-
լիոս, յորոյ 'ի հրապուրանացն համարէր զԿայիոսի կե-
սարու անիրաւ հակառակութիւն ընդ նմա։ Բայց յի-
շատակ Կուիրինեայ անհաճոյ էր ծերակուտին՝ վասն
հալածելոյ նորա զԼեպիդա, որպէս վերագոյն ասացի,
և վասն կծծի և տիրապետական ծերութեանն։

ԽԹ. Ի վերջկոյս ամին՝ Կ. Լուտոր Պրիսկոս ասպետ
հռովմայեցի, որ վասն հռչակաւոր եղերերգութեանն
'ի մահ Գերմանիկեայ՝ արծաթ 'ի կեսարէ ընկալեալ
էր 'ի պարգև, ամբաստանեցաւ՝ վասն յօրինելոյ իւրոյ
'ի հիւանդութեան Դրուսոսի միւս այլ տաղ, յուսա-
ցեալ զի 'ի մեռանել նորա՝ մեծապարգև ևս մեծարես-
ցի։ Զայն տաղ Կ. Լուտոր 'ի տան Պ. Պետրոնիոսի 'ի
լուր Վիտելլեայ զոքանչի նորա, և այլոց տիկնաց երևե-
լեաց, առ մնապարծութեան ընթերցեալ էր։ Իբրև
չարախօսն 'ի միջի եկաց, տիկնայք առ հասարակ երկու-
ցեալ՝ խոստովան եղեն զիրսն. միայն Վիտելլիա պինդ
եկաց, իբր ոչ ինչ լուեալ. բայց առաւել լսելի եղեն
վկայք. և Աստերիոս Ագրիսպաս կարդեալ բդեաշխ՝
համարէր զնա մահապարտ։

Ծ. Խօսել կալաւ ընդ հակառակն Մ. Լեպիդոս, և
ասէ. Եթէ 'ի զեղծումն ևեթ հանձարոյ Կ. Լուտորի

Պրիսկեայ լեցի մեզ խորհել, և 'ի զեղծուցանել նորա զլսելիս այլոց, ոչ բանտ, ոչ խեղդ, ոչ կտտանք գերութեան բաւեսցեն նմա 'ի պատուհաս։ Այլ ուր ապիրատութիւն և եղերն է անպայման, ներողութեան իշխանին և նախնեացն ձերոց և ձերումդ հեզութեան արժան է չափ և պայման սահմանել դեղոց և պատուհասի։ Եթէ է ինչ խտիր ընդ մնապարծութիւն և ընդ ոճիր, ընդ բանս չարս և ընդ չարագործութիւն, իցէ և տեղի խտրելոյ զդատակնիք՝ որով յանցանք Լուտորի ոչ անցցեն անպատուհաս, և ոչ ընդ ծայրայեղ ներումն կամ խստութիւն լեցի մեզ զիրջ։ Լուեալ է իմ յաձախս գանգատելոյ ինքնակալին զայնցանէ, որ ոչ ճնալով գթութեան իւրոյ՝ լինին անձնասպան։ Լուտոր դեռ կենդանի է. ոչ կեանք նորա լեցին 'ի վտանգ հասարակապետութեան, և ոչ մահ նորա լեցի այլոց յօրինակ. և որպէս լի է տաղ նորա անմտութեամբ, նոյնպէս մնոտի է և եղծանելի։ Ո՞ր չարիք ծանուցանք և իսկապէս երկիւղալիք իցեն անտի, որ ինքն իւրոց յանցանաց գտանի լեալ մատնիչ, ոչ արանց՝ այլ կանանց հաձութեան 'ի խնդիր։ Սակայն լեցի նա տարագիր 'ի Հռովմայ, կապտեսցի յընչից և 'ի ստացուածոց, արգելցի նմա հուր և ջուր. այսպէս արժան թուի ինձ պատուհասել զնա, որպէս քրէական յանցանաց պարտաւոր։ —

ԾԱ. Միայն Լեպիդոս Հռուբելլիոս Բլանդոս, երբեմն բդեաշխ, հաւան գտաւ բանից նորա. այլոց ամենեցուն 'ի կարծիս Սգրիպպայ անկեալ։ Պրիսկոս ածաւ 'ի բանտ, և սպանաւ անդ։ Տիբերի զայս գործ սովորականագոն իւրովք պատ 'ի պատ բանիւք պախարակեալ 'ի նամականուոջ իւրումառ ծերակոյտն, ներբողեր զտիրասիրութիւն այնոցիկ՝ որք և զդոյզն թշնամանաց իւրոց խստիւ խնդրէին զվրէժ. բայց և աղերսէր՝ մի՛ արագ արագ զնոսին յանցաւորութիւն պատուհասել. և 'ի գովել անդ զԼեպիդոս՝ ոչ եպերէր զՍգրիպպաս։ Վասն որոյ 'ի խորհրդեան ծերակուտին հաստատեցաւ՝ մի՛ յառաջ քան զօրն տաններորդ ածել զվճիռս ատենակալաց յարձանագիրս, զնոյն ժամանակակէտ շնորհել և մահապարտաց. բայց ոչ ատենակալաց իշխանութիւն էր յայնժամ փոխելոյ զվճիռն, և ոչ Տիբերի ժամանակ ողոքելոյ։

ԾԲ. Կ. Սուլիկիոս և Դ. Ատերիոս յաջորդեցին 'ի բդեշխութիւն. ամն այն խաղաղաւէտ 'ի խռովութեանց արտաքնոց, եղև վտանգաւոր առտնին՝ խստութեամբ նոցա ընդդէմ զեղխութեան, ծայրայեղ յամենայն ազգի ազգի շռայլութիւնս զառաջելոյ։ Ծանրագոյնք 'ի ծախուց ծաղկեալ մնային, շռայլողացն զյոգունց յայնցանէ զգինսն կեղծելով. այլ որկորբստեան և համադամոց ծախք 'ի բերանս ամենեցուն յաճէին հանապազօր, և երկիւղ 'ի վերայ կայր խստիւ խափանելոյ զայն ինքնակալին՝ որ սովորեալն էր 'ի նախնեացն խնայութիւն։ Կ. Բիբուլոս սկիզբն արար, և զհետ նորա այլք ևս 'ի շինուածապետաց բողոք բարձին՝ զի արհամարհէին օրէնք խնայութեան, և գինք կարևորաց առ 'ի կեանս յաւելուին օրըստօրէ հակառակ օրինաց, և չէր մարթ խափանել զայն հարևանցի հայթայթանօք։ Հարցաւ ծերակոյտն, և ինքնակալին եթող նա բովանդակ զհոգ իրացն։ Տիբերի խորհեցեալ յաձախ յանձն իւր, թէ մարթ էր արդեօք զզեղխութիւնն զայն համասփիւռ ծաւալեալ՝ սանձահարել, և ոչ արդեօք ինասակար ևս լինէր հասարակապետութեան սանձահարել զայն, և թէ քանի՞ դժպատեհ էր ձեռնարկել 'ի փորձ առանց յաջողելոյ, կամ յաջողել թշնամանօք և նախատանօք աւագանւոյն, գրեաց ապա առ ծերակոյտն օրինակ զայս.

ԾԳ. Ցայլ դէպս, Հարք ատենակալք, լաւագոյն թերևս էր բերան 'ի բերան տալ հարցուածոց ձերոց պատասխանի՝ որ ինչ յօգուտ համարէի հասարակապետութեան. այլ յայսմ՝ լաւ ևս դիպաւ կալ ինձ 'ի բացեայ, զի մի՞ գուցէ յակնարկել ձերում 'ի դէմն և 'ի կասկած այնոցիկ՝ որք ամօթապարտ զեղխութեամբն կշտամբիցին, ես ինքնին ականատես նոցին՝ որպէս թէ յանդիմանիցեմ զնոսա։ Եթէ շինուածապետք՝ արք հոյակապք՝ կանխէին հարցանել ցիս, թերևս հաւանէի անտես առնել զյոռութիւնսն աձեցեալս և արմատացեալս, քան յանձն առնուլ՝ զի յայտնի լիցի զորո՞ց եղեռանց ապիկար գտանիմք զդէմ ունելոյ։ Այլ նոքա ապաքէն զպարտս պաշտաման իւրեանց կատարեցին, որպէս կամէի՝ զի և այլք յաւագաց զիւրեանցն ընուին։ Իսկ ինձ արդ չէ արժան լռել, այլև ոչ դիւրին բարբա-

ռել. զի ոչ զշինուածապետի, ոչ զդատաւորի, և ոչ զդէմն բդեշխի կրեմ. մեծագոյն ինչ և բարձրագոյն խնդրի յինքնակալէ. զի ուր զյաջողութեանց իւրաքանչիւր ոք անձին ընծայէ զփառս, մեղադրանք ամենայն զնովաւ անկանին։ Զոր ինչ նախ սկսայց արգելուլ, և յառաջին կարգն դարձուցանել. զամարաստանիցն անողորմ ընդարձակութիւն, զսպասաւորաց ազգի ազգի բազմութիւն, զարծաթոյ և զոսկւոյ կշիռ, զպղինձոյ և զտաստակաց հրաշակերտս, զարմնոց և զկանանց անխտիր հանդերձանին, թէ զկանանւոյ պահեալ ականակուռ արկանելիս՝ որով գանձք մեր՝ի տար աշխարհս առ թշնամիս մեր անցանեն գնան։

ԾԳ. Գիտեմ իսկ զի՝ի խրախճանս և՝ի ժողովս ստգտանին այսոքիկ, և խնդրին հնարք ուղղութեան. այլ եթէ ոք օրէնս դիցէ, տոյժս եթէ սահմանեսցէ, նոքին իսկ ստգտողք բողոքեսցեն՝ որպէս կործանումն այնուիկ Հռովմայ և կորուստ մեծապայծառ որերոյ ածեալ, և ոչ զոք թողեալ անպարտ։ Սակայն և ոչ մարմնոյ ախտք՝ի պառաւելն և՝ի զայրանալ՝ առանց սաստիկ և դառն դեղոց ապաքինին. և հրատապ ախտ, որով ոք ապականի և զայլս ևս ապականէ, ոչ շինչանի դեղովք նուազ զօրաւորօք քան զախտաբիծ ցանկութիւնն՝ որով նայն տոչորի։ Այնչափ՝ի նախնեաց մերոց օրէնք հնարեալք, այնչափ և զորս դիւցազնն Աբգոստ օրինադրեաց, այնոքիկ՝ի մոռացօնս անկան, և այսոքիկ՝ որ չար ևն է՝ արհամարհեալ խափանեցան, և առաւել ևս համարձակութիւն ետուն զեղխութեան. զի որ զչև արգելեալն կամի, խիթայ ևս զի մի՛ արգելցի. իսկ որ զարգելեալն առ ոտն կոխէ անպատուհաս, ոչ ևս երկիւղ՝ի նմա և ոչ ամօթ տեղի գտանէ։ Այլ ինչ պանծալի երբեմն էր խնայութիւն. զի ամենայն ոք զանձն՝ի չափու ունէր, զի միոյ քաղաքի էաք քաղաքակիցք, զի և ոչ՝ի տիրել մերում Իտալիոյ՝ ցայսվայր զառաջեալ էին հրապոյրք. արտաքին յաղթութեամբք զայլոցն սովորեցաք վատնել, զմերսն ներքնովք։ Քանի՛ դուշնաքեայ, քանի՛ թեթև թուեսցին՝ զորոց շինուածապետք բողոքեն, եթէ այլուր զաչս դարձուցանիցեմք։ Զիք ոք՝ որում փոյթ իցէ ասել թէ Իտալիա նպաստից արտաքուստ կարօտի, թէ կեանք ժողովրդեան Հռովմայ յարկածս ծուլու և մրրկաց ծփին,

և եթէ ոչ պտղաբերութիւն գաւառաց հասցէ յօգ-
նութիւն տերանց և ծառայից և անբեր մերոց ան-
դաստանաց, ոչ անտառք մեր և ոչ հովոցք կերակրես-
ցեն զմեզ։ Այս հոգ ինքնակալին թողեալ է, Հարք
ատենակալք, և յապախոտ առնել նորա զայս՝ հինն 'ի
վեր տապալեսցի հասարակապետութիւնն։ Այլոց ի-
րաց 'ի մէնջ ինքեանց մատուսցի դարման. զմեզ ա-
մօթ, զաղքատս հարկ, և զմեծատունս յագուրդ ածցէ
'ի լաւ անդր. եթէ ոք յաւագանւոյն բերէ յանձին
Ճարտարութիւն և սաստ զգէմ ունելոյ չարեացս, գո-
վեմ զնա, և շնորհ ունիմ զի զհոգ իմ թեթևացուսցէ։
Իսկ որոց միանգամ կամք իցեն կշտամբել և եթէ զյո-
ռութիւն, և զփառս այնուիկ ժառանգեալ՝ գրգռեն
զհեռ, և յիս զբեռն զամենայն առնեն ապաստան, յայտ
լիցի ձեզ, Հարք ատենակալք, զի և ոչ ինձ կամք են
թշնամութեանց լինել ձայնատուր. զի ուր ծանուցս,
և բազում այն է՝ զի և անիրաւս կրեմ վասն հասա-
րակապետութեան, իրաւամբք խնայեմ զանձն յայն-
ցանէ՝ որ ոչ ձեզ, և ոչ ինձ իցեն յօգուտ։—

Ծե. Ծերակուտին ընթերցեալ զգիր ինքնակալին,
լռեցոյց զբողոք շինուածապետաց. և զեղխութիւնք
կոչնոց, որ 'ի կատարածէ ակտիական մարտին մինչև
'ի պատերազմն՝ որով Սերուիոս Գալբա Եհաս ինքնա-
կալութեան՝ զամն հարիւր ամբաւ ծախիւք շռայլեալ
էին, տակաւ ապա խափանեցան։ Ցպատճառս այսր
յեղափոխութեան արժան է հետազօտել։ Որք երբեմն
փարթամքն էին ազգատոհմք ազնուականաց կամ
ականաւորք, 'ի հնարս առատաձեռնութեան զառա-
ծանէին. զի դեռ ևս օրէն էր զռամիկն, զնիզակակիցս
և զարքայս մեծարել, և մեծարանս 'ի նոցանէ ընդու-
նել. որպէս զի որ ոք ընչիւք ապարանօք և կարասւով
պայծառանայրն, գեր 'ի վերոյ անցանէր համբաւով
և բարեկամաց առաւելութեամբ։ Իսկ իբրև նախ-
ճիրք արեան յաճախեցին, և մեծութիւն համբաւոյ
սպառնայր կորուստ, 'ի զգաստագոյն միտս ածան մար-
դիկ. և որեար նորանոր 'ի քաղաքաց 'ի գաղթակա-
նաց և 'ի գաւառաց 'ի ծերակոյտն վերառեալք՝ ածին
մուծին անդր զընտանին իւրեանց խնայութիւն. և
թէպէտ բազումք 'ի նոցանէ բաղդիւ կամ Ճարտարու-

թեամբ 'ի փարթամ Հոխութիւն հասեալ, սակայն կացին մնացին 'ի նմին զգօնութեան։ Բայց առաւել քան զամենեսին Վեսպասիանոս եղև նորոգող ինայութեան՝ ըստ վաղնջուց սպասուց և կոչնոց. և ապա պաշտօն ինքնակալին և իրաւ նմանութեան, որ հզօրագոյնք են քան զպատուհաս և զսպառնալիս օրինաց։ Իցէ արդեօք և շրջան ինն յամենայնի. զի որպէս փոփոխին ժամանակք՝ այսպէս և բարք փոփոխիցին. զի ոչ ամենայն ինչ առ նախնիս էին լաւագոյնք, այլ և յաւուրս մեր բազում ինչ գովութեան արժանի և գիւտք հանճարոյ նախանձելիք յետնոց եկին 'ի լոյս։ Ո՞տայր թէ յարատևէր 'ի մեզ այս պանծալի նախանձ ընդ նախնիս մրցութեան։

ԾԶ. Տիբերի զմեծասաստ դատախազն լռեցուցանելով՝ արարեալ իւր համբաւ հեղութեան, գրեաց յետ այնորիկ առ ծերակոյտն՝ աղերսելով տալ Դրուսոսի զՀազարապետական իշխանութիւն։ Զծայրագունի այսր աւագութեան անուն հնարեաց Աւգոստ, որպէս զի առանց զարքայի կամ զիշխանապետի ունելոյ ըզյորջորջումն՝ մարթ իցէ գեր 'ի վերոյ այլոց աւագութեանց կալ։ Ապա զՄարկոս Ագրիպպաս բարձակից այսր իշխանութեան կալեալ, 'ի մեռանել նորա՝ զՏիբերիոս Ներոն փոխանակ նորա կացոյց, զի մի յերկբայս յաջորդութիւնն կացցէ։ Համարէր խափանել այսուիկ զխռովարար ակնկալութիւնս այլոց, 'ի հաւատարմութիւն Ներոնի և 'ի մեծութիւն իւր վստահացեալ։ Ըստ սմին օրինակի և զԴրուսոս ամբարձ 'ի ծայր աւագութեան, առ կենդանութեամբն Գերմանիկեայ՝ կշիռ ընդ երկոսին կալեալ զմիտս յերկբայս։ Արդ 'ի սկզբան թագաւորն մաղթէր 'ի դից յաջողել զխորհուրդս իւր յօգուտ հասարակապետութեան. և ապա սուղ ինչ զբարուց պատանւոյն առանց յաւելուածոյ ասացեալ, յայտ առնէր՝ զի էր նորա կին, էին և որդիք երեք. և զի էր նա 'ի հասակի՝ յորում երբեմն դիւցազնին Աւգոստեայ կոչեցեալ էր զինքն 'ի նոյն աւագութիւն. և զի ոչ տարաժամ հասանէր նմա այն, քանզի զամն ութ փորձեալ, զաղմուկս ցածուցեալ, ընկալեալ զփառս յաղթանակի, և երկիցս բդեաշխս կացեալ, ոչ անծանօթ վաստակոց կոչէր 'ի կցորդութիւն։

ԾԷ. Վաղ իսկ խելամուտ լեալ ծերակոյտն ըղձից ինքնակալին, 'ի հնարս իրացն յաւել և զմարդահաճութիւն. բայց աւելի ինչ ոչ կարելով՝ ետ կանգնել պատկերս երկոցունց իշխանորդւոցն, բագինս դից և մեհեանս, կամարս յաղթականս և զայլ սովորական պատիւս։ Միայն Մ. Սիլանոս 'ի նուաստութիւն բդեշխութեան խնդրեաց մեծարել զիշխանորդիս, և սահմանել՝ զի յիշատակք անցից մի՛ ևս յանուն բդեշխից արձանագրեսցին, այլ որոց 'ի հազարապետական իշխանութեան կայցեն։ Եւ Կ. Ատերիոս առաջարկեաց զվճիռս այնր աւուր տառիւք ոսկեղինօք քանդակել յատենի ծերակուտին. այլ ծաղը եկաց ծերունին, որում զնախատինս ևեթ վատ մարդահաճութեան հասանէր ժառանգել։

ԾԸ. Ի ժամանակին յայնմիկ, քանզի Յունիոս Բլեսոս թողեալ էր կուսակալ յԱփրիկէ, Սերուիոս մալոգինեցի՝ քուրմ Դիոսի՝ խնդրէր զԱսիա 'ի կուսակալութիւն, ցուցեալ ընդունայն զկարծիս՝ թէ չիցէ օրէն քրմաց Դիոսի կալ արտաքոյ Իտալիոյ. զի ոչ ինչ ընդհատ իրաւունս ասէր ունել նոցա քան զքրմացն Արիսի և Կուիրինեայ, և եթէ նոքա կուսակալէին, զի՞նչ արգելոյր քրմաց Դիոսի չկուսակալել. զի չգոյր իսկ զայսմանէ վճիռ ժողովրդեան և ոչ մի, և ոչ 'ի մատեանս ուրեք արարողականս օրինադրութիւն. դարձեալ զի և յաճախ իսկ քրմապետաց սպասաւորեալ էր առ բագինս Դիոսի 'ի խափանել քրմին խօթութեամբ կամ հասարակաց պաշտամամբ. և զի յետ սպանութեան Կուռնելիոսի Մերուլայ չէր ուրուք յաջորդեալ նմա ընդ ամս եօթանասուն և երկու, սակայն չէին պաշտամունքն խափանեալ. զի եթէ ընդ այնչափ ամս ոչ կացուցաւ ոք քուրմ առանց ստնանելոյ պաշտամանցն, քանի՞ դիւրագոյն էր կալ նմա 'ի բաց զամմի վասն կուսակալութեան. և զի դարձեալ առ ատելութեան ծայրագոյն քրմապետաց ասէր խափանեալ երբեմն զքուրմն Դիոսի 'ի կուսակալութենէ, այլ յայնժամ դիցն չնորհիւ ծայրագոյն քրմապետն՝ ծայրագոյն էր և 'ի մարդիկ, աղատ 'ի նախանձուէ յատելութենէ և 'ի կրից անձնականաց։

ԾԹ. Ընդդէմ նորա Լենտուլ հաւահմայ և այլք ոչ

սակաւ ինչ ճառէցին, և սահմանեցաւ մնալ վճռոյ ծայրագոյն քրմապետին։ Տիբերի յամեցուցեալ զդատ իրաւանց քրմին Դիոսի, ամիսոփեաց և զվճիռս արարողութեանցն սահմանելոց 'ի պատիւ հաղարապետական իշխանութեանն Դրուսոսի, կշտամբեալ յանուանէ զնորանշան առաջարկութիւն Կ. Ատերեայ, և ըզտառն ոսկեղէնս ըստ ոչ սովորութեան նախնեաց։ Ասաւ ապա յընթերցումն գիր Դրուսեայ. որ թէպէտ և համեստութեամբ պաճուճեալ՝ սակայն դատեցաւ լի գոռոզութեամբ, և ասէին. Ցայն վայր ամենայն ինչ զառածեալ, մինչև պատանի ոք այնքան պատուով մեծարեալ՝ ոչ դիցն Հռովմայ այց առնէ, ոչ յտտեան ծերակուտին երևի, և ոչ գէթ զնաւակատիս պատուոյն յերկիր իւր հայրենի կատարէ։ Պատերազմ արդեօք կամ տարաշխարհիկ ուղևորութիւն խափանէ զնա՝ որ ընդ ծովափունս և ընդ ծովալիճն Կամպանիոյ արդ ըստ հաճոյս դեգերի. այսու օրինակաւ ահա վարիչն ազգի մարդկան կրթեալ, զայս նախ 'ի հայրենի խրատուցն ուսեալ. եթէ ծանր է ծերունւոյ ինքնակալին երևել յանդիման քաղաքացւոց, և զխոնջ հասակն և զվաստակաբեկ ալիս պատճառի, իսկ զինչ Դրուսեայ կայցէ խափան՝ բայց գոռոզութիւն։ —

Կ. Տիբերի զզօրութիւն ինքնակալութեան իւրոյ ամրացուցեալ, զպատկեր ևեթ նախնի սովորութեան ընծայէր ծերակուտին՝ զինդիրս կուսակալութեանց 'ի քննութիւն Հարցն Թողլով։ Յաճախէր յայնժամ 'ի քաղաքս յունաստանի անպատուհաս և յանդուգն հաստարձակութիւն՝ սահմանելոյ վայրս ապաստանի. ընուին մեհեանք ապիրատ ստրկօք. անդր ապաւինէին և պարտապանք յերեսաց պարտատերացն, և եղեռնագործք յահէ արդարութեան. և չէր իշխանութիւն բաւական նուաճելոյ զաղմուկս ժողովրդեան, որ իբր պաշտօն մատուցանելով դից՝ պաշտպանէր անօրինաց։ Հաճոյ թուեցաւ՝ զի քաղաք իւրաքանչիւր 'ի ձեռն հրեշտակաց ցուցցէ զիրաւունս իւր. կէսք՝ որոց յափշտակութեամբ էին իրաւունք, հրաժարեցին ինքնակամ։ յոգունք 'ի նանրահաւատ կրօնս վաղնջականս, կամ 'ի վաստակս մատուցեալս ժողովրդեան Հռովմայ յենուին։ Մեծ եղև աւուրն այնորիկ պայծառութիւն,

յորում Ծերակոյտն զնախնեացն բարերարութիւնս, զդաշինս նիզակակցաց, և զարքայից իսկ՝ որ յառաջ քան զՀռովմէական ինքնակալութիւնն կացեալ էին՝ զՀրովարտակս, և զդիցն ևս պատգամս առնոյր 'ի քնին ազատօրէն, որպէս երբեմն՝ 'ի հաստատել և 'ի փոփոխել զայնոսիկ։

ԿԱ. Յառաջ մատեան նախ քան զամենեսին Եփեսացիք, և հաստատէին զԱրտեմիս և զԱպոլոն ոչ 'ի Դելոս ծնեալ՝ որպէս ռամիկն կարծէր, զի առ իւրեանս էին Կենքրիոս գետ, և անտառն Որտիգիա, ուր Լետով մերձ 'ի ծնունդս, յեց 'ի ձիթենին՝ որ դեռ ևս կայ անդ կանգուն՝ 'ի լոյս էած զնոսա, և դիցն ակնարկութեամբ եղև անտառն այն սրբազանեալ, և ինքն Ապոլոն անդր յերբեսաց ցաստանն Դիոսի 'ի սպանանելն զԿիկլոպայս՝ խոյս ետ. և ապա Դիոնիս յաղթող եղեալ 'ի մարտի՝ խնայեաց յԱմազոնս աղերսաւորս, որ անդր էին ապաստանեալ։ Վասն որոյ Հերակլեայ 'ի տիրելն 'ի Լիւդիա՝ յաւելեալ էր զպաշտամունս մեհենին. և ոչ ընդ իշխանութեամբն Պարսից նուազեալ էին իրաւունք նոցա, և ապա ընդ մակեդոնացւովք և ընդ մեօք ևս աննուազելի պահեալ։

ԿԲ. Զհետ նոցա մատեան մագնեսիացիք, վստահ'ի սահմանադրութիւնս Լ. Սկիպիոնի և Լ. Սիլլայի. զի առաջինն վանեալ զԱնտիոքոս, և միւսն զՄիհրդատ, 'ի մեծարանս հաւատարմութեան և քաջութեան մագնեսիացւոց՝ ապաստան անդրժելի զմեհեան լեկոփորեանն Արտեմեայ հաստատեալ էին։ Ապա ափրոդիսացիք և ստրատոնացիք զիշխանապետին Կեսարու՝ վասն վաղնջուց վաստակոց իւրեանց ընդդէմ Պարթևաց, և զդիւցազնին Աւգոստեայ զարդի հրովարտակ 'ի մէջ մատուցին, յորում էր գովութիւն զնոցանէ վասն անսասան ունելոյ զհաւատարմութիւն իւրեանց ընդ հռովմայեցիս՝ յարշաւել Պարթևաց 'ի վերայ նոցա։ Բայց ափրոդիսացիք զԱստղիկն, և ստրատոնացիք զԴիոսի և զԵկատեայ՝ պատսպարան իւրեանց ունէին զպաշտամունս։ Հնագոյն ևս յիշատակ երոկեսարացիք 'ի նեղբս ածին զպարսկայինն Արտեմիս առ իւրեանս կացեալ, և մեհեան նմա 'ի Կիւրոսէ կառուցեալ, և Պերպերնայ և Խաւրիկեայ և այլոց բաղմաց գերահրա-

չակ զօրավարաց, ոչ միայն հաստատուն կալեալ զսերբութիւն մեհենին, այլ և երկու հազար քայլ ընդարձակեալ։ Յետ նոցա կիպրացիք ածին 'ի մէջ մեհեանս երիս, յորոց երիցագոյնն կանգնեալ յԵրիասայ պատիոսեանն Աստղիկան, և երկրորդն յԱմաթոսէ յորդւոյ նորա՝ ամաթեանն Աստղիկան, և միւսն սալամինեանն Դիոսի փախուցելոյ 'ի Տեկրեայ՝ յերեսաց ցասման հօր իւրոյ Տելամոնի։

ԿԳ. Լսելի եղեն և այլոց քաղաքաց հրեշտակք. յորոց բազմութենէ վաստակեալ Հարց, և քանզի զփառաց էին խնդիրք՝ 'ի բդեաշխս արարին ապաստան, քննել զկրաւունս իւրաքանչիւրոց, և նենգ ինչ ուրեք եթէ գտանիցեն՝ առանց ինչ սահմանելոյ ածել անդրէն յատեան ծերակուտին։ Բդեաշխք, 'ի վերայ քաղաքաց՝ զորս յիշատակեցի, յաւելին լեալ և առ պերգամացիս հաւաստեաւ զԱսկլեպեայ ապաստան. զայլս վասն հնութեանն 'ի մթին սկիզբն տսէին հաստատեալ։ Քանզի զմիւռնացիք զպատգամ Ապոլոնի 'ի մէջ ածէին, որով ստրատոնեանն Աստղիկան կանգնեալ էր մեհեան. և տենացիք նորին դից հրամանաւ ասէին զպատկեր և զմեհեան Թոսիդոնի կառուցեալ. սարդիկեցիք 'ի մօտոյ իսկ 'ի քաջայաղթն Ալեքսանդրէ ասէին շնորհ ընկալեալ զայն. ոչ ինչ ընդհատ և միլեսացիք 'ի Դարեհ արքայ զթիկունս հաստ առնէին, երկաքանչիւր պաշտօն մատուցանելով Արտեմեայ և Ապոլոնի. զնոյն ազատութիւն և կրետացիք վասն պատկերի դիւցազնին Աւգոստեայ խնդրէին։ Ժողովեցաւ ծերակոյտն յատեան, և բազում մեծարանօք ամփոփեցան իրաւունք. և սահմանեցան 'ի մեհեանս անդ 'ի տախտակս պղնձիս յեռուլ յորմ զայսոցիկ արձանագրութիւն, զի մի՛ պատճառանօք կրօնից զեղծանիցի փառասիրութիւն։

ԿԴ. Զայնու ժամանակաւ 'ի զայրանալ խօթութեանն Յուլեայ Աւգոստայ՝ հարկ եղև ինքնակալին, թէպէտ վասն անկեղծ սիրելութեան մօրն ընդ որդւոյն, թէպէտ առ 'ի պատրուակել զատելութիւն, փութալ դառնալ 'ի Հռովմ. զի յառաջ քան զաւուրս ոչ բազում Յուլիա 'ի կանգնել պատկեր դիւցազնին Աւգոստեայ մերձ 'ի տեսարանն Մարկելլեայ՝ զանուն

Տիբերի յետ իւրայնոյն էր արձանագրեալ, և Թուէր ծանրացաստումն լեալ ինքնակալին ընդ Թշնամանս իւր, և կալեալ ոխ 'ի սրտի։ Սակայն պաղատանք առ դիս և տօնք խաղուց մեծահանդէսք 'ի ծերակուտէն սահմանեցան, և կատարումն այնոցիկ յանձնեցաւ քրմապետաց և հաւահմայից, հնգետասանապետաց և եօԹնապետաց և աւգոստական քրմաց։ Լ. Ապրոնեայ հաճոյ Թուէր, զի և քարոզք զօրու՝ վերատեսուչ խաղուցն կացցեն. բայց ինքնակալն հակառակ եկաց այնմ, զի բաւանց քրմայն 'ի դէմս ածեալ զսահման և զվաղընջուց օրինակս. զի ոչ երբեք քարոզից զօրու շնորհեալ էր պատիւն այն. իսկ աւգոստականաց յայնմ ևԹնուագի շնորհէր՝ որպէս քրմաց դրան իւրոյ։

ԿԵ. Զայնս միայն 'ի կարծեաց խորհեցայ յիշատակել, որ երևելիքն են ըստ լաւուԹեան, կամ նշանաւորք ըստ յոռուԹեան, որպէս համարիմն տարեգիր յիշատակաց գլխաւոր պարտս, զի մի լիցի զառաքինուԹիւնս լռել, և զի անօրէն բանից և գործոց յաւելցի երկիւղ 'ի դատաստանէ յետնոց և 'ի վատահամբաւելոյ։ Բայց զեղծ էր ժամանակն և այնպէս ապականեալ շողոմիք, զի ոչ միայն մեծամեծք քաղաքին՝ որոց աղնուականուԹիւն վատ մեծարանօք պահպանէր, այլ և որեարն անցեալ ընդ բդեշխուԹիւն, կամ 'ի բդեշխուԹիւն սահմանեալ, և մեծ կէս մասն այնոցիկ՝ որոց կուսակալ կացեալ էր, և յոգունք յատենակալաց աննշանից, ելևէջս զիրերօք առնէին 'ի հասատատուԹիւն վՀռոց առաւելաղանց մարդահաճուԹեան։ Պատմի, զի սովոր էր Տիբեր յելանելն 'ի ծերակուտէն՝ կոչել զատենակալս յունարէն՝ պատրաստս 'ի ծառայուԹիւն. այսպէս և նա ինքն, որ հակառակն էր ազատուԹեան քաղաքացւոց, դժկամակէր ընդ այնպիսի անարգ և ծառայամիտ ասպրուԹիւն։

Կ Զ. Տակաւ ապա 'ի զեղծմանէ յեղեռնագործուԹիւնս զառաջանէին։ Կ. Սիլանոս, փոխանակն բդեշխի յԱսիա, ամբաստանեցաւ 'ի հարստահարուԹիւն 'ի բնակչաց գաւառին։ Մամերկոս Սկաւրոս երբեմն բբդեաշխ, Յունիոս ՈԹոն, Բրուտիդիոս Նիւգէր շինուածապետ, միաբանեցին 'ի կշտամբանս նորա՝ ցուցանել

թէնամանեալ 'ի նմանէ զվերհատուածութիւն Աւգոստեայ, և զՏիբերի մեծվայելչութիւն արհամարհեալ։ Մամերկոս զվաղեմի օրինակս 'ի մէջ ածէր, զվ. Կոտտաս 'ի Սկիպիոնէ Աֆրիկեցւոյ, զՍեր. Գալբա 'ի Կատոնէ համարակալէ, և զՊ. Հռուդիլիոս 'ի Մ. Սկաւրոսէ ամբաստանեալս։ Որպէս թէ Սկիպիոնի և Կատոնի և Սկաւրեայ նոյնպիսի ինչ դատ վարեալ էր. Սկաւրեայ՝ որոյ թոռն Մամերկոս, նախատինք հարց իւրոց, ամենալի գործոնէն զպատիւ հաւուն աղարտէր։ Յունիոս Ութն, վարժապետ յառաջագոյն արուեստիւ, և ապա զօրութեամբ Սէանոսի ատենակալ կացեալ, զանենշան ազգ իւր ժպիրհյանդգնութեամբ 'ի վեր մղէր։ Բրուտիդիոս լի բարեմանութեամբք, որ ընդ ուղիղ Ճանապարհ ևս կարէր պայծառանալ, մորակեալ յանժոյժ փառամոլութենէ՝ մերթ զհաւասարակիցս, մերթ զերիցագոյնս, և զիւր իսկ ակնկալութիւն գլել և կանխել գուն գործէր, որպէս զբազում 'ի լաւաց իսկ զառածեցուցանէ իղձս այս 'ի կորուստ, որոց արհամարհեալ զանագանն աներկևան՝ 'ի վաղագոյնն հանդերձ վտանգաւ փութան։

Կէ. Յաւելան 'ի դատախազս Գ. Ելլիոս Պոպլիկոլա և Մ. Պակոնիոս. առաջինն գանձապետ Սիլանեայ, երկրորդն փոխանորդ։ Զէր ինչ երկբայելի հարստահարութիւն նորա և զօշաքաղութիւն. այլ բազում և այլ ինչ 'ի վերայ յաւելեալ, որ անպարտից իսկ ածէին վտանգ. զի թող զդատախազութիւն այնքանեաց ատենակալաց, պարտ էր նմա միայնակ անօգնական պատասխանի առնել դժնեագունից 'ի Ճարտարախօսաց ամենայն Ասիոյ, անհմուտ գոլով յատենաբանութիւն. մանաւանդ 'ի վտանգի անձին, ուր տկարանայ և Ճարտարախօսութիւն անցեալ ընդ փորձ։ Յաճախէր զտագնապ նորա և Տիբեր բանիւքն և դիմաք, ինքնին ստէպ հարցափորձ առնելով. և չէր իսկ օրէն ամբաստանելոյն հելութեալ զայնս, կամ խուսափել 'ի պատասխանելոյ. այլ հարկ էր յաճախ խոստովանել՝ զի մի ընդունայն հարցափորձք նորա լինէին։ Դարձեալ և մի 'ի գործակալաց հասարակայ գնոց առեալ էր զստրուկս Սիլանեայ, առ 'ի կարող լինելոյ 'ի խոշտանգանս հարցափորձի մատուցանել զնոսա. և զի մի ոք 'ի կարևոր աղգականաց

նորա հասցէ վտանգելումն յօդնութիւն, յաւելաւ 'ի վերայ նորա եղեռն քրէական՝ որ արգելոյր զնախանձ նոցա, և հարկ առնէր լռել։ Վասն որոյ զաւուրս քանի մի խնդրեալ Սիլանեայ 'ի Շնորհ, հրաժարեաց 'ի պաստասխանի առնելոյ վասն անձին, գրեալ ևեթ առ Տիբեր բողոք աղերսական։

ԿԸ. Տիբեր առ 'ի դիւրաւ անբասիր առնել զառաջիկայ գնացս իւր ընդ Սիլանեայ՝ օրինակաւ առաջնոց, հրամայեաց ընթեռնուլ զյիշատակագիրս Աւգոստեայ զՎոլեսոսէ Մեսալլայ՝ որ փոխանակ բդեշխի կացեալ էր անդ յԱսիա, և զվճիռ ծերակուտին ընդդէմ նորա. և ապա եհարց զՊիսոնի կարծիս. որոյ նախ բազումն գովեալ զինքնակալին գթութիւն, արժան դատեցաւ զՆուր և զՋուր արգելուլ Սիլանեայ, և տաբագիր առնել զնա 'ի Գիարոս կղզի։ Զնոյն և այլք հաստատեցին. բայց միայն Կ. Լենտուլոս ասաց բաժանել զինչս նորա մայրենիս, զի յայլմէ մօրէ էր ծնեալ, և տալ զայն որդւոյն՝ հրամանաւ ինքնակալին։ Կուռնելիոս Դոլաբելլա անդր ևս զշողոմս ածեալ, և յանդիմանեալ նախ զզառանցանս կենաց Սիլանեայ, յաւել զի մի ոք՝ որոյ նախատելի լեալ իցեն կեանք և չարահամբաւ՝ կարասցէ լինել կուսակալ, ինքնակալին պահեալ տնօրինել զայն։ Զի պարտ է, ասէր, օրինաց պատուհասել զեղեռն. այլ քանի՞ ներումն եղեռնագործի և քանի՞ բարեբաստութիւն չիցէ մարթ պատրաստել նախահոգ զգուշութեամբ խափանելոյ զեղեռնագործութիւն։

ԿԹ. Հակառակ այսոցիկ խօսեցաւ ինքնակալն, և ասէ. Ոչ անգիտանամ որ ինչ զՍիլանեայ համբաւի. այլ ոչ է պարտ ըստ համբաւոյ առնել դատաստան. բազումք 'ի կուսակալաց ընդդէմ ակնկալութեան կամ երկիւղի հասարակաց գործեցին, կէսք 'ի լաւ անդր իշխանութեամբ յորդորեալ, այլք 'ի վատութիւն զառածեալ. և չէ մարթ ինքնակալի գիտել իւրև զամենայն, և ոչ արժան է նմա 'ի փառասիրութենէ այլոց մղիլ։ Օրէնք ընդդէմ յանցանաց գործեցելոց են սահմանեալ, և ոչ ընդդէմ գործելեաց՝ որ անստոյգ են, այսպէս 'ի նախնեաց հաստատեալ՝ նախ եղեռն և ապա պատուհաս. և չէ պարտ փոփոխել զօրինա-

գրութիւնս իմաստութեամբ և ժամանակաւ հաստատեալս։ Բաւական բեռն է ինքնակալի, բաւական և իշխանութիւն. 'ի յաւելուլ իշխանութեան՝ պակասէ արդարութիւն, և ոչ է պարտ վարել իշխանութեամբ՝ ուր մարթ իցէ օրինաւք։ — Այնչափ առաւելագոյն իսկնդութեամբ ընդունելի եղեն այս բանք Տիբերի, որչափ զի դուն ուրեք նպաստաւոր ժողովրդեան երևէր. գիտելով նորա 'ի չափու ունել զիստութիւն, յորժամ ոչն վարէր 'ի սրտմտութենէ։ Եւ ապա յաւել. Գիարոս՝ տեղի վայրենի է և ամայի 'ի մարդկանէ. առն ազգականի Յունեայ, և որոյ զայնպիսի իշխանութիւն կալեալն էր, արժան է գնալ մնաւանդ 'ի Կիդերա. զայս և Տորկուատա քոյր Սիլանեայ, նախնեացն սրբակրօնութեան նախանձաւոր, աղերս արկանէ։ — Հաճոյ թուեցաւ այս ատենակալաց ամենեցուն։

Հ. Կիւրենացիք ապա ընկալեալ եղեն 'ի լուր. և դատախազութեամբ Անքարեայ Պրիսկոսի՝ Կեսիոս Կորդոս պարտաւորեցաւ 'ի յանցանս զօշաքաղութեան։ Լ. Ենիոս՝ ասպետ հռովմայեցի՝ ամբաստանեցաւ 'ի քրէական յանցանս, զի զպատկեր ինքնակալին 'ի հասարակաց պէտս արծաթոյ հալեալ էր։ Բայց արդեալ Տիբեր չունել զնա 'ի համարի յանցաւորաց, այլ Աւտէոս Կապիտոն իբր 'ի նախանձ ազատութեան հակառակ կացեալ, ասէր. Զէ արժան բառնալ յատենակալաց զիշխանութիւն վՃռելոյ, և ոչ զեղեռն այնպիսի թողուլ անպատուհաս. եթէ ինքնակալին կամք իցեն նեբելնմա զթշնամանս անձին, սակայն թշնամանաց հասարակաց չէ իշխան ներելոյ։ — Տիբեր զբանս զայսոսիկ, ոչ որպէս թուէինն՝ այլ որպիսիք էինն՝ ընկալեալ, պինդ եկաց 'ի բարեխօսել։ Բայց Կապիտոն այնու առաւել գտաւ անդոմնելի, զի հմուտ մարդկայնոց և աստուածային օրինաց՝ զբարին հասարակաց և զառտընին խաղաղութեան հայթայթանս թշնամանէր։

ՀԱ. Առաջարկեցաւ յայնժամ խնդիր ինչ կրօնական, թէ յորմէ՞ 'ի մեհենաց պարտ էր զետեղել զնուէրն՝ զոր ասպետաց հռովմայեցւոց վասն առողջութեանն Աւգոստայ ուխտեալ էր կանգնել Բաղդին Հեծելոյ. զի թէպէտ և մեհեանք բազումք էին դիցուհւոյն 'ի Հռովմ, այլ և ոչ մի յայնցանէ այնու անուամբ յորջոր-

ջէր։ Գտաւ մեհեան մի Յանտիոն 'ի նոյն անուն. և զի ամենայն պաշտամունք և տաճարք և պատկերք դից ընդ իշխանութեամբ հռովմայեցւոց էին, վասն որոյ նուէրն այն եդաւ Յանտիոն։ Մինչդեռ այս խնդիր կրօնից լինէր, Տիբերիոս՝ որոյ ցայնժամ յապաղեալն էր տալ զպատասխանին ընդդէմ Սերուիոսի մալոգինեցւոյ քրմին Դիոսի՝ ասա ուրեմն ետ, ածեալ յընթերցումն զվճիռ քրմապետաց, զի 'ի հիւանդանալ քրմին Դիոսի՝ հրամանաւ ծայրագոյն քրմապետին օրէն էր նմա 'ի բաց կալ 'ի քաղաքէն՝ ոչ աւելի քան զաւուրս երեկուս. այլ ոչ յաւուրս հասարակաց պաշտամանց, և ոչ առաւել քան երկիցս 'ի տարւոջ։ Այս վճիռ յաւուրս Աւգոստեայ կայսեր սահմանեալ՝ շատ իսկ յայտ առնէր, զի չէր արժան քրմին Դիոսի 'ի բաց կալ զամ մի, և ոչ գնալ ուրեք 'ի կուսակալութիւն. և 'ի մէջ ածէր զօրինակ Լ. Մետելլեայ ծայրագոյն քրմապետի, որ զԱլլոս Պաստումիոս քուրմ արգել 'ի քաղաքին։ Վասն որոյ կուսակալութիւն Ասիոյ տուաւ այնմ, որ երիցագոյնն էր յետ մալոգինեցւոյն յայնոսիկ, որ կացեալ էին բդեաշխ։

ՀԲ. Ի նոյն աւուրս խնդրեաց Լեպիդոս 'ի ծերակուտէն նորոգել և շքեղազարդել յընչից իւրոց զհոյակապ մեհեանն Պաւլոսի, կառուցեալ 'ի յիշատակ Եմիլեան ազգատոհմին. զի չև ևս էր խափանեալ յայնժամ տուվորութիւն բարերարելոյ հասարակաց, և ոչ Աւգոստեայ արգելեալ էր Տաւրոսի Փիլիպպեայ և Բալբոսի՝ չտալ զկապուտ թշնամեաց և զյաւելուած ընչից իւրեանց 'ի զարդ քաղաքին և 'ի փառս յետնոց։ Ըստ նոցին օրինակի Լեպիդոս, թէպէտ և ոչ մեծափարթամ, զհաւուցն իւրոց նորոգեաց զփառս. և Տիբերիոս խոստացաւ կանգնել անդրէն զտեսարանն Պոմպէի հրդեհեալ, որում ոչ ոք յազգատոհմէ նորին գտանէր ձեռնհաս, պահելով զանուն Պոմպէի. և զԱէանոս բարձրացոյց գովութեամբ, զի ջանիւք նորա և ժրութեամբ 'ի միումն աւուր բացածաւալ հրդեհին զկայ առեալ էր զօրութիւն. և ատենակալք ծերակուտին արժան համարեցան կանգնել առաջի տեսարանին զանդրի նորա։ Յետ ոչ բազում աւուրց 'ի փառաւորել Տիբերի զՅունիոս Բլեսոս զփոխանակն բդեշխի Յափրի-

կէ շքով յաղթանակի, վասն այն ասէր շնորհել նմա զայն, զի քեռի էր Սէանոսի։

ՀԳ. Բայց և Բլեսեայ քաջութիւնք արժանի էին այնմ մրցանակի։ Տակփարինաս. թէպէտ և բազում անգամ վանեալ 'ի նմանէ, զօրաժողով լինէր վերստին 'ի խորս Աֆրիկէայ. և յայն յանդգնութիւն հասեալ, զի հրեշտակս առ Տիբեր առաքէր՝ մի ժխտել բանակի իւրում և իւր տեղի բնակութեան, մարտ անհաշտելի սպառնացեալ։ Ոչ ուրեք երբեք այնպէս ծանրացաստուն լեալ ասեն Տիբերի ընդ թշնամանս իւր և հռովմէական ժողովրդեան, որպէս 'ի լսել զդասալիք յելուզակին պահանջ՝ իբր օրինաւոր թշնամի։ Զի և ոչ Սպարտակեայ, որ զբանակս բդեշխից բազում բեկեալ՝ այրեացաւեր զԻտալիա կացուցանէր անպատուհաս, և ոչ Սերտորիոսի և Միհրդատայ՝ յորժամ հասարակապետութիւնն յահագին պատերազմաց նոցա սասանեալն էր, շնորհեցաւ յուխտ մտանել, և պայմանօք լինել ընդունելի 'ի դաշնակցութիւն, թող թէ 'ի ծայր պայծառութեան հռովմէական ժողովրդեան առնել խաղաղութիւն ընդ աւազակին Տակփարինայ, տալով նմա երկիր 'ի բնակութիւն։ Եւ հրամայեաց Բլեսոսի, խոստանալ այլոց ապստամբաց ազատութիւն՝ 'ի լինել նոցա զէնընկէց, բայց զզօրավար նոցա ածել զբառամբ՝ իւ և է հնարիւք։

ՀԴ. Յոգունք՝ անպատուհաս ազատութեանն խոստմամբ՝ դարձան 'ի հնազանդութիւն, այլ ընդդէմ նենգաւոր հնարից Տակփարինայ մղեցաւ պատերազմ, ոչ անհաւասար։ Եւ քանզի տկարագոյն էր նա յօրինաւոր Ճակատամարտ և աջող յասպատակ, և վասն այն 'ի ջոկս ջոկս զզօրսն խաղացուցանէր, և խուսափել տայր նոցա յերեսաց թշնամեաց, կամ՝ 'ի դարանի առնէր զնոսա, բանակք երբեակ յերիս առաջս կարգեցան. միումն Կուռնելիոս Սկիպիոն կայր փոխանորդ զօրավարի, զի յայնմ կուսէ թշնամին աւար հարկանէր զերկիր Լեպտիտաց, և 'ի Գարամանս փախուցեալ ապաստանէր. 'ի միւսում կողման զօրավարէր որդին Բլեսեայ բանակաւն իւրով, զի մի թշնամին ընդ աւանս կիրտացուց ասպատակել կարասցէ անպատիժ. իսկ 'ի միջի ինքն իսկ զօրավարն ընտրելովք գնդիւք կայր, մարտկոցս

և դղեակս 'ի դիպող վայրս կառուցեալ, անձուկս և ընդդիմարգելս զամենայն տեղիս պատրաստեալ. որպէս զի յո՛ ուրեք և դառնային, զմնան ինչ զօրացն Հռովմայեցւոց 'ի դիմաց կամ 'ի կողաց և յաճախս իսկ յետկուսէ գտանէին. այսու օրինակաւ յոգունք 'ի նոցանէ սպանան կամ 'ի գերութիւն վարեցան։ Յայնժամ զբանակն եռամամնեայ 'ի գումարտակս բաղումս բաժանեալ, կացոյց 'ի վերայ նոցա Հարիւրապետս պատերազմափորձս. և յանցանել ամարայնոյ՝ ոչ որպէս սուորութիւն էր՝ կոչեաց զզօրսն յետս, կամ նստոյց 'ի ձմերոցս նախնոյ գաւառին, այլ որպէս 'ի յարձակաբան մարտի ամրոցս կառոյց, զի տեղեակք վայրացն և պատրաստք 'ի պատերազմ, նեղեսցեն զզօրս Տակփարինայ՝ որ հիւղից 'ի հիւղս զնոսա տեղափոխէր, մինչև 'ի ձերբակալ լինել եղբօր իւրոյ, դարձաւ յետս վաղ քան զոր պահանջէրն օգուտ դաշնակցաց. զի Թողոյր նա 'ի Թիկանց զթշնամիս՝ որոց մարթ էր յառնել վերստին 'ի պատերազմ։ Տիբերի համարելով զրաւեալ զպատերազմն, շնորհեաց Բլեսեայ՝ ողջունել զօրացն զնա ինքնակալ, որպէս վաղնջուց էր սովորութիւն՝ զի ցնծութիւն և եռանդն յաղթող զօրականին այսպէս մեծարէր աղաղակաւ զզօրավարս վասն գործոց քաջութեան։ Էին իսկ ինքնակալք բազումք համանգամայն հաւասարք միմեանց. և Աւգոստեայ իսկ ոմանց 'ի զօրավարաց շնորհեալ էր զանունս զայս, այլ յայնժամ Տիբեր 'ի վերջին շնորհ ետ Բլեսեայ զայն պատիւ։

ՀԵ. Ի նմին ամի վախճանեցան արք երևելիք. Ասինիոս Սալոնինոս այր ականաւոր, Թոռն Մ. Ագրիպպայ և Պոլլիոնի Ասինեայ, կրտսեր եղբայր Դրուսոսի, որում Տիբեր խոստացեալ էր 'ի կնութիւն զթոռն իւր. և Կապիտոն Ատէոս՝ զոր 'ի վեր անդր յիշատակեցի, հմտութեամբ քաղաքական իրաւանց անուանի 'ի Հռովմայեցիս, Թոռն Սուլլանեայ ուրումն Հարիւրապետի, և որդի միոյ յատենակալաց ծերակուտին։ Աւգոստեայ կանխաւ տուեալ էր նմա զպատիւ բդեշխութեան, առ 'ի կացուցանել զնա շքով պաշտամանն 'ի վեր քան զԱնտիոստիոս՝ որ 'ի նոյն վարժս գերազանցեր. քանզի դարն այն զերկոսին զնոսա զարդս խաղա-

զութեան 'ի միասին աճ 'ի լոյս։ Բայց Անտիստիոս անկաշառելի ազատութեամբն, վասն որոյ և համբաւոքն հռչակեալ էր. իսկ Կապիտոնի պատրաստ սպասահարկութիւն՝ հաճոյ ևս իշխանաց զնա ընծայեցուցանէր. նմա՝ զի եկաց դատաւոր, թշնամանք յաւելին փառս. իսկ ընդդէմ սորա՝ զի եկաց բդեաշխ, յաճախէր ատելութիւն առ նախանձու։

ՀԶ. Յետ վաթսուն և չորից ամաց փիլիպպեան ճակատամարտին՝ վախճանեցաւ և Յունիա քեռորդի Կատոնի, քոյր Մ. Բրուտոսի, և կին Կ. Կասիոսի։ Կտակ նորա բազում խօսից պատճառս ետ ռամկին. զի էր մեծատուն յոյժ, և զամենայն աւագանին յիշատակեալ մեծարանօք, ոչ ինչ յիշատակ արարեալ էր զինքնակալէն։ Զոր Տիբերի մարդասիրապէս ընկալեալ, ոչ զարձանական նորա արգել, և ոչ զմեծահանդէս սպասս յուղարկաւորութեան նորա։ Քսանեցունց ազգատոհմից ականաւորաց ածան պատկերք յառաջդ. Մանլիոսեանք և Կուինտեանք երևեցան անդ բազմութեամբ հռովմայեցւոց՝ ոչ ինչ նուազ ազնուականաց։ Բայց Կասիոս և Բրուտոս գերափայլեալ այնու, զի չէր տեսանել անդ զպատկերս նոցա։

Գլխակարգուրիւն գրոցս։

Ա. Հասանել Ագրիպպինայ 'ի Բրունդիսիոն, ածեալ ընդ իւր զաձիւն Գերմանիկեայ։

Բ. Ուղևորութիւն նորա մինչև 'ի Հռովմ։ Կոծ հասարակաց։ Դրուսոս և Կլաւդիոս և բդեաշխք երկոքին, ծերակոյտն, և բազումք յոյժ 'ի ժողովրդենէ գնան ընդ առաջ նորա։

Գ. Տիբեր և Աւգոստա զգուշանան չերևել ուրտաքոյ։ Տեսութիւն 'ի չերևել Անտոնեայ մօր Գերմանիկոսի 'ի դամբանական հանդէսս անդ։ Որ ինչ պատճառաք թերևս խափան լեալ նմա։

Դ. Աձիւն Գերմանիկեայ ածի 'ի շիրիմ Աւգոստեայ. տրտմութիւն յոյժ ժողովրդեան, և սէր առ Ագրիպպինա։

Ե. Համեմատել ժողովրդեան գյուղարկաւորութիւն Գերմանիկեայ ընդ հօրն նորա Դրուսոսի, և եպերել զՏիբեր վասն յոյժ նուազ մեծարանս մատուցանելոյ նորա՝ յիշատակի թոռին իւրոյ։

Զ. Հրովարտակ ինքնակալին 'ի մխիթարութիւն քաղաքացւոց, և 'ի քաջալերս։

Է. Հանապազորդութիւն սկսելոց իրաց 'ի կատարումն։ Դրուսոս մեկնի գնալ 'ի Լիւրիկէ։ Տրտունջ զՊիսոնէ վասն յամելոյ նորա հասանել 'ի Հռովմ։ Մահ Մարտինայ դեղատուի։

Ը. Պիսոն զՄարկոս որդի իւր առաքէ յառաջագոյն 'ի Հռովմ, և ինքն երթայ առ Դրուսոս 'ի Լիւրիկէ. խոհական զգուշութիւն մանուկ ինքնակալին։

Թ. Պիսոն հասանէ անագան յԱնկոնա. 'ի մտանել նորա 'ի Հռովմ պատրաստութեամբ, գրգռին ոգիք։

Ժ. Ի վաղիւ անդր Փուլկինիոս Տրիոն յառնէ նմին ումբաստան. և 'ի բողոքել բարեկամաց Գերմանիկեայ՝ զերկրորդն ևեթ տեղի ընդունի 'ի դատախազել։ Տիբերի չառեալ յանձն առնել ինքնին դատաստան, յատեան ծերակուտին առնէ զայն ապաստան։

ԺԱ. Դրուսոս դարձ առնէ 'ի Լիւրիկեայ, և յամեցուցանէ զյաղթանակ իւր։ Պիսոն դատանէ իւր պաշտպանս երիս, 'ի հրաժարել հնգից այլոց 'ի պաշտպանութենէ։

ԺԲ. Տիբեր ողբական ճառիւ յորդորէ զծերակոյտն, տալ վճիռ անաչառ։

ԺԳ. Փուլկինիոս ածէ ընդդէմ ամբաստանելոյն պատճառս սնոտիս վաղնջականս։ Սերուիոս, Վերանիոս, և Վիտելլիոս, բարեկամք Գերմանիկեայ, յառաջ ածեն ուժգին զճշմարիտ յանցանս։

ԺԴ. Հերքումն ամբաստանութեանն անզօր, բաց 'ի մատնէ դեղատուութեան՝ որ անհաւանելի օրինակաւ էր յառաջ մատուցեալ։

Մատհաճութիւնք գատաւորաց։ Սրամտութեան ժողովրդեանն ևս քան զևս զայրացումն։ Պիսոնի դարձ 'ի տուն իւր, ուղեկցելով ընդ նմա միոյ 'ի հազարապետաց ատենական զօրականին։

ԺԵ. Պլանկինա, զօրութեամբն իւրով առաջի Աւգոստայ՝ բաժանէ զդատ իւր 'ի դատէ Պիսոնի։ Պիսոն վերջին անգամ ելանէ յատեան ծերակուտին. և 'ի վաղիւ անդր գտանեն զնա 'ի սենեկի իւրում մեռեալ։

ԺԶ. Աւանդութիւն ընդունելութեան Պիսոնի 'ի Տիբերեայ հրահանգս գրով ընդդէմ Գերմանիկեայ, և սպանութիւն նորա 'ի հրամանէ ինքնակալին՝ առ ահի յայտնութեան իրացն։ Տիբերի 'ի վերին երեսս տրամութիւն և բողոք ընդ մահ Պիսոնի, և ընթեռնուլ 'ի լուր ծերակուտին գիր՝ 'ի նմանէ յառաջ քան զմահ առ ինքն գրեալ։

ԺԷ. ԺԸ. Պլանկինա և Մարկոս Պիսոն արձակին անպարտ։ Սահմանին շնորհակալիք առ Տիբեր առ Աւգոստա առ Անտոնիոս առ Դրուսոս և առ Ագրիպպինա, վասն խնդրելոյ նոցա զվրէժ Գերմանիկեայ։ Կլաւդեայ մոռացեալ 'ի սկզբան անդ անուն, և ապա տարաժամ յաւելեալ։ Տեսութիւն 'ի խաղ բախտին, վասն ածելոյ յինքնակալութիւն զայր ամենեւին լեալ անտես։

ԺԹ. Վարձք ամբաստանողաց, և անհաւասակ կարծիք զմահուանէն Գերմանիկեայ։ Դրուսոսի ընդունել զպատիւս յաղթանակի. և կորուսանել նորա զմայր իւր Վիպսանիա, զդուստր Ագրիպպասայ։

Ի. Տակիտարինաս սկիզբն առնէ պատերազմին յԱֆրիկէ, և հարկանէ զմի 'ի գնդաց հռովմայեցւոց։

ԻԱ. Լ. Ապրոնիոս տասանորդէ զդունդն, և խստութեան նորա արդասիք՝ կանգնումն բանակին։ Հելուիոս Հռուփոս, մի 'ի զինուորաց, արժանի լինի քաղաքական պսակի։ Նումիդացիք յետ տապատակելոյ առ ժամանակ մի, գնան հալածական յանապատս իւրեանց։

ԻԲ. Դատ Լէպիդայ։ Տիբերի մերթ ցասումն և մերթ գթութիւն. և չկամել նորա, զի Դրուսոս՝ սահմանեալն 'ի բգեշխութիւն՝ նախ ինքն տացէ զկարծիս։

ԻԳ. Լէպիդա, թէպէտև շարժեալ զամենեսին 'ի կարեկցութիւն, սակայն գատապարտի յաքսոր։

ԻԴ. Կոչ Դեկիմոսի Սիլանեայ, որ անկեալ 'ի շնորհս Աւգոստեայ՝ վասն անօրէն ընտանութեանն ընդ Թոռին նորա Յուլիայ, ինքնակամ աքսորեալն էր։

ԻԵ. Խորհուրդ ամոքելոյ զպատկեան պոպպեան օրէնս, որով զեղծանէին չարախօսք։

ԻԶ. Արտուղի բանք զօրինաց, որ սակաւք 'ի սկզբան՝ և ապա բազմացան։ Գողութիւն օրինադրութեանցն Սերուիոսի Տուլլիոսի։

ԻԷ. Զերկոտասան տախտակացն։ Հերձուածք ընդ կարգս քաղաքացւոց, և յոռութիւնք՝ յորոց յառաջ եկն բազմութիւն օրինաց։

ԻԸ. Ոմանցի յանձն լեալ ուղղել զբարս, 'ի կիր առնու նա հայթայթանս քան զչարիսն վատնդաւորս։ Բազմամեայ տարաձայնութիւնք։ Աւգոստ պնդէ զզօդ իշխանութեանն. վարձք խոստացեալք ամբաստանողաց օրինադանցութեան. ահարկութիւն չարախօսութեան յամենայն ընտանիս։ Պաշտօնեայք կացուցեալք 'ի Տիբերեայ ցածուցանեն զարհաւիրս, ամփոփելով զպիտառութիւն պապեան պոպպեան օրինաց։

ԻԹ. Տիբեր ընծայեցուցանէ ծերակուտին զՆերոն, զանդրանիկն Գերմանիկեայ։ Ամուսնութիւն նորա ընդ Յուլիայ դստեր Դրուսոսի։ Կլաւդեայ խոսաու�զանեցուցանելոյ միումյորդւոց իւրոց զդուստր Սէանոսի։

Լ. Մահ երկոցունց արանցն երևելեաց, Լ. Վալուսեայ և Սալլուստիոսի Կրիսպեայ։ Բարք Սալլուստիոսի. 'ի վերջկոյս կենաց նորա եղկանալ մտերմութեան ինքնակալին ընդ նմա։

ԼԱ. Բդեշխութիւն Տիբերի և որդւոյ նորա Դրուսեայ։ Տիբեր թողու Դրուսեայ վարել ինքնին միայնակ զպաշտամունս բդեշխութեան, և ինքն մեկնի 'ի Կամպանիա։ Վէճ Կորբուլոնի ընդ Սիլլայի, վասն չմատուցանելոյ պատանւոյն զարժանի մեծարանս հասակի և ասպիճանի նորա։ Կորբուլոնի բողոք ունել զյոռութենէ փողոցաց, և զհոգ նոցին յանձն առնուլ։

ԼԲ. Վերսին թշնամութիւնք Տակիարինայ յԱֆրիկէ։ Թշնամանք Սեքստոսի Պոմպէի ընդդէմ Մանիոսի Լեբիդեայ. կալ սորա փոխանակ բդեշխի յԱսիա։ Խնդիր առ Տիբեր ընտրելոյ զոք 'ի կուսակալութիւն Ափրիկեայ։

ԼԳ. Կեկինա առաջարկէ արդելուլ կուսակալաց՝ չածել զկանայս իւրեանց 'ի մարդս։

ԼԴ. Վալերիոս Մեսսալլինոս զդէմ ունի առաջարկութեան նորա. և օգնէ նմա Դրուսոս։

ԼԵ. Բլեսոս մօրեղբայր Սէանոսի ընդունի զկուսակալութիւն Ափրիկեայ։

ԼԶ. Զեղծումն պատկերաց ինքնակալին, և ընդ հովանեաւ նոցին առնելոյ զամենայն ստահակութիւն և զթշնամանս։ Հռուփիլլայ դատապարտութիւն վասն այսր անկարգութեան։

ԼԷ. Ապստամբ երկու հռովմայեցիք պատուհասին վասն զրպարտելոյ իւրեանց զՄագիոս կուսակալ։ Վարկ բարի զԴրուսեայ։

ԼԸ. Ամբաստանութիւնք հարստահարութեան և քրէական յանցանաց։ Ցուզմունք 'ի Թրակիա։

ԼԹ. Նուաճէ զայնոսիկ Պ. Վելլեոս։

Խ. Վտարանջութիւն 'ի Գալլիա վասն անհնարին ծանրութեան վաշխից, առաջնորդք վտարանջութեանն Յուլիոս Փլորոս և Յուլիոս Սակրովիր։

ԽԱ. Ակիլիոս Աւիոլա նուաճէ զԱնգլեկաւս և զտուրոնացիս։

ԽԲ. Նուաճին և Տրևիրք։ Փլորոս երթայ զիւրովին։

ԽԳ. Սակրովիր զօրավար եղուացւոց կազմէ բանակ քառասուն հազար արանց, և յաւելու օրըստօրէ բազմութիւն նոցա։

ԽԴ. Ամլ և այլ կարծիք հռովմայեցւոց 'ի լուր վտանգին, զոր համբաւ ստուարացուցանէր ևևս։ Զայրոյթ հասարակաց ընդդէմ Տիբերի. և ցուցանել նորա աներկիւղութիւն քան յամենայն ժամանակի, և չելանել բնաւ արտաքս։

ԽԵ. Սիլիոս խաղայ ընդդէմ եղուացւոց. եռանդն զօրականին։ Սակրովիր կարգէ զբանակ իւր երկոտասան մղոնաւ հեռի։

ԽԶ. Բեկումն գալլիացւոց։ Սակրովիր երթայ զիւրովին 'ի տան ուրեք մերձ յԱեգոստոդոն, ուր մեկնեալն էր ընդ մտերմագոյնս 'ի բարեկամաց։ Սոքա ևս յիրեբաց սպանեալ, խարոյկ ամենեցուն եղանի տունն։

ԽԷ. Տիբեր յայտ առնէ ծերակուտին զսկիզբն և զկատարած մարտին միանգամայն։ Պատճառի նա գնալ 'ի Գալլիա։

ԽԸ. Տիբեր տայ սահմանել յուզարկաւորութիւն Աուլպիկեայ Կուիրինոսի։

ԽԹ. Լուսորիոս Պրիսկոս ամբաստանի 'ի քրէական յանցանս, որպէս թէ տաղս 'ի մահ Դրուսոսի յօրինեալ՝ մինչդեռ կայր նա 'ի հիւանդութեան։

Ծ. Պաշտպանէ նմա Մ. Լեպիդոս։

ԾԱ. Լուսորեայ բանաբարկութիւն և սպանումն։ Վճիռ յատաղելոյ յայնմհետէ տասն օր ընդ դատապարտութիւն և ընդ պատուհաս։

ԾԲ. Շինուածապետք խնդրեն վճիռ 'ի Ծերակուտէն, սանձահարելոյ զշռայլութիւն, մանաւանդ 'ի կոչունս։ Ծերակոյտն ապատան առնէ զայն յինքնակալն։

ԾԳ. ԾԴ. Տիբեր գրէ առ Ծերակոյտն. լաւագոյն համարեալ մնալ պարապոյ առ 'ի բառնալ զչարիսն, յոր թերևս ցաջողէր խըստութիւն։

ԾԵ. Շռայլութիւն, ծայրայեղ առաւելեալ 'ի պատերազմէն Ակտիոնի մինչև յինքնակալութիւն Գալբայ, զիջանի տակաւ։ Պատճառք այսր բարեկարգութեան բարուց հասարակաց։

ԾԶ. Տիբեր խնդրէ տալ Դրուսոսի իշխանութիւն հազարապետական, առհաւատչեայ ինն ինքնակալութեան։

ԾԷ. Պատիւք և շողոմք, շռայլեալք վասն այսորիկ հօրն և որդւոյ։

ԾԸ. Սերուիոս մալոգինեցի, քուրմ Դիոսի, թեկն ածէ զկուսակալութեան Ասիոյ, հակառակ սովորութեան՝ որ արգելոյր քըրմաց չկուսակալել։

ԾԹ. Լենտուլոս հաւահմայ և այլք ոմանք զդէմ ունին, և խնդիր նորա առաքի առ ինքնակալն։ Գիր Դրուսոսի, յորում գուն գործէ ցուցանել չափաւորութիւն, այլ դատանի լի գոռոզութեամբ։ Դրուսոս կորուսանէ զշնորհս իւր առ Ժողովրդեան։

Կ. Զեղծումն իրաւանց սպասանի 'ի մեհեանս Ելլադայ և Ասիոյ։ Պատճառք այլ և այլ քաղաքաց առաջարկեալք յաղագս քննութիւն ծերակուտին, որում Տիբեր հաճի թողուլ զպատկեր նախնի ազատութեան նորա։

ԿԱ. Եփեսացւոց շնորհի խօսել. աւանդութիւն նոցա զծննդենէ Ապոլոնի և Արտեմեայ. արտունութիւնք մեհենի նոցա յաւուրց հետէ Բաքոսի։

ԿԲ. ԿԳ. Ցուցանել և այլոց քաղաքաց զարտունութիւնս իւրեանց։ Ծերակոյտն յանձնէ բգեշխից քննել զպատճառս նոցա, և 'ի մէջ բերել։ Վճիռ ծերակուտին 'ի հաստատութիւն իրաւանց, և 'ի բարձումն զեղծմանց։

ԿԴ. Հիւանդութիւն Աւգոստայ։ Դարձ ինքնակալին 'ի Հռովմ։ Ծերակոյտն սահմանէ աղօթս հասարակաց, և զհանդէս խաղուց։ Կասկած զՏիբերեայ ոխերիմ ատելութեան ընդ մօրն։

ԿԵ. Ամենապարտ մարդահաճութիւնք։ Պատմագրին հարկ 'ի գրել առնելոյ զայնոսիկ, յահարկութիւն չարաց՝ նախատելոյ առ յետին։ Տիբեր ոչ ինչ նուազ ատեայ զշողոմս, թէ և թշնամի ազատութեան։

ԿԶ. Կ. Սիլանոս, փոխանակ բգեշխի Ասիա, ամբաստանի 'ի հարըստահարութիւն և 'ի քրէական յանցանս։ Մամերկոս, Սկաւրոս, Ցունիոս Ռեթոն, և Բրուտիդիոս Նիգեր, միաբանին ընդդէմ նորա։

ԿԷ. Գելլիոս Պոպլիկոլա և Մ. Պակոնիոս յաւելուն 'ի չարախօսս նորա։ Ինքնակալն ինքնին 'ի նեղ արկանէ զամբաստանեալն 'ի հարցփորձ բազմապատիկ։ Երկիւղ խափանէ զամենեսեան 'ի պաշտպանելոյ նմա։

ԿԸ. Լ. Պիսոն առաջարկէ արգելուլ զնա 'ի հրոյ և 'ի ջրոյ, և աքսորել զնա 'ի Գիսարա կղզի: Տոլաբելլա յառնէ ընդդէմ բարուց Սիլանոսի, և հարցանէ՝ թէ ոչ ևս արդեաք իցէ օրէն առն չարահամբաւելոյ ունել իշխանութիւն, և չիցէ ինքնակալն կարող շնորհին:

ԿԹ. Տիբեր մերժէ զայն ընդարձակութիւն իշխանութեան: Ճառ նորա արուեստակեալ 'ի շնորհուկս ժողովրդեան: Տալ նորա աքսորել զՍիլանոս 'ի Կիւթնոս, քան 'ի Գիսարա կղզի անմարդի և սոսկալի 'ի բնակութիւն:

Հ. Կեսիոս Կորդոս դատապարտի 'ի յանցանս հարստահարութեան, ըստ վկայելոյ կիւրենացւոց: Տիբեր հակառակ կայ ամբաստանութեան Լ. Ենիոսի 'ի քրէական յանցանս, որոյ հալեալ էր զարծաթի պատկեր ինքնակալին: Վատ մարդահաճութիւն Ատէոսի Կապիտոնի:

ՀԱ. Զեռեղի յԱնտիոն ձօնի՝ նուիրեալ Բախտին Հեծելոյ, վասն առողջութեան Աւգոստայ: Տիբեր սահմանէ Սերուիոսի մալոգինեցւոյ չկարել կուսակալել յԱսիա:

ՀԲ. Լեպիդոս ընդունի հրաման նորոգելոյ և զարդարելոյ յընչից իւրոց զապարանս Պաւլոսի, զձեռակերտ իւրոյ ազգատոհմի: Տիբեր յանձն առնու կառուցանել վերստին զտեսարանն Պոմպէի այրեցաւեր: Մերակոյսն տայ կանգնել անդ զանդրի Սէանոսի: Տիբեր պարգևէ Բլեսոսի զշուք յաղթանակի 'ի շնորհս Սէանոսի քեռորդւոյ նորա:

ՀԳ. Որ ինչ զկնի պատերազմին Տակիտարինայ: Ստահակութիւն նուիրագործոյն պահանջելոյ 'ի Տիբերեայ՝ բնակութիւն վասն իւր և վասն բանակի իւրոյ:

ՀԴ. Բլեսոս հալածէ զնա ուժգին, և զեղբայր նորա ձերբակալ առնէ, առանց 'ի գլուխ տանելոյ զպատերազմն: Ընդունի նա հրամանաւ Տիբերի զանուն ինքնակալի, որ ոչ ևս այլում ումեք սոսկականի յայնմհետէ շնորհեցաւ:

ՀԵ. Մահ Ասինիոսի Սալոնինեայ, և Ատէոսի Կապիտոնի իրաւագիտի:

ՀԶ. Ցուշարկաւորութիւն Յունեայ, քեռ Բրուտոսի, կնոջ Կասիոսի, քեռորդւոյ Կատոնի: Ածին 'ի հանդիսի անդ ամենայն պատկերք ազգատոհմի նորա. բաց 'ի պատկերաց Բրուտոսի և Կասիոսի:

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից երից ամաց. յորս կացին բգեաշխ

Մ. Վալերիոս, և Կ. Աւրելիոս.

ԿԼ. Տիբեր Ներոն կեսար Աւգոստ Դ. և Դրուսոս կեսար Բ.

Կ. Սուլպիկիոս Գալբա, և Դ. Ատերիոս Ագրիպպաս:

Ա. Հ. 773.

Ն. Ք. 20.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ Դ.

Ա. Առ քդեշխութեամբ Կ. Սպինիոսի և Կ. Ան-տիստեայ, յիններորդ ամի ինքնակալութեան Տիբերի, տեսանելով նորա զհասարակապետութիւնն 'ի խաղաղութեան, և զտուն իւր 'ի պայծառութեան, (զի և զմահ Գերմանիկեայ ընդ յաջողութիւնս իւր համարէր,) սկսաւ յանկարծ՝ 'ի խռովել ընդ նմա բախտին՝ խստանալ կամ զխստաբարոյից արանց զձեռս զօրացուցանել։ Սկզբնապատճառ իրացս եղև Սէանոս, ատենական զօրականին հրամանատար, զորոյ ցուցի 'ի վերս անդր զզօրութիւն. աստանօր յաւելից զազգատոհմէ նորա, և զբուսոյ բարուց, և որով եղեռնագործութեամբ յափշտակել հնարէր զիշխանութիւնն։ Ծնեալ էր սա 'ի Վալսինիա. հայր սորա էր Սէոս Ստրաբոն ասպետ հռովմայեցի, որ 'ի մանկութենէ զհետ երթեալ էր Կայիոսի կեսարու, թոռին դիւցազնին Աւգոստեայ. և համբաւէր վաճառեալ նորա Աւպիկեայ առն ճոխի և շռայլի զհամեստութիւն իւր։ Սորա այլ և այլ հնարիւք այնպէս զՏիբեր կաշկանդեալ ընդ իւր, զի զայրն խորախորհուրդ ընդ այլս՝ անզգոյշ և խորհրդակից իւր արարեալ էր, ոչ այնչափ նրբամտութեամբ՝

(զի 'ի հանգոյն հնարից և ինքն յաղթեցաւ,) որչափ 'ի ցաստանել գիցն ընդդէմ հռովմայեցւոց, որոց հաւասարապէս եղև 'ի կորուստ զօրանալ նորա և կործանել։ Էր նա մարմնով կորովի 'ի տոկ աշխատութեանց, և մտօք յանդուգն. գիտէր զանօրէնութիւնս իւր ծածկել, և զայլս զրպարտել յեղեռն. մարդահաճոյ և գոռոզ միանգամայն. արտաքոյ՝ համեստութեամբ պաճուճեալ, իսկ 'ի ներքոյ՝ մոլեալ գահասիրութեամբ, առ որ 'ի կիր արկանէր առատութիւն և շռայլութիւն, և յաճախս ևս բերէր յանձին ժրութիւն և արթնութիւն՝ որ ոչ ինչ նուազ գտանին ինքասակար, եղեալ պատրուակ բարձաձգութեան։

Բ. Ջիշխանութիւն հրամատարութեան ատենական զօրաց, որ տկարն էր յառաջագոյն՝ զօրացոյց, ածեալ 'ի մի ուրեք զօրանիստ տեղի՝ զգումարտակս սփռեալս յայլևայլ կողմանս քաղաքին. որպէս զի միանգամայն կարասցեն ընդունել զպատուէրս, և բազմութեամբն և զօրութեամբ յերեսաց միմեաց առցեն վստահութիւն, և լիցին այլոց ահացուցիչ։ Պատճառանս առ այս յաւելոյր, զի զօրք այսր անդր սփռեալք մեղկանային. իսկ 'ի միասին կացեալ, 'ի պահանջել յեղակարծ հարկի՝ հզօրագոյնս հասանէին յօգնութիւն, և 'ի խստագոյն հրահանգս կային 'ի բանակի հեռի 'ի հրապուրանաց քաղաքին։ Կազմեալ ապա զբանակն՝ սկսաւ մեղմով յինքն յանկուցանել զզօրսն, ողջունելով զնոսա, և ձայնելով յանուանէ. ինքնին զհարիւրապետս և զհազարապետս կացուցանէր, և 'ի ծերակուտին իսկ թիկունս իւր պատրաստէր պատուով և աւագութեամբք, ներելով նմա ցիբերի. որ այնպէս հակամիտեալ էր 'ի նա, զի վաստակակից իւր զնա ոչ միայն 'ի խօսս՝ այլ և 'ի ծերակուտին և առաջի ժողովրդեան կոչէր զնա, և թոյլ տայր 'ի տեսարանս և 'ի հրապարակս զպատկերս նորա պատուել, ևս և 'ի մէջ արծուէդրօշ լեգէոնաց։

Գ. Բայց արքունիք լի էին կայսերօք. արքայորդի պատանի, թոռունք յարքունս հասեալք, խափան առնէին գահասիրութեան նորա. և քանզի վտանգ էր զամենեսին միանգամայն կորուսանել, հարկ էր նենգութեան՝ եղեռն ընդ մէջ՝ առնուլ պարապ։ Բուռն

հարեալ 'ի գաղտնաձաձուկ հնարս, սկսաւ նախ 'ի Դրուսոսէ՝ ընդ որում օրսայը, թշնամանեալ սուղ ինչ յառաջ 'ի նմանէ. քանզի Դրուսոս չհանդուրժէր ընդ նախանձորդ իւր, և զայրացեալ յոյժ էր ընդ նմա, և 'ի սաստիկ գժտութեան ուրեք ձեռն ընդդէմ նորա վերացուցեալ, և 'ի մատչել նորա յառաջ՝ զերեսս նորա ձեռակոծեալ էր։ Արդ Սէանոսի, որ զամենայն չարարուեստ հնարս 'ի կիր արկանէր, դիւրապատրաստ թուեցաւ վրէժխնդրութիւն՝ մատչել առ կին նորա Լիւիա։ Բոյր էր սա Գերմանիկեայ, անգեղեայ 'ի մանկութեան, այլ յետոյ վայելչացեալ գեղով. ընդ սմա որպէս թէ վառեալ սիրով, հրապուրեաց զնա 'ի շնութիւն. և իբրև 'ի նախկին եղեռնն զառաջեցոյց զնա, (քանզի կին 'ի կորուսանելն զպատկառանս՝ ոչ ևս յայլմէ իմեքէ եղեռանէ հրաժարէ,) 'ի սպանութիւն առնն հաւանեցոյց զնա՝ յուսով լինելոյ իւր կին և գահակից։ Ըստ այսմ օրինակի այն՝ որ թոռն էր Աւգոստեայ, նու Տիբերի, և մայր որդւոց Դրուսոսի, զանձն և զհարս իւր և զսերունդս անարգ շնութեամբն թշնամանեալ, զգեղեցիկ նսեհն՝ զոր 'ի ձեռին ունէր՝ ընդ նախատելի և անստոյգ յուսոյ փոխանակեաց։ Համախոհ անօրէնութեանն արարեալ էր Սէանոսի Զեւդիմոս բարեկամ և բժիշկ Լիւիայ, որ պատճառանօք արուեստին յաճախէր առ նա միայնակ. և զկին իւր Ապիկատէ՝ յորմէ որդիք երեք լեալ էին նմա՝ արձակեաց Սէանոս 'ի քաց, որպէս զի մի կասկածելի լիցի Լիւիայ։ Բայց դժընդակութիւն եղեռանն յաճախէր նմա երկիւղ, և այլևայլ խորհուրդս և յամեցումն 'ի ներքս ածէր։

Դ. Ի սկզբան այսր ամի՝ Դրուսոս, մի յորդւոց Գերմանիկեայ, էառ զպատմուճան այրական. և որ ինչ վճռեալ էր ծերակոյտն վասն Ներոնի եղբօր նորա, յաւել շնորհել և Դրուսոսի։ Արար և Տիբեր ճառ ինչ, յորում գովէր յոյժ զորդի իւր, զի խնամ հայրենի 'ի վերայ եղբօրորդւոց իւրոց ունէր. զի թէպէտ և դժուարին է համաձայնութեան կալ 'ի միասին ընդ իշխանութեան, սակայն Դրուսոս բարեկամ պատանեացն՝ կամ դէթ ոչ թշնամի նոցա համարէր։ Յետ այսորիկ 'ի մէջ ածաւ անդրէն՝ 'ի վաղուց և յաճախ կեղծեալն խորհուրդ, ելանելոյ Տիբերի յայց դաւառաց. և պատ-

Ճառանս ածէր նա առ այս զբաղմութիւն հինաւուրց զօրականին, և զհարկ բովանդակելոյ զլեգէոնս՝ զօրաժողով վերստին առնելով. զի պակասէին կամակար զինուորեալք, որք եթէ էին ևս՝ ոչ նովին քաջութեամբ և հրահանգօք զինուորէին, զի յաճախագոյնս կարօտք և վտարանդիք էն՝ որք ինքնակամն զինուորին։ Եւ էած համառօտիւ 'ի համար զլեգէոնս, և իւրաքանչիւր 'ի նոցանէ որոց գաւառաց կային 'ի պահ. զորոց և ինձ աստանօր պարտ է տալ զհամար, ո՛րչափ ինչ զօրք յայնժամ էին հռովմայեցւոց, ո՛յք արքայք նիզակակիցք, և քանի՛ անձուկ սահմանք ինքնակալութեան։

Ե. Նաւատորմիղք կրկին յերկաքանչիւր ծովու 'ի պահ կային Իտալիոյ, մին առ Մեսինաւ, միւսն առ Հռաւեննաւ. և զմերձաւորագոյն ծովեզերս Գալլիոյ պահէին նաւք պատերազմիկք, զորս Աւգոստեայ յակտիական մարտին նուաճեալ և յղեալ էր 'ի փորոյուլեանն գաղթական, հզօր թիավարօք։ Բայց գլխաւոր զօրութիւն ինքնակալութեանն էր 'ի Հռենոս, պատրաստարան ընդդէմ գերմանացւոց և գալլիացւոց առհասարակ, լեգէոնք ութ։ Երեք 'ի նոցանէ ունէին զՍպանիա դեռ ևս նուաճեալ. զՄաւրիս՝ Յուբաս արքայ ընկալեալ էր պարգև 'ի հռովմէական ժողովրդենէ. զկողմանս Աֆրիկեայ լեգէոնք երկու, և այլ երկուք պահէին զԵգիպտոս։ Իսկ յԱսորւոց մինչև 'ի գետն Եփրատ որչափ ինչ երկիր լայնածաւալ 'ի ծոցի անդ է՝ սահմանակից Աղուանից և Վրաց և այլոց թագաւորութեանց, որոց հզօր ինքնակալութեանս մերոյ պաշտպանեն փառք ընդդէմ օտար պետութեանց, պահէին քառեակ լեգէոնք։ Թրակիա էր ընդ ձեռամբ Հռոմեական մետալկեայ և որդւոց Կոտշի։ Ի Պաննոնիա լեգէոնք կրկին, և այլ երկուք 'ի Մեսիա ունէին զեզերս Դանուբ գետոյ։ Նոյնչափ և 'ի Դալմատիա կային. որք ըստ դրից գաւառին զայլս յետկուսէ պատսպարէին. որպէս զի 'ի կարօտել Իտալիոյ յանկարծ օգնականութեան՝ մի՛ հեռի գտցին, թէպէտ և էին 'ի քաղաքին զօրք պահեստի երրեակ գունդք քաղաքացւոց, և ինն ատենականք. գումարեալք առհասարակ յԵտրուրիոյ, յՈւմբրիոյ, 'ի նախնոյն Լատիոնէ, և 'ի վաղնջուց գաղթականաց հռովմայեցւոց։ Յայսոսիկ է յաւելուլ և ըզ

նաւս պատերազմիկս նիզակակից ազգաց, և զՀեծե-
լագունդս և զոժանդակ զօրս կարգեալս ի դիպող գա-
ւառս՝ յորս ոչ ինչ նուազէր զօրութիւն. այլ թէ քանի՛
ինչ, չունիմ ասել Հաւաստեաւ. զի ըստ Հարկի իրաց
այսր և անդր ածէին, էր զի աՃէր թիւ նոցա, և էր
զի նուազէր։

Զ. Արժան Համարիմ և զայլովք մասամբք Հասարա-
կապետութեան անցանել՝ որով օրինակաւ ցայնժամ
տնտեսէին, մինչև եբեր այն ամ զսկիզբն յեղաշրջելոյ
իշխանութեանն Տիբերի 'ի յոռին։ Ի սկզբանէ անտի
ինքնակալութեան՝ իրք Հասարակաց, և իւրաքանչիւ-
րոց իսկ կարևորագոյնք, յատենի ծերակուտին յան-
ձանձէին. և օրէն էր ատենակալաց 'ի մէջ բերել զկար-
ծիս իւրեանց. և 'ի զառածանել նոցա 'ի մարդահա-
Ճութիւն և յաչառանս, խափանէր զնոսա ինքնակալն.
ինքն բաշխէր զաւագութիւնս ըստ ազնուականու-
թեան տոհմից, ըստ քաջութեան 'ի պատերազմի, և
ըստ Ճարտարութեան արուեստից 'ի խաղաղութեան.
որպէս զի ընտրելագոյնք սովորաբար էին յառաջ մա-
տուցեալքն։ Բդեշխից և կուսակալաց էր պատիւ սե-
փական, և խոնարհագունից իսկ դատաւորաց յարգէր
իշխանութիւն. և պահպանէին օրէնք, 'ի բաց առեալ
զինդիր գերագունի իշխանութեան։ Պաշար ցորենոյ,
տուրք արծաթոյ, և այլ հասք հասարակաց, 'ի ձեռն
ժողովոյ ասպետաց հռովմայեցւոց տնտեսէին։ Ինքնա-
կալն զիւրոց ընչից առանձին տնտեսութիւն յանձնէր
արանց հաւատարմաց, ծանօթից իւրոց կամ 'ի համ-
բաւոյ վկայելոյ. և միանգամ կացուցեալ զնոսա 'ի
գործ, ունէր զնոսա 'ի սպառ. մինչև բազմաց 'ի նոցանէ
ծերանալ 'ի պաշտամանն։ Բայց թէպէտ և նեղէր ռա-
միկն առ թանկագնութեան ցորենոյ, սակայն ոչ ինք-
նակալին էր այն մեղ. զի նա ոչ խնայէր 'ի ծախս և 'ի
խնամն անդոյ պտղաբերութեան, և ընդդէմ արկա-
ծից ծովու, և զգուշանայր զի մի յաւելուցուն հարկք
'ի վերայ գաւառաց, և մի յառաջագոյն սահմանեալքն՝
զոշաքաղութեամբ պահանջեսցին. որպէս զի ոչ զգա-
նից, և ոչ զհատանելոյ ընչից 'ի գանձ արքունի, բանք
լինէին։

Է. Սակաւք էին ինքնակալին կալուածք Իտալիա,

սպասք չափաւոր, և ձերբազատք յարքունիս նուա-
զունք. եթէ էր նորա վէճ ընդ ումեք, ատեանն և դա-
տաւորք դատէին. և թէպէտ յայսմ ամենայնի ոչ վա-
րէր նա քաղցրութեամբ, այլ տխուր և դժնեայ, և յա-
ճախ ևս ահարկու, սակայն մինչև էր սպանութեամբն
Դրուսոսի յեղափոխութիւն լեալ իրաց աշխարհին, 'ի
չափու ունէր զանձն. զի կենդանեաւ Դրուսոսի նոյն
կարգք պահէին։ Քանզի Սէանոս 'ի սկզբան իշխանու-
թեանն գուն գործէր բարեխրատ զանձն ցուցանել.
երկնչէր 'ի վրէժխնդրութենէ Դրուսոսի՝ որ ոչն ծաղ-
կէր զհեռ իւր, և ստէպ բողոքէր զայլոց ուրուք առ
իւրև վաստակակից ինքնակալութեան անուանելոյ,
և ասէր. Զի՞նչ պակասէ առ 'ի կոչել զնա գահակից.
դժուարին 'ի սկզբան ևեթ է յոյս տիրելոյ. այլ իբրև
յանդգնի ոք յայն, գտանէ 'ի պատրաստի նպաստս և
ձեռնտուս. այժմն ըստ կամաց նորա կազմեալ բա-
նակ, և տուեալ 'ի ձեռս նորա զօրք, պատկեր նորա
կանգնեալ 'ի տեսիլ առ տեսարանաւ Կն. Պոմպէի, և
արենակցութիւն թոռանց նորա ընդ Դրուսեանս,
հարկ առնեն աղերսել զնա 'ի չափաւորութիւն։ — Ոչ
գուն ուրեք, և ոչ առ սակաւս ոմանս տրտնջէր զայս-
ցանէ Դրուսոս. և ամենայն գաղտնեաց նորա մատն
լինէր կին նորա դրուժան։

Ը. Վասն որոյ Սէանոս պարտ համարեցաւ փութալ
'ի գործ. և այնպէս պատրաստեալ զմահադեղն՝ որ
յամր ազդմամբ զբնական ախտի բերցէ զնմանու-
թիւն, արբոյց նմա զայն 'ի ձեռն Լիգդոսի ներքինւոյ,
որպէս ծանուցաւ յետ ութից ամաց։ Բայց Տիբեր զա-
մենայն աւուրս՝ յորս տևեաց հիւանդութիւն որդւոյն՝
անվեհեր ամենևին 'ի ցոյց արիութեան, ևս և 'ի մե-
ռանել նորա մինչև էր թաղեալ, գնայր յատեան ծե-
բակուտին. և հրամայէր բդեշխից, որք իբր առ տրխ-
րութեան բազմէին 'ի կայս հասարակ ատենակալաց,
անցանել կալ 'ի տեղի պատուոյ իւրեանց. և զփղձուկ
սրտին զսպեալ, երկայն ճառիւ սփոփէր զծերակոյտն
համակեալ յարտասուս. և ասէր. Գիտեմ զի թերևս
ստգտանիցիմ վասն երևելոյ իմոյ 'ի ծերակուտի՝ այն
ինչ սգազգեաց. զի յոգունք 'ի սգաւորաց հազիւ ընդ
ընտանիսն խօսել հանդուրժեն, հազիւ տեսանել զլոյս.

ոչ պարսաւեմ զնոսա 'ի վատասրտութիւն, այլ ես 'ի խնդիր հաստատագոյն մխիթարութեան դիմեմ 'ի գիրս հասարակապետութեան։ — Եւ ապա աւաղելով զի Աւգոստա անցեալ էր զաւուրքն, և զի թոռունքն իւր չև ևս հասեալ էին յաւագոյթ, և զի ինքն յալիս խոնարհէր, խնդրէր զի որդիքն Գերմանիկեայ՝ որովք միայն սփոփէր 'ի տառապանս իւր՝ մուծցին 'ի ծերակոյտն։ Ելին արտաքս բդեաշխք, և քաջալերեալ զպատանիսն՝ ածին կացուցին առաջի ինքնակալին. որոյ կալեալ զձեռանէ նոցա, ասէ. Զորբացեալս զսոսա 'ի հօրէ, Հարքն ատենակալք, յանձնեցի քեռւոյ իւրեանց, աղերս արարեալ՝ զի թէպէտ և իցեն նորա որդիք, մի՛ այլազգունել զսոսա քան զորդիս, մի՛ այլազգ մնուցանել, կրթել զսոսա վասն իւր և վասն յետնոց։ Եւ արդ զի կորուսի զԴրուսոս, առ ձեզ դառնամ 'ի պաղատանս, և առաջի դից և հայրենեաց աղերս արկանեմ։ ընկալարուք զթոռունս Աւգոստեայ, զսերեալս 'ի մեծապայծառ հաւուց. հրահանգեցէք զսոսա, զիմ և զձեր լցէք զպաշտօն։ Իսկ ձեզ, Ներոն և Դրուսոս, սոքա լիցին փոխանակ հօր. այնպիսիք էք դուք, զի և բարութիւն ձեր և յոռութիւն 'ի հասարակապետութիւն անդր վերաբերի։ —

Թ. Ի լուր բանիցս այսոցիկ բազում լալիւն եղև, և ուխտք բազումք յերկինս ընթացան. և եթէ Տիբերի աստ վախճան արարեալ էր բանիցն, թողցեր զսիրտս ամենեցուն լի կարեկցութեամբ և ըղձակերտս փառաց իւրոց։ Այլ դարձաւ անդրէն 'ի ձառս գծուծս և ծաղրալիցս՝ նորոգելոյ զհասարակապետութիւնն, և կացուցանելոյ վերատեսուչ զբդեաշխս կամ զայլս ոմանս, և սոքիմքք անընդունելի արար որ ինչ ճշմարտիւ և իմաստութեամբ ասացեալն էր։ Մատուցան յիշատակի անուանն Դրուսեայ՝ ամենայն որ ինչ սպասք սահմանեալ էին Գերմանիկեայ, բազում և այլ ինչ 'ի վերայ յաւելեալ, որպէս սովորութիւն է յետագայ մարդահաճութեան։ Մեծահանդէս պաշտեցաւ նմա յուղարկաւորութիւն բազմութեամբ պատկերաց. զի Ենէասայ հօր յուլեան ազգատոհմին, և ամենայն արքայից ալբայեցւոց, Հռոմուլեայ հիմնադրին Հռովմայ և ազատաց Սաբինայ, Ատտոսի Կլաւսոսի և այլոց կլաւդեանց պատկերքն կարդէ դային 'ի տեսիլ։

Ժ. Ի պատմելն զմահ Դրուսեայ, որ ինչ 'ի բազմաց արժանահաւատ մատենագրաց գտի աւանդեալ՝ զայն 'ի կիր առի. այլ ոչ կամիմ անյիշատակ առնել և զհամբաւն՝ զայնու ժամանակաւ զօրացեալ, որ չև ևս ցարդ խափանեալն է. զի Սէանոս պղծութեամբ զեղծուցեալ յեղեռն զԼիւիա, զազրութեամբ և զԼիգդեայ նեբքինուոյ կաշկանդեաց ընդ իւր զսիրտ։ Քանզի սա հասակաւն և գեղով սիրելի տեառն իւրում, ընդ աւագդաղոյն պաշտօնեայս էր կալեալ. և իբրև սահմանեցաւ 'ի դաւակցաց ժամ և տեղի եղեռանն, ժպրհեցաւ վեր 'ի վայր շրջել զամենայն. և գաղտ չարախօսութեամբ՝ իբր թէ Դրուսոս դեղել զհայր իւր կամէր, ազդ արար Տիբերի մի՛ ըմպել զբաժակն նախընծայ 'ի սեղանի որդւոյն։ Այսու նենգաւ պատրեալ ծերունին, իբրև եկն 'ի սեղան՝ ընկալեալ զբաժակն մատոյց որդւոյ իւրում։ և յըմպել նորա զայն, հաստատեցան կարծիք՝ որպէս թէ Դրուսոսի յահէ և 'ի պատկառանաց մատնեալ զանձն 'ի մահ անդր, զոր հօրն իւրում պատրաստեալ էր։

ԺԱ. Զայսոսիկ 'ի ռամկին հնչեցեալ լուրս, որոց և ոչ մի 'ի մատենագրաց երաշխաւորէ, ոչ ինչ դժուարին է հերքել։ Քանզի, թող զի Տիբեր ընդ փորձ բազմապատիկ էր անցեալ, ո՞վ ոք՝ որոյ իցէ սակաւ ինչ խոհականութիւն՝ առանց քննելոյ մատնէ 'ի մահ զորդի իւր ինքնին իւրովի, ոչ ընդ միտ ածեալ թէ գուցէ յետոյ ստրջանայցէ։ Զէ՞ր պարտ մանաւանդ 'ի խոշտանգանս հարցափորձի զմատռուակ բաժակին մատուցանել, և զսկզբնապատճառ դաւաճանութեանն հետազօտել. չէ՞ր արժան Տիբերի բնաւորական յամրութեամբն, զոր և ընդ օտարս 'ի վար արկանէր, վարել ընդ որդի իւր՝ անստգիւտ ցայնվայր և ոչ 'ի մի ինչ յանցաւորութիւն։ Այլ քանզի չարեացասարտ ամենայնի համարէր Սէանոս՝ առ յոյժ սիրելութեան նորա ընդ ինքնակալին, և այլոց ընդ երկոսին ևս ատելութեան, մնոտիք և անիրաւք ձշմարիտ և աներկբայելի թուէին. և մահու իշխանաց՝ ոՀիրք դժնդակք հաւբաւին միշտ լեալ պատճառք։ Ապիկատեայ կնոջ Սէանոսի ըզդաւաճանութիւնն անդստին 'ի սկզբանէ համախոհութեանն յայտնեալ, հարցափորձիւ Եւդիմեայ և

Լիգդոսի ամենայն ինչ էին 'ի յայտ. և ոչ ոք 'ի մատեանագրաց, որ պարսաւադէտք Տիբերի՝ զայլ ամենայն յանցանս նորա խուզարկեալ ստուարացուցին, եհաս 'ի Թշնամութիւն՝ մեղապարտ առնելոյ զնա յայսմ մասին։ Ոչ կամեցայ լռել զայս, առ 'ի մերժել երևելի օրինակաւս զամենայն համբաւ մնոտի. և աղաչեմ զամենեսեան, յորոց 'ի ձեռս հասցէ վաստակ իմ այս, մի՛ զլուրս չհաւատալիս համբաւեալս 'ի ռամկին՝ նախամեծար առնել քան զՀշմարիտս, և քան զայնոսիկ՝ որ չիցեն այլայլեալ զարմանալեօք։

ԺԲ. Բայց յատենաբանել Տիբերի 'ի գովեստ որդւոյն, ատենակալք և ժողովուրդն ձորձ և բարբառ սգատեսակ յանձին բերէին, կեղծեօք քան յօժարութեամբ. զի ընդ պայծ առանալ անդրէն տանն Գերմանիկեայ խնդային 'ի սրտէ։ Այլ այս սկիզբն սիրոյ՝ և յոյս Ագրիպպինայ մօր նորա՝ վեր 'ի վերոյ թագուցեալ, վաղվաղեցին զվտանգն. քանզի իբրև ետես Սէանոս զսպանօղս Դրուսեայ թողեալ անպատուհաս, և զժողովուրդն և զծերակոյտ ոչ ինչ տրտմեալ ընդ մահ նորա, վստահացեալ ընդ ոՀիրն և ընդ յաջողութիւն առաջնոյ անօրէնութեանն, երկնէր 'ի մտի ո՛ր պէս կործանել և զորդիս Գերմանիկեայ, որոց հասանէր հաւաստեաւ յաջորդութիւն ինքնակալութեան։ Զէր մարթ զերեսին ևս դեղել'ի միասին, վասն տիրասէր հաւատարմութեան պահապանացն, և անմատոյց համեստութեանն Ագրիպպինայ. վասն որոյ սկսաւ զյամառութիւն նորա ամբաստանել, յուզել զվաղեմի հեռ Աւգոստայ, և զարդի թշնամանս Լիւիայ, և ցուցանել զնա Տիբերի գոռոզացեալ որդւովքն և սիրելութեամբ ժողովրդեան, որպէս թէ հետամուտ տիրապետելոյ։ Օգնական առեալ էր իւր և Հարտար զրպարտիչս, ընդ որս և զՅուլիոս Պոստումոս՝ որ շնութեամբն ընդ Մուտիլիայ Պրիսկայ մտերմացեալ էր Լիւիայ, և էր պատկանաւոր 'ի կատարումն խորհրդոց իւրոց. քանզի Պրիսկա շնորհ յոյժ ունէր առաջի Աւգոստայ, և անհաշտելի ընդ նուոյ իւրում առնէր զնախանձաւորն իշխանութեան իւրոյ։ Եւ որք մերձն կային Ագրիպպինայ՝ հրապուրէին զնա, և անօրէն բանիւք գրգռէին զխրոխտ բարս նորա։

ԺԳ. Բայց Տիբեր ոչ դադարէր 'ի յանձանձանաց իրաց աշխարհին, առ 'ի սփոփել 'ի խնամս ինքնակալութեան. իրաւունս առնէր քաղաքայնոց, և զինդիրս նիզակակից ազգաց կատարէր։ Առաջարկութեամբ իւրով վճռեցաւ 'ի խորհրդեան ծերակուտին՝ ապահարկ առնել զերեամ մի զԿիբիր քաղաք յԱսիա և զԵգիոն յԱքայիա, զաւերեալս 'ի սասանութենէ։ Վիբիոս Սիրենոս փոխանակն բդեշխի խոր Սպանիոյ, վասն դրժնէութեանն դատապարտեալ ըստ օրինաց հարստահարութեան՝ վարեցաւ յԱմորգոս կղզի։ Կարսիդիոս Սակերտոս, ամբաստանեալ վասն օգնելոյ իւրոյ Տակփարինայ թշնամւոյ՝ ցորենով, անպարտ արձակեցաւ. նոյնպէս և Կ. Գրակքոս 'ի նոյն յանցանս ամբաստանեալ։ Զսա Սեմպրոնիոս հայր իւր 'ի դեռաբոյս հասակի ածեալ էր ընդ իւր նժդեհակից 'ի Կերկինա կղզի. անդ զարգացեալ ընդ աքսորականս անկիրթս արուեստից հանձարոյ, այնուհետև յանարգ տուրևառս յԱփրիկէ և 'ի Սիկիլիա զպէտս իւր հայթայթէր, այլ ոչ ազատ 'ի վտանգաց բարձր իւրոյ պայմանին. և եթէ ոչ Ելիոս Լամիա և Լ. Ապրոնիոս կուսակալք աշխարհին ափրիկեցւոց պաշտպանէին նմա, վասն ազնուականութեան ազգատոհմին թշուառացելոյ և վասն հայրենի արկածիցն անպարտ կորնչէր։

ԺԴ. Դարձեալ և յայսմ ամի քաղաքանին Ելլադայ հրեշտակս առաքեցին 'ի Հռովմ. սամեցիք զՀերայ, և կովացիք զԱսկլեպեայ մեհենացն զհին իրաւունս ապաստանի խնդրէին հաստատել։ Առաջինքն պատսպարան իւրեանց ածէին զվճիռս Ամփիկտիոնաց, որոց էր բարձրագոյն իշխանութիւն դատելոյ զամենայն, յորժամ Յոյնք տիրէին ծովեզերաց։ Ոչ ինչ նուազ և կովացւոցն իրաւանց էր հնութիւն. յոր արժանիք ևս մեհենին 'ի վերայ յաւելուին. զի յորժամ հրովարտակաւ Միհրդատայ արքայի ընդ ամենայն կղզիս և ընդ քաղաքս Ասիոյ սպանանէին հռովմայեցիք, 'ի մեհենի անդ Ասկլեպեայ ետուն նոցա կովացիք ապաւէն։ Զբողոք ատենակալաց բազմաց բազում անգամ մերժեալ և 'ի դերև ելեալ, յետոյ ուրեմն մատոյց ինքնակալն ծերակուտին ընդդէմ խեղկատակաց, որ աղմկէին յաձախս զհասարակաց խաղաղութիւն, և զազ-

րութիւն բաղում՝ի տունս տունս գործէին։ Ոսկեանն
ևս տեսարան, որ և ոչ մեծ ինն զբօսանս ածէր ռամկին
յայն զառանցանս և՝ի ժանդութիւն զառածեալ էր,
զի հարկ եղև վՀռով ծերակուտին սանձահարել զայն.
յայնժամ արտաքսեցան կատակագուսանք առ հասա-
րակ յԻտալիոյ։

ԺԵ. Ի նմին ամի միւս այլ սուգ՝ի վերայ եհաս ինք-
նակալին, մահուամբ միոյ յերկուորեկացն Դրուսոսի,
և ուրումն՝ի բարեկամաց՝ որ ոչ ինչ նուազ տրտմե-
ցոյց զնա։ Այս էր Լուկուլլոս Լենգոս, որ յամենայն յա-
ջողութիւնս և յարկածս լեալ էր նմա հաղորդ, և նա
միայն յատենակալաց ծերակուտին պանդխտեալ էր
ընդ նմա՝ի խոյս տալ նորա՝ի Հռոդոս։ Վասն որոյ թէ-
պէտ և սուղ ինչ ժամանակ էր պայծառանալոյ նորա,
սակայն ծերակոյտն սահմանեաց նմա յուղարկաւորու-
թիւն մեծահանդէս, և անդրի յաւգոստեան հրապա-
րակին. զի զամենայն ինչ յայնժամ ծերակոյտն սահ-
մանէր։ Այսպէս յամբաստանել գործակալին Ասիոյ
Լուկիլլեայ Կապիտոնի՝ի բնակչաց դաւառին, և յա-
տենի անդ ծերակուտին տալ վասն անձին պատասխա-
նի, բողոք կալաւ Տիբեր՝ զի չէր իւր տուեալ նմա իշ-
խանութիւն, բայց միայն՝ի վերայ ծառայից իւրոց և
՝ի վերայ առանին իրաց. իսկ եթէ նորա զիշխանու-
թիւն կուսակալի առեալ, և զզինու զօրութիւն՝ի կիր
արկեալ էր՝ արհամարհելով զհրամանս իւր, պարտ էր
լսել զբողոք նիզակակցաց։ Այսպէս յանցաւորն քըն-
նութեամբ իրացն դատապարտեցաւ. և վասն այսր
վրէժինդրութեան, և վասն իրաւանց՝ զոր՝ի հերուն
ընդդէմ Կ. Սիլանեայ ընկալեալ էին քաղաքք Ասիոյ,
սահմանեցին կառուցանել մեհեան Տիբերի և մօրնորա
և ծերակուտին։ Վասն այն և Ներոն շնորհս մատոյց
ատենակալաց և հաւոյն իւրում՝՝՝ի խնդութիւն մեծ
ամենեցուն՝ որ լսէին, զի կենդանի դեռ ևս էր՝՝՝ի նո-
սա յիշատակ Գերմանիկեայ, և զնա թուէին տեսա-
նել և զբարբառ նորա լսել. զի բերէր իսկ պատանին
կերպարան պատկառելի՝ արժանաւոր առն իշխանա-
ւորի, հաճոյագոյն վասն վտանգին յերեսաց անսպատ-
ուակ ատելութեանն Սէանոսի։

ԺԶ. Զայնու ժամանակաւ՝՝՝ի մեռանել Սերուիոսի

մալոգինեցւոյ քրմին Դիոսի՝ առաջարկեաց ինքնակալն ընտրել զոք 'ի տեղի նորա, և նոր օրէնս վասն ընտրութեանն սահմանել։ Քանզի սովորութիւն էր իշխանազունս երիս ընտրել՝ ծնեալս յանլուծանելի հարսանեաց՝ որ մատուցմամբ զոհի կատարէին, և զմի յայնցանէ կացուցանել 'ի պաշտօն՝ ըստ վաղնջուց արարողութեան. այլ էին յայնժամ՝ որպէս վաղ ուրեմն՝ ծնողք այնպիսիք բազումք, զի խափանեալ էր սովորութիւն անլուծանելի հարսանեաց կամ առ սակաւս ամ փոփեալ։ Եւ պատճառս բազումն առ այս 'ի վերայ ածէր, յորոց գլխաւոր էր անհոգութիւն ամուսնաց, և արարողութեանն դժուարութիւն՝ յորմէ խորշէին նոքա դժկամակեալ. և դարձեալ՝ զի որ միանգամ հասանէր քրմութեանն՝ ազատ լինէր 'ի հայրենի իշխանութենէ. նմանապէս և որ հարսնանայր նմին։ Վասն որոյ պարտ է, ասէր, իշխանութեամբ ծերակուտին կամ օրինօք զելս իրացն հայթայթել, որպէս Աւգոստեայ ինչ ինչ 'ի խստակրօն հնութենէ յարդի սովորութիւն ամոքեալ էր։ Յայնժամ 'ի քննութիւն առեալ զարարողութիւնս, հաճոյ թուեցաւ մի ինչ փոփոխումն առնել ընտրութեան քրմին Դիոսի, այլ քրմուհւոյն օրէնս 'ի վերայ եդին՝ ըստ մասին ևեթ պաշտամանն կալ ընդ իրաւամբք առնն, իսկ յայլում ամենայնի վարել ըստ օրինի այլոց կանանց։ Եւ կացուցաւ որդի մալոգինեցւոյն փոխանակ հօրն. և առ 'ի բարձրացուցանել զպատիւ քրմութեան, և վասն յօժարագոյնս առնելոյ զքուրմն 'ի սպաս պաշտամանցն, վճռով ծերակուտին սահմանեցաւ Կուռնելեայ Եստեան կուսի՝ որ փոխանակ Սկանտիայ ընտրեալն էր՝ երկու հազար սեստերտ, և Աւգոստայ ընդ Եստեան կուսանս բազմել 'ի թատերս։

ԺԷ. Առ բդեշխութեամբն Կեթեգոսի և Վիսելլիոսի Վարրոնի՝ քրմապետք, և ըստ օրինակի նոցա քուրմք, 'ի մատուցանելն պաղատանս վասն ինքնակալին՝ յաւելին և վասն Ներոնի և Դրուսոսի, ոչ այնչափ 'ի սիրոյ պատանեացն՝ որչափ 'ի մարդահաճութենէ. որ յապաւկանել բարուց, վտանգաւոր յոյժ է՝ անցեալ ըստ չափ, որպէս 'ի թողուն 'ի սպառ 'ի բաց։ Քանզի Տիբեր ոչ երբէք լեալ ներողամիտ ընդ որդիս Գերմանիկեայ,

դժկամակէր հաւասարել՝ի ծերութեան իւրում ընդ պատանիսն. և կոչեցեալ առ ինքն զքրմապետս՝ ե-հարց՝ի նոցանէ, թէ աղերսանաց Ագրիպպինայ եթէ սպառնալեաց նորա զայն սպաս մատուցեալ էին։ Նո-քա թէպէտ և յերկաքանչիւրոցն ևս յուրաստ կային, սակայն կշտամբեցան յինքնակալէն, ոչ սաստկապէս. զի առաւելագոյնք՝ի նոցանէ էին ազգականք նորա մերձաւորք, կամ աւագագոյնք՝ի քաղաքացիս։ Բայց ինքնակալն յատենախօսել իւրում՝ի ծերակուտին՝ ազգ արար, մի ևս յայնմ հետէ խրոխտացուցանել տա-րաժամ պատուովք զսեղսեղուկ սիրտս պատանեացն։ Քանզի ստիպէր զնա Սէանոս, և ցուցանէր նմա պառակտեալ զքաղաքն՝ որպէս թէ յընտանի պատե-րազմ, և ասէր. Են՝ որ կողմնակիցք պարծին լինել Ագ-րիպպինայ. և եթէ ոչ դիցի խափան, ևս բազումք եղիցին. և չիք այլ հնար ընդդէմ զայրանալոյ հեր-ձուածոյն, բայց զմի կամ զերկուս՝ի զօրաւորաց կորու-սանել։ —

ԺԸ։ Եւ ուղղէր նա զդէմ յարձակմանն՝ի Կ. Սիլիոս և՝ի Տիտիոս Սաբինոս, բարեկամութեանն Գերմա-նիկեայ երկաքանչիւրոցն լեալ՝ի կորուստ. իսկ Սի-լիոսի և այն՝ զի զամս եօթն զօրավարեալ հզօր լեգէո-նաց՝ի Գերմանիա, և արժանի լեալ յաղթանակի, և զսակրովիրեան պատերազմն յայնժամ նուաճեալ, ՝ի կործանելն մեծագոյն փառաց՝ առաւելագոյն ահ յայլս արկանէր։ Բազումք կարծէին՝ զի Սէանոս անզգուշու-թեամբ սաստկացուցանէր՝ի վերայ իւր զվտանգն. քանզի պարծէր նա ստէպ և համարձակ, զի լեգէոնք իւր կային մնային հաւատարիմք՝ յապստամբել այ-լոցն ամենեցուն, և զի ոչ կանգուն մնայր ինքնակա-լութիւն Տիբերի՝ եթէ՝ի նոսին ևս իղձ յեղափոխու-թեան անկանէր։ Համարէր ինքնակալն կորուսանել սոքիմբք զփառս իւր, և ստորև մնալ այնքանեաց վաստակոց. զի բարերարութիւնք ցոյն վայր հաճոյ են, ցորչափ թուին փոխարինելիք. իսկ ուր գեր՝ի վե-րոյ քան զփոխարէնս անցանեն, ատելութիւն փոխա-նակէ ընդ գոհութեան։

ԺԹ. Սիլիոսի էր կին Սոսիա Գալլա, սիրելի յոյժ Ագրիպպինայ, վասն որոյ և ատելի ինքնակալին. հա-

Ձոյ թուեցաւ յարձակել առ ժամն 'ի սոսին, այլում պատեհի թողեալ զԱբինոս։ Սէանոս գրգռէր զՎարրոն բդեաշխ, որ պատճառանօք խնդրելոյ զվրէժ թշնամանաց հօր իւրոյ՝ արբանեկէր ատելութեանն Սէանոսի 'ի նախատինս իւր։ Սիլիոս խնդրէր սուղ ինչ պարապ մինչև կատարեսցի ժամանակ բդեշխութեան չարախօսին. հակառակ եկաց ինքնակալն, զի յամենայն ժամանակի իրաւունք էին դատաւորաց եկակոչ առնել սոսկականի, և չէր օրէն զդէմ ունել իրաւանց բդեշխին՝ որոյ զգուշութեանն յանձն էր անվթար պահպանութիւն հասարակապետութեան։ Ճարտարութեանն Տիբերի էր՝ զնորանոր ոճիրս վաղեմի հնարիւք ծածկել. գումարեաց նա զծերակոյտն, և բանիւք բազմօք պնդէր՝ զի օրինօք պարտ էր դատել զՍիլիոս, զի ոչ Վարրոնի՝ որ բդեաշխն էր՝ այլ հասարակապետութեան անկ էր առնել զնմանէ դատաստան։ Լուռ ևեթ կայր Սիլիոս, կամ եթէ տայր ինչ պատասխանի՝ յոյր մախանաց հալածէրն յայտ առնէր։ Սմ բաստանութիւն էր զնմանէ համախոհութեան ընդ Սակրովիր, իբր զի զմատնութիւն նորա ծածկեալ էր ընդերկար, և գյաղթութիւն իւր զօշաքաղութեամբ ապականեալ, կամակից գոլով և կնոջ իւրոյ Սոսիայ 'ի չարիսն. և արդարև երկոքին իսկ պարտաւորք էին 'ի յանցանս հարստահարութեան։ Այլ 'ի յուզել բովանդակ խնդրոյն զքրէական յանցանաց, Սիլիոս առ 'ի զերծանել 'ի մօտալուտ դատապարտութենէն՝ չոգաւ զիւրովին։

Ի. Ինչք նորա գրաւեցան, ոչ վասն բնակչաց գաւառին հարստահարելոց՝ յորոց ոչ ոք խնդրէր հատուցումն, այլ 'ի բաց հանեալ անտի զառատաձեռնութիւնս Աւգոստեայ՝ Ճշդիւ 'ի համար ածաւ որչափ ինչ 'ի գանձ արքունի հատանելոցն էր։ Այս առաջին զօշաքաղութիւն եղև Տիբերի յինչս օտարի։ Սոսիա առաքեցաւ յաքսոր վՃռով Սինեայ Գալլոսի, որ ըզմանն ինչ 'ի գոյից նորա սահմանէր գրաւել 'ի գանձ արքունի, և զմիւս մասն շնորհել որդւոց նորա։ Ընդ հակառակն Մանիոս Լեպիդոս զչորիր մասն ընչից նորա ասէր տալ դատախազից՝ ըստ սահմանելոյ օրինաց, և զմնացորդն՝ որդւոց Սիլիոսի։ Լեպիդոս երևի լեալ 'ի

ժամանակին յայնմիկ մի յանցողդողդ և'ի խոհական արանց. զի զՎՀՈՍ բազումն՝ 'ի փաղաքուշ մարդա-հաճութենէ այլոց սահմանեալս՝ մեղմէր, այլ և ոչ վերջանայր 'ի զգուշութենէ, որով հաւասար զիշխանութիւն իւր և զմտերմութիւն կալաւ առ Տիբերի։ Աստի գայ ինձ երկբայել, զի որպէս ամենայն ինչ՝ նոյնպէս և յօժարութիւն սրտի իշխանաց յոմանս, և դժկամակութիւն յայլս, 'ի Ճակատագրէն և 'ի բաշխից ծննդեան Թերևս տնօրինիցի, և կամ որ'ի մեզ է խոհականութեան՝ օրէն իցէ 'ի մէջ յախուռն յանդգնութեան և վատ մարդահաճութեան գնալ ուղի ազատ 'ի փառամոլութենէ և 'ի վտանգաց։ Բայց Մեսսալինոս Կոտտաս ոչ ինչ ընդհատ ըստ ազնուականութեան ազգատոհմի, այլ անհանդոյն ըստ հանճարոյ, ասէր սահմանել վՃռով ծերակուտին. զի եթէ ուրուք յատենակակալաց ամբաստանիցի կիւն 'ի գաւառական, թէպէտ և անպարտ իցէ ինքն և անգէտ յանցանաց կնոջն, պատուհասեսցի որպէս յանցաւորակից ընդնման։

ԻԱ. Յետ այսորիկ ածաւ 'ի քնին դատ Կալպուրնեայ Պիսոնի, առն ազնուականի և գոռոզի. զի սորա ևս, որպէս 'ի վեր անդր ասացաք, բողոքեալ էր յատենի ծերակուտին՝ 'ի բաց ելանել 'ի Հռովմայ վասն յանդգնութեան չարախօսաց, և արհամարհեալ զիշխանութիւն Լիւիայ՝ իշխեալ էր եկակոչ առնել, և ձգել զՈՒրգոլանիա յարքունեաց ինքնակալին յատեան. որում առ ժամն վասն բարեձևութեան համբեր Տիբեր, այլ'ի մտի ունելով զթշնամանսն՝ թէպէտ և ցասումն նորա զիջեալ՝ սակայն յիշատակ ատելութեանն զայրանայր։ Կ. Գրանիոս ամբաստանեաց զՊիսոն, որպէս թէ չարախօսեալ նորա առանձին զինքնակալէն, և դեղ մահու ունել առ իւր, և սուսեր յաղդեր 'ի մտանել յատեան ծերակուտին։ Որ թէպէտ և արհամարհեցաւ վասն առաւելազանցութեան, բայց ընդ այլ ամբաստանութիւնս կուտակեալս 'ի վերայ նորա, պարտաւոր առնէր զնա. այլ ինքն չև դատապարտեալ, վՃռեցաւ օրհասիւն 'ի կենաց։ Քննեցաւ և դատ Կասիոսի Սևերոսի, առն վատաղգեոյ և չարագործի, վաղխակ աքսորելոյ. զի դժնեայ Ճարտախօսութեամբն թշնամիս բազումն ընդդէմ իւր յարուցեալ, երդմնա-

կուռ վճռով ծերակուտին՝ 'ի Կրետէ էր վտարանդեալ։ Եւ զի անդ եւս նուվին զառանցանօք զնոր և զհին ատելութիւնս գրգռէր, կապտեալ 'ի գոյից, արգելեալ 'ի ջրոյ և 'ի հրոյ, եկաց 'ի Սիրիփիոն վիմի՝ մինչև յալիս ծերութեան։

ԻԲ. Ի նմին ժամանակի Պլաւտիոս Սիլուանոս դատաւոր, զԱպրոնիա զկին իւր մղեաց էարկ ընդ պատուհանն. պատճառքն անգիտելի։ Եւ ձգեալ 'ի Լ. Ապրոնիոսէ յանէրոյ իւրմէ առաջի ինքնակալին յատեան, խռովեալ մտօք ետ պատասխանի՝ որպէս թէ կնոջ իւրոյ անձամբ զանձն մատնեալ էր 'ի մահ, մինչ ինքն ընկղմեալ կայր 'ի քուն թանձրութեան անզգայ։ Տիբերի փութանակի այց արարեալ 'ի տուն Սիլուանեայ, և տեսեալ զսենեակն՝ յորում ընդդիմամարտութեան բռնադատելոյ կնոջն նշանակք երևէին, եցոյց զայն ծերակուտին. և ընտրեցան դատաւորք։ Բայց Ուրգուլանիա, հան Սիլուանեայ, դաշոյն առ թոռն իւր յղեաց ըստ խրատու նորին իսկ կայսեր՝ որպէս կարծի վասն մտերմութեանն Աւգոստայ ընդ Ուրգուլանեայ. որով յանցաւորին 'ի զուր փորձեալ առնել անձին, ետ ապա հատանել զերակս իւր. բայց Նումանտինա, առաջին կին նորա, ամբաստանեալ՝ զի կախարդանօք և դեղատուութեամբ զուշ և զուրուշ առն իւրոյ բարձեալ էր, անպարտ դատեցաւ։

ԻԳ. Անագան ուրեմն յայսմ ամի զերծաւ ժողովուրդն հռովմէական 'ի պատերազմէ նուամիդացւոյն Տակփարինայ. զի մինչև ցայնժամ զօրավարքն ընդ կանգնելն յաղթութիւն, բաւական վասն ընդունելոյ զշուք յաղթանակի, թողուին ազատ զթշնամին։ Երրեակ անդրիք էին 'ի Հռովմ դափնեպսակք, և տակաւին Տակփարինաս աւար հարկանէր զԱփրիկէ, հաստ զթիկունս արարեալ յամբոխս Մաւրեաց՝ որք լաւ համարէին գնալ 'ի պատերազմ, քան կալ ընդ ձեռամբ ծառայից, զի յայնժամանհոգութեամբ պատանւոյն Պտղոմեայ արքայորդւոյն Յուբասայ՝ ձերբազատք արքունիք հրամայէին։ Մանակից աւարին, և ընկեր աւարառութեան նորա էր արքայն Գարամանաց. իբր ոչ եթէ բանակաւ իւրով պատերազմակից լեալ, այլ գումարտակս ոմանս արձակեալ՝ որ 'ի հեռուստ առաւէ-

լագոյնք համբաւէին։ Անդոտին իսկ 'ի բնակչաց ափրի-
կեցւոց, որք միանգամ կարօտքն էին և խռովարարք,
դիմէին յօժարագոյնս 'ի պատերազմ. քանզի Տիբերի
յետ արշաւանին Բլեսեայ, որպէս թէ ոչ ևս ունելով
թշնամիս յԱփրիկէ, հրամայեալ էր կոչել յետս զին-
ներորդն լեգէոն, և Դոլաբելլայ՝ որ փոխանակ բդեշ-
խի կայր յայնմ ամի յԱփրիկէ՝ չէր իշխեալ զդէմ ունել
հրամանին, 'ի սաստից նորա առաւել քան 'ի վտանգաց
մարտի երկնչելով։

ԻԴ. Տակիտարինայ տարածեալ համբաւ, զի հռով-
մայեցիք յայլոց ևս ազգաց նեղեալ՝ տեղի տային յԱփ-
րիկեայ, և մարթ էր զմնացորդս 'ի նոցանէ գերի առ-
նուլ՝ եթէ միաբանէին ամենեքեան՝ որոց առաւել սի-
րելի էր ազատութիւն քան զծառայութիւն, յաւել
զօրաժողով լինել. և բանակ կազմեալ՝ շուրջ պաշա-
րեաց զԹոբուսկ քաղաք։ Բայց Դոլաբելլայ՝ որչափ ինչ
առ նմա զօրք կային՝ 'ի մի գունդ կազմեալ, խաղա-
ցոյց զնոսա, և ահն և հոյն հռովմէական անուան ա-
ռաջի նորա գնայր։ Եւ քանզի նուիրագիրք չհանդար-
տեն կալ ընդդէմ հետևակաց, նախկին յարձակ-
մամբ զերծուցեալ նորա զքաղաքն 'ի պաշարմանէ,
ամրոցս 'ի դիպող տեղիս կառոյց. և զիշխանս Մուսու-
լանաց՝ որ խլրտէին 'ի վտարանջութիւն, ետ սպանա-
նել. և որպէս զփորձ առեալ էր 'ի բազում պատերազ-
մունս ընդդէմ Տակիտարինայ՝ զի չէր մարթ ծանուս բա-
նակաւ և միով ևեթ յարձակմամբ հալածել զվայրա-
վատին թշնամին, կոչեաց յօգնութիւն զարքայն Պտ-
ղոմէոս Մաւրեաքն հանդերձ, և 'ի քառեակ գունդս
կազմեալ զնոսա, կացոյց 'ի վերայ նոցա տեղակալս և
հազարապետս. և ընտիրք 'ի Մաւրեաց առաջնորդէին
ասպատակաց աւարառուաց. իսկ ինքն ամենեցուն
հրամայէր։

ԻԵ. Եւ յետ ոչ բազմաց ինչ աւուրց լուր եղև, զի
նուիրագիրք մերձ 'ի բերդն կիսաւեր՝ որ անուանեալ
կոչէր Աւզէա, և 'ի նոցունց ինքեանց Երլեմն հրկի-
զեալ էր, կառուցեալ հիւղս՝ նստէին վստահացեալք
'ի վայրն, զոր շուրջ պատէին անտառք անոլորտք։ Յայն-
ժամ 'ի չու Ճեպընթաց խաղացոյց զգոմարտակս և
զհեծեալս, ոչ գիտելով նոցա յո՛ դէմ երթեալ գնային.

և ընդ արևածայրս 'ի ձայն փողոյ ահագին գոչմամբ հասին 'ի վերայ խուժադժիցն, մինչդեռ նոքա քուն ընդ արթուն թմբրեալ, և ձիանն նումիդացի ոտնակապեալ կամ ընդ արօտս ցանկեցիր կային։ Հռովմայեցւոց կազմ կայր հետևակազօրն, և Ճակատեալ հեծելազն 'ի թևս, ամենայն ինչ պատրաստ 'ի պատերազմ։ Իսկ նումիդացիք կային անկասկածք, ոչ զէն 'ի ձեռին, ոչ Ճակատ յօրիւ նեալ, և ոչ ուշ 'ի կուրծս. այլ զօրէն խաշանց վարէին 'ի մահ և 'ի գերութիւն։ Զի զօրականն հռովմայեցի յիշատակաւ վշտակրութեանցն ոխ 'ի մտի, և զայրացեալ ընդդէմ թշնամեաց, որոց յաՃախ 'ի դերև հանեալ էր զպատեհութիւն մարտի՝ որում ցանկային, արբենային արեամբ 'ի յագուրդ վրէժխնդրութեան։ Յայնժամ էլ հրաման 'ի զօրավարէն ընդ գունդս զօրաց, հետամուտ լինել ամենայն ուրեք Տակփարինայ՝ քաջածանութին 'ի Ճակատամարտս, զի առանց մահու նորա ոչ լինէր զրաւ պատերազմին. այլ նորա, 'ի տապաստ անկանել թիկնապահացն զիւրև, 'ի վարել որդւոյն 'ի գերութիւն, և 'ի խուժել զօրացն հռովմայեցւոց 'ի վերայ իւր, դիմագրաւեալ 'ի խուռն մարտին՝ խոյս ետ 'ի գերութենէ մահուամբ, որ ոչ դիւրագնի եղև թշնամեաց։ Այս եղեն ելք պատերազմին այնորիկ։

ԻԶ. Բայց Տիբեր զլացաւ Դոլաբելլայ զպատիւ յաղթանակի, և ետ զայն Սկանոսի, զի մի՛ քեռւոյ նորա Բլեսեայ 'ի մոռացօնս անկցին վաստակք. սակայն Բլեսոսի ոչ յաւելան այնու պարծանք, և ևս քան զևս յաՃախեցին փառք Դոլաբելլայ՝ զրկելով 'ի պատուոյ անտի, այն՝ որ սակաւաՃեռն զօրու գերի առեալ զազատանին թշնամեաց, զկատարածի պատերազմին կալեալ էր զպարծանս։ Յետ այսորիկ հասին հրեշտակք Գարամանաց, դուն ուրեք երևեալք 'ի Հռովմ։ Գարամանք պարտութեամբն Տակփարինայ զարհուրեալք, գիտելով ևս զյանցանս իւրեանց, առաքէին զհրեշտակսն՝ հաշտ առնել զժողովուրդն հռովմէական։ Որոց 'ի մէջ ածեալ զվաստակս Պտոլոմեայ 'ի յաջողութիւն պատերազմին, ետուն նորոգել զվաղնջուցն սովորութիւն. զի առաքեցաւ մի յատենակալաց՝ ածել առ Պտոլոմէոս գաւազան փղոսկրեայ և պատմուՃան

ասղնէգործ, որպէս 'ի վաղուց հետէ յղէր Ծերակոյտն 'ի պարգև, և անուանել զնա արքայ Նիզակակից և բարեկամ։

ԻԷ. Ի նմին ամարայնի եղև խլրտումն ծառայապրաստամբ մարտի, այլ խափանեցին զայն դէպք. առաջնորդ աղմկին էր Տ. Կուրտիսիոս, զինուորական երբեմն յատենական զօրուն։ Սա 'ի սկզբանէ ժողովս գաղտնածածուկս 'ի Բրունդիսիոն և 'ի շրջակայ նորին քաղաքս գումարեալ, և ապա գիրս յայտարարութեան համարձակ եդեալ 'ի հրապարակս, հրաւիրեր յաղատութիւն զստրուկս վայրագս՝ 'ի հեռաւոր անտառս վտարանդիս։ Յայնժամ դիցն ինն շնորհիւ՝ երկթիք երեք հասին 'ի պէտս նաւելոյ վաճառականաց ընդ այն ծով. և էր 'ի գաւառս անդ Կուրտիոս Լուպոս գանձապետ, որում ըստ վաղուց սովորութեան, հասեալ էր 'ի վիճակ Կալէս գաւառ։ Սա զամբոխս նաւաստեացն կազմեալ 'ի գունդ, ցրուեաց զդաւակցութիւնն՝ որ սկսանէր զայրանալ. և վաղվաղակի արձակեալ յինքնակալէն Ստայոս հազարապետ՝ հզօր ձեռամբ, զառաջնորդ ապստամբացն և զարբանեակս յանդգնութեան նորա էած 'ի Հռովմ, որ յերկիւղի կայր յերեսաց բազմութեան ստրկաց՝ բազմացելոց անդ օրըստօրէ՝ ըստ նուազել ազատաց։

ԻԸ. Առ նովին բդեշխիւք 'ի վեր երևեցաւ սոսկալի ինն տեսարան թշուառութեան և անգթութեան. ա ծանյատեան ծերակուտին հայր եղեռնագործ և որդի դատախազ, երկաքանչիւրոցն ևս անուն Վիբիոս Սերենոս։ Հայրն ածեալ 'ի տեղւոջէ աքսորանացն շրջթայակապ, գարշ, տժգոյն և անկերպարան, չարախօսեալ յորդւոյն. իսկ որդին պատանի սպրկիկ սեգ զուարթադէմ, նոյն ինքն դատախազ և վկայ։ Սա դաւ ընդդէմ ինքնակալին 'ի հօրէ իւրմէ ասէր պատրաստեալ, և վաղ իսկ խառվարարս 'ի Գալլիա արձակեալ. և յաւելոյր՝ զի Կեկիլիոսի Կորնուտեայ կուսակալի մատակարարեալ էր նմա արծաթ, և առ 'ի զերծանել 'ի հոգոց անտի և 'ի ստոյգ վտանգէ մահու՝ անձին արարեալ։ Իսկ հայրն անվեհեր յառեալ յորդին, 'ի շառաչ շղթայիցն բողոքելով առ վրէժխնդիր դիս՝ աղօթէր դառնալ յաքսոր, և հեռի 'ի տեսանելոյ ոճիրս այնպիսի

սիս՝ վճարել իւր զկեանս, և որդւոյն վաղ կամ անա-
գան զվրէժ եղեռանն լուծանել։ Վկայէր ևս՝ զի ան-
պարտ էր Կորնուտոս, և՝ի տարապարտ արհաւիրս ըմ-
բռնեալ. և դիւրաւ, ասէր, ստուգութեան իրացն՝ի
յայտ գալ՝՝ի խնդրել զդաւակիցս. զի չէր մարթ նմա
միայնոյ զմահ ինքնակալին և զյեղափոխութիւն հա-
սարակապետութեան նիւթել։

ԻԹ. Յայնժամ չարախօսն անուանեաց զկն. Լենտուլոս, և զԱկոս Տուբերոն, յամօթ մեծ ինքնակալին. զի մտերիմ բարեկամք նորա էին և աւագագոյնք քաղաքին ամբաստանեալքն։ Լենտուլոս հասեալ՝՝ի խոր ծերութիւն, և Տուբերոն հիւծեալ ծնգեալ խօթութեամբ, ամբաստանէին որպէս դրդիչք ապստամբութեան, դաւակիցք ընդդէմ հասարակապետութեան, այլ վաղ երկոքին ևս անպարտ արձակեցան։՝՝ի հարցափորձ մատուցան ստրուկք հօրն, և ելք քննութեանն եղեն հակառակ չարախօսին. որ զի գիտակ էր անօրէնութեանն, լքեալ վհատեալ, և յաղաղակէ ևս ռամկին ահաբեկեալ՝ որ սպառնայր նմա զբանտ օրհասական, և զմահ գահավէժ՝՝ի տարպեան դղեկէն, և զհայրասպանիցն պատուհաս, փախեաւ՝՝ի քաղաքէն։ Այլ ըմբռնեալ՝՝ի Հռաւենննա, և ածեալ այսրէն, ստիպեցաւ՝՝ի կատարումն ածել զամբաստանութիւնսն, ոչ ծածկելով Տիբերի զվաղեմի ատելութիւն իւր ընդդէմ Սերենոսի աքսորելոյ յիւրմէ։ Քանզի Սերենոս, յետ պարտաւորութեանն Լիբոնի, գիր առ ինքնակալն գրեալ՝ բողոքէր յաղագս ապախտ առնելոյ նորա զիւր վաստակս. և յաւելեալ ևս էր բանս ինչ խիստս՝ որ ոչ անվտանգ անցանէն առ լսելիս դիւրապատրաստս՝՝ի ցասումն։ Ցայսոսիկ յիշելով ինքնակալին յետ ութից ամաց, և ոչ զժամանակն՝՝ի վերայ անցեալ զերծ՝՝ի կշտամբանաց համարեցաւ, թէպէտ և ոչ ինչ հակառակ նմին վկայեալ էին ստրուկք նորա՝ անյողդողդք՝՝ի խոշտանգանս հարցափորձի։

Լ. Ի տալ ապա ատենակալաց զվարկ պատուհասելոյ Սերենոսի ըստ նախնեացն օրինակի, հակառակ ելկաց Տիբեր՝մեղմելով առ՝՝ի ցոյց զատելութիւն. և յառաջարկել Գալլոսի Սինիոսի՝ արգելուլ զնա՝՝ի Գիարոս կամ՝՝ի Դանուսա, և ոչ այն հաճոյ թուեցաւ ինք-

նակալին. զի երկոքին իսկ կղզիք անջրդի էին, և պարտ համարէր 'ի չնորհել ումեք զկեանս՝ տալ նմա զկարևորս կենաց. վասն որոյ աքսորեցաւ Յովհրդոս։ Եւ քանզի Կորնուտեայ զիւրովին երթեալ էր, խնդիր եղև խափանել զվարձ չարախօսաց՝ եթէ 'ի քրիստեական յանցանս ոք ամբաստանեալ, և չև զվճիռ դատաստանին ընկալեալ, ինքնակամ մեռանէր։ Միաբանէին արդեօք ամենեքեան 'ի սոյն վճիռ, եթէ ոչ ինքնակալին խստիւ և հակառակ բարուց իւրոց բողոքեալ էր 'ի նպաստ դատախազից, իբր թէ այնուիկ 'ի դերև լինէին օրէնք, և հասարակապետութիւնն 'ի վտանգ անկանէր կործանելոյ. զի լաւագոյն է ասէր՝ խափանել զօրէնս, քան զպահպանս նոցին բառնալ։ Այսու օրինակաւ խրախուսէին չարախօսք, ազգ 'ի կործանումն հասարակաց սահմանեալ, և ոչ երբէք ըստ արժան բաւականին պատուհասիւք սանձահարեալ։

ԼԱ. Այսոցիկ անդադարելի աղետից յաջորդեցին դէպք ինչ ուրախալի. զի ինքնակալն զԿ. Կոմինոս ասպետ Հռովմայեցի պարտաւոր գտեալ վասն երգիծական տաղից ինչ ընդդէմ իւր յօրինելոց՝ անպարտ արձակեաց ըստ աղերսանաց եղբօր նորա, որ մի էր յատենակալաց ծերակուտին. և առաւել զարմանալի, զի Ճանաչէր նա զլաւն, և քանի փառք կցորդ են ողորմութեան, սակայն ընտրէր առաւել զխստութիւն, և ոչ յանդէտս յանցանէր. զի և ոչ դժուարին ինչ է խելամուտ լինել՝ երբ Ճշմարտիւ և երբ վեր 'ի վերոյ դրուատին գործք իշխանաց. և ինքն, որ խորհրդով միշտ և բռնի սովոր էր բարբառել, դիւրագոյն և համարձակ յողորմելն իւրում խօսէր։ Սակայն անողոքելի գտաւ առ Պ. Սուիլիոս, երբեմն դանձապետ Գերմանիկեայ, 'ի պարտաւորել նորա յատենի ծերակուտին՝ վասն ընդունելոյ կաշառ 'ի դատաստանի, արտասահմանել յԻտալիոյ. և սահմանեաց 'ի կղզի ուրեք աքսորել զնա, երդուեալ զի օգուտ աշխարհին պահանջէր զայն։ Վճիռս այս՝ խիստ յայնժամ թուեցեալ՝ շրջեցաւ ապա 'ի գովեստ ինքնակալին 'ի դառնալ Սուիլիոսի յաքսորանաց, յորժամ ծանուցաւ առ յապայս հարստահարութիւն նորա և կաշառակրծութիւն, և զեղծանել մտերմութեամբն Կլաւդեայ կայսեր՝ յոր վա-

յելեացն ընդերկար։ Նոյն պատուհաս և Կատոսի Փիր-
մեայ ատենակալի սահմանեցաւ, կասկած լեալ զնմա-
նէ՝ զի 'ի քրէական յանցանս զքոյր իւր կամէր զրպար-
տել։ Սա ինքն, որպէս 'ի վեր անդր ասացաք, հրապու-
ռեալ զԼիբոն 'ի դաւակցութիւն, և ապա չարախօսու-
թեամբ կործանեալ էր զնա. բայց ինքնակալին յիշե-
լով զվաստակս նորա, այլովք պատճառանօք՝ չեթող
աքսորել զնա, այլ արտաքսել ևեթ 'ի ծերակուտէն։

ԼԲ. Սպաքէն բաղում ինչ, զորս պատմեցի և զորս
առաջի կայ ինձ պատմել, Թուեսցին դուշնաքեայ և
ոչ արժանի յիշատակի. այլ մի՛ ոք զտարեգիրս զայս հա-
մեմատեսցէ ընդ պատմութիւնս այնոցիկ՝ որք զնախ-
նոյ ժողովրդեանն Հռովմայ զանցս գրեցին։ Նոքա զա-
հագին պատերազմունս, զառումն քաղաքաց, զպար-
տութիւն և զնուաճումն արքայից, և զառտնին ևս իրս
ոչ կամելով առնել անյիշատակ՝ զգժտութիւնս բդեշ-
խից ընդ հազարապետս, զագարակային և զհամբա-
ղոց օրէնս, և զռամկին ընդ աւագանւոյ մաքառումնս,
ազատ համարձակ պատմէին։ Իսկ մերս անձուկ և ան-
փառունակ է վաստակ. անշարժ կամ դոյզն ինչ խռո-
վեալ խաղաղութիւն, անցք տխուրք 'ի քաղաքի, և
իշխան յոյլ և անփոյթ ընդարձակելոյ զսահմանս ինք-
նակալութեան. սակայն չէ ինչ անօգուտ հետազօտել
և զայսոսիկ, որ թէպէտ և թեթև ինչ յառաջնումն
երևման թուիցին, այլ բազում այն է՝ զի մեծամեծ
դղրդմունք յայսցանէ առնուն պատճառս։

ԼԳ. Զի յամենայն ազինս և 'ի քաղաքս, ռամիկն
կամ աւագանին և կամ մի ոք հրամայէ. կարգ տեսչու-
թեան յերեցունց աստի բարեխառնեալ՝ գովելի է քան
թէ կարելի. և տեղի ևս գտեալ՝ չէ երկարատև։ Արդ
'ի զօրանալ երբեմն ռամկին, և 'ի տիրել այլ երբեմն
ծերակուտին, պարտ է ճանաչել նոցա զբարս բաղմու-
թեան, և որո՛վ օրինակաւ յաջողէ բարւոք նորին վար-
չութիւն. և որք միանգամ խելամուտ եղեն ծերակու-
տին և աւագանւոյն բնաւորութեան, քաջահմուտք
ժամանակին և իմաստունք համարեցան։ Իսկ այժմ, 'ի
յեղափոխել հասարակապետութեան որպէս թէ 'ի
միահեծան պետութիւն, պատմութիւն և տեղեկու-
թիւն իրացս կարևորք են. զի սակաւուց է խոհակա-

նութիւն ընտրելոյ ընդ Համեստն և ընդ յոռի, ընդ օգ-
տակարն և ընդ փնասակար, և յոգունք օրինակաւ այ-
լոց խրատին։ Բայց Թէպէտ և այսոքիկ օգտիցեն,
սակայն չեն ինչ զուարճալի. քանզի գաւառաց և աղ-
գաց նկարագիրք, զանազանութիւնք պատերազմաց,
զօրավարաց պայծառ յաղթութիւնք, գրաւեն և զբօ-
սուցանեն զմիտս ընթերցողաց. իսկ մեք սաստս հրա-
մանաց, ամբաստանութիւնս անլռելիս, բարեկա-
մութիւնս կեղծս, կորուստս անմեղաց, և դատաս-
տանս հանգունատիպս ըստ էլից շարայարեմք, համա-
նմանութեամբ իրացն տաղտկալիս։ Եւ դարձեալ զի
նախնի պատմագրաց սակաւք են պարսաւադէտք, զի
զինչ փոյթ է ընթերցողաց՝ թէ նոքա զկարքեդոնաց-
ւոց կամ զՀռովմայեցւոց բանակս բարձրացուցանի-
ցեն. բայց յոգունց, որք յաւուրս Տիբերի կրեցին պա-
տուհաս կամ չարահամբաւեցան, կան տակաւին ազ-
գատոհմք. և շինչեալ իսկ թէ իցեն, գտանին՝ որք վասն
նմանութեան կենաց իւրեանց՝ համարին զայլոց չարա-
գործութիւնս ընդդէմ իւրեանց 'ի մէջ ածեալ. և
փառաց իսկ և առաքինութեան գտանիցին թշնամիք,
վասն կարի 'ի մօտոյ կշտամբելոյ այնոցիկ զվերջացեալս
յառաքինութենէ։ Այլ ես 'ի կարգ առաջարկու-
թեանս դառնամ։

ԼԴ. Առ բդեշխութեամբ Կուռնելիոսի Կոսսայ և
Աբինիոսի Ագրիպպայ՝ ամբաստանեցաւ Կրեմուտիոս
Կորդոս 'ի նոր իմն յանցանս, որպիսի մինչև ցայսժամ
չէր յականջալուրս եկեալ։ Զի 'ի տարեգիրս իւր գո-
վեալ էր նորա զՄ. Բրուտոս, և վերջին 'ի Հռովմայե-
ցիս կոչեցեալ զԿ. Կասիոս։ Դատախազք նորա էին
Սատրիոս Սեկունդոս և Պինար Նատտա, ձեռա-
կանք Սէանոսի. որոյ պաշտպանութիւն՝ եղև ամբաս-
տանելումն 'ի կորուստ, զոր և 'ի Տիբերի դիմացն
էր գուշակել, զի կայր խոժոռ 'ի լուր պատասխան-
ոյն, զոր Կրեմուտիոս՝ աներկբայ ընդ մահ իւր՝ արար
այսպէս. Այնչափ անպարտ եմ ըստ գործոց, Հարք ա-
տենականք, զի բանք իմ ևեթ ամբաստանին. այլ և ոչ
այնոքիկ հակառակ ինքնակալին և մօր նորա, զոր-
պիսիս միայն դատապարտեն օրէնք։ Դատաւիեստիմ
վասն գովելոյ իմոյ զԲրուտոս և զԿասիոս, զորոց զգործս

բաղումք մատենագրեցին, և ոչ ոք 'ի նոցանէ առանց գովութեան։ Տիտոս Լիւիոս, Ճարտասանութեամբն և Ճշմարտախօսութեամբ գերահռչակ, զկնն. Պոմպէոս այնպիսեաք գովութեամբք բարձրացոյց, մինչև Աւգոստեայ կոչել զնա Պոմպէոսեան. և սակայն ոչ արգելաւ այսուիկ բարեկամութիւն նոցա. և զԱկիպլոն, զԱփրանիոս, և զԿասիոս իսկ և զԲրուտոս, ոչ ուրեք յելուզակս և հայրասպանս անուանեալ, որպիսիք նոքա արդ յորջորջին, յաՃախս ևս արս երևելիս զնոսա կոչէ։ Ասինեայ Պոլլիոնի մատեանք բարձր բանիւք զյիշատակ նորա աւանդեն, և Մեսալլա Կորուինոս՝ զօրավար իւր կոչէ պարծանօք զԿասիոս, սակայն երկաքանչիւր կեցին 'ի Ճոխութեան և 'ի պատուի։ Մ. Կիկերոն, որ զԿատոն երկնաչափ 'ի գիրս իւր բարձրացոյց, զինչ այլ վրէժխնդրութիւն 'ի Կեսարէ իշխանապետէ ընկալաւ, բայց զգիրս՝ յորում իբր յատենի դատաւորաց առնէր նա վասն անձին պատասխանի։ Են իսկ 'ի նամականին Անտոնիոսի և յատենախօսութիւնս Բրուտոսի տարապարտ թշնամանք ընդդէմ Աւգոստեայ դառնք. և Բիբակուլեայ և Կատուլլոսի տաղք, լի եպերանօք կայսերայ, յածին 'ի ձեռս ամենեցուն. սակայն դիւցազունքն Յուլիոս և Աւգոստ արհամարհեցին զայնս՝ առանց պահանջելոյ վրէժ. և ոչ դիւրին է դատել՝ հեղութեամբ արդեաք թէ իմաստութեամբ. զի բանք այսպիսիք յարհամարհելն խափանին, իսկ ցասմամբ թուին առնուլ հաստատութիւն։

Եւ. Ոչ ինչ զՅունաց ասեմ, առ որս ոչ միայն ազատութիւն, այլ և լրբութիւն անցանէ անպատուհաս. և եթէ իցէ իսկ ումեք փոյթ վրէժխնդրութեան, բանիւք զբանից խնդրէ զվրէժ. մանաւանդ զորս մահ 'ի բաց բառնայ յատելութենէ և 'ի շնորհաց, ազատութիւն է խօսել զնոցանէ՝ առանց անկանելոյ ընդ բամբասանօք։ Մի թէ գրգռիցեմ բանիւքս իմովք զռամիկն յընտանի պատերազմունս ընդ Կասիոսի, և ընդ Բրուտոսի՝ սպառազինօք զՓիլիպպեան դաշտս ծածկել. չիցեն նոքա յեօթանասուն ամաց հետէ սպանեալ. այլ որպէս 'ի պատկերս իւրեանց Ճանաչին, զորս և յաղթօղն չեբարձ 'ի միջոց, նոյնպէս յիշատակ նոցա փոքր 'ի շատէ պահի առ մատենագիրս։ Իւրաքանչիւր ումեք զիւր փառս

հատուցանէ ժամանակ. եթէ՝ի կորուստ իսկ լեցի ինձ մատնել, ոչ պակասեսցեն՝ որք ոչ միայն զԿասիոսի և զԲրուտոսի, այլ և զիմ կալցին յիշատակ։ — Եւ ելեալ յատենէ անտի ծերակուտին, սովամահ զկեանս իւր վճարեաց. և թէպէտ ատենակալք արժան դատեցան այրել զգիրս նորա՝ի ձեռն շինուածապետաց, սակայն հաւասարքը նոցին պահեցան և հրատարակեցան։ Վասն որոյ ծաղու է արժանի ծանծաղամտութիւն այնոցիկ՝ որք առժամայն իշխանութեամբն իւրեանց համարին հասանել եղծանել և զառյապայ դարուց յիշատակս, զի հանձար հալածեալ յաւելու՝ի համբաւ. և թաղաւորքը օտարքը, կամ որք հանգոյն նոցին բռնացան, նախատինս անձանց և փառս հանձարոյ այլոց յաւելին։

ԼԶ. Այլ յայսմ ամի այնպէս յաճախեցին ամբաստանութիւնք, մինչև յաւուրս տանից լատինականաց դիմել Կալպուրնիոսի Սալուիանեայ առ Դրուսոս քաղաքապետ՝ յերթալ նորա յատեան՝ի հաւահմայս, և ամբաստանել զՍեքս. Մարիոս. որ եղև իսկ նմա աքսորանաց առիթ, կշտամբելով զայն կայսեր առաջի ամենեցուն։ Ամբաստանեցան և կիզիկեցիք հրապարակաւ վասն ապախտ առնելոյ իւրեանց զպաշտամունս դիւցազնին Աւգոստեայ, և հարստահարելոյ զհռովմէական քաղաքացիս, և կորուսին զազատութիւն՝ զոր՝ի պատերազմին Միհրդատայ ստացեալ էր նոցա, յորժամ շուրջ պաշարեալ՝ի նմանէ՝ քաջութեամբ իւրեանց և օգնականութեամբ Լուկուլլոսի վանեցին զնա։ Բայց Փոնտէոս Կապիտոն, որ փոխանակութեամբ բը դեշխի իշխեալ էր Ասիա, անպարտ արձակեցաւ՝ի յայտնել ստութեան յանցանացն՝ յորս զրպարտեալ էր զնա Վիբեայ Սերենոսի. սակայն Սերենոս ոչ պատուհասեցաւ, պաշտպանեալ յատելութենէ հասարակաց. զի որ դժնէագոյնն էր՝ի չարախօսս և ահարկու, սրբազան համարէր. իսկ տկարքը և աննշանք պատուհասէին։

ԼԷ. Ի նմին ժամանակի բնակիչք խոր Սպանիոյ հրեշտակս արարին առ ծերակոյտն, խնդրելով կանգնել մեհեան Տիբերի և մօր նորա։ Ինքնակալն պինդ եկաց՝ի մերժել զպատիւն, և զայս պատեհ առեալ հերքելոյ յանձնէ զստգիւտ փառասիրութեան՝ այսպէս խօ-

սել կալաւ առ Ծերակոյտն. Գիտեմ, Հարք ատենակալք, զի բազումք ցանկային տեսանել յիս առաւելագոյն հաստատութիւն՝ յորժամ քաղաքք Ասիոյ յառաջ քան զսակաւ մի խնդրեցին զայս, և ոչ զդէմ կալայ նոցա։ Այլ ցուցից արդ զպատճառս զայնր ժամանակի լռութեան իմոյ, և որ ինչ այժմուս 'ի մտի եդեալ է իմ առնել։ Դիւցազնն Աւգոստ ոչ արգել զկառուցումն մեհենի յանուն իւր և քաղաքին Հռովմայ 'ի Պերգամոն. և զի ամենայն բանք նորա և գործք յօրէնս են ինձ անլուծանելի, այնչափ յօժարագոյն հետևեցայ օրինակի նորին, որչափ զի պատուոյ պաշտման իմոյ հաղորդ և Ծերակոյտն գտանէր։ Այլ որպէս ներելին էր ընդունել զայն միանգամ, այսպէս փառամոլութեան է և մնափառութեան՝ առնուլ պաշտօն ընդ պատկերս դիոյ ամենայն ուրեք. և դարձեալ զի ստուերածս է ածել փառաց Աւգոստեայ՝ շռայլել զայն մարդահաճութեամբ ամենայն ումեք։

ԼԸ. Եմ իսկ, Հարք ատենակալք, եմ մահկանացու, և զպարտս մահկանացուի ընում. շատ է ինձ՝ եթէ ըզպաշտօն իշխանի լիցի ինձ կատարել ըստ արժանւոյն։ Վկայէք դուք ինձ, այլ ցանկամ և վկայելոյ յետնոց, որք շատ իսկ և աւելի յաճախեսցեն ինձ փառս՝ եթէ համարեսցին զիս արժանի նախնեացն իմոց, խնամով զիրս ձեր յանձանձեալ, անյողդողդ 'ի վտանգս, և անելկիւղ 'ի կրել թշնամանս վասն օգտի հասարակաց։ Այսոքիկ ինձ լիցին 'ի սիրտս ձեր կանգնեալ մեհեանք, այսոքիկ գեղեցկագոյն և անեղծ անդրիք. զի որ 'ի վիմէ կանգնին, եթէ դատաստան յետնոց փոխէ զայնոսիկ 'ի թշնամանս և յատելութիւն, արհամարհին զօրէն գերեզմանաց։ Վասն որոյ աղաչեմ զնիզակակիցս իմ զքաղաքակիցս և զդիս. զսոսա, զի տացեն ինձ մինչև 'ի վախճան կենաց իմոց զխաղաղութիւն մտաց, և զգիտութիւն աստուածայնոց և մարդկային օրինաց. իսկ զնոսա՝ զի յետ մահուան իմոյ գովութեամբ և անմոռաց զգործս իմ և զյիշատակ անուան իմոյ պահեսցեն։

— Եւ ապա առանձին ևս 'ի խօսս իւր եկաց անյողդողդ 'ի մերժել զայնպիսի սպասս պաշտամանց. զոր կէաք համարին առ համեստութեան, բազումք առ անվստահութեան, և ոմանք առ վատութեան. զի

գերազանցեալքն 'ի մարդիկ՝ բարձրագունից տենչան, որպէս Հերակլէս և Դիոնիս 'ի Յոյնս, և Հռոմուլ առ մեզ աստուածարեալք 'ի կաճառս դից. բայց աղնուագոյնս խոհեցաւ Աւգոստ, յուսով ևեթ շատացեալ։ Ամենայն ինչ առ ձեռն պատրաստ կայ իշխանաց. զմի ինչ միայ նոցա խնդրել մինչ 'ի սպառ, զբարեաց յիշատակ. զի որ զհամբաւ բարի արհամարհէ, անգոսնէ զառաքինութիւն։

ԼԹ. Բայց Սէանոս յաջողութեամբն արբեցեալ, և վառեալ ցանկութեամբն Լիւիայ՝ որ Թախանձէրն զնա 'ի խոստացեալ հարսանիսն, արար աղերսագիր առ ինքնակալն ըստ այնր ժամանակի սովորութեան՝ գրովդիմելոյ առնա, ևս և յորժամ մերձն կայր. և օրինակ աղերսագրին էր այս. Բարեկամութեամբն Աւգոստեայ հօր քո, և այժմ բազմապատիկ շնորհօք քովք համարձակեալ, կանխեմ առ քեզ զայս և զաղաչանս իմ ուղերձել՝ չև առ դիս մատուցեալ։ Ոչ ուրեք երբեք ըզփառս աւագութեան խնդրեալ է իմ, լաւագոյն համարեալ զտքնութիւն և զվաստակ իբրև զմի 'ի զինուորաց 'ի պահպանութիւն կենաց ինքնակալիդ։ Սակայն ետաս ինձ գեղեցկանսիհ բախտ՝ արժանի համարելոյ արքունի խնամութեան. և աստի սկիզբն եղև յիս յուսոյ։ Լուայ, զի Աւգոստ 'ի հարմնացուցանել զդուստր իւր՝ յուշ ածեալ է և զասպետս հռովմայեցիս. այսպէս 'ի խնդրել զայր վասն Լիւիայ՝ յուշ լնցի ինքնակալիդ մի 'ի բարեկամացդ, որ ոչ այլ ինչ՝ բայց զպատիւ 'ի խնամութեանս յայսմիկ խնդրէ։ Իբր ոչ ետէ 'ի յանձնելոյ ինձ պաշտամանց այսու հրաժարել կամիմ, այլ բաւ է ինձ ապահովել այսուիկ զընտանիս իմ յանիրաւ թշնամութենէն Աքրիպպինայ. և զայս վասն որդւոց իմոց. զի ինձ կեալ 'ի ծառայութեան մեծի ինքնակալիդ՝ շատ իսկ երկայնաւուրք են։ —

Խ. Առ այսոսիկ՝ գովեալ նախ Տիբերի զտիրասիրութիւն նորա, և սուղ ինչ հարևանցի զբարերարութեանց իւրոց ասացեալ, խնդրէր պարապ խորհելոյ, և յաւել այսպէս. Այլոց 'ի մարդկանէ անկ է խորհել որ ինչ օգտակար է ինքեանց. իսկ իշխանաց ոչ այսպէս. այլ անկ է խորհել յանուն բարի. վասն որոյ ոչ տամ քեզ զդիւրապատրաստն պատասխա-

նի, զի Լիւիայ հասանէ խորհել եթէ պարտ իցէ նմա վերստին լինել առն յետ Դրուսոսի, թէ կեալ'ի տան. է նորա մայր, է նորա և հան, ընդ որս ունի խորհրդակցել։ Պարզ ևս ասացից. թշնամութիւն Աղրիպպինայ յոյժ առաւել զայրասցի 'ի բաժանել հարսանեաւքն Լիւիայ կայսերական աղգատոհմին յերկուս. այժմէն իսկ նախանձ և հակառակութիւն կանանուցն խռովէն զթոռունս իմ, և զինչ 'ի զայրանալ նախանձուն ամուսնութեամբդ այդուիկ՝ զհետ եկեսցէ։ Խաբիս Սէանէ, եթէ կարծես կարել քեզ կալ և մնալ'ի քումդ պայմանի. Լիւիա երբեմն հարսն Կայիոսի կեսարու, և ապա Դրուսոսի, առնուցու յանձն կեալ ընդ թարմատար ասպետի հռովմայեցւոյ. եթէ ես հաւանեցայց, կարծիցէս թէ հանդարտեսցեն այնոքիկ՝ որոց տեսեալ է զհայր նորա և զեղբայր և զհարս մեր 'ի ծագ իշխանութեան։ Կամիս ապաքէն կալ մնալ դու 'ի կարգիդ. այլ դատաւորք և աւագանին, որք ընդդէմ կամաց քոց յաձախեն առ քեզ՝ խորհրդակցել զամենայնէ, բարձրաբարբառ քարոզեն արդէն իսկ զքեզ գեր 'ի վերոյ քան զկարգ ասպետական անցեալ, և զբարեկամութիւն հօր իմոյ ստորև յոյժ քան զվաստակս քո մնացեալ, մինչև առ նախանձու զինէն ևս չարախօսել։ Բայց զի Աւգոստ ասպետի հռովմայեցւոյ խորհեցաւ տալ զդուստր իւր կնութեան, զինչ զարմանք իցեն. Աւգոստ զբաղեալ'ի բազմապատիկ հոգս, և գիտելով յոր ծայր մեծութեան հասանէր ընտրեալն 'ի փեսայութիւն իւր, զկ. Պրոկուլ և զայլս ոմանս՝ որոց խաղաղասէր կեանք և ազատութիւն 'ի յանձանձանաց իրաց հասարակապետութեան ծանօթ էին ամենեցուն, յիշատակեաց 'ի խօսս իւր։ Արդ եթէ ըստ տարակուսանացն Աւգոստեայ պարտ իցէ դատել, որչափ ևս առաւել ըստ արդեանցն, զի զդուստր իւր նախ Աղրիպպայ և ապա ինձ հարմնացոյց։ Զայսոսիկ առ բարեկամութեան ոչ լռեցի, այլ ոչ քոյոցդ և ոչ Լիւիայ խորհրդոցն եղէց խափան. լռեցից առ ժամն և որ ինչ զքէն 'ի միտս իմ յածի, առ 'ի կցորդել զքեզ առաւել ևս ընդ իս. զայս միայն ասեմ, զի չիք ինչ բարձրագոյն՝ որում առաքինութիւնք քո և տիրասիրութիւն չիցեն արժանի. և 'ի դէպ ժամանակի

յայտ արարից զայս առաջի ծերակուտին և ժողովրդեան։—

ԽԱ. Գրեաց դարձեալ Սէանոս առ ինքնակալն, ոչ ևս աղերս զՀարսանեաց՝ այլ վասն երկիւղի իւրոյ մեծի և լռելեայն կասկածանաց զՀծծելոյ ռամկին և զսպառնալեաց նախանձու։ Բայց զի զՀանապազորդ եկաւորաց՝ի տուն իւր խափանել զյաձախութիւն՝ նուազու�էր իշխանութեան իւրոյ, և ընդունելով զնոսա՝ համարձակութիւն տայր չարախօսաց, խնդրէր յինքնակալէն՝ հեռացուցանել զինքն՝ի Հռովմայ, առ՝ի զուարձալի ուրեք վայրի կատարել զկեանս իւր։ Զի բազմօք օգտակար էր իւր այս. զի կարէր գնալ առ ինքնակալն երբ և կամէր, և առաւելագոյնք՝ի նամականւոյն ընդ ձեռս իւր անցանէին, ածեալ՝ի զինուորաց. և զի ինքնակալն յալիս խոնարհեալ, և հեռի՝ի կղզւոջ ուրեք կալով՝ մեղկեալ, դիւրաւ զյանձանձանս աշխարհին՝ի նա թողցր. և զի դարձեալ՝ի խափանել բազմութեան եկաւորաց առ ինքն՝ նուազէր նախանձ, և յընդունայն սպասուց հրաժարեալ՝ յաւելոյր՝ի ստոյգ իշխանութիւն։ Վասն որոյ զգործառնութիւնս քաղաքին, զյաձախել ժողովրդեան առ ինքն, զբազմութիւն այգորեալեացն սկսանէր եպերել, և գովէր զՀանգիստ և զառանձնութիւն, ուր զերծ՝ի տաղտկանաց և՝ի չարախօսութեանց՝ մարթէր լաւ ևս յանձանձել զկրս հասարակաց։

ԽԲ. Յաւուրսն յայնոսիկ դէպ եղև Տիբերի լսել ըզդատ Վոտիենոսի Մոնտանեայ, առն ականաւորի հանճարով. և զոր վաղ իսկ խորհէրն, եդ յայնժամ՝ի մտի՝ հրաժարել յատենէ ծերակուտին, և՝ի լրոյ բանից՝ որ յաձախ ճշմարտութիւնք էին դառինք։ Զի յամբաստանել Վոտիենեայ վասն թշնամանացն խօսելոց ընդդէմ ինքնակալին, Եմիլիոս վկայ՝ այր զինուորական՝՝ի հաստատութիւն ամբաստանութեանն փութոյ պնդութեամբ պատմէր զամենայն, և՝ի խափանելն յաղաղակէ՝ պնդագոյն ևս յառաջ վարէր զբանսն։ Լուեալ Տիբերի զչարախօսութիւնսն՝ որովք լռելեայն ժանտացուցանէին զփառս իւր, խռովեցաւ յոյժ, մինչև գոչել՝ թէ կամէր անդէն և անդ առնել վասն անձին պատասխանի, և դատ վարել ըստ օրինի. այլ աղաչանօք որոց

շուրջն կային, և 'ի հնթելոյ ամենեցուն զիւրև, հազիւ հանդարտեաց, և Վոտիենոս պատուհասեցաւ ըստ օրինաց սահմանելոց ընդդէմ քրէական յանցանաց։ Այլ եղև Տիբերի՝ զի բամբասէին զխստութիւն իւր ընդդէմ յանցաւորաց, և յաւել խստագոյն ևս վարել ընդ նոսա. զԱկուիլիա ամբաստանեալ 'ի հնութիւն ընդ Վարիոսի Լիգուրի, և ըստ յուլեան օրինաց դատապարտեալ 'ի Լենտուլեայ Գետուլիկեայ բդեշխէ, պատուհասեաց յաքսոր. և զԱբիդիոս Մերուլա, որոյ հէր երդուեալ'ի վերայ օրինադրութեանց դիւցազնին Աւգոստեայ, ջնջեաց 'ի մատենէ ծերակուտին։

Խգ. Յետ այսորիկ ընկալեալ եղէն 'ի լուր պատգամաւորք, 'ի սպարտացւոց և 'ի մեսենիացւոց յղեալք՝ յաղագս մեհենի լիմնականին Արտեմեայ, զոր սպարտացիք ցուցանէին 'ի պատմագրաց և 'ի տաղից քերթողաց՝ կառուցեալ 'ի նախնեացն իւրեանց 'ի Սպարտա. և թէպէտ մակեդոնացւոյն Փիլիպպեայ առեալ զայն մարտիւ, սակայն ապա Կայիոսի կեսարու և Մ. Անտոնիոսի անդրէն յիւրեանս հրովարտակաւ դարձուցեալ։ Իսկ մեսենիացիք ածէին բաժինս իմն վաղընջականս սահմանացն Պելոպոնեսեայ՝ արարեալ ընդ Հերակլէս և ընդ Թոռունս նորա, և զերկիրն զայն Դենթելեան՝ յորում էր մեհեանն, ասէին անկեալ 'ի բաժին արքային իւրեանց. և արձանագրութեան իւրացն պահել քանդակեալ 'ի վէմ և 'ի պղինձ։ Եւ եթէ զքերթողաց և զպատմագրաց պարտ էր ածել զվկայութիւն, բազմագոյնք և ճոխագոյնք էին իւրեանց. և Փիլիպպեայ՝ ոչ եթէ սաստիւ իշխանութեան, այլ ըստ իրաւանց զայն այնպէս ասէին սահմանեալ. նոյնպէս և արքային Անտիգոնեայ և Մումմեայ զօրավարի, լեալ զայնմանէ դատաստան։ Ըստ այմ և Ատիդիոսի Գեմինեայ կուսակալին Աքայիոյ՝ դատաւոր զմիլեսացիս հասարակաց հաւանութեամբ ասէին կացուցեալ, և նոցա զնոյն վճիռ հաստատեալ։ Վասն որոյ մեսենիացւոց դատեցաւ մեհեանն։

Եւ սեգեստացիք զմեհեան Աստղիկան յԵրիքս լերին՝ զայն որ աւերեալն էր 'ի հնութենէ՝ խնդրէին նորոգել, 'ի մէջ ածեալ որ ինչ յաղագս հիմնարկութեան նորա էին հաւաստիք, և յիշատակք հաճոյականք Տի-

բերի. և յանձն էառ նա յօժարակամ նորոգել որպէս ազգակից նոցին։ Յետ այսորիկ 'ի քնին ածաւ աղերս մասսիլիացւոց, և հաճոյ թուեցաւ առնել ըստ օրինակի Պ. Հռուտիլեայ. զի յաքսորել նորա դատաստանաւ 'ի Զմիւռնա, քաղաքակից իւրեանց ընկալեալ էին զնա զմիւռնացիք. ըստ այսմ Վուլկատիոս Մոսքոս ընկալեալ'ի մասսիլիացւոց, եթող հասարակապետութեան նոցա զինչս իւր որպէս իւրոց հայրենեաց։

ԽԳ. Ի սմին ամի վախճանեցան արք հոյակապք Կն. Լենտուլոս և Լ. Դոմիտիոս։ Լենտուլեայ առաւել քան զբդեշխութիւնն, և քան զշուք յաղթանակի՝ զոր ընկալեալն էր նուաճելով զգետուլացիս, յաճախեցին փառս՝ նախ համբերատար չքաւորութիւն, և ապա առանց զօշաքաղութեան ստացեալ՝ փարթամ ճոխութիւն, զոր ոչն վատնեաց։ Դոմիտիոս՝ յանուն հօր իւրոյ ականաւոր՝ զօրացեալ ընդ ծով 'ի քաղաքական մարտի, յարեցաւ ապա 'ի կողմն Անտոնիոսի, և ապա Աւգոստեայ. հաւ նորա անկեալ էր 'ի փարսալեան ճակատամարտին, վերամարտիկ լեալ աւագանւոյն. նա ինքն ընտրեալ էր 'ի փեսայութիւն օրիորդին Անտոնիայ դստեր Ոկտաւեայ. և նոյն ինքն անցեալ բանակաւ ընդ Ալբիս գետ, անդր ևս քան զամենայն նախորդս իւր խաղացեալ էր'ի խորս Գերմանիոյ, և ընկալեալ զշուք յաղթանակի։ Մեռաւ և Լ. Անտոնիոս, մեծազգի, այլ թշուառ. զի 'ի դատապարտել հօր նորա 'ի մահ վասն շնութեանն ընդ Յուլիայ, հեռացոյց Աւգոստ զնորատի պատանին, որ թոռն էր քեռ իւրոյ, 'ի Մասսիլիա՝ պատճառանօք վարժից պատրուակեալ զաքսոր նորա. բայց մեծահանդէս փառօք ածեալ ոսկերք նորա, վճռով ծերակուտին եդան 'ի շիրիմն Ոկտաւեանց։

ԽԵ. Առ նովին բդեշխիւք եղեռն դժնդակ 'ի յառաջակողմն Սպանիոյ 'ի շինականէ ումեմնէ տերմեսացւոյ գործեցաւ։ Սա յարձակեալ'ի կուսակալ գաւառին 'ի Լ. Պիսոն՝ որ 'ի ժամանակի խաղաղութեան անպատրաստաբար ուղևորեր, յեղակարծում 'ի մի հարուած արկ զնա տապաստ. և սրընթաց երիվարաւն փախուցեալ յանտառախիտս՝ եթող անդ զերիվար իւր, և ընդ ափափայս և անկոխ վայրս խոյս էտ 'ի հալածչաց։ Այլ ոչ ընդերկար կարաց զերծանել. զի կալեալ ձին

և ածեալ'ի մերձակայ աւանս, ծանուցաւ վերելեակ նորա և գտաւ. և ստիպեալ խոշտանգանօք յայտնել զընկերս իւր, գոչեաց մեծաձայն'ի հայրենին բարբառ, զի'ի զուր զինքն հարցափորձէին՝ անդ իսկ կալով ընկերացն'ի զնին, և զի չէր մարթ ամենայն չարատանչ լկանաց կորզել յինքենէ զՀշմարտութիւն։ Եւ'ի վաղիւ անդր մինչդեռ ածէին զնա վերստին'ի խոշտանգանս հարցափորձի, զերծեալ'ի ձեռաց Թիկնապահաց, և հարեալ զգլուխ իւր ուժգին զքարի, անկաւ անդէն մեռեալ։ Բայց ասի ևս դաւով տերմեսացւոց սպանեալ, զի զիսափանած հարկին այնու խստիւ պահանջէր՝ մինչև չհանդուրժել բարբարոսաց բռնութեան նորա։

ԽԶ. Ի հիւպատոսն Լենտուլոսի Գետուլիկեայ և Կ. Կալուիսիոսի սահմանեցաւ Պոպպէոսի Սաբինեայ պատիւ յաղթանակի, վասն նուաճելոյ նորա զազգս Թրակիոյ, որք'ի դժուարուտս լերանց բնակեալ՝ բիրտք և վայրենիք՝ սաստկագոյնս պատերազմէին։ Պատճառք ապստամբութեան նոցա ոչ միայն վայրագ բնաւորութիւն ազգացն այնոցիկ էր, այլ և զի դժկամակէին հպատակել զօրաժողովոյ, և ոչ զոք'ի քաջաց իւրեանց կամէին տալ մեզ'ի զինուորութիւն. և Թագաւորաց իսկ իւրեանց ըստ հաճոյից սովոր էին հնազանդել. և եԹէ յղէին իսկ մեզ զօրս յօգնականութիւն, զզօրավարս իւրեանց'ի վերայ նոցա կացուցանէին, և ընդ սահմանակիցս և եԹէ իւրեանց մղէին պատերազմ։ Դարձեալ և լուր լինէր յայնժամ կամել Հռովմայեցւոց ցրուել զազգս Թրակիոյ, և խառն ընդ այլազգիս վարել զնոսա'ի տար աշխարհս. վասն որոյ մինչև զէն առեալ, հրեշտակս արարին առ Հռովմայեցիս՝ յիշեցուցանել նոցա զբարեկամութիւն և զմեծարանս իւրեանց, խոստանալով կալ մնալ'ի նմին՝ եԹէ ոչ նոր ինչ բեռն'ի վերայ իւրեանց յաւելուին. իսկ եԹէ ծառայեցուցանել զինքեանս կամին որպէս նուաճեալս, ասէին. Են մեզ զէնք և արբունք, և ոգի պատրաստ յաղատութիւն կամ'ի մահ։ — Ցուցանէին նոցա և զամրոցս իւրեանց'ի վերայ ժայռից կառուցեալս, ուր զծնօղս իւրեանց և զկանայս ամրացուցեալ էր նոցա. և սպառնային պատերազմ սաստիկ և արիւնռուշտ։

ԽԷ. Բայց Սաբինոս, մինչդեռ զզօրս իւր 'ի մի վայր ժողովէր, ողոքով ետ պատասխանի. իսկ 'ի հասանել Պոմպոնիոսի Լաբէոսի լեգէոնաւն իւրով 'ի Մեսիոյ, և արքային Հռոմեատալկեայ օգնականութեամբ ռամկին Թրակացւոց՝ որք հաւատարիմ կացեալն էին, յարձակեցաւ 'ի Թշնամիս՝ որք 'ի կիրճս անտառաց կազմ և պատրաստ կային, և յանդգնագոյնք 'ի նոցանէ 'ի վերայ բացարձակ ելլոց երևէին։ Զորս զօրավարն հռովմայեցի օրինօք ճակատու դիւրաւ հալածեաց, բայց սակաւուց 'ի նոցանէ կոտորածիւ. զի մերձ էին յամրոցս իւրեանց։ Անդ զբանակն պատսպարեալ, կալաւ ապա հզօր ձեռամբ զլեառնն՝ որոյ անձուկ և սարահարթ էր գագաթն, և ձգէր մինչև ցառաջին մարտկոցն, յորում կային 'ի պահ զօրք բազումք սպառազէնք և ամբոխ անզէն։ Միանգամայն և զընտիրս յաղեղնաւորաց յղեաց ընդդէմ ամեհագունից, որ առ պատնիշօքն՝ ըստ օրինի ազգին խաղային երգովք և պարուք։ Սոքա ցորչափ 'ի հեռուստ պատերազմէին, հարուածս բազումս ետուն՝ առանց ընդունելոյ, այլ 'ի մատչելն առ Թշնամիս՝ յեղակարծ յարձակմամբ նոցա խուճապեցան, քանզի 'ի Թիկունս եհաս նոցա և գունդ Սուգամբրաց, զոր զօրագլուխն հռովմայեցի ոչ ինչ հեռի 'ի տեղւոջէ անտի կացուցեալ էր, և որք ոչ նուազ ահարկուք էին խառնաձայն երգովքն և զինուց շառաչմամբ։

ԽԸ. Մատոյց ապա զբանակ իւր մերձ 'ի Թշնամիս, Թողեալ յառաջնումն բանակետեղ զԹրակացիս, որ եկեալն էին յօգնութիւն՝ որպէս ասացի. և հրաման ետ նոցա ասպատակել, հրկէզ առնել, աւար հարկանել 'ի տուէ. իսկ 'ի գիշերի ամրանալ 'ի պատնէշս իւրեանց և հսկել։ Նոքա զառաջինն կացեալ 'ի հրամանին, ապա զառածան 'ի համարձակութիւն. և ճոխացեալ աւարաւ՝ Թողին զկայս իւրեանց, և շուայտեալ 'ի խրախուսս և 'ի գինի, 'ի քուն ընկղմեցան։ Ազդ եղև Թշնամեաց յուլութիւն նոցա, և կազմեցին գունդս կրկին, միումն դիմել 'ի վերայ աւարառուաց, և միւսումն յարձակել 'ի բանակն հռովմէական. իբր ոչ եթէ յուսով առնլոյ զայն, այլ զի աղաղակի և զինուց և վտանգի իւրում իւրաքանչիւր ուշ եդեալ, մի լուիցէ

զամբոխս միւսոյ կողման պատերազմին. և զխաւար գի-
շերոյ առին իւրեանց օգնական, առ 'ի յաձախել զար-
հաւիրս։ Որք միանգամ'ի պատնէշս լեգէոնացն էին
յարձակեալ, դիւրաւ 'ի բաց վանեցան. բայց օգնա-
կան գունդք Թրակացիք ահաբեկեալ 'ի յեղակարծ
յարձակմանէն, քանզի կէսք 'ի պատնէշս անդ ան-
կեալ դնէին 'ի նինջ, և առաւելագոյնք արտաքոյ դե-
գերէին, կոտորեցան անխնայ որպէս դասալիքք և
մատնիչք, զինուորեալք 'ի գերութիւն իւրեանց և հայ-
բենեաց։

ԽԹ. Ի վաղիւ անդր Սաբինոս եհան զզօրս իւր 'ի
դաշտավայր, զի Թերևս բարբարոսք յաջողութեամբն
յանդգնեալ՝ իշխեսցեն 'ի ձակատամարտ։ Այլ քան-
զի նոքա յամրոցաց իւրեանց և 'ի հողակոյտ պատնի-
շաց ոչ մեկնէին, պաշարեաց զնոսա, մարտկոցս 'ի դի-
պող տեղիս կառուցեալ, և փոսովք և ցցապատնիշօք
կցորդեալ զայնս ընդ չորեքհազար քայլ շուրջանակի.
և առ 'ի հատանել 'ի նոցանէ զջուր և զխաւր, սկսաւ
ամիսուիսեալ զշրջապատն, և անձկացուցանել զպաշարու-
մին. և կանգնեաց հողաբլուրս, ուստի վէմս և գեղար-
դունս և խանձողս մարթ էր 'ի մօտոյ արձակել 'ի թըշ-
նամիս։ Այլ ոչ ինչ այնպէս տագնապէր զնոսա, որպէս
նուազութիւն ջրոյ. զի ամբաւ բազմութեան պատե-
րազմողաց, և անզէն ամբոխին, հարկ էր 'ի միոջէ ևեթ
աղբերէ՝ որ ինայր նոցա՝ բուժել զծարաւ. միանգա-
մայն և խաշն և ձիան՝ որ ըստ սովորութեան բարբա-
րոսաց 'ի միասին ընդ նոսա բնակէին՝ առ 'ի չգոյէ ձա-
ղակի սատակեալ, դիակունք նոցա և այնոցիկ՝ որ
կարեվէրք և պասքեալք մեռանէին՝ ապականէին նե-
խով և շարաւով զմերձաւորս առ հասարակ։ Ի լրումն
աղետից նոցա յաւելաւ և հերձուած. զի կէսք անձնա-
տուր լինել կամէին, այլք մեռանել միմեանցասպանք.
էին ևս՝ որք ոչ կամէին զմահ անվրէժ, այլ յարձակ-
մամբ 'ի թշնամիս՝ քաջութեամբ մեռանել. և ոչ սին-
լոքորք ումանք էին տարաձայնեալքն 'ի կարծիս։

Ծ. Բայց Դինիս զօրավար ծերունի, որոյ ընդերկար
զփորձ առեալ էր զօրութեան և գթութեան հռով-
մայեցւոց, միակ հնարս 'ի տագնապի անդ համարէր
զէնընկէց լինել. և առաջին ինքն հանդերձ կնաւն և

որդւովք անձնատուր եղև յաղթականին։ Նմա հետե-
ւողք եղեն ծերք և կանանին տկար, որոց առաւել ցան-
կալի էին կեանք քան զփառս. այլ առոյգ հասակն երկ-
պառակեալ էր ընդ Տարսաս և ընդ Տուրեսիս, որք կա-
մէին մեռանել ազատօրէն։ Բայց Տարսաս աղաղակէր
փութալ'ի մահ՝ ոտնհար եղեալ յուսոյ և երկիւղի, և
օրինակաւ իւրով զնոսա խրախուսէր՝ զսուր 'ի կողս ի-
ւրեանց ձգել. որում բազումք հետևեալ զրաւեցան 'ի
կենաց. իսկ Տուրեսիս մնայր իւրովքն գիշերոյ։ Այդ
եղև զօրավարին մերում, և խտագոյն զօրօք ամրացոյց
զպատնէշս։ Եհաս գիշեր ամպրոպային գժոխմբեր, և
թշնամիք մերթ խառնաձայն աղաղակաւ, և մերթ
խորին լռութեամբ'ի վարանս զպաշարօղսն արկանէին.
բայց Սաբինոս շուրջ ընթանայր, քաջալերէր զզօրսն՝
մի՛ նենգաւոր աղաղակաւն և մի՛'ի կեղծուպատիր լռու-
թենէն խռովեալ՝ տեղի տալ դարանակալաց, այլ ի-
րաքանչիւր կալ'ի կայի իւրում անշարժ, և մի՛ վայրա-
պար ձգել զէն։

ԾԱ. Յայնժամ բարբարոսք խուժեցին գունդա-
գունդ. էր զի բռնաքարս և խանձողս և կոձեղս ծա-
ռոց 'ի պատնէշս մեր արձակէին, և էր զի խրձամբք և
ոզորահիւս կողովովք և դիակամբք լիր 'ի փոսս արկա-
նէին յանցս. այլք կամուրջս և սանդուղս յառաջագոյն
պատրաստեալ՝ 'ի պատնէշս անդր մատուցանէին, առ-
նուլ աւերել, և մերձ ընդ մերձ ընդ դիմամարտս մա-
քառել։ Իսկ հռովմայեցիք վանէին զնոսա զինուք,
հարկանէին կմբեայ վահանօք, և նիզակս երկայնա-
բունս և շեղջակոյտս վիմաց 'ի վերայ նոցա տեղային։
Չհռովմայեցիս տենչ առաջիկայ յաղթութեան, և մա-
նաւանդ ամօթ պարտութեան՝ եթէ երբէք տեղի տա-
յին, իսկ զթշնամիս յոյս յետին, և բազմաց 'ի նոցանէ
մարք և հարսունք անդր ընդ նոսա եկեալք, և գոյժ
նոցա և կական սրտապնդէին։ Խաւար գիշերոյ կիսոց
քաջութիւն, այլոց արհաւիրս ազդէր. հարուածք
անստոյգք, վերք յեղակարծք, զինուորակիցք և թըշ-
նամիք անծանօթք, և 'ի խորոց լերին յետկուսէ հրն-
չեցեալ արձագանգք, այնպէս խռովեցուցանէին զամե-
նեսեան, մինչև հռովմայեցւոց թողուլ լքանել զկէսս
յամրոցաց՝ որպէս թէ կալեալս'ի թշնամեաց։ Սակայն

և ոչ հասեալ էին անդր թշնամիք, բայց 'ի սակաւուց ոմանց. զի յանդգնագոյնք 'ի նոցանէ հարեալ կամ վի-
բաւորեալ, իսկ այլք 'ի ծագել ընդ հուպ առաւօտու՝ հալածեցան յամրոցս իւրեանց 'ի բարձունս, և ապա հարկ եղև նոցա անձնատուր լինել, շրջակայ գեղջրէիւք հանդերձ՝ որք ինքնակամ նուաճեցան. բայց զայլս չեղև նուաճել, ոչ զօրութեամբ և ոչ պաշարմամբ, վասն կանխահաս և սաստիկ ձմերայնոյ Եմոս լերին։

ԾԲ. Բայց 'ի Հռովմ յաղմկի կային արքունիք։ Ի նախաձեռն պատրաստութիւն դաւանացն նիւթելոց 'ի կորուստ Ագրիպպինայ՝ ամբաստանեցաւ Կլաւդիա Պուլքրա ազգական նորա, դատախազութեամբ Դոմիտիոսի Ափերի։ Սա այն ինչ դատաւոր կացեալ՝ այր անփառունակ, պատրաստ առ ամենայն եղեռն առ 'ի պայծառանալ փութով, չարախօսէր զԿլաւդիայ 'ի շնութիւն ընդ Փորնիոսի, և 'ի դեղատուութիւն և 'ի կախարդանս ինքնակալին։ Ագրիպպինա միշտ իսկ դժնեայ, իսկ յայնժամ վասն առաջիկայ վտանգին և ևս դժնէացեալ, դիմեաց առ Տիբեր։ Դէպ եղև զի մատուցանէր նա յայնժամ զոհ 'ի պատիւ հօր իւրոյ. անտի պատճառս առեալ Ագրիպպինայ յանդիմանելոյ զնա, ասէ. Զէ 'ի ձահ մատուցանել դիւցազնին Աւգոստեայ զոհ, և զորդիս նորա հալածել. ոչ'ի պատկերս համերս բնակէ հոգի նորա դիւցական, այլ'ի կենդանի պատկերս 'ի դիցախառն արենէ սերեալս, որք ճանաչէն զվտանգ, և շառագունին ընդ նախատինս։ Ի զուր ամբաստանի Կլաւդիա. նորա պատճառ կորստեանն ոչ այլ ինչ է, բայց սպաս անզգոյշ մատուցանել Ագրիպպինայ, ոչ զմտաւ ածեալ՝ զի վասն այն Սոսիա 'ի կորուստ մատնեցաւ։ — Ի լուր բանիցս այսոցիկ՝ Եհան Տիբեր զգաղտնածածուկ սրտին դուն ուրեք լսելի լեալ ձայն, և սաստիւ կշտամբեաց զնա հելլէն տողիւն, զի վասն ոչ թագաւորելոյն էր նա դառնացեալ։ Բայց Կլաւդիա և Փորնիոս դատապարտեցան. իսկ Ափեր ընդ առաջին ճարտարախօսս դասեցաւ՝ 'ի հռչակ հանճարոյ իւրոյ, և մանաւանդ վասն բանին՝ զոր յաւել զնմանէ Տիբեր, թէ իրաւամբք արժանի էր նա ճարտարախօս կոչելոյ։ Եւ յետ այնորիկ հանապազորդէր Ափեր 'ի դատախազել և 'ի պաշտպանել ամ-

բաստանելոց. և հանձարո

պինայ, և զի չիշխեալ Տիբերի յայտնի կորուսանել զնա, հնարէր նմա կորուստ 'ի ծածուկ։

ԾԵ. Բայց Տիբեր առ 'ի խափանել զհամբաւն՝ յաճախէր յատեան ծերակուտին. և զաւուրս բազումս անցուցանէր 'ի լուր հրեշտակաց Աստուծոյ, որ վիճէին թէ յորմէ՞ 'ի քաղաքաց աշխարհին իւրեանց պարտ էր կառուցանել զմեհեանն։ Մետասան քաղաքք անհաւասարք 'ի զօրութիւն, այլ հաւասարք յեռանդն, 'ի վեգ եկեալ՝ ցուցանէին զհնութիւն իւրեանց և զանդրդժելի բարեկամութիւն ընդ հռովմայեցիս 'ի պատերազմին ընդդէմ Պերսէոսի և Արիստոնիկեայ և այլոց թագաւորաց։ Խպեպացիք և տրալլացիք, հանդերձ լաւոդիկեցւովք և մագնեսացւովք, 'ի բաց մերժեցան որպէս ստորինք յոյժ քան զայլս. տրովացիք իսկ, թէպէտ և քաղաքին Հռոմոց մայր լեալ էր Տրովադա, սակայն զհնութեան ևեթ կալան պարծանս։ Խնդիր եղև առ վայր մի զալիկառնացւոց՝ որք ցուցանէին 'ի հազար երկերիւր ամաց հետէ ոչ փոխեալ զբնակութիւն իւրեանց առ ահի սասանութեան երկրին, և խոստանային հաստահիմն առնել զմեհեանն 'ի ժայռս արաստոյս։ Նովին պատճառաւ և պերգամացիք ասէին կառուցեալ առ իւրեանս զմեհեան Աւգոստեայ, այլ այն նոցա բաւական դատեցաւ. նոյնպէս և եփեսացւոց պաշտամունք Ապոլոնի, և միլետացւոց՝ Արտեմեայն շատ համարեցան։ Յարեաւ ապա վէճ ընդ սարդիկեցիս և ընդ զմիւռնացիս. սարդիկեցիք ընթերցան ըզվճիռ ետրուրացւոց, որք առ ազգակիցս իւրեանց զնոսա ունէին. քանզի Տիւրենոս և Լիւդոս, որդիք Աստեայ արքայի, վասն բազմանալոյ յոյժ ազգին բաժանեալ էին զայն. Լիւդոսի կացեալ մնացեալ 'ի բնիկ երկրին, իսկ Տիւրենեայ բնակեցուցեալ այլուր նոր հայրենիս. և զօրավարացն երկոցունց յանուն իւրեանց զգաւառսն յորջորջեալ, միումն յԱսիա, միւսումն յԻտալիա։ Ի զօրանալ ապա լիւդացւոց՝ գաղթականս արարեալ էր 'ի կողմն յունաստանի, որ 'ի Պելոպայ ունի զանուանակոչութիւնն։ Ի մէջ մատուցանէին և զհրովարտակս ինքնակալաց, զդաշինս կռեալս ընդ մեզ 'ի պատերազմին մակեդոնացւոց, զպարարտութիւն գետոց իւրեանց, զբարեխառնութիւն օդոց, և զերկրին պըտղաբերութիւն։

ԾԶ. Բայց զմիւռնացիք յիշեցուցեալ նախ զՀնութիւն ազգի իւրեանց, (Թէպէտ Ֆանտալոս որդի Դիոսի համարեսցի կացեալ նոցա հիմնադիր, Թէպէտ Թեսէոս՝ սերեալ և նա 'ի դիցախառն ազգէ, և Թէ մի յԱմազոնաց,) անցին ապա յայլ առաջարկութիւնս. մանաւանդ 'ի վաստակս մատուցեալս Հռովմայեցւոց, զի տուեալ էին նոցա օգնականութիւն ընդ ծով, ոչ միայն յարտաքին պատերազմունս՝ այլ և 'ի մղեալս յԻտալիա. և զի ինքեանք նախ կանգնեալ էին մեհեան քաղաքին Հռովմայեցւոց առ Մ. Պորկիոսիս բդեշխիս, յորժամ մեծ էր զօրութիւն նոցա՝ այլ չև 'ի ծայր բարձրութեան ժամանեալ, քանզի կանգուն դեռ ևս կայր Կարթեդոն, և կային Թագաւորք հզօրք յԱսիա։ Սբ այսոսիկ զՍիլլա կոչէին 'ի վկայութիւն, որպէս 'ի ծանու վտանգի լեգէոնացն Հռովմայեցւոց՝ վասն դժնդակ ձմերայնոյ և կարօտութեան ձորձոց, լու եղեալ զմիւռնացւոց համախմբելոց 'ի ժողով՝ մերկացեալ զՀանդերձս իւրեանց և յղեալ էին 'ի ծածկոյթ մերոյ զօրականին։ Հարցան ատենակալք, և վըճիռ 'ի շնորհս զմիւռնացւոց եռուն. և սահմանեաց Պիբիոս Մարսոս, Մ. Լեպիդեայ՝ որում վիճակեալն էր Ասիա 'ի կուսակալութիւն՝ ընտրել զոք վերակացու շինուածոյ մեհենին. և 'ի հրաժարել Լեպիդեայ 'ի պատուոյն ընտրելոյ ինքնին, Վալերիոս Նասոս՝ երբեմն կուսակալ՝ ընտրեցաւ վիճակաւ։

ԾԷ. Յայնժամ կատարեաց Տիբեր զխորհուրդն 'ի բազմաց հետէ երկնեալ, և յաճախս ևս առաջարկեալ, և մեկնեցաւ յետոյ ուրեմն 'ի Կամպանիա, պատճառաւ նոքա կանգնելոյ մեհեան Դիոսի 'ի Կապուա, և Աւգոստեայ 'ի Նոլա, այլ ստուգիւ առ 'ի կեալ հեռի 'ի Հռովմայ։ Պատճառ մեկնելոյ նորա Թուէին ինձ հնարք Սէանոսի ըստ յոլովից պատմագրաց. այլ քանզի և յետ սպանութեան Սէանոսի եկեաց նա զամս վեց 'ի նմին առանձնութեան, յերկբայս անկանիմ, և հաւանիմ ստուգիւ ևս 'ի նա ինքն հանել զպատճառսն, զի ծածկել կամէր 'ի բացեայ զանգթութեան գործս իւր և զխոհերս գարշութեան։ Եղեն ևս՝ որք համարեցան ամաչել նմա 'ի ծերութեան ընդ կերպարան մարմնոյն. զի մարմին նորա անձնեայ և բարձրահասակ՝ նիհա-

բեալ էր և կորացեալ, գլուխ նորա լերկացեալ 'ի վարսից. և դէմք կեղալից, և օծեալ միշտ սպեղանեօք։ Եւ դարձեալ զի սովորեալ էր կալ մեկուսի 'ի Հռոդոս, զերծ 'ի մարդկանէ, առ 'ի թագուցանել զհեշտախտութիւն իւր։ Այսի և 'ի գոռոզութենէ մօրն փախուցեալ, զոր ծանր էր նմա ունել գահակից, և մերժել զնա չկարէր, զի 'ի ձեռն նորա հասեալ էր ինքնակալութեան։ Քանզի Աւգոստ զԳերմանիկ թոռն քեռ իւրոյ՝ որ գովելին էր ամենեցուն՝ ժառանգ ինքնակալութեանն կամէր կացուցանել, այլ վասն թախանձանաց կնոջ իւրոյ որդեգրեաց իւր զՏիբերիոս, և զԳերմանիկ ետ Տիբերի յորդեգիրս. և զայս նմա երախտիս մայր իւր, և խնդրէր ինքնակալել ընդ նմա։

ԾԸ. Սակաւք ոմանք չոգան ընդ Տիբերի. Կոկկէոս Ներուաս, մի յատենակալաց ծերակուտին, երբեմն բդեաշխ, ներհուն յիրաւագիտութիւն, և ասպետ ոմն հռովմայեցի յերևելեաց անտի. թող զԱէանոս, զԿուրտիոս Ատտիկոս, և զայլս 'ի Հելլենաց, բանասիրական մակացութեանց հմուտ, այս 'ի զբօսնուլ ինքնակալին խօսակցութեամբ նոցա։ Բայց աստեղագէտք ոչ աջողակի գուշակէին զերթ Տիբերի 'ի Հռովմայ, հանդիպեալ 'ի դիրս աստեղաց՝ որ անդարձ ցուցանէին զնա։ Այս գոյժ 'ի կորուստ եղև բազմաց, որք մնտալուտ զմահ նորա համբաւէին. զի չէր մարթ ումեք յառաջատես լինել՝ կալոյ նորա զամս մետասան ինքնակամ հեռի 'ի հայրենեաց։ Այլ յայտնեցաւ ընդ հուպ քանի սահմանակից ստութեան էր գիտութիւնն այն, և ընդ քանի խաւարաւ մոլորութեան ծածկեալ ճշմարտութիւն։ Գուշակութիւնն ոչ ևս դառնալոյ նորա 'ի Հռովմ չէր վայրապար, այլն ամենայն այլ ընդ այլոյ. զի 'ի մերձակայ ուրեք 'ի գիւղից, կամ առ ծովեզեր, և յաճախ իսկ առ պարսպօք Հռովմայ եկեաց նա մինչև 'ի խոր ծերութիւն։

ԾԹ. Յաւուրսն յայնոսիկ դէպ եղև Տիբերի վտանգ ահագին՝ որ յաւել զհամբաւն մնոտի, և ետ նմա պատճառս պաւաել ևս վստահելոյ 'ի բարեկամութիւն և յարիութիւն Սէանոսի։ Յանձեռագործ քարանձաւի ուրեք 'ի Սպելունկա, ճաշէին 'ի միում յամարանոցաց ընդ մէջ ամիկլեան ծովու և փունդեան լերանց։

Ի մուտս անձաւոյն, վէմ մի զերծեալ 'ի վերուստ, և 'ի վերայ ոմանց 'ի սպասաւորաց անկեալ, սպան զնոսա. ընդ որ սոսկացեալ հրաւիրելոցն 'ի Ճաշ, փախեան 'ի բաց առ հասարակ. բայց Սէանոս ծնգովքն և գլխով և բազկօք հովանացեալ 'ի վերայ ինքնակալին, պատրաստարէր զնա յայլոց ևս վիմաց անկելոց. և 'ի նոյն դիրս գտին զնա զօրքն հասեալք յօգնութիւն։ Որով Սէանոսի յաւելան ևևս շնորհք առաջի ինքնակալին, մինչև վտանգաւորաց ևս խրատուց նորա վստահութեամբ լսէր ինքնակալն վասն տիրասիրութեան նորա։ Իսկ նա գոգցեաւ ինն դատաւորաբար վարէր ընդդէմ դատախազից սադրելոց յիւրմէ, որք ամբաստանէին զորդիս Գերմանիկեայ, մանաւանդ զՆերոն անընդմէջ յաջորդ ինքնակալին. որ թէպէտ և պատանի զգօն, այլ բաղումս այն էր՝ զի ոչ զգուշանայր ըստ հարկի ժամանակին կարևորացն 'ի յաջողութիւն. զի և բարեկամք նորա և ձերբազատք ցանկութեամբ վաղագոյն հասանելոյ իշխանութեան՝ ստիպէին զնա ցուցանել մեծախոհութիւն և վստահութիւն, և ասէին. Այս էն կամք ժողովրդեան Հռովմայ, այս և իղձք զօրականին, առ 'ի բեկանել զյանդգնութիւն Սէանոսի՝ որ խաղառնէ զերկայնմտութեամբ ծերունւոյ ինքնակալին, և զպատանեկութեամբ քով արհամարհէ։—

Կ. Զայսոսիկ և զայսպիսի բանս լսելով Ներոնի, թէպէտ և ոչ ինչ խորհուրդ չարեաց երկնէր 'ի մտի, այլ վազէին երբէք երբէք ընդ շրթունս նորա բանք համարձակք և անզգոյշք, զորս լրտեսք՝ կարդեալք առ նմա՝ հասուցանէին յունկն Սէանոսի, հանդերձ յաւելուածովք. և ոչ Ներոնի պաշտպանելոյ անձին գոյր տեղի։ Ի վերայ այսորիկ և կասկածք բազմադիմիք յաւելուին Ներոնի. զի կէսք ողջունեալ զնա, և 'ի բաց սրանային. այլք 'ի սկսելոց խօսիցն յանկարծ լռէին, կալով անդ արբանեկաց Սէանոսի և ծիծաղելով։ Տիբեր ևս խոժոռ կամ կեղծ դիմօք ընդունէր զպատանին, որ եթէ խօսէր և եթէ լռէր, թէ խօսք նորա և թէ լռութիւն 'ի յանցանս գրէին նմա։ Գիշեր իսկ չէր նմա անվտանգ. զի և զտքնութիւն նորա և զքուն և զհառաչանս պատմէր կին նորա մօր իւրում Լիւիայ, և Լիւիա Սէանոսի։ Սա զեղբայր Ներոնի զԴրուսոս

յինքն յանկուցեալ էր, առաջի եդեալ նմա զյոյս ինքնակալութեան 'ի բառնալ յեղբօրէ իւրմէ երիցուէ՝ որ մերձ էր 'ի կորուստ։ Դրուսոս վայրենաբարոյ 'ի բնէ, յիշխանասիրութիւն իւր և յոխութիւն ընդ եղբօրն, յաւելոյր և զնախանձ՝ վասն Ագրիպպինայ մօր իւրոյ յառաջ մատուցանելոյ զներոն. և ոչ Սէանոս յօգնել իւրում Դրուսոսի՝ դադարէր 'ի հնարից հանդերձելոյ կորստեան նորա, գիտելով զյանդուգն բնաւորութիւն նորա և զդիւրըմբռնելի 'ի դարան։

ԿԱ. Ի վերջկոյս այսր ամի վճարեցին զկեանս իւրեանց արք ականաւորք, Ասինիոս Ագրիպպաս՝ յանուանի քան 'ի վաղեմի ազգատոհմէ, և ոչ 'ի փառաց նախնեացն օտարացեալ, և Կ. Ատերիոս 'ի ծերակուտական զարմէ, ճարտարախօս ականաւոր առ կենդանութեամբ իւրով, այլ ոչ նոյնպիսի թողեալ յիշատակ զհանճարոյ իւրմէ. զի քաջալորակի արտասանութեամբ ճառիցն, քան թէ արուեստիւ գերազանցէր. որպէս զի ուր այլոց մտածութիւնք և վաստակք կեան առ յապայս, Ատիրեայ դաշնակաւոր և յորդահոս ճառք ընդ նմա վախճանեցան։

ԿԲ. Առ բդեշխութեամբ Մ. Լիկինիայ և Լ. Կալպուրնեայ արկածք ինչ յեղակարծ պատահեցին, հաւասար աղետից ահագին պատերազմաց, 'ի միում վայրի կեան ժամանակի սկսեալ և կատարեալ։ Ատիլիոս ոմն, 'ի ձերբաղատ զարմէ սերեալ, կառոյց մերձ 'ի Փիդենա շուրջ տեսանելեաց տեղիս՝ առ 'ի հանդէս ածել անդ զսուսերամարտից տեսիլ. այլ ոչ հաստահիմն զայն արարեալ, և ոչ զպահանգս փայտակերտիցն հաստահեղոյս կազմեալ. զի ոչ յառատաձեռնութենէ, և ոչ 'ի փառասիրութենէ շնորհս ունելոյ առաջի ժողովրդեան, այլ յանարգ շահասիրութենէ եկեալ էր յայն։ Անդր գունդագունդ դիմեցին զբօսասէրքն, զրկեալք առ ինքնակալութեամբ Տիբերի յայսպիսեաց զբօսանաց, արք և կանայք, ծերք և տղայք, մանաւանդ առ մերձաւորութեան տեղւոյն. վասն որոյ ծանրագոյն ևս եղեն աղէտքն։ Ծայրալիր 'ի խառանէ շինուածն մեծ, լուծեալ անկաւ ներքոյ և արտաքոյ, և զանթիւ բազմութիւն մարդկանն՝ որ զբօսանէին 'ի տեսիլն, և որք անդ շուրջն կային, արկ ընդ իւր համակործան և ընդ

աւերակօքն ծածկեաց։ Որք միանգամ անդէն և անդ փչեցին զոգիս, զերծան՝ որպէս 'ի հանգոյն աղէտս մարթ է զերծանել՝ 'ի չարատանջ մահուն տառապանաց. թշուառագոյն այնոքիկ գտան, որք խեղեալ և կարեվէր՝ ոչ իսկոյն զրաւեցան 'ի կենաց. որք 'ի տուէ 'ի տեսիլ երեսաց, և գիշերի 'ի լուր հեծեծանաց, ըզկին և զորդիս իւրեանց ճանաչէին։ Ոչ յամեցին և այլք 'ի գոյժ չարեացն անդր հասանել։ Էր որ զեղբայր իւր, էր որ զազգական, և էր որ զծնօղս իւր ողբայր. նոքին իսկ, որոց բարեկամք և ազգականք վասն այլոց իրաց երթեալ էին, չէին զերծ յերկիւղէ. զի չև ծանուցեալ նոցա՝ ոյք ոմանք հարեալ էին յարկածիցն, առաւելագոյն խէթ կասկածանաց յաճախէր զարհաւիրս նոցա։

ԿԳ. Իբրև սկսան զաւերակսն պեղել, խուռն ընթանային ամենեքեան 'ի վերայ անչնչացեալ մարմնոց, գիրկս արկանէին, համբուրէին զնոսա. և ոչ սակաւ վէճք լինէին անդ վասն որոց եղծեալ էին կերպարանք, և որոց դէմք և տիք երկբայելի առնէին զճանաչումն։ Յիսուն հազար ոգիք գտան անդ ընդ խեղեալ և ընդ ճմլեալ. և ծերակոյտն ետ վճիռ՝ մի՛ ևս ումեք, որոյ չիցեն հապ ամի ամի չորից բիւրուց սեստերտից, 'ի հանդէս ածել զսուսերամարտ, և մի՛ շուրջ տեսանելեաց կառուցանել կայս՝ առանց հաստատութեան նոցին այց և խնդիր լինելոյ։ Ատիլիոս վարեցաւ յաքսոր. և անկելոցն ընդ յեղակարծ արկածիւն բացան ապարանք աւագանւոյն, և վիրաբոյժք և սպեղանիք ամենեցուն մատուցան։ Բայց թէպէտ և տխրատեսիլ յաւուրսն յայնոսիկ էր քաղաքն, սակայն զնախնի որերոյն բերէր զկերպարան, որք յետ մեծաց պատերազմաց առատաձեռն խնամովք դարման վիրաւորացն մատուցանէին։

ԿԴ. Զև ևս արկածքն այնոքիկ 'ի մոռացօնս անկեալ, հրդեհ սաստիկ ճարակեցաւ 'ի Հռովմ, և այրեաց զԿիրկիոն լեառն։ Աղիտաբեր համարեցաւ ամենայն, և 'ի ձախող ժամանակի մեկնեալ կայսեր 'ի Հռովմայ, որպէս սովորութիւն է ռամկին մեղապարտս դիպուածոց համարել զմարդիկ։ Բայց ինքնակալն կալաւ զառաջս տրտնջանացն, բաշխեալ ամենեցուն արծաթ ըստ տուժիցն ծանրութեան։ Շնորհակալիք ե-

ղէն 'ի ծերակուտին յաղնուականաց, և դրուատիք 'ի ռամկին վասն առատաբաշխ պարգևացն՝ որոց ինքնակալն հաղորդս առնէր և զանծանօթս ինքնակամ, առանց փառասիրելոյ և աղաչանս 'ի մերձակայիցն ընդունելոյ։ Սահմանեցաւ ևս կոչել յայնմհետէ Աւգոստեան զլեառն Կելիոն. զի 'ի հրկէզն լինել անդ ամենայնի՝ անկէզ մնացեալ էր պատկեր Տիբերի 'ի տան Յունեայ ատենակալի. Զնոյն երբեմն դէպ լեալ ասէին և Կլաւդեայ Կուինտեայ պատկերին, զոր նախնիք վասն երկիցս անկէզ մնալոյ նորա՝ 'ի մեհեան դիցամօրն նուիրեալ էին, զի սրբազան և ընդունելի դից ասէին զազգատոհմն Կլաւդեանց. և պարտ համարէին յաւելուլ զսպաս պաշտաման տեղւոյն, ուր այնչափ պաստուեալ էր դից զՏիբեր։

ԿԵ. Զէ ինչ անտեղի աւանդել աստ և զայն, զի լեառնն այն կոչէր 'ի վաղնջուց Կաղնէտուն՝ վասն տընկախիտ կաղնեացն որ 'ի նմա, և ապա կոչեցաւ Կելիոն՝ յանուանէ Կելիոսի Վիբենայ Ետրուրացւոյ զօրավարի. որոյ եկեալ զօրք յօգնականութիւն՝ 'ի Տարկուինիոսէ Պրիսկեայ կամ յայլմէ ումեքէ 'ի Թագաւորաց մերոց ընկալեալ էր անդ բնակութիւն. զի ոչ միաբանին զայսմանէ մատենագիրք։ Այլ հաւաստի այն է՝ բազմութեան նոցա մեծի բնակել 'ի դաշտին մերձ 'ի հրապարակն հռովմէական, ուստի տոսկեանն կամ Ետրուրեան Թաղ յեկաց անտի զանուանակոչութիւնն կալաւ։

ԿԶ. Բայց Թէպէտ և խնամք աւագանւոյն և առատաբաշխութիւն ինքնակալին 'ի սփոփումն մեծ եղև աղէտիցն, սակայն դատախազից օրըստօրէ զայրանայր բուռն և ոխերիմ զօրութիւն անխափանելի։ Դոմիտիոս Սփեր դատափետեաց զՎարոս Կուինտիլիոս, զայր Ճոխ, կարևոր ազգական կայսեր, այն որ և զԿլաւդիա Պուլքրա զմայր նորա տուեալ էր դատապարտել։ Ոչ ոք զարմանայր ընդ պատրաստութիւն Դոմիտեայ 'ի չարիս, զի 'ի կարօտութեան լեալ ընդերկար, և զընձեռայս սուղ ինչ յառաջ ընկալեալս վատնեալ էր. այլ զարմանք այն թուէին, զի ընդ նմա և Պոբլիոս Դոլաբելլա՝ աղնուազգի և ազգական Վարոսի՝ չարախօսէր, աղաղտեալ զաղնուականութիւն իւր, և կորուստ տոհ-

մին իւրոյ պատրաստէր։ Սակայն Ծերակոյտն հակառակ եկաց, պարտ համարեալ սպասել դատաստանի ինքնակալին, որ չարեաց 'ի վերայ հասելոց էր միակ ապաստան առ վայր մի։

Կէ. Բայց Տիբեր յետ կառուցանելոյ զմեհեանս 'ի Կամպանիա, թէպէտ և արգելեալ էր հրովարտակաւ՝ մի ումեք զանդորրութիւն իւր վրդովել, և ոչ ներէին թիկնապահք՝ բնակչաց իսկ տեղւոյն մօտել առ նա, սակայն տաղտկացեալ 'ի քաղաքաց և յաւանաց և յամենայնէ՝ որ 'ի ցամաք երկրի, մեկնեցաւ 'ի Կապրէա կղզի, զոր անջրպետէ ծով 'ի հրուանդանէն Սորենտեայ երեք հազար քայլ։ Զմիայնութիւն կղզւոյն այնորիկ համարիմ հաճոյ լեալ նմա առաւել քան զայլ տեղիս, զի 'ի ծովու անդ չէք ուրեք նաւահանգիստ, այլ հազիւ նաւկներոյ հանգրուան, և ոչ ոք կարէր մատչել անդր անտես 'ի պահապանաց։ Եւ դարձեալ զի զբարեխառնութիւն օդոյ պահպանէ անդ 'ի ձմերայնի պատսպարան լերինն 'ի բռնաշունչ հողմոյ, և զովացուցանէ զտօթ յամարայնի զեփիւռ շնչեալ 'ի հանդիպոյ։ Հանդերձ սոքիմբք և ծով գեղատեսիլ ծաւալէր շուրջանակի, և մինչ 'ի ծոց անդր ամենագեղեցիկ ակնարկէր կղզին՝ չև Վեսուվայ հրաբուղխ լերին զերեսս երկրին յեղափոխեալ։ Սի՝ Յունաց երբեմն 'ի ծովեզերս անդ տիրեալ, և Տելեբաց բնակեալ 'ի Կապրէա. այլ յայնժամ ամարաստանս երկոտասան յօրինեալ էր անդ Տիբերի, որոց անուանք և տարածութիւն գրաւէին զերկիրն ամենայն. և որչափ երբեմն 'ի յանձանձանս իրաց հասարակաց պարապէր նա մտադիւր, նոյնչափ յայնժամ 'ի զեղխութեան և 'ի զեղծանգործութեան յօրանայր անդ։ Զի տակաւին կայր նա 'ի յանդուգն կասկածանս և 'ի հաւանութիւն մըտաց՝ զոր Սէանոսի 'ի Հռովմ արկեալ էր 'ի միտս նորա, և որով առաւել ևս անդ յաւելոյր նմա խէթ. վասն որոյ ոչ ևս այնուհետև գաղտ զհետ Ագրիպպինայ և Ներոնի դարանակալ լինէր, այլ կացուցեալ յայտնապէս 'ի վերայ նոցա պահապան՝ որ գոգցես իմն համարակալութեամբ ի գրի առնէր զեկաւորս առ նոսա, և զմուտ և զել նոցա գայայտնի և զծածուկ։ Լին ևս՝ որ սադրեալ 'ի նմանէ, խորհրդակից լինէին նոցա ա-

պաւինել 'ի զօրս Գերմանիոյ, կամ 'ի բազմամբոխ հրապարակի դիմել առ ոտս պատկերի դիւցազնին Աւգոստեայ, և կարդալ յօգնութիւն զԺողովուրդն և զծերակոյտ։ Եւ 'ի մերժելնոցա զհրապոյրսն, ամբաստանեալ լինէին՝ որպէս թէ մտաբերեալ 'ի նոյն։

ԿԸ. Առ բդեշխութեամբ Յունիոսի Սիլանեայ և Սիլիոսի Ներուասայ, սկիզբն ամին եղև չարագուշակ։ Տիտոս Սաբինոս, մի յերևելի ասպետաց հռովմայեցւոց, ածաւ 'ի բանտ՝ վասն բարեկամութեանն ընդ Գերմանիկեայ, զի չէր նորա լքեալ անխնամ զկին և զորդիս նորա, այլ յաճախէր առ նոսա 'ի տուն, և ընկերէր նոցա յելս և 'ի մուտս, միայնակ յամենայն բարեկամաց նոցա մնացեալ. որով գովելի էր լաւաց, և ատելի չարախոհից։ Արդ 'ի կորուստ սորա միաբանեցին Լատինոս Լատիար, Պորկիոս Կատոն, Պետիտիոս Հռուփոս, և Մ. Ոպսիոս, երբեմն գատաւորք. քանզի ցանկային բդեշխութեան, և չէր մարթ նոցա հասանել այնմ, բայց 'ի ձեռն Սէանոսի. և ոչ գտանել շնորհս առ նմա, բայց համախոհութեամբ ընդ նմա 'ի չարիս։ Խորհուրդ կալան յինքեանս՝ զի Լատիար, որոյ էին ինչք ընդ Սաբինեայ, պատրաստեսցէ նմա որոգայթ շրթանց 'ի լուր իւրեանց, և ապա ինքեանք առցեն ամբաստանել զնա. վասն որոյ Լատիար 'ի սկզբան անդ ընդ ընտ դիպուածոյ բանս ինչ 'ի ներքս արկեալ՝ գովեաց զանյողդողդ հաստատութիւն Սաբինեայ, զի ոչ ընդ ընդ զայլս 'ի պայծառանալ տանն Գերմանիկեայ՝ բարեկամ եղեալ նմա, և ապա 'ի ստուերանալն՝ լքեալ էր զնա. նոյնպէս և զԳերմանիկեայ խօսէր գովութեամբ, և զԱգրիպպինայ կարեկցութեամբ։ Եւ 'ի շարժել Սաբինոսի ըստ դիւրագորով բնաւորութեան տառապելոց, և յարտասուս և 'ի տրտունջ լուծանել, յայնժամ Լատիար համարձակագոյնս սկսաւ ընդ վայր հարկանել զանգթութիւն զգուռոյութիւն և զակնկալութիւն Սէանոսի, և ոչ զՏիբեր խնայեալ 'ի պարսաւանաց։ Խօսակցութիւնքս այսոքիկ զգուշալիք 'ի միջի նոցա անցանէին, որպէս մտերիմ բարեկամաց, և Սաբինոս ինքնայորդոր չոգաւ ապա առ Լատիար յայցելութիւն, յայտնել նմա զվիշտս իւր, որպէս հաւատարիմ բարեկամի։

ԿԹ. Խորհուրդ արարին արքայ, զորս յիշատակեցի, թէ որովհետև հնարիւք մարթ էր ինքեանց ականջալուր լինել բանիցն այնոցիկ՝ 'ի բերանոյ նորին իսկ Սաբինոսի. զի պարտ էր տեղւոյն, ուր ժողովէին, ունել զկերպարան ծածկութեան. եթէ յետկոյս դրանցն կային, գոյր տեղի երկիւղի յակն անկանելոյ, կամ շշնջանաց նոցա յունկն ուրուք հասանելոյ, կամ ըստ դիպաց ինչ լինելոյ կասկածելի։ Այլա ատենակալքն երեքին ընդ տանիս և ընդ ձեղունն տանն Թագեան'ի խորշ ուրեք՝ ոչ ինչ նուազ անարդ քան զդաւ նոցա ատելի, կալեալ զլսելիս 'ի ծերպս և 'ի ձեղքուածս։ Իսկ Լատիար հանդիպեալ Սաբինեայ յուղղոջ, 'ի տուն և 'ի սենեակ իւր էած զնա՝ իբր առ 'ի պատմել զոր այն ինչ լուեալն էր. և զանցեալսն և զառաջիկայ բազմապատիկ չարիս նորովք արհաւրօք կուտակէր։ Այդ Սաբինոս 'ի նոյն տրտնջանս երկարագոյն նուագօք զառաջաւ. զի'ի սկսանել զրոյցս տխուրս՝ դժուարին է լռել։ Դարանակալքն պատրաստեցին անդէն զնամականին ամբաստանութեան առ Տիբեր, մանրապատում զորոգայթն արարեալ, ինքեանք զինքեանց նախատինսն պատմելով։ Ոչ երբէք անձկութիւն այնպիսի և երկիւղ կալեալ էր զքաղաքն. ամենայն ոք և յաղգակացս իւրոց և 'ի սպասաւորացն Թաքչէր, խորշէր ամենայն ոք յակրմբից, 'ի խօսակցութենէ, 'ի ծանօթ և յանծանօթ լսելեաց, 'ի համերց և յանշունչ էից, և 'ի տանեաց իսկ և յորմոց զգուշանայր ամենայն ոք։

Հ. Բայց Տիբեր յամանորաբեր տօնի, 'ի կաղանդս յանուարի, 'ի նամականին բարեմաղթութեան առ ծերակոյտն, շրջեալ զբանս իւր 'ի Սաբինոս՝ ասէր հրապուրեալ նորա զոմանս 'ի ձերբազատից իւրոց 'ի դաւ ընդդէմ իւր, և յայտնապէս պահանջէր վրէժխնդրութիւն։ Ոչ յամեաց դատակնիքն. և իբրև ածէին զնա 'ի մահ, թէպէտ և պատեալ զբերան նորա ձորձովք, աղաղակէր նա հեղձամղձուկ՝ որչափ զօրէրն. Այլ յապէս ինչ պարտ էր սկիզբն առնել տարւոյ, զայս մատուցանել Սէանոսի զոհ։ — Եւ ուր և շրջէր զաչս, ուր և լսելի լինէր բարբառ նորա, աղդէր փախուստ և ամայութիւն, դատարկանային արահետք և հրապարակք. կէսք ևս առ ահի դառնային գային երևէին անդրէն,

երկուցեալ'ի ցուցանելոյ զերկիւղ. և ասէին. Ո՞ր օր զերծ կայցէ 'ի պատուհասէ, եթէ 'ի տունս իսկ և 'ի պաղատանս՝ յորս սովորութիւն է և յանսուրբ բանից հրաժարել՝ կապանք և խեղդք 'ի վար արկանին. ոչ վայրապար Տիբերը այսպիսում ատելութեան լինի դիմադրաւ, այլ առ 'ի բառնալ զամենայն արգել և խափան, որպէս զի նորոց բդեշխից ընդ մեհեանս և ընդ բագինս՝ լիցի բանալ և զբանտս։ — Եւ գրեաց Տիբերը շնորհակալիս առ ծերակոյտն վասն պատուհասելոյ նոցա զայրն, զոր փնասակար ասէր հասարակապետութեան. և յաւելոյր՝ զի 'ի վտանգի կային կեանք իւր յերեսաց դարանակալ թշնամեաց. և թէպէտ ոչ զոք անուանէր, այլ յայտնապէս ակնարկէին բանք իւր 'ի Ներոն և յԱգրիպպինա։

ՀԱ. Եթէ ոչ առաջի կայր ինձ ըստ կարգի ամաց աւանդել զանցս, ցանկալի էր ինձ կանխել աստստին պատմել զելս իրաց Լատինիոսի և Ոպսիոսի և այլոց չարանութիւց, ոչ միայն յինքնակալել Կայիոսի կեսարու՝ այլ կենդանեաւ նորին իսկ Տիբերի, որ ոչ ներ էր՝ զի արբանեակք անօրէնութեանցն պատուհասեցին յայլոց. այլ ինքն տաղտկացեալ'ի նոցանէ, սովոր էր 'ի փոխանակել այլոց արբանեկաց 'ի նոյն չարիս՝ զառաջինսն պատուհասել։ Բայց զայսոցիկ և զայլոց անօրինաց պատուհաս յիւրում տեղւոջն պատմեցից։ Յայնժամ Սինիոս Գալլոս, որոյ որդւոցն մօրաքոյր էր Ագրիպպինա, արևոր վարկաւ խնդրել յինքնակալէն՝ զի յայտնեսցէ ծերակուտին զպատճառս երկիւղի իւրոյ, առ 'ի բառնալ զայնոսիկ 'ի միջոյ։ Այլ Տիբերը, որ քան զամենայն կարծեցեալ առաքինութիւնս իւր սիրէր զկեղծիս, զչարեցաւ ընդ կամել այլոց գիտել զոր թագուցանէրն. բայց Սէանոս ցածոյց զնա, ոչ առ սէր Գալլոսի՝ այլ զի երկարախորհուրդ կամք Տիբերի գայցեն'ի լոյս. քանզի գիտէր զդանդաղութիւն նորա 'ի խորհել, և 'ի յայտնելն զխորհուրդս իւր՝ վաղ ընդ սպառնալիսն 'ի վերայ ածել զչարիս։ Ի նմին ժամանակի մեռաւ Յուլիա թոռն Աւգոստեայ, որ ըմբռնեալ'ի շնութեան և դատապարտեալ՝ աքսորեալն էր 'ի նմանէ 'ի Տրեմէս կղզի, ոչ ինչ հեռի յափանց Ապուլիոյ. ուր և կեցեալ էր 'ի նժդեհութեան

զամն քսան, ունելով զպէտս իւր յառատութենէ Լի-
ւիայ, որոյ զորդիս առն իւրոյ'ի յաջողութեանն նոցա ծա-
ծուկ հնարիւք կործանեալ՝ ապա'ի թշուառութեան
նոցա հանդէս առնէր ողորմութեան իւրոյ առ նոսա։

ԿԲ. Ի նմին ամին փրիսացիք, ազգ բնակեալ յայն-
կոյս Հռենոսի, ապստամբեցին՝ դրդեալ'ի զոշաքաղու-
թենէ մերմէ քան յիւրեանցն հեստութենէ։ Դրու-
սոսի դոյզն ինչ հարկ արկեալ էր երկրին վասն չքաւո-
րութեան նոցա, տալ ևեթ մորթս արջառենիս 'ի
պէտս զօրականին, և չէր ուրուք նեղեալ զնոսա վասն
չափոյ և ստուարութեան մորթոցն։ Ոլենիոս, երբեմն
հրամատար արդնընկէց զօրականին, կուսակալ'ի
Փրիսիա կացեալ՝ մորթ գոմշենի սահմանեաց 'ի չափ
արջառենեացն ընդունելեաց 'ի նոցանէ։ Դժուարին
էր այս այլոց իսկ ազգաց, այլ դժուարագոյն գերմա-
նացւոց՝ որոց անտառք բերրի են ստուար երէոց, այլ
արջառք 'ի քաղաքին նկունք։ Հարկ եղև նոցա'ի սկզբ
բան զնոսին իսկ արջառս, ապա զանդաստանս, և ապա
զկանայս և զորդիս իւրեանց տալ հարկապահանջեցն։
Այսուի յաձախեցին զայրոյթ և բողոք. և ոչ ինչ այնու
օգնեալ՝ զէն առին, յարձակեցան 'ի հարկահանս, և
կալեալ խաչեցին զնոսա։ Ոլենիոս փախստեամբ զեր-
ծաւ յամրոցն կոչեցեալ Փլևոն, ուր ոչ սակաւ զօրք
հռովմայեցւոց և նիզակակցաց 'ի պահ կային ովկիա-
կան ծովափանց։

ՀԴ. Իբրև գիտաց զայն Լ. Այլրոնիոս փոխանակն
կուսակալի ստորինն Գերմանիոյ, կոչեաց 'ի վերնա-
կողմն կուսէ զդրօշակիրս լեգէոնաց և զընտիրս յօժան-
դակ հետևակաց և հեծելոց. և զերկոսին բանակս
միահամուռ իջուցեալ'ի Հռենոս, էաձ'ի վերայ փրի-
սացւոց. որոց լուծեալ փութանակի զպաշարումն ամ-
րոցին, հասին 'ի պաշտպանութիւն ընտանեաց իւ-
րեանց։ Այլրոնիոս 'ի ձահիձ՝ որ էին անդ՝ լիր ար-
կեալ, և կամուրջս յանցս ծանու զօրականին, և վասն
այլոց հետաձգեալ հունս անցից, պատուէր ետ այրու-
ձիոյն Կաննինեփաց, և գերմանացի հետևակաց՝ որ
ընդ մերսն զինուորէին, պատել յետկուսէ զթշնամիս.
այլ նոքա վաղ իսկ պատրաստեալ կային'ի պատերազմ,
և վանեցին զնիզակակցացն գունդս, հանդերձ հեծե-

լովքն՝ որ յօգնութիւն նոցա յղեալ էին։ Ապրոնիոս յա-
ռաջ խաղացոյց գումարտակս երիս, և ապա երկուս
ևս, և յետ սակաւ միոյ զՀեծելազօրն Նիզակակից, որք
բաւական էին ընդդէմ թշնամեաց՝ եթէ 'ի միասին 'ի
վերայ հասանէին. այլ ուրոյն զՀետ միմեանց յարձա-
կեալ՝ չեղեն հարեալքն 'ի խրախոյս, և ինքեանք ևս ա-
հաբեկեալ՝ դարձան յետս։ Յայնժամ յղեաց զԿեթե-
գոս Լաբէոն փոխանորդ զօրավարի հինգերորդ լեգէո-
նին, հանդերձ մնացորդօք նիզակակից զօրաց. այլ և
նա 'ի ձախողել մարտին՝ անկեալ 'ի վտանգ, պնդադեա-
պանս զՀետ միմեանց արձակէր՝ խնդելով զլեգէոնսն
յօգնականութիւն։ Դիմեցին անդր լեգէոնք, նախա-
յարձակ լինելով հինգերորդին. և սաստիկ պատերազ-
մաւ հարեալ զթշնամիս, զերծուցին զգումարտակսն և
զնիզակակից գունդս՝ պարտասեալս և վիրաւորս։ Զօ-
րավարն հռովմայեցի չէառ յանձն գնալ 'ի վրէժխնդ-
րութիւն և 'ի թաղել զդիակունս անկելոց, թէպէտ և
հազարապետք և զօրագլուխք և երևելիք 'ի հարիւրա-
պետաց անկեալ էին. և ծանուցաւ 'ի փախստէից՝ զի
ինն հարիւր այր 'ի հռովմայեցւոց, մերձ յանտառն՝ որ
կոչի Բադոհենն՝ մատնեալ էին 'ի մահ՝ պատերազ-
մեալ մինչև ցվաղորդայն, և այլք չորեքարիւր ամրա-
ցեալք յագարակի Կրուպպորեայ ուրուն՝ երբեմն մեզ
զինուորելոյ՝ հարեալ զիրեարս, և ինքնակամ սպա-
նեալ էին՝ առ 'ի չլինել անձնատուր։

ՀԴ. Յայնմ հետէ անուանի եղեն փրիսացիք 'ի Դեր-
մանացիս. և թագոյց Տիբեր զկոտորածն, ոչ գիտելով
զի կացուցանել զօրավար պատերազմին. և ոչ ծերա-
կուտին փոյթ ինչ էր ընդ անշքանալ հռովմէական ա-
նուան 'ի ծայրս սահմանաց ինքնակալութեան. զի եր-
կիւղ առնին գրաւեալ ունէր զոգիս, և շողումիք ջա-
նային ատենակալք հնարս այնմ հայթայթել։ Վասն
որոյ թողեալ 'ի բաց զայլ ամենայն խնդիրս, սահմա-
նեցին՝ բագին կանգնել գթութեան, և միւս ևս՝ բա-
րեկամութեան, և առընթեր նոցին զպատկեր կայսեր
և զԱէանոսի, աղերս յոգնաթախանձ արկանելով վասն
դարձի նոցա. այլ ոչ դարձան նոքա 'ի քաղաքն, և ոչ
'ի մօտաւոր ուրեք վայր, բայց միայն մեկնեալ 'ի կրդ-
զ ոյ անտի եկին մերձ 'ի Կամպանիա։ Անդր չոգան ատե-

նակալք ծերակուտին և ասպետք, և բազումք'ի ժողովրդենէ, տեսանել զԱՀանոս՝ առ որ դժուարին էր մատչել, և հնարիւք կամ համախոհութեամբ յաջողէր գտանել մուտ առ նա։ Եւ յայտնապէս տեսանէին զնա յաւելեալ'ի գոռոզութիւն 'ի տեսիլ անարգ սպասուցն՝ որ հրապարակաւ ընծայէին նմա. զի է իսկ 'ի Հռովմ տեսանել յաճախ զխուռն բազմութիւն, այլ վասն ընդարձակութեան քաղաքին անգիտելի է՝ ո՛ առ ինչ երթևեկէ. իսկ անդ'ի բայի ընդ ծովեզերս՝ խառն 'ի խուռն անկեալ դնէր զտիւ և զգիշեր բազմութիւն մարդկան, շնորհս'ի բարապանաց կամ արհամարհանս ընդունելով. մինչև արգելաւ և այն, և դարձան 'ի Հռովմ կէսք յուսահատեալ վասն անարժան համարելոյ բանից նորա և տեսութեան, այլք խնդամտեալ տարապարտ ընդ շնորհս նորա. զի չարաբաստիկ բարեկամութեան նորա էլք ծանունք'ի վերայ կային։

Հե. Բայց Տիբեր զթոռն իւր զԱգրիպպինա, զդուստրը Գերմանիկեայ, ետ անդ Կն. Դոմիտեայ կնութեան. և հրամայեաց զՀանդէս հարսանեացն կատարել'ի Հռովմ։ Ոչ միայն վասն հնութեան ազգատոհմի նորա ընտրեաց զնա ինքնակալն 'ի փեսայութիւն, այլ և վասն ազգականութեանն ընդ կայսերս. զի Դոմիտեայ հան էր Ոկտաւիա, որով և ինքն թոռն քեռ Աւգոստեայ։

Դիմակարգութիւն գրոցս։

Ա. Սղջ, բնաւորութիւն, և փառասիրութիւն Սէանոսի։

Բ. Վերակացու լեալ ատենական զօրաց, յաւելու զիշխանութեանն այնորիկ զօրութիւն. և հայթայթէ իւր զօրաւիդն 'ի ծերակուտին։

Գ. Առ 'ի կորուսանել անվրէպ զԴրուսոս որդի Տիբերի, հրապուրէ զկին նորա Լիւիա զքոյր Գերմանիկեայ։

Դ. Դրուսոս որդի Գերմանիկոսի առնու զպատմուճան այրական։ Տիբեր պատճառի այց առնել գաւառաց, և ունի զհամար զօրութեանց ինքնակալութեանն։

Ե. Թիւ և բաժանումն զօրութեանց նորա ընդ ծով և ընդ ցամաք։

Զ. Ներքին տեսչութիւն, նախ քան զաղետալի յեղափոխութիւնն յայնժամ 'ի վերայ հասեալ։

Է. Ոխութիւն և տրտունջ Դրուսոսի, որդւոյ ինքնակալին, ընդդէմ Սէանոսի։

Ը. Սէանոս տայ թունաւորել զնա 'ի դեղ յամրազդեցիկ։ Յետ մահու նորա՝ Տիբեր ընծայեցուցանէ ծերակուտին զԴրուսոս և զՆերոն զորդիս Գերմանիկեայ։

Թ. Ցուզարկաւորութիւն Դրուսոսի, և սպասք մատուցեալք յիշատակի նորին։

Ժ. Համբաւ դեղամահ լինելոյ Դրուսոսի 'ի ձեռն հօր իւրոյ։

ԺԱ. Հերքումն այսր համբաւոյ։

ԺԲ. Սէր հասարակաց, աղխտաբեր որդւոց Գերմանիկեայ, և Ագրիպպինայ այրւոյ նորա։ Սէանոսի հնարք 'ի կորուստ նոցա, և նախ մօրն։

ԺԳ. Տիբեր ընդունի 'ի լուր զհրեշտակութիւնս քաղաքաց բազմաց, և բազմի դատաւոր ամբաստանելոց ոմանց։

ԺԴ. Բողոք սամեցւոց և կովացւոց առ 'ի պահել զիրաւունս ասպատանի մեհենիցն Հերայ և Ակլեպեայ։ Կատակագուսանաց հալածումն յԻտալիոյ։

ԺԵ. Մահ միոյ յերկուսորեկացն Դրուսոսի, և Լուկիլեայ Լոնգոսի բարեկամի ինքնակալին։ Լուկիլեայ Կապիտոնի ամբաստանիլ յասիացւոց, և դատապարտութիւն նորա։ Քաղաքք շնորհապարտք սահմանեն մեհեան ինքնակալին և մօր նորա և ծերակուտին։

ԺԶ. Ընտրութիւն քրմին Դիոսի. օրինադրութիւն վասն այսորիկ 'ի նպաստ հայրենի իշխանութեան։ Կանոնադրութիւնք 'ի մեծարանս քրմաց։

ԺԷ. Քրմապետացն մաղթանք վասն որդւոց Գերմանիկեայ, և վասն ինքնակալին։ Տիբերի գժգոհել ընդ այն, և Սէանու գրգռել զզայրոյթ նորա։

ԺԸ. Կ. Սիլիոս և Տիտիոս Սաբինոս, բարեկամք Գերմանիկեայ, սահմանին 'ի կորուստ. և անխոհեմութիւն Սիլիոսի վաղվաղէ զկորուստ նորա:

ԺԹ. Սիլիոս ամբաստանեալ, կանխէ քան զդատապարտութիւն իւր 'ի մահ ինքնակամ:

Ի. Ինչք նորա գրաւին ըստ մասին 'ի գանձ արքունի. և Սոսիա կին նորա դատապարտի յաքսոր: Խոհական և հեզ բնաւորութիւն Մ. Լեպիդոսի:

ԻԱ. Կալպուրնիոս Պիսոն մեռանի 'ի ժամու, յորում դատելոցն էր: Կասիոս Սևերոս, որ աքսորեալ կայր 'ի Կրետէ, ածի 'ի Ժայռն Սերիփիոն:

ԻԲ. Պլաւտիոս Սիլուանոս հոսէ զկին իւր 'ի բարձուէ ապարանիցն. և ամբաստանեալ, հատանէ զերակս իւր:

ԻԳ. Տակիտարինաս վերստին սկսանի պատերազմել յԱֆրիկէ:

ԻԴ. Դոլաբելլա բաժանէ զբանակն հռովմէական 'ի բազում գունդս, և հալածէ զբարբարոսս ամենուստ:

ԻԵ. Սպասէ նոցա, և սպառազուռ հարկանէ զնոսա: Տակիտարինաս դիմագրաւէ 'ի խռան մարտին 'ի մահ:

ԻԶ. Դոլաբելլա խնդրէ զշուք յաղթանակի, և ոչ լինի լսելի: Հրեշտակութիւն գարամանտացւոց: Պտոլոմէոս արքայ Մաւրեաց ընդունի 'ի ծերակուտէն զմեծարանաց անուն նիզակակցի և բարեկամի:

ԻԷ. Վտարանջութիւն սարկաց յԻտալիա, և անդէն և անդ նուաճումն:

ԻԸ. ԻԹ. Զվիբիոս Սերենոս ամբաստանէ որդի նորա. և ամենապարտեալ գնայ փախստեայ. այլ ածի անդրէն բռնի՝ յառաջ վարել զդատ նորա: Զարակամութիւն Տիբերի ընդդէմ ամբաստանելոյն:

Լ. Դատապարտեալ վարի նա յԱմրդոս կղզի: Տիբեր ընդդէմ սովորութեան իւրոյ յայտնի համարձակ 'ի կողմն չարախօսաց:

ԼԱ. Պ. Սուիլիոս աքսորի 'ի կղզի ուրեք, և Կատոն Փիրմիոս արտաքսի 'ի ծերակուտէն:

ԼԲ. Զի տարեգիրք պատմագրիս աննմանք են ընդ պատմութիւնս նախնի հասարակապետութեան:

ԼԳ. Խրատք, զորս մարթ է 'ի միտ առնուլ աստի 'ի կենցաղավարութիւն ընդ նորով տեսչութեամբ, ընդ որով կայ Հռովմ:

ԼԴ. Կրեմոտիոս Կորդոս պատմագիր՝ ամբաստանի վասն գովելոյ իւրոյ զԲրուտոս և զԿասիոս. պատասխանատարութիւն նորա արիական և անյողդողդ:

ԼԵ. Մեռանել նորա ինքնակամ սովալուկ: Մատենից նորա այրեցումն, և անդրէն 'ի վեր երևել:

ԼԶ. Տարաժամ ամբաստանութիւն պատուհասեալ աքսորանօք: Քաղաքն կիզիկեցւոց զրկի յազատութենէ, վասն ապահոս առնելոյ զպաշտօն Աւգոստեայ: Փոնտէոս Կապիտոն ամբաստանեալ 'ի Վիբիոսէ Սերենեայ, անպարտ արձակի:

ԼԷ. ԼԸ. Տիբեր չընդունի զմեհեանն նուիրեալ նմա 'ի սպանիացւոց. Ճառ նորա զայսմանէ:

ԼԹ. Սէանոս արբեցութեամբ բախտին համարձակի խնդրել 'ի Տիբերայ զաջ Լիւիայ:

Խ. Պատասխանի Տիբերի, և առարկութիւնք իւր ընդդէմ խնամութեանս այսմիկ:

ԽԱ. Սէանոս առ 'ի զօրացուցանել զիշխանութիւն իւր, համողէ զՏիբեր կեալ արտաքոյ Հռովմայ:

ԽԲ. Վասիլենոս Մոնոտանոս ամբաստանի վասն թշնամանալից բանից ընդդէմ ինքնակալին: Մի 'ի վկայից երկրորդէ զբանս յատենի ծերակուտին՝ լու 'ի լու ինքնակալին:

ԽԳ. Հրեշտակութիւն սպարտացւոց և մեսենիացւոց վասն մեհենին Արտեմայ: Տիբեր տայ կանգնել անդրէն զմեհեան Ատղլկան 'ի լեառն Երիքս:

ԽԴ. Մահ Կն. Լենտուլեայ, Լ. Դոմիտիոսի, և Լ. Անտոնիոսի:

ԽԵ. Պիսոն սպանանի 'ի շինականէ ումեմնէ սպանիացւոյ: Սպանողն ըմբռնեալ և ածեալ 'ի խոշտանգանս հարցափորձի, ջաղջախէ զգլուխ իւր հարեալ զքարի:

ԽԶ. Վտարանջութիւն լեռնաբնակաց Թրակիոյ, վասն չտալոյ զինուորս:

ԽԷ. Պոպպէոս Սաբինոս յարձակի 'ի նոսա 'ի վերայ բարձանց:

ԽԸ. Անդուստ և ապստամբք անկանին 'ի վերայ Թրակացի գնդաց, օժանդակաց բանակին հռովմայեցւոց, և առնեն 'ի նոսա կոտորած:

ԽԹ. Պոպպէոս ձայն տայ 'ի պատերազմ, այլ 'ի զուր. պաշարէ զնոսա 'ի պատնէշս իւրեանց, և 'ի նեղ արկանէ:

Ծ. Կէսք 'ի բարբարոսաց անձնատուր լինին, այլք ընդ իւրեանց սուսերս եւանեն. մնացեալքն պատրաստին 'ի գիշերախառն յարձակումն:

ԾԱ. Խառնուրդ ահագին. փախստեայք ապստամբաց հալածեալք, բռնագատին անձնատուր լինել: Եկք մարտին:

ԾԲ. Կլաւդիա ազգական Ագրիպպինայ ամբաստանի 'ի Դոմիտեայ Ափրեայ: Ագրիպպինա բրդի 'ի ցասումն առաջի Տիբերի:

ԾԳ. Ագրիպպինա խնդրէ 'ի Տիբերէ այր, և ոչ պատասխանուոյ լինի արժանի:

ԾԴ. Սէանոս ազդ առնէ նմա ստութեամբ, զի Տիբեր դեղամահ կամի առնել զնա: Հրաժարէ նա առնուլ զպտուղս մատուցեալս նմա յինքնակալէն. և ինքնակալն զայրանայ:

ԾԵ. Քաղաքք մեսսան վիճին ընդ իրեարս զփառաց՝ կանգնելոյ Տիբերի զմեհեանն սահմանեալ նմա և ծերակուտին:

ԾԶ. Զմիւռնա ընդունի զպատիւն հրովարտակաւ ծերակուտին:

ԾԷ. Տիբեր մեկնի 'ի Կամպանիա, 'ի մսի եգեալ կալ միշտ հեռի 'ի Հռովմայ: Պատճառք այսր խորհրդոյ նորա երկբայելիք:

ԾԸ. Ատեղագէտք հմայեն ոչ ևս դառնալ Տիբերի 'ի Հռովմ, և կէսք գուշակեն անոի զմերձենալ օրհասի նորա:

ԾԹ. Զերծանել նորա 'ի ձեռն Սէանոսի 'ի վտանգէ մնալոյ ընդ կործանմամբ քարայրի միոյ: Հնարք Սէանու 'ի կորուսանել զնեբրոն զանդրանիկն Գերմանիկեայ:

Կ. Ներոնի բանք իսկ գուշնաքեայք լրտեսեալ ամբաստանին, չարաթոյն յաւելուածովք: Սէանոս գրգռէ ընդդէմ նորա զփառասիրութիւն և զնախանձ Դրուսոսի եղբօր նորա:

ԿԱ. Մահ Ասինիոսի Ագրիպպայ, և Կ. Ատերիոսի:

ԿԲ. Կործանումն փայտակերտ թատերն կառուցելոյ 'ի Փիդենեայ:

ԿԳ. Ցիսուն հազար ոգիք գտանին ընդ նովաւ, ընդ մեռեալ և ընդ վիրաւոր:

ԿԴ. Հրդեհ 'ի Կելեան լերին և առատաձեռնութիւն Տիբերի յարկածան:

ԿԵ. Նախնի յորջորջումն լերինն Կաղնէտուն, և զի ընդէր կոչեցաւ յետոյ Կելեան։

ԿԶ. Կուրնելիոս Վարոս ամբաստանի 'ի Դոմիտեայ Ափրեայ և 'ի Դոլաբելլայ։

ԿԷ. Տիբեր մեկնի 'ի Կապրէա կղզի. նկարագրութիւն կղզւոյս։ Լըրտեսք հանապազօր մերձ կան Ագրիպպինայ և որդւոյ նորա, և լարեն նոցա որոգայթ։

ԿԸ. ԿԹ. Զորեքին՝ երբեմն կուսակալք՝ միաբանին 'ի կորուսանել զՏիտոս Սաբինոս բարեկամ Գերմանիկեայ, հաւատարիմ յետ մահուն իսկ նորա։ Յինքեանս յանկուցանելն նոցա զվստահութիւն Սաբինոսի՝ գրգռելով զնա 'ի տրտունջ, և ապա մատնել զնա։

Հ. Սաբինոս ամբաստանեալ առ Ծերակոյտն սադրանօք Տիբերի, դատապարտի և մատնի 'ի մահ յաւուր կաղանդացն յանուարի։

ՀԱ. Ասինիոս Գալլոս, քեռայր Ագրիպպինայ, առնէ առաջարկութիւն ինչ ընդդէմ նորա, առանց զնա անուանելոյ։ Տիբեր գժգոհի ընդ յայտնութիւն գաղտնի խորհրդոյ իւրոյ. հանդարտէ զնա Սէանոս։ Մահ Յուլեայ Թոռին Աւգոստեայ։

ՀԲ. Ապստամբութիւն փրիսացւոց վասն խստութեան սպայի ուրուք հռովմայեցւոյ։

ՀԳ. Ափրոնիոս նուաճէ զաղմուկն բազում կորստեամբ։

ՀԴ. Տիբեր և Սէանոս ելանեն 'ի կղզւոյ անտի՝ ուր կային, և երևին 'ի մուտս Կամպանիոյ։ Խռնի ամբոխ յամենայն կարգաց ընդառաջ նոցա 'ի ցոյց ամենապարտ ծառայութեան իւրեանց։

ՀԵ. Ագրիպպինա, դուստր Գերմանիկեայ, ամուսնանայ Կն. Դոմիտեայ՝ Թոռին քեռ Աւգոստոսի։

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից վեց ամաց՝ յորս կացին բդեաշխք.

Կ. Ասինիոս Պոլլիոն, և Կ. Անտիստիոս Վետոս.
Կուռնելիոս Կեթեգոս, և Վիսելլիոս Վարրոն.
Մ. Ասինիոս Ագրիպպա, և Կոսսոս Կուռնելիոս Լենտուլոս.
Կն. Կուռնելիոս Լենտուլոս Գետուլիկոս, և Կ. Կալուիսիոս Սաբինոս.
Մ. Լիկինիոս Կրասոս, և Լ. Կալբուրնիոս Պիսոն։
Ապպ. Յունիոս Սիլանոս, և Պ. Սիլիոս Ներուա։

Ա. Հ. 776.
Ա. Ք. 23.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵՍՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ Ե.

Ա. Ի հիւպատոսն Հռուփելլեայ և Փուփեայ, որոց նոյն մականուն էր Գեմինոս, մեռաւ Յուլիա Աւգոստա, անցեալ զաւուրքք. և էր նա ժառանգ ազնուականութեան Կլաւդեանց ազգատոհմին ազգականութեամբ, իսկ Լիւեանցն և Յուլեանց՝ որդեգրութեամբ։ Առաջին այր նորա՝ յորմէ եղեն նմա որդիք՝ էր Տիբերիոս Ներոն, այն որ 'ի պերուսեան պատերազմին փախուցեալ տարադէմ, ապա 'ի կռել ուխտին խաղաղութեան ընդ Սեքս. Պոմպէոս և ընդ Եռապետս՝ դարձ արարեալ էր 'ի Հռովմ։ Աւգոստեայ հարեալ'ի գեղ նորա, էառ զնա յառնէն իւր 'ի կնութիւն. յակամայս արդեօք կնոջն, ոչ է գիտելի. և այնու շտապաւ ետ ա ծել զնա առ իւր, զի և ոչ եթող նմա ժամանակ ծնանելոյ զորդին՝ զոր կրեր յարգանդի։ Եւ ոչ ևս յայնմէնտէ եղև նմա որդի, այլ յաւելաւ նա յազգատոհմ Աւգոստեայ՝ ամուսնութեամբն Ագրիպպինայ ընդ Գերմանիկեայ. զի որ 'ի նոցանէ սերեալ թոռունք Աւգոստեայ, նորա ևս էին թոռունք։ Եւ եկեաց նա անբաստ գիւտ ըստ նախնեացն քարուց, քարեվայելուչ 'ի զարդարանս քան զգովելին 'ի նախնի տիկնայս, մայր ան-

իշխանասէր, ամուսին հլու, և բարեյարմար Ճարտար քաղաքավարութեան առնն և կեղծեաց որդւոյն։ Յուղարկաւորութիւն նորա սակաւ սպասուք կատարեցաւ, և կտակ նորա անտես եղև ընդերկար։ Կայիոս կեսար Թոռնորդի նորա, որ ապա ինքնակալեաց, ապար նմա ներբող արձանական։

Բ. Տիբեր՝ որ վասն գրգանաց իւրոց չէր եկեալ 'ի յետին սպաս մօր իւրոյ, անբասիր արար զանձն նամանկանւով՝ որպէս թէ 'ի յանձանձանս ծանուանց իրաց աշխարհին էր զբաղեալ։ Նա և զսպասս մեծարանաց յիշատակի նորա՝ առատապէս սահմանեալս 'ի ծերակուտէն՝ ամիսիւեաց իբրև առ չափաւորութեան, սակաւս յայնցանէ հաստատեալ, պատճառանաք՝ զի մի պաշտօն դիցական ընծայեսցի նմա, ընդ որ չէին իսկ ասէր և նորա կամք։ Կշտամբէր և զ'ի թղթին զմտերմութիւն կանանւոյ, ակնարկելով'ի Փուփիոս բդեաշխ. զի սա մտերմութեամբ ընդ Աւգոստայ՝ մեծացեալ էր, Ճարտար 'ի յանկուցանել յինքն զկանայս, և լեզուանի՝ որ 'ի ծաղրածութիւն Տիբերի սովոր էր խառնել երգիծանս, որոց յիշատակ դժուարաջնջէ յուշոյ իշխանաց։

Գ. Յայնմհետէ խիստ և բռնաւորական եղև ինքնակալութիւն Տիբերի. զի կենդանեաւն Աւգոստայ՝ սանձահարէր, ըստ բազմամեայ սովորութեանն ակն ածելով'ի մօրէն. զի և ոչ Սէանոս իշխէր կամաց մօր նորա կալ հակառակ. այլ իբրև մեռաւ նա, երկոքին և գտան որպէս թէ սանձարձակ։ Յայնժամ մատուցաւ 'ի ծերակուտին 'ի դիմաց Տիբերի ընդդէմ Ագրիպպինայ և Ներոնի նամակ ամբաստանութեան՝ զոր համարէր ժողովուրդն մատուցեալ յառաջագոյն, բայց խափանեալ յԱւգոստայ. զի յետ սակաւ ինչ աւուրց մեռանելոյ նորա ածաւ յընթերցումն 'ի ծերակուտին։ Եւ էին 'ի նմա բանք դառնութեան չարանիւթք, այլ ոչ ապստամբութեան և դաւոյ. ամբաստանէր 'ի նմա Տիբեր զթոռն իւր'ի մանկատուփութիւն և 'ի ցոփութիւն. իսկ զնուոյ իւրոյ ոչ իշխեալ աղարտել զպարկեշտութիւն, գոռոզ և յամառ զնա յանդիմանէր։ Երկիւղ և լռութիւն տիրեաց յատենին. և ապա նուազունք ամանք՝ որոց չէր ինչ ակնկալութիւն 'ի պատկառ կա-

լոյ պարտուց, ուր ամենայն ոք ձգէր յօգուտ իւր զՀա-
սարակաց չարիս, խնդրեցին 'ի քնին զիրսն առնուլ
բդեշխից։ Կոստաս Մեսսալինոս յորդորագոյն քան
զայլս ետ վՃիռ խիստ. բայց այլք յաւագանւոյն,
մանաւանդ ատենակալք, երկնչէին. զի Թէպէտ և Տի-
բերի Թշնամաբար էր դատախազեալ, սակայն յերկ-
բայս զիրսն Թողեալ։

Դ. Եւ էր 'ի ծերակուտի անդ Յունիոս Հռուստիկ,
դպրապետ ատենին կացուցեալ յինքնակալէն, որով
և խորհրդոց նորա համարէր գիտակ. սորա փորձ ինչ
արիութեան չէր տուեալ յառաջագոյն. այլ յայնժամ
'ի Ճակատագրին ինն ազդմանէ, կամ ձախողակի Ճար-
տարմտութեամբ ապախտ առնելով զեկեալ հասեալ
չարիսն, և 'ի կասկածելեացն առաւել խիթալով, խառ-
նեցաւ 'ի խորհուրդ ատենին, և իրատ տայր բդեշ-
խից՝ մի 'ի քննութիւն իրացն ձեռնարկել. զի 'ի սուղ
ժամանակի մարթ է, ասէր, կերպարանափոխ լինել
ծանուցեալ իսկ իրաց, և 'ի շնորհս Գերմանիկեայ պարտ
է տալ ժամանակ ստրջանաց ծերունւոյն։ Յայնմ վայ-
րի առեալ ժողովրդեան զպատկեր Ագրիպպինայ և ըզ
Ներոնի, շուրջ գայր զատենիւ ծերակուտին. և բարիս
մաղթելով ինքնակալին՝ պաՃուՃեալ ասէր զնամակա-
նին, և ընդդէմ կամաց նորա պատրաստեալ կորուստ
տան նորա։ Վասն որոյ ոչ ինչ առօրին սահմանեցաւ
պատուհաս. և հրատարակէին վՃիռք յօդեալք յա-
նուն բդեշխից ընդդէմ Սէանու, բազմաց ներելով 'ի
ծածուկ՝ որով և յանդգնագոյնս՝ հանՃարոյ իւրեանց։
Ընդ որ ծանրացասումն լեալ Սէանու, զայրագին և
էառ չարախօսել՝ որպէս Թէ չինդրէր ծերակոյտն
զվրէժ կայսեր ընդդէմ ապստամբ ժողովրդեան, զի
ընԹեռնուին և Ճառէին և լսելի լինէին վՃիռք ծերա-
կուտին 'ի յեղափոխութիւն պետութեան. և զինչ
այլ մնայր, բայց սուր 'ի ձեռին կացուցանել 'ի պետս
և յինքնակալս զայնոսիկ՝ զորոց զպատկերս փոխանակ
դրօշուց բարձեալ բերէին։

Ե. Արդ կրկնեալ կէսարու զամբաստանութիւնս
ընդդէմ Թռուին իւրոյ և նուոյ, կշտամբէր հրովարտա-
կաւ զժողովուրդն, և բողոք ունէր զծերակուտէն՝ վասն
անարդելոյ նորա յայտնապէս զկայսերական փառսն՝

միոյ ևեթ ուրուք սադրանօք, և պատուէր տայր ածել անդրէն զիրսն յատեան։ Ոչ ևս երկմտեաց ծերակոյտն, ոչ 'ի տալ զյետին վճիռն՝ որ արգելեալն էր նմա յինքնակալէն, այլ 'ի յայտ առնել՝ զի պատրաստ էր 'ի վրէժխնդրութիւն....[1]

Զ. Քառասուն և չորք ճառք եղեն զիրացս, յորոց սակաւք թողեալ 'ի բաց առ ահի՝ հրատարակեցան այլք սովորական մարդահաճութեամբ։... Նախատինս ինձ վարկայ, և գրգիռ նախանձու ընդդէմ Սէանոսի... այլ արդ յեղաշրջեցաւ բախտն. և նա ինքն, որ զՍէանոս իշխանակից իւր և ազգակից ընտրեալն էր, խնայէ յանձն. իսկ այլք՝ որք ապիրատութեամբ սպաս մատուցեալ էին նմա, մարտ եղեռնաւոր 'ի վերայ նորա յարուցանեն։.. Ոչ կարեմ սահմանել որ առաւել ի՞նչ եղկելի. ամբաստանութիւն վասն բարեկամութեան կրել յայլմէ, թէ ամբաստանել զբարեկամ։...

Ոչ զիստութիւն յումեքէ խնդրեմ, և ոչ զներումն. այլ լինել ազատ, և գոհ ընդ իս՝ զառաջս ունել վտանգաց։ Աղաչեմ զձեզ՝ մի՛ տրտմութեամբ առնել զյիշատակ իմ, այլ ուրախութեամբ. և համարել զիս ընդ այնոսիկ, որք պատուով վախճանեալ՝ զերծան 'ի հասարակաց չարեաց։

Է. Յայնժամ թոյլ ետ որոց կամք էին՝ գնալ 'ի բաց, և որոց չէին կամք՝ կալ առ իւր 'ի խօսակցութիւն. և անցոյց ընդ նոսա զման ինչ աւուրն. այլ բազմաց յաճախելով դեռևս առ նա, զարմանային ընդ անայլայլակ դէմն նորա, ոչ իսկ գիտելով՝ զի մերձ 'ի վերայ կայր նմա մահ. զի անկաւ նա զսուսերաւն՝ զոր ծածկեալ ունէր 'ի ծոցի, և չոգաւ զիւրովին։ Բայց ոչ յեղեռն ինչ կամ 'ի նախատինս յետ մահու նորա ամբաստանեաց զնա Տիբերիոս, որ զԲլեսեայ բազում և թշնամանալից չարախօսութիւնս մատուցեալ էր։

Ը. Յետ այսորիկ ածաւ 'ի մէջ դատ Պ. Վիտելլիոսի և Պոմպոնիոսի Սեկունդեայ. զառաջնոյն ամբաստա-

1 Պ՚ոչ՚ասէ ասա՚ 'ի Բնագրին պարտուրեան անցեալ՝ ամաց էիր էրեց, յոր Տ. Բերի կացուցեալ ընդ իւր Բրեշլա զՍէանոս, և խոսպացեալ էր նմա՝ խառնել զնա յաղգ իւր խնամութեամբ։ Ե՚ 'ի յերպագ։ յօրուածի իմասագ 'ի կեսադրեալ տեղի։

նութիւն էր՝ որպէս թէ զբանալիս հասարակաց գանձուն որ նմա յանձն էին, և զգանձն զինուորական մատնեալ 'ի ձեռս դաւակցաց յեղափոխութեան. իսկ զՊոմպոնիոս ամբաստանէր Կոնսիդիոս Երբեմն կուսակալ՝ 'ի համախոհութիւն ընդ Ելիոսի Գալլոսի՝ որ յետ դատապարտութեանն Սէանու ապաստանեալ էր 'ի պարտէզս Պոմպոնեայ իբր 'ի յակաստանի։ Պատրաստարան վտանգելոցն եղև հաւատարմութիւն եղբարց նոցա, որ կացին երաշխաւոր։ Բազում անգամ՝ 'ի քննութիւն մատուցան ամբաստանութիւնքն, և Վիտելլիոս տագնապեալ ընդ յոյս և ընդ երկիւղ, պատճառանօք 'ի գրաւորական վաստակս պարապելոյ՝ խնդրեաց զմելին, և դոյզն ինչ վերս նովաւ 'ի զարկ բազկին գործեալ, վհատութեամբ ոգւոյ զրաւեցաւ 'ի կենաց։ Իսկ Պոմպոնիոս, այր հեզաբարոյ, և ականաւոր հանճարով, արիաբար հանդուրժեալ դժնդակ բախտին՝ եղև երկարակեաց քան զՏիբեր։

Թ. Սահմանեցաւ ապա պատուհասել և զայլ որդիս Սէանոսի, Թէպէտ և զիջեալ էր ժամանակաւ զայրոյթ ժողովրդեան, և բազումք՝ առաջնոցն պատուհասիւք հանդարտեալ էին։ Այծան ուստր նորա և դուստր 'ի բանտ, գիտելով ուստերն զահահասեալ 'ի վերայ իւրեանց չարիս. այլ դստրիկն անգէտ ամենևին հարցանէր ստէպ՝ թէ զինչ յանցանք էին իւր, և ո՞ւր ձգեալ ածէր. խոստանայր ոչ ևս յանցանել, յանձն առնոյր՝ զի ջնեսցի գաւազանաւ, խրատեալ որպէս տղայ։ Աւանդէն ժամանակակից մատենագիրք, զի անլուր էր ցայն վայր ածել զկուսիւ զեռապետական պատուհաս. վասն որոյ դահճին բռնաբարեալ զնա առ խեղդանաւ, և ապա խեղդամահ զնա ընդ եղբօրն արար. և երկոցունցն ևս մատաղ դիակունք 'ի Գեմոնեայս եղէն ընկեցիկ։

Ժ. Զայնու ժամանակաւ Ասիա և Աքայիա աղմկէր 'ի համբաւ իմն ահարկու, այլ կարճատև. զի ասէին զԴրուսոս որդի Գերմանիկեայ երևեալ նախ 'ի կիւկլադեան կղզիս, և ապա 'ի ցամաքի։ Արդարև պատանի ոմն երևեալ էր 'ի կողմանս յայնոսիկ համատի նմին, և ոմանք յազատագրաց կայսեր յարեալ էին նենգութեամբ 'ի նա՝ իբր 'ի ծանօթ իւրեանց։ Ի լուր ա-

նուանն Դրուսոսի հրապուրէին անտեղեակք, մանաւանդ Յոյնք բնաւորաբար 'ի նոր և յանսովոր իրս դիւրամէտք։ Այէին փախուցեալ զԴրուսոս 'ի բանտէ, և դիմեալ 'ի բանակն հայրենի՝ նուաճել զԵգիպտոս և զԱսորիս. և որք զստայօդ համբաւն ծաւալէին, նոքին իսկ էին՝ որ հաւատս ընծայէին համբաւոյն. և 'ի յաճախել ռամկին սպաս մատուցանել նմա հրապարակաւ՝ խրախուսէր պատանին յաջողութեամբն և յուսով մնոտեաւ։ Ազդ եղև Պոպպէոսի Սաբինեայ, որ Մակեդոնիոյ վերակացուն էր, և տեսուչ Ադրիայիոյ. և առ 'ի խափանել զչարիսն իրաւ կամ անիրաւ համբաւոյն՝ խաղաց փութանակի ընդ ծոց Տորոնեայ և Թերմեայ, առ կղզեաւն Եւբիոյ յեգեան ծով, և ընդ Պիրէոն յԱտտիկէ, և քերեալ առ ծովափամբն Կորնթոսի, անց ընդ իսթմեանն կիրճ, և ընդ միւս ծոցն եհաս 'ի Նիկոպոլիս՝ ուր գաղթական հռովմայեցի բնակէր։ Անդ ուրեմն հարցեալ հետազօտեալ ծանեաւ՝ զի սուտանունն այն Դրուսոս, որ ոք և էրն, խոստովանեալ էր զանձն Մ. Սիլլանեայ որդի. և 'ի թօթափել հետևողաց նորա բազմաց 'ի նմանէ, ելեալ 'ի նաւ՝ մեկնեալ էր 'ի բաց, դէմ եդեալ յԻտալիա. և գրեաց Սաբինոս զայս ամենայն առ Տիբեր։ Այլ ինչ զսկզբանէ և զելից իրացս չեղև մեզ գիտել։

ԺԱ. Տարաձայնութիւն բդեշխիցն զայրացեալ լռելեայն ընդերկար, 'ի վերջկոյս տարւոյս 'ի վեր երևեցաւ։ Տրիոն, այր սովորեալ 'ի վէճս, պատրաստ միշտ 'ի գրգիռ թշնամութեանց, և վարժ 'ի դատախազութիւն. ամբաստանէր մեղմով իմն զՀռեգուլ, որպէս թէ յուլացեալ 'ի նուաճել զարբանեակս Սէանոսի։ Հռեգուլ որ առանց գրգռելոյ յումեքէ՝ հեզահամբոյրն էր 'ի բնէ, ոչ միայն զդէմ կալաւ ոսոխին՝ այլ և ձգեաց զնա յատեան որպէս դաւակից Սէանու. 'ի զուր յոգունք յատենակալաց յորդորէին զնոսա 'ի բաց դնել զՀեռ՝ որոյ ելք էին 'ի կործանումն երկաքանչիւրոցն. նոքա կացին մնացին ոսոխք միմեանց սպառնալիցք մինչև 'ի վախճան բդեշխութեան իւրեանց։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Մահ Լիւիայ, այրեոյն Աւգոստոսի, մօր ինքնակալին Տիբերի։
Բ. Տիբերի չերթալ'ի յուղարկաւորութիւն նորա, և հակառակ կալառաւելագունից 'ի սպասուցն՝ որ սահմանէին յիշատակի նորա։
Գ. Յետ մահուանն Լիւիայ, Տիբերի կրկնապատիկ խստութիւն. նամականին նորա առ Ծերակոյտն ընդդէմ Ագրիպպինայ և Ներոնի։
Դ. Ժողովրդեան յայտնի կուսակցութիւն ընդ նոսա. և աստի Սէանոսի առնուլ պատճառս՝ այլոց ևս զրպարտութեանց։
Ե. Տիբեր գրէ անդրէն առ Ծերակոյտն, և հրամայէ պահել զամենայն 'ի դատաստան իւր։
Պահանջն ասքանչը քարէգրաց անդ էէր երից ամաց։
Զ. Է. Արիական բանք և ինքնակամ մահ միոյ յատենակալաց Ծերակուտին, ամբաստանելոյ բարեկամ Սէանոսի։
Ը. Դատ Պ. Վիտելլիոսի, և Պոմպոնիոսի Սեկունդեայ։
Թ. Պատուհաս երկոցունց կրտսեր որդւոց Սէանոսի։
Ժ. Թաբերայ ոմն երևեալ'ի յունաստան, ասէ զանձնէ լինել Դրուսոս որդի Գերմանիկեայ։
ԺԱ. Տարաձայնութիւն երկուց բդեշխից, և ամբաստանութիւն նոցա զմիմեանց։
Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից երից ամաց, հանդերձ կորուսելով մասամբն. յորս կային բդեաշխ
Կ. Հռուփելլիոս Գեմինոս, և Կ. Փուփիոս Գեմինոս.
Մ. Վինիկիոս Կուարինոս, և Կ. Կասիոս Լոնգինոս.
ԿԼ. Տիբեր կեսար Ե և Լ. Ելիոս Սէանոս.

Ա. Հ. 782.
Ա. Ք. 29.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ Զ.

Ա. Կն. Դոմիտիոս և Կամիլլոս Սկրիբոն կացին բդեաշխք։ Տիբերի յայնժամ անցեալ ընդ ծովն՝ որ անջըրպետէ ընդ Կապրէա և ընդ Սորենտոն, նաւեաց 'ի Կամպանիա. բայց վարանէր մտանել 'ի Հռովմ. և քանզի խոստացեալ էր գալ անդր, կարծիս տալով գալըստեան՝ ստէպ դեգերէր 'ի շրջակայս քաղաքին։ Եւ երթեալ 'ի պարտէզս իւր՝ որ 'ի գետեզերս Տիբերի, անտի դարձ արար անդրէն 'ի ժայռս և յամայի ծովափունս՝ թագուցանել զամօթ յոռութեանցն և գարշութեանց, որ այնպէս զայրացեալ էին 'ի նմա աննուաճելի՝ զի ըստ պղծութեան թագաւորաց ապականէր զաղատորդիս, ոչ միայն վասն գեղոյ դիմաց նոցա և կերպարանացն վայելչութեան, այլ և կիսոց համեստ մանկութեանն, և այլոց ազնուականութեան ազգատոհմին տուփանօք։ Եւ յայնժամ հնարեցան գարշանոցքն և լկանոցք չև ևս ցայնժամ յականջալուրս եկեալք, որ 'ի գարշանաց անտի և 'ի բազմապատիկ լկանաց առին զյորջորջումն։ Պատուիրակք ևս կարգեալ էին առ 'ի խնդրել և ձգել առ նա զյօժարակամն պարգևօք, և զդժկամակս սպառնալեօք. և յար-

գելու ծնողաց նոցա կամ աղգականաց, սաստիւ և յափշտակութեամբ բռնանային 'ի վերայ նոցա իշխանաբար՝ որպէս 'ի վերայ ստրկաց։

Բ. Բայց 'ի Հռովմ՝ի մուտս տարեոյս վճիռք դիժընդակք ընդդէմ պատկերացն Լիւիայ և յիշատակի նորա առաջարկեցան, որպէս թէ յանցանք նորա այն ինչ եկեալ էին 'ի յայտ, և ոչ վաղ իսկ դատապարտեալ. և դարձեալ բառնալ զինչս Սէանու 'ի գանձուց հասարակաց, և գրաւել յարքունիս՝ որպէս թէ յառաւելագոյն օգուտ։ Զառաջարկութիւնքս զայսոսիկ Սկիպիոնեանք և Սիլանեանք և Կասիոսեանք, նոքվին կամ սակաւ ինչ ընդհատ բանիւք, քաջ քաջ հաստատէին. բայց Տոգոնիոս, առ 'ի կցորդել զանշան անուն իւր ընդ մեծամեծ անուանս նոցա, առաջարկէր ընտրել ինքնակալին ատենակալս՝ յորոց քսան այր վիճակաւ կացցեն սուսերաւորք 'ի պահ կենաց նորա 'ի գնալն յատեան ծերակուտին. այլ ծաղր եկաց ամենեցուն։ Քանզի հաւատարիմ համարէր նա զգիր Տիբերի. որով խնդրէրն զմի 'ի բդեշխից անձնապահապետ՝ վասն անվտանգ 'ի Կապրեայ 'ի Հռովմ դառնալոյ, բայց Տիբեր, որ սովորն էր զխաղ ընդ ստուգութիւն իրաց խառնել, գրեաց շնորհակալիս խնամոց ծերակուտին, չգիտել ասելով՝ զոր թողուլ և զոր առնուլ, մշտնջենաւոր թէ առժամանակեայ, զանցեալս ընդ աւագութիւն թէ զպատանիս, զսոսկակա՞նս թէ զկացեալս 'ի գործ աշխարհին, և թէ որպիսի՞ ընծայէր թատր՝ սուսերաւորս առ սեամն ատենին տեսանել զատենակալս ծերակուտին, և զի դարձեալ ոչ պատուական թուէին նմա կեանք զինուք պահպանեալ։ Զայսոսիկ մեղմով ընդդէմ առաջարկութեանն Տոգոնեայ ածէր, ոչ առաւել ինչ քան զխափանումն նորին պահանջելով։

Գ. Իսկ զՅունիոս Գալլիոն սաստիւ կշտամբէր՝ վասն առաջարկելոյ նորա, զի ատենական զօրականին՝ որոյ կատարեալ էր զժամանակ զինուորութեանն՝ օրէն ի՞նչ բազմել ընդ ասպետս հռովմայեցիս 'ի զնին խաղուց, և որպէս թէ յերեսս իսկ նորին հարցանէր՝ թէ զի՞ կայր նորա ընդ զինուորս, որոց 'ի կայսերէ արժան էր ընդունել հրաման և մրցանակ. համարէր թերևս դիւց-

ազինն Աւգոստեայ ոչ խնամ ածեալ նոցա, կամ թէ արքանեկէր Սէանու արկանել՝ի նոսա հերձուած և գժտութիւն, և կերպարանօք պատուոյ գրգռել զորեարն տգէտ յեղծումն զինուորական հրահանգաց։ Այս եղև վարձ Գալլինի հնարագէտ մարդահաճութեանն, զի արտաքսեցաւ իսկոյն՝ի ծերակուտէն, և ապա աքսորեցաւ յԻտալիոյ. և զի դիւրին էր նմա կալ՝ի Լէսբոս կղզի ականաւոր և զուարճալի, զոր ընտրեալն էր նորա իւր տեղի աքսորանաց, ածաւ անդրէն՝ի դիպահոլ՝ի տան ուրուք յատենակալաց։ Ի նմին գրի կշտամբէր Տիբեր և զՍեքս. Պակոնիանոս երբեմն կուսակալ՝՝ի խնդութիւն յոյժ ծերակուտին, զայր յանդուգն և ապիրատ, որ զամենեցուն լրտեսէր զգաղտնիս, և էր ընտրեալ՝ի Սէանոսէ օգնական առ՝ի դաւ գործել կենաց Կայիոսի կեսարու։ Ի յայտնել իրացս այսոցիկ, յուզեցան անդրէն վաղ իսկ մթերեալ ոխք. և եթէ չէր նորա խոստացեալ՝՝ի վեր հանել զդաւն պատրաստեալ, պատուհաս մահու սահմանէր նմա։

Դ. Իսկ՝՝ի յարձակել նորա՝՝ի Լատինիոս Լատիար, թատր ախորժելի ամենեցուն ընծայէր. զի էին դատախազ և ամբաստանեալ ատելիք երկոքանչիւր հաւասարապէս. Լատիար գլուխ դաւակցաց, որպէս ասացի՝ ընդդէմ Տիտիոսի Սաբինայ, առաջին գտանէր անդ՝՝ի կրել զպատուհաս։ Յայնմ վայրի Աստերիոս Ագրիպպաս դատախազեաց ընդդէմ հերուին բդեշխից, որոց ամբաստանեալ զիրեարս և լռեալ էին, և ասէր. Երկիւղ արդեօք և խիղճ յանցանացն ած զնոսա՝՝ի հաշտութիւն. բայց ատենակալաց, որք իրագէտքն են, չէ արժան լռել։ — Եւ պատասխանի Հռեգուլ՝ զի գոյր ժամանակ վրէժխնդրութեան, և զի առաջի ինքնակալին խորհէր զիրսն վճարել։ Յաւել և Տրիոն, զի լաւագոյն էր մոռացումն առնել գժտութեանց անկելոց՝՝ի մէջ իշխանակցաց, եթէ երբէք լինէր նոցա չարախօսել զիրերաց։ Եւ՝՝ի կալ պնդել Աստերիոսի, Սանկուինիոս Մաքսիմոս՝ երբեմն բդեաշխ՝ աղաչէաց զատենակալս, մի՛ հոգս՝՝ի վերայ հոգոց յաւելուլ՝՝ի դառնութիւն ինքնակալին, շատ իսկ կարելով նոցա զելս իրացն հայթհայթել։ Այսու օրինակաւ եղև Հռեգուլեայ զերծանել՝՝ի վտանգէ, և Տրիոնի յամեցումն

կորստեան։ Աստերիոս առաւել ևս այնու եղև ատելի. զի կամ՝ի քուն թմբրութեան, և կամ՝ի պղծալից տքնութեան, աներկիւղ վասն ախտամոլութեանն յանգութ խստութենէն Տիբերի, կորուստ արանց երևելեաց՝ի բոզանոցս և յեղծագործութիւնս անդ պատրաստէր։

Ե. Մեսսալինոս Կոտտաս, դժնդակագունից առ հասարակ վՀռոց թելադիր, որով՝ի բազում ամաց հետէ ատելի լեալ էր ամենեցուն, ամբաստանեցաւ՝ ըստ յաջողելոյ դիպաց՝՝ի բազմապատիկ յանցաւորութիւն. զի զԿայիոս կեսար յորջորջեալ էր մանկամոլ, և յաւուր ծննդեան Աւգոստայ՝ի խրախճանս ընդ քուրսն՝ եղերական զՀաշն զայն կոչեցեալ էր, և այլ ուրեք տրտնջելով զՄանիոսէ Լեպիդեայ և զԼ. Արրունտեայ՝ ընդ որս վէՀք էին նորա զարծաթոյ՝ ասացեալ էր. Նոցա ծերակոյտն, իսկ ինձ Տիբերիկն իմ կացցէ պաշտպան։ Եւ սաստիկ վասն այսր ամենայնի յաւագանւոյն Հռովմայ կշտամբեալ և դատափետեալ, ՝ի կայսր բողոքեաց. և յետ ոչ բազում աւուրց եՀաս առ ծերակոյտն գիր՝ի Տիբերեայ, յորում՝ի ձև պաշտպանութեան յիշելով զպատՀառս բարեկամութեան իւրոյ ընդ Կոտտասայ և զբազում վաստակս նորա, խնդրէր՝ մի՛ չարոյ մասին զբանս նորա վարկանել, և մի՛ որ ինչ ընդ խաղ՝ի գինեբբուս սահեալ՝ի շրթանց՝ գրել նմա՝ի յանցանս։

Զ. Նշանաւոր թուեցաւ սկսուած այնր թղթոյ ինքնակալին, որ ունէր այսպէս. Զի՞նչ գրեցից ձեզ, Հարք ատենակալք, կամ՞ որպէս գրեցից, մանաւանդ՝ի ժամանակիս յայսմիկ. ծն և ծն, կորուսցէն զիս դիք և դիցուհիք, չար ևս տանջանօք քան զոր կրեմ՝ի նեբքս յիս Հանապազ, եԹէ գիտիցեմ զինչ գրել։ — Այսպէս ոՀիրք իւր և նշաւակութիւնք նմին ինքեան էին՝ի պատուհաս. և ոչ վայրապար սովոր էր ասել գերազանցեալն իմաստութեամբ (Սոկրատ), զի եԹէ բանային սիրտք բռնաւորաց՝ էր տեսանել զնոսա կեղեքեալս և կարեվէրս։ Զի որպէս մարմին՝ի գանից, այսպէս և Հոգի յանգԹութենէ՝ի Հեշտախտութենէ և՝ի չարախոՀութենէ պատառոտի. ոչ ծայր իշխանութեան, և ոչ ամայիք, օգնէին Տիբերի. ինքնին

զտուայտանս սրտի իւրոյ և զպատուհաս խոստովան լինէր։

Է. Յայնժամ Ծերակուտին, իշխանութիւն ընկալեալ տալոյ վՃիռ վասն Կեկիլիանոսի ատենակալի՝ որոյ բազում ինչ զԿոստասայ չարախօսեալ էր, հաՃոյ թուեցաւ զնոյն տալ նմա պատուհաս՝ որ ինչ տուեալն էր Արուսեայ և Սանկուինեայ դատախազին Լ. Արբունտեայ։ Փառաւորագոյն ինչ քան զայս չէր դիպեալ Կոստասայ, որ թէպէտ և աղնուազգի՝ բայց տնանկացեալ 'ի զեղխութենէ, և անուանարկ վասն ամօթապարտ ախտին, հաւասարէր ականաւորին աւաքինութեամբք Արբունտեայ՝ արժանի գտեալ հանգունատիպ վրէժխնդրութեան։ Յետ այսորիկ Կուինտոս Սերուէոս և Մինուկիոս Թերմոս ածան 'ի մէջ։ Սերուէոս կացեալ երբեմն կուսակալ և համահարզ Գերմանիկեայ, իսկ Մինուկիոս 'ի կարգէ ասպետաց, բարեկամ լեալ էին ընդ Սէանու՝ առանց զեղծանելոյ բարեկամութեամբն, վասն որոյ առաւելագոյն գթութեան համարէին արժանի։ Բայց Տիբերի դատեալ զնոսա որպէս գլխաւոր արբանեակս Սէանոսի 'ի չարիս, պատուէր ետ Կ. Կեստիոսի երիցու՝ յանդիման առնել Ծերակուտին որ ինչ առ նա գրեալն էր. և Կեստիոս յանձն էառ զչարախօսութիւնն։ Մեծապէս վնասակար չարիք այնց ժամանակաց էին՝ զանարգագոյն իսկ ամբաստանութիւնս 'ի գործ արկանել գլխաւորաց Ծերակուտին, կիսոց յայտնապէս, և բազմաց 'ի ծածուկ. ոչ ինչ էր խտիր ընդ օտար և ընդ ազգական, ընդ բարեկամ և ընդ անծանօթ, ընդ նորադէպ ինչ և ընդ վաղեմի։ Որ ինչ 'ի հրապարակի, որ ինչ 'ի խրախուն, զիմմէ իմեքէ խօսեցեալ, ելանէր յատեան. այր քան զընկեր փութայր կանխել ցուցանել զոք յանցաւոր, կէսք 'ի պաշտպանութիւն անձանց, և առաւելագոյնք օրինակաւ այլոց՝ որպէս 'ի ժանտ ախտէ ապականեալ։ Մինուկիոս և Սերուէոս դատապարտեալ, յանձն առին 'ի վեր հանել զդաւակցութիւնն. 'ի նոյն ստիպեցան և Յուլիոս Սիրիկանոս 'ի Սանտոնեայ քաղաքէ Գալլիոյ, և Սէոս Կուադրատոս, զորոյ չեղև ինձ գտանել զբնագաւառ։ Գիտեմ զի բազումք 'ի պատմագրաց լուեն զյոլովից այլոց

զվտանգ և զպատուհաս, պարտասեալ 'ի յաձախութեանէ այնոցիկ, կամ առ 'ի չտալոյ ընթեռնլեաց զծանրատաղտուկ և զտխուր ձանձրութիւնն կրեալ յինքեանց. այլ ինձ թուի՝ բազում ինչ արժանի գիտելոյ թողեալ նոցա անյիշատակ։

Ը. Ի ժամանակի՝ յորում այլք ուրանային զբարեկամութիւն Սէանու, Մ. Տերենտիոս սպասէտ հռովմայեցի ամբաստանեալ բարեկամ նորին՝ խոստովան եղև զայն, այսպէս յատենի անդ բարբառեալ. Սուտ է արդեօք օգնել ինձ 'ի յաջողութիւն՝ յուրաստ կալ քան զմեղանս յանձն առնուլ. այլ որ ինչ և ելք իրացն դիպիցին, խոստովանիմ բարեկամ լեալ Սէանու, ցանկացեալ բարեկամութեան նորա, և 'ի գտանելն զայն՝ ուրախ լեալ։ Տեսի զնա ընդ հօր իւրում հրամատար ատենական զօրականին, և ապա 'ի քաղաքական և 'ի պատերազմական իրաց յանձանձանս. ազգականք նորա և մերձաւորք ամբառնային 'ի բարձ և 'ի պատիւ, և որ Սէանու էր բարեկամ՝ շնորհս առ ինքնակալին գտանէր. իսկ որոց հակառակ էր նա, կային յերկիւղի և 'ի թշուառութեան։ Ոչ զոք ածից յօրինակ, իմովս վտանգաւ պաշտպանեցից ամենեցուն, որ անպարտս եմք 'ի դաւակցութենէ։ Ոչ վոլսենացւոյն Սէանու սպաս հարկանէաք մեք, այլ մասին կլաւդեան և յուլեան ազգատոհմից՝ յորս խառնեալ էր նա խնամութեամբ. քումդ փեսայի, կեսար, քումդ իշխանակցի 'ի բդեշխութեան. այնմ՝ որ 'ի քէն կացուցեալ էր 'ի յանձանձանս իրաց հասարակապետութեան։ Ոչ է մեզ դատել՝ զո՞ 'ի վերայ այլոց, և վասն է՞ր կացուցանիցես. քեզ զգերագոյն իշխանութիւն ետուն դիք, մեզ մնան փառք հնազանդելոյ. տեսանեմք մեք որ ինչ ակներև աչաց մերոց կան, ուստ 'ի քէն գանձ և պատիւ, ոյց ոմանց առաւելագոյն իշխանութիւն բարեբարելոյ կամ վնասելոյ շնորհեալ. և ոչ ոք ժխտել կարասցէ զՍէանու շնորհիս այսմիկ հանդիպել։ Զգաղտնի խորհուրդս իշխանի, և որ ինչ երկնէ նա 'ի մտի, չէ արժան հետազօտել. նա՝ երկբայելի է և վտանգաւոր, և ոչ իսկ յաջողէ. Հարք ատենականք, մի՛ զվերջին ևեթ աւուրս Սէանոսի առաջի աչաց ունիցիք, այլ զվեշտասան ամ՝ յորս մեծարէաք և զՍատրիոս և

զՊոմպոնիոս, և ձերբազատից իսկ և՝ բարապանաց նորա լինել Ծանօթս՝ պատիւ մեծ համարէր։ Զմինչ ապա, պաշտպանեսցէ՞ այս ամենեցուն անխտիր. քաւ լիցի. այլ խտիր արդար արարեալ՝ պատուհասեսցին դարանակալութիւնք հասարակապետութեան, և դաւակցութիւնք ընդդէմ ինքնակալին. այլ բարեկամութեան և մեծարանացն Սէանու էլք, և զքեզ, քաջ արանց, և զմեզ անպարտս արձակեսցեն։ —

Թ. Վստահութիւն բանիցն, և այն զի գտաւ ոք՝ որ յայտ առնէր որ ինչ յածէրն 'ի սիրտս ամենեցուն, այնպէս ազդոյ եղև, զի չարախօսք նորա ըստ չարեացն յառաջագոյն գործեցելոց՝ աքսորանօք կամ մահուամբ պատուհասեցան։ Ի մէջ մատուցաւ ապա գիր ինքնակալին ընդդէմ Սեքս. Վեստիլեայ կուսակալի, որ սիրելի եղբօր իւրում Դրուսեայ լեալ էր, զոր և ինքն 'ի Թիւս մտերմաց իւրոց էր ընկալեալ։ Պատճառք անկանելոյ Վեստիլեայ 'ի շնորհաց ինքնակալին՝ եղև այն, զի կամ ստուգապէս արարեալ էր նորա ընդդէմ Կայիոսի կեսարու գրուած ինչ՝ յորում ամբաստանէր զնա 'ի զազրագործութիւն, և կամ զրպարտութիւն այնպիսի զնմանէ հաւատարիմ լեալ էր։ Վասն որոյ արտաքսեցաւ Վեստիլիոս յարքունեաց անտի, և զառաջեալ դողդոջ ձեռամբ արկ զմելին 'ի զարկ բազկին. այլ անդէն կապեալ զերակն, գրեաց աղերս առ ինքնակալն. և յընդունելն 'ի նմանէ պատասխանի խիստ, արձակեաց զկապն։

Այսպէս այնորիկ խմբովին 'ի քրէական յանցանս ամբաստանեցան Անիոս Պոլլիոն՝ հանդերձ որդւովք իւրով Վինիկիանոսիւ, Աւպիոս Սիլանոս, Սկաւրոս Մամերկոս, և Սաբինոս Կալուիսիոս ազնուազգիք առ հասարակ, և ոմանք 'ի նոցանէ ընդ բարձր աւագութիւնս անցեալ։ Սասանեցան ատենակալք, զի ո՞ 'ի նոցանէ ազգականութեամբ կամ բարեկամութեամբ չէր կցորդ այնքանեաց երևելի արանց. բայց Կելսոս, միոյ 'ի գնդաց քաղաքական զօրականին հազարապետ, որ մի 'ի դատախազիցն էր յայնժամ, զերծոյց զԱպպիոս և զԿալուիսիոս։ Իսկ զդատ Պոլլիոնի և Վինիկիանեայ և Սկաւրոսի յամեցոյց ինքնակալն՝ անձամբ սահմանել զայն ընդ ատենակալս, տալով ցոյցս ինչ տխուրս ընդդէմ Սկաւրոսի։

Ժ. Եւ ոչ կանանչին զերծ գտաւ 'ի վտանգէ. և քանզի չէր մարթ ամբաստանել զնոսա 'ի դաւակցութիւն, զարտասուս նոցա ամբաստանեցին, և 'ի մահ մատնեցաւ Վիտիա պառաւեալ մայր Փուփիոսի Գեմինեայ, զի 'ի վերայ որդւոյ իւրոյ սպանելոյ լացեալ էր։ Այսոքիկ 'ի ծերակուտին անցք. ոչ ինչ ընդհատ և առ ինքնակալին. զի Վեսկուլարիոս Փլակիոս և Յուլիոս Մարինոս, վաղեմի բարեկամք նորա, ընդ նմա եղեալք 'ի Հռոդոս, և ընկերք անմեկինք 'ի Կապրէա, ածան 'ի մահ. զի Վեսկուլարիոս ձեռնտու լեալ էր դաւոյն ընդդէմ Լիբոնի, և Մարինոս արբանեկեալ Սէանու 'ի սպանումն Կուրտիոսի Ատտիկեայ. և ախորժանօք եղև լսել՝ տալ դատախազին զվրէժ օրինակի իւրեանց։ Ի նմին ժամանակի Լ. Պիսոն քրմապետ մեռաւ օրհասիւն իւրով, դէպք դուն ուրեք յայնքան պայծառութեան պատահեալ։ Ոչ մի ինչ վնիռ տուեալ էր նորա ծառայաբար. և 'ի ստիպել իսկ հարկին՝ ամոքէր զայն խոհեմութեամբ։ Հայր նորա էր համարակալ, ըստ ասացելումն 'ի վեր անդր. եկեաց զամս ութսուն, և արժանի եղև փառաց յաղթանակի 'ի Թրակիա. այլ առաւել փառք եղեն նմա քաղաքապետն կալ 'ի Հռովմ։ զի զիշխանութիւնն զայն տուեալ յայնժամ ցկեանս, և անսովորութեամբն դժուարընկալ հնազանդելոց, զարմանահրաշ օրինակաւ քաղցրացոյց՝ 'ի չափու կալեալ զայն։

ԺԱ. Յառաջագոյն յորժամ արքայք, և յետ նոցա ատենակալք՝ մեկնէին 'ի Հռովմայ, մի ոք ընտրեալ՝ առնէր զերաւունս, և զյեղակարծ դէպս յանձանձէր մինչև 'ի դարձ նոցա, զի մի յանիշխանութեան մնայցէ քաղաքն։ Աւանդեն՝ Հռոմուլեայ զՊենտեր Հռոմուլ, և ապա Տուլլոսի Ոստիլեայ զՆումա Մարկիոս, և Տարկուինեայ Գոռոզի զՍպուրիոս Լուկրետ տեղակալս կացուցեալ. և ապա 'ի բդեաշխս էանց իշխանութիւնն այն, և պահի ցարդ իրացն տիպ 'ի կացուցանել զոք յաւուրս պարապոյ տօնից լատինականաց՝ վարել զիշխանութիւն բդեշխիցն։ Բայց Աւգոստ 'ի քաղաքական պատերազմունս կացոյց զԿիլնիոս Մեկենաս 'ի կարգէ ասպետաց 'ի վերայ ամենայնի 'ի Հռովմ և Իտալիա. և ապա յինքնակալէն՝ վասն բազմութեան ժողովրդոց, և օրինացն

յամբ օգնականութեան, ընտրէր զմի ոք յայնցանէ՝ որոց կացեալ էր 'ի բդեշխութեան՝ սանձահարել զատրուկս և զյանդգնութիւն անխաղաղասէր քաղաքացւոց, որք 'ի զօրութենէ ևեթ երկնչին։ Առաջին յիշխանութեանն յայնմիկ եկաց Մեսալլա Կորուինոս, բայց սակաւ աւուրս վասն անբաւականութեանն վարելոյ զայն։ Յայնժամ Տաւրոս Ստատիլիոս, թէպէտ և ծերացեալ՝ սակայն կարի քաջ կալաւ զիշխանութիւնն. և ապա Պիսոն զամն քսան նոյնպէս գովութեամբ. վասն որոյ և յուղարկաւորութիւն նորա, վՃՌով ծերակուտին, եղև մեծահանդէս։

ԺԲ. Յետ այսորիկ Կուինտիլիանոս հազարապետ ժողովրդեան մատոյց 'ի քննութիւն ատենակալաց ծերակուտին զգիրս ուրուք 'ի Սիբիլլայից, զոր Կանինիոս Գալլոս մի 'ի հնգետասանապետաց խնդրէր ընդունելի առնել ընդ այլ գիրս նորին գուշակի՝ վՃռով ծերակուտին։ Իբրև ընկալան զայն Հարք ըստ առաւելագունից հաւանութեան, գրեաց առ նոսա ինքնակալն՝ յանդիմանեալ նախ մեղմով զհազարապետն պատանի վասն տգիտութեան նախնեացն սովորութեան։ Իսկ զԳալլոս խստիւ կշտամբէր, զի յարարողական գիտութիւնս ծերացեալ, առանց Հանաչելոյ գրերթողն՝ նախ քան զվՃիռ իշխանակցացն, և մինչև ընթերցեալ զայն արարողապետաց ըստ օրինի, մատուցեալ էր զգիրսն առաջի սակաւաւոր Հարց ծերակուտին։ Յուշ առնէր և ևս զօրինադրութիւն Աւգոստեայ՝ որ ընդդէմ յոլովից մտոտի պատգամաց, ընդ փառաւորեալ անուամբք հրատարակելոց, սահմանէր՝ ածել զայնս առօրին առ քաղաքապետն, և մի ումեք ունել զհաւատար նոցին առ իւր։ Այսպէս և 'ի նախնեաց մտոտի էր սահմանեալ յետ այրելոյ Կապիտոլին 'ի քաղաքական մարտից. զի խնդիր արարեալ յայնժամ 'ի Սամոս, յԻլիոն, յԵրիթրէա, և հետազօտեալ յԱիրիկէ և 'ի Սիկիլիա և 'ի գաղթականս Իտալիոյ զտաղ Սիբիլլայից, թէպէտ զմիոյ ուրուք և թէ զբազմաց էր գտանել, պատուէր տուեալ էր քրմաց ընտրել յայնցանէ զհարազատս, ըստ կարի մարդկային ջանից։ Վասն որոյ և ասա տուաւ մատեանն 'ի քննութիւն հնգետասանապետաց։

ԺԳ. Ա՛ռ նոսին բդեշխիւք վասն ծանրագնութեան

պարենից յարեաւ ազմուկ գրեթէ ապստամբութեան, և ընդ բազում աւուրս՝ բոլոր բազում եղև համարձակ 'ի տեսարանի, որպիսի չէր երբեք լեալ ընդդէմ ինքնակալին։ Ընդ որ զայրացեալ նորա, գրեաց յանդիմանութիւն բդեշխից և Հարց Ծերակուտին՝ վասն ոչ սանձահարելոյ նոցա սաստիւ զյանդգնութիւն ժողովրդեան, և յաւելոյր՝ 'ի քանի քանի գաւառաց, և որչափ աւելի քան յաւուրս Աւգոստեայ, տայր ինքն բերել ցորեան։ Ըստ այսմ սահմանեցաւ 'ի Ծերակուտին նախնին խստութիւն 'ի կշտամբանս ժողովրդեան. և ոչ յամենցին բդեաշիք հրովարտակաւ հրատարակել զայն։ Բայց լուութիւն ինքնակալին՝ ոչ որպէս ինքն կարծէր՝ համարեցաւ նմա առ սէր ժողովրդեան, այլ առ գոռոզութեան իւրում։

ԺԳ. Ի վերջկոյս տարւոյս Գեմինիոս և Կեքոս և Պոմպէոս՝ ապետք հռովմայեցիք՝ 'ի մահ մատնեցան, ամբաստանեալք 'ի դաւակցութիւն. Գեմինիոս շռայլութեամբն իւրով և մեղկութեամբ բարեկամացեալ էր ընդ Սէանու, այլ ոչ յեղեռն ինչ զառաջեալ։ Կեքոս հաղարապետ էր ժողովրդեան, և թուլացուցեալ 'ի բանտի զշղթայսն և ածեալ զգլխով, երեկ զծոծրակ իւր։ Եւ Հռուբրիոսի Փաբատոսի պահ 'ի վերայ եդաւ, իբր թէ 'ի Պարթևս ապաստանէր՝ յուսահատեալ զիրաց Հռովմայ. զի գտաւ նա 'ի կիրճս սիկիլեան ծովու, և ածեալ 'ի հարիւրապետէ ումեքէ յատեան, ոչ ինչ պատճառս հաւանելիս վասն տարագնացութեանն կաբաց ածել. սակայն զերծաւ անվնասանգ, ապաքոյ լեալ քան զթութեան հանդիպեալ։

ԺԵ. Ընդ բդեշխութեամբ Սերուիոսի Գալբայ և Լ. Սիլլայ, վարանեալ Տիբերի ընդերկար յընտրութիւն փեսայիչ՝ որոյ կամէին հարստացուցանել զթոռունս իւր, տեսանելով զի հասակ նոցա ոչ ևս նեղէր յամել, ընտրեաց զԼ. Կասիոս և զՄ. Վ.ինիկիոս։ Վ.ինիկիոս էր 'ի Կամպանիոյ, ծնեալ 'ի Գալէս. բայց հայր նորա և հաւ կայեալ էին բդեաշիս, և ինքն էր յասպետս կանտանել, հեզահամբոյր բարուք, քաջ ձարտարախօս. իսկ Կասիոս էր հռովմայեցի 'ի ռամիկ տանէ, այլ 'ի վաղնջական և 'ի գովելի ազգատոհմէ. և թէպէտ 'ի խիստ հրահանգս դաստիարակեալ 'ի հօրէ իւրմէ, սակ

կայն քաղցր բարուքն առաւել էր գովելի քան խստա-
կրօնութեամբ։ Սմա ինքնակալն ետ 'ի կնութիւն ըզ-
Դրուսիլլա, և Վ.ինիկիոսի զՅուլիա, զդստերս Գերմա-
նիկեայ. և գրեաց զայսմանէ գիր առ ծերակոյտն, գո-
վելով սուղ ինչ զպատանիսն, և ապա վասն բացակայու-
թեան իւրոյ պատճառս տարտամս և մնոտիս ածելով
անցանէր 'ի ծանուցս, 'ի նախատինսն՝ զորս վասն հա-
սարակապետութեան ասէր կրել, և խնդրէր զի Մակ-
րոն քաղաքապետ, և 'ի հազարապետաց և 'ի հարիւ-
րապետաց ոմանք եկեսցեն ընդ իւր 'ի մտանել իւ-
րում 'ի ծերակոյտն։ Բայց Թէպէտ և ծերակոյտն ետ
վճիռ արձակ և անպայման՝ ոչ թիւ և ոչ հանգամանս
թիկնապահաց նորա սահմանելով, այլ նա և ոչ ընդ
պարիսպս քաղաքին եմուտ, թողլ թէ 'ի ծերակոյտն.
և շուրջ յածեալ զքաղաքաւն, 'ի բաց մեկնեցաւ։

ԺԶ. Յայնմ վայրի ամբոխ մեծ դատախազից յարեաւ
ընդդէմ այնոցիկ՝ որք զարծաթ 'ի վաշխի տային ընդ-
դէմ օրինադրութեան իշխանապետին Կեսարու, որ
սահմանէր պայմանս տալոյ և առնլոյ փոխ յԻտալիա։
Այս օրինադրութիւն 'ի բազմաց հետէ 'ի մոռացօնս
անկեալ, մեծարէր շահ իւրաքանչիւրոց քան զբարին
հասարակաց. զի տոկոսիք յամենայն ժամանակի եղեն
աղիտաբերք Հռովմայ, և յաճախ պատճառք խռովու-
թեան և հերձուածոց. վասն որոյ արգելեալ էին և
առ նախնիս, չև ապականեալ բարուց։ Զի անդստին
'ի սկզբանէ սահմանեալ էր յերկոտասանից տախ-
տակաց՝ մի պահանջել տոկոսիս աւելի քան զերկոտա-
սան առ հարիւր, ուր յառաջն ըստ հաճոյս զոշաքա-
ղութեան ճոխից պահանջէին. ապա ըստ օրինադրու-
թեան հազարապետաց ամիոփեցան 'ի վեց առ հա-
րիւր. յետոյ ապա արգելաւ չտալ ամենևին արծաթ
'ի վաշխի. և եղեն վճիռք ժողովրդեան բազումք
ընդդէմ խարդախութեանց. այլ առ ժամն խափա-
նեալ, անդրէն դարձեալ նորանոր հնարիւք 'ի վեր
երևէին։ Բայց յայնժամ Գրակքոս դատաւոր, որում
հասանէր դատել զինդիրն, տեսեալ զբազմութիւն
ամբաստանելոց՝ հարկեցաւ ածել զայն յատեան ծե-
րակուտին։ Պակուցեալ ատենակալաց, զի ոչ ոք 'ի նա-
ցանէ էր անպարտ 'ի յանցանացն, խնդրեցին շնորհս

յինքնակալէն. և ընկալան զամ մի և կէս, առ'ի կա-
ղող լինելոյ իւրաքանչիւր ումեք յարդարել զառանին
իւր իրս ըստ օրինաց։

ԺԷ. Այսի զհետ եկն չքաւորութիւն արծաթոյ,
'ի խնդրել ամենեցուն արծաթ, 'ի տուժել բազմաց,
և 'ի գրաւել արծաթոյ յարքունիս կամ 'ի գանձ հա-
սարակաց՝ վաճառմամբ ստացուածոց նոցա։ Դարձեալ
զի սահմանեալ էս էր ծերակուտին՝ ամենայն ումեք
զերկուս երիր մասունս ընչից իւրոց զետեղել յանդաս-
տանս Իտալիոյ. սակայն պարտատերքն զգլուխ դրա-
մոց իւրեանց ամբողջ պահանջէին յատենի, և չէր ար-
ժան պարտապանաց հռովմայեցւոց կորուսանել զվարկ
իւրեանց։ Դիմեցին նախ յաղերս, և ապա լցին աղա-
ղակաւ վիճմանց զատեանն. և գին և վաճառ, որ 'ի
հնարս իրացն էր հայթայթեալ, շրջեցաւ 'ի տոյժ. զի
փոխատուքն պահէին զարծաթ իւրեանց 'ի ստացումն
անդոց. վասն որոյ անկան գինք վաճառաց յանարգու-
թիւն. և որչափ ոք առաւել էր պարտապան, այնչափ
գժուարագոյն գտանէր առգնողս. և տնանկանային
բազումք, և կորստեան ընչից զհետ գայր կորուստ պա-
տուոյ և անուան. մինչև եհաս ինքնակալն յօգնութիւն՝
տուեալ 'ի գանձ աշխարհին հարիւր բիւր սեստերտ,
տալ անտի զերեամ մի փոխ անվաշխ, առեալ յերաշ-
խի 'ի փոխառուաց երկիր՝ ըստ կրկին արժէից։ Այսու
օրինակաւ դարձաւ անդրէն վարկ և վստահութիւն,
և տակաւ գտան ևս ոմանք կարող 'ի փոխատուու-
թիւն. բայց ստացումն անդոց ոչ ըստ վճռոյ ծերակու-
տին լինէր, որպէս պատահէ յայսպիսի օրինադրու-
թիւնս խիստս 'ի սկզբան, որ ապա խափանին։

ԺԸ. Դարձան անդրէն արհաւիրքն առաջինք։ Կոն-
սիդիոս Պրոկուլ 'ի քրէական յանցանս ամբաստանե-
ցաւ. և մինչ դեռ անկասկած զօր ծննդեան իւրոյ տօ-
նախմբէր, ձգեցաւ յատեան, և դատապարտեալ սպա-
նաւ. և քոյր նորա Սանդիա արգելաւ 'ի հրոյ և 'ի
ջրոյ, դատախազութեամբ Կ. Պոմպոնիոսի։ Սա այր
անխաղաղասէր, այսու և այսպիսի հնարիւք գուն գոր-
ծէր գտանել շնորհս առաջի ինքնակալին, առ 'ի կե-
ցուցանել զեղբայր իւր զՊոմպոնիոս Սեկունդոս։ Դա-
տապարտեցաւ և Պոմպէա Մակրինա յաքսորս, վաղ իսկ

ինքնակալին կորուսեալ զայր նորա Աբգոլիկ, և զանէր նորա Լակոն, որք էին ականաւորք յԱքայիա։ Իսկ հայր նորա Երևելի յասպետս հռովմայեցիս, և եղբայր նորա Երբեմն ատենակալ, վասն դատապարտութեան՝ որ 'ի վերայ կայր նոցա՝ եղեն անձնասահ։ Ի յանցանս գրեցաւ նոցա, զի Կն. Մագնոս ընդ մեռելիմ բարեկամն իւր ունէր զԹէոփանէս միտիլենացի զհաւ նոցա, և զի յետ մահուն Թէոփանեայ՝ մարդահաճութիւն Յունաց դիւցական պաշտօն ընծայեաց նմա։

ԺԹ. Զհետ նոցա Սէքս. Մարիոս՝ մեծափարթամ 'ի սպանիացիս՝ ամբաստանեալ յաղագս ապղծութիւն ընդ դստերն, գահավիժեցաւ 'ի տարպեան ժայռէն. և առ 'ի յայտ առնել զի մեծութիւնք եղեն պատճառք կորստեան նորա, յինքն գրաւեաց Տիբեր զոսկեհանս նորա ածեալս 'ի վաճառ։ Եւ ապա մոլեալ 'ի նախճիրս արեան, զամենեսեան՝ որ կային 'ի բանտի ամբաստանեալք 'ի համախոհութիւն ընդ Սէանոսի՝ հրամայեաց սպանանել։ Անկեալ գնէին դիակունք արանց և կանանց, ծերոց և տղայոց, ազնուականաց և աննշանից, ուրեք ցիրևցան, այլուր շեղջակուտեալ, և չէր օրէն ազգականաց և բարեկամաց մօտել 'ի նոսա, ոչ արտասուել, և ոչ 'ի գնին կալ. զօրականք շուրջ 'ի պահ կացեալ, խոյզ և խնդիր առնէին կարեկցելոց ընդ նոսա, և զհետ նեխեալ դիականցն գնային՝ 'ի գետամոյն առնելն զնոսա 'ի Տիբեր. և ոչ 'ի ծուփս անդ, և ոչ 'ի վաբեալսն 'ի գետեզերս իշխէր որ հուպ լինել, կամ այրել զնոսա։ Ամենայն զոգ մարդկութեան խղճալ էր յերկիւղէ, և ըստ յաւելուլ բռնութեան՝ պակասէին գութք։

Ի. Զայնու ժամանակաւ Կայիոս կեսար, որ ընդ հաւոյ իւրում երթեալ էր 'ի Կապրէա, ած 'ի կնութիւն զԿլաւդիա դուստր Սէանոսի։ Ընդ կեղծեօք սիրոյ՝ խորհուրդ դժնդակ ծածկէր նա 'ի մտի, ոչ ընդ մօրն դատապարտութիւն և ոչ ընդ աքսոր եղբօրն Ձիկ հանեալ։ Հանապազ յարմարէր նա զանձն ըստ կրից ինքնակալին, ոչ ինչ ընդհատ և ըստ բանիցն. ուստի ապա հոչակաւոր եղև Պասիենոսի Ճարտարապետի բան. Ոչ այլ որ լաւագոյն քան զնա կացեալ ծառայ, և ոչ յառեղոյն որ քան զնա տէր։ Ոչ կամիմ

անյիշատակ առնել և զգուշակութիւն Տիբերի զՍերգեայ Գալբայէ՝ որ բդեաշխն էր յայնժամ. զի կոչեալ զնա առ ինքն, և բանիւք բազմօք հետազօտեալ ըզբերան նորա, ասաց ապա հելլէն խօսիւք. Եւ դու, Գալբա, առցես երբեմն զՀաշակ իշխանութեան։ Այսու բանիւ զանազան և զկարճատև իշխանութիւն նորա քաւդէական գիտութեամբն գուշակէր, յոր պաբապետն էր՝ ի Հռոդոս ընդ վարժիւք Թրասիլլեայ՝ զորոյ այսպէս փորձեալ էր զՀարտարութիւն։

ԻԱ. Յորժամ դէպ լինէր զծանուցեալ իրաց հարցանել զգէտս, ելանէր նա՝ ի վերնայարկ ապարանիցն, զմի զբ յազատագրեալ իւրոց առեալ ընդ իւր գիտակիս, զայր հուժկու և յաղթանդամ, անգէտ դպրութեան։ Զի զոյր ուրուք կամէրն զփորձ առնուլ զաստեղագիտութեան, տայր ազատագրին առաջնորդել նմա ընդ ափափայս սեպացեալս, զի՝ ի վերայ ժայռից կառուցեալ էն ապարանքն. և՝ ի դարձուցանելն զնա, եթէ բաջաղանաց կամ խաբէութեան զոյր զգիտէն կապկած, մղէր ընկենոյր զնա ազատագիրն՝ ի ծով անդր՝ ի ստորակայ, զի մի մատն լիցի զաղանեացն։ Ընդ այսմ օրինակի ընդ նոյն ժայռս ածաւ Թրասիլլոս. և զարմացեալ ինքնակալին՝ ի գուշակել նորա ստուգիւ զիշխանութիւն իւր և զառաջիկայ դէպս, Եհարց զնա թէ գիտէ՞ր և զժամ ծննդեան իւրոյ, և թէ քանի՞ ամք էին իւր, և քանի՞ օր։ Նորա զննելով զդիրս աստեղաց և զշրջան, կարկեալ եկաց զառաջինն. և ապա արհաւրօք, որ տակաւ՝ ի զննելն յաւելուին՝ ի նմա, յապուշ հարեալ՝ ուր ուրեմն ասէ. Կասկածելի և օրհասական՝ ի վերայ կայ ինձ վտանգ։ Յայնժամ Տիբերի գիրկս արկեալ նմա խնդակցութեամբ վասն գուշակութեանն, և փարատեալ՝ ի նմանէ զերկիւղ, ընկալաւ զբանս նորա որպէս պատգամս. և առ մտերիմ բարեկամ իւր ունէր զնա։

ԻԲ. Ի լուր այսոցիկ և այսպիսի դիպաց՝ երկբայեալ գայ ինձ, թէ արդեօք իրք մարդկայինք՝ ի հարկէ՞ իմեքէ անփոփոխելոյ և՝ ի ձակատագրէ՞ ուղղիցին, թէ՝ ի բախտէ յեղափոխեալ։ Խնամատարունիցն՝ ի նախնեաց, և հետևողաց նոցին, անմիաբան էն կարծիք. կէսք զակիզքն մեր և զփախանն, և բնաւ իսկ զմար-

դիկ անխնամն համարին 'ի դից. և աստի յաՃախս զտա-
ռապել լաւաց ձախողութեամբ, և չարաց կեալ 'ի յա-
ջողութեան։ Իսկ այլք 'ի հարկէ իմեքէ ասեն տնօրի-
նել ամենայնի. ոչ ըստ շրջանի աստեղաց, այլ սկիզբն
և կցորդութիւն 'ի բնական պատՃառաց առեալ. և
թէպէտ ազատս զմեզ յընտրութիւն կենցաղականացս
իրաց վարկանին, այլ անյեղլի՝ յետ միանգամ ընտրու-
թեան մերոյ՝ զկարգ ապագայից։ Բայց զյաջողութիւն
և զարկածս ոչ ըստ կարծեաց ռամկին ասեն դատել.
զի յոգունք յայնցանէ՝ որք թուին չարաբախտիկք՝
երջանիկք են 'ի ձախողակս անդ, և բազումք՝ որ բարե-
բախտիկք 'ի մեծութիւնս թուին՝ թշուառք են, եթէ
նոքա ծանրակիր բախտին համբերատարք իցեն, և սա-
քա յաջողութեամբքն զեղծանիցին։ Այլք ևս ոչ սա-
կաւք վիՃեալ պնդին՝ զի ամենեցուն անդստին 'ի ծնընդ-
դենէ սահմանեալ իցեն ապագայք, բայց զերիք իրիք
այլազգ քան զկանխասացութիւն պատահել՝ համա-
րին 'ի խաբեբայ մարդկան զանծանօթս գուշակելոյ,
որք վտարանդի առնեն զհաւաստիս գիտութեանն՝ առ
նախնիս և զարդիս յայտնի օրինակօք վկայելոյ։ Զի
նորին իսկ Թրասիլլեայ որդին գուշակեաց յառաջա-
գոյն զինքնակալութիւն Ներոնի, որպէս յիւրում տեղ
ւոջն պատմեսցուք, զի մի արդ հեռի յառաջարկու-
թենէս մերմէ լիցի մեզ անկանել։

ԻԳ. Առ նովին բդեշխիւք լուր եղև սովալլուկ մահ
Աբինեայ Գալլոսի. այլ ինքնակամ թէ բռնի՝ ոչ է գի-
տել։ Հարցաւ Տիբեր վասն յուղարկաւորութեան նորա,
և ոչ ամաչեաց տալ հրաման. բայց բողոքելով ընդ-
դէմ յափշտակելոյ բախտին զյանցաւորն, մինչև դա-
տապարտեալ յատենի. որպէս թէ զերեամ չէր մարթ
ատենակալաց դատել և պարտաւորել զծերունին՝ եր-
բեմն բդեաշխ, և զայնքանեաց բդեշխից հայր։ Մե-
ռաւ և Դրուսոս, զաւուրս ինն սոսկալի պարենիւ ըզ-
կեանսն երկարեալ՝ զյարդ մահՃացն ծաքելով։ Այսու-
դեն ոմանք՝ հրաման առեալ Մակրոնի հանել զպա-
տանին 'ի պահպանութենէ, (զի յարբունիս անդ կայր
'ի դիպահոլ,) և կացուցանել զնա զօրավար ժողովրդ-
եան, եթէ երբեք զէն առնոյր Աէանոս. այլ 'ի յա-
Ճախել համբաւոյ՝ զի ինքնակալն հաշտելոյ էր ընդ

նուոյ իւրում և ընդ թոռին, ընտրեաց նա զանգթութիւն՝ քան երևել զղջացեալ։

ԻԴ. Եւ յետ իսկ մահուն արար նմա թշնամանս, ամբաստանեալ զնա 'ի պղծութիւն, 'ի դաւաճանութիւն ընտանեացն, և 'ի թշնամութիւն հասարակապետութեան. և ետ յընթերցումն զօրագիր գործոց նորա և զբանից, քան զոր դժնդակագոյն ինչ չէր ուրեք երևեալ. քանզի կացուցանել ինքնակալին լըրտեսս 'ի վերայ նորա ընդ այնչափ ամս, առ 'ի դիտել զդէմս թոռինն և զհառաչանս և զանխուլ տրտնջանս, և ապա հանդուրժել 'ի լուր այնոցիկ, ընթեռնուլ զայնոսիկ և հրատարակել, չհաւատալի թուէին՝ եթէ չէին նշանակեալ 'ի նամականուոջն Ակտեայ հարիւրապետի և Դիդիմեայ ազատագրի անուանք իսկ ստրկաց՝ որք յելանել Դրուսեայ 'ի սենեկէ՝ յետս ընկրկէին զնա ահարկութեամբ։ Յաւելոյր հարիւրապետն և զանհնարին անգթութեան բանս իւր պարծանօք, և զյետին խօսս պատանւոյն մերձ 'ի մահ, որովք նախ զյիմարութիւն պատճառեալ անիծանէր զՏիբեր, և ապա յուսահատեալ 'ի սպառ 'ի կենաց՝ բովանդակութեամբ իսկ մտաց անէծս ցաւագինս արձակէր 'ի նա, մաղթելով նմա չարիս՝ զի որպէս զնու իւր և զեղբօրորդի և զթոռունսն սպանեալ էր և զամենայն իսկ զտուն իւր լցեալ արեամբ, նոյնպէս հատուսցէ վրէժ անուան և ազգի նախնեաց իւրոց և ապագայից։ Հծծէր ծերակոյսն որպէս գարշեցեալ 'ի բանից անտի Դրուսոսի. այլ ապշութիւն և երկիւղ կալան զմիտս նորա 'ի գիտելն, զի այն՝ որ երբեմն խորամանկութեամբ ծածկէր զեղերունս իւր, յայն ժպրհութիւն հասեալ էր յայնժամ՝ զի փլուզանել իմն զորմն ապարանիցն կամէր, առ 'ի ցուցանել զթոռն իւր ընդ հարուածովք հարիւրապետին և ընդ գանիւք ծառայիցն՝ 'ի զուր զյետին ոգէպահիկն խնդրելով։

ԻԵ. Զև աղետիցս այսոցիկ լեալ վախճան, լուր եղև մահ Ագրիպպինայ. որ 'ի սպանանելն Սէանոսի յոյս առեալ՝ որպէս թուի, յերկարէր 'ի կեանս. այլ իբրև ետես զի ոչ դադարէր Տիբեր յանգթութենէն՝ անձին արար։ Մարթ իսկ է՝ զի և սովամահ զնա արարեալ էր ցեն, առ 'ի կարծեցուցանել զնա լեալ անձնամահ։ Տի

բեր թշնամանալից նախատանօք ելից զյիշատակ նորա, ամբաստանեալ զնա 'ի շնութիւն ընդ Սիմեայ Գալիլոսի. վասն որոյ 'ի մեռանել հոմանուոյն՝ տաղտկացեալ ասէր զնա 'ի կենաց. ուր Ագրիպպինայ չհանդուրժեալ ունել զոք իւր հաւասար, և իշխանութեան զհետ մըտեալ, առնացի կրիւք զկանացի ցանկութիւնն նուաճեալ էր։ Յաւելոյր կեսար՝ զի 'ի նմին աւուր մեռեալ էր Ագրիպպինա, յորում զերկեամ մի յառաջ Սէանոս պատուհասեալ. և արժանի առյապայ յիշատակի զդէպս զայս համարէր։ Պարծէր ևս՝ զի չէր խեղդամահ զնա արարեալ, և ոչ 'ի կախաղան տուեալ զնա հանել։ Շնորհակալիք վասն այսորիկ մատուցան ինքնակալին, և սահմանեցաւ ձօնել նուէր Ադամաղդայ ամի ամի՝ յաւուր մահուան երկաքանչիւրոցն՝ 'ի հնգետասանեորդի աւուր կաղանդացն նոյեմբերի։

ԻԶ. Եւ ոչ յետ բազմաց ինչ աւուրց Կոկկէոս Ներուաս, որ կայրն միշտ ընդ ինքնակալին, այր քաջահմուտ օրինաց դիւցականաց և մարդկայնոց, եդ 'ի մտի 'ի քաջողջութեան՝ լինել անձնամահ։ Իբրև գիտաց զայն Տիբեր, կայր զվասնէրն հետաքննէր, աղերսէր զնա, ցուցանէր քանի՛ ծանր տագնապ խղճի, և քանի՛ վնաս համբաւոյ իւրում ածէր, եթէ առընթեր բարեկամաց իւրոց՝ առանց յիմեքէ բռնադատելոյ՝ զրաւէր ինքնին զկեանս իւր։ Այլ նորա ապախտ արարեալ ըզբանս ինքնակալին, յաւել յանսուաղութիւն։ Տեղեակք խորհրդոց նորա համբաւէին, զի տեսանելով նորա ըզչարիս՝ որ 'ի վերայ կային հասարակապետութեան, առ վշտին և առ երկիւղի՝ լաւ համարէր զմահ, քան 'ի վտանգ արկեալ զկեանս և զպատիւ։ Բայց մահուն Ագրիպպինայ, որ դեռ ևս չհաւատալի թուէր, զհետ եկն մահ Պլանկինայ. սա ամուսնացեալ յառաջագոյն ընդ Կն. Պիսոնի, և զինդութիւն իւր յայտնի արարեալ ընդ մահ Գերմանիկեայ, 'ի կործանել Պիսոնի՝ պաշտպանեցաւ յաղաչանաց Աւգոստայ, ոչ ինչ նուազ և 'ի թշնամութենէն Ագրիպպինայ. այլ 'ի դադարել ատելութեան և շնորհի, զօրացան իրաւունք, և ամբաստանեալ 'ի յայտնի անօրէնութիւնս իւր, տարաժամ քան տարապարտ մահուամբ չոգաւ զիւրովին։

ԻԷ. Յայսքան ծանրաթախիծ տրտմութիւնս քա-

զաքին՝ յաւելաւ և այն, զի Յուլիա դուստր Դրուսոսի որդւոյ Տիբերի, երբեմն կին Ներոնի, նուաստ ամուսնութեամբ յարեցաւ 'ի տուն Հռուբելլեայ Բլանդոսի, զորոյ բազումք յիշեին զհաւն, զասպետ լոկ հռովմայեցի 'ի Տիբուր։ Ի վերջկոյս ամին՝ մահ Ելիոսի Լամիասայ պատուեցաւ մեծահանդէս յուղարկաւորութեամբ։ Ելիոս'ի սին անուանէ կուսակալութեան Ասորւոց, յետոյ ուրեմն քաղաքապետ կացեալ էր 'ի Հռովմ։ և էր նա 'ի նշանաւոր տոհմէ։ Ծերունի աշխոյժ. և խափանել նորա գնալոյ 'ի գաւառ կուսակալութեան իւրոյ՝ մեծարոյ ևս կացուցեալ էր զնա։ Աւծաւ ապա յընթերցումն, 'ի մեռանել Փլակկոսի Պոմպոնիոսի փոխանակի կուսակալին Ասորւոց, նամականի ինքնակալին. որով տրտունջ ունէր, զի որ կարողքն էին 'ի զօրավարել արք քաջք, հրաժարէին 'ի պաշտամանէ անտի, և ստիպէր աղերսել զոմանս'ի կացելոցն երբեմն կուսակալ՝ յանձն առնուլ զյանձանձանս իրաց հասարակապետութեան։ Սակայն չյիշէր՝ զի 'ի տասն ամաց հետէ խափանեալ էր զԱրրոնտիոս 'ի գնալոյ յերկիր կուսակալութեան իւրոյ 'ի Սպանիա։ Ի նմին ամի մեռաւ Մանիոս Լեպիդոս, զորոյ զհամեստութիւն և ըզխոհեմութիւն յառաջին գիրս իմ պատմեալ է, և ոչ պարտ համարիմ զպայծառութենէ նորա ձառել, Եմիլեան ազգատոհմին գոլով բերրի քաջ որերոյ, և վասն եղծաբարոյից իսկ յայնմ ազգատոհմէ կալոյ երևելի։

ԻԸ. Առ բդեշխութեամբ Պաւլոսի Փաբիոսի և Լ. Վիտելլիոսի յետ դարուց բազմաց երևեցաւ յԵգիպտոս հաւն փիւնիկ. յորմէ պատճառս առին քաջահմուտք եգիպտացւոց և Յունաց՝ բազումն ձառելոյ յաղագս այսր նորահրաշ երևման։ Արժան համարիմ աւանդել ասա որ ինչ 'ի նոսա համաձայնս գտանեմ իրերաց, և որ ինչ երկբայելիս բազումն՝ այլ ոչ անարժանս 'ի գիտութիւն։ Որք միանգամ զկերպարանս հաւուս այսորիկ՝ սրբազանելոյ արեգական՝ նկարագրեն, ամենեքին ասեն զսա աննման այլոց հաւուց գլխո

զամ՛առ Ամասեաւ, և ապա առ Պտղոմեաւ՝ որ երրորդ թագաւոր եկաց մակեդոնացւոց, երևեալ զՀաւս զայս յԱրեգ քաղաքի, շուրջ պար առեալ յայլոց թռչնոց՝ զորս կերպարան նորա անսովոր զՀետ ձգէր։ Ապաքէն մթին է հնութիւն. ընդ Պտղոմէ և ընդ Տիբեր են՝ի միջի ամք նուազ քան զերկերիւր և յիսուն. վասն որոյ ոմանք կեղծեալ համարեցան զփիւնիկս զայս, և ոչ յԱրաբիոյ վերաթևեալ. և ոչ վաղնջականաց աւանդից ինչ հետս՝ի սմա երևեալ։ Ի ընուլ թուոյ ամաց իւրոց, և՝ի մերձենալ մահուն, ասեն կազմել սմա բոյն յերկիր ծննդեան իւրոյ, և տալ այնմ զօրութիւն ծննդական՝ ձագ՝ի լոյս ածելոյ։ Եւ՝ի զարգանալ ձագուն՝ առաջին հոգ ընծայեն նմա՝ի յուղարկաւորութիւն ծնողին, ոչ վարկպարագի՝ այլ տրցակ զըմբունեն-ւոյ բարձեալ բերելով առ այն. և ընդ երկայն ուղի փորձ փորձեալ ուժոյ իւրոյ, յորժամ բաւական գտանի բեռամբն հանդերձ՝ի թռիչս, ասեն առնուլ նմա յայնժամ՝ի թիկնամէջս իւր զդիակն հայրենի, և՝ի բաց ինն արեգական ածեալ՝ այրել զայն։ Այս ամենայն անստոյգ և առասպելախառն. այլ հաւաստի այն է, զի երևի երբեմն հաւս այս յԵգիպտոս։

ԻԹ. Բայց՝ի Հռովմ՝ոչ դադարէին մահունք։ Պոմպոնիոս Լաբէոն, զոր՝ի Միսիա կուսակալ ասացի կացեալ, հատեալ զերակ իւր վՃարեցաւ՝ի կենաց. նմա հետևօղ եղև և կին նորա Պաքսէա։ Զի երկիւղ դահճին յաճախէր զայսպիսի մահունս, և զի դարձեալ դատապարտելոցն ինչք հրապարակաւ ածեալ՝ի վաճառ, հատանէին՝ի գանձ արքունի, և ինքեանք զրկէին՝ի թաղմանէ. իսկ անձնասպանիցն թաղէին մարմինք, և կտակ նոցա կատարէր՝ փրկանաւ վաղագոյն մահուն։ Բայց ինքնակալն գրեաց առ ծերակոյտն՝ զի սովորութիւն էր առ նախնիս՝՝ի հատանել զզոդ բարեկամութեան ընդ ումեք, արտաքսել զնա՝՝ի տանէ և ընկենուլ՝՝ի շնորհաց, որպէս և իւր իսկ արարեալ էր ընդ Լաբէոն. այլ նորա չարաչար վարեալ զկուսակալութիւն, և յայլոց ևս եղեռնագործութեանցն ստիպեալ, կամեցեալ էր ծածկել զյանցանս իւր թշնամութեամբ. բայց կնոջ նորա տարապարտ էր երկիւղ, զի թէպէտ և էր անպարտ՝՝ի յանցանաց՝ սակայն չգոյր նմա վտանգ

կենաց։ Յետ այսորիկ ամբաստանեցաւ Մամերկոս Սկաւրոս, այր երևելի ազնուականութեամբ և ատենակա՛ն Ճարտարխօսութեամբ, այլ վարուք ապիրատ. զսա պարտաւոր կացոյց, ոչ Սէանոսի բարեկամութիւն՝ այլ ատելութիւն Մակրոնի, ոչ ինչ նուազ մահառիթ։ Մակրոն զնոյն չարանենգ հնարս նախորդին իւրոյ 'ի կիր ածէր, առաւելագոյն խորամանկութեամբ. ամ՚ բաստանեալ էր նորա զմի յողբերգութեանցն Սկաւրոսի, զիմաստ տողից ինչ այնորիկ ընդդէմ ինքնակալին կամակորեալ. իսկ Սերուիլիոս և Կուռնելիոս, դա՚ տախազք նորա, չարախօսէին զնմանէ՝ շնացեալ ընդ Լիւիայ, և դիւթութիւնս մոգականս 'ի կիր առեալ։ Սկաւրոս ըստ արժանի նախնեացն իւրոց Եմիլեանց կանխեալ քան զդատապարտութիւն իւր, չոքաւ զիւ՚ րովին խորհրդով կնոջ իւրոյ Սեքստիայ, որ յորդորիչն եղև նմա և մահակից։

Լ. Բայց և դատախազք 'ի դէպ ժամանակի պատու՚ հասէին։ Սերուիլիոս և Կուռնելիոս կորստեամբն Սկաւրոսի չարահամբաւեալք, զի կաշառս 'ի Վարիոսէ Լիգուրեայ ընկալեալ էր նոցա առ 'ի լռել յամբաստա՚ նութենէն, աքսորեցան 'ի կղզիս՝ արգելեալք 'ի հրոյ և 'ի ջրոյ։ Աբուդիոս Հռուսոս, երբեմն շինուածապետ, ամբաստանեաց զԼենտուլ Գետուլիկ՝ ընդ որով հրամա՚ տար 'ի ձեռանէ կացեալ էր 'ի միում 'ի լեգէոնաց, 'ի յանցանս նմա համարեալ՝ զի զդուստր իւր տուեալ էր կնութեան որդւոյ Սէանոսի, ինքն դատապարտեցաւ աքսորեալ 'ի Հռովմայ։ Բանզի Գետուլիկ 'ի ժամանա՚ կին յայնմիկ զօրավար կացեալ լեգէոնաց 'ի վերնակողմն Գերմանիոյ, սիրելի յոյժ լեալ էր ամենեցուն, դիւրա՚ մէտ 'ի գթութիւն, ամոք 'ի խստութեան, և մերձա՚ ւորաց ևս լեգէոնաց՝ որ ընդ ձեռամբ Լ. Ապրոնիոսի անեղոյ իւրոյ էին՝ չէր լեալ անհաճոյ։ Վասն որոյ համ՚ բաւէր իբր հաւաստի իշխեալ նորա գրել առ Տիբեր, զի ոչ ինքնակամ փեսայացուցեալ էր իւր զորդի Սէա՚ նոսի, այլ հրամանաւ նորին իսկ ինքնակալին. զի չէր արժան՝ զնոյն պատրանս չհամարել կայսեր 'ի յանցանս, որ լինէր իւր 'ի կորուստ. զի 'ի հաւատարմութեան կա՚ ցեալ էր ինքն ցոյն վայր, և կայր՝ եթէ ոչ ոքնիւթէր իւր դարան. զի ոչ այլազգ քան զդատակնիք մահու ընդ՚ ու՚

նէր զոք 'ի յաջորդ, և զի մարթ էր նմա դաշն իմն կռել ընդ կայսեր, եթէ բովանդակ ինքնակալութեանն տէր գոլով և իշխեցող՝ թողցը նմա զգաւառ ևեթ կուսակալութեան իւրոյ։ Չհաւատալի էին իրքս, այլ այնու թուեցան հաւատարիմ՝ զի յամենայն մերձաւորաց Սէանոսի սա միայն գտաւ անվտանգ, և անմերժելի 'ի շնորհաց ինքնակալին. քանզի խորհէր Տիբերը, զի ատելի լեալ ամենեցուն, յալիս ծերութեան համբաւով քան զօրութեամբ կարէր հաստատուն ունել զինքնակալութիւն։

ԼԱ. Առ բդեշխութեամբ Կ. Կեստիոսի, և Մ. Սերուիլեայ, աղնուականք ոմանք Պարթևք եկին 'ի Հռովմ, գաղտ յարքայէն իւրեանց յԱրտաւանէ։ Սա յերկիւղէ Գերմանիկեայ հաւատարիմ կացեալ էր առ Հռովմայեցիս, և պա իւրան արդար. այլ ապա յանդգնութեամբ ընդ մեզ, և անգթութեամբ ընդ իւրան սկսաւ վարել. և խրոխտացեալ յաղթութեամբքն ընդդէմ սահմանակից ազգաց, և արհամարհեալ զՏիբերը վասն ապիկար ծերութեանն, կամէր տիրել 'ի Հայաստան, ուր 'ի մեռանել Արտաշիասայ արքայի՝ զերիցագոյնն յորդւոց իւրոց զԱրշակ կացուցեալ էր իշխան, և յղեալ յԱսորիս և 'ի Կիլիկիա հրեշտակս՝ պահանջել զգանձս թողեալս անդ 'ի Վոնոնէ, և զհին սահմանս Պարսից և մակեդոնացւոց, խրոխտագոյնս սպառնալով նուաճել զամենայն աշխարհն՝ ուր Կիւրոս և ապա Ալեքսանդր տիրեալ էին։ Բայց Պարթևաց յղելոց գաղտ հրեշտակս 'ի Հռովմ՝ եղև խրատտու Շենենակ, այր մեծազօր մեծազգի և մեծափարթամ։ և երկրորդ նմին Աբգոն նեղբինի, զի ոչ անարգ և արհամարհ էն առ Պարթևս նեղբինիք, և դիւրաւ հասանէն իշխանութեան։ Սոքա երկոքին, միաբանեալ ընդ իւրեանս և զոյլս յաւագաց, առ 'ի չգոյէ ուրուք յազգէն արշակունեաց 'ի ժառանգ, քանզի Արտաւանայ զբազում 'ի նոցանէ սպանեալ էր, և այլք չև ևս էին զարգացեալ, խնդրէին 'ի Հռովմայ զՓրաատ որդի արքային Փրաատայ, շատ համարեալ 'ի նուաճումն աշխարհին՝ զերևեալ ևեթ արշակունեան զաւակին յաւին Եփրատայ՝ հրամանաւ և յանուն կայսեր։

ԼԲ. Ան իսկ էին և իղձք Տիբերի. և Հոխատոյց նա

զՓրաատ, և զօրացոյց զձեռն նորա'ի ստացուած Հայ-
րենի իշխանութեանն. զի հաստատուն կայր 'ի խոր-
հուրդս իւր՝ հնարիւք և խորագիտութեամբ յանձան-
ձել զարտաքինս, առանց զինուց։ Արտաւանայ իրա-
զեկ լեալ, էր զի ընկրկէր երկիւղիւ, և էր զի ցանկու-
թեամբ վրէժխնդրութեան բորբոքէր. զի բարբարոսք
ծառայութիւն համարէին դանդաղել, և վայելուչ՝
փութալ իշխանի 'ի գործ. այլ յաղթեաց աստանօր
շահախնդրութիւն։ Հրաւիրեաց նա զԱրդոն 'ի Ճաշ,
և յամրազդեցիկ մահադեղով թակարդեաց զնա։ Իսկ
զՇեննակ որսացաւ 'ի պատրանս պարգևաք և աւագու-
թեամբք։ Բայց Փրաատ սովորեալ'ի բազում ամաց 'ի
հռովմէական բարս, և 'ի գնալն յԱսորիս դարձեալ
անդրէն 'ի պարթևական սովորութիւնս, ոչ կարաց
տոկալ հայրենի բարուցն, և ախտակրեալ զրաւեցաւ
'ի կենաց։ Սակայն Տիրեր չեղև ձեռնթափ 'ի սկսեալ
գործոյն. զՏարադատ ազգական Արտաւանայ յարոյց
նմա ոսոխ, և զՄիհրդատ զիշխանն Վրաց կոչեաց առ 'ի
նուաճել զՀայաստան, հաշտեցուցեալ զնա ընդ եղբօր
իւրում Փարսմանայ՝ որ թագաւորէրն 'ի Վիրս. յաւել
և զԼ. Վիտելլիոս 'ի զգուշութիւն ընդդէմ ամենայն
խռովութեանց սպառնացելոց յարևելս։ Այրս այս համ
բաւ չար թողեալ էր զանձնէ 'ի Հռովմ, և բազում ինչ
զազրագործութիւնք պատմին զնմանէ. բայց զկուսա-
կալութիւն իւր վարեաց ըստ նախնեացն առաքինու-
թեան. և անտի դարձ արարեալ, յահէ Կայիոսի կե-
սարու, և առ 'ի մարդահաճել զԿլաւդիոս, յայն վա-
տութիւն զառաջաւ, զի օրինակ շողոքորթութեան
եկաց առ յետինս, և զպատանեկան տիոցն հնորհս՝ նա-
խատելի ծերութեամբն ապականեաց։

ԼԳ. Յիշխանաց անտի արևելից նախ առաջին Միհրդ-
դատ համոզեաց զՓարսման՝ օգնել իւր նենգաւ և զօ-
րութեամբ. և գտան հրապուրիչք՝ որ բազում կաշառօք
ստիպեցին զպաշտօնեայս Արշակայ յանօրէնութիւն. և
Վիրք զօրու ծանու խուժեալ 'ի Հայաստան, առին
զԱրտաշատ քաղաք։ Ազդ եղև Արտաւանայ, և պատ-
բաստեալ զորդի իւր զՕրոմզդ 'ի վրէժխնդրութիւն,
կացոյց զնա զօրավար պարթևական բանակին. և ար-
ձակեաց պատուիրակս՝ վարձել գունդս յօգնականու-

թիւն։ Իսկ Փարսման դաշնակիցս իւր արար զԱղուանս, և կոչեաց զսարմատացիս՝ որոց իշխանք ըստ սովորութեան ազգին աստի և անտի ընկալեալ վարձս, երկոցունց ևս հակառակ կողմանց լինէին ձեռնտու։ Բայց Վիրք զօրաւորք տեղեաւն, հեղեղեցին յանկարծ զՀայաստան ընդ կասպիական դրունս՝ սարմատացւովքն իւրեանց, և որք գայլինն յօգնութիւն Պարթևաց՝ դիւրաւ խափանէին, զի թշնամւոյն կալեալ էր զայլ դրունս. իսկ մին ևեթ, որ մնայրն ընդ ծով և ընդ վերջին լերինս Աղուանից, էր անմատոյց յամարայնի. քանզի հողմք ետեսականք խափանեն զանցն ընդ ալեօք, և հողմ հարաւոյ 'ի ձմերայնի վարէ 'ի բաց զալիս՝ ընկերք կեալ զծով, և բացեալ զծանծաղուտս ծովափանց։

ԼԴ. Յայնմ վայրի Փարսման զօրացեալ օգնական գնդօք, ձայն տայր Որովգեայ 'ի մարտ՝ որ անօգնականն էր. և 'ի յամել նորա, շտապ տագնապի 'ի վերայ նորա հասուցանէր, յարձակէր 'ի բանակետղ նորա, աւար հարկանէր զՃարակ ձիոց, և յաՃախ ևս ըստ օրինակի պաշարման՝ զօրս շուրջ կացուցանէր. մինչև պարթևաց, որ դժոխըմբերքն են թշնամանաց, շուրջ լեալ զարքայիւն իւրեանց՝ խնդրէին ելանել 'ի պատերազմ. բայց ինքեանք հեծելովք ևեթ էին զօրաւորք, իսկ Փարսման հետևակօք ևս. զի Վիրք և Աղուանք յանտառային վայրս բնակեալ, առաւել տոկան վաստակոց և խստութեան։ Համարին նոքա սերեալ զազգ իւրեանց 'ի թեսաղացւոց երթելոց զհետ Յասոնի, յորժամ յափշտակեալ նորա զՄեդէա, և ծնեալ 'ի նմանէ որդիս՝ դարձաւ 'ի դատարկացեալ արքունիս Արետայ, և 'ի Կոլքիս մնացեալ անիշխան։ Բազում ինչ զնմանէ և զփռիքեան հարցկէն պատմի. և ոչ իշխէ որ խոյ 'ի զոհ մատուցանել, զի զՓռիքս ասեն ածեալ 'ի խոյոյ ընդ ծով, թէպէտ զկենդանին կամք իցեն իմանալ, և թէ զնաւ նշանաւոր խոյով։ Բայց 'ի յարդարելն երկուստեք Ճակատ, Պարթևն պանծայր ընդ փառս արշակունեաց և ընդ ինքնակալութիւն արևելից, և ցուցանէր անփառունակ զվրացին՝ վարձկան զօրօք եկեալ 'ի պատերազմ. իսկ Փարսման յիշեցուցանէր իւրոցն՝ զի ոչ երբէք լեալ էին ընդ լծով Պարթևաց, և զի որչափ ծանր էր պատերազմն՝ յոր երթային, նոյն-

չափ յաճախէր փառս յաղթողաց, և ամօթ և վտանգ փախստէից. և համարէր նա ահեղ զբանակ իւր երկաթազէն, իսկ զպարթևականն ոսկեղէն արհամարհելի. ասի արութիւն, և անտի պատրաստեալ ցուցանէր աւար։

Ա. Բայց սարմատացիք ոչ զօրավարին ևեթ ձայնիւ խրախուսեալ, այլ և զմիմեանս յորդորէին, մի՛ նեռիւք նախաձեռն առնել մարտին՝ այլ՝ի մօտոյ յարձակմամբ անկանել յեղակարծում՝ի վերայ թշնամւոյն։ Ասի պատերազմին զանազանեալ կերպարան. քան զի Պարթևն նովին արուեստիւ սովորեալ՝ի հալածել և՝ի խուսել, ՝ի բացէ կացեալ խնդրէ անջրպետ առ՝ի կրշռել զհարուածս. իսկ սարմատացին թողեալ զաղեղն՝ի բաց՝ որով չէ ինչ հեռաձիգ, մկընդօք և սուսերօք՝ի վերայ յարձակի. մերթ ըստ հեծելական մարտի ձակատեալ և ընկրկեալ, և մերթ որպէս՝ի խռան մարտի՝ զկնք զզէնս և իրանք զիրանս մղեալ և մղին։ Եւ ահա Աղուանք և Վիրք անկան՝ի վերայ թշնամեաց. խռովեցին զնոսա, և արկին՝ի կրկին վտանգ. զի հեծեալք՝ի բարձանց տարափս նետից՝ի նոսա տեղային, և հետևակազօրն՝ի մօտոյ տագնապէր զնոսա հարուածովք։ Յայնմ վայրի Փարսման և Որովդ քաջացն խրախոյս և վտանգելոցն նպաստ մատուցանէին՝՝ի տեղի անդր հասեալ, երևելիք և ծանօթք՝ի ձայնէ իւրեանց, և յերիվարացն և՝ի զինուց։ Փարսման՝ այր քաջայանդուգն՝ եհար զՈրովդ ընդ սաղաւարտիւն, այլ ոչ կարաց կըրկնել զհարուածն՝ սրավարեալ՝ի ձիոյն. և քաջակորովք՝ի թիկնապահաց շուրջ եղեն զնովաւ, պաշտպանել վիրաւորելումն։ Բայց՝ի սուտ համբաւոյ սպանութեան նորա ահաբեկեալ Պարթևաց, թողին Աղուանից զյաղթութիւնն։

Ի. Փութացաւ յանժամ Արտաւան ամենայն զօրութեամբ աշխարհին՝ի վրէժխնդրութիւն. բայց Աղուանք, տեղեկագոյնք վայրացն, միւսանգամ զօրացան. այլ և ոչ այնու լքաւ Արտաւան, և եթէ ոչ Վիտելլեայ համախմբեալ զլեգէոնս՝ սպառնայր խաղալ՝ի Միջագետս, և ահ արկանէր՝ի նա հռովմէական զօրութեամբ, ոչ մեկնէր նա յաշխարհէն Հայոց։ Յայնժամ յեղաշրջեցան իրք Արտաւանայ. և Վիտելլիոս

ստիպեաց զՊարթևս հրաժարել 'ի թագաւորէն՝ որ 'ի խաղաղութեան բռնանայր 'ի վերայ նոցա, և պարտութեամբն 'ի մարտի լինէր նոցա 'ի կործանումն։ Շեննակ, որ թշնամին էր Արտաւանայ՝ որպէս ասացաք, էած 'ի վտարանքութիւն զհայր իւր Աբդագ, և զայլ համախոհս իրախուսեալս պարտութեամբն Արտաւանայ. երթայր և ստուարանայր գունդ վտարանքելոցն, յարելով 'ի նոսա և այնոցիկ՝ որք առ ահի քան յօժարութեամբ կային 'ի հնազանդութեան, յորդորեալք 'ի զօրավարաց։ Եւ մնացին ընդ Արտաւանայ այլազգի ևեթ թիկնապահք, վտարանդիք 'ի հայրենեաց, որոց չէր ինչ փոյթ զբարւոյ և զչարէ, այլ վարձուք արբանեկէին անիրաւութեան։ Սոքօք խոյս ետ նա յաշխարհ հեռի յեզերս սահմանաց Սկիւթիոյ, յուսով օգնականութեան 'ի Վրկանաց և 'ի Կրմանաց գտանելոյ, ընդ որս ազգականութեամբ կցորդն էր, և դարձեալ զի ակն ունէր ստրջանալոյ Պարթևաց, որք իշխանաց իւրեանց հեռաւորաց ցանկացօղք, և դիւրատաղտուկք էն 'ի մերձաւորաց։

Լ. Իբրև ետես Վիտելլիոս՝ զի 'ի հեռանալ Արտաւանայ յօժարէր սիրտ ժողովրդեան առ այլ ոք թագաւոր, յորդորեաց զՖարադատ չկորուսանել զպատեհ, ածեալ ընդ իւր յափն Եփրատայ զընտիրս 'ի լեգէոնաց և յօգնական գնդաց։ Անդ ըստ սովորութեան հռովմայեցւոց մատոյց 'ի զոհ խոզ և ոչխար և զուարակ, և Ֆարադատ զոհեաց ձի՝ առ 'ի հաշտ առնել զգետն. և պատմէին բնակիչք երկրին, զի Եփրատ առանց ինչ անձրևաց առատութեան՝ յորդեալ իւրովի և ուռուցեալ, պսակս բոլորաձևս զփրփրադէզ ալեօքն բերէր 'ի նշանակ յաջողութեան անցից։ Իսկ այլք խելամտագոյնս առնուին գուշակել յաջողութիւն 'ի սկզբան, այլ ոչ երկարատև. զի հաւատարմագոյն զհմայս երկնի և երկրի համարէին քան զգետոյ անհաստատ բնութեան, որ ընդ ցուցանելն և 'ի բաց բառնան զնշանակս հմայիցն։ Արդ նաւակամուրջ կառուցեալ յանցս զօրաց, նախ Ամնոսպադ հազարաւորօքն հեծելովք եկն 'ի բանակ անդր։ Սա վտարանդի երթեալն 'ի հայրենեացն, ոչ անանշան ոք օգնական Տիբերի 'ի մարտին դալմատացւոց, զհռովմէական քաղաքացւոց ընկալեալ

էր զպատիւ. և ապա հաշտեալ ընդ Թագաւորին, և բարձ և պատիւ 'ի նմանէ ընկալեալ, մարզպետ կացեալ էր գաւառին Միջագետաց, որ 'ի շուրջ Թանալոյ երկուստեք յալեաց Եփրատայ և Տիգրիսի գետոց մեծաց՝ ունի զանուանակոչութիւնն։ Յետ սակաւ միոյ էած Շեննակ և այլ գունդս, և Աբդագ զօրավիգն այնր կողման, յաւել ևս գանձս և զամենայն սպաս արքունի։ Վիտելլիոսի շատ համարեալ երևեցուցանել Թշնամեաց զլեգէոնս հռովմայեցիս, քաջալերեաց զՏարագատ և զիշխանս. յուշ առնէր նմա զհաւ նորա զՓրաատ, և զկեսար դաստիարակ նորա, զերկոսին ևս անուանիս. և իշխանացն զհաւատարմութիւն առ Թագաւորն իւրեանց, և զմեծարանս առ հռովմայեցիս, պատկառ կալ պատշաճից և պարտուց իւրեանց։ Եւ ապա դարձաւ լեգէոնաք իւրովք յԱստորիս։

ԼԸ. Որ ինչ 'ի կրկին ամարայնի անցք անցեալ էին՝ յաւրեցի 'ի մի, առ 'ի սակաւ մի հանգչել 'ի պատմելոյ զառտնին չարիս. զի ոչ ժամանակ, ոչ աղաչանք, և ոչ յագուրդ 'ի սպանութեանց՝ որ սովոր են ցածուցանել զոգիս՝ ոչ ողոքեցին զՏիբեր, զերեամ մի ևս յետ մահուն Սէանոսի. զերկբայելի՝ զանստոյգ և զմոռացեալ իսկ յանցանս պատուհասեր խստիւ, որպէս զարդի գործեցեալս։ Աստի երկուցեալ Փուլկինիոս Տրիոն, չէառ յանձն կրել զԹշնամանս 'ի չարախօսաց, և 'ի կտակին իւրում բազում ինչ դժնդակս ընդդէմ Մակրոնի և ձերբազատիցն Տիբերի գրեաց, ստգտանելով զնորին իսկ միտս տկարացեալս 'ի զառամութենէ, և զհանգոյն աքսորականի անդարձ բացակայութիւն։ Ժառանգացն Տրիոնի ծածկեալ էր զայս կտակ. բայց Տիբեր հրամայեաց ածել զայն յընթերցումն, առ 'ի ցուցանել զերկայնմտութիւն իւր ընդ ըմբոստութիւն այլոց, և զարհամարհանս ընդ նախատինս իւր, կամ մանաւանդ կամելով՝ զի իւ և է օրինակաւ յայտնեսցին ապիրատութիւնք Սէանու, ծածկեալք յինքենէ ընդ երկար, և զի Թշնամանօք իսկ իւրովք գիտասցէ ըզձշմարտութիւն՝ զոր շողոմք Թաքուցանէին յիւրմէ։ Ի նոյն աւուրս Գրանիոս Մարտիանոս, մի յատենակալաց ծերակուտին, ամբաստանեալ 'ի Կ. Գրակքոսէ 'ի քրէական յանցանս, անձին արար. և Տատիոս Գրա-

տիանոս, երբեմն ատենակալ, զնոյն ամբաստանու-
թիւն կրեալ՝ 'ի մահ դատապարտեցաւ։

ԼԹ. Հանգոյն մահուամբ կորեան և Տրեբելլիենոս
Հռուփոս և Սեքստիոս Պակոնիանոս։ Տրեբելլիենոս
անձին արար, իսկ Պակոնիանոս վասն յօրինելոյ իւրոյ
տաղս 'ի բանտի ընդդէմ ինքնակալին, եղև խեղդա-
մահ։ Զայսոցիկ Տիբեր, ոչ որպէս երբեմն անջրպե-
տեալ ծովով 'ի Հռովմայ, և ոչ պատգամաւորաբ 'ի հե-
ռուստ, այլ մերձակայ 'ի քաղաք անդր՝ նոյնօրին կամ
գիշերոյ միոյ հազիւ 'ի վերայ անցեալ՝ նամականուով
բդեշխից ընդունէր զլուրս, իբր ականատես արեանցն
հոսելոց 'ի տունս, և դահճացն բռնութեան։ Յելս տար-
ւոյն մեռաւ Պոպպէոս Սաբինոս, ոչ մեծազգի՝ այլ
ինքնակալացն շնորհիւ հասեալ բդեշխութեան և պա-
տուոյ յաղթանակի, և գաւառաց երևելեաց զամ-
քսան և չորս կուսակալ կացեալ, ոչ վասն գերազանց
բարեմասնութեանցն՝ այլ վասն բաւականութեանն 'ի
յանձանձանս իրաց տեսչութեան. զի աւելի ինչ քան
զայն ոչ կարէր։

Խ. Յաջորդեցին Կ. Պլաւտիոս և Սեքս. Պապինիոս
բդեաշխք. 'ի նմին ամի Լ. Արուսիոսի և.... ան-
գութ սպանումն ոչ մեծ ինչ արար աղդեցութիւն
սովորելոցն 'ի յաճախաւոր մահունս. բայց Վիբուլե-
նեայ Աֆրիպպայ ասպետին հռովմայեցւոյ մահ՝ էարկ
արհաւիրս յամենեսին. զի յամբաստանելն 'ի չարախո-
սաց՝ անդէն 'ի ծերակուտին հանեալ 'ի ծոցոյ իւրմէ
զմահադեղ, էարբ. և յանկանել անդ կիսամահ, փու-
թացան նուիրակք ածին զնա 'ի բանտ. և զկոկորդն
վաղ իսկ անշնչացեալ՝ արկին 'ի խեղդ։ Ոչ կարաց և ոչ
Տիգրան, երբեմն թագաւոր Հայոց, զերծանել 'ի պա-
տուհասէ, և արքայն ընդ քաղաքացիս մատնեցաւ 'ի
մահ։ Կ. Գալբա և Բլեսեանք երկոքին, անձնամահ
եղեն. Գալբա հրովարտակաւ Տիբերի խստիւ արգե-
լեալ 'ի գնալոյ յերկիր կուսակալութեան իւրոյ, իսկ
Բլեսեանք՝ զի զպատիւ քրմութեան, զոր 'ի յաջողու-
թեան տան նոցա խոստացեալ էր նոցա ինքնակալն, և
յամեցուցեալ 'ի ձախողութեան, ետ յայնժամ այլոց
որպէս ազատ և դատարկացեալ. զոր նոցա որպէս դա-
տակնիք համարեալ անձանց, ածին զայն 'ի կատարումն։

Եմիլիա Լեպիդա, որ պատանուոյն Դրուսոսի՝ ըստ ասա-
ցելումն՝ լեալ էր կնութեան, թէպէտ և բազմապատիկ
ամբաստանութեամբքն զառնէն ատելի ամենեցուն,
սակայն անպատուհաս կեայր ցորչափ հայր նորա Լե-
պիդոս կենդանի էր. այլ ապա ամբաստանեցաւ շնա-
ցեալ ընդ միում 'ի ստրկաց. և քանզի աներկբայելի
էին յանցանքն, առանց պատասխանի առնելոյ վասն
անձին՝ ինքնաձեռն զբաւեցաւ 'ի կենաց։

ԽԱ. Զայնու ժամանակաւ Կլիտք՝ որ էին ընդ ձե-
ռամբ Աբքելայոսի կապադովկացւոյ, ոչ յանձն ա-
ռեալ զհարկս և զտուրս յօրինաց մերոց հրամայեալս,
խոյս ետուն 'ի կատար լերինն Տաւրոսի, և ամրութեամբ
տեղւոյն պատսպարեալ կային յերեսաց տկար զօրու-
թեան արքային։ Բայց Մ. Տրեբելլիոս յղեալ փոխա-
նորդ 'ի Վիտելլեայ կուսակալէն Ասորւոց, չորեքհազար
լեգէոնական զօրօք և ընտրելովք յօգնական գնդաց,
պատնէշ պաշարմամբ պատեաց զբլուրն զերկոսին՝
յորոց խոնարհագոյնն կոչի Կադրա, իսկ միւսն Դա-
ւարա, յորս բարբարոսքն զկայ առեալ էին. և զյան-
դգնեալսն ընդդէմ՝ սրով, զայլս ծարաւով, հար-
կեցոյց 'ի հնազանդութիւն։ Յայնմ վայրի Տարադատ
ընդունելի եղեալ Պարթևաց, կալաւ զՆիկեփոր և
զԱնթեմուս և զայլ քաղաքս շինեալս 'ի մակեդոնաց-
ւոց, վասն որոյ և կրեն անուանս յունականս, և զՀա-
լոս և զԱրտեմիտա պարթևական քաղաքս. և ուրախ
եղեն յոյժ բնակիչք քաղաքացն, տաղտկացեալք 'ի
բռնութենէ Արտաւանայ՝ որ 'ի Սկիւթս էր սովորեալ,
և յուսային 'ի հեզութիւն Տարադատայ՝ որ 'ի բարս
հռովմայեցւոց էր կրթեալ։

ԽԲ. Մարդահաճութեամբ բազմաւ վարեցան սելև-
կիացիք. և է Սելևկիա քաղաք հզօր ամրապարիսպ,
պահեալ 'ի մէջ խուժադուժ ազգաց զբարս հիմնադ-
րին իւրոյ Սելևկոսի. երեքարիւր այր՝ ընտրեալք 'ի
Ճոխից և 'ի խոհականագունից՝ կազմեն անդ որպէս
ծերակոյտ իմն. ժողովրդեան ևս է իշխանութիւն, և
ցորչափ միաբան են յինքեանս երկոքին կողմանք, չիք
նոցա երկիւղ 'ի Պարթևաց. իսկ իբրև տարաձայնին,
և մի 'ի նոցանէ ընդդէմ միւսոյ կողման ինդրէ իւր
թիկունս, կոչեցեալն յօգնութիւն տիրապետէ երկո-

ցունցն ևս կողմանց։ Ա.յս և յայնժամ առ իշխանու-
թեամբն Ա.ղտաւանայ պատահեալ էր. որ ըստ իւրումն
սովորութեան արկ զժողովուրդն ընդ ձեռամբ աւա-
գանուոյն, ածեալ զմտաւ՝ զի իշխանութիւն ժողովրդ-
դեան մերձաւորագոյն է ազատութեան, իսկ սակա-
ւուց իշխանութիւն՝ միապետութեան։ Ա.յլ՝ի հաստա-
նել Տարադատայ, մեծարեցին զնա սելևկիայիք ամե-
նայն արքունական փառօք նախնի թագաւորաց, յա-
ւելեալ և որ ինչ այնր ժամանակի գիւտք էին մար-
դահաճութեան. և պարսաւէին զԱ.ղտաւան, զի առ
՝ի մօրէ ևեթ ազգակից էր արշակունեաց, իսկ ըստ
ընիկ տոհմին անազգի։ Տարադատ ետ զիշխանութիւն
՝ի ձեռս ռամկին. և մինչդեռ խորհէրն սահմանել զօր
հանդիսի թագադրութեան, ընկալաւ նամականի՝ ի
Փրաատայ և՝ի Հերոնէ՝ որ էին նախարարքք երկոցունց
գլխաւոր գաւառաց աշխարհին, և խնդրէին փոքր
միւս ևս յամեցուցանել զհանդէսն։ Հաճոյ թուեցաւ
սպասել արանցն հզօրաց. և յայնմ վայրի չոգաւ Տա-
րադատ՝ ի Կտեսիփոն արքայանիստ քաղաք պետու-
թեանն։ Եւ իբրև օր՝ի յօր յերկարաձգէր յամեցումն,
Սուրէն ըստ աշխարհին նախնի սովորութեան՝՝ի ձայն
աղաղակի բազմութեան թագաւորեցոյց զՏարադատ։

Խգ. Եթէ յայնժամ փութացեալ էր Սուրէնի երթալ երևել՝ի միջերկրայս աշխարհին և յայլ գաւառս,
գրաւէր զամենեսին՝ որ գայթ՝ի գայթի կային, և
միաբանէր զնոսա ընդ իւր. այլ նա դիմեալ՝ի պաշա-
րել զդղեակն՝ ուր Ա.ղտաւանայ ամրացուցեալ էր
զգանձս և զկանանին, եթող միաբանելոցն պարապ
դրժելոյ դաշանցն, քանզի Փրաատ և Հերոն և ամե-
նեքեան՝ որոց չէր եկեալ՝ի հանդէս թագաւորու-
թեանն Տարադատայ, կէսք առ ահի, այլք առ ատե-
լութեան ընդդէմ Ա.ղդազայ՝ որ յայնժամ զարքունիս
և զնոր արքայն ընդ ձեռամբ ունէր, դարձան յԱ.ղտա-
ւան։ Ա.ղտաւան յայնժամ՝՝ի Վրկանս կայր, զգեցեալ
ցնցոտի, և որսովք աղեղան իւրոյ կերակրէր. երկեաւ
նա զառաջինն՝ թէ գուցէ դաւ ինչ ընդդէմ իւր էր
պատրաստեալ. այլ՝՝ի տալ նոցա երդումն՝ զի գայլն
թագաւորեցուցանել զնա անդրէն, քաջալերեցաւ և
զպատճառս յեղակարծ փոփոխութեանն հետազօտէր։

Յայնժամ Հերոնի զմանկութիւն Տարադատայ եպե-
րելով, ոչ'ի ձեռին արշակունւոյ ուրուք զթագաւորու-
թիւնն համարէր, այլ զսին ստուեր նորա 'ի ձեռին ա-
պիկարի ուրուք՝ որ վատթարեալն էր մեղկութեամբ
ազգի օտարի, և Աբդագայ յայնժամ խսկապէս թա-
գաւորելով։

Խդ. Խելամուտ եղև ծերունին փորձ իշխանու-
թեան, զի թէպէտ և կեղծ էր բարեկամութիւն նոցա
ընդ իւր, բայց հեռ նոցա ընդ Տարադատայ անկեղծ.
և ոչ յամեաց քան որչափ ինչ պէտք էին վասն զօրաժո-
ղով լինելոյ'ի Սկիւթս։ Խաղաց գնաց կանխել զսառաջս
ունել նենգաւորութեան թշնամեաց և զյողդողդու-
թեան բարեկամաց, զցնցոտիսն իսկ ոչ մերկացեալ
յանձնէ՝ առ 'ի շարժել զռամիկն 'ի գութ։ Զեթող
ինչ'ի հնարից, և ոչ զաղերս, առ 'ի շահել զորս գայթ-
'ի գայթի կային, և առ 'ի հաստատել զյօժարեալս
յինքն. և ահա յանկարծ հասանէր նա զօրու ծանու
'ի Սելևկիա։ Տարադատայ զդիմեցումն նորա և զհա-
սանել միանգամայն լուեալ, վարանէր 'ի խորհուրդս
իւր՝ ելանե՞լ ընդդէմ նորա թէ յամել'ի դիմամարտ.
որոց միանգամ հաձոյ թուէր փութալ, ասէին վարա-
տեալ զզօրս Արտաւանայ և վաստակաբեկս'ի բազում
երկայն ուղևորութենէն, և չև ևս վստահ 'ի հա-
ւատարմութիւն և 'ի հնազանդել այնմ՝ որում սուղ
ինչ յառաջ մատն լեալ էին և թշնամի։ Բայց Աբդագ
պարտ համարէր ընկրկել'ի Միջագետս, ամրանալ գե-
տով, զօրաժողով լինել 'ի Հայոց և յելիմացւոց և յայ-
լոց ազգաց՝ որ կային 'ի թիկանց, և զօրացեալ օգնա-
կանութեամբ նոցա, և գնդացն՝ զորս յղէր զօրավարն
հռովմայեցի, ապա փորձել զբաղդ պատերազմի։ Զօ-
րացեալ կալաւ այս խորհուրդ վասն Աբդագայ բազ-
մահմուտ խորհրդականութեանն, և վասն Տարադա-
տայ վատասրտութեանն 'ի վտանգս. այլ զի մի 'ի փա-
խուստ թուեսցին դառնալ, նախ արաբացիք և ապա
այլք մեկնեցան 'ի բաց, կէսք 'ի Հայրենիս իւրեանց և
կէսք 'ի բանակն Արտաւանայ, մինչև Տարադատայ սա-
կաւուք ոմամբք դառնալ յԱսորիս, և զերծուցանել
զամենեսեան 'ի նախատանաց մատնութեան։

Խե. Ի նմին ամի հրդեհ մեծ եղև 'ի Հռովմ, և ծա-

խեաց զմասն կրկիսին՝ որ առ աւէնտեան լերին, և զԱւէնտին ինքնին գլխովին. զայն արկածս Տիրեր 'ի փառս իւր գիտաց յեղաշրջել, հատուցանելով զգինս տանցն և ապարանից հրկիզելոց, տասն բիւր սեստերտ. և այնչափ առաւել հաճոյ Թուեցաւ ժողովրդեան այս առատաձեռնութիւն նորա, որչափ զի ուիշդ էր 'ի ծախս առանձնական շինուածոց. և վասն հասարակաց երկուս ևեթ շինուածս կառուցեալ էր նորա, զմեհեան Աւգոստեայ և զտեսարան Պոմպէի. և 'ի կատարել իսկ այնոցիկ, որպէս թէ արհամարհելով զփառս, կամ վասն ծերութեանն, չէր արարեալ զնաւակատիս։ Զհամար կորստեանցն յերեսաց հրդեհին յանձնեցաւ ունել չորից փեսայից ինքնակալին, Կն. Դոմիտեայ, Կասիոսի Լոնգինեայ, Մ. Վինիկիոսի, և Հռուփելլեայ Բլանտոսի. յորս յաւելաւ ընտրութեամբ բդեշխից և Պ. Պետրոնիոս։ Եւ սահմանեցան վասն ինքնակալին ամենայն պատիւք, զորս հանձար ծերակուտին կարէր հնարել. այլ զՈրս յայնցանէ ընդունել ինքնակալին՝ չէ յայտ, վասն մահուն ընդ հուպ 'ի վերայ հասանելոյ, զի չեղև նա յերկարակեաց յետ հասանելոյ Կն. Ակերբոնեայ և Կ. Պոնտիոսի 'ի բդեշխութիւն, որք յետին 'ի բդեաշխս կացին առ ինքնակալութեամբ նորա։ Հզօրացեալ էր յոյժ Մակրոն, ոչ երբէք ապախտ արարեալ զբարեկամութիւն Կայիոսի կեսարու, այլ մանաւանդ օրըստօրէ առաւել մեծարեալ. և յետ մահուն Կլաւդիայ, որ ըստ նախապատուին իմոյ բանիս՝ լեալ էր Կայիոսի կնութեան, վարէր զկին իւր զԵննիա՝ 'ի հրապուրել զպատանին որպէս թէ տարփացեալ նմա, և պայմանաւ ամուսնութեան կաշկանդել ընդ իւր. զի ոչ խորշէր նա յիմբէ առ 'ի հասանել ինքնակալութեան. և թէպէտ բուռն էր 'ի ընէ, այլ քաջ ուսեալ 'ի հաւոյ իւրմէ ըզկեղծիս։

Խզ. Ա. յամ ամենայնի իրազեկ եղեալ Տիրեր, եդ 'ի մտի սահմանել զյաջորդ իւր յինքնակալութիւն։ Մերձաւորագոյն նմա արեամբ և սիրելագոյն 'ի թուռունս իւր՝ էր որդին Դրուսեայ, այլ չև ևս հասեալ էր նա յարբունս։ Իսկ Գերմանիկեայ որդին՝ որ յաստիս տիոցն էր, այլ զի սիրելի էր ժողովրդեան՝ նովին իսկ ատելի

էր հաւոյն։ Խորհէր և զԿլաւդեայ՝ որ հասուն էր հասակաւ և բարեսէր, այլ տկարութիւն մտաց նորա լինէր խափան. և արտաքոյ ազգատոհմին իւրոյ խի-թայր ընտրել զոք, զի մի Աւգոստեայ յիշատակ և ա-նուն կեսարաց 'ի խաղ և յանարգանս անկցի. զի թէ-պէտ և չէր ինչ նմա փոյթ զկարծեաց ժամանակակից մարդկան, այլ ոչ նոյնպէս և զյետնոց։ Վասն որոյ վա-րանեալ 'ի միտս, և զի տկարացեալ ևս էր մարմնով, 'ի բախտ անդր եթող ապաստան զընտրութիւնն՝ զոր ինքն չէր բաւական առնելոյ. սակայն բանիւք ինչ իւրովք յայտ արար գուշակել զհանդերձեալն. զի զՄակրոն յայտնապէս կշտամբեաց վասն անտես առնելոյ նորա զարևմուտս, և յարևելս ուշ ունելոյ. և Կայիոսի կեսա-րու, որ 'ի խօսս ուրեք ծաղր առնէր զՍիլլա, ազգ ա-րար՝ զի առաջի կայր նմա զամենայն յոռութիւնս Սիլ-լայի, առանց իրիք յառաքինութեանց նորա, յանձին բերել. և բազում արտասուօք դիրկս արկեալ կրտսե-րագունին 'ի թուանց իւրոց, և խոժոռ 'ի միսն հա-յեցեալ, ասէ. Դու սպանցես զսա, և այլ ոք զքեզ։ — Եւ թէպէտ զայրանայր 'ի նմա ախտն օրըստօրէ, ոչ ինչ յանկարգութեանց իւրոց եթող 'ի բաց. և համ-բերէր ցաւոցն, զարիութիւն կեղծաւորեալ։ Սովոր իսկ էր ծաղրել զձարտարութիւն բժշկաց, և զորս յետ երեսնամեայ հասակին՝ կարօտէին խրատուց առ 'ի գի-տել զօգտակարն և զվնասակար առողջութեան իւ-րեանց։

ԽԼ. Հանդերձելոց իսկ սպանութեանց յետ մահուն Տիբերի անդստին յայնմ ժամանակ արկանէին սեր-մանք։ Լելիոս Բալբոս ամբաստանէր 'ի քրէական յան-ցանս զԱկուտիա, երբեմն կին Պ. Վիտելլիոսի. այլ 'ի դատապարտել նորա, և 'ի սահմանել վարձ դատախա-զին, Յունիոս Ոթոն հազարապետ ժողովրդեան զդէմ կալաւ. և յոսոխել նոցա ընդ միմեանս, աքսորեցաւ Ոթոն։ Յետ այնորիկ Աքուկիլլա կին Սատրիոսի Սե-կունդեայ, որոյ զդաւաճանութիւն Սէանու յայտ-նեալն էր, կին չարահամբաւ վասն հոմանեացն բազ-մութեան, ամբաստանեցաւ յանգթութիւն ընդդէմ ինքնակալին. յաւելան ընդ նմա որպէս համախոհք՝ հոմանիք նորա Կն. Դոմիտիոս, Վիբիոս Մարսոս, և Լ.

Աբրոնտիոս։ Զաղնուականութենէ Դոմիտեայ ասացի 'ի վեր անդր. Մարսոս 'ի պատիւ նախնեացն իւրոց յաւելոյր և զպայծառութիւն գրաւորական։ Նամականին՝ յղեալ 'ի նմանէ առ ծերակոյտն՝ ցուցանէր զՄակրոն լեալ վերակացու հարցափորձի վկայիցն, և ստրկաց 'ի խոշտանգանս մատուցելոց. և քանզի չգոյր ինչ ընդդէմ այնոցիկ գրեալ յինքնակալէն, կասկածելի լինէր՝ զեղծանել Մակրոնի տկարութեամբ նորա, թէ արդեօք և անգիտութեամբ, և կուտակել բազում ինչ առ ատելութեան ընդդէմ Աբրոնտեայ։

ԽԸ. Արդ Դոմիտիոսի պատրաստելով 'ի պատասխանատրութիւն, և Մարսոսի որպէս թէ սովալլուկ կամելով նիւթել մահ անձին, յերկարէին 'ի կեանս. իսկ Աբրոնտիոս յորդորեալ 'ի բարեկամաց 'ի յամեցումն մահուն, ետ պատասխանի. Ոչ ամենեցուն նոյն են պատշաճք. կեցի ես շատ. ընդ այն և եթէ զիրՁ է ինձ, զի վշտագին զծերութիւն իմ անցուցի 'ի թըշնամանս և 'ի վտանգս՝ ատելի լեալ արանց հզօրաց, Սէանոսի ընդերկար, և այժմ Մակրոնի. ոչ վասն յանցանաց ինչ, այլ վասն գարշելոյ 'ի յանցանաց։ Կարացից 'ի սուղ ինչ նշխարեալ աւուրս, որ մնան Տիբերի, զերծանել անվտանգ, այլ որպէս և 'ի մանկութենէ հանդերձելոյ յաՁորդին. եթէ Տիբեր անցեալ ընդ երկարատև փորձ իրաց, չկարաց զդէմունել հրապուրանաց իշխանութեան և կալ անփոփոխ, իսկ 'ի Կայիոսէ կեսարէ՝ որ դեռ այն ինչ հասեալ է յարբունս, անփորձ ամենևին և չարաչար դաստիարակեալ, մՁրթ իցէ լաւագունի իմիք ակն ունել՝ ընդ առաՁնորդութեամբ Մակրոնի, որ 'ի նուաՁունն Սէանու ընտրեալ՝ բազմագոյն ևս եղեռնագործութեամբք խռովեցոյց զհասարակապետութիւնն։ Դժնդակագոյն և ծանր ևս ծառայութիւն առաՁի իմ տեսանեմ։ պարտ է ինձ խոյս տալ յանցելոյն և յառաՁիկայէն։ — Զայսոսիկ մարգարէաբար ինն ասացեալ, Եհատ զերակ բաղկին. և արդիւնք իրացն ցուցցեն, զի ոչ վայրապար ետ զանձն 'ի մահ։ Իսկ Ալբուկիլլա սուր 'ի կող իւր էարկ. այլ ոչ մահացու դիպեալ հարուածոյն, ածաւ հրամանաւ ծերակուտին 'ի բանտ. և արբանեակք շնութեանց նորա, Կարդիսիոս Սակերդոս՝ երբեմն ատենակալ՝ դա-

տապարտեցաւ յաքսոր 'ի մի 'ի կղզեաց, և Պոնտիոս Փրեգելլանոս՝ յարտաքսումն 'ի Ծերակուտէն։ Ջնոյն և Լելլիոս Բալբոս կրեաց պատուհաս 'ի խնդութիւն ամենեցուն, զի դժնեայ Ճարտարիսօսութեամբն զեղ ծանէր ընդդէմ անմեղաց։

ԽԹ. Ի նոյն աւուրս Սեքս. Պապինիոս՝ 'ի բդեշխական ազգատոհմէ՝ մատնեաց զանձն 'ի տարաժամ և 'ի սոսկալի մահ, գահավիժեալ 'ի բարձանց. առիթ մահուն զմայր նորա, զարձակեալն յառնէ իւրմէ, ասէն լեալ. զի զգգուանս նորա և զհրապոյրս մերժեալ պատանւոյն ընդերկար, ստիպեցաւ հուսկ ապա մահուամբ խուսեալ 'ի վտանգէն։ Ամբաստանեցաւ մայր նորա յատենի Ծերակուտին. և 'ի զուր առ ոտս ատենակալաց անկեալ՝ զսուգ մօր տկարի ընդ այնպիսի աղէտս՝ դառնագոյն քան զհօր ցուցանէր, աղիողորմ աշխարանս 'ի նոյն յաւելեալ. վարեցաւ նա 'ի Հռովմայ յաքսոր տասնամեայ, մինչև անցանել կրտսերոյ որդւոյ նորա ըստ հասակ դիւրագայթ մանկութեան։

Ծ. Վաղ մարմինն Տիբերի, վաղ և զօրութիւն ոգւոյ նորա նուաղէր, բայց ոչ և կեղծ արիութիւն նորա. նոյն պնդութիւն հոգւոյ, և նոյն զգուշութիւն 'ի բանս և 'ի հայեցուածս, առ 'ի թաքուցանել զակնյայտնի նուաղումն իւր՝ արուեստակեալ քաղցրութեամբ։ Վայրաց 'ի վայրս ստէպ տեղափոխեալ, յետոյ ուրեմն առ հրուանդանաւն Մեսենեայ կալաւ բնակութիւն յամարաստան ապարանս՝ որ էր երբեմն Լ. Լուկուլլեայ. անդ մերձենալ օրհասական վտանգին այսու օրինակաւ ծանուցաւ։ Էր առ նմա Քարիկլէս բժիշկ քաջահմուտ, իբր ոչ եթէ առ 'ի խնամել զառողջութիւն նորա, այլ սովոր էր խորհրդակից լինել նմա։ Սա իբր այն թէ 'ի յանձանձանս առտնին իրաց 'ի հրաժեշտի կացեալ, և որպէս թէ 'ի սպաս մեծարանաց զաջ ինքնակալին առեալ 'ի համբոյր, զնեաց զզարկ բազկի նորա. այլ ծածկել զպատրանն ոչ կարաց։ Սրտմտեալ Տիբերի ընդ այն, թագոյց զցասումն իւր, և հրամայեալ պատրաստել վերստին ճաշ՝ յերկարաձգեաց զայն առաւել քան զօրէն հանապազօր, իբր առ 'ի պատուել զհրաժեշտ բարեկամին. բայց Քարիկլէս զեկոյց Մակրոնի՝ զի սպառէին ոգիք ինքնակալին, և չէր մարթ

երկարել կենաց նորա քան զաւուրս երկուս։ Աղմկեցաւ ամենայն, 'ի խորհուրդ մտին՝ որք անդն կային, պնդադեսպանք արձակեցան 'ի բանակս և առ տեղակալս. և յեօթնևատասներորդ աւուր կալանդացն ապրիլի թուէր Տիբեր ընչասպառ կիսամահ։ Յայնժամ Կայիոս կեսար 'ի խռնել զնովաւ խնդակից ամբոխին, ելանէր առնուլ զինքնակալութիւն. և ահա աղդեղև՝ բանալ Տիբերի զաչս, և լուծանել բարբառոյն, խնդրելով կերակուր 'ի կազդուրումն։ Երկիւղ կալաւ զամենեսին. ոմանք 'ի փախուստ ածապարէին, այլք անգիտանալ պատճառէին՝ տխրութիւն 'ի դէմս բերելով։ Կարկեալ եկաց Կայիոս անմռունչ, և 'ի բարձուէ յուսոյ՝ յահ և երկիւղ չարաչար կորստեան անկանէր. բայց Մակրոն անխռով պատուէր ետ հեղձամահ առնել զծերունին՝ արկեալ զնովաւ ձորձ բազում, և ելանել 'ի տանէ անտի 'ի բաց։ Այսպէս զբաւեցաւ Տիբեր՝ յեօթանասուն և ութ ամի կենաց իւրոց։

ԾԱ. Որդի էր նա Տիբերի Ներոնի, և երկուստեք 'ի Կլաւդեանց տանէ իջեալ, այլ մայր նորա որդեգրութեամբ անցեալ էր յազգատոհմն Լիւեայ և ապա Յուլեայ։ Անդստին 'ի մանկութենէ փորձ գտաւ նա յողդողդ բախտին. զի ընդ հօր իւրում վարեալ յաքսոր, անդ յազգատոհմն Աւգոստեայ եմուտ որդեգիր։ Նախանձորդք բազումք լքուցին զնա, ցորչափ Մարկելլոս և Ագրիպպաս, և ապա Կայիոս և Լուկիոս կեսարք իշխէին յարքունիս. զի և եղբայր իւր Դրուսոս առաւել սիրելի էր ժողովրդեան։ Այլ առաւել եղև նա 'ի վերատանդի՝ յածել իւր 'ի կնութիւն զՅուլիա, ստիպեալ հանդուրժել ցոփութեանց նորա, կամ՝ 'ի բաց արձակել զնա։ Դարձ արարեալ՝ 'ի Հռոդոսէ, կալաւ ընդ ամն երկոտասան զունայնացեալ արքունիս ինքնակալին. և միայնակ յանձանձէր զիրս ժողովրդեան Հռովմայ ընդ ամն իբր քսան և երիս։ Բարուց ևս նորա ժամանակք փոփոխեցան. բարեհամբաւ էր նա 'ի սոսկական կեանս իւր. և 'ի կուսակալութեան ևս առ ինքնակալութեամբ Աւգոստեայ՝ գիտաց աջողակի կեղծաւորել զառաքինութիւն, ցորչափ կէին Գերմանիկ և Դրուսոս. և առ կենդանութեամբ մօրն՝

խառնելով զչար ընդ բարի։ Ա.յլ յետ այնորիկ ե-
կաց նա հրէշ անգթութեան. բայց միայն զգարշանս
իւր թաքուցանէր, ցորչափ Սէանոս սիրելի եղև նմա
կամ երկիւղալի. իսկ ապա ետ զանձն արձակ համար-
ձակ յոռիս և 'ի զազրագործութիւն, 'ի բաց եդեալ
զամօթ և զերկիւղ, և ըստ հաճոյից կամաց իւրոց կեն-
ցաղավարեալ։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Անլուր գարշութիւնք Տիբերի։

Բ. Տոգոնիոս առաջարկէ ունել Տիբերի 'ի գալն յատեան՝ Թիկնապահս քսան յատենակալաց ծերակուտին զինեալս։ Տիբեր մերժէ զառաջարկութիւնն։

Գ. Ցունիոս Գալլիոն պատուհասի յաքսոր, և ապա 'ի բանտ, վասն անհեթեթ մարդասպանութեանն։

Դ. Պակոնիոս ամբաստանէ զԼատիար որպէս առաջնորդ միաբանելոցն 'ի կորուստ Սաբինոսի։ Հէնք Ատերիոսի Ագրիպպայ 'ի Հռեգուլ և 'ի Տրիոն բդեաշխս հերուին։

Ե. Մեսսալինոս Կոտտաս ուժգին ամբաստանեալ, պաշտպանի 'ի Տիբերեայ։

Զ. Տիբեր 'ի միում 'ի թղթոցն՝առ ծերակոյան խոստովանի զտագնապ սրտի իւրոյ։

Է. Զարախօսք Մեսսալինեայ պատուհասին 'ի ծերակուտէն։ Զարախօսութեանց յաճախել անչափ։

Ը. Աշնուական պատասխանատուութիւն Մ. Տերենտեայ, ամբաստանեալ բարեկամ Սէանոսի։

Թ. Դատապարտութիւն ամբաստանողաց նորա։ Սէքս. Վեստիլիոս հատանէ զերակունս իւր։ Հարցփորձ յոլովից երևելի ազգանց։ Արհաւիրք ծերակուտին։

Ժ. Մի 'ի մարդ մատնի 'ի մահ վասն ողբալոյ զորդի իւր։ Պատուհասք 'ի Կապրէա։ Օրհաս Լ. Պիսոնի քրմապետի և քաղաքապետի Հռովմայ։

ԺԱ. Որպիսի 'ի սկզբանէ հաստատեալ էր քաղաքապետութիւն 'ի Հռովմ, և որպիսի ապա եղև առ Աւգոստեաւ։

ԺԲ. Ծերակոյան վասն ընդունելոյ իւրոյ նոր մատեան սիբիլլական՝ պարսաւի յինքնակալէն։

ԺԳ. Սպառնալիք ապստամբութեան 'ի Հռովմ վասն թանկութեան պարենից։

ԺԴ. Ասպետք երիք հռովմայեցիք մատնին 'ի մահ որպէս գործակիցք Սէանոսի։

ԺԵ. Հարսանիք Ցուլեայ և Դրուսիլլայ դստերաց Գերմանիկեայ։ Տիբեր խնդրէ Թիկնապահս 'ի մատնել յատեան ծերակուտին, այլ եկաւորէ իսկ ոչ 'ի Հռովմ։

ԺԶ. Դատափետութիւն վաշխառուաց։ Տոկոսեաց խափանումն յաճախ, և անդրէն միշտ 'ի վեր երևումն։

ԺԷ. Կանգնել Տիբերի զանկեալ վարկ դրամական, տասն բիւրս սեստերտից յաւելեալ 'ի գանձ անդր, առ 'ի կարող լինելոյ պետութեան տալ 'ի փոխ առանց վաշխի զերեամ մի։

ԺԸ. Ա՛յլ ևս դատապարտութիւնք արանց և կանանց։

ԺԹ. Բանտարկեալք որպէս գործակիցք Սէանու մատնին առ հասա-
բակ 'ի մահ։ Կոտորածք և լրտեսութիւնք և արհաւիրք։
Ի. Հարսանիք Կայիոսի կեսարու ընդ Կլաւդեայ դստեր Սիլանոսի։
Տիբերի դուշակել զինքնակալութիւն Գալբայ։
ԻԱ. Աստեղագիտութիւն Տիբերի, և փորձել Նորա զԹրասիլլեայն։
ԻԲ. Վարդապետութիւնք հակասականք զբախտէն, և զճակատա-
գրէն, և յաղագս դուշակութեան։
ԻԳ. Մահ Ասինիոսի Գալլոսի, և Դրուսոսի երկրորդ որդւոյն Գեր-
մանիկեայ։
ԻԴ. Անգթանալ Տիբերի առ յիշատակ Դրուսոսի։ Դրուսոսի 'ի մե-
ռանել իւրում անիծանել զնա։
ԻԵ. Ագրիպպինայ մահ ինքնակամ, կամ յեղեռանէ Տիբերի, զերկեամ
մի յետոյ քան զպատուհաս Սէանու, 'ի նմին իսկ աւուր։
ԻԶ. Կոկկէոս Ներուսա մեռանի սովալլուկ ինքնակամ ընդդէմ Թա-
խանձանացն Տիբերի։ Պլանկինա այրին Պիսոնի ամբաստանի 'ի
յայանի յանցանս, և առնէ անձին։
ԻԷ. Ցուլիա դուստր Դրուսոսի, այրին Ներոնի, լինի կնութեան
Հռուփելլեայ Բլանդոսի։ Մահ Եղիոսի Լամբասայ քաղաքա-
պետին Հռովմայ, և Պոմպոնիոսի Փլակկոսի, և Մ Լեպիդոսի։
ԻԸ. Երևումն փիւնիկ հաւուս Եգիպտոս։
ԻԹ. Պոմպոնիոս Լաբէոս անկեալ 'ի շնորհաց Տիբերի, հատանէ զե-
բակս իւր։ Մամերկոս ամբաստանեալ, կանխէ քան զդատա-
պարտութիւն մեռանել ինքնակամ։ Կանանց նոցա մահակից
լինել ընդ նոսա։
Լ. Զարախոսաց վարել յաքսոր։ Լենտուլոս Գենտուլիկոս խնամի
Սէանու զերծանի 'ի մահուանէ, սպառնալեօք ընդդէմ Տի-
բերի։
ԼԱ. Պարթևք գժկամակեալ ընդ Արտաւան՝ առնեն հրեշտակս 'ի
Հռովմ, խնդրել իւրեանց Թագաւոր արշակունի զԻրատատ։
ԼԲ. Մահ Փրատայ։ Տիբեր փոխանակ Նորա տայ զՏարադատ Նոյն-
պէս արշակունի։ Վիտելլիոս կարգի զօրավար յարևելս։
ԼԳ. Միհրդատ և Փարսման տան սպանանել զԱրշակ որդի Արտաւա-
նայ, և տիրեն 'ի հայաստան բազմութեամբ վրացի զօրաց։
ԼԴ. Որովդէս նեղեալ 'ի Փարսմանէ, հրաժարէ 'ի պատերազմէ. յոր
ապա ստիպեն զնա զօրք իւր։
ԼԵ. Նկարագիր պատերազմին։ Փարսման և Որովդ յարձակին 'ի մի-
մեանս։ Որովդ վիրաւորի, և Պարթևաց մեռեալ զնա հա-
մարելով՝ Թողուն զյաղթութիւն 'ի ձեռս Թշնամեաց։
ԼԶ. Արտաւան փորձի խնդրել զվրէժ պարտութեանն, և միւսանգամ
մատնի 'ի պարտութիւն. և առ ահի զինուց հռովմայեցւոց
մեկնի 'ի բաց յաշխարհէն Հայոց։ Ապստամբին ընդ հուպ և
Պարթևք, և երթայ նա փախստական մինչև 'ի սահմանս սկիւ-
թացւոց։
ԼԷ. Վիտելլիոս Թագաւորեցուցանէ Հայոց զՏարադատ, և դառնայ
յԱսորիս։
ԼԸ. Մահ Փուլկինեայ Տրիոնի։ Տիբեր տայ ընթեռնուլ լու 'ի լու-
ծերակուտին զկտակ Նորա, Թէպէտ և էին 'ի նմա Թշնամանք
ընդդէմ իւր և արքունեաց իւրոց։
ԼԹ. Ա՛յլ ևս պատուհասք, որովք Տիբեր հեռի կալով 'ի Հռովմայ՝
հայթայթէ իւր գոգցես տեսարանս։
Խ. Պատուհաս Լ. Արուսէոսի և Վիբուլենեայ, և Տիգրանայ ար-

քայի։ Կ. Գալբա, երկոքին Բլէոսեանք, և Եմիլիա Լեպիդա, ինքնակամ զբաւին 'ի կենաց։

ԽԱ. Ապատամբութիւն Կլիտոց ընդդէմ Թագաւորին Գամբաց։ Տրեբելլինոս նուաճէ զնոսա։ Ցնծութիւն Պարթևաց ընդ նոր Թագաւորն Իւրեանց Տարադատ։

ԽԲ. Սելևկիացիք շուայլեն նմա շողոմս։ Սկիզբն և կարգ տեսչութեան սելևկիացւոց։ Տարադատ տանու զԹագ 'ի Կասեսիփոն։

ԽԳ. Դանդաղել նորա և տալ պարապ յոգունց յաւագանւոյն Թոթափելոյ յիւրմէ, և հրաւիրելոյ անդրէն զԱրտաւան։

ԽԴ. Հասանէ Արտաւան յեղակարծում, և ստիպի Տարադատ դառնալ յԱսորիս։

ԽԵ. Հրդեհ մեծ 'ի Հռովմ։ Տիբեր հատուցանէ զգինս այրեցելոց տանց։ Հնարք Մակրոնի առ 'ի զսրանալ առ Կայիոսի կայսեր։

ԽԶ. Տիբերի վարանել յընտրութիւն յաջորդի իւրոյ, և 'ի բախան առնել զայն ապատան՝ չգտեալ ելս խորհրդոյն։

ԽԷ. Դատապարտութիւն Ակատեայ. աքսոր Ցունիոսի Ոթոնի։ Ալբուկիլլա ամբաստանի, և ընդ նմա Դոմիտիոս, և Վիբիոս Մարսոս, և Լ. Արրունտիոս։

ԽԸ. Արրունտիոս հատանէ զերակս իւր. խօսք նորա առ բարեկամսն, որք յորդորէին զնա մի վաղվաղել 'ի մահ։

ԽԹ. Սէքս. Պապինիոս մղէ զանձն 'ի բարձուէ. մայր՝ նորա ամբաստանի որպէս առիթ մահու նորա, և վարի յաքսոր տանամեայ։

Ծ. Տիբեր գուն գործէ ծածկել զօրհաս վախճանին։ Քարիկլէս բժիշկ գուշակէ՝ զայն, և յայտնէ Մակրոնի։ Խնդութիւն Կայիոսի, և հետընդհետ սարսափ նորա։ Մակրոնի հեղձամղձուկ մեռուցանել զծերունին ընդ վերմակաւ։

ԾԱ. Ներհակակիր բախտ Տիբերի, և յեղափոխել հետ զհետէ բարուց նորա։

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից իբր ամաց վեցից. յորս կացին բդեաշխք.

Կն. Դոմիտիոս, և Մ. Փուրիոս Կամիլլոս.
Սեր. Սուլպիկիոս Գալբա, և Լ. Կուռնելիոս Սիլլա.
Պաւլոս Փաբիոս, և Լ. Վիտելլիոս.
Կ. Կեստիոս Գալլոս, և Մ. Սերուիլիոս Հռուփոս.
Կ. Պլաւտիոս, և Սէքս. Պապինիոս.
Կն. Ավերրոնիոս և Կ. Պոնտիոս.

Ա. Հ. 785.
Ա. Ք. 32.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ ԺԱ.

Ա. Մեսալինա զՎալերիոս Ասիատ, որ երկիցս բդեաշխ կացեալ էր, համբաւէր լեալ յառաջ հոմանի Պոպպէի. և Պոպպէ ըղձիւք ցանկայր բուրաստանացն՝ զորս Լուկուլլեայ սկսեալն էր յօրինել, և զորս Ասիատ ևս քան զևս գեղազարդէր։ Վասն որոյ Մեսսալինա գրգռեաց զՍուիլիոս զերկոսին ևս ամբաստանել, յաւելեալ նոցա յօգնականութիւն և զՍոսիբիոս դաստիարակ Բրիտանիկեայ, որ վեր 'ի վերոյ բարեկամութեամբ խորհրդակից լինէր Կլաւդեայ զգուշանալ 'ի զօրութենէ և 'ի գանձուց այնոցիկ՝ որ վասակաբք են իշխանութեան. զի Ասիատ, առաջնորդ սպանողացն Կայիոսի, խոստովանէր աներկիւղ զոճիրն զայն՝ յանդիման հռովմէական ժողովրդեան, և պարծէր յեղեռնաւոր փառսն. և յայնմհետէ անուանի լեալ 'ի Հռովմ, համբաւէր 'ի գաւառս՝ իբր թէ պատրաստէր գնալ 'ի բանակն Գերմանիոյ. և քանզի ծնեալ էր 'ի Վենետիկ, դիւրին էր նմա՝ օժանդակութեամբ յոգունց և հզօր ազգականաց՝ յարուցանել զհամաշխարհիկ ժողովուրդն։ Կլաւդեայ ոչ ինչ ընդդեմ ասէ ասելոյ այնուհետև, արձակեաց զօրօք զԿրիսպինոս հրամատար ատենական զօրականին, որպէս թէ

առ 'ի խափանել զապստամբութիւն։ Կրիսպինոս 'ի վերայ հասեալ Ասիատեայ 'ի Բայս, արկ զնա 'ի կապանս, և էած 'ի Հռովմ։

Բ. Ոչ տուաւ նմա թոյլ պաշտպանել անձին յատենի ծերակուտին, այլ յապարանս Կլաւդեայ լու 'ի լու Մեսսալինայ եղև նմա հրաման խօսելոյ։ Սուիլիոս յանդիմանէր զնա՝ զեղծուցեալ զզօրականն կաշառօք և պղծութեամբք՝ յամենայն չարիս. յաւել և զշնութիւն նորա ընդ Պոպպէի. այլ 'ի կշտամբելն զնա 'ի թուլամորթութիւն և յայրատութիւն, ոչ ևս լուռ եկաց Ասիատ, այլ գոչեաց. Հա՛րց Սուիլիէ զորդիս քո, և վկայեսցեն զի այր եմ։ Եւ 'ի ձեռնարկել նորա 'ի պատասխանատրութիւն, շարժեցաւ Կլաւդիոս 'ի գորով, մինչև Մեսսալինայ իսկ արտասուել։ Բայց Մեսսալինա՝ յելանելն արտաքս՝ առ 'ի սրբել զարտասուս, ազդ արար Վիտելլեայ զգուշանալ՝ զի մի փախիցէ ամբաստանեալ։ Իսկ ինքն փութացեալ 'ի կորուստ Պոպպէի, կացոյց արս 'ի դարանի՝ հարկեցուցանել զնա յերկիւղէ բանտի 'ի մահ ինքնակամ։ Այսոցիկ ամենայնի այնպէս անգէտ էր ինքնակալն, զի յետ աւուրց ինչ հրաւիրեալ զԱկիպիոն զայր Պոպպէի 'ի ճաշ՝ եհարց թէ ընդէ՞ր չէր նորա ընդ իւր ածեալ զկինն. և Ակիպիոն ետ պատասխանի, օրհասին յափշտակեալ զնա 'ի կենաց։

Գ. Մինչդեռ Կլաւդիոս 'ի տարակուսի կայր զդատապարտութենէ Ասիատեայ, Վիտելլիոս յիշեցոյց նմա լալագին զվաղեմի բարեկամութիւն ինքնակալին ընդ նմա, զմեծարանս՝ զոր 'ի միասին ընդ իւր մատուցեալ էր նորա Անտոնեայ դշխոյի մոր, զվաստակս նորա 'ի վերայ աշխարհին, և զարդի քաջութիւնսն 'ի Բրիտանիա, և որ ինչ այլ օգնէր յողղոբել զսիրտ ինքնակալին, և աղերսէր՝ գէթ նմին ինքեան յընտիր առնել զեղանակ մահուն։ Հաճոյ թուեցաւ ինքնակալին խորհուրդ Վիտելլեայ, և զինքաւ առնել նմա զգթութիւնն զայն։ Եւ 'ի յորդորել ոմանց զԱսիատ՝ մեռանել անսուաղութեամբ առանց ցաւոց, հնորհս մատոյց բարեկամութեան նոցա. այլ ինքն ըստ հանապազօր խնամոց անձին՝ լուացեալ զմարմին իւր, և ընթրեալ զուարթութեամբ, ասէ. Լաւ է ինձ կորնչել նենգութեամբն Տիբերի և ցասմամբն Կայիոսի, քան դաւով

կնոջ և լրբենի շրթամբք Վիտելլեայ։ Եւ այց արա-
բեալ՝ի խարոյկ իւր, ետ կանգնել զայն այլ ուրեք, զի
մի՝ի հովանի ծառոյ եղկասցի բոցն, և եբաց զերակ
բազկին։ Այսու խաղաղութեամբ ակնարկէր նա՝ի
ժամ իւր յետին։

Դ. Կոչեցաւ ապա ծերակոյտն՝ի ժողով. և Սուի-
լիոս յաւել ամբաստանել զասպետսն զերկոսին ակա-
նաւորս հռովմայեցիս, որ անուանեալ կոչէին Պետ-
բայք։ Ոչիր մահապարտութեան նոցա էր, զի՝ի
տան իւրեանց տային Վալերիոսի և Պոպպեայ գալ՝ի
մի վայր. միում՝ի նոցանէ գրեցաւ և այն՝ի յանցանս,
զի տեսեալ էր յերազի զԿլաւդիոս պսակեալ՝ի փշոց
յետս կոյս կորացելոց, և գուշակեալ անտի զսով։
Այլք ասեն՝ տեսեալ նորա պսակեալ զինքնակալն
դեղնատերև ուռովք, և գուշակեալ անտի զմահ նորա
յետ աշնայնոյն։ Բայց որպիսի և տեսիլն իցէ լեալ, հա-
ւաստի այն է՝ զի մահաւիթ նմա և եղբօր նորա եղև
երազն։ Հնգետասան բիւր սեստերտ, և շուք դատա-
ւորական սահմանեցան Կրիսպինեայ՝ի ծերակուտէն.
և Վիտելլիոս յաւել հարիւր բիւր սեստերտ Սոսի-
բեայ, վասն օգնելոյ նորա Բրիտանիկեայ՝ խրատուք,
և Կլաւդեայ՝ խորհրդակցութեամբ. և Սկիպիոն հար-
ցեալ զայնմանէ, ասաց. Որ ինչ ամենեքեան զյանցա-
նաց Պոպպէի խորհին, նոյն խորհուրդ է և իմ։ վասն
որոյ համարեցարուք՝ զի որ ինչ ամենեքեան ասեն, ա-
սեմ և ես զնոյն։ Այսու գեղեցիկ չափաւորութեամբ
եկաց՝ի միջասահմանին ամուսնական սիրելութեան և
դատաւորական պարտուց։

Ե. Յայնմհետէ ոչ դադարէր Սուիլիոս՝ի դժնեայ
դատախազութեանցն. և բազումք ևս գտան նախան-
ձաւորք յանդգնութեան նորա. զի ինքնակալին յինքն
գրաւեալ զամենայն իշխանութիւն օրինաց և դա-
տաստանի, ետ մուտս զօշաքաղութեան. և ոչ ինչ՝ի
վաճառաշահութեանց հաւասարէր անիրաւութեան
փաստաբանից. որպէս զի Սամիոս, մի յերևելի ասպե-
տաց հռովմայեցւոց, քառասուն բիւր սեստերտս ընձե-
ռեալ Սուիլեայ, և գիտացեալ զի մատնելոյ էր՝ի
նմանէ՝ չոգաւ անդէն՝ի տան նորա զիւրովին։ Վասն
որոյ առաջարկութեամբ Կ. Սիլիոսի սահմանելոյ՝ի

բդեշխութիւն, զորոյ իշխանութիւն և զմահ յիւրում տեղւոջն պատմեցից, յարեան ատենակալք ծերակուտին, և խնդրեցին նորոգել զկինկեան օրէնս ընդդէմ վարձուց և պարգևաց 'ի պաշտպանութիւն դատից։

Զ. Եւ 'ի բողոքել ըմբռնելոցն 'ի նախատինս յայս՝ Սիլիոս ոսոխ Սուիլլոսի պինդ եկաց, զնախնեացն փաստաբանից 'ի դէմն ածեալ զօրինակ, որք զհամբաւառ յապայս՝ համարէին գեղեցիկ քան զամենայն վարձս Ճարտարիսօսութեան, և ասէր. Այպա թէ ոչ, պղծի անարգ զօշաքաղութեամբ վեհագոյնն 'ի գեղարուեստս, և ոչ անդրժելի պահի հաւատարմութիւն՝ ուր շահավաճառ մեծ ընդառաջ ելանէ. զի եթէ փաստաբանութիւն ոչ զոք Ճոխացուցանիցէ, նուազագոյն լիցին վէճք. զի թշնամութիւնք և ամբաստանութիւնք, ատելութիւնք և անիրաւութիւնք տածին 'ի փաստաբանից. զի որպէս զօրութիւն ախտից յաճախէ զվարձս բժշկաց, այսպէս և ժանտն այն ախտ ատենի՝ ածէ Ճոխութիւն փաստաբանից։ — Յիշ. շեցուցանէր զԿ. Այնիոս և զՄեսսալա, և յարդեաց զԱրրոնտիոս և զեսերնինոս՝ որ անստգիւտ վարուք և Ճարտարիսօսութեամբ 'ի ծայր փառաց ամբարձան։ Եւ 'ի խօսելն զայսոսիկ հանդերձելոյ բդեշխին, և 'ի հաւանել այլոց ընդ բանս նորա, իբրև պատրաստէր զՄիռ ընդդէմ օրինաղանցիցն, Սուիլլոս և Կոսսուտիանոս և այլք, որք ոչ ևս դատաստան՝ այլ պատիժ պատուհասի տեսանէին զառաջեաւ, դիմեցին առ ինքնակալն՝ խնդրելով հրաման խօսելոյ։

Է. Եւ յակնարկել ինքնակալին՝ ասեն. Իցէ՞ ոք յանդուգն այնպիսի, որ զայս յաւերժական համբաւոյ անձին խոստանայցէ. Ճարտարիսօսութիւն պատրաստէ ապաստան տկարութեան և պիտոյից, որպէս զի մի՛ ոք անօգնական 'ի փաստաբանից՝ հարստահարեսցի 'ի հզօրագունէ։ Բայց Ճարտարիսօսութիւն ոչ ձրի ստացանի. հարկ է թողուլ զառատնին գործս, և պարապել կարօտութեան այլոց. յոգունք զինուորութեամբ, այլք մշակութեամբ պաՃարեն զկեանս. ոչ ոք լինի իմիք 'ի խնդիր, չև զառ 'ի նմանէն նկատեալ շահ։ Այնիոս և Մեսսալա Ճոխացեալք 'ի պատերազմունս Անտոնիոսի ընդ Աւգոստեայ, Եսերնինոս և Արրոնտիոս՝ ժառանգք

հայրենի մեծութեանց, դիւրաւ կարէին առաքինանալ զվերհանձնութիւն. բայց առաջի կան օրինակք այլոց՝ քանի՛ վարձուք Պ. Կլաւդիոս և Կուրիոս սովոր էին փաստաբանել։ Իսկ մեք ատենակալք թարմատարք, որ կեամքս 'ի խաղաղաւէտ պետութեան, ոչ ինչ այլ՝ բայց զարգասիս խաղաղութեան խնդրեմք։ Ո՞ոք, 'ի պայծառացելոցն պատմուճանաւ խորհեսցի 'ի ռամիկն. 'ի բառնալ մրցանակաց բանասիրութեան, կորիցեն դպրութիւնք։ — Իմաստքս այսոքիկ թէպէտ և ոչ աղնուախոհք՝ սակայն ինքնակալին ոչ թուեցան մնոտիք. վասն որոյ չափ վարձուցն սահմանեաց մինչև 'ի բիւր սեստերտ, զաւելին քան զայն համարեալ 'ի հարստահարութիւն։

Ը. Ընդ այն ժամանակս Միհրդատ արքայ Հայոց, որ ըստ ասացելոցս յառաջագոյն[1] առ Կայիոս կեսար ածեալն էր, դարձաւ 'ի թագաւորութիւն իւր խրատուք Կլաւդեայ, վստահացեալ յօգնականութիւն Փարսմանայ եղբօր իւրոյ արքային Վրաց, որ գրեր առնա զաղմուկ Պարթևաց և զերկպառակութիւն պետութեան յընտրութիւն թագաւորի, և զիրաց աշխարհին մնալ անխնամ։ Բանզի տաղտկացեալ նոցա յանգթութեանցն Խուտարզայ՝ որոյ և զեղբայր իւր զԱրտաւան և զկին նորա և զորդի սպանեալ էր, և խիթացեալ՝ զի և զայլս յազնուականաց 'ի մահ մատնեսցէ, հրաւիրեցին առ իւրեանս զՎարդան՝ զայր քաջայանդուգն. որոյ զերիս հազար ասպարէզս հատեալ անցեալ յաւուրս երկուս, 'ի վերայ եհաս Խուտարզայ. և ահաբեկեալ հալածեալ զնա, տիրեաց անդանդաղ գաւառացն շուրջանակի։ Սելևկիացիք ևեթ ոչ յանձն առին նուաճել ընդ նովաւ. և զայրացեալ Վարդանայ ընդդէմ նոցա, որք և 'ի հօրէ իւրմէ վտարանջեալն էին, խիզախեաց յանդգնութեամբ 'ի պաշարումն հզօր քաղաքի նոցա՝ որ պատսպարէրն գետով և պարսպաւ, և պաշարապինդ ամրացեալ էր։ Բայց Խուտարզ օգնականութեամբ Տայոց և Վրկանաց զօրացեալ՝ յաւել 'ի պատերազմ. և հարկ եղև Վարդանայ մեկնել 'ի բաց 'ի Սելևկիոյ, և բանակել 'ի դաշտս Բակտրիոյ։

1 Իմա 'ի Կորոսոպեալ Գիրոն։

Թ. Մինչդեռ արևելից բաժանեալ էին զօրութիւնք, և 'ի տարակուսի կային ազգք, եգիտ Միհրդատ պարապ մնանելոյ 'ի Հայաստան, նուաճեալ զօրութեամբ հռովմէական զօրականին զամուրս բարձունս, և առպատակութեամբ Վրաց ընդ դաշտս. զի ոչ կարացին Հայք զդէմ ունել նմա յետ պարտութեան Դեմոնաքսայ զօրավարին իւրեանց՝ դիմագրաւելոյ 'ի պատերազմ։ Կոտիշ արքայ փոքուն Հայոց, ընդ որում միաբանեալ էին ոչ սակաւք յաւագանւոյն, յամեցոյց և եթ գյաղթութիւնն. այլ 'ի հրովարտակէ ինքնակալին ստիպեալ՝ յարեցան ամենեքեան 'ի Միհրդատ, յորմէ սարտուցեալն էին 'ի սկզբան թագաւորութեանն վասն տարապարտ բռնութեան նորա։ Իսկ զօրավարք Պարթևաց 'ի կազմեն իւրեանց ընդդէմ միմեանց 'ի մարտ, յանկարծակի 'ի լուր դաւակցութեան ժողովրդոց իւրեանց՝ զոր Խուտարզ զեկոյց եղբօր իւրում՝ խորհեցան յուխտ խաղաղութեան գալ ընդ միմեանս. այլ 'ի հանդիպելն իրերաց՝ երկմտեալ զառաջինն, ապա աջ խաղաղութեան ետուն միմեանց, և երդուան 'ի վերայ դիցն բագնաց՝ խնդրել զվրէժ 'ի թշնամեաց, և ձեռնտու օգնական լինել միմեանց. զի լաւագոյն համարէին ունել Վարդանայ զթագաւորութիւնն. վասն որոյ Խուտարզ, առ 'ի չտալոյ կասկած, մեկնեցաւ գնաց 'ի խորս Վրկանաց։ Եւ 'ի դառնալ Վարդանայ՝ անձնատուր եղև Սելևկիա յեօթներորդում ամի ապստամբութեանն, ոչ առանց նախատանաց պարթևական պետութեան, վասն չկարելոյ նորա յաղթել այնքան ժամանակս քաղաքի միոյ դիմակալութեան։

Ժ. Յետ այսորիկ առեալ Վարդանայ զամուր ամուրս գաւառս, պատրաստէր նուաճել անդրէն զՀայս. բայց Վիբիոս Մարսոս՝ կուսակալ Ասորւոց՝ արգել զնա, սպառնացեալ ելանել ընդդէմ նորա 'ի մարտ։ Յայնժամ և Խուտարզ՝ որ ստրջացեալն էր ընդ հրաժեշտ իւր 'ի թագաւորութենէ, կոչեցեալ յաւագանւոյն՝ որում խստագոյն է ծառայութիւն 'ի խաղաղութեան, և զօրաժողով լեալ՝ խաղաց ընդդէմ նորա Յերինդ գետ, ուր սաստիկ մղեցաւ մարտ առ 'ի խափանել զանցս նորա։ Եւ յաղթող եղեալ Վարդան, նուաճեաց հզօր զինուք զազգս մինչև ցեղը Ամնտեայ գետոյ՝ որ

բաժանէ զՏայս յԱրեաց աշխարհէն։ Անդ զկայ առին զէնք նորա. քանզի Պարթևք և 'ի յաղթելն հրաժարէին 'ի հեռաստանեայ պատերազմաց. վասն որոյ ա-խոյեանս կանգնեալ անդ Վարդանայ, վկայս՝ զի ոչ զք յարշակունեաց յառաջ քան զինքն հարկատու իւր ա-րարեալ էր զազգն զայնոսիկ, դարձաւ փառօք մեծաւ յաշխարհ իւր։ Ա.յլ դժնէագոյն և դժոխրմբեր ևս յետ այնորիկ գտաւ հնազանդելոց իւրոց. վասն որոյ դարան կենաց նորա գործեալ՝ սպանին զնա 'ի հեծա-նելն նորա յորս անկասկած։ Ա.յսպէս մեռաւ Վարդան 'ի տիս պատանեկութեան. այլ եթէ գուն գործեալ էր նորա սիրելի լինել իւրոցն, որպէս ահարկու լեալ էր թշնամեաց, սակաւք յառաջնոց թագաւորաց գլէին զնա փառօք։ Ի մեռանել Վարդանայ խռովեցան Պար-թևք, վարանեալ թէ զո՞ կացուսցեն թագաւոր։ Բա-զումք կամէին զԽուտարզ, ոմանք զՄիհրդատ զորդի Փրաատայ՝ որ 'ի պատանդի կայր առ մեզ։ Զօրացաւ Խուտարզ, և թագաւորեաց. բայց խստութեամբն իւ-րով և զեղխութեամբ՝ հարկ արար Պարթևաց առա-քել 'ի ծածուկ աղերս առ ինքնակալն, արձակել զՄիհրդատ 'ի հայրենի աթոռ իւր։

ԺԱ. Ա.ռ նովին բդեշխիւք, յուր հարիւրերորդի ա-մի շինութեան քաղաքին Հռովմայ, վաթսուն և չո-րիւք ամաք յետ կատարելոյ Ա.կոստեայ զդարագլուխ տօնս խաղուց, վերստին էած զայնոսիկ Կլաւդիոս 'ի հանդէս։ Ոչ յաւելումՀ վասն որոյ իրաց եկին յայն ինք-նակալքն երկոքին, զի ասացի զայսմանէ ըստ բաւա-կանին ընդ իրս Դոմիտիանոսի կայսեր. քանզի և նա հանդիսացոյց զտօնսն դարագլուխս, յորս գտայ և ես ինքն որպէս մի 'ի հնգետասանապետիցն քրմաց, և իբրև մի յատենակալաց։ Ոչ 'ի պարծանս ինչ անձին զայս յիշատակեմ. այլ առ 'ի յայտ առնել՝ զի 'ի վաղն-ջուց հետէ ոստիկանութիւն խաղուցն այնոցիկ անկ էր հնգետասանապետաց. և դատաւորաց առաւելա-պէս էր գործ՝ զարարողութիւնս կատարել։ Ի խաղս կրկիսին, ուր Կլաւդիոս բազմէր հանդիսադիր, պա-տանիք աղատորդիք հեծեալք՝ 'ի տեսիլ ածէին զարշա-ւանս տրովացուց. ընդ նոսա էին և Բրիտանիկ որդի ինքնակալին, և Լ. Դոմիտիոս՝ որ ընդ հուպ եղև որ-

դեգրութեամբ ժառանգ ինքնակալութեան, յորջորջեալ Ներոն. անդ սաստկագոյն աղաղակ ռամկին 'ի տեսիլ Դոմիտեայ՝ համարեցաւ գուշակութիւն աւետաւոր։ Համբաւէր եւ՝ վիշապաց 'ի մանկութեան նոր բա երևեալ առ նմա 'ի պահ, հրաշապատում ըստ արտաքնոցն առասպելաց յօդեալ. և Ներոն, որ ոչն սիրէր պաճուճաբանել զանձնէ, սակայն պատմէր՝ իժ 'ի սենեկի իւրում երևեալ։

ԺԲ. Այս նորա սիրելութիւն ժողովրդեան յառաջ գայր 'ի յիշատակէ Գերմանիկեայ, որոյ Դոմիտիոս յետին մնացեալ էր զաւակ արու. և գութ Ագրիպպինայ մօր նորա յաճախէր առ նա՝ ըստ յաւելուլ անգթութեանն Մեսսալինայ։ Սա միշտ իսկ ընդ նմա ոխերիմ, և յայնժամ ոխերմագոյն, գտանէր արդեաք յանցանս 'ի նմա և չարախօսս ընդդէմ նորա, եթէ ոչ խափանէր 'ի մոլեգին իմն տուփանաց. զի այնպէս բորբոքեալ էր 'ի սէր Կ. Սիլիոսի՝ գեղեցկագունին յամենայն արքունս Հռովմայ, մինչև զՅունիա Սիլանա զաղնուատոհմ ամուսին նորա հալածել 'ի բաց՝ առ 'ի տիրել նմա աղատօրէն։ Ցեսանէր Սիլիոս զեղեռնն և զվտանգ, և անշուշտ առաջի իւր կորուստ՝ եթէ ընդդէմ դառնայր. վասն որոյ յուսով պատրելոյ զինքնակալն, և հրապուրեալ 'ի մեծամեծ պարգևաց, 'ի վայելս մերձակայիցն՝ մեղմէր զերկիւղ հանդերձելոցն։ Իսկ Մեսսալինա առանց ծածկութեան յաճախէր համարձակ առ Սիլիոս, բազմութեամբ սպասաւորաց զհետ նորա ամենայն ուրեք երթեալ, առատաձեռնելով նմա պատիւ և գանձս. և որպէս թէ անդստին ինքնակալէր, տեսանէին առ հնացելումն ծառայք և ձերբազատք և սպասք արքունիք։

ԺԳ. Բայց Կլաւդեայ անտես արարեալ զառտնին անկարգութիւնս, զհամարակալի վարէր պաշտօն. կշտամբէր խիստ հրովարտակաք զհամարձակութիւն ժողովրդեան 'ի Թատերս, ուր թշնամանեալ էին զՊոմպոնիոս երբեմն բդեաշխ՝ որ տիկնայց ակամաւորաց նախատինս արարեալ էր 'ի Թատերգութիւնս իւր։ Սանձահարեաց նա օրէնադրութեամբ և զանգթութիւն վաշխառուաց, արգելեալ նոցա չտալ աղատորդւոց արծաթ 'ի փոխ՝ պայմանաւ հատուցանելոյ յետ մա-

հու հօր իւրեանց։ Էած և աղբիւրս ջուրց 'ի Հռովմ'ի սիմբրեան բլրոց. յաւել և տառս ինչ նորս հրատարակել, յայտ արարեալ զի և Հելլէն ալփաբետք ոչ միանգամայն 'ի լոյս ածեալ էին և կատարեալ։

ԺԴ. Զի 'ի սկզբանէ եգիպտացիք կենդանակերպ ձևովք զխորհուրդս մտաց յանդիման առնէին, որպէս է տեսանել 'ի յիշատակագիրս վաղեմիս դրոշմեալս 'ի վէմ. նոքա գտիչս դպրութեան զանձինս ընծայեցուցին, և ապա փիւնիկեցւոց՝ որ հզօրագոյնք էին ընդ ծովն ասեն ածեալ զայն յԵլլադա, և ստացեալ զպարծանս գիւտիցն՝ զոր 'ի նոցանէ ընկալեալն էին. զի Կադմոսի՝ աւանդէն զրոյցք՝ ածեալ անդր զդպրութիւն նաւուք փիւնիկեցւովք, և ուսուցեալ զայն Հելլենաց անգրագիտաց։ Այլք աւանդեն՝ Կեկրոպայ աթենացւոյ կամ Լինոսի Թեբացւոյ և կամ Պալամեդայ արգիացւոյ, յաւուրս պաշարման Տրովադայ, հնարեալ տառս վեշտասան, և ապա այլոց՝ մանաւանդ Սիմոնիդեայ՝ զայլսն յաւելեալ. իսկ Ետրուրացիք յԻտալիա՝ 'ի Դեմերատայ կորնթացւոյ, և Աբորիգենք յԵւանդրեայ արկադացւոյ ընկալան, որպէս և ձևք իսկ լատինական տառիցն նմանք են հելլենականացն վաղեմեաց։ — Մերքն ևս նուազունք էին 'ի սկզբան, և ապա յաւելան։ Ըստ սմին օրինակի և Կլաւդիոս յաւել տառս երիս, որք յաւուրս ինքնակալութեան նորա 'ի կիր արկեալ, և ապա թողան 'ի բաց, որպէս է տեսանել ցարդ 'ի տախտակսն պղնձիս եղեալ 'ի հրապարակս և 'ի մեհեանս, առ 'ի հրատարակել ժողովրդեան զվճիռս ծերակուտին։

ԺԵ. Յետ այսորիկ խորհուրդ 'ի մէջ էարկ Կլաւդիոս յատեան ծերակուտին յաղագս հաւահմայից, զի մի՛ ապախտ եղեալ խափանեսցին վաղնջուց հրահանգք պահեալք յԻտալիա. Յաճախ, ասէ, հասարակապետութիւնն 'ի ժամանակս արկածից դիմէր առ հաւահմայս, և խորհրդով նոցա նորոգէին արարողութիւնք, և կարգաւորագոյն պահէին առ յապայ։ Աւագանին Ետրուրիոյ, ինքնակամ կամ ծերակուտին յորդորմամբ, պահեալ զգիտութիւնն՝ յորդւոց յորդիս աւանդէր. իսկ զարդիս յանհոգութենէ հասարակաց յամենայն իսկ գիտութիւնս, և 'ի զօրանալոյ նանրահաւատ կրօնից արտաքնոց, ապախտ առնի։ Այպաքէն

յաջողէ արդ մեզ ամենայն. այլ'ի դոհութիւն մար-
դասէր դից՝ պարտիմք չարկանել'ի մուռացմանս'ի ժա-
մանակի յաջողութեան զսրբազան արարողութիւնս,
որ պաշտին'ի ձախողութեան։ Եւ սահմանեաց ծե-
րակոյտն դատել քրմապետաց՝ որ ինչ պարտն էր'ի
հրահանգս հաւահմայից պահել և հաստատել։

Ժ.Զ. Ի նմին ամի խնդրեցին քերուսկացիք'ի Հռով-
մայ Թագաւոր. զի'ի քաղաքական պատերազմունս կո-
ղուսեալ էր նոցա ամենայն աղատանին, և յարքունի
աղգատոհմն մնացեալ էր Իտալիկ միայն՝ որ կայր'ի
Հռովմ։ Աղգատոհմ սորա սերեալ էր'ի Փլաւիոսէ յեղ-
բօրէ Աւրմինեայ, և մայր սորա'ի Կատտումերեայ յիշ-
խանէն Կատտայ. և ինքն հասակագեղ, աջողակ'ի
զէն և'ի հեծելութիւն, կիրթ'ի հայրենին և'ի մեր
սովորութիւնս։ Եւ նմա ինքնակալն գանձս և թիկ-
նապահս, և յորդորեաց զնա դառնալ արիաբար'ի
փառսն հայրենիս։ Սա եղև առաջին, որ ծնեալ'ի
Հռովմ, և կացեալ անդ ոչ'ի պատանդ՝ այլ իբրև քա-
ղաքացի, չոգաւ այլուր'ի Թագաւորութիւն։ Ի սկզ-
բան Թագաւորութեանն եղևն ա հաճոյ գերմանաց-
ւոց, մանաւանդ զի ազատ յամենայն կուսակցութենէ՝
Թագաւորէր արդարակորով անաչառութեամբ. դի-
մէին առ նա ամենեքեան, և մեծարէին զնա. իսկ
ինքն մարդասիրութեամբ և չափաւորութեամբ՝ ոչ
ումեք լինէր դժպհի. բաղում այն էր զի և'ի դիներ-
բուս և'ի զեղխութիւն տայր զանձն՝ առ'ի հաճոյ լի-
նել խուժադուժացն։ Վաղ իսկ համբաւ նորա ծա-
ւալեցաւ առ սահմանակիցս, վաղ և'ի հեռաստա-
նեայս ծանուցաւ՝ որք կասկածէին'ի զօրութենէ նո-
րա. և խռովարարք՝ որք յաղմուկս աշխարհին զօրա-
ցեալ էին՝ մեկնեցան զնացին առ դրացի աղինս, գու-
ժելով զկորուստ նախնի ազատութեան Գերմանիոյ և
զյաղթանակ Հռովմայ, և ասէին. Ո՞չ զոք ուրեմն ածէն
հայրենիք մեր'ի լոյս արժանի գերագոյն իշխանու-
թեան, և հա՞րկ էր զաւակին Փլաւեայ լրտեսի ամ-
բառնալ կալ'ի վերայ ամենեցուն։ Ի զուր է կոչել
զանուն Աւրմինեայ'ի վերայ որդւոյ, որ յերկիր թշնա-
մեաց զարգացեալ՝ գայ Թագաւորել. երկիւղալի է
այր՝ որոյ դաստիարակութիւն, ծառայութիւն, տա-

բազ կենաց և ամենայն ինչ ապականեալ է յօտարու-
թեան. եթէ բերէ իսկ յանձին Իտալիկ ոգի հայրենի,
սակայն ոչ ոք առաւել քան զՀայը նորա էած զէն ո-
խերիմ ընդդէմ հայրենեաց իւրոց և թերափիլ։ —

ԺԷ. Սոքիմբք և այսպիսի բանիւք արարին ընդդէմ
Իտալիկեայ զօրաժողով մեծ. բայց և նորա ոչ ինչ
նուազագոյնք էին կուսակիցք, որք ասէին. Ոչ եթէ
բռնի գայ նա առ մեզ, այլ կոչեցեալ'ի մէնջ. ազնուա-
կանութեամբ գեր 'ի վերոյ է քան զամենեսին. զքա-
ջութեան նորա տացէ մեզ փորձ զՀաւատիս՝ թէ
իցէ՞ նա արժանի հօրեղբօր իւրում Արմինեայ, և Կատ-
տումերի հաւոյ իւրում. և ոչ Հայը դորա գտանի ամ-
թապարտ այնու՝ զի անդրժելի առ հռովմայեցիս կա-
լաւ զՀաւատարմութիւն, զոր ըստ կամաց գերմանաց
ւոցս յանձն առեալ էր։ Ի զուր պատճառին զազատու-
թիւն խռովարարք, որք ընտանեաց իւրեանց անպի-
տանք և փնասակարք Հայրենեացն՝ 'ի հերձուածս և եթ
զայս իւրեանց հաստատեալ էին։ — Ի լուր բանիցս այսո-
ցիկ՝ աղաղակ ցնծութեան եբարձ ամբոխն, և պատե-
րազմ մեծ եղեալ բարբարոսացն ընդ միմեանս, յաղ-
թեաց թագաւորն։ Բայց յաջողութեամբս այսուիկ
գոռոզացեալ, զառածաւ նա 'ի բռնաւորութիւն. և
հալածեալ յիւրոցն, հաստատեցաւ անդրէն օգնակա-
նութեամբ լոմբարտացւոց. սակայն յաղթութիւնք
նորա և պարտութիւնք տկարացուցին զքերուսկացիս։

ԺԸ. Զայնու ժամանակաւ քաւկացիք՝ ազատք 'ի ներ-
քին խռովութենէ, և համարձակեալք մահուամբն
Սանկուինեայ, մինչ չև հասեալ Կորբուլոնի՝ ասպա-
տակ եռուն 'ի ստորինն Գերմանիա։ Զօրավար նոցա էր
Գաննասկոս յազգէ Կաննինեփաց. որոյ ընդերկար զի-
նուորեալ էր յօժանդակ գունդս մեր, և առաքինեալ.
բայց ապա դասալիք հինաբար ընդ ծով ասպատա-
կէր թեթև նաւուք, և աւար հարկանէր մանաւանդ
զծովեզերս բնակեալս 'ի գալլիացւոց, զորս գիտէր զի
էին ձոիք՝ այլ ոչ պատերազմողք։ Կորբուլոնի հասեալ
'ի գաւառ անդր, մեծաւ հայրենասէր նախանձու ա-
ռար իւր փառս. և փառաց նորա սկիզբն եղև պատե-
րազմն այն։ Ինքոյց զնաւսն պատերազմիկս ընդ Հռենոս,
և այլ նաւս՝ որպէս և մարթէրն՝ ընդ լիճս և ընդ փոսս,

և ընկղմեաց զնաւակս Թշնամեաց։ Եւ հալածեալ զՊանանասկոս, իբրև ամրացաւ բաւականապէս՝ զլեգէոնս պղերգացեալս 'ի Ջանից և 'ի վաստակոց, և պարապեալս աւարառութեան, դարձոյց 'ի նախնի հրահանգս՝ մի՛ մեկնել 'ի բանակէն, և մի՛ ինքնահրաման խաղալ 'ի մարտ։ Զգուշութիւնք, պահք, և սպասք տունջենայինք և գիշերայինք կատարէին այնուհետև 'ի բանակին. զերկուս 'ի զինուորաց ասեն պատուհասեալ նորա, վասն միոյն անզէն և միւսոյն սուսերաւ ևեթ աշխատ լինելոյ 'ի պատնէշս։ Կարի էր խստութիւնն, թերևս և ստայօդեալ, սակայն սաստիկ հրահանգաց զօրավարին յայտարար. ուստի 'ի միտ առնուլ է զանողոքելի և զանյողդողդ սաստ նորա 'ի յանցանս ծանուցս, որ այնքան խիստն համարէր 'ի թեթև յանցուածս։

ԺԹ. Բայց երկիւղիս այսորիկ այլ և այլ եղեն ազդեցութիւնք 'ի զօրականն և 'ի Թշնամիս. զի 'ի մերսն յաւելաւ արիութիւն, իսկ բարբարոսացն ընկճեցաւ վայրենութիւն։ Եւ փրիսացիք Թշնամիք միշտ կամ կասկածելիք յետ պարտութեանն Լ. Ապրոնիոսի, ետուն պատանդս, և ամիսիեցան 'ի սահմանս, զորս եդ նոցա Կորբուլոն։ Նոյն ինքն կացոյց նոցա ծերակոյտ և ատեան և օրէնս. և վասն ունելոյ զնոսա 'ի հնազանդութեան՝ կանգնեաց յերկրի անդ ամրոցս, և արձակեաց պատուիրակս առ մեծամեծս քաւկացւոց՝ փութացուցանել զնոսա 'ի հնազանդութիւն, և դարան գործել կենաց Գանանասկեայ, որպէս օրէն էր և արժան ընդդէմ հաւատադրուժ փախստէի։ Այլ սպանութեամբ նորա գրգռեցան քաւկացիք, և Կորբուլոն արկ 'ի նոսա լուցկիս ապստամբութեան։ Բայց համբաւ իրացս այսոցիկ, զոր բազումք ուրախութեամբ լուան 'ի Հռովմ, ոչ հաճոյ թուեցաւ ոմանց. զի ասէին. Ընդէ՞ր իցէ գրգռել զԹշնամին, զի 'ի ձախողել իրացն՝ տուժի հասարակապետութիւնն, իսկ 'ի յաջողելն՝ երկիւղալի է 'ի խաղաղութեան այր երևելի, և վատասիրտ թագաւորի ծանրատաղտուկ։ — Վասն որոյ արգել Կլաւդիոս՝ մի՛ ևս բռնանալ ընդդէմ գերմանացւոց. և հրամայեաց դարձուցանել յայսկոյս Հռենոսի զամենայն զօրս։

Ի. Կորբուլոնի վաղ իսկ բանակեալ էր յերկրի թըշ-
նամեաց 'ի հասանել հրովարտակի ինքնակալին. և
թէպէտ վասն անակնկալ հրամանին բազում այլ ինչ
խորհուրդք 'ի սիրտ նորա ելանէին, երկիւղ 'ի ցասմա-
նէ ինքնակալին, թշնամանք 'ի բարբարոսաց, այսպն
կատականաց յօժանդակ զօրուէն, սակայն զայս միայն
ասաց. Երանի առաջնոց զօրավարացն հռովմայեցւոց.
և ետ հարկանել փող 'ի նահանջ։ Այլ առ 'ի չթողուլ
անգործ զզօրականն, հրամայեաց փոս հատանել ընդ
երկայնութիւն քսան և երից ասպարիզաց՝ 'ի Մոսայ
գետոյ մինչև 'ի Հռենոս, զի յուռնուլ Ովկիանու՝ լեցի
'ի ջրադարձ։ Բայց թէպէտ և արգել Կլաւդիոս Կոր-
բուլոնի զպատերազմն, սակայն չնորհեաց նմա զշուք
յաղթանակի։ Եւ յետ ոչ բազմաց ինչ աւուրց՝ զնոյն
պատիւ ընկալաւ և Կուրտիոս Հռուփոս, վասն գտա-
նելոյ իւրոյ արծաթահատս 'ի մատիակեան երկրի։
Դուշնաքեայ ինչ եղև անտի օգուտ, և ոչ ընդերկար.
այլ լեգէոնացն աշխատութիւն բազմավտանգ, պեղե-
լոյ անցս ընդ երկրաւ, և բանալոյ առուս ստորեր-
կրեայս՝ որ 'ի բացի իսկ ծանր է վաստակ. վասն որոյ
զօրքն վաստակաբեկք, որք յայլ և այլ գաւառս վա-
ղեին յայսպիսի աշխատանս, արարին աղերսագիր յա-
նուն բանակին գաղտ առ ինքնակալն, տալ զպատիւ
յաղթանակի զօրավարաց՝ չև յղեալ զնոսա 'ի բանակ։

ԻԱ. Զտոհմէ Կուրտիոսի Հռուփեայ, զոր ոմանք
որդի սուսերամարտի ուրուք ասացին լեալ, ոչ սուտ
համարիմ զբանս նոցա, այլ հաւատարիմ ևս առնել
զայն ամաչեմ։ Ի պատանեկան հասակի՝ ընդ գանձա-
պետին, որում Ափրիկէ եղեալ էր 'ի վիճակ, չոգաւ 'ի
քաղաքն Ադրամետոն. և զմիջաւուրք 'ի ձեմելն իւ-
րում միայնակ ընդ գաւիթս անմարդիս՝ երևեցաւ նմա
կերպարան կնոջ հսկայակերպ, և լսելի եղև բարբառ.
Հռուփէ, հասանէ քեզ գալ 'ի գաւառ այսր փոխանակ
բդեշխի։ Ի հմայից աստի քաջայոյս դարձաւ 'ի Հռովմ,
և առատաձեռնութեամբ բարեկամացն և սրութեամբ
հանձարոյ հասեալ գանձապետութեան, և ընդ ա-
զատորդիս թեկն ածեալ զաւագութեան, ընտրե-
ցաւ դատաւոր յինքնակալէն, որ զանտոհմութիւն նո-
րա աշնուացոյց՝ ասելով. Որդի վաստակոյ իւրոյ է դա։

Եւ եկեաց նա մինչև 'ի խոր ծերութիւն, ընթող աւագաց, գոռող ընդ ռամկին, անհամբոյր ընդ հաւասարակիցս. և բդեաշխ կացեալ՝ ընկալաւ զշուք յաղթանակի, և ապա յետոյ զկուսակալութիւն Յափրիկէ. և անդ մեռաւ, գալով չափ հմայիցն գուշակութեան։

ԻԲ. Յաւուրսն յայնոսիկ ասպետ ոմն հռովմայեցի էր. Նովիոս անուն, առանց ուրուք զպատճառս իրացն գիտելոյ, որ և ոչ յետոյ եկն 'ի յայտ, գտաւ սուսերաւոր 'ի խմբի եկաւորացն յողջոյն ինքնակալին։ Ի խոշտանգանս հարցափորձի խոստովան եղև նա զյանցանսն, այլ ոչ մատնեաց զհամախոհս իւր, եթէ էին. զի և այն ոչ է գիտելի։ Զոր Նովիոն բդեշխիւք Պ. Դոլաբելլա առաջարկեաց ածել ամի ամի 'ի հանդէս ըզտեսարան սուսերամարտկաց՝ տրուվք հասելոցն 'ի գանձապետութիւն. մրցանակ էր այս՝ առաքինութեան առ նախնիս, և քաղաքացւոց ամենեցուն առաքինեաց օրէն էր խնդրել զաւագութիւն. չէր իսկ հասակ սահմանեալ առ այս, մարթ էր և 'ի մանկութենէ կալ բդեաշխ կամ իշխանապետ։ Յաւուրց իշխանութեան արքայից սահմանեցան գանձապետք, որպէս յայտ է 'ի ժողովրդական օրինաց՝ զորս նորոգեաց Բրուտոս. իրաւունք ընտրութեան նոցա՝ անկ էին բդեշխից մինչև 'ի ժամանակս՝ յորում ժողովուրդն սկսաւ տալ զայն ևս պատիւ։ Զառաջին գանձապետք կացեալք 'ի նմանէ՝ եղեն Վալերիոս Պոտիտոս, և Եմելիոս Մամերկոս, վաթսուն և երիւք ամօք զկնի հալածման Տարկուինեանց. և պարտ էր նոցա աջակից լինել զօրավարաց 'ի պատերազմի։ Ապա 'ի յաճախել գործառնութեանց՝ յաւելան այլ ևս երկուք 'ի պէտս յանձանձանաց իրաց քաղաքին. և ապա կրկնապատկեցաւ թիւ նոցա 'ի յաւելուլ գաւառաց 'ի տուրս՝ զորս հաստուցանէր Իտալիա. և ապա յաւել Սիլլա օրինադրել քան գանձապետս յօժանդակութիւն ծերակուտին, որում տուեալն էր դատել զդատաստանս։ Եւ 'ի դառնալ իսկ իրաւանց դատաստանի յասպետս, գանձապետութիւն ըստ վաստակոց կամ ըստ շնորհաց պարգևէր ձրի մինչև ցօրինադրութիւնն Դոլաբելլայ, որով գոգցես իմն 'ի վաճառ ածէր այն։

ԻԳ. Ի ժամանակի, յորում կային բդեաշխք Սիլլա

Վիտելլիոս և Լ. Վիսպտանոս, եղև խնդիր 'ի ընուլ ըզ-
թիւ ատենակալաց ծերակուտին։ Գլխաւորք 'ի բնակ-
չաց Գալլիոյ՝ որ Վարսաւոլն կոչէր, որոց 'ի վաղ ժա-
մանակաց էին դաշինք ընդ Հռովմայեցիս, և իրաւունք
քաղաքակցութեան, ցանկային հասանել աւագու-
թեանց 'ի Հռովմ։ Բազում և պէսպէս բանք եղեն զայս-
մանէ. և վէճք 'ի լուր ինքնակալին յուզեցան, զի ա-
սէին. Զէ և չէ Իտալիա այնչափ ներգեւեալ, զի և ոչ
ծերակոյտ պատրաստել կարասցէ Հռովմայ. բաւէին
երբեմն բնիկք քաղաքին ընդ ազգակիցս, և ոչ ամ-
թապարտ գտաւ նախնին հասարակապետութիւն. յի-
շին ցարդ պանչելիք փառաց և առաքինութեանց, որ
ընդ վաղնջուց սովորութեամբն երևեալ։ Ո՞չ շատ
իցէ մտանել Վենետաց և Ինսուբրաց 'ի ծերակոյտն.
պարտ ինչ իցէ մուծանել անդր և զամբոխս այլոց ազ-
գաց գողցեալս գերելոց։ Որոմ պատուոյ այսուհետև
իցէ ակնկալել ինացորդի ազատանոյն և ատենակա-
լաց չքաւորաց Լատինի. գրաւեսցեն զամենայն ձոխք,
որոց հաւք և նախահաւք՝ զօրավարք ազգաց թշնա-
մեաց՝ հարին զինուք և զօրութեամբ զբանակս մեր, և
զդիւցազնն Յուլիոս պաշարեցին առ Ալեսեաւ։ Ա՛յսո-
քիկ դեռ ևս կրեալ թշնամանք. իսկ զի՞նչ, եթէ նո-
րոգեսցին յիշատակք կործանման 'ի նոցանէ Կապի-
տոլին և բագնին՝ վայելելով նոցա յանուն հռով-
մէական, զօրէնս պատուոյ և զշուք աւագանոյն թըշ-
նամանեալ։ —

ԻԳ. Ա՛յսոքիւք, և սոցին սակի բանիւք, ոչ համոզե-
ցաւ ինքնակալն. այլ հակառակ կացեալ, կոչեաց զծե-
րակոյտն յատեան, խօսեցաւ անդ և ասէ. Նախնիք իմ,
յորս նախնագոյն եկաց Կլաւսոս, ազգաւ սաբինացի, և
'ի նմին աւուր ընկալաւ 'ի Հռովմ և յազատանին, յոր-
դորեն զիս՝ ըստ օրինակի իւրեանց վարել զհասարակա-
պետութիւնն, ընդունելով որ ինչ այլ ուրեք իցէ գե-
ղազանց։ Ոչ անգիտանամ՝ զի զՅուլեանս՝ Ալբա, զկո-
ռունկեանս՝ Կամերիոն, զՊորկեանս՝ Տուսկուլոն, և զի
մի առ հինս լիցուք 'ի խնդիր, Ետրուրիա, Լուկա-
նիա և Իտալիա առ հասարակ ետուն ատենակալս ծե-
րակուտին. իսկ յընդարձակել սահմանաց աշխարհիս
մինչև ցԱլպիս, ոչ ևս ոմանք՝ այլ ազինք և գաւառք

լայնածաւալք յանուն մեր գրեցան, և անշարժ առանին
եղև մեզ խաղաղութիւն. ընդդէմ արտաքնոց հզօրա-
ցեալ գտաք՝ յընդունել 'ի քաղաքացիս զազգս բնա-
կեալս յայնկոյս Պադոսի, յորժամ պատճառանօք սրփ-
ռելոյ լեգէոնաց մերոց ընդ աշխարհ ամենայն՝ զպա-
տերազմողս հզօրս գաւառաց յաւելաք 'ի նոսա, պար-
տասելոյ ինքնակալութեանս 'ի Թիկունս հասեալ։
Ստրջացաք արդեօք ընդ գալուստ Բալբեանց 'ի Սպա-
նիոյ, և այլոց արանց ոչ ինչ ընդհատ երևելեաց 'ի
նարբոնեանն Գալլիոյ։ Թոռունք նոցա էն 'ի միջի
մերում, և սէր նոցա ընդ հայրենիս մեր ոչ 'ի ստորու-
քան զմերս է։ Ընդէ՞ր սպարտացիք և աթենացիք՝
հզօրք 'ի զէն՝ կործանեցան, բայց զի մերժեցին ըզ-
պարտեալս որպէս օտարս. այլ հիմնադիր մեր Հռո-
մուլ այնու իմաստութեամբ վարեալ, զի զազգս բա-
զումս՝ երբեմն թշնամիս իւր՝ արար ապա քաղաքա-
կիցս. և եկք 'ի վերայ մեր թագաւորեցին։ Ոչ նոր
ինչ՝ 'ի մէնջ, որպէս խաբին բազումք, որդիք ձերբազա-
տից յաւագութիւնս 'ի վեր մատուցանին. այլ որպէս
սովորութիւն էր և առ նախնի ժողովուրդ Հռովմայ.
և եթէ ընդ Սենոնս պատերազմեցաք, ո՞չ և վոլսկա-
ցիք և եկուացիք Ճակատամարտ ընդդէմ մեր յար-
դարեցին. պարտեցաք առաջի գալլիացւոց, այլ տուաք
և ետրուրացւոց պատանդս, և ընդ լծով սամնիացւոց
անցաք. սակայն յուշ ածեալ զամենայն պատերազ-
մունս մեր, և ոչ մի յայնցանէ վաղագոյն քան զգալլիաց-
ւոցն վՃարեցաւ. և յարատևակ այնուհետև և անդրը-
ժելի եղև մեզ խաղաղութիւն. հաւասարեցաք ընդ
նոսա և սովորութեամբք և արուեստիւք և խնամու-
թեամբք, և զոսկի և զգոյս իւրեանց մատուցանեն նոքա
մեզ առաւել քան զոր ինքեանք առանձին վայելեն։
Ամենայն ինչ, Հարք ատենակալք, որ վաղնջականք
արդ համարին, եղեն երբեմն նորք. ռամիկն ընդունելի
եղև յաւագութիւնս զհետ աւագանւոյ, Լատինք զհետ
ռամկին, և այլք յազգաց Իտալիոյ զհետ Լատինաց.
հնասցի և այս, և զոր արդ օրինակօք հաստատեմք,
ընդ օրինակս գրեսցի։ —

ԻԵ. Ատենախօսութիւն ինքնակալին հաստատեցաւ
վՃռով ծերակուտին. և նախ եդուացիք ընկալան զի-

բաւունս կալոյ ընդ ատենակալս ծերակուտին 'ի Հռովմ, վաղնջուց դաշնակցութեան նոցա տուեալ այս շնորհ, և նոցա միայն 'ի գալլիացւոց եղբայրակիցս ժող ղովրդեանն Հռովմայ անուանելոյ։ Ի նմին ժամանակի ամբարձ ինքնակալն 'ի համար պատրիկաց զերիցագոյնս 'ի ծերակուտէն, կամ որոց հարք լեալ էին ականաւորք. զի սակաւք մնային յազգատոհմից, զորս Հռոմուլեայ աւագս, և Լ. Բրուտոսի կրտսերս անուանեալ էր. և յայնցանէ իսկ, զորս Կեսարու յիշխանապետութեան իւրում կասիական օրինօք, և Աւգոստեայ ինքնակալի ըստ սենական օրինաց կացուցեալ էր։ Եւ այս ամենայն հաճոյ հասարակապետութեան վճիռք ընդունելի լինէին, խնդութեամբ մեծաւ համարակալին։ Քանզի նորա 'ի մտի եդեալ 'ի բաց վարել 'ի ծերակուտէն զչարահամբաւեալս, ձեռն էարկ 'ի հնարս ողոքանաց նորս՝ քան 'ի խստութիւն վաղ ժամանակաց, յորդորեալ՝ իւրաքանչիւր ումեք խորհել զանձնէ, և խնդրել ազատութիւն 'ի պաշտամանէն, և խոստանայր դիւրաւ գտանել նոցա զշնորհն՝ յառաջարկել զհրաժարեալսն 'ի միասին ընդ արտաքսեալս. զի 'ի խառնել դատաստանի համարակալաց ընդ ինքնակամ հրաժարելոցն՝ մեղմէին նախատինքն։ Վասն որոյ Վիպոտանոս բդեաշխ առաջարկեաց անուանել հայր ծերակուտին զԿլաւդիոս, զի սովորական իմն լեալ էր կոչել զնա հայր հայրենեաց, և նորաձև անուամբ մեծարել զնոր վաստակս նորա մատուցեալս հասարակապետութեան։ Բայց ինքնակալն արգել զառաջարկութիւն բդեշխին՝ որպէս զառանցանս մարդահաճութեան։ Եւ արար նա հանդէս համարոյ քաղաքացւոց, յորում էին վաթսուն բիւր և ինն հարիւր քառասուն և չորս հազար այր։ Մինչև ցայս վայր եղև անգիտանալ նորա զառանին նախատինս. զի յետ ոչ բազմաց ինչ աւուրց ծանուցեալ նորա զզառածանս կնոջն, ստիպեցաւ պատուհասել զնա. և այլ իմն յայնժամ խառնակ ամուսնութիւն եմոյծ յառագաստ իւր։

ԻԶ. Մեսսալինայ վաղ իսկ տաղտկացեալ յառձեռն պատրաստ շնութեանցն, յեղծագործութիւնս անսովորս անկղնտանայր. յայնժամ և Սիլիոս վարեալ յօրհասական ցնորից, և կամ վտանգաց 'ի վերայ հասելոց

խափան զայլ վտանգս վարկուցեալ, ստիպէր զնա հա-
մարձակել՝ զկեղծիս զամենայն 'ի բաց դնել, և ասէր.
Զիք մեզ հարկ կալ մնալ օրհասի ծերութեան ինքնա-
կալին, չէ իսկ միտս՝ 'ի վար արկանել անմեղաց զմնա-
րագիտութիւն. ընդդէմ յայտնի եղերանց պատսպա-
րան է յանդգնութիւն. յերկիւղէ հաւասար պատու-
հասի՝ մերձ կան մեզ գործակիցք։ Անկինս և անորդի՝
պատրաստ կամ ընդունել յորդեգիրս զԲրիտանիկ, ա-
ռեալ զքեզ 'ի կնութիւն. ոչ լոցի քեզ կորուսանել
զիշխանութիւնդ, յաւելցի քեզ 'ի վերայ այնորիկ և
ապահովութիւն 'ի գրաւէն կանխաւ զԿլաւդիոս, որ
ըստ դիւրութեանն 'ի զայրանալ՝ դիւրաւ ըմբռնի և
'ի հաղբս։ — Դ.ԺԿամակութեամբ լուաւ Մեսսալինա
զբանս զայսոսիկ. իբր ոչ եթէ առ սէր առն իւրոյ, այլ
զի մի գուցէ Սիլիոս՝ 'ի հասանելն գերագոյն իշխանու-
թեան՝ ոչ ևս յանձն առցէ ունել զնա շնութեամբ ընդ
իւր, և զեղեռնն՝ յոր հաւանէրն 'ի վտանգի՝ վարձատ-
րեսցէ յայնժամ ըստ արժանւոյն։ Սակայն անուն ա-
մուսնոյ գրգռեաց զիղձս նորա ծայրագոյն անկարգու-
թեամբն, որ անօրինելոց լրումն հեշտութեանցն է։
Ոչ ևս յամեաց. այլ 'ի գնալ Կլաւդոսի Ոստիա 'ի մա-
տուցումն զոհի, արար զհանդէս հարսանեացն։

ԻԷ. Ապաքէն առասպելք Թուեսցին ընթեռնլեաց,
հասանել ումեք յայն յանդգնութիւն 'ի քաղաքի՝ ուր
ամենեքեան գիտեն և ոչ լռեն, մանաւանդ հանդեր-
ձելոյ ումեք բդեշխի, ընդ տիկնոջ ինքնակալի, 'ի սահ-
մանեալ աւուր, առաջի վկայից կոչեցելոց յօրինա-
ւորութիւն որդւոց ծնանելեաց, աջ տալ միմեանց, և
տիկնոջն հաւատս հաւահմայիչն գուշակութեան ըն-
ծայել, ընդունել զքօղ հարսանեկան, զոհս դից մա-
տուցանել, բազմել ընդ կոչնականս, 'ի համբոյր և 'ի
գրկախառնութիւն գալ, և զգիշերն ամուսնական աղա-
տութեամբ անցուցանել ընդ նմա։ Այլ ոչ ինչ աստ առ
'ի զարմացումն գրեմ, զլուեալս ևեթ և զաւանդեալս
յերիցագունից անտի աւանդեմ։

ԻԸ. Ցարհուրեցան դրանիկք ինքնակալին, մանա-
ւանդ այնոքիկ՝ յորոց 'ի ձեռս էր իշխանութիւն, և 'ի
յեղափոխել իրաց աշխարհին՝ երկիւղ էր նոցա. ոչ 'ի
ծածուկ ինչ հծծանօք, այլ համարձակ բոլոր բար-

ձեալ՝ ասէին. Կատակերգուի առ ոտն կոխել զառաջաստ ինքնակալին՝ նախատինս ապաքէն ածէր նմա, այլ ոչ կործանումն. իսկ աստ պատանի ազատորդի, վայելչութեամբ գեղոյ, զօրութեամբ մտաց, և առաջիկայ բդեշխութեամբն, 'ի բարձրագոյն ինչ ակնկալութիւն խիզախէ. և չէ անգիտելի որ ինչ զՀետ այսպիսւոյ ամուսնութեան հասանէ։ Ա.յլ խէթք'ի սիրտս նոցա աներկբայապէս յուզէին՝ յածել զմտաւ զապշութիւն Կլաւդեայ, զգերութիւն նորա 'ի կամ կնոջն, և զմահուանս յոլովս 'ի հրամանէ նորա գործեցեալս։ Սակայն և յողդողդութիւն ինքնակալին քաջայոյս առնէր զնոսա. զի 'ի խելամուտ լինել նորա դժնդակ անօրէնութեանն՝ մարթ էր յառաջ քան զդատաստան տալ զմեղապարտն 'ի մահ։ Ա.յլ անդ իսկ էր վտանգ, եթէ լինէր նմա հրաման պատասխանի տալոյ վասն անձին, և եթէ փակէին իսկ լսելիք ինքնակալին 'ի յանձն առնուլ նորա զմեղանս։

ԻԹ. Բայց յառաջագոյն Կալլիստոս, այն՝ զոր 'ի պատմել իմում զսպանութիւն Կայիոսի կէսարու յիշատակեցի, և Նարկիս՝ որ Ապպիոսի նիւթեաց մահ, և Պալլաս՝ որ սիրելին էր յոյժ յայնժամ ինքնակալին, խորհուրդ արարին եթէ պաՀրտ էր գաղտ սպառնալեօք սարտուցանել զՄեսսալինա 'ի սիրոյն Սիլիոսի, լռեալ զայլն ամենայն։ Բայց յահէ վտանգին թէ գուցէ անձամբ զանձինս մատնեսցեն 'ի կորուստ, Պալլաս և Կալլիստ յետս կացին 'ի խորհրդոյն. Պալլաս առ վատասրտութեան, և Կալլիստ 'ի նախորդ արքունեաց ուսեալ՝ զի զգոյշ հնարիւք քան խստութեամբ յաջողէր իշխանութիւն։ Նարկիս և եթէ պինդ եկաց, և այսմ միայն ուշ եդեալ՝ զի մի Մեսսալինա 'ի բանից ուստեք լիցի իրազեկ ամբաստանութեանն, և 'ի վերայ հասցէ ամբաստանողացն, մնայր պարապոյ։ Եւ 'ի յամել ինքնակալին Ոստիա՝ որսացաւ զերկուս 'ի հարճից, որովք սովոր էր նա յաՀախագոյնս վարել, և առատ պարգևօք և յուսով առաւելագոյն իշխանութիւն ունելոյ նոցա 'ի մերժել տիկնոջն 'ի բաց, հաւանեցոյց զնոսա 'ի չարախօսութիւն։

Լ. Մի 'ի հարճից, որում անուն էր Կալպուրնիա, ընկալեալ ծածկաբար 'ի լուր ինքնակալին, և անկեալ

առ ոտս նորա, բողոք եբարձ զի Մեսսալինա ամուսնա-
ցեալ էր ընդ Սիլիոսի, և դարձեալ առ Կլէոպատրա՝ որ
կայր անդ և սպասէր նմա, եհարց թէ գիտէր ինչ. և՝ի
տալ նորա պատասխանի թէ այո, աղաչեաց Կալպուր-
նիա կոչել զՆարկիս։ Սա վասն անցեալոյն թողութիւն
խնդրեալ յինքնակալէն, զի լռեալ էր՝ի նմանէ զՈՃիրս
Վէտտիոսի և Պլանտեայ, յաւել. Եւ զարդիս իսկ ոչ
յամբաստանել գամ զնութիւնս, և ոչ առ՝ի ստի-
պել զքեզ պահանջել զարքունիս քո և զսպասաւորս
և զայլ ամենայն սպասս մեծութեան քո. թող վայե-
լեսցէ՝ի նոսին Սիլիոս, բայց զամուսին քո թողցէ, լուծ-
ցէ զդաշինս հարսանեաց։ Ո՞չ գիտիցես զապահարզան
քո, զի ժողովուրդն և ծերակոյտ և զօրք ականատես
եղեն հարսանեացն Սիլիոսի ընդ Մեսսալինայ. և եթէ
ոչ փութասցիս, տիրեսցէ Սիլիոս՝ի Հռովմ։

ԱԱ. Յայնժամ Կլաւդիոս կոչեաց զգլխաւորս՝ի բա-
րեկամաց իւրոց, և եհարց նախ զՏուրրանիոս համբա-
րապետ, և ապա զԼուսիոս Գետաս ատենական զօրա-
կանին հրամատար։ Իսկ որք շուրջ զնովաւն կային,
խրախուսեալ՝ի վկայութենէ նոցա, ելևէջս զմի-
մեամբք առնելով՝ աղաղակէին փութալ ինքնակա-
լին՝ի բանակն, և յարուցանել զատենական զօրս յա-
պահովութիւն անձին յառաջ քան զվրէժխնդրու-
թիւն։ Ա. ինպէս ահաբեկեալ էր Կլաւդիոս, որպէս
հաւաստի յետոյ ծանուցաւ, զի հարցանէր ստէպ՝ թէ
ո՞յերկոցունց, ի՞նքն թէ Սիլիոս էր ինքնակալ։ Հասա-
րակէին յայնժամ աւուրք աշնայնոյ, և Մեսսալինա ևս
քան զևս շռայլեալ՝ի զեղխութիւն, հանդէս յապա-
րանս իւր առնէր այգէկութոյ, զպատկեր Բաքոսի կանգ-
նեալ. կոխէին հնձանք, զեղուին գուբք. և կանայք
մաշկազգեացք կայթս տային հանգոյն աստուածա-
պարարկաց մոլելոց։ Իսկ ինքն հերարձակ, ՃՃՃելով
՝ի ձեռին զտէգ կարՃաբուն, և առ նմա Սիլիոս պսա-
կեալ բաղեղամբ, երկաքանչիւր կօշկաւորք, շարժէին
զգլուխս իւրեանց, շուրջ պար առեալ՝ի խենէշ ամ-
բոխէն։ Պատմեն՝ Վէտտիոսի Վալենտեայ ելեալ յայն-
ժամ շամբշօրէն՝ի մի՝ի ծառոյ բարձանց. և՝ի հար-
ցանել այլոց թէ զի՞նչ դիտիցէ, պատասխանի տու-
եալ՝ զի մրրիկ սաստիկ տեսանէր՝ի կողմանէ Ոստիոյ։

Տեսանէր իսկ արդեօք այնպիսի ինչ, և կամ յանկարծ ընդ շրթունս նորա վաղեալ բանք՝ գուժկանք իրացն լինէին։

ԼԲ. Ոչ ևս այնուհետև շշունջ տարտամ, այլ սուրհանդակք ամենուստ հասանէին, զի Կլաւդիոս իրաւեկ լեալ ամենայնի՝ գայր հասանէր 'ի վրէժխնդրութիւն։ Մեսսալինա փութացեալ անկաւ 'ի լուկուլլեան պարտէզս. իսկ Սիլիոս առ 'ի ծածկել զերկիւղ իւր՝ չոգաւ պարապել ատենական գործոց իւրոց։ Եւ 'ի խուսել այլոց 'ի փախուստ՝ 'ի վերայ հասին հարիւրապետք, և արկին զնոսա 'ի կապանս՝ ուր և գըտին զոք 'ի բացի կամ 'ի թագստեան։ Բայց Մեսսալինա 'ի ձախողել իրացն խռովեալ՝ խորհուրդ կալաւ, որպէս յայլ նուագս զերծեալն էր, դիմել առ ինքնակալն որպէս առ այր իւր՝ հրաման տուեալ և Բրիտանիկեայ և Ոկտաւեայ, դիմել և նոցա 'ի գիրկս հօր իւրեանց, և աղաչել զԱիբիդիա զերիցագոյնն յեստեան կուսանաց՝ խօսել ընդ քրմապետին, և ածել զնա յաղերս. և ինքն երիւք ևեթ ոմամբք, (զի յայն ամայութիւն 'ի վայրկեան ժամանակի էր հասեալ,) էանց հետի ընդ քաղաքն ողջոյն, և ելեալ 'ի սայլ՝ որով կրէին աղբիւք պարտիզաց, անկաւ յուղի ընդ Ճանապարհ Ոստիոյ. և ոչ ոք ողորմէր նմա՝ վասն դժընդակ եղերանցն փակելոյ զգութ ամենեցուն 'ի նմանէ։

ԼԳ. Ոչ ինչ նուազ բաբախէր և սիրտ ինքնակալին, ոչ վստահացեալ 'ի Գետաս զօրավարս յողդողդ՝ դիւրամէտ 'ի չարն և 'ի բարին։ Նարկիս, համախոհ ընդ այնոսիկ՝ որ երկնչէին իբրև զնա՝ յայտ արար, զի միակ հնար փրկութեան ինքնակալին էր յայնժամ՝ յանձն առնել 'ի մի յազատագրաց զհրամատարութիւն զօրականին, և խոստանայր ինքն իսկ յանձն առնուլ զայն։ Այլ զի մի 'ի գնալ ինքնակալին 'ի Հռովմ՝ Լ. Վիտելլիոս և Պ. Լարգոս շրջեացեն զմիտս նորա, խնդրեաց և ընկալաւ հրաման՝ 'ի նոյն կառս լինել և ինքն ուղեկից։

ԼԴ. Յաճախէր յայնժամ լուր 'ի Հռովմ, զի առ յեղյեղուկ բանս ինքնակալին՝ որ մերթ բողոքէր զանառակութեանց կնոջն, և մերթ գորովէր ընդ յիշատակ նորա և ընդ մատաղ որդիս իւր, Վիտելլիոս ոչ այլ ինչ

ասէր բայց միայն. Ո՛վ եղբեր, ո՛վ ոձիր։ Ի զուր թա-
խանձէր զնա Նարկիս մեկնել զիմաստ բացագանչու-
թեանն, և յայտնել համարձակ զմիտս իւր. ոչ կարաց
յաղթել և առնուլ ինչ՝ի նմանէ պատասխանի՝ զոր
չմարթէր ձգել յոր իմաստ և կամիցի. ըստ նմին օրի-
նակի խօսէր և Լարգոս։ Իսկ Մեսալինա՝ ընդ երևելն
՝ի հեռուստ՝ սկսաւ աղաղակել, աղերս արկանել ինք-
նակալին՝ զի լուիցէ մօր Ոկտաւեայ և Բրիտանիկեայ.
այլ զաղաղակ նորա հեղձուցանէր դատախազն, յի-
շատակաւ Սիլիոսի և հարսանեաց նորա. և առ՝ի գրա-
ւել զաչս ինքնակալին, զգարշութեանց կնոջն դնէր
առաջի նորա զպատկեր։ Եւ յետ սակաւուց՝ի մտանել
ինքնակալին՝ի Հռովմ, իբրև կամէին ածել առ նա զոր-
դիս իւր, հրամայեաց Նարկիս արգելուլ զնոսա. այլ ոչ
կարաց մերժել՝ի բաց զկուսանն Վիբիդիա՝ որ խընդ-
րէրն սրտառուչ, մի՛ մատնել՝ի մահ զդշխոյն՝ առանց
տեղի տալոյ նմա պատասխանւոյ։ Զոր որ Նարկիս ետ
պատասխանի՝ զի ընդունէր զնա ինքնակալն՝ի լուր,
տուեալ նմա հրաման պաշտպանելոյ անձին, և մարթ
էր կուսանին դառնալ՝ի սրբազան պաշտամունս իւր։

Ղ. Կլաւդիոս լուռ ևէթ կայր և անբարբառ. Վի-
տելլիոս թուէր ինն անգէտ իրացն. ամենայն ինչ հնա-
զանդէր ձերբազատին։ Հրամայեաց նոս բանալ զտուն
շնացելոյն. և անդր ածեալ զինքնակալն, յանդաստակս
անդ ցուցանէր նմա զպատկեր հօրն Սիլիոսի՝ զոր վըճ-
ռեալ իսկ էր ծերակուտին բառնալ անտի՝ի բաց, և
ապա զամենայն գանձս հայրենիս զՆերոնեանցն և
զԴրուսեանց՝ լեալ մրցանակ շնութեան նորա։ Եւ՝ի
սրտմտել ինքնակալին ընդ այն և՝ի սպառնալ, էած
զնա անտի՝ի բանակն՝ ուր ժողովեալ էր զզօրս, և յոր-
դորեաց խօսել ինչ առ նոսա։ Սուղ ինչ խօսեցաւ անդ
Կլաւդիոս, զի ոչ կամէր յայտնել զսրտմտութիւն իւր,
թէպէտ և իրաւացի։ Յայնժամ զօրացն զաղաղակ բար-
ձեալ ընդերկար, խնդրէին զանուանս յանցաւորաց և
զպատուհաս. և ածեալ Սիլիոս յատեան՝ ոչ կամեցաւ
տալ ընդ անձին պատասխանի, և ոչ խնդրեաց ժամա-
նակ, այլ արագ արագ զմահ։ Նոյն արիութիւն և աս-
պետաց յոգունց հռովմայեցւոց երևելեաց՝ ըղձակերտ
արար զվաղագոյն մահ։ Տիտոս Պրոկուլ՝ որում Սիլիոս

յանձնեալն էր զՄեսսալինա, Պետրոս Պալենտ՝ որ խոստովանէրն զամենայն, և խոստանայր յայտնել զհամախոհս, և դաւակիցք նոցա երկոքին՝ Պոմպէոս Ուրբիկոս և Սաւփելլոս Տրոգոս, ածան հրամանաւ Կլաւդեայ 'ի մահ։ Զնոյն կրեցին պատուհաս և Դեկիոս Կալպուրնիոս հրամատար գիշերապահից, Սուլպիկիոս Հռուփոս հանդիսադիր խաղուց, և Յունիոս Վիրգիլիանոս՝ մի յատենակալաց ծերակուտին։

ԼԶ. Մնեստեր միայն 'ի տարակուսի կացոյց առ վայր մի զինքնակալն. զի զօձիս պատառեալ՝ աղաղակէր, և զկապուտակս գանիցն ցուցանելով՝ յուշ առնէր ինքնակալին զհրամանն, որով իւր իսկ պատուէր տուեալ էր հնազանդել բանից Մեսսալինայ, և յաւել. Ոչ պարգևք ինչ, և ոչ յոյս մեծութեան՝ որպէս զայլս, այլ հարկն ևեթ յանցոյց զիս. և եթէ Սիլիոս ինքնակալէր, ինձ յառաջ քան զամենեսին հասանէր կորուստ։ — Եւ իբրև շարժեալ 'ի բանից աստի Կլաւդիոս՝ զինքանէր 'ի գութ, ստիպեցին զնա ձերբազատք իւր, մի՛ յետ մատնելոյ 'ի մահ զայնքան որեար երևելի՝ խնայել 'ի գուսանն, որ՝ կամաւ կամ՝ակամայ՝ սակայն գործեալ էր զոՀիրն ծանունս։ Եւ ոչ Տրաւլոսի Մոնտանեայ, ասպետի հռովմայեցւոյ, պատասխանատրութիւն եղև ընդունելի. սա պատանի բարեբարոյ և գեղանի՝ հրապուրեալ 'ի Մեսսալինայ, և 'ի նմին իսկ գիշերի մերժեալ էր 'ի նմանէ 'ի բաց. այսքան էր դիւրատաղտուկ վաւաշոտութիւն նորա։ Սուիլեայ Կեսոնինոսի և Պլաւտոսի Լատերանեայ շնորհեցան կեանք. սմա վասն մեծամեծ վաստակոց հօրեղբօրն. իսկ նմա վասն ախտամոլութեան իւրոյ։

Լէ. Բայց Մեսսալինա 'ի լուկուլլեան պարտէզս ապաստանեալ՝ պատրաստէր աղերսագիր վասն երկարելոյ զկեանս իւր. 'ի յետին յայնմ վտանգի ևս ոչ յուսահատեալ, և երբէք երբէք գոռոզութեամբն յուզեալ 'ի սրտմտութիւն. և եթէ Նարկիսեայ չէր վաղվաղեալ զմահ նորա, 'ի դատախազ անդր իւր շրջէր զվտանգն։ Բանզի Կլաւդեայ դարձ արարեալ յարքունիս, և կոչնովքն պատրաստելովք ողոքեալ, և զուարթացեալ գիշնեաւ, հրամայեաց ազդ առնել հիքին, քանզի այսպէս պատմեն անուանեալ նորա զՄեսսալինա, դալ 'ի վա-

ղիւ անդր առնել վասն անձին պատասխանի։ Յորմէ յայտնի երևէր ցածնուլ ինքնակալին 'ի ցասմանէ, և տեղի տալ սիրոյ. վասնզ իսկ էր 'ի յամէն՝ յառաջիկայ գիշերի 'ի յուշ առագաստին։ Վասն որոյ Նարկիս էլ փութանակի, ակնարկեաց հարիւրապետաց և հազարապետին՝ որ անդ կայր՝ փութալ սպանանել զՄեսսալինա, որպէս թէ 'ի հրամանէ ինքնակալին. և ետ պատուէր Եւոդեայ ձերբազատի փոյթ ունել վաղագոյն կատարման հրամանին։ Այնապարեաց Եւոդ եհաս 'ի պարտէզս անդր նախ քան զայլս, և եգիտ զՄեսսալինա տարածեալ 'ի գետնի, և զԼեպիդա մայր նորա առընթեր։ Լեպիդա 'ի բարեկենդանութեան դստերն անկարեկիր, և 'ի թշուառութեան նորա բարեգորով, խրատ տայր նմա մի՛ սպասել հարուածոյ սպանողին, զի վնարեալ էր վասն նորա, և մնայր նմա խնդրել և եթ զմահ փառաւք։ Այլ ոգի նորա ապականեալ 'ի հեշտութեանց՝ անընդունակ էր արիութեան, և լուծաւ նա յարտասուս և յողբ ընդունայն։ Հասին բռնադատեցին պատուիրակք զդրունս, եմուտ եկաց հազարապետն անբարբառ. իսկ ձերբազատն ստրկօրէն վատութեամբ յանձխէր կշտամբանս։

ԼԸ. Այնդ ուրեմն ծանեաւ Մեսսալինա զթշուառութիւն իւր. բուռն եհար 'ի սուսեր, և 'ի զուր ջանալն ձգել զայն դողդոջուն բազկաւ 'ի փող և 'ի կուրծս իւր, հարաւ սպանաւ 'ի հազարապետէն. և դիակն նորա շնորհեցաւ մօր իւրում։ Մինչդեռ Կլաւդիոս յընթրիսն կայր, եհաս առ նա լուր սպանութեանն Մեսսալինայ, առանց յայտնելոյ յիւրմէ՞ թէ յայլմէ. և ոչ ինքն հետազօտեաց գիտել զայն. այլ խնդրեաց բաժակ առ 'ի տալ որպէս սովորն էր, լրումն ընթրեաց։ Եւ ոչ 'ի յաջորդ աւուրս ցոյց ինչ ետ ատելութեան կամ խրնդութեան, ցասման կամ տրտմութեան, կամ այլոց բնաւորական կրից, ոչ առ դատախազն ուրախամիտս, և ոչ առ որդիս իւր տխուրս։ Ծերակոյտն ևս օգնեաց նմա 'ի մոռացմանս՝ անյիշատակ արարեալ զՄեսսալինա, բառնալով զպատկերս նորա 'ի հասարակաց և յայլոց տեղեաց։ Իսկ Նարկիս ընկալաւ զօրէնս պատուոյ դատապետութեան, այլ ոչ 'ի մեծ ինչ յաւելուած բախտին իւրոյ քան զՊալլասայն և զԿալլիստիայ. և վրէժ-

խընդրութիւն իւր օրինաւոր՝ եղև աղբիւր չարաչար հետևանաց և անհուն աղետից։

Մեթոդոսանեբորդի գրոց յաջորդելոյ պէտք վեցերորդին՝ պարզապէս այս են, զի ըստ ասացելոմս 'ի յաւաջաբանի անդ՝ պակասէն Տարեգրաց Է. Ը. Թ. Ժ. գերդ, հանդերձ սկզբնաւորութեամբ Մեթոդոսանեբորդի այսր գրոց. յորս բովանդակէին անդ ինքնակալութեանն Կալիգուլայ, և վեցից առաջնոց ամացն Կլաւդեայ։ Վասն որոյ մահ Տիբերի հանդիպէ յամին Հռովմայ 790։ Կայիոս ինքնակալէ տարեամ մի, և Կլաւդիոս յամին Հռովմայ 794։ Մեթոդոսանեբորդի այսր գրոցս հնացորդ սկսանի յ800 ամին Հռովմայ, 'ի 47 ամի դրիսդոսականս ռուսական, յորում Կլաւդիոս էկաց չորրորդ անգամ բդեաշխ ընդ Վիտելլեայ հօր այնորիկ՝ որ ինքնակալեացն։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Մեսսալինա յարուցանէ չարախօսս ընդդէմ Վալերիոսի Ասիատեայ։

Բ. Վալերիոս դատի 'ի Կլաւդեայ առաջի Մեսսալինայ։ Պոպպէ ամբաստանեալ ընդ նմա, անձին առնէ առ 'ի զերծանել 'ի պատուհասէ։

Գ. Կլաւդիոս համարի առնել գթութիւն՝ յընտիր առնելով Ասիատեայ զեղանակ մահուն։

Դ. Տեսիլ երազոյ՝ պատճառանք դատապարտութեան երկոցունց եղբարց Պետրայց։

Ե. Յաստենակալաց ծերակուտին ոմանք խնդրեն զկատարումն կինկեան օրինաց ընդդէմ զօշաքաղութեան փաստաբանից։

Զ. Կ. Սիլիոս, սահմանեալ 'ի բդեշխութիւն, խօսի 'ի նպաստ օրինացս։

Է. Սուիլիոս և այլք, որոց վտանգ 'ի վերայ կայր, պատճառանօք պաշտպանելոյ ճարտարխօսութեան՝ պաշտպանեն դատի իւրեանց։ Ինքնակալն սահմանէ 'ի պատիւ փաստաբանից ոչ ինչ աւելի քան զբիւր սեստերտ։

Ը. Գժտութիւնք 'ի Պարթևս։ Խուտարզ հալածեալ 'ի Վարդանայ, դարձ առնէ հզօր բանակաւ։

Թ. Մինչդեռ վէճքս այսոքիկ յուզէին, Միհրդատ օգնականութեամբ հռովմայեցւոց յարձակի 'ի հայաստան։ Խուտարզ և Վարդան խօսին 'ի խաղաղութիւն, և Թագաւորութիւնն մնայ 'ի ձեռս Վարդանայ։

Ժ. Խուտարզ կոչեցեալ անդրէն յաւագանւոյն, 'ի պարտութիւն մատնի։ Վարդան ընդարձակէ զաշխարհակալութիւնս իւր։ Վարդան սպանանի յիւրոցն, և Թագաւորէ Խուտարզ, բայց ատելի լինի։ Պարթևք խնդրեն Թագաւոր զՄեհրատ, որ կայրն պատանդ 'ի Հռովմ։

ԺԱ. Կլաւդիոս ածէ 'ի հանդէս զդարապլուխ տօնս խաղուց։ Դոմիտիոսի, որ եկաց ապա Ներոն, սիրելութիւն ժողովրդեան։

ԺԲ. Մեսսալինայ սրարբեցութիւն 'ի սէր Կ. Սիլիոսի։

ԺԳ. Կլաւդիոս զպաշտօն համարակալն 'ի վար արկեալ, օրէնս սահմանէ ընդդէմ վաշխառուաց։ Ածէ նա ջուր 'ի Հռովմ, և յաւելու տառս յալփաբետս։

ԺԴ. Այլ և այլ աւանդութիւնք զգիւտից դպրութեան։

ԺԵ. Ճառ Կլաւդեայ 'ի նպաստ հաւահմայից. վճիռ ծերակուտին զայսմանէ։

ԺԶ. Փերուսկացիք խնդրեն Թագաւոր 'ի հռովմայեցւոց։ Առաքի առ Նոսա Իտալիկ եղբօրորդի Արմինեայ, ծնեալ և դաստիարակեալ 'ի Հռովմ։ Խռովարարք 'ի խնդիր օգնականութեան ելանեն առ ազգս մերձաւորս, ընկենուլ զնա յաթոռոյ։

ԺԷ. Կուսակիցք նորա պաշտպանեն նմա բանիւք և զէնուք։ Ցաղթէ նա 'ի մեծի պատերազմի։ Զառածանի 'ի բռնաւորութիւն, հալածի, և ապա անդրէն հաստատի օգնականութեամբ Լոմբարդացւոց։

ԺԸ. Ցարձակումն կաւկացւոց 'ի ստորինն Գերմանիա. Կորբուլոն վանէ զնոսա. Կորբուլոնի դարձուցանել զլեգէոնս 'ի նախնի հրահանգս։

ԺԹ. Փրկուսնացիք տան պատանդս։ Գանասկոս զօրավար կաւկացւոց սպանանի դաւով։ Տժգոհութիւն ժողովրդեան։ Կլաւդիոս առաքէ պատուէր առ Կորբուլոն գալ յայս կոյս Հռենոսի։

Ի. Կորբուլոն հնազանդի ակամայ։ Պարապէցուցանէ նա զզօրականն 'ի պէղէլ առու ընդ Հռենոս և ընդ Մոսա. և ընդունի զշուք յաղթանակի։ Նոյն պատիւ սահմանի և Կուրտիոսի Հռուփոսի վասն գտանելոյ նորա բովս արծաթոյ։

ԻԱ. Տոհմ նորա անազգի, և ճոխութիւն մեծափարթամ։

ԻԲ. Կն. Նովիոս գտանի սուսերաւոր ընդ այնոսիկ, որ գնային յողջոյն ինքնակալին։ Սկիզբն և յեղափոխութիւնք գանձապետութեան։

ԻԳ. Գլխաւորք Գալլիոյ խնդրէն զիրաւունս ամբառնալոյ յաւագութիւն 'ի Հռովմ։ Պատճառք հակառակ պահանջման նոցա։

ԻԴ. Ճառ Կլաւդեայ 'ի նպաստ գալլիացւոց։

ԻԵ. Վճիռ ծերակուտին համաձայն կարծեաց ինքնակալին։ Կլաւդիոս կացուցանէ պատրիկս, քաւէ զծերակոյտն, և զհնգամեակ զոհսն կատարէ։

ԻԶ. Սիլիոս առաջարկէ Մեսսալինայ լինել իւր կնութեան, և զբռամբ ածել զինքնակալութիւն։ Մեսսալինա ամուսնանալ ևեթ ընդ նմա յանձն առնու։

ԻԷ. Կատարէ զհանդէս հարսանեացն ընդ Սիլիոսի, յուղևորել Կլաւդեայ յՈստիա։

ԻԸ. Աղմուկ և զայրոյթ յարքունիս։

ԻԹ. Լ. Նարկիս ձերբազատ, օգնեալ յերկուց կանանց սիրելեաց Կլաւդեայ, յայտնէ նմա զդաւն։

ԼԱ. Սարսափ Կլաւդեայ։ Մեսսալինա առնէ խրախուն 'ի տան, և այգէկութս անդ ածէ 'ի տեսիլ։

ԼԲ. Կլաւդիոս դառնայ յՈստիոյ 'ի վրէժինդրութիւն։ Մեսսալինա գնայ նմա ընդառաջ 'ի սայլի։

ԼԳ. Նարկիսեայ նախահոգ զգուշութիւնք վասն տկարութեան ինքնակալին։

ԼԴ. Վարանք Կլաւդեայ։ Նարկիս արգելու նմա զլուր աղաչանաց կնոջն։

ԼԵ. Պատուհաս Սիլիոսի և ասպետաց բազմաց հռովմայեցւոց։

ԼԶ. Կլաւդիոս, կամելով ներել Մնեստերեայ դուսանի, խափանի 'ի ձերբազատիցն իւրոց։

ԼԷ. ԼԸ. Մինչդեռ Կլաւդիոս 'ի գուբ շարժէր յընթեռնուլ զաղերսագիր Մեսսալինայ, Նարկիս տայ զնա սպանանել յանգէտս ինքնակալին։ Ոչ ինչ լինի նմա փոյթ 'ի լուր իրացն։

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից իբր երկուց ամաց, յորս կացին բդեաշխք

Կ. Վիտելլիոս Գ. և Տիբ. Կլաւդիոս կեսար Դ.

Ա. Վիտելլիոս, և Լ. Վիտելլիոս։

Ա. Հ. 800.

Ա. Ք. 47.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ ԺԲ.

Ա. Սպանութեամբն Մեսսալինայ վրդովեցան արքունիք ինքնակալին. և անկաւ 'ի ձերբազատս խռովյընտրութիւն կնոջ Կլաւդեայ, որ չհանդուրժէրն կեալ անկին, և կնոջ իւրոյ տեղի տայր հրամայելոյ։ Ոչ ինչ ընդհատ մարտ փառասիրութեան գրգռէր 'ի կանայս, իւրաքանչիւր որ զաղնուականութիւն զգեղ և զմեծութիւնս իւր 'ի մէջ ածէր, արժանի ամուսնութեան ինքնակալին զանձն ընծայեցուցանել։ Սաստիկ ևս էր վէճն ընդ Լոլլիա Պաւլինա դուստր Մ. Լոլլիոսի, երբեմն բդեշխի, և ընդ Յուլիա Ագրիպպինա դուստր Գերմանիկոսի։ Սմա Պալլաս և նմա Կալլիստոս էին կուսակիցք. և Նարկիս Ելիայի Պետինայ ումեմն 'ի Տուբերեանց տոհմէ կայր պաշտպան։ Իսկ ինքնակալն մերթ 'ի սա և մերթ 'ի նա ըստ լսելութեանն հակամէտ, կոչէ ապա զտարաձայնեալսն 'ի խորհուրդ՝ ածել զպատճառսն 'ի մէջ և միաբանել։

Բ. Նարկիս 'ի նպաստ Պետինայ ածէր զառաջին հարսանիսն ընդ ինքնակալին՝ յորմէ լեալ էր նմա դուստր Անտոնիա, զաւակ ազգատոհմին. և յաւելոյր՝ զի ոչ նոր ինչ 'ի տան իւրում պատահէր 'ի դառնալ անդր առաջնոյ ամուսնոյն, և բառնայր մօրուականն հեռ 'ի

միջոց՝ որ ընդ Բրիտանիկ և ընդ Ոկտաւիա՝ 'ի կցորդել նոցա սերտիւ ընդ իւր։ Զդէմ ունէր Կալլիստոս՝ անարդեալ համարելով զՊետինա երկարաձիգ ապահարզանիւն, և ասէր՝ խրոխտանալ նմա 'ի դառնալն յարքունիս, և լաւագոյն յոյժ վարկանէր ածել զՀոլլիա կնութեան, որ անորդի գոլով՝ մայրօրէն խնամէր աննախանձ զորդիս առն իւրոյ։ Իսկ Պալլաս այնու մանաւանդ գովէր զԱգրիպպինա, զի ընդ իւր ածէր զԹոռնն Գերմանիկէայ, զարժանին արքունական բախտի և զաշնուատոհմիկն՝ որով Թոռունք Կլաւդեանց կցորդէին 'ի մի ազգատոհմ։ և վտանգ իսկ էր մանկամարդ կնոջ՝ որոյ հաւաստի էր ծննդականութիւն, զփառս ինքնակալութեան փոխաբերելոյ յայլ ազգատոհմ։

Գ. Զօրացան բանք Պալլասայ. և հրապոյրք ևս Ագրիպպինայ յաւելուին օգնել, որ իբր առ հարկի յաճախելով առ ինքնակալն հօրեղբայր իւր՝ յինքն յանկուցանէր զնա քան զայլս, որպէս զի չև ամուսնացեալ ընդ նմա, դշխոյակերպ վարէր։ Եւ իբրև եղև աներկեան ընդ հարսանիս իւր, սկսաւ խորագիտութիւն 'ի գործ արկանել, և նիւթել զամուսնութիւն Դոմիտիոսի որդւոյ իւրոյ, ծնելոյ 'ի կն. Ենոբարբոսէ, ընդ Ոկտաւիայ դստեր ինքնակալին, յոր չէր մարթ յաջողել նմա առանց եղեռան. զի ինքնակալին խօսեցեալ զՈկտաւիա Լ. Սիլանոսի, և յաւելեալ էր յաղնուականութիւն պատանւոյն զշուք յաղթանակի, և զիշխանութիւն 'ի հանդէս ածելոյ զտեսարան սուսերամարտի, առ 'ի սիրելի առնել զնա ռամկին։ Բայց ոչ ինչ թուէր նմա դժուարին ընդ ինքնակալի, որ ըստ թելադրութեան և ըստ հրամանի այլոց դատէր և ատէր։

Գ. Արդ Վիտելլիոսի պատրուակեալ զվատ խաբէութիւնս իւր ընդ անուամբ համարակալութեան, ձարտար 'ի գուշակել զհանդերձեալ իշխանութիւնս, յաբեցաւ 'ի խորհուրդ Ագրիպպինայ՝ առ 'ի գտանել առաջի նորա շնորհս, յանձն առեալ զանօրէնութիւն ընդդէմ Սիլանոսի։ Քոյր սորա Յուլիա Կալուինա, գեղեցիկ՝ այլ լրբենի, սուղ ինչ յառաջ հարսնացեալ էր որդւոյ իւրում։ աստի պատճառս էառ ամբաստանութեան, զեղբայրսիրութիւն նորա հաւեստ՝ այլ ան-

զգոյշ՝ համարեալ նմա յոՀիր. և ինքնակալն լսէր նմա, առ սիրոյ դստերն յօժար 'ի կասկածանս ընդդէմ փեսայի իւրում։ Սիլանոս, վիՀակեալ 'ի դատաւորութիւն այնր ամի, անդիտանայր զդաւն. և յանկարծ հրովարտակաւ Վիտելլեայ արտաքսեցաւ 'ի ծերակուտէն. թէպէտ և վաղու ևս ընտրեալ յատենակալաց, և հնգամեակ նորա լցեալ էր։ Յայնժամ և Կլաւդիոս ելոյծ ըզխնամութիւն իւր, և հարկ եղև Սիլանեայ հրաժարել 'ի դատաւորութենէ. և մնացորդ ժամանակի պաշտաման նորա տուաւ Եպրիոսի Մարկելլեայ։

Ե. Առ բդեշխութեամբ Կ. Պոմպէոսի և Կ. Վերանիոսի հաստատեալ էին վաղ դաշինք ամուսնութեանն Կլաւդեայ ընդ Ագրիպպինայ, և վաղ իսկ հրատարակեալ էր համբաւ ըստ ոչ օրինի սիրելութեան նոցա ընդ միմեանս. սակայն չևևս իշխէին նոքա կատարել զհանդէս հարսանեացն, զի անօրինակ ինն էր ածել զդուստր եղբօր 'ի կնութիւն։ Յազգապղծութիւն համարէր այն. և օրինազանցութիւնն այն սոսկումն ածէր՝ թէ գուցէ աղէտս 'ի վերայ աշխարհին առեալ ձգեսցէ. վասն որոյ յամէին հարսանիքն, մինչև յանձն էառ Վիտելլիոս զՀնարս ելոյց իրացն գտանել։ Եհարց նա ցինքնակալն. Հրամանաց ժողովրդեան, թէ իշխանութեան ծերակուտին կամիցիս անսալ։ Եւ 'ի տալ նորա պատասխանի՝ զի չկարէր քաղաքացւոցն ամենեցուն կամաց զդէմ ունել միայնակ, Վիտելլիոս խրատ ետ նմա կալ մնալ յարքունիսն. իսկ ինքն երթեալ 'ի ծերակոյտն և յայտ արարեալ՝ զի ամենամեծ օգուտ աշխարհին առաջի կայր, խնդրեաց խօսել նախ քան զամենեսին, և ասէ. Հոգք ինքնակալին ծանուցք, որում հասանէ վարել զոլորտս երկրի, կարօտին օգնականութեան. որպէս զի զերծ յառնին խնամոց, զօգուտ աշխարհին տնօրինեսցէ։ Եւ որ սիրումն ոգւոյ կայսեր համարակալի՝ համեստագոյն քան ունել ամուսին կցորդ իւր 'ի յաջողութեան և 'ի ձախողութեան, որում կարասցէ զգաղտնիս իւր մերկանալ, որում զորդեակս իւր յանձնել, որ ոչ 'ի գրգանս և 'ի զեղխութեան կեցեալ՝ այլ 'ի մանկութենէ հետէ հպատակեալ իցէ օրինաց։ —

Զ. Եւ յետ այսոցիկ համոզկեր բանից՝ զորս ասէր ծե-

բակոյսն բազում գովութեամբ, ասէ. Եւ քանզի ա-
մենեքեան հաճք էն ինքնակալին ամուսնանալոյ, ար-
ժան է ընտրել զոք 'ի կնութիւն՝ ազնուականութեամբ
և առաքինութեամբ ականաւոր, և արդասաւոր 'ի
ծնունդ։ Եւ չէ պարտ յամել 'ի խնդիր. զի Ագրիպպի-
նա պայծառութեամբ ազգատոհմին գերազանցեալ,
և զբեղնաւորութեան տուեալ է զփորձ. և առաքի-
նութիւնք ևս նորա համեմատք բարեմասնութեանցն
իւրոց էն։ Եւ այն չնորհ դիցն մեծ, մնալ նորա այրի,
և լինել կնութեան ինքնակալի՝ որոյ ընդ իւրսն ևեթ
լեալ է ընդ կանայս։ Լուեալ է ձեր 'ի հարց, և ակա-
նատես իսկ լեալ յափշտակելոյ ինքնակալաց զամու-
սինս այլոց ըստ հաճոյս՝ քաջ 'ի բաց յայժմուս համես-
տութենէ, որ կացցէ օրինակ ամուսնութեան ինքնա-
կալաց։ Ապաքէն նոր ինչ է առ մեզ ածել զդուստր
եղբօր կնութեան, բայց առ այլ ազինս սովորու-
թիւն է՝ անխափան յօրինաց. անծանօթ երբեմն էր
և հօրաքեռորդւոց ընդ իրեարս ամուսնութիւն, այլ
'ի շրջել ժամանակաց յաճախեաց. զի ըստ հանգամա-
նաց ժամանակի ընդունելի լինին սովորութիւնք. յա-
ւելցի և այս յընդունելիսն առ յապայս։ —

Է. Յայնժամ ոչ սակաւք ելևելս զմիմեամբք արա-
րեալ դիմէին 'ի դուրս յատենէն, առ 'ի բռնադատել
յայն զինքնակալն յերկմտել նորա. խռնեցաւ անդր և
ամբոխն աղաղակելով. Այս կամք են և ժողովրդեան
Հռովմայ։ — Կլաւդիոս ոչ ևս յամեալ, էլ 'ի հրապարակ
ընդ առաջ ողջունելեացն. և մտեալ 'ի ծերակոյտն՝
խնդրեաց սահմանել օրինաւոր զամուսնութիւն ընդ
եղբօրորդւոյ առ յապայս. այլ ոչ գտաւ ոք այնպիսւոյ
ամուսնութեան ցանկացօղ, բայց միայն ասպետ ոք
Հռովմայեցի Տ. Ալլեդիոս Սևերոս, զորմէ բազումք
ասէին 'ի չնորհս Ագրիպպինայ բերեալ յայն։ Կերպա-
րանափոխ եղև այնուհետև քաղաքն. ամենայն ինչ
հնազանդէր կնոջ, և այս միայն խտիր էր ընդ Ագրիպ-
պինա և ընդ Մեսալլինա, զի սա առ վաւաշոտութեան
իւրոյ ոտնհար լինէր հասարակապետութեան, իսկ նա
առնաբար ունէր զհասարակապետութիւնն 'ի ծառա-
յութեան։ Ագրիպպինա զիստութիւն, և յաճախ ևս
զգոռոզութիւն 'ի դէմս բերէր արտաքոյ. և ոչ առ-

տնին գործէր ինչ անհամեստ, եթէ ոչ վարեալ'ի փա-
ռամոլութենէ. և զանյագ արծաթասիրութիւն իւր
պատրուակէր որպէս պատսպարան պետութեանն։

Ը. Սիլանոս, զի յուսայր ցայն վայր'ի կեանս, և կամ
վասն ատելի ևս առնելոյ զամուսնութիւնն զայն, յա-
ւուր հարսանեացն չոգաւ զիւրովին։ Կալուինա քոյր
նորա աքսորեցաւ յԻտալիա։ Յաւել Կլաւդիոս և զոհս
ըստ սահմանելոյ Տուլլոսի արքայի՝ մատուցանել'ի ձեռն
քրմապետաց, և քաւութիւնս յանտառին Սրտեմեայ,
'ի ծաղր ամենեցուն վասն տարաժամ փոխարինին և
քաւութեան մծղընեայ հարսանեացն։ Բայց Սգրիպ-
պինայ ոչ կամելով'ի չարիս ևեթ գոլ ականաւոր, ըն-
կալաւ յինքնակալէն վասն Անենէոսի Սենեկայ հրաման
դարձի յաքսորանացն, և զիշխանութիւն դատաւորու-
թեան, գիտելով զի հաճոյ ինչ գործէր ամենեցուն
վասն գերահամբաւ հանձարոյ նորա. և զի դարձեալ
կամէր զԴոմիտեայ զարգացումն ընդ այնպիսի դաս-
տիարակաւ, և յուսայր խորհրդովք նորա տիրապետել.
զի համարէր Սենեկա հաւատարիմ Սգրիպպինայ վասն
շնորհապարտութեանն առ նա, և թշնամի Կլաւդեայ
վասն անիրաւութեանն կրելոյ 'ի նմանէ։

Թ. Հաճոյ թուեցաւ մի՛ ևս յամել. և ահա խոստ-
մամբք մեծամեծօք ածին 'ի հաւան զՄեմմիոս Պոլ-
լիոն զսահմանեալն 'ի բդեշխութիւն, ընդունել վճիռ
'ի ծերակուտէն՝ աղերս առնելոյ Կլաւդեայ հարսնա-
խօսել Դոմիտիոսի զՈկտաւիա։ Համեմատք էին նոքա
ըստ տիոց, և հարսանիք նոցա 'ի կատարումն մեծամեծ
խորհրդոց բանայր ուղի։ Պոլլիոն ոչ ինչ ընդհատ 'ի
բանից ձառելոց 'ի Վիտելլեայ խօսեցաւ 'ի ծերակու-
տին. և յընդունել նորա զվճիռն՝ կատարեցաւ հարս-
նախօսութիւն Ոկտաւեայ. և Դոմիտիոս 'ի վերայ այ-
լոց ազգականութեանցն՝ ամուսին Ոկտաւեայ և փե-
սայ եղեալ Կլաւդեայ, հաւատարեաց այնուհետև Բրի-
տանիկեայ՝ հնարիւք մօրն, և այնոցիկ՝ որք վասն չա-
րախօսութեանն զՄեսալինայ՝ խիթային 'ի վրէժխն-
դրութենէ որդւոյն։

Ժ. Ցայնմ ժամանակի հրեշտակք'ի Պարթևաց հա-
սեալ ըստ կանխաւաց խնդրոյ բանի՝ խնդրել զՄեհրատ
'ի Թագաւոր, մտին 'ի ծերակոյտն. և ըստ այսմ օրի-

նակի արարին զպատգամաւորութիւնն. Գիտակ եմք ուխտի դաշանցս մերոց, և ոչ որպէս ապստամբք ընդդէմ արշակունեաց գամք առ ձեզ, այլ՝ի խնդիր որդւոյն Վոնոնի՝ Թոռինն Փրաատայ ընդդէմ բռնաւորութեանն Խուտարզայ՝ որ անհանդուրժելին է աւագանւոյն և ռամկին։ Զի ոչ շատացեալ նորա սպանանել զեղբարս իւր և զազգականս, զվաղ իսկ աքսորեալս, արդ և զկանայս յղիս և զտղայս ստընդեայս մատնէ՝ի մահ. բռնաւոր յոյլ՝ի խաղաղութեան և չարաբաղդ՝ի մարտի, որ զվատութիւն իւր խժդժութեամբ հնարի ծածկել։ Վաղընջուց և հասարակաց խորհրդով կռեալ է մեր ուխտ նիզակակցութեան ընդ հռովմայեցիս, և արժան է ձեզ ձեռն տալ նիզակակցաց, նախանձաւորաց զօրութեան ձերոյ, խոնարհելոց յաղերս առ մեծարանաց. որոց վասն այնորիկ տուեալ է ձեզ զարքայորդիս իւրեանց՝ի պատանդ, զի՝ի պարտասել յառաջին բռնութենէ՝ դիմեսցեն առ ինքնակալն և առ ծերակոյտդ՝ի խնդիր Թագաւորի, որ՝ի ձէնջ դաստիարակեալ՝ արժանաւորագոյն իցէ իշխելոյ։ —

ԺԱ. Եւ՝ի խօսել նոցա զայսոսիկ և զայսպիսի բանս, սկսաւ ինքնակալն Ճառել զհռովմէական մեծութենէ, և զմեծարանաց Պարթևաց, համեմատելով զանձն ընդ Աւգոստեայ՝ յորմէ խնդրեալ էր նոցա երբեմն Թագաւոր, առանց յիշատակելոյ զՏիբեր՝ յորմէ ևս ընկալեալ էր նոցա Թագաւորս։ Եւ ապա դարձեալ առ Մեհրատ՝ որ անդն կայր, խրատ ետ նմա, մի՛ իբրև տէր ընդ ծառայս՝ այլ որպէս իշխան ընդ քաղաքացիս առնել իրաւունս և ողորմութիւն, որ որչափ անսովոր էին առ Պարթևս՝ նոյնչափ և սիրելի զինքն առնէին նոցա։ Եւ ապա անդրէն առ պատգամաւորս զբանսն դարձուցեալ, գովելով զՄեհրատ՝ ասէ. Թէպէտ և դաստիարակեալ սա՝ի Հռովմ՝ բերէ յանձին չափաւորութիւն և հեզութիւն, սակայն պարտ է ևս ներել բնաւորութեան Թագաւորաց, և մի՛ փոփոխել զնոսա յաձախ։ Հռովմէական պետութիւն լցեալ ցարդ փառօք, ցանկայ զի և այլք յազգաց վայելեսցեն՝ի հանգիստ։ — Յանձնեցաւ ապա Կ. Կասիոսի կուսակալին Սյորոց ածել զպատանին արքայորդի ցեղը Եփրատայ։

ԺԲ. Գերազանցեր՝ի ժամանակին յայնմիկ Կասիոս

յօրէնագիտութեան. զի արուեստ պատերազմական անծանօթ է 'ի խաղաղութեան, և վատն և արի 'ի նմին համարի են յայնժամ. սակայն նա առանց պատերազմի նորոգեալ ըստ կարի զնախնի հրահանգս, կըրթեալ զլեգէոնս, այնու խնամով և նախահոգ զգուշութեամբ վարէր՝ որպէս թէ 'ի Ճակատամարտի կալով. այսպէս արժանի նախնեացն իւրոց կասիոսեան ազգատոհմին 'ի մէջ ազգացն այնոցիկ համբաւէր։ Արդ կոչեցեալ նորա զամենեսին՝ որոց համախոհութեամբ խնդրեալ էր զՄեհրատ'ի թագաւոր, և մերձ 'ի Ջևգմա հարեալ բանակ՝ ուստի դիւրին էր անցանել ընդ գետն, իբրև հասին աւագորեարն Պարթևաց և Ակբար արքայ արաբացւոց, խրատ ետ Մեհրատայ մի փութալ. զի բարբարոսացն ուժգին դիմեցումն վաղ թուլանայր, և փոխէր իսկ 'ի դրժանս. և ապա յառաջ վարել զսկսեալն։ Այլ այս խրատ նորա էլ'ի դերև հնարիւք Ակբարու. զի նա զպատանին անփորձ, որ զծայր բարեբաստութեան համարէր'ի զեղխութեան, յամեցոյց զաւուրս բազում առ Եդեսեաւ, և թէպէտ Կարէն կոչէր զնոսա՝ ցուցանելով պատրաստ զամենայն 'ի յաջողութիւն եթէ փութային գալ, նոքա ոչ ուղիղ ընդ Միջագետս՝ այլ շրջանաւ գնացին 'ի Հայս ընդ որ դժուարին էր յայնժամ անցանել վասն ձմերայնոյն 'ի վերայ հասանելոյ։

ԺԳ. Եւ յետ բազում տաժանաւոր ուղեգնացութեան ընդ ձիւնապատ լերինս, հասին 'ի դաշտավայրս 'ի բանակն Կարէնի. և անցեալ ընդ Տիգրիս, խաղացին գնացին ընդ Ադիաբէնս, որոց թագաւոր Իզատ՝ 'ի վերին երեսս նիզակակից Մեհրատայ՝ միտէր գաղտ 'ի Խուտարզ, հաւատարմագոյն ընդ նմա։ Եւ 'ի գնալն առին զՆինուէ, երբեմն շահաստան ասորեստանեայց, և զԱրբելա՝ ամրոց ականաւոր վասն վերջին պատերազմին Դարեհի ընդ Ալեքսանդրի, ուր զօրութիւն Պարսից կործանեցաւ։ Յայնմ վայրի Խուտարզ կայր 'ի Սամբուլ լերին, մատուցանելով զոհս դից երկրին, ուր երիցագոյն պաշտօն էր Հերակլեայ. որ 'ի սահմանեալ ժամանակի ազգ առնէ քրմաց'ի քուն, հանդերձել մերձ 'ի մեհեան անդր ձիան սպառազէն 'ի հեծելութիւն որսոց։ Եւ յածել նոցա կապարձս զձիովք նետալոցս,

սիրի ձիանն ընդ անտառն, և 'ի մուտս գիշերոյ դառ-
նայ ընչասպառ կապարձիւքն դատարկելովք. և դար-
ձեալ միւսանգամ 'ի տեսլեան գիշերոյ երևեալ աս-
տուածոյն, ցուցանէ նոցա զՀետս հեծելութեան իւ-
րոյ ընդ անտառն, և գտանեն անդ բազմութիւն է-
րեկոյ տապաստ անկեալ համասփիւռ։

ԺԴ. Բայց Խուտարզ, զի սակաւաւոր դեռ ևս էր
բանակ նորա, կայր պատսպարեալ առ Կորմաւ գետով.
և Թէպէտ նախատակոծ առնէին զնա Թշնամիք, և
ձայնատուր լինէին նմա 'ի մարտ, նա դանդաղէր տե-
ղափոխէր և արձակէր արս՝ կաշառել զառաջապահս
նոցա 'ի մատնութիւն։ Որով Իզատ Ադիաբենոքն իւ-
րովք, և Ակբար արաբացւովք, մեկնեցան գնացին ըստ
յողդողդ բարբարոսացն բարուց. ցուցեալ 'ի փորձոյ՝
զի խնդրել խնդրեն նոքա 'ի Հռովմայ Թագաւոր, այլ
ոչ լինին նոցա տուեալքն ընդունելի։ Բայց Մեհրատ
Թէպէտ և զՀզօր օգնականութիւնսն կորուսեալ, և
զմատնութենէ այլոցն ևս 'ի կասկածի, սակայն ստի-
պեցաւ 'ի միայն ելս հնարից՝ որ մնայր նմա, ապաւի-
նել 'ի բախտն, և խիզախել 'ի վտանգ մարտի։ Իսկ
Խուտարզ յանդգնեալ 'ի տկարանալոյ Թշնամւոյն, ոչ
հրաժարեաց 'ի պատերազմէն։ Անպարտելի երկուս-
տեք և արիւնահեղ եղև պատերազմ, մինչև հասեալ
Կարենի, փլոյզ տապաստ էարկ որ ինչ եգիտ առաջի
իւր. այլ կարի յոյժ յառաջ մատուցեալ, պատեցաւ
յանխոնջ գնդաց։ Յայնժամ յուսահատեալ Մեհրատ
և վստահացեալ 'ի խոստումն Պարրակայ՝ որ երբեմն 'ի
հօրէ իւրմէ պաշտպանեալն էր, մատնեցաւ 'ի հաւա-
տադրուժ առնէն կապեալ՝ 'ի ձեռս յաղթականին.
որոյ ստիպեալ զնա 'ի խոստովանութիւն՝ զի չէր ազ-
գակից և ոչ արշակունի, և կշտամբեալ զնա որպէս
օտար և Հռովմայեցի, հրամայեաց հատանել զականջս
նորա, զկեանսն ևեթ շնորհեալ նմա իբրև 'ի ցոյց գը-
թութեան իւրոյ և յամօթ մեր։ Եւ 'ի մեռանել Խու-
տարզայ օրհասիւն իւրով, Վոնոն՝ որ կուսակալէրն յայն-
ժամ 'ի Մարս՝ հրաւիրեցաւ 'ի Թագաւորութիւն։ Ոչ
յաջողութիւնք և ոչ արկածք անուանի կացուցին զնա.
սուղ և անփառունակ եղև իշխանութիւն իւր, և յա-
ջորդեաց յաթոռն Պարթևաց որդի նորա Վոլոգէս։

ԺԵ. Միհրդատ, արքայ 'ի Վոսփոր, անկեալ 'ի Թագաւորութենէ, գնայր Թափառական. և լուեալ զի Դիդիոս զօրավար Հռովմայեցի երթեալ էր ընտրելով բանակին 'ի բաց, և Թողեալ 'ի Վոսփոր զայն ինչ Թագաւորեալն Կոտիշ՝ պատանի անփորձ, և գունդ մի ևեթ սակաւաձեռն՝ որում հրամայէր Յուլիոս Ակուիլա ասպետ հռովմայեցի, արհամարհեաց զերկաքանչիւր, և կոչեցեալ 'ի զէն զազգս շրջակայս, և յինքն յանկուցեալ զփախստեայս, կազմեաց բանակ. և հալածեալ զարքայն Դանդարաց, տիրեաց երկրի նորա։ Ազգ եղև զի վտանգ 'ի վերայ կայր յարձակելոյ նորա և 'ի Վոսփոր. յայնժամ Ակուիլա և Կոտիշ ոչ վստահացեալ 'ի զօրութիւնս իւրեանց, և զի Զորսին ևս արքայ Սիրակաց դարձեալ էր ընդ նոսա 'ի թշնամութիւն, խնդրեցին և ինքեանք օգնականութիւն արտաքուստ՝ հրեշտակս առ Եւնոն իշխան Ահորսաց արձակեալ։ Զեղև նոցա դժուարին կռել ուխտ նիզակակցութեան, ցուցանելով նմա զհռովմէական պետութիւն ընդդէմ ապստամբելոյն 'ի նմանէ Միհրդատայ. և միաբանեցին պատերազմել Եւնոնի հեծելազօրօք, և հռովմայեցւոց պաշարել զքաղաքս։

ԺԶ. Յայնժամ բանակ կազմեալ՝ յառաջ խաղացին, առաջապահս կացուցեալ զահորսացիս, և 'ի բուն բանակին զգումարտակս ընդ վոսփորացիս՝ զինեալս ըստ մերումն տարազու։ Հալածական գնաց թշնամին, և մերքն հասին 'ի Սոզա քաղաք Դանդարաց, ուստի մեկնեալն էր Միհրդատ, թողեալ անդ պահակապանս վասն գայթ 'ի գայթի կալոյ բնակչացն։ Խաղացին ապա ընդդէմ Սիրակաց, և անցեալ ընդ գետն Պանդա՝ յարձակեցան 'ի քաղաքն ուսպացւոց, որ կայ 'ի բարձու՝ շրջապատեալ պարսպօք և փոսովք։ Բայց պարիսպքս այսոքիկ ոչ վիմօք էին շինեալ, այլ հողակերտ՝ վանդակեալ ոստովք՝ որ ոչ կարէին զդէմ ունել յարձակման. և յաշտարակաց մերոց բարձանց ջահք և գեղարդունք անդր արձակեալք խռովէին զպաշարեալս. և եթէ ոչ գիշերոյ դադարեցուցեալ էր զպատերազմն, առօրին սկիզբն և վախճան լինէր առման քաղաքին։

ԺԷ. Ի վաղիւ անդր պատգամաւորս առաքեցին խընդ-

դրել զկեանս քաղաքացւոց , մատուցանելով ստրուկս բիւր. այլ մերժեցին յաղթականք զխնդրուած նոցա , անդթութիւն համարեալ խողխողել զանձնատուրս , և դժուարին՝ պահ ունել այնչափ բազմութեան. լաւ ևս վարկան անկանել նոցա պատերազմաւ։ Զօրաց , որ 'ի պարիսպս անդր վերելակեալ էին սանդղովք , հրամմն եղև կոտորածի. և աւարառութիւն Ուսպեայ արկ արհաւիրս այլոց քաղաքաց , տեսանելով նոցա՝ զի ոչ գոյր պատսպարան անքոյթ յերեսաց թշնամեաց , զորս ոչ զէնք , ոչ պատնէշք , ոչ բարձունք անմատոյցք , ոչ գետք , և ոչ քաղաքք արգելուին։ Զորսին վարանեալ ընդ երկար՝ թէ արժա՞ն էր նմա դնել 'ի կշիռ զՀայրենին թագաւորութիւն վասն վերջին վտանգին Միհրդատայ , հաստատեցաւ 'ի խնդիր ազգային օգտի. և տուեալ պատանդս՝ խոնարհեցաւ առաջի պատկերի ինքնակալին , 'ի պարծանս մեծ հռովմէական բանակին , որ առանց արիւնահեղ պատերազմաց հասեալ էր յաղթական մինչև մերձ 'ի Տանայիս գետ՝ երեքօրեայ ճանապարհաւ 'ի բացեայ։ Այլ դարձ նորա չեղև նոյնպէս բարեբաղդ. զի կէսք 'ի նաւաց՝ ոլք ածէին զորս ընդ ծով՝ վարեալք 'ի ծովեզերս Տաւրեաց , պատեցան 'ի բարբարոսաց. և զօրավար նոցա և բազումք 'ի հարիւրապետաց սպանան։

ԺԸ. Յայնժամ Միհրդատայ յուսահատեալ յոգնականութենէ զինուց , վարանէր առ ի դիմել 'ի խնդիր գթութեան։ Կոտիշ եղբայր նորա , երբեմն հաւատադրուժ և ապա թշնամի , կասկածելի էր նմա. ոչ ոք 'ի հռովմայեցւոց իշխանաց մերձ կայր , յորոց 'ի խոստումն մարթ էր վստահել. խորհուրդ կալաւ գնալառ Եւնոն , որոյ չէր ինչ ատելութիւն ընդ իւր , և այն ինչ նիզակակցեալ էր ընդ մեզ սերտիւ։ Վասն որոյ զՀիբի զգեցեալ զձև , և առեալ զկերպարան պատկանաւոր այնր ժամանակի դժբախտութեանն , եմուտ յսրբունիս Եւնոնի. և անկեալ առ ոտս նորա , ասէ. Յայսքանեաց ամաց հետէ ընդ ծով և ընդ ցամաք հետազօտեալս 'ի հռովմայեցւոց Միհրդատ , մերձ աւասիկ կամ։ արա զոր կամիս ընդ զաւակն Աքիմենեայ , զորոյ միայն չկաբացին թշնամիք բառնալ յինէն զպարծանս։ —

ԺԹ. Եւնոնի 'ի գութ շարժեալ վասն գերահռչակ

համբաւոյ առնն, վասն յեղափոխութեան բախտին, և վասն արժանի արքունական պատուոյ աղերսանացն, յորոյ զնա, և գովեաց զի ի ձեռն ահորսացուոյ խընդրէր զաջիւր 'ի Թողութիւն։ Եւ արար վաղվաղակի հրեշտակս առ Կլաւդիոս, գրեալ առ նա օրինակ զայս. Ինքնակալաց հռովմայեցւոց և արքայից ազգաց մեծամեծաց կարևորագոյն զօր բարեկամութեան ընդ միմեանս 'ի նմանութիւն բաղդին է հաստատեալ, իսկ ընդ իս և ընդ քեզ՝ ևս և 'ի քաջայաղթ նիզակակցութիւն։ Բարեբաստիկ են ելք պատերազմաց՝ ներելով առեալ վախճան. ըստ այսմ օրինակի ոչ կորուսանէ ինչ Ցորսին պարտութեամբն։ Միհրդատ ծանունց ևս պատժոց է պարտաւոր. այլ ոչ իշխանութիւն խնդրեմ վասն նորա և ոչ աթոռ, բայց միայն զի մի ձաղեսցի 'ի յաղթանակի, և մի 'ի մահ պարտաւորեսցի։ —

Ի. Կլաւդիոս Թէպէտ և հեզահամբոյր ընդ օտար Թագաւորս, սակայն վարանէր՝ իբրև գերի ընդունել զնա շնորհելով նմա զկեանսն, Թէ զինուք նուաճել։ Թշնամանացն կրելոց յիշատակ և իղձ վրէժխնդրութեան մղէին զնա 'ի զէն. այլ 'ի հակառակէն խորհէր՝ զի ընդ ափափայս հասանէր իւր տալ պատերազմ, և ընդ ծով՝ ուր ոչ գոյր նաւահանգիստ. դարձեալ և ընդ արքայս ամենիս և ընդ ազգս Թափառականս, յերկիր անբեր. խորհէր և 'ի ծանրատաղտուկ յամեցումն մարտին, և 'ի բազմավտանգ շտապումն, 'ի դուզնաքեայ փառս յաղթութեան, և 'ինն խատինս ծանունս պարտութեան։ Իսկ եԹէ յանձն առեալ զառաջարկութիւն պայմանացն՝ խնայէր յարքային վտարանդի, ըստ երկարութեան կենաց նորա ծանրանայր պատուհասն, կարօտելումն ամենայնի։ Յայսցանէ շարժեալ՝ գրեաց առ Եւնոն, զի ծայրագոյն պատժոց արժանի էր Միհրդատ, և ոչ չքաւորէր ձեռն իւր 'ի պատուհասել զնա, այլ սովոր էին նախնիք ընդդէմ Թշնամեաց հաստատութեամբ, և ընդ աղերսաւորս վարել գԹութեամբ։ Իսկ զիրաւունս յաղթանակի սահմանեալ ասէր յաղթողաց եԹէ ընդդէմ ժողովրդոց և արքայից, որոց չիցէ կորուսեալ զԹագաւորութիւն։

ԻԱ. Միհրդատ անձնատուր լեալ, և ածեալ 'ի

Հռովմ'ի ձեռն Յունեայ Կիլոնի՝ որ դորձական էր 'ի Պոնտոս, ամենագոյն քան զարժանն դժբաղդութեան իւրոյ խօսեցաւ առ ինքնակալն, զի համբաւէր 'ի ժողովրդեան ասացեալ նորա այսպէս. Զեմ ինչ վարեալ յումեքէ առ քեզ, այլ ինձէն դամ. թէ ոչ հաւատաս, թոյլ արա ինձ գնալ 'ի բաց, և ապա խնդրեա զիս։ — Եւ էին դէմք նորա անայլայլակ, և կայր առ բեմովն 'ի տեսիլ ժողովրդեան՝ շրջապատեալ 'ի զինուորաց։ Կիլոնի սահմանեցան սպասք բդեշխականք, և Յունեայ Ակուիլայ դատաւորականք։

ԻԲ. Աւ նովին բդեշխիւք Ագրիպպինա, անողոքելի ատելութեամբն և ոխերիմ թշնամութեամբ ընդ Լոլլեայ՝ ոսոխի իւրում 'ի կնութիւն Կլաւդեայ, հնարէր առնել զնա պարտաւոր՝ 'ի ձեռն չարախօսի, որպէս թէ հարցեալ էր նորա զքաւդեայս և զդէտս, և խնդրեալ պատգամ 'ի կլարեանն Ապոլոնէ զհարսանեաց ինքնակալին։ Կլաւդիոս, առանց լսելոյ զամբաստանեանն, բազում խօսեցաւ 'ի ծերակուտին զաղնուականութենէ նորա՝ քեռորդի զնա ցուցեալ Լ. Վոլուսեայ, թոռն եղբօր Կատտասայ Մեսսալինեայ, և երբեմն կին Մեմմոսի Հռեգուլեայ, խորհրդով լռեալ զամուսնութիւն նորա ընդ Կայիոսի կեսարու։ Եւ ապա յաւել՝ զի պարտ էր զառաջս ունել խորհրդոց նորա վնասակարաց հասարակապետութեան, և բառնալ 'ի նմանէ զպատճառս եղեռան. վասն որոյ առաջարկէր գրաւել զինչս նորա, և աքսորել զնա յԻտալիոյ։ Յամբաւ գանձուց նորա հինգհարիւր բիւր սեստերտք միայն թողան նմա, և աքսորեցաւ։ Կալպուրնիայ տիկնոջ ականաւորի եղև 'ի կործանումն գովութիւն ինքնակալին, որ ըստ բերելոյ խօսից գովեալ էր զգեղ նորա, այլ առանց ինչ սիրելութեան. վասն որոյ և ոչ սրտմտութիւն Ագրիպպինայ եհաս 'ի վերջին ծայր։ Իսկ առ Լոլլիա յղեցաւ մի 'ի հազարապետաց, ստիպել զնա իւրովի 'ի մահ. և Կադիոս Հռուփոս դատապարտեցաւ ըստ օրինաց 'ի յանցանս խիստ հարկապահանջութեան, ամբաստանեալ 'ի բիւթանացւոց։

ԻԳ. Նարբոնեանն Գալլիոյ, վասն բազում մեծարանացն առ ծերակոյտն, շնորհեցան իրաւունք՝ որով վարէրն Սիկիլիա, կարել ատենակալաց գաւառին

անհրաման յինքնակալէն գնալ յայց կալուածոց իւ-
բեանց։ Իտուրիա և Հրէաստան, 'ի մեռանել արքայից
նոցա Սոհեմայ և Ագրիպպայ, յաւելան 'ի գաւառս Ա-
սորւոց։ Հմայից կենդանութեան կայսեր, որ 'ի քսան
և հինգ ամաց հետէ խափանեալ էին, սահմանեցաւ
նորոգումն։ Կլաւդիոս ընդարձակեաց զարուարձա-
նեայս ըստ վաղնջուց սովորութեան, որով օրէն էր
ընդարձակել և զշրջապատ քաղաքին՝ որոց ընդարձա-
կեալ էր զսահմանս ինքնակալութեան։ Ալ ոչ ուրուք
զօրավարաց Հռովմայեցւոց, եւս և 'ի նուաճել զազգս
մեծամեծս, 'ի կիր արկեալ էր զիշխանութիւնս զայս՝
բաց 'ի Լ. Սիլլայ և 'ի դիւցազնն Աւգոստեայ։

ԻԴ. Ալ և այլ զրոյցք աւանդին զարքայիցն փա-
ռասիրութենէ կամ զպարծանաց 'ի մասինս յայսմիկ.
և ոչ օտար յառաջարկութենէս համարիմ նշանակել
զսկիզբն շինուածոյ պարսպաց Հռովմայ, և զոր սահ-
մանս արուարձանեայց նորա եդ Հռոմուլոս։ Արդ 'ի
հրապարակէ արքառոց, ուր է տեսանել զպղնձի պատ-
կեր ցլու, զի այս ազգ անդէոյ լծի յարօր, սկսանէր
ակօս ծրագրութեան շրջապատի քաղաքին՝ առ 'ի
ներքս փակել զբազինն մեծ զՀերակլեայ, անտի 'ի
ստորոտ պալատեան բլրոյն, ընդ կոթողս խտրոց ընդ-
մէջ կանգնեալս, հետևէր 'ի բագին դիցն Կոնսեայ,
անտի 'ի հին խորհրդարանն, և ապա 'ի փոքրիկ մե-
հեանն Թերափոց։ Իսկ հրապարակն հռովմէական և
Կապիտոլ, ոչ 'ի Հռոմուլեայ, այլ 'ի Տ. Տատիոսէ հա-
մարին յաւելեալ 'ի քաղաքն. և ապա ըստ զօրանալ
Հռովմայ՝ ընդարձակեցաւ և շրջապատ քաղաքին. իսկ
որ ինչ յաւել 'ի նոյն Կլաւդիոս՝ դիւրին է գիտել, զի
դրոշմեալ կան յարձանագիրս։

ԻԵ. Առ բդեշխութեամբն Կ. Անտիստիոսի և Մ.
Սուիլիոսի, որդեգրութիւն Դոմիտեայ արագ յաջողե-
ցաւ զօրութեամբն Պալլասայ. որ կապեալ ընդ Ագ-
րիպպինայ որպէս առիթ հարսանեայ նորա, և ապա
շնութեամբն, յորդորէր զԿլաւդիոս խորհել զօգուտ
աշխարհին և տալ օգնական մանկութեանն Բրիտանի-
կեայ։ Այսպէս դիւցազնն Աւգոստեայ, թէպէտ և էին
Թոռունք 'ի նեցուկ ազգատոհմին, զօրացուցեալ ա-
սէր զխորթ որդիս իւր. և Տիբերի ունելով որդի 'ի ժա-

ռանդ, ընկալեալ էր յորդեգրութիւն զԳերմանիկ։ Ըստ նոցին օրինակի ասէր առնուլ Կլաւդեայ զպատանին յօգնականութիւն հոգոց աշխարհին։ Ի բանից աստի յորդորեալ Կլաւդիոս, նախամեծար արար զԴոմիտիոս քան զորդի իւր՝ երկամաւ ևեթ կրտսեր քան զնա. և ըստ բանից, զոր 'ի ձերբազատէն իւրմէ ուսեալն էր, խօսեցաւ զնմանէ 'ի ծերակուտին։ Բայց տեղեակք իրացն՝ ոչ երբէք յառաջ քան զայս, ասէին, լեալ որդեգրութիւն յազատորդիս կլաւդեան ազգատոհմին, որ յարատևեալն էր յաւուրց անտի Ատտոսի Կլաւսեայ։

ԻԶ. Շնորհակալիք մատուցան ինքնակալին. և Ճարտարագոյն շողոմիք առ Դոմիտիոս՝ խնդրեցաւ վՃիռանցանելոյ նմա յազգատոհմն կլաւդեան, և կոչել Ներոն. և Ագրիպպինայ անուանել Աւգոստա։ Ի տեսիլ անիրաւութեանցս այսոցիկ՝ անգութք իսկ և անկարեկիրք տրտմէին ընդ դժբախտութիւն Գերմանիկեայ. զի բառնային 'ի նմանէ տակաւ և սպասք պաշտօնէից, և լինէր նա խաղալիկ տարաժամ խնամոց մօրուին՝ որոյ կեղծեացն էր քաջ իսկ խելամուտ. զի և ոչ ծանծաղամիտ ոք ասի նա լեալ 'ի բնէ, թէպէտ և այնպիսի համբաւեալ, յիրաւի թէ դժբախտութեամբ՝ չէ՝ յայտ 'ի փորձոյ։

ԻԷ. Ագրիպպինա առ 'ի ցուցանել նիզակակցաց և ազգաց զզօրութիւն իւր՝ ընկալաւ հրաման ընդ հինաւուրց զօրականին գաղթական առաքելոյ 'ի քաղաքն ուբիացւոց՝ ուր ինքն ծնեալն էր, և որ յանուն իւր կոչեցաւ։ Ուբիացիք ըստ դիպաց էին ընկալեալ 'ի նիզակակցութիւն, յանցս իւրեանց ընդ Հռենոս, 'ի հաւոյ նորա յԱգրիպպայ։ Զայնու ժամանակաւ արհաւիրք անկան 'ի վերնակողմն Գերմանիոյ 'ի յարձակմանէ Կատտաց, որ ասպատակէին անդր յաւարառութիւն. վասն որոյ Լ. Պոմպոնիոս տեղակալ զօրահատոյց արար ընդդէմ նոցա զօժանդակ գունդս Վանգիոնաց և Նեմետաց, յաւելեալ 'ի նոսա և զՀեծելագունդն օգնական, խափանել զաւարհարութիւն նոցա, կամ անկանել յեղակարծում՝ 'ի վերայ ցան և ցիր հրոսակաց նոցա։ Ոչ ինչ ընդհատ 'ի խոհականութենէ զօրավարին՝ զորքն Ճարտարամիտք բաժանեալ յերկուս, կէսք դի-

մեցին յահեակ. և գտեալ զնոսա այն ինչ դարձ արա-
բեալ յասպատակութենէ, շուրջ պաշարեցին զղեղ-
խեալսն աւարաւ, որք 'ի քուն թանձրութեան ըմբռ-
նեալ էին։ Յաւելաւ 'ի խնդութիւն նոցա և այն, զի
զոմանս յապրեցելոցն 'ի կոտորածէն Վարոսի՝ յետ քա-
ռասուն ամաց՝ յաջողէր նոցա յայնժամ զերծուցանել
'ի գերութենէ։

ԻԸ. Իսկ որ յաջակողմն երթեալ էին զօրքն ընդ
կարձոյ Ճանապարհ, սաստկագոյն ետուն կոտորած 'ի
թշնամիս՝ որ յանդուգն ընդդէմ նոցա ելեալ էին 'ի
Ճակատամարտ։ Եւ լի աւարաւ և փառաւորեալ համ-
բաւով դարձան 'ի լեառնն Տաւնոս, ուր Պոմպոնիոս
լեգէոնօքն սպասեալ մնայր՝ զի Կատոիք մղեալք 'ի
վրէժխնդրութենէ գայցեն 'ի պատերազմ։ Այլ նոքա
երկուցեալ թէ գուցէ աստի Հռովմայեցիք և անտի
քերուսկացիք անհաշտ թշնամիք պաշարեսցեն զին-
քեանս, յղեցին պատգամաւորս և պատանդս 'ի Հռովմ։
և սահմանեցաւ Պոմպոնեայ շուք յաղթանակի, դոյզն
ինչ մասն համբաւոյ նորա՝ որ առ յապայս փառաւո-
րեալ երգովք գերահամբաւեցաւ։

ԻԹ. Ի սմին ժամանակի Վաննիոս արքայ, զորդրու-
սոսի ինքնակալի կացուցեալ էր 'ի վերայ Սուեւաց,
հալածեցաւ 'ի թագաւորութենէ իւրմէ։ Սա 'ի սկզբ-
բանէ երևելի եղեալ և ընդունելի ժողովրդեան, ապա
յետ ամաց 'ի փոխել զիշխանութիւն իւր 'ի բռնաւո-
րութիւն՝ ատելութեան շրջակայ ազգաց և հերձուա-
ծոց քաղաքայնոց եկաց նշաւակ։ Առաջնորդք թըշ-
նամեաց նորա եղեն Վիբիլլիոս արքայ Երմոնդուրաց,
և Վանդիոն և Սիդոն քեռորդիք Վաննիոսի։ Կլաւ-
դիոս, թէպէտ և ստէպ թախանձեալ, ոչ կամեցաւ
խառնել 'ի պատերազմն բարբարոսաց. այլ խոստացաւ
եթէ Վաննիոսի անքոյթ ապաւէն 'ի մատնել նորա 'ի
պարտութիւն։ Գրեաց և առ Պ. Ատելլիոս Իստեր
զօրավար 'ի Պոննոնիա, ունել զայն Դանուբ գետոյ
լեգէոնաւն իւրով և ընտրելովք 'ի գաւառէ անտի օ-
ժանդակ զօրօք, 'ի պատսպարան պարտելոց և յարՀար
կութիւն յաղթականաց, թէ գուցէ յաջողութեամբ
բաղդին յանդգնեալ՝ զխաղաղութիւն մեր վրդովես-
ցեն ուրեք։ Զի ամբաւ բազմութիւն լեգիացւոց և

այլոց ազգաց դիմէին 'ի համբաւ Ճոխութեանց՝ զորս Վանիոսի ընդ երեսուն ամն աւարառութեամբ և հարկապահանջութեամբ մթերեալ էր անդր։ Վանիոս հանդերձ հետևակօքն և հեծելովք՝ զորս 'ի Սարմատաց յաղթիգացւոց ընկալեալն էր, անհաւասար ընդդէմ բազմութեան թշնամեաց՝ ամրացեալ կայր 'ի բերդորայս, 'ի մտի եդեալ երկարաձգել զպատերազմն։

Լ. Բայց սարմատացիք, դժոխըմբեալք պաշարման, սփռեալք ընդ մերձակայ դաշտս՝ հարկեցուցին զնա 'ի պատերազմ, զի լիգիացիք և Երմինդուրք անդ կային. վասն որոյ Վանիոս ելեալ զօրօք յամրոցէն՝ դիմեաց 'ի պատերազմ. և թէպէտ ոչ յաջողեալ, սակայն գովելի եղև վասն դիմագրաւ լինելոյ իւրոյ, և վերս 'ի լանջս ընդունելոյ։ Փութացաւ նա 'ի նաւատորմն՝ որ ինայր նմա 'ի Դանուբ. հասին ընդ հուպ և ձեռասունք նորա զՀետ, և ելեալ 'ի ցամաք՝ մերձ 'ի Պաննոնիա զկայ առին։ Վանգիոն և Սիդոն բաժանեցին զաշխարհն յիւրեանս, անդրմէջի կալեալ առ մեզ հաւատարմութիւն. սիրելի յոյժ էին ժողովրդոց իւրեանց՝ չև տիրացեալ նոցա. այլ 'ի տիրելն՝ եղէն ատելի, առ իւրեանց թերութեանն թէ հպատակաց, չունիմ ասել։

ԼԱ. Այլ 'ի Բրիտանիա խռովութիւն էր առ Պ. Ոստորեաւ, փոխանակաւ կուսակալի. զի թշնամիք նիզակակից ազգաց սփռեալ ընդ երկիր նոցա դժնէագոյնս ասպատակէին, ոչ ինչ երկուցեալ ելանել ընդդէմ նորոյ զօրավարին և անծանօթ բանակի նորին. զի ձմեռն ևս 'ի վերայ հասեալ էր։ Նորա գիտելով զի առաջին դէպք մարտի արհաւիրս կամ վստահութիւն մատուցանեն զօրաց, փութանակի առեալ զգումարտակսն երագունս ընդ իւր, խորտակեաց զընդդիմամարտս, զվայրավատին փախստեայս արար հալածական, թէ գուցէ անդրէն գունդ կազմեսցեն, և ոխերիմն նենգաւոր խաղաղութեամբ նեղեսցեն զինքն և զզօրս իւր, և զորոց կասկածէրն՝ կապտեաց 'ի զինուց, շրջափակեալ զամենեսեան պատնիշիւք յայնկոյս Աւոնայ և Սաբրինայ գետոց։ Իկենք նախ զդէմ կային, ազգ հզօր՝ աննկուն 'ի պատերազմունս, ինքնակամ մնտեալ յուխտ նեղակակցութեան ընդ մեզ. 'ի նոցանէ դրդեալ և շրջակայ ազինք, ընտրեցին զվայր Ճակա-

տամարտին շրջապատեալ զայն հողաբլրովք գեղջկայնովք, և անձուկ թողեալ մուտս՝ ընդ որս ոչ կարէին հեծեալք անցանել։ Ջօրավարն հռովմայեցի օգնական ևեթ գնդօք, զի չէր նորա ածեալ զզօրութիւն լեգէոնաց, յարձակեցաւ 'ի պատնէշս անդր մտանել, և բաժանեալ զգումարտակս յայլ և այլ կայս, պատրաստեաց զՀետևակազօրն 'ի մարտ։ Ցայնժամ 'ի տալ նշանին՝ բեկին նոքա զմի 'ի հողաբլրոցն, և խռովեցին զթշնամիս՝ արդելեալ զնոսա յամուրս անդ իւրեանց։ Նոքա յահէ պատուհասի ապստամբութեան իւրեանց, և յանփախուստ պաշարմանէն ստիպեալ, բազում և մեծամեծ քաջութիւնս գործեցին։ Ցայնմ մարտի որդի տեղակալին Մ. Ոստորիոս քաղաքական պսակի եղև արժանի։

ԼԲ. Ի պարտել Իկենաց՝ հանդարտեցին և այլք որ վարանեալ կային ընդ խաղաղութիւն և ընդ պատերազմ, և ածաւ բանակն յերկիր կանգեցուց. անդաստանք աւերեցան, մթերեցաւ աւար բազում, և ոչ իշխէին թշնամիք 'ի Ճակատամարտ. և եթէ դարանաւ ստնանել ինչ փորձէին բանակին, պատուհասակոծ լինէին։ Իբրև մօտ եղև բանակն 'ի ծով անդր՝ հանդէպ իբերնական կղզւոյն, յարեաւ խռովութիւն առ բրիգանդացիս, և անդր կոչէր զզօրավարն, այլ նա անդրդուեալն եկաց 'ի միտս իւր՝ մի ձեռնարկել 'ի նոր յաղթութիւն՝ չև զառաջինսն յապահովեալ. վասն որոյ զսակաւս 'ի նոցանէ՝ որոց զէն առեալ էր՝ մատնեաց 'ի մահ, և այլոց թողութիւն շնորհեալ՝ հանդարտեցոյց զբրիգանտացիս։ Իսկ Սիլուրք ոչ խստիւ և ոչ ներելով դադարէին 'ի պատերազմելոյ. և հարկ եղև զօրավարին բանակեցուցանել զլեգէոնս առ նոսա. և առ 'ի յաջողութիւն յաղթութեան՝ ած 'ի Կամուլոդոն, գաղթական հզօր յանդաստանս՝ զորս կալեալ էր 'ի թշնամեաց, և զՀինաւուրց զօրականն, 'ի պատսպարան ընդդէմ ապստամբաց և 'ի խրատ նիզակակից ազգաց պատկառ կալոյ օրինաց։

ԼԳ. Մղեցաւ ապա ընդդէմ Սիլուրաց պատերազմ. սոքա ամենիք 'ի բնէ, յանդգնեալ էին 'ի զօրութիւն Կարակտակեայ զօրավարի, որ 'ի բազում վտանգս և 'ի յաջողուածս բազումս գեր 'ի վերոյ այլոց զօրավա-

ըաց Բրիտանիոյ կացեալ էր։ Սա խորամանկութեամբ իւրով, և վայրացն դիպողութեամբ 'ի դարան, հզօրագոյն գտեալ էր. այլ զի անհաւասար էր զօրաք, ած զպատերազմն յՈրդովիկիա. և յինքն յարեցուցեալ զամենեսեան՝ որ ոչ վստահէին 'ի խաղաղութիւնն ընկալեալ 'ի մէնջ, խիզախեաց 'ի փորձ յետին. և ընտրեալ իւր յասպարէզ մարտին՝ ուր մատուցումն և նահանջ բազմավտանգ էր մեզ, իսկ իւրոցն նպաստաւոր, կալաւ զվերինս սեպացեալս։ Իսկ ուր ուրեք դիւրամատոյցքն էին, շեղջակուտեալ անդ ժայռս՝ ամբարձ որպէս ամբարտակս. և մերձ առ տեղեաւն ընթանայր գետ դժուարահուն, և գունդք հսկայազօրք շուրջ կային որպէս պատնէշք։

ԼԴ. Յայնժամ զօրավարքն երկաքանչիւրոց աղգաց շրջէին յորդորէին սրտապնդէին զզօրս՝ թեթև ցուցանելով նոցա զվտանգն, քաջայոյս առնելով զնոսա, և ամենայն հնարիւք խրախուսելով 'ի պատերազմ։ Իսկ ինքն Կարակտակ այսր անդր երթևեկեալ՝ գոչէր. Ա.յս օր է, և այս պատերազմ ազատութեան Բրիտանիոյ, կամ մշտնջենաւոր ծառայութեան։ Եւ յիշեցուցանէր նոցա զնախնիս՝ որք զիշխանապետն Կեսար հալածեցին, և քաջութեամբ զերծեալք 'ի տապարաց և 'ի հարկաց՝ անարատ զկանայս իւրեանց և զորդիս ունէին։ — Եւ 'ի խօսել նորա զայսոսիկ և զայսպիսի բանս, զօրքն առ հասարակ զաղաղակ բարձեալ՝ երդնուին ըստ իւրաքանչիւր հայրենի կրօնիցն, յաչս եդեալ զվերս և զմահ։

ԼԵ. Յապուշ հարաւ զօրավարն Հռովմայեցի ընդ եռանդն նոցա. անցք գետոյն, աւեր պատնիշին, լերինք սեպացեալք, վայրք շուրջանակի դժնէատեսիլք՝ ծածկեալք զինուք և զօրաք, ահ արկանէին 'ի նա։ Իսկ զօրքն խնդրէին պատերազմ, և աղաղակէին՝ յաղթել ամենայնի զօրութեամբ. յաւելուին և զօրագլուխք և հազարապետք զնոյն գոչելով արծարծանել զեռանդն զօրականին։ Յայնժամ Ոստորիոս շուրջ աչս ածեալ, դիտել ուր անմատոյցք էին վայրք և ուր մատչելի, խաղացոյց զզօրսն զայրագնեալս, և էանց ընդ գետն՝ ոչ յոյժ դժուարաւ։ Եւ իբրև մերձ եղեն 'ի պատնէշս՝ նետիւք սկսան մարտնչել. և յոգունք 'ի մե-

րոցն վիրաւորեալ, բազումք ևս սպանան. այլ ապա ասպարափակ զգլխով կազմեալ հովանի, աւերեցին զխառնակոյտ կարկառս քարանց. և 'ի գալ Ճակատել նոցա 'ի դիւրի, ընկրկեցան բարբարոսք 'ի վեր կոյս լերանց։ Յայնժամ և մերքն մեկնակազէնք և սպառազէնք զհետ նոցա դիմեցին, և ընդ տարափով նետից նոցա և գեղարդեանց Ճեպընթացք՝ հալածէին զխուռն 'ի խուռն աղմկեալ ռազմն նոցա. և զի բրիտանիկք չէին ամրացեալ Ճոշիւք և սաղաւարտօք, 'ի մարտնչելն ընդդէմ օժանդակ գնդաց հարեալ լինէին մինդօք և սուսերօք 'ի լեգէոնաց. իսկ եթէ ընդդէմ սոցա դառնային, 'ի սակերց և 'ի նիզակաց օգնական գնդաց տապաստ անկանէին։ Պայծառ եղև յաղթութիւնն. գերեցան կին և դուստր Կարակտակեայ, և եղբարք նորա եղեն անձնատուր։

Լ.Զ. Իսկ ինքն, քանզի չէր ապահովութիւն 'ի ձախողութեան, վստահացեալ 'ի հաւատարմութիւն Կարտիսմանդուայ դշխոյին բրիգանտացւոց, մատնեցաւ 'ի նմանէ կապեալ՝ 'ի ձեռս յաղթականաց յիններորդի ամի բրիտանեան պատերազմին։ Վասն որոյ համբաւ նորա ընդ կղզիս և ընդ մերձակայ գաւառս տարածեալ՝ մինչև Յիտալիա հռչակէր, և ցանկային ամենեքեան տեսանել զնա ժ և որպիսի՞ ոք էր, որ այնչափ ամն ընդդէմ զօրութեանց մերոց խիզախէր։ Եւ ոչ 'ի Հռովմ անուն Կարակտակեայ եղև աննշան. և ինքնակալին փառաւորելով զյաղթութիւն իւր, զփառս պարտելոյն յաՃախէր։ Կոչեցաւ ժողովուրդն իբր 'ի հանդէս երևելի. զումարտակք ատենականք եկին կացին զինուորեալք 'ի դաշտին մերձ 'ի բանակետղ իւրեանց։ Յայնժամ զհետ ձեռասուն բարեկամաց արքային բարձեալ բերէին ասպազէնք և մանեակք, և որ ինչ յարտաքին պատերազմունս աւար առեալ էր նորա 'ի թշնամեաց. և ապա զհետ գային եղբարքն նորա և դուստր և կին. և զհետ ամենեցուն նոցա ինքն երևէր։ Այլոց բանք անհամեմատ ազնուականութեան իւրեանց եղեն առ ահի. բայց ինքն արքայն՝ ոչ 'ի դէմս խոնարհեալս, և ոչ յաղերս գթութեան յատենի անդ երևեալ, խօսեցաւ արիաբար և ասէ.

Լ.Է. Եթէ ըստ ազնուականութեան և բարեբաս-

տութեան իմում լեալ էր յիս չափաւորութիւն 'ի յա-
ջողութեան, որպէս բարեկամ գայի 'ի քաղաք այսր,
և ոչ որպէս գերի. և ոչ անարժան թուէր քեզ ընդու-
նել 'ի նիզակակցութիւն զայր սերեալ 'ի պայծառ
նախնեաց, և զիշխեցող ազգաց բազմաց։ Այլ արդ
չարաբաստութիւն իմ յաւել քեզ փառս. եղեն ինձ
երիվարք և սպասաւորք, զէնք և գանձք, և չեն ինչ
զարմանք եթէ կորուսի զայնս ակամայ։ Եթէ ձեզ
կամք իցեն իշխել ամենեցուն, ոչ վասն այնորիկ պարտք
են ամենեցուն զծառայութիւն յանձն առնուլ. եթէ
վաղ ընդ փոյթ լինէի ես անձնատուր, ոչ բախտ իմ և
ոչ փառք պայծառանային. և պատուհաս իմ 'ի մոռա-
ցօնս անկանէր. իսկ եթէ շնորհես դու ինձ զկեանս,
յիշատակ գթութեան քո յաւէրժ արձանացայց։ —
Ի բանից աստի շարժեալ ինքնակալին՝ ներեաց նմա, և
կնոջ նորա և եղբարց. որք լուծեալ 'ի կապանաց,
զնոյն մեծարանս շնորհակալեաց որպէս ինքնակալին՝
մատուցին և Ագրիպպինայ, որ ոչ անտի 'ի բացեայ
բազմէր ուրոյն 'ի բեմի։ Նոր արդարև և անլուր առ
նախնիս՝ վերաբազմել կնոջ 'ի գահոյս, զհռովմէական
դրօշս ունելով զառաջեաւ։ Իսկ ինքն պանծայր որպէս
ժառանգ հարցն իւրոց ինքնակալութեան։

ԼԸ. Կոչեցան ապա Հարք 'ի ժողով, և բազում և
պանծալի Ճառք եղեն 'ի ծերակուտի անդ զգերու-
թենէ Կարակտակեայ, ոչ ինչ նուազ փառս ցուցանե-
լով զայն ժողովրդեան Հռովմայ, քան յորժամ Պ.
Սկիպիոն զՍիփակ, Լ. Պաւլոս զՊերսէոս, և այլք զայլս
'ի թագաւորաց կապեալս ածէին 'ի տեսիլ։ Սահման-
նեցաւ Ոստորեայ շուք յաղթանակի. բայց յաջողու-
թիւնք նորա անդ զկայ առին, և յայնմհետէ կերպա-
ւանափոխ եղև բախտ նորա. թերևս զի բարձմամբ
Կարակտակեայ համարէր փլուզեալ զպատերազմն, և
թերահոգ լինէր հրահանգաց զօրացն մերոց. կամ զի
թշնամիք առ գութ մեծի արքային իւրեանց՝ ամենա-
գոյնք 'ի վրէժխնդրութիւն պատրաստեցան։ Մի 'ի
զօրավարաց բանակին, և բազում գումարտակք լե-
գէոնականք՝ որ թողեալ էին առ Սիլուրս 'ի շինուած
ամրոցաց, շուրջ պատեցան 'ի թշնամեաց. և եթէ ոչ
'ի մերձակայ շինից և 'ի բերդորէից վաղ հասանէին

զորք 'ի Թիկունս, սպառնալու լինէր կոտորած։ Սակայն զորավարն և հարիւրապետք և ընտիրք 'ի զորականէն կորեան. և յետ սակաւ միոյ Ճարակակիրք մեր, և հեծելագունդն յղեալնոցա յօգնութիւն, կոտորեցան։

ԼԹ. Յայնժամ Ոստորիոս եհան զհետեւակազօրն 'ի Ճակատ. այլ և ոչ այնու զօրացուցանէր զփախստեայս, եթէ ոչ դիմէին և լեգէոնք 'ի մարտ։ Նոցին զօրութեամբ հաւասարեցաւ մարտն, և ապա հզօրագոյն գտաք. 'ի փախուստ դարձան թշնամիք սակաւ ինչ կոչըստեամբ, զի տարաժամէր օրն. և յայնմհետէ եղեն յարձակմունք յաՃախաւորք, զօրէն հինախաղաց արշաւանաց, ընդ անտառս և ընդ ՃախՃախուստս, ըստ պատահման կամ ըստ քաջութեան, յախուռն կամ խորհրդով, 'ի վրէժխնդրութիւն կամ յաւարհարութիւն, հրամանաւ զօրավարաց կամ յանգէտս նոցին։ Սաստկագոյն էր յամառութիւն Սիլուրաց, որ զայրացեալ էին 'ի համբաւոյ բանից հռովմայեցւոյ զօրավարին, որոյ ասացեալ էր՝ զի որպէս երբեմն սիկամբրացիք կոտորեալք, և մնացորդք նոցա 'ի Գալլիա էին վարեալ, նոյնպէս պարտ էր և զանուն Սիլուրաց առնել բնաջինջ։ Վասն որոյ 'ի վերայ հասեալ նոցա երկուց յօժանդակ գնդաց՝ որք ագահութեամբ զօրավարաց իւրեանց մոլեգինս աւար հարկանէին, առին 'ի նոցանէ զկապուտն և զգերին, և բաշխեալ զայնոսիկ այլոց ազգաց՝ յարուցին և զնոսա յապստամբութիւն։ Ոստորիոս 'ի ծանրատաղտուկ հոգոյն ընկՃեալ, զրաւեցաւ 'ի կենաց. և ուրախ եղեն թշնամիք՝ զի զօրավարն քաջ, թէպէտ և ոչ 'ի սրոյ իւրեանց, այլ 'ի պատերազմի անդ անկաւ։

Խ. Իբրև գիտաց ինքնակալն զմահ տեղակալին, առ 'ի չթողուլ զգաւառն յանիշխանութեան՝ առաքեաց փոխանակ նորա զԱ. Դիդիոս։ Որ թէպէտ և փութացաւ հասանել անդր, սակայն չեգիտ անվտանգ զպատերազմն. զի յայնմ վայրի ձախողեալ էր լեգէոնին՝ որում զօրավարէրն Մանլիոս Վալենտ. և զգոյժ իրացն ստուարացուցանէին թշնամիք յահարկութիւն նորեկ զօրավարին։ Ինքն ևս յաւելոյր 'ի լուեալսն, որպէս զի 'ի յաջողելն՝ մեծագոյն լիցին փառք իւր, և 'ի տեսել ձախողութեան՝ լիցի անբասիր։ Այս ևս վտանգ 'ի Սիլուրաց

անտի էր հասեալ, հինահարաց շուրջանակի. մինչև ժամանեալ Դիդիոսի՝ դարձոյց զնոսա՝ի փախուստ։ Յետ գերութեանն Կարակտակեայ՝ հմտագոյն իրաց պատերազմի կացեալ էր առ նոսա Վենուսիոս, որ էր՝ի բրիգանտացւոց քաղաքէն, որպէս վերագոյն ասացի։ Սա ցորչափ հաւատարիմ եկաց ընդ Հռովմայեցիս՝ պաշտպանեցաւ զօրութեամբ նոցա, ածեալ՝ի կնութիւն զդշխոյն Կարտիսմանդուա. այլ ապա՝ի գժտել ընդ տիկնոջն, և՝ի հասանել մարտին՝ի վերայ, դարձաւ և ընդ մեզ՝ի թշնամութիւն։ Զառաջինն՝ի մէջ իւրեանց ևեթ էր պատերազմն, և Կարտիսմանդուայ խորագէտ մարթանօք ձերբակալ արարեալ էր զեղբայր Վենուսեայ և զազգականս նորա. այլ յայնժամ զայրացեալ թշնամեաց, և չհանդուրժեալ նախատանաց կալոյ ընդ ձեռամբ կնոջ, զինուորեցին զմանկտին ընտիր և կորովի, և յարձակեցան յաշխարհ նորա։ Ազգ եղև հռովմայեցւոց, և արձակեցին գունդս յօգնականութիւն տիկնոջն. որոց սաստիկ պատերազմաւն, եկաց՝ի սկզբան անդ մարտն երկուստեք անպարտելի. այլ ապա յաջողեաց մեզ։ Եւ գունդ մի՝ի լեգէոնաց, որում Կեսիոս Նասիկա զօրավարէր, ոչ ինչ նուազ զօրացաւ՝ի մարտի անդ. քանզի Դիդիոս ծանրացեալ ալեաք և փառաք, ՝ի ձեռն զօրապետաց իւրոց մղէր պատերազմ, շատ համարեալ սանձահարել ևեթ զթշնամին։ Այս անցք թէպէտ և առ երկոքումբք տեղակալաք անցին, ընդ Ոստորեաւ և ընդ Դիդեաւ, այլ խառն զայնոսիկ պատմեցի, զի մի՝ի բաժանելն՝ հարևանցի լիցի նոցա յիշատակ, արդ՝ի կարգ ժամանակին դարձայց։

ԽԱ. Յաւուրս Տիտոսի Կլաւդեայ հինգերորդ անգամ՝ բդեշխութեան, և Սերուիոսի Որփիտեայ բդեշխի, տուաւ Ներոնի այրականն պատմուճան կանուխ քան զժամանակակէտն, որպէս զի բաւական՝ի յանձանձանս իրաց պետութեան թուեսցի։ Եւ ինքնակալն մտադիւր շնորհեաց մարդահաճութեան ծերակուտին՝ առնուլ Ներոնի զբդեշխութիւն՝ի քսաներորդ ամի տիոց իւրոց, և նոյնհետայն վարել զիշխանութիւն փոխանակ բդեշխի արտաքոյ Հռովմայ, և կոչել իշխանմանկտուոյ։ Յաւելան և բաշխոյք զօրականին, և պարէն

ժողովրդեան. և 'ի խաղս կրկիսականս, որ առ 'ի յան-
կուցանել զսիրտ ռամկին ածէին 'ի հանդէս, զգեցեալ
Բրիտանիկեայ եղրածիրանի, իսկ Ներոնի զգեստ յաղ-
թական, ածան 'ի տեսարան անդր. որպէս զի զսա 'ի
շուք կայսերական, և զնա 'ի ձև մանկական տեսցէ
ժողովուրդն, և զհանդերձեալ բախտ երկաքանչիւ-
րոցն գուշակեսցէ։ Եւ հարիւրապետաց և հազարա-
պետաց՝ որ կարեկից լինէին Բրիտանիկեայ՝ կէսք զբը-
պարտութեամբք, այլք փառաւորեալ պաշտամամբք
'ի բաց բարձան 'ի նմանէ, և ձերբազատք իսկ նորա
հաւատարիմք պատեհաւս այսուիկ՝ մերժեցան։ Ի
միում աւուրց 'ի հանդիպել միմեանց Ներոնի ընդ
Բրիտանիկեայ, ողջունեաց Ներոն զԲրիտանիկ յա-
նուանէ. և յողջունել Բրիտանիկեայ ևս զՆերոն ա-
ռաջնով անուամբն Դոմիտիոս, բողոք կալաւ Ագրիպ-
պինա առ ինքնակալին՝ որպէս թէ նշանակ էր այն
գժտութեան, և անարգէր այնուիկ որդեգրութիւն
Ներոնի, և անդէն յարքունիս եղծանէր վճիռ ծե-
բակուտին և հրաման ժողովրդեան. և յաւել՝ զի եթէ
ոչ սանձահարէր նա զչարութիւն սադրողաց զայն-
պիսի թշնամանս, վտանգ մեծ հասանէր հասարակաց։
Սրամտեալ Կլաւդիոսի ընդ այն՝ իբր ընդ ոճիր մեծ,
հրամայեաց աքսորել և 'ի մահ մատնել զառաքինա-
գոյնս 'ի դաստիարակաց որդւոյն, և փոխանակ նոցա
կացոյց 'ի պահ զընտրեալս 'ի մօրուէն։

Թ. Սակայն չև ևս Ագրիպպինա զվերջինն 'ի հնարից
իշխերնիութել, ցորչափ ատենական գնդաց հրամատար
էին Լուսիոս Գետաս և Հռուփիոս Կրիսպինոս, զորս հա-
մարէր շնորհապարտս Մեսսալինայ և բարեկամս որդ-
ւոց նորա. ցուցանէր ևեթ ինքնակալին երկպառակեալ
զգունդսն 'ի փառասիրութենէ երկոցունց հրամատա-
ցաց, և ընդ միով զօրավարաւ լաւ ևս ասէր յաջողել
հրահանգաց զօրականին. վասն որոյ կացուցաւ 'ի վե-
րայ նոցա Բուրրոս Աֆրանիոս ականաւոր յիրս պատե-
ազմի, ոչ անգէտ՝ յումմէ՛ ումեքէ յառաջ մատուցեալն
էր։ Զեռն էարկ այնուհետև Ագրիպպինա առաւել ևս
ամբառնալ զշուք իշխանութեան իւրոյ, և կախաղա-
նաւոր կառոյք մտանէր 'ի Կապիտոլ, որ 'ի սկզբանէ
հետէ պահեալ էր քրմաց ևեթ և դիցն դրոշելոց. և

յաւելոյր այս զմեծարանս դշխոյին՝ որ միայն կացեալն էր ցայնժամ դուստր և քոյր և ամուսին և մայր ամենիշխան ինքնակալաց։ Յայսմ վայրի գլխաւորագոյն 'ի պաշտպանս նորա Վիտելլիոս՝ որ առաւել ունէր զնորին առ նմա, դատափետեր յալեորեալ հասակի, ըստ յողդողդ հզօրացն բախտի, ամբաստանեալ 'ի Յունիոսէ Լուպոսէ ատենակալէ, որ քրէական յանցանաց պարտաւոր զնա ցուցանէր հետամուտ ինքնակալութեան։ Եւ մահու արդեաք պատուհասէր զնա Կեսար, եթէ ոչ Ագրիպպինայ՝ սպառնալեօք մանաւանդ քան աղերսանօք՝ շրջեալ էր զմիտս նորա, արգելուլ եթէ չարախօսին զհուր և զջուր՝ որպէս Վիտելլեայ էին կամք։

Խգ. Դէպք բազումք անսովորք յայսմ ամի պատահեցին. չարագոյժ հաւուց յաձախել 'ի Կապիտոլ, կործանել տանց 'ի ստէպ սասանութենէ, և յաղմկել ռամկին յերկիւղէ առաւելագոյն չարեաց՝ ոտնակոխ լինել տկարաց 'ի խռան։ Պակասութեան ցորենոյ, և զհետ այնորիկ հասելոյ սովոյն, համարեցան այսոքիկ նշան. և ոչ 'ի ծածուկ եթէ լինէին զայսմանէ տրտունջք, այլև 'ի դատ առնել Կլաւդեայ յատենի՝ շուրջանակի յարուցեալ խառնաձայն աղաղակք, մղէին զնա ցծայր ատենին, մինչև օգնականութեամբ զօրաց հազիւ անցանել գնալ նմա ընդ ամբոխն զայրացեալ։ Հնդեւտասանից եթէ աւուրց, և ոչ աւելի, ծանուցաւ մնացեալ պարէն 'ի քաղաքին. այլ մեծաւ դիցն մարդասիրութեամբ, և ձմերայնոյն բարեխառնութեամբ ապրեցաւ քաղաքն յանհնարին վտանգին։ Զարմանք մեծ, զի ուր երբեմն 'ի կողմանց Իտալիոյ յաշխարհս հեռաստանեայս ածէին պարէնք, և ուր զարդիս իսկ չէն անբեր անդաստանք մեր, մեք զԱփրիկէ և զԵգիպտոս առաւել մշակեմք, զկեանս հռովմէական ժողովրդեան 'ի վտանգս ծովածուփ նաւաց և արկածից մատնեալ։

Խդ. Ի նմին ամի խանձեցաւ ընդ Հայս և ընդ Վիրս պատերազմ. անտի և ընդ Պարթևս և ընդ հռովմայեցիս աղմուկք ծանունք դրդեցան։ Թագաւորէր յայնժամ 'ի Պարթևս Վոլոգէս, որ ըստ մայրենի ազգին 'ի Յոյն հարձէ ծնեալ՝ հաւանութեամբ եղբարցն

կալեալ էր զաթոռն։ Վրաց թագաւորէր Փարսման 'ի նախնեացն ժառանգութենէ. Հայոց իշխէր եղբայր նորա Միհրդատ, պաշտպանութեամբս մերով թագաւորեալ։ Փարսմանայ որդի մի էր Հռամիզդ անուն, հսկայաձև հուժկու վարժ 'ի հրահանգս հայրենիս, հռչակաւոր առ ազգս շուրջանակի։ Սա զանձկութենէ սահմանաց թագաւորութեան ծերունւոյ հօր իւրոյ ստէպ և սաստիկս բարբառէր, ոչ կարելով զիղձս իւր թագուցանել։ Փարսման յալիս ծերութեան խիթացեալ յրղձից տիրապետութեան պատանւոյն, և 'ի զօրութենէ նորա՝ որ սիրելին էր ժողովրդեան, այլ ինքն յոյս եդ առաջի նորա՝ ցուցանելով նմա զՀայաստան աշխարհ, ասելով. Ես ետու զայն Միհրդատայ, հալածեալ անտի զՊարթևս. այլ թողեալ առ այժմ զբռնութիւն 'ի բաց, պարտ է մեզ դաւով ընկճել զնա յանպատրաստից։ Յայնժամ Հռամիզդ, իբր թէ գժտեալ ընդ հօր իւրում, և չհանդուրժեալ ատելութեան մօրուին, դիմեաց առ հօրեղբայր իւր. և սիրով մեծաւ ընկալեալ 'ի նմանէ որպէս որդի, դրդեաց զաւագանին Հայոց 'ի վտարանջութիւն, զանխուլ 'ի Միհրդատայ՝ որ պատուասիրէրն զնա։

ԽԵ. Եւ պատճառանաք հաշտութեան դարձ արարեալ առ հայր իւր՝ ասէր պատրաստեալ որ ինչ մարթէրն դաւով, և զի զինուք պարտ էր լրումն առնել գործոյն։ Յայնժամ Փարսմանայ բարուրս մարտի հնարեալ՝ իբր թէ 'ի պատերազմել իւրում ընդդէմ արքային Աղուանից, և 'ի կարդալ յօգնութիւն զՀռոմայեցիս, խափանեալ էին նոքա յեղբօրէն, կամէր կործանմամբ նորա խնդրել զվրէժ։ Եւ ետ զօր ծանր որդւոյ իւրում. որոյ յանկարծ 'ի վերայ հասեալ Միհրդատայ և ահաբեկեալ զնա, հալածեաց 'ի դաշտէն 'ի Խոռնիս բերդ։ Եւ էր բերդն այն ամուր տեղեաւն և պահակապանաք, որոց զօրավար էր Կելիոս Պոլլիոն, և հարիւրապետ՝ Կասպերիոս։ Ամենևին անծանօթ են բարբարոսաց կազմածք պարսպամարտք, և արուեստ պաշարման քաղաքաց, ուր մերքս քաջահմուտք են այնր մասին զինուորութեան։ Հռամիզդ յարձակմունս բազում կորստեամբ ևս զօրացն արարեալ 'ի զուր, ձեռն էարկ ապա 'ի պաշարումն. և 'ի տեսանելն արբ-

համարհեալ զզօրութիւն իւր, զագահութիւն պահ-
պանապետի բերդին խորհեցաւ առնել կաշառակուր։
Կասպերիոս աղերսեր զՊոլլիոն՝ մի զարքայն Նիզակա-
կից, մի և զՀայաստան աշխարհ զպարգև ժողովուր-
թեանն Հռովմայ՝ գնոց վաճառել անօրէնութեամբ։
Եւ 'ի պատճառել Պոլլիոնի զբազմութիւն թշնամեաց,
և Հռամիզդի զպատուէր հօրն, պայմանեցաւ դուլ
առնել զինուց. և մեկնեցաւ հարիւրապետն 'ի բերդէ
անտի, 'ի մտի եդեալ՝ 'ի չկարելն համոզել զՓարսման
դադարելոյ 'ի մարտէն, ազդ առնել կուսակալին Ասորւոց՝
յորում վտանգի կային Հայք։

Խզ. Ի մեկնել հարիւրապետին՝ Պոլլիոն իբր 'ի դրժնեայ
ոստիկանէ զերծեալ, յորդորեր զՄիհրդատ յուխտ նիզակակցութեան. յուշ առնէր նմա զեղբայրութեանն զոդ, զերիցութիւն Փարսմանայ, և զայլ
ազգակցութիւնս, քանզի փեսայ նորա էր և աներ
Հռամիզդի։ Ցուցաներ զի և Վիրք, թէպէտ և զօրաւորագոյնք յայնժամ, ոչ հրաժարէին 'ի խաղաղութենէ. զի հաւատադրժութիւն ևս Հայոց քաջածանօթ էր, և միայն ապաւէն իւր ճնայր բերդն այն կարօտ պարենից. և խրախուսեր զնա մի երկմտել, ընտրել զիրաւախոհութիւն անարիւն քան զզէնս։ Բայց
Միհրդատ ոչ իշխեր վստահել 'ի խրատ Պոլլիոնի, որոյ
զմի 'ի հարճից արքունեաց հրապուրեալն էր 'ի պղծութիւն, և պատրաստ իսկ էր յամենայն վատութիւնս
վասն կաշառոյ։ Յայնմ վայրի Կասպերիոս հարիւրապետ հասեալ առ Փարսման, խնդրեր լուծանել Վրաց
զպաշարումն։ Նա պատ 'ի պատ, և յաճախ ևս հաւանական բանիւք առաջի ամենեցուն տուեալ պատասխանի, իսկ 'ի ծածուկ պատուէր 'ի ձեռն հրեշտակաց
յղեր առ Հռամիզդ՝ փութալ գուն գործել յառումն
բերդին։ Յաւելուին վարձք անօրէնութեանն, և Պոլլիոն գաղտ հրապուրանօք համոզեր զզօրականն խընդրել ուխտ խաղաղութեան, սպառնալեօք լքանելոյ
զամուրն և գնալոյ 'ի բաց։ Յորմէ ստիպեալ Միհրդատայ, յանձն էառ զժամանակ և զտեղի խօսելոյ 'ի խաղաղութիւն, և ել յամրոցէն։

Խէ. Կանխեաց Հռամիզդ, գիրկս էարկ նմա. և 'ի
վերին երեսս մեծարանօք աներ իւր կոչելով զնա և

հայր, երդնոյր՝ ոչ սրով և ոչ դեղով դաւել զնա. և ած 'ի մերձակայ անտառն՝ ուր ասէր պատրաստեալ զոհ, առ 'ի կռել առաջի դից զուխտ խաղաղութեան։ Սովո- րութիւն է արքայից՝ 'ի կռել անդ զուխտ՝ կցել աջ ընդ աջ, և բոյթ ընդ բութոյ կապել ուժգնապիրկ. և 'ի յորդել արեանն 'ի ծայրս մատանցն՝ թեթևակի ցտմամբ ցայտեցուցանել արիւն, և լիզուլ զիրերացն. զի աստուածային ինն ուխտս այս համարի առ նոսա, իբր խառնելով արեանցն ընդ միմեանս՝ սրբազանեալ։ Այլ որ անդ զհանգոյցն գործէր, անկեալ կեղծեաք և փարեալ զծնգովք Միհրդատայ՝ տապալեաց զնա. և բազմաց այլոց 'ի վերայ հասեալ՝ արկին զարքայն 'ի կապանս. և ոտնակապաք, որ 'ի նախատինս է առ բար- բարոսս, ածին 'ի քարշ. մինչդեռ ռամիկն՝ յորոց վերայ բռնացեալն էր՝ թշնամանս և հարուածս արձակէր 'ի նա։ Էին և ընդ հակառակն, ոլք ողորմէին ընդ այն- պիսի յեղափոխութիւն բախտի նորա. և կին նորա մանկամբքն փոքրըկամ.ք զհետ երթեալ, ընդ զվայրս կականաւ։ Փակին նոքա 'ի սայլս վաչեայս, մինչև լիցի 'ի Փարսմանէ հրաման. և թէպէտ բռնագոյն էր 'ի նմա իղձ թագաւորելոյ քան զսէր եղբօր և դստեր, և սիրտ նորա պատրաստ յեղեռն ամենայն, սակայն խնայեաց 'ի տեսիլ աչաց, և ոչ կամեցաւ տալ զնոսա սպանանել առաջի իւր։ Եւ Հռամիզդ, որպէս թէ յի- շելով զերդումն իւր, ոչ սուր և ոչ մահադեղ ընդդէմ քեռ իւրոյ և հօրեղբօր 'ի կիր էարկ, այլ տապաստ զնոսա ետ արկանել յերկիր, և կապերտ բազում ծանրաբեռն 'ի վերայ արկեալ՝ հեղձամահ առնել զնոսա։ Որդիք ևս Միհրդատայ, քանզի լային զմահ ծնողաց իւրեանց, սրախողխող սպանան։

ԽԸ. Ի լուր մատնութեանն Միհրդատայ, և սպա- նողացն տիրելոյ թագաւորութեան նորա, կոչեաց Կուադրատոս ատեան. և պատմեալ անդ զամենայն անցս, ետարց թէ պարտ էր վասն այնորիկ խնդրել վրէժ։ Սակաւուց էր փոյթ զպատուոյ հասարակաց. բազումք լաւ զապահովագոյնն համարէին, և էր նոցա 'ի խնդութիւն լսել զոճիրս բարբարոսաց՝ իբր խանձ ատելութեան նոցա ընդ միմեանս. և ասէին՝ զնոյն իսկ զՀայաստան յինքնակալաց հռովմայեցւոց ոչ 'ի պարգև՝

այլ 'ի հերձուած ազգին պարգևեալ. Թող տիրեսցէ Հռոմիզդ, բայց ատեցեալ և անփառունակ. առաւելագոյն է մեզ անտի օգուտ քան թէ փառք տիրանայր։ — Յաղթեաց կալաւ այս բան 'ի խորհրդին. այլ զի մի թուեսցի հաւանել նոցա ընդ ոճիրն, և այլազգ ինչ ինքնակալն հրամայեսցէ, հրեշտակս արարին առ Փարսման՝ հրաժարել նմա 'ի սահմանաց Հայաստանի, և 'ի բաց կոչել անտի զորդի իւր։

Խթ. Գործակալ 'ի Կապադովկիա կայր յայնժամ Յուլիոս Պելիգնոս, այր վատասիրտ, և ձևով մարմնոյն ծաղրելի և արհամարհեալ, այլ մտերիմ Կլաւդեայ. որ նախ քան զինքնակալելն՝ զանգործ յուլութիւն իւր կենակցութեամբ ընդ խեղկատակս զբօսուցանէր։ Սորա զօգնական գունդս գաւառին զիւրև ածեալ, որպէս թէ առ 'ի թափել անդրէն զՀայաստան, իբրև սկսաւ զերկիրս նիզակակից ազգաց առաւել քան ըզթշնամեացն աւար հարկանել, թօթափեցան 'ի նմանէ իւրքն. և 'ի յարձակել բարբարոսաց 'ի վերայ նորա, չոգաւ 'ի խնդիր ապաւինի առ Հռոմիզդ. և կաշառեալ 'ի նմանէ, խրատ ինքնայորդոր ետ նմա՝ թագառնուլ, և հանդիսի թագակալութեան նորա եկաց առ ընթեր որպէս խրատտու և արբանեակ։ Լու եղև 'ի Հռովմ համբաւն չար. և զի մի համախոհ Պելիգնեայ և այլք կարծիցին, առաքեցաւ Հելուիտիոս Պրիսկոս տեղակալ հանդերձ լեգէոնաւ, հայթայթել ըստ հարկի ժամանակին հնարս իրացն աղմկելոց։ Նորա անցեալ փութանակի ընդ լեառն Տաւրոս, քաղցրութեամբ բազմաւ քան բռնութեամբ ցածուցանէր զաղմուկն. այլ եհաս նմա հրաման դառնալոյ յԱսորիս, զի սպառնայր անտի պատերազմ ընդդէմ Պարթևաց։

Ծ. Քանզի Վոլոգէս զայն ժամ պատեհ համարեալ զբռամբ ածելոյ անդրէն զՀայաստան, ուր նախնիք իւր թագաւորէին, և օտար ոք բռնակալեալ էր զայն անօրէնութեամբ, զօրաժողով եղև, և պատրաստէր թագաւորեցուցանել անդ զեղբայր իւր Տիրիթ, զի մի ումեք 'ի տանէ իւրմէ լեցի կեալ առանց թագաւորելոյ։ Ի հասանել Պարթևաց՝ հալածական գնացին Վիրք անպատերազմ։ և Արտաշատ և Տիգրանակերտ

քաղաքք Հայոց եղեն անձնատուր։ Ի վերայ եհաս կա-
ղէմեռն, և պակասութիւն պարենից 'ի Թերահոգ
զգուշութենէ, և ախտ մաշարայական զհետ եկեալ,
ստիպեցին զՎոլոգէս ձեռնթափ լինել յառաջարկու-
թենէն. և Հռամիզդ եմուտ անդրէն 'ի լքեալն Հայաս-
տան, դժնէագոյն քան զառաջինն՝ վասն ապստամբու-
թեան աշխարհին, և պատրաստութեան վտարանջե-
ղոյ նորա անդրէն ընդ առնուլն պարապ։ Հայք, թէ-
պէտ և սովորեալք 'ի ծառայութիւն, ոչ ևս հանդուր-
ժեալ՝ պաշարեցին զարքունիսն զինուք։

ԾԱ. Հռամիզդ յանհնարինս անդ՝ յերագութիւն
ձիոցն ապաստանեալ՝ զերծաւ հանդերձ կնաւն։ Կին
նորա թէպէտ և յղի, սակայն յերկիւղէ թշնամեաց
և վասն սիրոյ առն իւրոյ բուռն արար անձին առ
ժամն 'ի փախուստ. այլ ապա յանդադար արշաւասոյր
ընթացից ձգտեալ ընդերացն՝ աղերս առն իւրում
արկանէր փրկել զինքն 'ի թշնամանաց գերութեան,
յանձն առեալ զմահ ոչ անփառունակ։ Հռամիզդ
գիրկս արկանէր նմա, սփոփէր զնա 'ի սկզբան և քա-
ջալերէր. մերթ ընդ առաքինութիւն նորա զարմա-
նայր, և մերթ կասկածէր, թէ գուցէ 'ի մնալն կեն-
դանի՝ անկցի 'ի ձեռս այլոց. մինչև ապա ձգեալ զսու-
սեր, եհար զնա. և 'ի քարշ ածեալ յեզր Երասխայ՝
արկ 'ի գետն, զի մի և դի նորա բարձցի յումեքէ. իսկ
ինքն ձիաթափ հասանէր 'ի Վիրս 'ի հայրենին իւր
թագաւորութիւն։ Բայց Զենոբիա, քանզի այս անուն
էր կնոջն, հեղիկ ծփանօք ընդ եղերս գետոյն ա-
ծեալ յալեաց, զկենաց շնչոյ դեռ ևս տայր նշանակ։
Զոր տեսեալ հովուաց, և 'ի վայելչութենէ դիմաց նո-
րա ծանուցեալ՝ զի չէր յանհնանից ոք, առեալ պատե-
ցին զվէրս նորա՝ արկեալ 'ի վերայ ըստ գեղջկիցն հայ-
թայթանաց սպեղանիս. և լուեալ զանուն նորա և
զանցս, ածին զնա յԱրտաշատ. և անտի հասարակաց
խնամովք ածաւ առ Տիրիթ, և սիրով 'ի նմանէ ըն-
կալեալ՝ յանձանձէր որպէս դշխոյ։

ԾԲ. Աւ բդեշխութեամբն Սիլլայ և Սալուիոսի
ՈԹոնի, Փուրիոս Սկրիբոնիանոս վարեցաւ յաքսոր,
որպէս թէ զմահ ինքնակալին 'ի Քաւդեայց հետա-
զօտեալ. յաւելուին 'ի ցոյց յանցանացն զՅունիայ մօր

նորա զանժուժութիւն կալոյ յաքսորանս 'ի լուր Կամիլլոսի Սկրիբանիանոսի հօր նորա ապստամբելոյ 'ի Դալմատիա։ Իղձ միւսանգամ խնայելոյ 'ի տոհմն թշնամի՝ էած զինքնակալն 'ի գութ. բայց աքսորելոյն ոչ յերկարակեաց այնուհետև եղեն կեանք. և մեռաւ նա ըստ ոմանց օրհասիւ, և ըստ այլոց դեղամահ, որպէս իւրաքանչիւր ումեք թուեցաւ համբաւել։ Սահմանեցաւ վճիռ խիստ 'ի ծերակուտէն՝ վտարել զաստղահմայս յԻտալիոյ, այլ 'ի զուր։ Գովեաց ապա ինքնակալն զայնոսիկ, որք վասն չքաւորութեան հրաժարէին ինքնակամ յատենակալութենէ ծերակուտին. և 'ի բաց եհան, որք մնալով անդ՝ յաւելուին 'ի կարօտութիւն իւրեանց զժպրհութիւն։

ԾԳ. Յետ այնորիկ եղև խորհուրդ 'ի ծերակուտին վասն պատուհասելոյ զկանայս, որք ընդ գերիս անկանէին. և վճռեցաւ՝ զի որք յանգէտս տեառն գերուին անկղիտանային կանայք, կացցեն և ինքեանք 'ի գերութեան. իսկ որք հաւանութեամբ տեառն նոցա, ընդ ձերբազատս կացցեն։ Եւ Պալլասայ, յորմէ զխորհուրդն զայն առաջարկեալ ասէր ինքնակալն, Բարեաս Սորանոս՝ որ սահմանեալն էր 'ի բդեշխութիւն՝ համարեցաւ տալ զօրէնս պատուոյ կուսակալութեան, և հարիւր յիսուն բիւր սեստերտ։ Յաւել և Սկիպիոն Կուռնելիոս՝ զի արժան էր մատուցանել նմա հրապարակաւ շնորհակալիս, քանզի 'ի թագաւորաց Արկադիոյ սերեալ՝ քան զաղնուականութիւն իւր վաղնջական նախամեծար արարեալ էր զօգուտ աշխարհին, և ընդ պաշտօնեայս ինքնակալին յանձն առնոյր կալ։ Կլաւդիոս յայտ արար, զի Պալլասայ շատ համարեալ զպատիւն՝ կամէր 'ի չքաւորութեան իւրում կալ մնալ. և դրոշմեալ 'ի տախտակ պղնձի՝ եդաւ 'ի տեսիլ վճիռ ծերակուտին, յորում ձերբազատ՝ որոյ էին երեքարիւր բիւրք սեստերտից՝ մեծարէր որպէս նախանձաւոր փառաց նախնեացն սակաւապիտութեան։

ԾԴ. Այլ եղբայր նորա Փելիքս ոչ նովին չափոյիւք վարէր. 'ի բազում ամաց գործակալ 'ի Հրէաստան կացեալ, զամենայն չարիս գործէր անպատուհաս՝ վրստահացեալ 'ի հզօր զօրութիւն Պալլասայ։ Աղմուկ ինն ապստամբութեան յարուցեալ էր Հրէից, անսաս-

տեալ հրամանին [1] Կայիոսի ինքնակալի, և 'ի լուր մա-
հու նորա հանդարտեալ. բայց երկիւղ էր նոցա՝ թէ
գուցէ զնոյն և այլ ոք յինքնակալաց հրամայեսցէ։
Փելիքս տարաժամ պատժովք գրգռէր զյանցաւորս.
և նախանձաւոր չարեաց նորա էր Վենտիդիոս Կո-
մանոս, որ մասին ինչ այնր գաւառի էր գործա-
կալ, այնպէս զգաւառն բաժանեալ՝ զի ընդ սովաւ
գալիլիացիք, և ընդ Փելիքսիւ կային սամարացիք՝ 'ի
վաղուց հետէ թշնամիք միմեանց, և արհամարհանօք
վերակացուացն ոչ սանձահարէր թշնամութիւն նոցա։
Այլ հարկանէին զերկիր միմեանց, հրոսակս հինից
ասպատակաւորաց 'ի միմեանս արձակէին, դարան
գործէին միմեանց, և երբէք երբէք զէն առեալ 'ի
պատերազմ՝ զառ և զապուռ առ վերակացուս իւրեանց
ածէին։ Որոց 'ի սկզբան անդ ուրախ լեալ, 'ի սաստ-
կանալ ապա վտանգին՝ զինուք կամեցան նուաճել զնո-
սա. այլ հարան կոտորեցան զօրք իւրեանց։ Բորբոքէր
հրդեհ մարտին բոցածուալ ընդ գաւառն, եթէ չէր
հասեալ յօգնութիւն Կուադրատոս կուսակալ Ասորւոց. և ոչ յամեաց պատուհաս Հրէից՝ որոց զզօրսն
կոտորեալ էր, զի գլխով իւրեանց հարկեցան լուծա-
նել զվրէժ։ Բայց Կումանեայ և Փելիքսի յապաղեաց
վնիռ. քանզի Կլաւդիոս լուեալ զպատճառս ապստամբութեանն, հրաման ետ դատելոյ և զգործակալս։
Յայնժամ Կուադրատոս ետ Փիլիքսի բազմել ընդ դատաւորս յատենի, որով արդել զչարախօսացն ընդդէմ
նորա պատրաստութիւն, և Կումանոս միայն գտաւ
պարտաւոր չարեացն՝ զոր երկոցունց 'ի միասին էր գործեալ, և հանդարտեաց գաւառն։

ԾԵ. Յետ ոչ բազում ժամանակի ազգք կիլիկեցւոց
վայրենեաց, որ Կլիտքն կոչին, որ յաՃախս և յայլ ժամանակս ապստամբեալ էին, ընդ առաջնորդութեամբ
Տրոսոբորի բանակեալ յայնժամ 'ի դժուարուտս լերանց, յարձակէին անտի 'ի ծովեզերեայս, և բռնանային 'ի վերայ մշակաց և բնակչաց քաղաքացն. նեղէին
մանաւանդ զվաՃառականս և զնաւորդս։ Պաշարեցաւ

1 Այս ինքն կանգնելոյ զպապիկեր նորա 'ի պատճարին Ասորոց։

քաղաքն Անեմոր. և հեծեալք յԱսորւոց հասեալք յօգնու Թիւն ընդ զօրավարութեամբ Կուրտիոսի Սեւերոսի՝ խռովեցան. զի առապարք էին շուրջանակի վայրք, քաջադէպք հետեւակամարտից՝ անգնալի հեծելոց։ Ապա Անտիոքոս Թագաւոր երկրին, ողջբանօք ընդ ռամկին, և դաւով ընդդէմ զօրավարի նոցին, զզօրս բարբարոսացն պառակտեալ, զՏրոսոբոր ընդ գլխաւորս ոմանս ետ սպանանել, զայլս՝ ներելով խաղաղացոյց։

ԾԶ. Զայնու ժամանակաւ կատարէր փորուած լերինն, որ անջրպետէ ընդ լիճն փոկինեան և ընդ Լիրիս գետ. և վասն 'ի տեսիլ ածելոյ բազմութեան զմեծագործութիւնն զայն, արարաւ 'ի լճի անդ հանդէս նաւամարտի, որպէս երբեմն արարեալ էր Աւգոստեայ 'ի գործել զլիճն՝ որ յայնկոյս Տիբերի։ Այլ անդ մանունք էին նաւք և նուազագոյն մարտիկք. իսկ Կլաւդիոս եռաթիս և քառաթիս, հանդերձ ինն և տասն հազար մարտիկօք զինուորեաց, պատեալ շուրջանակի լաստիւք, զի մի՛ լիցի թափառել նաւաց 'ի բացեայ. և էր 'ի շրջափակի անդ տեղի ընդարձակ ըստ օրինի 'ի հանդէս ուժոյ թիավարաց, ճարտարութեան ղեկավարաց, արշաւանի նաւաց և ճակատամարտի։ Ի լաստս անդ կարգեալ կային գումարտակք ատենական զօրականին և գունդք հեծելոց, մարտկոցք զառաջեաւ, և 'ի նոսա բաբան և բալիստր՝ կազմածք մեքենայից 'ի նետաձգութիւն։ Իսկ զայլ կողմանս լճին նաւամարտիկք յարկածածուկ նաւօք ունէին։ Ի ծովափունս, 'ի բլուրս, և 'ի հրուանդանս լերանց, որպէս 'ի շուրջ տեսանելեաց վայրս խռնէր անթիւ բազմութիւն եկեալ անդր 'ի մերձաւոր և 'ի հեռաւոր քաղաքաց, ևս և 'ի Հռովմայ. կէսք ըղձիւք կալոյ 'ի զնին, այլք առ 'ի սպաս մատուցանել ինքնակալին։ Իսկ ինքն պայծառազգեաց, արկեալ զիւրև քղամիդ զինուորական. և Ագրիպպինա ոչ ինչ 'ի բացէ՝ զգեցեալ լոդիկ ոսկեհիւս, բազմէին հանդիսադիրք։ Նաւամարտն, թէպէտ և չարագործաց ընդ չարագործս մղեալ, քաջի որերոյ էր արժանաւոր. և յետ բազմաց երկուստեք վիրաւորութեանց, ոչ թողաւ նոցա մահունս 'ի միւսանս գործել։

ԾԼ. Ի կատարել տեսարանին՝ բացան ապա սահանք ջուրց, և յայտնի եղև յայնժամ թերութիւն գործոյն, զի չէր պեղեալ ջրադարձն ցյատակ խորութեան լճին. վասն որոյ պարապ առեալ՝ խորագոյնս պեղեցին. և առ 'ի ձգել անդրէն զբազմութիւնն 'ի ցնին՝ ածաւ սուսերամարտ 'ի հանդէս, արկեալ կամուրջս զլճին վասն հետևակամարտ կռուոյ։ Բայց խրախունք յելս ջուրց լճին պատրաստեալ՝ լցին զամենեսեան արհաւրօք. քանզի բռնութիւն ալեացն աղխաղխելով առեալ տանէր որ ինչ մերձ գտանէր, և զՀեռաւորս դղորդմամբ և խոխոջանօք և շառաչմամբ զարհուրեցուցանէր։ Յայնժամ Ագրիպպինայ զպակուցումն ինքնակալին պատեհ առեալ, զՆարկիս Ճարտարապետ գործոյն ամբաստանէր 'ի զոշաքաղութիւն և 'ի գողնս. այլ ոչ լուռ եկաց Նարկիս, զամբարտաւանութիւն դշխոյին և զփառամոլութիւն յանդիմանեալ։

ԾԸ. Յաւուրս բգեշխութեան Դ. Յունիոսի և Կ. Ատերիոսի, Ներոն 'ի վեշտասանամենի էած կնութեան զՈկտաւիա դուստր ինքնակալին։ Եւ 'ի հանդէս բանասիրական վարժից և Ճարտարիսօսութեան՝ զդատ իլիացւոց յանձն առեալ, եցոյց սերեալ զՀռովմայեցիս 'ի Տրովադայ, և հայր յուլեանց ազգատոհմին զԵնէաս. և զայլսն ևս վաղնջական աւանդութիւնս յարակիցս առասպելացն՝ Ճարտարութեամբ 'ի մէջ ածեալ, ընկալաւ ապահարկութիւն իլիացւոց յամենայն տրոց հասարակաց։ Նորին դարձեալ Ճարտարխօսութեամբ գաղթականն բռնոնիացի, այրեացաւեր 'ի հրկիզութենէ, ընկալաւ յօգնութիւն հարիւր բիւր սեստերտ. և շնորհեցաւ վերստին ազատութիւն հռոդացւոց, որոց բազում անգամ կորուսեալ էր զայն վտարանջելով 'ի մէնջ, և անդրէն ստացեալ նիզակակցութեամբ. և ապամեցւոց տուաւ հնգամեայ ապահարկութիւն՝ վասն կործանման քաղաքի նոցա 'ի սասանութենէ։

ԾԹ. Բայց նորին Ագրիպպինայ չարարուեստ հնարք մղէին զՆլաւդիոս և 'ի գժնդակ խստութիւնս։ ԶՍտատիլիոս Տաւրոս զայր մեծափառութամբ կործանեաց առ 'ի գրաւել զպարտէզ նորա, չարախօս զնմանէ կացուցեալ զՏարկուիտիոս Պրիսկոս. սա տեղակալ կացեալ

էր Տաւրոսի 'ի գնալ նորա յԱփրիկէ փոխանակ բդեշ-
խի. և 'ի դառնալ իւրեանց անտի ամբաստանեալ էր
զնա 'ի զօշաքաղութիւն. բայց սակաւ ինչ 'ի մասինս
յայսմիկ գամագիտ լեալ, 'ի հմայս մոգականս ամբաս-
տանէր զնա։ Զհանդուրժեալ Տաւրոսի անարժան զըր-
պարտութեանցն, նախ քան զվՃիռ ծերակուտին ան-
ձին արար. սակայն Տարկուիտիոս արտաքսեցաւ 'ի
ծերակուտէն. և յաղթեցին ատենակալք փառամոլու-
թեանն Ագրիպպինայ, վրէժ խնդրելով 'ի չարախօսէն։

Կ. Ի նմին ամի ինքնակալն զդատաստանս գործա-
կալաց իւրոց պահանջէր համազօր կացուցանել, որպէս
յիւրմէ սահմանեալս. և զի մի թարմատար ինչ համա-
րեսցի պահանջումն իւր, ետ սահմանել զայն հաստա-
տագոյն և լիագոյն վՃռով ծերակուտին։ Քանզի դիւց-
ազնին Աւգոստեայ օրինադրեալ էր առնել դատաս-
տան ասպետաց՝ վերակացուաց Եգիպտոսի, և դա-
տաստանի նոցա զօրել որպէս յատենակալաց Հռով-
մայ դատեալ։ Այսպա և յայլ գաւառս, և 'ի Հռովմ
իսկ, բազում ինչ շնորհեցաւ գործակալաց, որ յառա-
ջագոյն ատենակալաց էր պահեալ։ Իսկ Կլաւդիոս
զամենայն իրաւունս իւր ետ յայնժամ գործակալաց
իւրոց. վասն որոյ այնչափ աղմուկք և պատերազմունք
լեալ էին 'ի կացուցանել սեմբրոնեան օրինաց զաս-
պետս 'ի դատաւոր, և 'ի դարձուցանել սերուիլեան
օրինաց զդատաստանս 'ի ծերակոյտն. և Մարիոս և
Սիլլա վասն այնոցիկ առաւելապէս պատերազմեցան
երբեմն. բայց յայնժամ 'ի մէջ այլ և այլ կարգաց էր
պատերազմն, և որք յաղթէին՝ յանուն հասարակաց
տիրէին։ Կ. Ոպպիոս և Կուռնելիոս Բալբոս եղեն առա-
ջինք, որք 'ի զօրութիւն ինքնակալին զթիկունս հաստ
արարեալ՝ կացին իրաւարարք պայմանաց խաղաղու-
թեան և պատերազմի։ Իսկ զՄատիոսեանց և զՎէ-
տիոսեանց և զայլոց ականաւոր ասպետաց չէն ինչ
պէտք 'ի մէջ ածել զանուանս, ուր Կլաւդիոս զձերբ-
ազատս՝ զորս 'ի վերայ առտնին իրաց կարգեալ էր՝
հաւասարս իւր և օրինաց կացոյց։

ԿԱ. Առաջարկեաց ապա 'ի ծերակուտին ապահարկ
առնել զբնակիչս Կով կղզւոյ, բազում ինչ զհնութենէ
նոցա Ճառեալ. զի նախնի բնակիչս կղզւոյն համարէր

զարգիացիս, կամ զՀայը Լատինայ զԿէոս. և ապա Սոկ-
լեպեայ ասէր ածեալ անդր զարուեստ բժշկութեան,
և յաջորդաց նորա մեծապէս պայծառացուցեալ զայն.
յաւելոյր և զանուանս նոցա, և յորում ժամանակի
իւրաքանչիւր 'ի նոցանէ էր կացեալ։ Ի նմին ազգա-
տոհմէ ասէր սերեալ և զՔսենոփոն բժիշկ, որոյ Ճար-
տարութեամբն վարէր և ինքն. և ըստ աղաչանաց նորա
արժան համարէր յամենայն հարկաց յայնմհետէ ա-
զատ կացուցանել զկղզին զայն սրբազանեալ, և 'ի պաշ-
տօն աստուածոյն այնմիկ նուիրեալ։ Մարթ էր ար-
դեօք յիշատակել զբազում վաստակս կովացուց առ
հռովմայեցիս, և զպատերազմակից լինել նոցա ընդ
մեզ 'ի յաղթութիւնս. բայց Կլաւդիոս ընդելականաւն
իւրով դիւրահաւանութեամբ՝ ոչ ինչ այլ յաւել պատ-
ճառս շնորհին, զոր կամէրն շնորհել։

ԿԲ. Առեալ ապա բիւզանդացւոց հրաման խօսելոյ,
աղերսէին 'ի ծերակուտին՝ թեթևել զբեռինս իւ-
րեանց ծանուցեալ, ոչ ինչ թողեալ անյիշատակ, սկսեալ
'ի դաշանց՝ զորս կռեալ էր նոցա ընդ մեզ յաւուրս
պատերազմաց մերոց ընդդէմ արքային մակեդոնաց-
ւոց, որ վասն անտոհմութեան իւրոյ սուտ Փիլիպ-
պոսն կոչէր։ Յաւելին յիշատակել և զօգնականու-
թիւնսն յղեալս 'ի պատերազմունս ընդդէմ Անտիոքոսի,
Պերսէոսի, Արիստոնիկեայ, և Անտոնիոսի ընդդէմ
հինից ծովայնոց, և որ ինչ նպաստ 'ի կռիւ մատու-
ցեալ էին Սիլլայ, Լուկուլլոսի, և Պոմպէի. և ապա
զարդի վաստակսն առ ինքնակալս, բնակութեամբ
երկրին իւրեանց 'ի վայրս՝ որ քաջադէպքն էին յանցս
բանակաց ընդ ծով և ընդ ցամաք, և վասն ածելոյ
պարէնս։

ԿԳ. Քանզի Յոյնք 'ի ծայրս սահմանաց Եւրոպայ
կառուցին զԲիւզանդիոն 'ի կրՃին՝ որ անջրպետ ընդ
Ասիա և ընդ Եւրոպէ, խնդրեալ 'ի պիւթական հարց-
կէն թէ ուր պարտ էր նոցա շինել զքաղաքն. և հարց-
կին տուեալ հրաման պատասխանւոյ, հետազօտել նոցա
զվայր հանդիպակայ կուրաց։ Զքալկեդոնայիս այսուիկ
խորհրդաբար նշանակէր, որոց նախ յերկիր անդր ժա-
մանեալ, և առաջի աչաց զդիպան տեղիս ունելով, ըզ-
չարագոյնն յայնցանէ ընտրեալ էին։ Քանզի Բիւզան-

դիոն հանդէպ նոցա յարգաւանդ երկրի և 'ի բեղնաւոր ծովու բնակէ, և անբաւ բազմութիւն ձկանց 'ի Պոնտոսէ խուժեալ, և 'ի ժայռից ընդ ալեօք խոտորնակի թաքուցելոց սարտուցեալ, խոյս տան 'ի միւսմէ կողմանէ ծովեզերաց, և 'ի նաւահանգիստ անդր դիմեն. որով բիւզանդացիք 'ի սկզբան շահաւետեալ և փարթամացեալ, ապա 'ի ծանրաբեռն հարկաց ընկճեցան, և խնդրէին զերծանել կամ թեթևանալ յայնցանէ. և ինքնակալն պատսպարան եղև խնդրոյ նոցին, արժան համարելով օգնել պարտասելոցն յարդի պատերազմաց՝ որ 'ի Թրակիա և 'ի Վոսփոր. և հինգամեակ մի եղև նոցա թողութիւն հարկաց։

ԿԴ. Առ բդեշխութեամբ Մ. Աբինիոսի և Մ. Ակիլիոսի եղեն նշանք բազումք չարագոյժք։ Դրօշք և վրանք զօրաց այրեցան 'ի հուր երկնատեղաց. 'ի կատար Կապիտոլին իջին պարք մեղուաց. ծնան հրեշք երկգլխիք, և խոչքորք՝ մագլաւորք որպէս արծուոյ։ Ընդ չարագուշակ ցուցակութիւնս համարեցաւ և պակասել թուոյ ամենայն կարգաց աւագանւոյն. զի 'ի սակաւ ամիսս մեռան մէն մի 'ի գանձապետաց, 'ի շինուածապետաց, 'ի հազարապետաց, յատենակալաց, և 'ի բդեշխից։ Առաւել քան զամենեսին ահաբեկեալ էր Աքրիպպինա վասն բանի միոյ Կլաւդեայ՝ ասացելոյ յարբեցութեան իւրում, որպէս թէ Ճակատագրեալ էր նմա կրել չարիս 'ի կանանց իւրոց, և ապա պատուհասել զնոսա։ Վասն որոյ եդ 'ի մտի փութալ 'ի գործ, և կորուսանել նախ զԴոմիդիա Լեպիդա՝ կանացի նախանձու. զի Լեպիդա դուստր կրտսերոյն Անտոնիայ, թոռն քեռ Աւգոստեայ, հօրեղբօրորդի հարազատ Աքրիպպինայ 'ի Կնէոսէ՝ յառաջնմէ առնէ իւրմէ, հաւասար նմին մեծազգի զանձն համարէր. և սակաւ ինչ ընդհատ 'ի նմանէ էր գեղոփն և տիրոջք և ընչիւք. և էին երկաքանչիւր անհամեստք անհամբոյրք և անուանարկք, ելևէլս առնելով զիրերօք 'ի յոռութիւնս. քան 'ի բարեմասնութիւնս ընկալեալս 'ի բաղդէն։ Այլ ոխերմագոյն մարտ 'ի նոսա այն էր, թէ ո՞ յերկոցունց՝ հօրաքոյրն թէ մայր՝ առաւել շնորհս ունէր առ Ներոնի. զի Լեպիդա գգուանօք և պարգևօք կաշկանդէր զսիրտ պատանւոյն. իսկ Աքրիպպինա

խիստ և սպառնական ցուցանէր նմա դէմն, յօժար առ 'ի տալ որդւոյ իւրում զինքնակալութիւն, և դժկամակ ընդ վարել նորա զիրաւունս ինքնակալութեան։

ԿԵ. Ամբաստանեցաւ Լէպիդա՝ որպէս թէ կախարդանօք հնարեալ յինքն ձգել զհարսանիս ինքնակալին, և անհրահանգ ստրկացն ամբոխիւ 'ի Կալաբրիա՝ աղմրկեալ զխաղաղութիւն Իտալիոյ։ Ծանուցաւ նմա վՃիռ մահուն, թէպէտ և յոյժ հակառակէր այնմ Նարկիս. որոյ ևս քան զևս կասկածեալ զԱգրիպպինայ՝ ասի գուշակեալ ընդ մտերիմս իւր, զի անշուշտ հասանէր իւր կորուստ՝ թէպէտ Բրիտանիկ և թէ Ներոն ինքնակալեսցէ. բայց զի շնորհապարտ ինքն գոլով բարերարութեանց ինքնակալին, յօժարութեամբ վասն փրկութեան նորա տայր զկեանս իւր. և զի իւր իսկ պարտաւոր կացուցեալ էր զՄեսսալինա և զՍիլիոս, և նոյն պատՃառք առաջի կային ամբաստանելոյ զԱգրիպպինա յինքնակալել Ներոնի։ Իսկ եթէ Բրիտանիկ յաջորդէր, թէպէտ և չէին իւր առ նմա վաստակք, սակայն մօրուի նորա չարարուեստ հնարք կործանէին զարքունիս առ հասարակ առաւելագոյն եղեռնագործութեամբ, քան եթէ լռեալ էր զառաջնոյ կնոջ ինքնակալին եղծագործութիւնս. թէպէտ և աստ ևս ոչ ինչ նուազ պղծութիւնք շնութեամբն Պալլասայ գործէին. յորմէ աներկբայելի էր՝ Ագրիպպինայ զպատիւ զամօթ զմարմին և զամենայն ինչ ստորև համարել քան զթագաւորութիւն։ Ցայսոսիկ և զայսպիսի բանս խօսելով՝ գիրկս արկանէր Բրիտանիկեայ, մաղթելով նմա վաղագոյն յաստիս և 'ի լիութիւն տիոցն հասանել. մերթ առ դիս և մերթ առ նա ինքն զձեռս ամբառնայր, իղձ լինէր աՃել նմա զարգանալ, հալածել զթշնամիս հօր իւրոյ, և 'ի սպանողաց մօր իւրոյ խնդրել վրէժ։

ԿԶ. Բայց Կլաւդիոս նեղեալ 'ի բազում հոգոց՝ անկաւ յառողջութենէ, և չոգաւ 'ի Սինուէս՝ կազդուրել բարեխառնութեամբ օդոց երկրին, և ջուրցն օգտակարութեամբ։ Ցայնժամ Ագրիպպինա, որոյ յառաջագոյն նիւթեալ զեղեռն՝ խնդրէր պարապ 'ի կատարումն, զի և ոչ պակասէին նմա արբանեակք. տագնապէր և եթէ յընտրութիւն թունիցն, զի մի յան-

կարծակի և արագ արագ մահուամբ մատնեացի ո-
ՀԻՐն. իսկ'ի մատուցանելն դեղ յամրազդեցիկ և ծիւ-
րական, խիթայը զի Կլաւդեայ մերձ 'ի մահ իրազեկ
լեալ դաւոյն՝ դարձցի 'ի սէր որդւոյն։ Վասն որոյ այն-
պիսի կամէր մահադեղ, զի այլայլեալ ևեթ զմիտս
նորա՝ յամեցուսցէ զմահ։ Ընտրեցաւ կին ոմն հմուտ
արուեստին Լոկուստա անուն, որ սակաւիկ մի յառաջ
դատապարտեալն էր 'ի յանցանս դեղատուութեան,
ընդերկար արբանեկեալ արքունեաց 'ի նոյն։ Ըստ հան-
Ճարոյ կնոջն պատրաստեցաւ մահադեղն, և մատու-
ցօղ նորին եղև Ալոտոս՝ մի 'ի նեռքինեաց, որ զսպասս
սովոր էր ածել'ի սեղան, և զՃաշակ նոցին առնուլ'ի
փորձ։

ԿԷ. Հանգամանք յարակիցք եղեռանն առժամայն
հրապարակեցան. և պատմագիրքք ժամանակին ման-
րապատում առնեն զայնս։ Խառնեցաւ մահադեղն
'ի թնջուկ համեմեալ՝ ախորժելի ինքնակալին 'ի Ճա-
շակ. այլ նա յապշութենէ մտաց կամ յարբեցութենէ՝
ոչ զգաց առժամայն զազդեցութիւն դեղոյն, ելից ևս
որովայնին օգնեալ նմա 'ի թեթևումն։ Ագրիպպինայ
յերկիւղէ ելից իրացն զարհուրեալ, և զառաջիկայ
վտանգն յաչս եղեալ, էառ իւր օգնական զհամա-
խոհութիւն Բսենոփոնի բժշկի՝ զոր 'ի բանի արա-
րեալ էր յառաջագոյն։ Սա, պատՃառանօք օգնելոյ
Ճգան ինքնակալին 'ի ժայթքումն, փետուր թունալից
յորկոր նորա 'ի նեռքս էարկ, որպէս ասի, գիտելով
քաջ՝ զի ոՃիրքք ծանունք վտանգաւ սկսեալ, մրցանա-
կաւ կատարին։

ԿԸ. Յայնժամ ծերակոյտն կոչեաց զբդեաշխս և
զքուրմս 'ի խորհուրդ կենաց ինքնակալին, ուր դիակն
նորա խնամողքէն ծածկեալ կայր ձորձովք 'ի մահիՃս՝
մինչև 'ի հաստատութիւն ինքնակալութեանն Նե-
ռոնի։ Ագրիպպինա՝ որպէս թէ ծանրաթախիծ՝ ողջա-
գուրէր առ 'ի սփոփումն զԲրիտանիկ, կոչելով զնա
հայրենի կերպարանացն Ճշմարիտ պատկեր, և պէս-
պէս հնարիւք թարթափեցուցանէր զնա՝ չելանել'ի
սենեկէն։ Խափանէր և զԱնտոնիա և զՈկտաւիա զքոյրս
նորա. և ամենայն դրանց արքունեացն պահ կարգեալ,
զբոյցս յաՃախ տայր համբաւել զողջունէ ինքնակալին՝

որպէս թէ 'ի լաւ անդր յեղաշրջեալ, որպէս զի զօրականն յուսով բարեաւ ձեռն տացէ իւր, և հասցէ գուշակեալն յախտարաց ժամն բարեպատեհ։

ԿԹ. Յերեքտասաներորդումաւուր ամենեանն հոկտեմբերի զմիջաւուրբ՝ բացան յանկարծակի դրունք աբքունեացն. և ելանէր Ներոն ածեալ'ի Բուրրոսէ առ գունդ զօրականին, որ ըստ օրինի զինուորութեան կայր անդ'ի պահ. և 'ի տալ գնդապետին նշան՝ ընկալան զնա զօրքն աղաղակաւ ցնծութեան, և բազմեցուցին 'ի գահոյս։ Այլ՝ ոմանց 'ի զինուորաց անտի տարակուսեալ, և յետս կոյս հարցեալ՝ թէ ո՞ւր էցէ Բրիտանիկ. այլ'ի չտեսանելն զոք ըղձից իւրեանց առաջնորդ, հետևեալ այլոց։ Ներոն ածի 'ի բանակն, և ատենաբանեալ առ զօրս ըստ պատշաճի իրաց ժամանակին՝ խոստանալով առատաձեռնել նոցա ըստ օրինակի հօրն, ողջունի 'ի նոցանէ ինքնակալ։ Վ՛ՀԻՒ զօրականին հաստատի 'ի ծերակուտէն, և ոչ ուրեք 'ի գաւառաց դիպի տարակոյս։ Պատիւք դիւցականք սահմանին Կլաւդեայ, և կատարի յուղարկաւորութիւն նորա մեծահանդէս որպէս զդիւցազնին Աւգոստեայ, նախանձաւոր լինելով Աղրիպպինայ մեծագործութեան նախամօրն իւրոյ Լիւիայ։ Բայց կտակն Կլաւդեայ ոչ ածի յընթերցումն, զի մի անիրաւութիւն և նախանձ նախամեծար լինելոյ ըրջուին քան զորդին՝ յարուցէ աղմուկ 'ի ժողովրդեան։

Դիւակարգութիւն գրոցս։

Ա. Երեցունց նախանձորդաց վէճ ընդունելոյ զաջ Կլաւդեայ։
Բ. Պատճառք դրանկաց 'ի նպաստ իւրաքանչիւրոցն։
Գ. Կլաւդիոս ընտրէ զեղբօրորդի իւր զԱդրիպպինա։ Ադրիպպինա խորհի հարսնացուցանել որդւոյ իւրում Դոմիտեայ զՈկտաւիա դուստր Կլաւդեայ։
Դ. Վիտելլիոս օգնէ նմա 'ի կորուստ Սիլանեայ, որում խօսեցեալն էր Ոկտաւիա։
Ե. Կլաւդեայ տարակուսել վասն ածելոյ կնութեան զեղբօրորդի իւր։ Վիտելլիոս յանձն առնու ստիպել յայն զինքնակալն 'ի ձեռն ծերակուտին և ժողովրդեան։
Զ. Փաստք նորա առ 'ի ցուցանել ծերակուտին պատշաճաւոր զամուսնութիւնն զայն։
Է. Վճիռ ծերակուտին օրինաւոր առնելոյ զամուսնութիւն եղբօրորդւոց ընդ հօրեղբարս իւրեանց։
Ը. Սիլանոս երթայ զիւրովին։ Ադրիպպինա տայ դարձուցանել յաքսորանաց զՍենեկա, 'ի դաստիարակութիւն Դոմիտեայ։
Թ. Ոկտաւիայ խօսել Դոմիտեայ 'ի հարսնութիւն, և Դոմիտեայ փեսայանալ ինքնակալին։
Ժ. Հասանեն հրեշտակք 'ի Պարթևաց, խնդրել զՄեհրատ 'ի թագաւոր։
ԺԱ. Պատասխանի Կլաւդեայ առ նոսա։ Խրատք նորա առ Մեհրատ և առ պատգամաւորս։
ԺԲ. Կասիոս, կուսակալ Ասորւոց, ածէ զՄեհրատ յելս սահմանաց թագաւորութեան նորա, և խրատէ զնա վաղվաղել առնուլ զթագ։ Ստունդանել նորա խրատուն։
ԺԳ. Մեհրատ մերժեալ 'ի հայաստանէ, մատչի առ Խուտարզ՝ որ բանակեալ կայր 'ի Սամբուլոն լերին։ Զարտուղի բանք յաղագս պաշտաման, զոր ընծայեն Հերակլեայ բնակիչք աշխարհին։
ԺԴ. Իզատ և Ակբար լքանեն զՄեհրատ։ Մեհրատ պարտեալ 'ի պատերազմի, մատնի 'ի ձեռս Խուտարզայ։ Մահ Խուտարզայ. յաջորդել Վոնոնի, և ապա Վոլոգեայ։
ԺԵ. Միհրդատ արքայ ընկեցեալ յաթոռոյ 'ի Վոսփոր, գուն գործէ զբռամբ ածել վերստին զսահմանս իւր։ Հռովմայեցիք, օգնականութեամբ Կոտչի և Եւնոնի, պարտ համարին զգէմ ունել նմա։
ԺԶ. Հռովմայեցիք հանգերձ նիզակակցօք պաշարեն զքաղաքն ուսպացւոց։
ԺԷ. Աւարառութիւն քաղաքին։ Զորսին նիզակակից Միհրդատայ լքանէ զնա, և գայ յերկրպագութիւն պատկերի ինքնակալին։
ԺԸ. Միհրդատ գնայ աղաչաւոր առ Եւնոն։
ԺԹ. Եւնոն բարեխօսէ վասն նորա առ Կլաւդիոս։

Ի. Ինքնակալն տայ պատասխանի շնորհել գերեալն ազատութիւն 'ի ձաղելոյ և ելեթ առաջի յաղթանակին։

ԻԱ. Թօսք Միհրդատայ 'ի լինելն յանգիման Կլաւդեայ։

ԻԲ. Լոլլիա դատապարտեալ յաքսոր, ստիպի 'ի մահ։

ԻԳ. Իտուրիա և հրէաստան յաւելուն յԱսորիս։ Կլաւդեայ ընդունել զՀմայս կենդանութեան, և ընդարձակել զարուարձանեայս։

ԻԴ. Նախնի շրջապատ Հռովմայ։

ԻԵ. ԻԶ. Պատանին Դոմիտիոս որդեգրի 'ի Կլաւդեայ, և կոչի Ներոն։ Ագրիպպինա մեծարի անուամբ Աւգոստա։ Տխուր հանգամանք Բրիտանիկեայ։

ԻԷ. Ագրիպպինա բնակեցուցանէ գաղթական 'ի քաղաքն Ուբեաց։ Պոմպոնիոս վանէ զյարձակումն Կատուեաց։ Զօրք Վարոսի յետ յիսուն ամաց զերծանին 'ի ծառայութենէ։

ԻԸ. Կատուք յղեն 'ի Հռովմ պատգամաւորս և պատանդս։ Պոմպոնիոս ընդունի զօրէնս պատուոյ յաղթանակի։

ԻԹ. Զվաննիոս արքայ Սուեւաց ընկենուն յաթոռոյ քեռորդիք նորա Վանգիոն և Սիգոն, օգնականութեամբ Վիբիլլիոսի արքային Երմենդուրաց։ Կլաւդիոս, առանց մտանելոյ 'ի պատերազմ, կացուցանէ զզօրս իւր յափն Դանուբ գետոյ 'ի պահ։

Լ. Վաննիոս 'ի պարտութիւն մատնի 'ի միումուրեք 'ի Ճակատուբայց բանակ նորա տիրէ 'ի Պաննոնիա։ Վանգիոն և Սիգոն բաժանեն յիւրեանս զթագաւորութիւնն։

ԼԱ. Աղմուկք 'ի Բրիտանիա։ Ոստորիոս ձեռն արկանէ կապտել 'ի զինուց զկողմանս կասկածելիս։ Իկենիացիք զդէմ ունին և 'ի պարտութիւն մատնին։

ԼԲ. Վտարանջութիւն Բրիգանտաց, զորս խաղաղէ Ոստորիոս։ Սիլուրք առաւել յամառեալ՝ տոկան 'ի պատերազմ։ Գաղթական բնակեալ 'ի Կամուլոդոն։

ԼԳ. Կարակտակ, զօրավար Սիլուրաց, մնայ բանակին հռովմայեցւոց 'ի զարհուրելի ուրեք կայս։

ԼԴ. Քաջալերէ զզօրս իւր, և վառէ զնոսա յեռանդն։

ԼԵ. Հռովմայեցիք յարձակին 'ի կայս թշնամեաց, և տանին լիուլի յաղթութիւն։ Կին և դուստր Կարակտակեայ վարին 'ի գերութիւն. եղբարք նորա լինին անձնատուր։

ԼԶ. Կարակտակ մատնեալ 'ի Կարդիմանդուայ դշխոյէ Բրիգանտաց, ածի 'ի Հռովմ հանդերձ եղբարբքն իւրովք և կնաւ և դստերաւ։

ԼԷ. Բանք խրոխտք և արիականք Կարակտակեայ առ Կլաւդիոս, լու 'ի լու ժողովրդեան և ատենական գնդաց։ Կլաւդիոս ներէ նմա և ընտանեաց նորա. նոքա լուծեալ 'ի կապանաց մատչին շնորհս մատուցանել Ագրիպպինայ, բաղմելոյ 'ի բեմի՝ ոչ ինչ հեռի յինքնակալէն։

ԼԸ. Այս անցք հռչակին կուտական բանիւք 'ի ծերակուտին։ Սիլուրք շրջապատեն զբաղուստ 'ի լեգէոնական գումարտակաց։

ԼԹ. Զայրոյթ Սիլուրաց. բաղխմունք յաճախաւորք. մահ Ոստորեայ։

Խ. Յաջորդէ նմա Գիդիոս։ Վենուսիոս զօրավար բարբարոսացն։ Քաղաքական մարտ ընդ նա և ընդ Կարտիսմանդուա։ Գունդք եկեալք յօգնութիւն դշխոյին՝ զօրանան 'ի մարտի։

ԽԱ. Ներոն ընդունի զպատմուճան այրական, սահմանի 'ի բդեշխու-

թիւն, և անուանի իշխան ազատագունդ պատանեաց: Բրի-
տանիկ զրկեալ 'ի մաերմագունից իւրոց ձերբազատից, մատնի
'ի ձեռս ոստիկանաց ընտրելոց 'ի մօրուէն:

ԽԲ. Ադրիպպինա կացուցանէ զԲուրրոս հրամատար ատենական զօ-
բաց, զերծուցանէ զՎիտելլիոս յամբաստանութենէ քրէական
յանցանաց, և տայ պատուհասել զամբաստանօղն:

ԽԳ. Նշանք հրաշալիք, սասանութիւն երկրի, սով և աղմուկ 'ի
Հռովմ:

ԽԴ. Հռամիզդ որդի Փարսմանայ, արքայ Վրաց, ընկալեալ յարքու-
նիս Միհրդատայ հօրեղբօր իւրոյ արքային Հայոց, գրգռէ յա-
պստամբութիւն զԺողովուրդ նորա:

ԽԵ. Դարձ արարեալ առ հայր իւր, և կացուցեալ 'ի նմանէ զօրա-
վար բանակին, դիմէ 'ի Հայաստան, և հալածէ զՄիհրդատ
մինչև յամրոցն Խոռնիս, որում պահ ունէին զօրք հռովմայեցիք:

ԽԶ. Հրամատար բերդին Կեղիոս Պոլլիոն կաշառեալ 'ի Հռամիզդայ,
ստիպէ զՄիհրդատ յանձն առնուլ խօսել ընդ նմա:

ԽԷ. Հռամիզդ մեծարանս բազումս ցուցեալ Միհրդատայ, ապա
արկանէ զնա 'ի կապանս, և մատնէ 'ի մահ հանդերձ կնաւն և
որդւովք:

ԽԸ. Կուադրատոս կուսակալ Ասորւոց խորհի խնդրել զվրէժ դա-
ւաճանութեանն զինուք: Ազդ առնէ Փարսմանայ մեկնել 'ի
Հայաստանէ, և կոչել անտի զորդի իւր 'ի բաց:

ԽԹ. Ամենապարտ ասպատակութիւն Պելիգնեայ գործակալի 'ի Կա-
պադովկիա: Ուրացեալ 'ի Հռամիզդայ, յորդորէ զնա փու-
թալ թագ առնուլ, և առընթեր կայ հանդիսի թագաւորու-
թեանն: Հելիոդորոս Պրիսկոս յղեալ 'ի Հայաստան՝ առ 'ի հաս-
տատել անդ զկարգ, կոչի յանկարծ յետս:

Ծ. Վոլոգէս արքայ Պարթևաց յարձակի 'ի Հայաստան, և հալա-
ծէ անտի զՀռամիզդ: Հռամիզդ վերստին տիրէ անդ ընդ
հուպ:

ԾԱ. Հռամիզդ 'ի նեղանկեալ յապստամբութենէ ժողովրդեան, փախ-
չի կնաւ իւրով Զենոբեաւ: Եւ 'ի պարտասել յղի կնոջն յաշ-
խատութենէ ճանապարհին, հարկանէ զնա սուսերաւ՝ առ 'ի
զերծուցանել մահուամբն 'ի գերութենէ, և արկանէ զնա յԵ-
ւրասխ: Հովիւք 'ի վեր հանեն զնա կենդանի, և ածեն յարքու-
նիս Տրդատայ եղբօր Վոլոգեայ:

ԾԲ. Աքսոր և մահ Փուրիոսի Սկրիբոնեայ: Հրովարտակ հալածման
ասատեղահմայից յԻտալիոյ:

ԾԳ. Վճիռ ծերակուտին ընդդէմ կանանց պոռնիկելոց ընդ գերիս:
Ծերակոյտն շռայլէ շողոմ Պալլասայ ազատագրի:

ԾԴ. Աղմուկ 'ի հրէաստան վասն պատկերին Կայիոսի, զայրանայ 'ի
գործակալութեան Կումանոսի և Փելիքսի: Կուադրատ, կու-
սակալ Ասորւոց, ցածուցանէ զայն:

ԾԵ. Վտարանջութիւն Կլիտաց 'ի Կիլիկիա:

ԾԶ. Կլաւդիոս 'ի Փոկիոնեան լճին ածէ 'ի հանդէս զնաւամարտս:

ԾԷ. Առու ջրադարձ լճին 'ի Լիրիս: Կոչունք պատրաստեալ 'ի բաց-
ման առուին, և վտանգեալ կոչնականացն:

ԾԸ. Ներոն 'ի վեշտասանամենի ածէ կնութեան զՈկտաւիա դուստր
Կլաւդեայ:

ԾԹ. Սատիլիոս Տաւրոս ամբաստանի 'ի յանցանս հրապուրանաց
Ադրիպպինայ, և երթայ զնուրովն: Ամբաստանօղ նորա ար-
տաքսի 'ի ծերակուտէն:

Կ. Կլաւդիոս տայ գործակալաց իւրոց զերաւունս դատելոյ զդատաստան:

ԿԱ. Ապահարկութիւն կովացւոց:

ԿԲ. Բիւզանդացիք ինդրեն թեթևութիւն հարկաց, ցուցեալ զերաւունս:

ԿԳ. Կայք Բիւզանդիոյ հանդէպ Քաղկեդոնի: Հնգամեայ ապահարկութիւն բիւզանդացւոց:

ԿԴ. Նշանք հրաշալիք. Տաղնապք Ագրիպպինայ. հեռ նորա ընդդէմ Լեպիդայ հօրաքեռ Ներոնի:

ԿԵ. Դոմիտիա դատապարտի 'ի մահ, թէպէտ և հակառակ կալով Նարկիսեայ մահու նորա՝ վասն կասկածանացն զԱգրիպպինայ: Մաղթանք Նարկիսեայ վասն Բրիտանիկոսի:

ԿԶ. ԿԷ. Խօթութիւն Կլաւդեայ. պատեհ առնուլ զայն Ագրիպպինայ, արբուցանելոյ նմա դեղ մահու:

ԿԸ. Մահ Կլաւդեայ ծածկի առ ժամն:

ԿԹ. Ներոն քարոզի ինքնակալ յատենական գնդաց, և ընդունելի լինի ծերակուտին և գաւառաց: Ցուղարկաւորութիւն և աստուածարութիւն Կլաւդեայ:

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից վեցից ամաց, յորս կացին բդեաշխք.

Կ. Պոմպէոս, և Կ. Վերանիոս.

Կ. Անտիստիոս, և Մ. Սուիլիոս Հռուփոս.

Տիբ. Կլաւդիոս կեսար, և Վ. Սեր. Կուռնելիոս Որփիտոս.

Պ. Կուռնելիոս Սիլլա, և Լ. Սալուիոս Ոթոն.

Դ. Յունիոս Սիլանոս, և Կ. Ատերիոս.

Մ. Ասինիոս Մարկելլոս, և Մ. Ակիլիոս Աւիոլա:

Ա. Հ. 802.

Ա. Ք. 49.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ ԺԳ.

Ա. Ի սկզբան ինքնակալութեանն Ներոնի՝ առաջին սպանութիւն յանգէտս նորին, նենգաւ Ագրիպպինայ, գործեցաւ մահուամբն Յունիոսի Սիլանեայ փոխանակի բդեշխին Ասիոյ։ Ոչ դժնէութեամբ բարուց էած նա 'ի վերայ իւր կորուստ, զի էր այր անփոյթ, և առ ամենայն ինքնակալօք արհամարհեալ, մինչև Կայիոսի կեսարու կոչել զնա ոչխար ոսկեղէն [1]. այլ զի Ագրիպպինայ նիւթեալ էր զմահ Լուկիոսի Սիլանեայ եղբօր նորա, խիթայր 'ի վրէժխնդրութենէ նորին. քանզի յաձախէին 'ի ժողովրդեան բանք՝ զի քան զՆերոն, որ դեռ այն ինչ յարբունս էր հասեալ և անօրէնութեամբ յափշտակեալ զինքնակալութիւն, արժանաւորագոյն էր այրն կատարելահասակ անստգիւտ'ի վարս, ազնուազգի և մեծարոյ, և որ ցանկալին էր յայնժամ՝ որպէս սերեալ յինքնակալաց. զի էր նա թոռնեայ դիւցազնին Աւգոստեայ։ Այս եղև պատճառ մահուն Սիլանեայ, և պաշտօնեայք սպանութեանն Պ. Կելեր ասպետ հռովմայեցի և Ելիոս ձերբազատ, որք գործակալ ստացուածոց ինքնակալին կային 'ի նմանէ

1 Իմա վասն ճոխութեան նորա։

յԱսիա։ Սոքա մատուցին փոխանակի բդեշխին զդեղ մահու 'ի կոչունս՝ այնու համարձակութեամբ, զի ոչ յումեքէ եղև զանխուլ։ Ոչ ինչ նուազ արագամահ եղև Նարկիս ձերբազատ Կլաւդեայ, զորոյ պատմեցի զթշնամութիւն ընդդէմ Ագրիպպինայ։ Բանտ սաստիկ և յետին տագնապ ստիպեցին զնա 'ի մահ յակամայս Ներոնի, որոյ յոռութեանցն՝ չև ևս համարձակելոց՝ մեծապէս 'ի դէպ գային զօշաքաղութիւն և շռայլութիւն նորա։

Բ. Վաղ սկսանէին սպանութիւնք, եթէ Սփրանիոս Բուրրոս և Անտոնիոս Սենեկա չլինէին խափան. սոքա պատանեկան տիոց ինքնակալին ուղղիչք, միաբանք ի-րերաց՝ որպէս դուն ուրեք յաջողէ յիշխանակիցս, համազօրք էին ըստ այլ և այլ մասին։ Բուրրոս 'ի զինուորական տեսչութիւն և 'ի խստութիւն բարուց, իսկ Սենեկա 'ի վարժս Ճարտարիսօսութեան և 'ի բարեհամբոյր կենակցութիւն, օգնէին միմեանց՝ առ 'ի դիւրաւ պահել զհասակն լպիրծ յարհամարհելոյ զառաքինութիւն, տեղի տալով ներելոց հեշտութեանց։ Երկաքանչիւրոցն պատերազմ մեծ՝ ընդդէմ վայրենութեանն Ագրիպպինայ էր, որ ամենեքումբք չարախտաւատ տիրապետութեան ցանկութեամբք բորբոքեալ, ունէր իւր գործակից զՊալլաս՝ որոյ խորհրդո

սարակ։ Դեղարուեստից եւս յիշատակ, եւ ոչ ինչ 'ի ձախողակաց յաւուրս ինքնակալութեան նորա կրել հասարակապետութեան, մտադիր եղեւ լսելի. այլ իբրեւ յաւել զյառաջատեսութենէ նորա եւ զիսոհականութենէ բանս 'ի մէջ բերել, ոչ ոք կարաց ժոյժ ունել ծաղու, թէպէտ եւ Սենեկայի Ճարտարիսօսութեամբ բազմաւ յերիւրեալ էր զՃառն, եւ էր իսկ զուարճալի առնն հանճար, եւ լսելեաց այնր ժամանակի բարեյարմար։ Ծերք, որոց ախորժելի է զանցեալս ընդ առաջիկայս համեմատել, տային անդ 'ի միտ առնուլ՝ առաջին լեալ յիշխանս զՆերոն կարօտ օտարին հանճարոյ. զի իշխանապետն Կեսար՝ գերահամբաւելոց Ճարտասանից կայեալ էր նախանձորդ, եւ Աւգոստեայ՝ կազմ եւ պատրաստ էր յորդահոս Ճարտարիսօսութիւն, վայելուչ ինքնակալի։ Հմուտ էր եւ Տիբեր'ի կշռադատել զբանս իւր, 'ի հզօրել զիմաստս, եւ 'ի պարուրել Ճարտարութեամբ զմիտս։ Կայիոսի իսկ կեսարու՝ աղմուկ մտացն ոչ աղարտէր զզօրութիւն բանից նորա. եւ ոչ Կլաւդիոս, 'ի պատրաստեալ Ճառս իւր, թափուր գտանէր 'ի վայելչութենէ։ Իսկ Ներոն անդատին 'ի մանուկ տիոց այլուր զմիտս իւր շրջեաց, 'ի քանդակել 'ի նկարել 'ի նուագել եւ 'ի ձիաւարել. մերթ եւս յօրինէր տաղս, որով երեւեցոյց յանձին եւ հանճար իմն բանասիրութեան։

Դ. Ի կատարել եղերական հանդիսիցն, եմուտ Ներոն յատեան ծերակուտին. եւ կանխաբանեալ զվնասոյ ատենակալաց, եւ զՀաւանութենէ զօրականին, եւ ցուցեալ զխորհուրդս իւր եւ զօրինակ բարուք վարելոյ զՀասարակապետութիւն, ասէր զմանկութիւն իւր հեռի կալեալ 'ի քաղաքական մարտից եւ յառտնին հերձուածոց, եւ ոչ ատելութիւն ինչ բերել յանձին, ոչ անիրաւութիւն, եւ ոչ իրաւ վրէժխնդրութեան։ Յաւել ապա զառաջիկայ իշխանութեանն տալ զնկարագիր, ասոյս տուեալ մանաւանդ յիրայ՝ որոց արդի յիշատակ բորբոքեր զՀակառակութիւն. ոչ կամէր պահել անձին զամենայն դատաստան, եւ ոչ ամփոփել յապարանս իւր զդատախազութիւն եւ զդատապարտութիւն, որով սակաւուց ոմանց բռնութեան լինէր յաղթանակել, եւ ոչ զշաքաղութեան եւ փառամոլութեան տեղի

կամէր տալ յարքունիս, այլ որոշել զապարանս իւր յա-
տենէ հասարակապետութեան, թողուլ ծերակուտին
վարել զնախնի իրաւունս իւր, յատեան բդեշխից դի-
մել Իտալիոյ և հռովմէական գաւառաց, և 'ի ձեռն
նոցա մատչել յատեան ծերակուտին. իսկ անձին զհոգս
եւեթ լեգէոնաց պահել։

Ե. Զեղէն այսոքիկ վայրապար բանք. բազում ինչ
ըստ կամաց ծերակուտին սահմանեցաւ, մի՛ ումեք վար-
ձուք կամ կաշառով ջատագով կալ դատից, և մի՛
սահմանելոց 'ի գանձապետութիւն՝ հարկ 'ի վերայ
դնել ածելոյ 'ի հանդէս զսուսերամարտ։ Եւ 'ի հա-
կառակել Ագրիպպինայ՝ որպէս թէ եղծանէին սո-
քիմբք օրինադրութիւնք Կլաւդեայ, չնորհեցաւ ա-
տենականաց ժողովել յարքունիս, որպէս զի յետկուսէ
վարագուրի ծածկեալ ինքն առ դրան՝ անտես յումեքէ՝
լսել կարասցէ։ Եւ 'ի գալ պատգամաւորաց Հայոց ա-
ծել աղերս 'ի դիմաց ազգին առ Ներոն, պատրաստէր
և Ագրիպպինա ելանել 'ի բեմ, բազմել առ ինքնա-
կալին. և 'ի կարկեալ կալ այլոց ամենեցուն յերկիւղէ,
ազդ արար Սենեկա ինքնակալին ընդառաջել մօրն,
և պատճառանօք մեծարանաց արգել զանպատեհու-
թիւնն։

Զ. Ի վերջկոյս այսր ամի հասին համբաւք չարա-
գոյժք, յարձակելոյ դարձեալ Պարթևաց՝ յափշտա-
կել զՀայաստան, և հալածել անտի զՀռամիզդ՝ որ
բազում անգամ տիրեալ անդ, և վարեալ անտի 'ի
բաց, 'ի պատերազմէ և յայնժամ լեալ էր ձեռնթափ։
Հռովմայեցիք յօժարք 'ի զրոյցս, ասէին. Ինքնակալ
դեռ այն ինչ Եօթնևատասնամեայ որպէս ժուժկալել
կարասցէ ծանու պատերազմին, կամ զերծանել յայն-
մանէ. զի՞նչ ակնկալել ի՞ցէ 'ի նմանէ, որում կին ոք ա-
ռաջնորդէ. մի՛թէ կարիցե՞ն դաստիարակք նորա մղել
Ճակատամարտս, զքաղաքս պաշարել, և զայլ գործս
պատերազմի յանձանձել։ — Իսկ այլք քաջադէպ և
համարէին զայն, քան Կլաւդեայ ապիկարի ծերու-
թեամբն և յուլութեամբ 'ի զէն՝ ընդ հրամատարու-
թեամբ ձերբազատիցն ձեռնարկել 'ի պատերազմ։
Բուրրոս և Սենեկա փորձք 'ի բազում իրս Ճանաչին. և
զի՞նչ պակասէ ինքնակալին 'ի լուութիւն տիոցն և կո-

բովոյ։ Կն. Պոմպէոս յԵօթնեւտասնամենի, և Ոկտաւիանոս կէսար յինեւտասնամենի, հարին պատերազմունս քաղաքականս։ Ի ծայր իշխանութեան բազում ինչ յաջողէ ազգեցութեամբ և խորհրդովք իշխանին, քան զինուք և բազկաւ. ցուցցէ Ներոն քաջայայտ, լաւագոյն արդեօք բարեկամութեամբ վարի՝ թէ այլազգ, եթէ առանց ակնառութեան 'ի նախանձորդաց՝ ընտրեսցէ զոք 'ի քաջաց զօրավարաց, և ոչ 'ի Ճոխից 'ի շնորհս արքունեաց։

Է. Մինչդեռ այս և հանգոյն այսմ զրոյցք յուզէին համարձակ, հրամայեաց Ներոն գնդի մանկտուոյն՝ զոր 'ի մերձաւոր գաւառաց 'ի լրումն արևելեան լեգէոնաց ժողովեալ էր, և լեգէոնացն խաղալ գնալ մերձ 'ի Հայաստան. և Ագրիպպայ և Անտիոքոսի՝ երբեմն թագաւորաց՝ ազգ արար ունել զօրս պատրաստական մտանելոյ յերկիր Պարթևաց, և կամուրջս զԵփրատաւ արկանել. և զփոքրն Հայաստան ետ Արիստաբուլեայ, և զԾոփաց գաւառն Սոհեմեայ, հանդերձ արքունական սպասուք։ Ի դէպ ժամանակի ոսոխ ևս Վոլոգեսի յաբեաւ յայնժամ որդի նորա Վարդան. վասն որոյ մեկնեցան Պարթևք 'ի սահմանացն Հայոց, իբր թէ այլում պատեհի թողեալ զպատերազմն։

Ը. Բայց 'ի ծերակուտին այս ամենայն անցք առաւելագանց ներբողեալ, սահմանեցան համաշխարհի գոհութիւնք. և յաւուրս անդ պաղատանացն կրեալ ինքնակալին զձև յաղթական, և մտանել յաղթանակաւ 'ի Հռովմ, և զանդրի նորա հսկայաձև՝ որպէս զՎրէժխընդրին Արիսի՝ կանգնել 'ի մեհենի անդ դիցն. յաւելեալ 'ի սովորական շողոմն և զինդութիւն վասն ընտրելոյ ինքնակալին զԴոմիտիոս Կորբուլոն 'ի պահ աշխարհին Հայոց, և զի թուէր բացեալ առաջի վաստակոց ուղի։ Գունդք արևելեայք ըստ այսմ օրինակի բաժանեցան. մասն ինչ օժանդակ զօրականին և լեգէոնք երկու զկայ առին յԱսորիս ընդ զօրավարութեամբ Կուադրատեայ Ումիդիոսի կուսակալի գաւառին. նոյնչափ զօրք 'ի Հռովմայեցւոց և 'ի նիզակակցաց տուան 'ի ձեռս Կորբուլոնի, հանդերձ հեծելովք և հետևակօք՝ որք ամերէին 'ի Կապադովկիա. և թագաւորաց նիզակակցաց ծանուցաւ պատրաստ կալ՝

ուր և ըստ հարկի պատերազմին լեցի կոչ յերկոցունց զօրավարացն։ Ա.յլ նոքա յօժարագոյնք էին 'ի Կորբուլոն. և սա առ 'ի վաղագոյն առնել իւր համբաւ, որոյ հզօր է ազգեցութիւն 'ի սկզբան պատերազմի, շտապ տագնապաւ խաղաց գնաց յԵւգէա քաղաք Կիլիկիոյ, և եգիտ անդ զԿուադրատոս՝ որ կանխեալ էր անդր, զի մի Կորբուլոն 'ի մտանէր յԱսորիս առնուլ զզօրսն՝ զաչս ամենեցուն յինքն կորզեսցէ բարձրաբերձ հասակաւն և հզօր բանիւք, որ յաւելեալ 'ի փորձ և յիմաստութիւն՝ ազդողագոյնք են, թէպէտ և սնոտիք։

Թ. Սակայն երկոքին միաբան 'ի ձեռն պատգամաւորաց խրատ ետուն Վոլոգեայ արքայի՝ ընտրել զխաղաղութիւն քան զպատերազմ, տալ պատանդս հռովմայեցւոց, և կալ մնալ ընդ նոսա՝ ըստ նախորդացն իւրոց՝ 'ի բարեկամութեան։ Վոլոգէս վասն պարապ առնելոյ 'ի պատրաստութիւն, և վասն հեռացուցանելոյ պատճառանօք պատանդից զայնոսիկ, զորոց խիթայրն՝ թէ ոսոխք յարիցեն իւր, ետ 'ի ձեռս նոցա զազատորդիս արշակունեաց։ Իստէոս հարիւրապետ յղեալ առ այս 'ի Կուադրատեայ, ընկալաւ զպատանդսն. և այնու թերևս յաջողեաց իւր կանխել խօսել ընդ Թագաւորին։ Ազդ եղև Կորբուլոնի, և արձակեաց զգնդապետ գումարտակին զԱրրիոս Վարոս, առնուլ 'ի ձեռաց նորա զպատանդսն. ուստի յարեաւ վէճ ընդ գլխադապետն և ընդ հարիւրապետ. և առ 'ի կարձել յաչս օտարաց զամօթ, կացուցան իրաւարար նոքին իսկ պատանդք և պատգամաւորք՝ որ զնոսա ածէին։ Նոքա նախամեծար արարին զԿորբուլոն՝ վասն այն ինչ փառաւորութեանն, և վասն յօժարութեան թշնամեաց 'ի նա. ուստի անկաւ ընդ երկոսին զօրավարսն գժտութիւն, Կուադրատոսի բողոքելով՝ զի զրկէր յարգասեաց խորհրդոցն իւրոց, և Կորբուլոնի 'ի դէմն ածելով՝ զի յետ ընտրութեան իւրոյ 'ի զօրավարութիւն հաւանեալ էր Թագաւորն տալ պատանդս, վստահութեան նորա յերկիւղ յեղաշրջեալ։ Ներոն առ 'ի միաբանել զնոսա, հրամայեաց քարոզ կարդալ՝ զի վասն յաջողութեանցն, 'ի ձեռն Կուադրատոսի և Կորբուլոնի գործեցելոց, յաւելցեր դավնի զնրձիւք ինքնակալն։ Զանոյս, որ առ յաջորդ բդեշխիւք անցին, յարեցի աստ 'ի մի։

Ժ. Ի նմին տարւոջ ինդրեաց ինքնակալն 'ի Ծերակուտէն՝ կանգնել անդրի Կն. Դոմիտեայ հօր իւրում, և Սկոնեոսի Լաբէոնի՝ որ դաստիարակ իւր լեալ էր՝ օրէնս պատուոյ. իսկ զառաջարկեալս վասն իւր արծաթաձոյլ կամ ոսկի պատկերս արգել։ Եւ Թէպէտ Ծերակուտին սահմանեալ էր առնել տարեգլուխ յամ՝ սեան գեկտեմբերի՝ յորում ծնեալն էր Ներոն, նա զառաջին սովորութիւնն կրօնական զտարեմուտ 'ի կաղանդս յանուարի հաստատեաց. և դարձեալ՝ մի՛ ընդ յանցաւորս համարել զԿարինաս Կելեր, զամբաստանեալն 'ի ծառայէ իւրմէ, և զՅուլիոս Դենոս ասպետ՝ որոյ բարեկամութիւն ընդ Բրիտանիկեայ 'ի յանցանս գրէր նմա։

ԺԱ. Սռ բդեշխութեամբն Կլաւդիոսի Ներոնի, և Լ. Անտիստիոսի, ոչ կամեցաւ Ներոն՝ զի որպէս երդնոյր աւագանին յօրինադրութիւնս ինքնակալաց, երդնուցու յիւրն և Անտիստիոս՝ իշխանակից իւր 'ի բդեշխութեան։ Վասն որոյ գովութիւնս մեծամեծս ետուն նմա Հարք Ծերակուտին, զի սիրտն պատանեկան՝ դուշնաքէից առաքինութեանցն փառաք խրախուսեալ՝ 'ի բարձրագոյնն թեւակոխեսցէ։ Յետ այսորիկ ներողութեամբ վարեցաւ նա ընդ Պլաւտեայ Լատերանոսի, որ վասն շնութեանն ընդ Մեսսալինայ՝ արտաքսեալ էր 'ի Ծերակուտէն, և դարձոյց զնա յառաջին բարձ իւր, ստիպեալ 'ի գթութիւն՝ զոր Սենեկայ յաձախ 'ի ձեռն նորա գովասանեալ էր յատենախօսութիւնս, առ 'ի ցուցանել քանի՛ գերազանց վարժս տայր նմա, և կամ առ 'ի պանծացուցանել զհանճար իւր։

ԺԲ. Բայց Ագրիպպինայ տկտարանայր տակաւ զօրութիւն յաքքունիս անդ. զի Ներոն հարեալ էր 'ի սէր Սկտեայ ազատագրի իւրոյ ազախնոյ, և ընկալեալ 'ի մտերմութիւն իւր զՊԹոն և զԿլաւդիոս Սենեկիոս պատանիս դեղանիս. յորոց առաջինն 'ի բդեշխական տոհմէ էր, իսկ երկրորդն որդի միոյ 'ի ձերբազատիցն Կլաւդեայ ինքնակալի։ Սիրելութիւն նոցա, որում 'ի սկզբան անգէտ էր Ագրիպպինա, և ապա զուր ջանացաւ զդէմ ունել այնմ, 'ի զեղխութիւնս և յանյայտ իմն գաղտնիս սկսեալ էր. և տուփանացն Ներոնի ընդ անարգ ազախնոյն՝ խստակրօնք իսկ 'ի բարեկամաց

նորա ոչ ընդդէմ դառնային. զի Ակտիա առանց ումեք
ինաս հասուցանելոյ՝ ընոյր զցանկութիւն ինքնակա-
լին. որ եթէ ըստ արկածից չարաց կամ ըստ առա-
ւելագոյն հրապուրանաց հեշտալեացն օրինազանցու-
թեամբ գործեցելոց՝ գարշէր միանգամ 'ի կնոջէ իւր-
մէ յՈկտաւեայ, որ ընդ աղնուատոհմութեանն պատ-
կառելի ևս էր առաքինութեամբ, զոյր նմա վտանգ
'ի պղծութիւն ընդ ազատազգի տիկնայս զառածա-
նելոյ՝ 'ի խափանէլն 'ի տուփանաց աղախնոյն։

ԺԳ. Բայց Ագրիպպինա զայրագինս ըստ կանացի
բարուց բողոքէր զթշնամանացն, և մանաւանդ վասն
ձերբազատին կալոյ իւր յոսոխ, և աղախնոյն 'ի նու, և
ոչ սպասեալ ստրջանաց որդւոյն կամ յափրանալոյ՝
դառնագոյն կշտամբանօքն առաւել ևս բորբոքէր
զտուփանս նորա, մինչև առ բռնութեան սիրոյ 'ի բաց
դնել նմա զամենայն մեծարանս մօր, և 'ի Սենեկա
ապաւինել։ Անտոն Սերենոս մի 'ի բարեկամաց Սենե-
կայի, որպէս թէ հարեալ և ինքն 'ի սէր Ակտեայ՝
ծածկէր իւրև զնախընծայ տարփանս ինքնակալին,
զգաղտնի պարգևս նորա առ աղախինն՝ յանուն իւր 'ի
վերին երեսս ընձեռելով։ Յայնժամ Ագրիպպինայ
յեղաշրջեալ զհնարս իւր, ողոքով յարձակէր 'ի պա-
տանին, զառագաստ իւր և զմայրենին ծոց ընծայելով
նմա՝ առ 'ի սքօղել որ ինչ հասակն պատանեկան և
ծայր բարեբաստութեան խնդրէին 'ի նմանէ։ Խոս-
տովան լինէր զտարաժամ խստութիւն իւր ընդ նմա,
և զգանձս իւր սակաւ ինչ ընդհատս 'ի գանձուց ինք-
նակալին՝ առաջի առնէր նմա 'ի վայելումն. որպէս զի
որ սակաւիկ մի յառաջ առաւելագանցն էր 'ի խրս-
տութիւն, երևէր յայնժամ առաւել քան զարժանն
զիջանել 'ի կամս որդւոյն։ Այս յեղափոխութիւն ոչ
խաբեաց զՆերոն. զի և մտերիմ բարեկամք նորա խի-
թային, և աղաչէին զնա պատրաստ կալ 'ի հնարից
կնոջն, որ միշտ իսկ ոխերիմք՝ իսկ յայնժամ ոխերիմա-
գոյնք էին և դաւողականք։ Յաւուրսն յայնոսիկ դէպ
եղև Ներոնի տեսանել զզարդս՝ զորս կրէին տիկնայք
և մարք ինքնակալաց. և ընտրեալ զմի յոսկեհուռ հան-
դերձից, և գոհար ականս՝ առանց խնայութեան, յը-
ղեաց առ մայր իւր 'ի պարգև՝ որպէս թէ կանխելով

ընծայել մեր իւրում զցանկալիս տիկնաց պայծառա-
գոյն զարդս։ Սակայն Ագրիպպինա բողոքէր՝ զի զարդքն
այնոքիկ ոչ յաւելուին ինչ իւր. զի բաժանէր ընդ իւր
Ներոն՝ որ ինչ իւրևն ժառանգէր. և ոչ պակասեցին,
որք զբանս նորա յաւելուածով հասուցին յունկն ինք-
նակալին։

ԺԴ. Եւ զայրացեալ Ներոնի 'ի վերայ այնոցիկ՝ որք
պատսպարան ամբարտաւանութեան տիկնոջն լինէին,
ընկէց զՊալլաս 'ի յանձանձանաց իրաց՝ յորս 'ի Կլաու-
դեայ կացուցեալ, և որպէս թէ իշխէր աշխարհին. և
պատմի՝ յելանել նորա մեծաւ սպասաւորաց բազմու-
թեամբ, ոչ յանդէպս ասացեալ Ներոնի զնմանէ, զի
երթայր հրաժարել 'ի գահոյիցն։ Դաշն եդեալ էր նորա
և ոչ զմիոջէ խմբէ 'ի գործոց իւրոց տալ զհամար, որ-
պէս թէ հաւասարեալ զանձն ընդ հասարակապետու-
թեան։ Ագրիպպինայ խելայեղեալ այնուհետև առ
զայրոյթ սրտին, արկանէր արհաւիրս և սպառնալիս,
և ոչ 'ի լուր ինքնակալին խնայեալ՝ ասէր. Մինչդեռ
Բրիտանիկ՝ որդի հարազատ և արժանաւոր ժառանգ
հայրենի ինքնակալութեանն՝ վաղ իսկ յարբունս հա-
սեալ կայ, պատուաստեալն յորդեգիր՝ 'ի թշնամանս
մեր իւրոյ ինքնակալէ։ — Եւ սպառնայր չարգելուլ
հրապարակագոյժ առնելոյ զամենայն խոհերս վատ-
շուէր արքունեացն, և նախ զազգապիղծ հարսանիսն
և զոճիր դեղատուութեանն. և յաւելոյր՝ զի դիցն շը-
նորհիւ, և իւրովք նախահոգ խնամովք, կեայր ուր-
ջու իւր՝ խաղալ 'ի միասին 'ի բանակ, և աստի դատերն
Գերմանիկեայ լսելի առնել զբարբառ իւր, և անտի
ապիկարին Բուրրոսի և աքսորելումն Սենեկայ՝ միումն
խեղ բազկաւ, և միւսումն վարժապետական սաս-
տիւ, զվարչութիւն ազգի մարդկան պահանջել։ Եւ
զոյդ ընդ բանիցն ձեռն ամբառնայր, թշնամանս կու-
տէր, և բողոք հարկանէր առ սրբազանեալն Կլաու-
դիոս, առ ոգիս սիլանեանց 'ի սանդարամետս, և առ
այնքան ոճիրս տարապարտուց գործեցեալս։

ԺԵ. Խռովեցաւ 'ի բանից աստի Ներոն. և 'ի վաղիւ
անդր, որ օր լուսն էր չորեքտասաներորդի ամի տիրոջն
Բրիտանիկեայ, յեղյեղեր 'ի մտի՝ մերթ զզայրոյթ
մեր, և մերթ զպատանեաց բնաւորութիւն՝ որոյ փորձ

ինչ յայնժամ սիրելի յոյժ արարեալ էր զնա ժողովրդեան։ Զի յաւուրս սատուրնական տօնից, ընդ այլ խաղս համատիոց պատանեաց՝ յարկանել նոցա զիշխանութիւն 'ի վիճակ, Ներոնի ելեալ էր վիճակն։ Արդ 'ի տալ նորա այլոց պատանեաց այլ և այլ պատուէրս՝ որ ոչ ածէին ինչ նոցա նախատինս, պատուիրեալ էր և Բրիտանիկեայ՝ անցանել 'ի մէջ, երգ ինչ նուագել։ կարծելով ծաղր կացուցանել որպէս արբեալ զպատանին, որ ոչ միայն 'ի գինեբբուաց՝ այլ և 'ի զգաստ կոչնոց հեռի կայր։ Բրիտանիկ երգեաց անդ անխռով տաղ ինչ, որոյ իմաստք ակնարկէին յանկումն իւր 'ի հայրենի աթոռոյ, և 'ի ծայրէ բարեբաստութեան. ընդ որ 'ի գութ շարժեցան ունկնդիրք, առանց թագուցանելոյ զկիրս, գիշերոյ և գինեհարութեան 'ի բաց մերժեալ 'ի նոցանէ զկեղծիս։ Ծանուցեալ Ներոնի զդժկամակութիւն նոցա ընդդէմ իւր, յաւելյոխութիւն. և ստիպեալ 'ի սպառնալեաց Ագրիպպինայ, քանզի չգտանէր յանցանս ինչ 'ի Բրիտանիկ, և չիշխէր հրամայել համարձակ զմահ եղբօրն, խորհէր հնարս 'ի ծածուկ. և ետ պատրաստել մահադեղ 'ի ձեռն Պոլլիոնի Յուլեայ հաղարապետի ատենական գնդին, որում յանձն էր 'ի պահ Լոկուստա՝ դատապարտեալն 'ի յանցանս դեղատուութեան, վասն բազում եղեռնագործութեանցն անուանի։ Վաղ իսկ լեալ էր զգուշութիւն մի թողուլ առ Բրիտանիկեայ և ոչ զոք, որում փոյթ ինչ օրինաց կամ հաւատարմութեան կամ ամթոյ։ Նախ 'ի դաստիարակաց նորա մատուցաւ նմա արբուցումն դեղոյն, այլ ջրեցաւ այն որովայնածութեամբ՝ զի չէր ինչ զօրաւոր, և կամ զի ամոքեալ էր՝ առ 'ի չաղդելոյ երագ։ Բայց Ներոնի չհանդուրժեալ յամելոյ անօրէնութեանն՝ սպառնայր հաղարապետին, և պատուհաս մահու հրամայէր դեղատուին, իբր զի յերկիւղէ համբաւոյն յամեցուցանէին զապահովութիւն իւր 'ի պաշտպանութիւն անձանց, մինչև խոստացան պատրաստել մահադեղ սուր իբրև զսայր սուսերոյ։ Մերձ 'ի սենեակ ինքնակալին արկաւ դեղն 'ի յեփ, և արագամահ զօրութիւն նորա մատուցաւ 'ի փորձ։

ԺԶ. Սովորութիւն էր արքայազանց ճաշել ընդ հասակակիցս իւրեանց արքայորդիս, առաջի ընտանեաց՝

որք մերձ բաղմէին յայլ սեղան՝ ոչ իբրև զնոցայն մե-
ծահաց։ Անդ և Բրիտանիկ բաղմէր 'ի Ճաշ. և քանզի
մի յընտրելոց սպասաւորաց նորա Ճաշակէր նախ որ ինչ
պաշտէրն նմա 'ի կերակուր և յարբու�, չեղէն կամք
զանց զսովորութեամբն առնել. այլ զի մի երկոյուանց
'ի միասին մահուամբ մատնեսցի ոՃիրն, այսպիսի հնա-
րեցաւ նենգ։ ԱՃաւ Բրիտանիկեայ ըմպելի ջերաջերմ
անխառն, զորոյ նախ առեալ էր սպասաւորին զՃաշակ.
և 'ի չկարել նորա առնուլ զայն յարբուիմն վասն կարի
ջերմութեան, ջուր ցուրտ թունախառն արկաւ անդր.
և այնպէս արագ ընդ անդամն նորա թունիցն ծաւա-
լեալ, զի սպառէր զոյգ ընդ բարբառոյ շունչ նորա։
Խռովեցան որք անդն կային. 'ի բաց մեկնեցան անխո-
հեմք, այլ խորագէտք զկայ առին՝ յապուշ հարեալ ա-
կընկառոյցք 'ի Ներոն. իսկ նա ընկողմանեալ կայր իբր
անգէտ իրացն, և ասէր կրել Բրիտանիկեայ յաՃախ 'ի
մանկութենէ զախտ վերնոտութեան, և ապա դառ-
նալ տակաւ 'ի զգայութիւն և 'ի տեսութիւն։ Բայց
Ագրիպպինայ այնպէս զահի և զդողանի հարեալ, զի
և 'ի ջանալ իւր ծածկել՝ յայտնի լինէին արհաւիրքն
և անգէտ իրացն գոլ՝ որպէս զՈկտաւիա քոյր Բրիտա-
նիկեայ. զի կորուսեալ նորա զհզօրագոյն ապաւէն իւր,
զմայրասպանութեան հաւաստիս առաջի աչաց նկա-
տէր։ Նոյնպէս և Ոկտաւիա, թէպէտ և մատաղ դեռ
ևս տիոմք, բայց ուսեալ էր թագուցանել զկսկիծ և
զսէր և զամենայն կիրս իւր. վասն որոյ յետ սուղ ինչ
լուութեան՝ սկսան անդրէն խրախունք կոչնոցն։

ԺԷ. Գիշերն այն կցորդեաց զմահ ընդ խարոյկն
Բրիտանիկեայ, որ յառաջագոյն պատրաստեալն էր
դոյզն ինչ եղերական սպասուք. և թաղեցաւ նա 'ի
դաշտ Աբիսի այնպիսի որոտընդոստ ամպրոպիւք, զի
ռամիկն վարկաւ զայն 'ի ցոյց դիցն ցասման ընդդէմ՝
եղեռնագործութեանն. սակայն և բազումք յուշ ա-
ծեալ զնախնի տարաձայնութիւնս եղբարց, խնայե-
լով դատէին, և անկցորդելի զթագաւորութիւն հա-
մարէին։ Յոգունք 'ի պատմագրաց ժամանակին ա-
ւանդեն, Ներոնի նախ քան զմահ Բրիտանիկեայ՝
բռնաբարեալ յաՃախ զմանկութիւն նորա, որպէս զի
մի տարաժամ և դժպհի թունեսցի վաղամեռիկ մահ

յետնոյ կլաւդեանց զաւակին, Թէպէտ և յանդիման աչաց ոսոխին 'ի սրբազան կոչումն, առանց ողջագուրել կարելոյ զքոյր իւր, այն որ մինչև Թունիւք՝ պղծութեամբ 'ի նմանէ ապականեալն էր։ Ներոն անբասիր արար հրովարտակաւ զՀարևանցի յուղարկաւորութիւն նորա, ցուցանելով օրինադրեալ'ի նախնեաց ծածկել յաչաց զմահ վաղահաս, և մի՛ արձանական գովութեամբք և սպասուք զեղերական հանդէսն երկարել։ Ցաւելոյր և զանձնէ՝ կորուսեալ զեղբօրն օգնականութիւն, և զնշխարեալ յոյս իւր 'ի հասարակապետութիւնն հաստատել. և այնչափ ևս առաւել արժան համարէր ծերակուտին և ժողովրդեան խնամարկել իւր, որչափ զի միայնակ մնայր յաղգատոհմէ անտի սահմանելոյ 'ի գերագոյն իշխանութիւն։ Յետ այսորիկ զգլխաւորս 'ի բարեկամացն մեծապարգև մեծարեաց.

ԺԸ. Եղեն ևս, որք ստգտանէին զարանց պանծացելոց 'ի խստակրօնութիւն՝ բաժանել յայնժամ յիւրեանս որպէս աւար զապարանս և զամարանոցս Գերմանիկեայ. բայց այլք համարէին բռնադատեալս զնոսա յինքնակալէն, որ 'ի խղձէ չարեացն՝ վասն ներելի լինելոյ՝ յինքն յանկուցանէր առատ պարգևօք զՀզօրս պետութեան։ Բայց մօրն զայրոյթ ոչ իւիք ողբէր. գգուէր նա զՈկտաւիա, խորհրդակցէր յաձախ ծածկաբար ընդ բարեկամս իւր, և 'ի վերայ ընդաբոյս ագահութեան իւրոյ՝ պմենայն ուստեք ժողովէր արծաթ 'ի պաշտպանութիւն անձին։ Զհաղարապետս և զՀարիւրապետս քաղցրութեամբ ընդունէր, մեծարէր զանուանս և զառաքինութիւնս ազատաց՝ որ դեռ ևս կային 'ի Հռովմ, և գոգցես իմն առաջնորդս իւր և կուսակիցս խնդրէր 'ի նոցանէ։ Իրազեկ եղև Ներոն, և զպահանորդս՝ որ իբր երբեմն դշխոյի տիկնոջ, և յայնժամ մօր ինքնակալի՝ կային առ նմա, և զգերմանացիս առ 'ի նոյն պատիւ յաւելեալս 'ի պահ, հրամայեաց բառնալ։ Եւ առ'ի խափանել զյաձախութիւն այցելուաց՝ բաժանեաց զապարանսն, տեղափոխեալ զմայր իւր 'ի կողմն՝ ուր բնակէրն Անտոնիա, և յայց առնել իւր նմա՝ գնայր շուրջ պատեալ'ի հարիւրապետաց, և հարևանցի տուեալ զողջոյն գրկախառն՝ դառնայր յետս։

ԺԹ. Զիք ինչ'ի մահկանացուաց իրաց առաւել յողդողդ և վաղանցուկ քան զհամբաւ զօրութեան, որ չիցէ'ի վաստակս յեցեալ։ Վաղվաղակի եղեն ամայի սեամք Ագրիպպինայ, ոչ ոք կարեկից նմա, ոչ ոք այցելու, բայց կանայք ոմանք. և այնոքիկ՝'ի սիրոյ թէ յատելութենէ ձգեալք՝ անյայտ։ Մի'ի սոցանէ էր Յունիա Սիլանա, զորոյ՝ ըստ նախասացելումն՝ եղծեալ էր Մեսսալինա զհարսանիս ընդ Կ. Սելէայ. և էր նա տոհմիկ, երևելի գեղոնի և լկտութեամբ։ Սիրելի ևս էր նա յոյժ Ագրիպպինայ յառաջագոյն, այլ ապա հեռ յարամրի'ի նոսա անկեալ, զի Ագրիպպինայ շրջեալ էր զմիտս Սեքստիոսի Ափրիկանեայ՝ ազնուազգի պատանւոյ՝ չառնուլ զնա'ի կնութիւն, լկտի զնա կոչելով և պառաւեալ. իբր ոչ եթէ առ'ի յանկուցանել յինքն զԱփրիկանոս, այլ զի մի սա զինչս Սիլանայ ամլոյ ժառանգեսցէ։ Սորա պարապ առեալ'ի վրէժխնդրութիւն, պատրաստէ դատախազս՝ զերկուս'ի սպասաւորաց իւրոց, զԻտուրիոս և զԿալուիսիոս. ոչ զհին ամբաստանութիւնսն վաղ առարկեալս՝ ածել անդրէն'ի մէջ, զողբս նորա ընդ մահ Բրիտանիկեայ և զհրատարակումն թշնամանացն Ոկտաւեայ՝ կրելոց'ի Ներոնէ, այլ զխորհուրդ յարուցանելոյ նորա աղմուկ նոր'ի նպաստ Հռուբելլեայ Պլաւտոսի՝ որ ըստ մայրենի ազգին հաւասար Ներոնի իջանէր'ի դիւցազնն Աւգոստեայ, և ամուսնութեամբ ընդ նմա զբռամբ ածելոյ անդրէն զինքնակալութիւն։ Ցայսոսիկ Իտուրիոս և Կալուիսիոս'ի վերայ հանին Ատիմետեայ ձերբազատին Դոմիտիայ հօրաքեռ Ներոնի։ Ատիմետեայ ուրախութեամբ լուեալ՝ զոխալ Ագրիպպինայ ընդ Դոմիտիայ, միաբանեաց ընդ իւր զՊարիս կատակագուսան՝ միւս այլ ձերբազատ Դոմիտիայ, փութալ գնալ պատմել Ներոնի ուժգին բանիւք զոՀիրն։

Ի. Գիշերն հասարակէր. և մինչդեռ Ներոն'ի գիներբուս էր, եմուտ առ նա Պարիս՝ որ սովորն էր'ի նմին պահու զուարթացուցանել զխրախուսս նորա։ Այլ յայնժամ՞'ի յայտնելն նմա զիրան կարգաւ'ի կերպի տխրութեան, այնպէս զարհուրեցաւ Ներոն, զի ոչ միայն զմայր իւր և զՊլաւտոս եդ'ի մտի մատնել'ի մահ, այլ և զԲուրրոս ընկենուլ'ի հրամատարութենէ

ատենական զօրաց, թէ գուցէ վասն հասանելոյ իւրոյ 'ի ձեռն նորա այնմ իշխանութեան՝ ընդհակառակ ձեռն տացէ նմա։ Գրեալ իսկ էր, ըստ աւանդելոյ Փաբիոսի Հռուստիկայ, հրովարտակ փոխանակելոյ Կեկինայ Տուսկոսի 'ի հրամատարութիւն ատենական գնդաց. այլ 'ի ընդհս Սենեկայ եկաց մնաց իշխանութիւնն 'ի ձեռս Բուրրոսի։ Պլինիոս և Կլովիոս՝ ոչ ինչ երկբայութիւն ասեն լեալ զհաւատարմութենէ հրամատարին. Փաբիոս յօժարի 'ի գովեստ Սենեկայ, որոյ բարեկամութեամբն էր պայծառացեալ. այլ մեք, ուր այլապիսոյս տան պատմիչք, յոր ինչ համաձայնին՝ զայն 'ի նոցանէ 'ի կիր առեալ աւանդեմք։ Ներոն զահի հարեալ, մահու մօրն ցանկայր. և չհամբերէր իսկ յամել, եթէ Բուրրոսի չէր զնա հանդարտեալ՝ յանձն առնլով սպանանել զԱգրիպպինա 'ի դատապարտելնորա. մանաւանդ զի ամենայն ումեք, եւ առաւել մօր, պարտ էր տեղի տալ պատասխանւոյ. և ոչ դատախազք մերձ կային, այլ միոյ եւեթ ուրուք 'ի հակառակորդաց լսելի լինէր բողոք. և զայն խաւար գիշերոյ, հրսկումն 'ի խրախունս, և ամենայն ինչ երկբայելի առնէին՝ որպէս անզգայութեան և ցնորից բանս։

ԻԱ. Ըստ այսմ օրինակի ցածեաւ երկիւղ ինքնակալին, և 'ի ծագել առաւօտու առաքեցան առ Ագրիպպինա ամբաստանութիւնքն, զի լուեալ զայնոսիկ՝ տացէ պատասխանի, կամ ընկալցի պատուհաս։ Բուրրոս կատարեաց զպատուէր ինքնակալին առաջի Սենեկայ. կային անդ և ոմանք 'ի ձերբազատից վկայք բանիցն. և յետ առաջի առնելոյ նմա զյանցանսն և զդատախազս, յաւել սպառնալիս։ Յայնժամ Ագրիպպինայ վայրենացեալ՝ ասէ. Ոչ ինչ զարմանամ զի Սիլանայ ոչ ունելով որդիս, չձանաչիցէ զսիրտ մայրենի. զի ոչ փոխեն մարք զորդիս, որպէս լկտիք զհոմանիս. եթէ Իտուրիոս և Կալուիսիոս վատնեալ զամենայն ինչս իւրեանց, 'ի յետին հնարս ապաստանին՝ վաճառել պառաւոյն զչարախօսութիւն իւրեանց, ոչ ինձ զնախատինս, որդեսպանութեան, և ոչ ինքնակալին արժան է զայսպիսի կրել խիղճ։ Շնորհապարտ գտանիցի Դոմիտիայ, եթէ պայքարէր նա ընդ իս 'ի սիրելութիւն իմոյս Ներոնի. այլ նա 'ի ձեռն Ատիմետեայ հոմանւոյ և Պա-

ըեայ խեղկատակի թատերական առասպելս յօրինէ։ Նա զձկնատեանս իւր կառուցանէր՝ի Բայս, յորժամ իմովք խորհրդովք պատրաստէին Ներոնի որդեգրութիւն և իրաւունք փոխանակի բդեշխի, կարգ՝ի բդեշխութիւն և այլն ամենայն՝ի ժառանգութիւն ինքնակալութեան։ Թող կացցէ ոք վկայ հրապուրելոյ իմոյ զգունդս ատենականս, զհաւատարմութիւն գաւառաց սասանեցուցանելոյ, և զծառայս և զձերբազատս կաշառելոյ յոձիր։ Մարթէ՞ր ինձ կեալ յինքնակալել Բրիտանիկեայ. և եթէ Պլաւտոս կամ այլ ոք կալցի զհասարակապետութիւն և կացցէ ինձ դատաւոր, չիցե՞ն չարախօսք՝ որք ոչ զբանս անզգոյշս անժոյժ գորովոյ ամբաստանեսցեն զինէն, այլ ոձիրս՝ յորոց որդի իմ միայն կարասցէ արձակել զիս անպարտ։ — Ի գութ շարժեալ որք անդն կային, գուն գործէին հանդարտել զոգի նորա. այլ ինքն կամէր խօսել ընդ որդւոյ իւրում։ Բայց ոչ ինչ ընդ նմա զանմեղութենէ իւրմէ խօսեցաւ՝ որպէս յերկբայս զայն արկանելով, և ոչ զբարերարութեանց իւրոց՝ իբրև թէ երախտելով նմա զայնս, այլ պատուհաս ևեթ չարախօսացն և վարձս բարեկամաց իւրոց խնդրեալ, և ընկալաւ։

Ի Բ. Փենիոս Հռուփոս կացուցաւ ամբարապետ, և Աբրոնտիոս Ստելլա՝ի վերայ խաղուց՝ զոր պատրաստէր ինքնակալն ածել՝ի հանդէս։ Կ. Բալբիլլոս ընկալաւ զկուսակալութիւն Եգիպտոսի, և Պ. Անտէոս սահմանեցաւ կուսակալ Ասորւոց, այլ պէսպէս հնարիւք խափանեալ՝ յետոյ ապա արգելաւ՝ի Հռովմ։ Սիլանոս աքսորեցաւ։ Իտուրիոս և Կալուիսիոս արտաքսեցան, և Ատիմետոս՝ի մահ մատնեցաւ։ Պարիս կարևոր էր ինքնակալին առ՝ի խոհերս չարեաց, և զերծաւ՝ի պատժոց. իսկ զՊլաւտեայ եղև առ ժամն լռութիւն։

Ի Գ. Պալլաս և Բուրրոս ամբաստանեցան՝ի համախոհութիւն՝ կացուցանելոյ ինքնակալ զԿուռնելիոս Սիլլա վասն պայծառութեան տոհմին, և վասն խնամութեանն ընդ Կլաւդեայ, զի փեսայացեալ էր նմա՝ի դուստր նորա ՅԱնտոնիա։ Եւ էր ամբաստանօղն Պետոս, ականաւոր յառաջնմէ վասն՝ի վաճառ հանելոյ զինչս գրաւելիս՝ի գանձ հասարակաց, և յայնժամ վասն

զրպարտութեան։ Պալլասայ անպարտ արձակումն ոչ այնչափ հաճոյ թուեցաւ ժողովրդեան, որում ծանրատաղտուկ էր նա ամբարտաւանութեամբն։ Յաւնուանել դատախազին զոմանս 'ի ձերբազատից նորա համախոհս նմա, եւ պատասխանի՝ զի ակնարկութեամբ ևեթ և նշանացի խօսէր ինքն 'ի տան, և եթէ դէպ լինէր բազում ինչ տալ պատուէր՝ գրով տայր առ 'ի չլինելոյ ընդ նոսա խօսակից։ Իսկ Բուրրոս, թէպէտ և ամբաստանեալ, եւ ընդ դատաւորս վճիռ. աքսորեցաւ ամբաստանօղն, և 'ի հուր ծախեցան տախտակք, յորս պահանջք գանձուն հատուցեալք՝ դրոշմեալ էին իբրև չհատուցեալ։

ԻԴ. Ի վերջկոյս ամին գունդք զօրաց՝ որ սովոր էին կալ 'ի պահ հանդիսի խաղուց՝ բարձան որպէս թէ յառաւելագոյն ազատութիւն, և զի դարձեալ նուազ ապականեսցի զօրականն՝ ոչ կալով 'ի ընդ Թատերական ցոփութեանց, և զի դարձեալ ժողովուրդն տացէ զփորձ կալոյ անխռով առանց զօրաց պահպանութեան։ Ինքնակալն ըստ պատգամաց հաւահմայից՝ քաւութիւն արար քաղաքին վասն ամպահարելոց մեհենացն Աբրամազդայ և Աթենասայ։

ԻԵ. Առ բդեշխութեամբ Կ. Վոլուսեայ և Պ. Սկիպիոնի, խաղաղութիւն էր արտաքոյ. այլ 'ի Հռովմ ապականութիւն բարուց և նշաւակութիւն։ Ներոն ծպտեալ ծառայակերպ շրջէր ընդ փողոցս քաղաքին, ընդ բոզանոցս, և ընդ աշխարհաւանդս, առեալ ընդ իւր արս՝ որք յափշտակէին զվաճառս, և վերս 'ի վերայ դնէին անծանօթից, մինչև նմին իսկ ինքնակալին ընդունել հարուած և վերս 'ի դէմ։ Եւ իբրև ծանուցաւ՝ զի առաջնորդ աւազակացն ինքնակալն էր, յաճախեցին թշնամանք ընդդէմ երևելեաց արանց և տիկնաց. զի 'ի տալ միանգամ ազատութիւն յանուն ինքնակալին՝ զնոյն և բազումք արբանեկօքն իւրեանց անօրինէին անպատուհաս, մինչև զնուաճելոյ քաղաքի բերել գիշերոյ զկերպարանս։ Յուլիոս Մոնտանոս 'ի բդեշխական կարգէ, որոյ չև էր ընկալեալ զպատիւն, ընդհարեալ ուժգին 'ի մեծան ընդ ինքնակալին, վանեաց քաջութեամբ զզօրութիւն նորա. և իբրև ծանեաւ զնա՝ յողոք անկեալ աղերսէր. այլ աղերս նորա 'ի

թշնամանս համարեցաւ նմա, և ստիպեցաւ նա երթալ զիւրովին։ Բայց Ներոնի յաւելեալ այնուհետև յերկիւղ՝ զինուորս և սուսերամարտս բազումս կացոյց զիւրև, պատուէր տուեալ նոցա՝ թողուլ ազատ զնա խաձեռն թեթև մրցմունս որպէս մենամարտ. այլ՝ի բռնանալ հարելոցն՝ զէն՝ի գործ առնել, և զանսանձ ազատութիւն թատերն և զգուսանացն պաշտպանութիւն իբր՝ի մարտ պատերազմի յեղափոխեաց, թողեալ անպատիժ, և վարձատրեալ իսկ զնոսա։ Իսկ ինքն անտեսաբար, և յաճախ ևս զառաջեաւ խաղետեղն՝ի զնին կայր. մինչև յաղմկել ժողովրդեան, առ վտանգի սաստկագոյն ևս խռովութեան, ոչ գտաւ այլ հնար՝ բայց հալածել յԻտալիոյ զկատակագուսանս, և շուրջ զթատերբն կացուցանել դարձեալ զօրականս։

ԻԶ. Ի նոյն ժամանակս եղև բողոք՝ի ծերակուտին զձերբազատիցն ստահակութենէ. և խնդրեցան ընդդէմ չարագործացն՝ իրաւունք բառնալոյ տերանց՝ի նոցանէ զազատութիւն։ Ոմանք յատենակալաց հաւանէին ընդ այն. այլ ոչ իշխելով բդեշխից առաջարկել զայնր զհաստատութիւն յանգէտս ինքնակալին, մատուցին նմա գրով զկարծիս ծերակուտին՝ զի ինքն տացէ վճիռ, որպէս թէ սակաւուց՝ի Հարց հակառակ կալով հաստատութեանն։ Զայրանային ոմանք ընդ առաւելագանց ազատութիւն նոցա, հասեալ յայն յանդգնութիւն, մինչև խնդրել՝ի ծերակուտէն սահմանել՝ զօրութեամբ թէ իրաւամբք պարտ իցէ ձերբազատից վիճել ընդ տեարս իւրեանց, ուժգին զձեռնձգութիւն նոցա վանել՝ թէ բանակռիւ լինելով զերծանել՝՝ի պատժոց։ Զի՞նչ այլ մնայ, ասէին, թշնամանելոյ տեառնն, բայց վարել զնոսա անդր քան զքսան մղոն՝՝ի Կամպանիա. զի այլ ամենայն իրաւունք՝ հասարակաց են նոցա և հաւասար։ Պարտ է տալ ինչ նմա զէն, զոր չկարիցեն նոքա արհամարհել։ Եւ չէ պարտ նոցա դժկամակել՝՝ի պահել զազատութիւն նովին հպատակութեամբ, որով ստացանն զայն. զըմբրուռնեալս՝՝ի չարագործութեան իրաւունք են դարձուցանել՝՝ի ստրկութիւն, որպէս զի երկիւղիւ սանձահարեսցին՝ որք ոչն գան բարերարութեամբ՝՝ի զգօնութիւն։

ԻԷ. Այլք ընդ հակառակն սնդեալ ասէին. Պարտ է սակաւուց ոմանց յանցուցելոց պատուհաս 'ի վերայ ածել, և մի 'ի պատճառս նոցա զամենեցուն բառնալ զիրաւունս. զի համասփիւռ ծաւալեալ են, և բազում այն է՝ զի 'ի նոցանէ կազմին ցեղք և դպրացն տաճնեակք, պաշտօնեայք դատաւորաց և քրմաց, ևս և գունդք ատենականք. և յոգունց իսկ յասպետաց և յոլովից յատենակալաց ծերակուտին, 'ի նոցանէ յառաջ գան դասք։ Ի բաժանել ձերբազատից՝ 'ի յայտ գայցէ նուազութիւն ազատաց. ոչ վայրապար նախնիք 'ի զանազանելն զպատիւ կարգաց իւրաքանչիւր՝ Թողին հասարակաց զազատութիւն. մանաւանդ զի կրկին ազգ սահմանեցին ազատութեան, առ 'ի տալ տեղի բառնալոյ զայն կամ վերստին հաստատելոյ։ Զորս միանգամ իրաւանց տերանցն չլցէ յայտ արարեալ ձերբազատս, դեռ ևս 'ի կապանս իմն ծառայութեան կան. խնամով իւրաքանչիւր ոք քննեսցէ զվաստակս, և յամր շնորհեսցէ՝ զոր չկարէ յետ միանգամ տալոյ առնուլ 'ի բաց։ — Յաղթեաց կալաւ այս բան խորհրդի, և ինքնակալն գրեաց առ ծերակոյտն՝ քննել ուրոյն ըզդատ ձերբազատից յամբաստանել նոցա 'ի տերանցն, և մի ինչ վասն ամենեցուն առ հասարակ սահմանել։ Այլ յետ սակաւ միոյ կորոյս հօրաքոյր ինքնակալին զձերբազատ իւր զՊարիս՝ որպէս թէ ըստ քաղաքական իրաւանց բարձեալ յիւրմէ հրամանաւ Ներոնի, ոչ առանց նախատանաց նորա դատեալ ազատ 'ի ծնէ։

ԻԸ. Սակայն զի կայր և մնայր տակաւին երևոյթ իմն հասարակապետութեան, յարեաւ վէճ ընդ Վիբուլլիոս ատենակալ և ընդ Անտիստիոս հաղարապետ ժողովրդեան, զի զհամախոհս ոմանս լիրբս 'ի կատակագուսանացն, արկեալս յատենակալէն 'ի կապանս, հրամայեալ էր հաղարապետին արձակել 'ի բաց։ Ծերակոյտն կալաւ զկողմն Վիբուլլեայ, կշտամբեալ ըզյանդգնութիւն Անտիստեայ, և արգելեալ՝ մի ևս հաղարապետաց զիրաւունս ատենականաց և զբդեշխից յափշտակել, կամ եկակոչ առնել յիտալիոյ այնոցիկ՝ որոց գոյր ատեան օրինաւոր։ Յաւել Լ. Պիսոն՝ սահմանեալն 'ի բդեշխութիւն՝ մի կարել նոցա տալ վճիռ դատապարտութեան առանին, և մի զտուգանս՝ որ-

կեալս 'ի նոցանէ՝ դրոշմել գանձապետաց հասարակաց գանձուն 'ի տախտակս արքունիս նախ քան զամիսս չորս, և կարել նոցա 'ի միջոցի անդ բողոքել, և բդեշխից սահմանել զիրսն։ Անձկագոյն ևս ամիոփեցաւ շինուածապետացն իշխանութիւն. որչափ ինչ աւագանին և որչափ ժողովրդականք՝ կարիցեն առնուլ գրաւ կամ տուգանս արկանել։ Հելուետիոս Պրիսկոս հաղարապետ ժողովրդեան զայս պատեհ առեալ՝ խնդրեաց զվրէժ իւր յՈբուլտրոնեայ Սաբինոսէ, որ հասարակաց գանձուն էր պետ, ամբաստանեալ զնա՝ որպէս թէ անգթաբար հարստահարէր զաղքատս. վասն որոյ եբարձ ինքնակալն զպահպանութիւն հասարակաց տախտակացն 'ի գանձապետաց, և յանձն արար վերակացուաց։

ԻԹ. Ոչ միօրինակ եկաց մնաց, այլ յեղափոխէր յաճախ կերպարան այսր տեսչութեան. զի Աւգոստ ԵԹող ծերակուտին ընտրել առ այս վերակացուս. և ապա վասն կասկածանաց կուսակցութեան՝ վիճակաւ ընտրէին 'ի Թուոյ գանձապետաց վերակացուք. և այս իսկ ոչ տևեաց ընդ երկար, զի ապիկարից ոմանց ելանէր վիճակն։ Յայնժամ Կլաւդիոս վերստին 'ի գանձապետաց անտի կացոյց վերակացուս, և խոստացաւ նոցա նորանոր պատիւս՝ զի մի առ ահի ատելութեան թերահոգ գտանիցին. այլ Ներոն վասն անբաւականութեան տիոց նոցա յառաջնում անդ իւրեանց պաշտաման՝ սահմանեաց ընտրել զերիցագոյնս 'ի նոցանէ վկայեալս 'ի փորձոյ։

Լ. Առ նովին բդեշխիւք Վիպսանիոս Լենաս դատապարտեցաւ վասն զօշաբաղութեամբն վարելոյ 'ի Սարդենիա։ Կեստիոս Պրոկուլ անպարտ արձակեցաւ 'ի յանցանաց հարստահարութեան, հրաժեշտիւ ամբաստանողացն։ Կլաւդիոս Կուիրինալ, զօրավար պատերազմիկ նաւատորմին՝ որ զկայ առնոյր 'ի Հռաւենա, ամբաստանեալ վասն կեղեքելոյ իւրոյ զԻտալիա՝ որպէս զմի յանարգագոյն գաւառաց՝ զեղիութեամբ իւրով և անգթութեամբ, կանխեաց քան զդատապարտութիւն իւր դեղ առնուլ անձամբ։ Կանինիոս Հռեբիոս, մի յառաջնոց իրաւագիտաց՝ այր մեծափարթամ, առ 'ի զերծանել 'ի տառապանաց ախտա-

կիր ծերութեան, հոսեալ յերակաց զարիւն՝ եղև անձնամահ. ոչ ոք կարծէր զնա բաւական յարիւ-թիւն զանձն 'ի մահ մատնելոյ, զվարարեալն կանացա-բար ցանկութեամբ։ Իսկ Լ. Վոլուսիոս մեռաւ բարե-համբաւ ինքնասն և երից ամաց, ստացեալ արդարու-թեամբ մեծութիւնս բազումս, և կեցեալ անվնասելի 'ի յոռութենէ այնքանեաց ինքնակալաց։

ԼԱ. Յաւուրս միսանգամ կալոյ Ներոնի բդեաշխ ընդ Լ. Պիսոնի, սակաւ ինչ գտանին դէպք արժանի յիշատակի, եթէ ոչ ախորժ թուեսցի ընուլ զմատեանս գովասանութեամբ հիմանց և ատաղձից, որովք կա-ռոյց նա զշուրջ տեսանելեաց ընդարձակատարը տեղիս առ արիսական դաշտիւ։ Բայց ժողովրդեանն Հռով-մայ փառք զիրս երևելիս 'ի տարեգիրս, իսկ զայնպի-սիս յօրագիրս Հռովմայ պատշաճ համարին աւանդել։ Գաղթականք 'ի Կապուա և 'ի Նուկերիա հաստատե-ցան, յաւելմամբ անդ հինաւուրց զօրականին. և իւ-րաքանչիւր ումեք 'ի ռամկէն բաշխեցան 'ի պարգև սեպ-տերտք չորեքարիւր, և չորեքարիւր բիւր տուան 'ի գանձ աշխարհին, առ 'ի հաստատուն ունել զվստա-հութիւն 'ի ժողովրդեան։ Բարձան տուրք քսանևհին-գերիր մասին վաճառաշահութեան գերեաց, այլ ա-նուամբ քան արդեամբք. զի որք վաճառէին՝ յաւե-լուին զգինս գերեաց, առ 'ի հատուցանել զհարկն։ Հրովարտակաւ ինքնակալին արգելաւ կուսակալաց և գործակալաց՝ որ իշխէին 'ի գաւառս, մի ածել 'ի հանդէս սուսերամարտս կամ գազանամարտս, և այլոց խաղուց՝ տեսարանս. քանզի պատճառանօք այսպի-սեաց պարգևաց կեղեքէին զժողովուրդս ոչ ինչ նուազ քան հարկապահանջութեամբ, պատսպարան զօշա-քաղութեան իւրեանց և զեղխութեան առեալ զա-ռատաձեռնութիւն։

ԼԲ. Ծերակոյտն ետ վճիռ 'ի վրէժինդրութիւն և յապահովութիւն, զի եթէ ոք 'ի ստրկաց իւրոց սպան-ցի, բնակակիցք ևս նորին՝ կտակաւ գրեալք յազատու-թիւն՝ ընդ նմա պատուհասեսցին։ Լ. Վարիոս երբեմն բդեաշխ, որ վասն յանցանսց զօշաքաղութեան ար-տաքսեալն էր 'ի ծերակուտէն, դարձուցաւ 'ի կարգ իւր. և Պոմպոնիա Գրեկինա տիկին երևելի, ամու-

սին Պլատեայ, այն որ յաղթանակաւ դարձեալն էր 'ի Բրիտանիոյ, ամբաստանեալ յայլակրօնութիւն՝ թողաւ 'ի դատաստան առն իւրոյ։ Պլաւտիոս, ըստ նախնեացն սովորութեան դատեալ զկին իւր առաջի ազգականաց նորա՝ ըստ վարուցն և ըստ համբաւոյ, յայտ արար զանմեղութիւն նորա։ Պոմպոնիա երկայնակեաց եղև, այլ միշտ 'ի տրտմութեան. զի 'ի սպանութենէ հետէ Յուլեայ դստեր Դրուսոսի՝ նենգաւ Մեսսալինայ, զամս քառասուն եկեաց նա սգազգեաց և ծանրաթախիծ, որ առ ինքնակալութեամբն Կլաւդեայ թողեալ ևեթ անպատուհաս՝ եղև նմա յետոյ 'ի փառս։

ԼԳ. Ի նմին տարւոջ դատափետեցան բազումք. ասիացիք ամբաստանէին զՊ. Կելեր, և ոչ կարելով Ներոնի արձակել զնա անպարտ՝ յերկարաձգեաց ըզդատն մինչև ցօրհաս ծերութեան նորա. զի որպէս 'ի վերը անդր պատմեցի, սպանութեամբն Սիլանեայ փոխանակի բդեշխի՝ զամենայն անօրէնութիւնս իւր նեբելի արարեալ էր նորա։ Կիլիկեցիք ամբաստանեցին զԿոստուտիանոս Կապիտոն 'ի վատթար ոճիրս, և անկղիտացեալ զնա 'ի նոյն անիրաւութիւնս 'ի Կիլիկիա՝ զորս գործէրն 'ի Հռովմ։ Ի յամառութենէ դատախազին պարտասեալ՝ ելիք նա զդատ իւր, և դատապարտեցաւ 'ի յանցանս հարստահարութեան։ Բայց Եպրիոս Մարկելլոս, զոր լիկիացիք ամբաստանէին 'ի յափշտակութիւն, եգիտ այնպիսի հզօր պատսպարան՝ մինչև զոմանս 'ի չարախօսացն տալ վարել յաքսոր, որպէս զրպարտիչս անմեղութեան 'ի կորուստ։

ԼԴ. Ներոնի՝ 'ի կալ նորա զայս երրորդ անգամ բդեաշխ՝ եկաց իշխանակից Վալերիոս Մեսսալա, զոր ոմանք 'ի ծերոց յիշէին զնախահաւն՝ զԿորուինոս Հարտարախօս, որ կացեալն էր բդեաշխ ընդ դիւցազնին Աւգոստեայ նախահաւոյն Ներոնի։ Աջնուական տոհմին յաւելան փառք, և սահմանեցաւ ամի ամի յիսուն բիւր սեստերտ Մեսսալայ՝ 'ի նպաստ պանծալի չքաւորութեան նորա։ Սահմանեաց ևս Ներոն Աբելիոսի Կոտտասայ և Ատերիոսի Անտոնիոսի հաս տարեկան, թէպէտ և 'ի զեղխութիւն վատնեալ էր նոցա զհաւուց նախնեաց իւրեանց զմեծութիւնս։ Պատե-

բազմն Պարթևաց ընդ Հռովմայեցիս 'ի նուաճումն Հայաստան աշխարհի յերկարաձգեալ ցայնժամ դանդաղութեամբ, սաստկացաւ 'ի նմին ամի. քանզի Վոլոգէս ոչ առնոյր յանձն զՏիրիթայ եղբօր իւրոյ անկանել 'ի թագաւորութենէն՝ յորում ինքն զնա կացուցեալ էր, կամ յօտար ձեռանէ ընդունել զայն 'ի պարգև. իսկ Կորբուլոն արժան համարէր մեծութեան Հռովմայեցւոց թափել անդրէն զաշխարհակալութիւն Լուկուլլոսի և Պոմպէի։ Իսկ Հայք գայթ 'ի գայթի, մերթ զսոցին և մերթ զնոցին զէնս առ իւրեանս հրաւիրէին. այլ սահմանակցութեամբն ընդ Պարթևս, նմանակցութեամբ բարուց, ազգախառնութեամբ ընդ նոսա, և անփորձք ազատութեան, 'ի ծառայութիւն առաւել միտէին։

ԼԵ. Կորբուլոնի ծանրագոյն եղև Ճիգն ընդդէմ վատութեան զօրացն իւրոց, քան ընդդէմ նենգաւոր հնարից թշնամեաց. քանզի լեգէոնք եկեալք յԱսորւոց, յուլացեալք յերկարատև խաղաղութեան, դժկամակէին բերել զՃգունս հռովմայեցի զօրուն։ Էր տեսանել 'ի նոսա հինաւուրց զօրականս՝ որոց ոչ 'ի տուէ և ոչ գիշերի կացեալ էր 'ի պահ. փոս և պատնէշս գործել անծանօթ էր նոցա, և թուէր զարմանալի. անսաղաւարտ և անզրահ զաւուրս իւրեանց անցուցեալ էր նոցա 'ի քաղաքս, 'ի խնդիր շահու պարապեալ, և սպրկիկ երևելոյ։ Կորբուլոն 'ի բաց արձակեալ զծերս 'ի նոցանէ և զանառողջս, այլս 'ի տեղի նոցա փոխանակեաց՝ զօրաժողով արարեալ 'ի Գալատիոյ և 'ի Կապադովկիոյ։ Յաւելաւ և լեգէոն մի 'ի Գերմանիոյ, հանդերձ օժանդակ գնդօք հեծելոց և հետևակաց. և բանակն առ հասարակ կայր ընդ վրանօք, թէպէտ և ձմեռն այնպիսի խիստ էր՝ զի զերկիրն սառուցեալ հարկ էր պատառել առ 'ի վարսել զցիցս խորանացն։ Յոգունց 'ի զօրականէն պաղէին անդամք, և ոմանք 'ի գիշերապահից անշնչացան. և միոյ 'ի փայտակիր զինուորաց այնպէս ընդարմացեալ ձեռք, և 'ի բեռն փայտիցն կցեալ, մինչև անկանել դաստակի նորա ընդ բեռինն 'ի բաց, խեղեալ զբազուկն։ Իսկ ինքն Կորբուլոն մեկնահանդերձ և գլխիբաց երկախառնեալ ընդ զօրականին 'ի մարտ և 'ի վաստակ, քաջացն

դրուատիս , քաջալերս վիրաւորաց , և ամենեցուն տայր օրինակ։ Բայց քանզի բազումք 'ի խստութենէ օդոյ և զինուորութեան խուսափեալ՝ դասալիք լինէին, սաստկութեան պէտք եղեն. վասն որոյ ոչ որպէս յայլս 'ի բանակաց յառաջնումն և յերկրորդ նուագի յանցաւորութեան թողութիւն լինէր , այլ փախստեայք անդէն և անդ 'ի մահ մատնէին. և այս փրկաւէտ քան զգթութիւն ցուցաւ արդեամբք , զի նուազունք 'ի բանակէ անտի եղեն դասալիք քան յայլոց՝ ուր ներողութեամբ առնէին պատուհասք։

ԼԶ. Յայնժամ Կորբուլոն կալաւ 'ի բանակի զլեգէոնս մինչև ցհասանել քաղցրախառն աւուրց գարնայնոյ , և կացոյց զօժանդակ գունդս 'ի դիպան տեղիս , պատուէր տուեալ նոցա՝ մի՛ կանխել 'ի պատերազմ։ և 'ի վերայ ամենեցուն նոցա կացոյց զՊակտիոս՝ որ առաջնոյ լեգէոնին լեալ էր հարիւրապետ։ Սա թէպէտ և գրէր առ զօրավարն՝ զի բարբարոսք անընդդոյշ կային , և ժամ բարեպատեհ էր 'ի վերայ յարձակելոյ , բայց Կորբուլոն հրամայէր կալ նմա յամուրս , և սպասել առաւելագունի օգնականութեան։ Նորա ստունգանեալ զօրավարին հրամանի , 'ի հասանել գումարտակաց ոմանց 'ի մերձաւոր քաղաքաց , որ անփորձք իրաց պատերազմի՝ խնդրէին տալ պատերազմ, յարձակեցաւ 'ի Թշնամիս , և 'ի պարտութիւն մատնեցաւ։ Եւ որոց պարտն էր հասանել նմա 'ի Թիկունս , զարհուրեալք 'ի կոտորածէն՝ փախեան երկիւղալիցք յիւրաքանչիւր ամրոցս։ Ծանրացաւսումն լեալ Կորբուլոնի ընդ այն , կշտամբեաց զՊակտիոս՝ զօրապետաքն և զօրաք հանդերձ. և ետ ամենեցուն նոցա պատիժ՝ կալ արտաքոյ ամրոցացն , և կացին 'ի նախատինս անդ՝ մինչև աղաչանաք ամենայն բանակին եղև նոցա թողութիւն։

ԼԷ. Բայց Տիրիթ յաւելեալ յիւրսն զզօրս եղբօր իւրոյ Վոլոգեայ , ոչ ևս գաղտագողի՝ այլ յայտնի պատերազմաւ նեղէր զՀայս , և զորս միանգամ 'ի քաղաքաց հաւատարիմս մեզ համարէր՝ աւար հարկանէր. և խոյս տուեալ 'ի Ճակատամարտէ՝ այսր և անդր ասպատակէր , համբաւոյն քան զօրութեամբ եղեալ ահարկու։ Կորբուլոնի գուն գործեալ ընդ երկար ըմբրդ-

նել զնա 'ի ձակատամարտ և ոչ կարացեալ, ստիպե-
ցաւ ըստ օրինակի թշնամեաց շուրջ ածել պատերազմ:
զօրահատոյց արար, պատուէր ետ փոխանորդաց և զօ-
րապետաց՝ յարձակել միանգամայն յայլ և այլ կողմանց
'ի թշնամիս. ազդ արար և Անտիոքոսի արքայի դիմել
'ի մերձակայ սահմանս: Քանզի Փարսմանայ սպա-
նեալ զորդի իւր զՀռամիզդ՝ որպէս դաւաճան, 'ի ցոյց
հաւատարմութեան իւրոյ առ մեզ՝ յառաջին թշնա-
մութիւնն ընդդէմ Հայոց պնդագոյնս դառնայր: Եւ
Ինսիքացիք, երիցագոյնք 'ի դաշնակիցս հռովմայեցւոց,
յայնժամ նախ կոչեցեալք 'ի նոցանէ յօգնականու-
թիւն, խաղային գային ընդ լերինս ափափայս հայաս-
տան աշխարհի: Վասն որոյ Տիրիթ յեղաշրջեալ 'ի խոր-
հրդոցն, յղեաց պատգամաւորս՝ հարցանել 'ի դիմաց
իւրոց և Պարթևաց, թէ ընդէ՞ր յետ այն ինչ տալոյ
նորա պատանդս և նորոգելոյ զբարեկամութիւն ընդ
հռովմայեցիս, որովք առաւելագոյն բարերարութեան
արժանի գտանէր, մերժէին զնա 'ի վաղ իսկ ժառան-
գութենէ Հայաստանի, և յաւելոյր. Վասն այն Վոլո-
գէս չև ևս շարժի, զի հաճեսջիք գործել իրաւամբք
քան բռնութեամբ. իսկ եթէ ոչ լռեցուցանիցէք զզ-
պատերազմ, ոչ պակասեն արշակունեաց՝ ոչ քաջու-
թիւն և ոչ յաջողութիւն, ցուցեալ բազում անգամ
տուժիւք հռովմայեցւոց: — Կորբուլոնի գիտելով՝ զի
Վոլոգէս պատաղեալ էր ընդդէմ Վրկանաց վտարան-
ջելոց, հաւանեցոյց զՏիրիթ՝ աղերսել զինքնակալն. զի
մարթ էր նմա ամրացուցանել զիշխանութիւն իւր ա-
ռանց արեան, եթէ 'ի բաց եդեալ զյոյս հեռաւոր և
տարաժամ, խնդրէր զապահովագոյնն և զառձեռն
պատրաստ:

ԼԸ. Եւ քանզի չէր մարթ յաջողել խաղաղութեան
'ի ձեռն հրեշտակաց, հաճոյ թուեցաւ ժամ և տեղի
սահմանել երկոցունց զօրավարացն բանակցելոյ: Տի-
րիթ կամէր ածել ընդ իւր հեծեալս հազար, և ոչ
սահմանէր Կորբուլոնի թիւ հեծելոց և հետևակաց՝
որչափ և կամք էին ածելոյ, բայց միայն զի անզրահք
և անսաղաւարտք գայցեն իբրև 'ի խաղաղութեան:
Ամենայն ումեք 'ի միտ առնուլ էր զբարբարոսին նեն-
գութիւն, թող թէ հինաւուրց և փորձ զօրավարին:

Անտի հեծելազն սակաւաւոր, և աստի զօր բազում, մատն լինէին խաբէութեանն. զի առ ինչ օգնէր բազմութիւն, եթէ անզէն անպատսպար նշաւակ կայր քաջաղեղն հեծելազին։ Բայց Կորբուլոն իբր թէ ոչ իմացեալ զդաւն, ետ պատասխանի՝ զի արժան էր յանդիման երկոցունցն և բանակաց խօսել զիրաց՝ որ հասարակաց էին յօգուտ։ Եւ ընտրեաց տեղի՝ որ ուրեք բլրաձև սարահարթ ամբառնայր, քաջաղէպ ռազմից հետևակաց, և այլ ուրեք դաշտաձև տարածանէր՝ 'ի խաղացումն հեծելազօրուն։ Ի ժամադրեալ աւուրն կանխեալ Կորբուլոնի՝ զնիզակակից և զօժանդակ գունդս 'ի թևս կարգեաց, և կացոյց 'ի միջի զվեցերորդ լեգէոնն. յոր յաւել երեք հազար այր յերրորդ լեգէոնէն, գիշերախառն կոչեցեալ զնոսա ընդ նովին արծուէդրօշիւ՝ զմիոյ ևեթ լեգէոնի բերել զտեսիլ։ Իսկ Տիրիթ 'ի խոնարհել աւուրն հասեալ՝ զկայ էառ 'ի բացեայ, որպէս զի տեսանել զինքն քան լսել կարասցեն։ Զօրավարն հռովմայեցի հրամայեաց իւրոցն՝ մեկնել գնալ յիւրաքանչիւր պատնէշս։

ԼԹ. Բայց թագաւորն նենգ ինչ կասկածեալ 'ի դիմեցմանէ զօրացն մերոց 'ի բազում այլ և այլ տեղիս, և կամ առ 'ի խափանել զհամբարս՝ որ գային առ մեզ յեւքսինեանն պոնտոսէ և 'ի Տրապիզոնէ, վաղվաղակի մեկնեցաւ 'ի բաց, այլ ոչ կարաց զպաշարս մեր արգելուլ, զի ածէին ընդ լերինս՝ ուր 'ի պահ կային զօրք մեր։ Կորբուլոնի ոչ կամելով երկարաձգել ընդ վայր զպատերազմն, և առ 'ի ստիպել զՀայս 'ի պաշտպանութիւն իւրեանց, խորհեցաւ աւերել զամուրս նոցա. և զհզօրագոյնն յայնցանէ 'ի կուսակալութեան անդ զՎղլանդ անձին պահեալ, զայլսն տկարագոյնս եթող Կուռնելեայ Փլակկոսի փոխանորդի, և Ինստէոսի Կապիտոնի վերակացուի բանակին։ Եւ այց արարեալ ամրոցաց, և պատրաստեալ զամենայն կարևորս 'ի յարձակումն, խրախուսեաց զզօրսն և ասէ. Վանեսցուք զթշնամին վարատական, որ փախստեամբն իւրով խոստովանի զհաւատադրժութիւն իւր և զվատութիւն, ոչ 'ի խաղաղութիւն պատրաստ, և ոչ 'ի պատերազմ։ և ժառանգեսցուք զառ և զապուռ և զփառս։ Եւ ապա բաժանեալ զզօրս իւր 'ի չորս, զկէսս խաղա-

ցոյց ընդ ասպարափակ հովանեաւ 'ի քանդումն ամ-
բոցին. այլոց հրաման ետ սանդուղս 'ի պարիսպս անդր
մատուցանել, և բազմաց այլոց ջահիւք և գեղար-
դեամբք խուճապել զթշնամիս. և այնոցիկ՝ որ վիրդս և
գունտս կապարեայս 'ի հեռուստ ձգէին, սահմանեաց
զկայս. որպէս զի մի՛ ուրեք կարասցէ թշնամին հասա-
նել յօգնութիւն, ամենուստ ահիւ տագնապեալ։ Եւ
էր եռանդն այնպիսի պատերազմիկ բանակին, զի յերիր
մասին աւուր լքան պարիսպք 'ի վերամարտկաց, դրունք
կործանեցան, առան ամուրք՝ վերելակեալ զօրացն
սանդղովք, և արքունք առ հասարակ եղեն սրախող-
խող, ոչ ուրուք անկեալ 'ի զօրականէն մերմէ, և սա-
կաւուց իսկ ոմանց վիրաւորեալ։ Ապիկարքն 'ի զէն՝ ա-
ծան 'ի վաճառ, և աւարն ամենայն թողաւ զօրակա-
նին։ Ցնոյն յաղթութիւն կալան և փոխանորդն և վե-
րակացու բանակին. և 'ի նուաճել երեցունց ամրոցացն
'ի միում աւուր՝ այլք առ ահի, և կէսք յօժարու-
թեամբ բնակչացն եղեն անձնատուր։ Յայնժամ Կոր-
բուլոն վստահաբար դիմեաց 'ի մայրաքաղաք անդր
նոցա Արտաշատ. ոչ դէպ ուղիղ զլեգէոնսն անդր խա-
ղացուցեալ՝ զի մի՛ նշաւակ հարուածոց թշնամեացն
կացցեն յանցանել ընդ կամուրջս զերասխ գետով՝ որ
զպարիսպս քաղաքին թանայ, այլ 'ի բացէ ընդ հուն
ընդարձակ անցուցեալ զնոսա։

Խ. Բայց Տիրիթ վարանեալ կայր ընդ ամօթ և ընդ
երկիւղ, զի 'ի թողուլն պաշարել զքաղաքն՝ զտկարու-
թիւն իւր յայտ առնէր, իսկ 'ի կամելն զդէմ ունել՝
անկանէր հանդերձ հեծելովքն յանգնալի վայրս.
վասն որոյ խորհեցաւ ճակատ յարդարել, և մնալ այ-
գուն առ 'ի սկիզբն մարտին, կամ կեղծեօք փախըս-
տեան դաւ գործել։ Ապա յանկարծ շուրջ պատեաց
զբանակն հռովմէական, այլ ոչ յանդէտս մերոյ զօրա-
վարին՝ որոյ պատրաստեալ էր զզօրս 'ի չու և 'ի պատե-
րազմ։ Յաջմէ կողմանէ լեգէոնն երրորդ, յահեկէ վե-
ցերորդն, և 'ի միջի ընտիրք տասներորդին յառաջ խա-
ղային, զաղխս բանակին ընդ ռազմն զօրաց կարգեալ.
և հազար այրուձի կային վերջապահ, որոց պատուէր
ընկալեալ էր զդէմ ունել յարձակմանց, և մի՛ զհետ
մտանել փախստէից։ Երկուստեք 'ի թևս յառաջ խա-

զային հետևակազօրն և աղեղնաւորք, և այլ հեծելագունդն. երկայնագոյնս առ ստորոտովք բլրոց ձգէր ձախոյ թևն, զի 'ի յարձակել բանակի թշնամւոյն՝ 'ի դիմաց և 'ի կողից հարցի միանգամայն։ Իսկ Տիրիթ նեղէր զմեզ 'ի բացէ, և ոչ 'ի նետընկէց մի յառաջ մատուցեալ, մերթ սպառնալիս և մերթ երկիւղ կեղծաւորելով՝ 'ի յոյս քակտելոյ զկազմութիւն զօրաց մերոց, և 'ի վերայ միոյ միոյ 'ի գնդից յարձակելոյ. այլ ոչ ինչ խիզախմամբն իւրով կարաց ստնանել, բայց միայն մի 'ի տամնապետաց հեծելազին յանդգնագոյն յառաջ խաղացեալ՝ անկաւ նետահար. և մահ նորա եղև այլոց 'ի խրատ՝ հաստատուն զիւրաքանչիւր կայս ունելոյ, մինչև նսեմաւ երեկոյին մեկնեցաւ թշնամին 'ի բաց։

ԽԱ. Կորբուլոն 'ի նմին տեղւոջ հարեալ բանակ՝ խորհէր գիշերային խաղացուցանել զլեգէոնս 'ի վերայ Ա.րտաշատայ, թողեալ զաղխս 'ի բանակին, և պաշարել զքաղաքն. բայց երկմտէր թէ գուցէ ամրացեալ կայցէ անդ Տիրիթ։ Ա.յլ 'ի ձեռն լրտեսաց իրազեկ լեալ՝ զի մեկնեալ էր նա 'ի բաց, ոչ ուրուք գիտելով 'ի ՄաՀրս թէ յԱ.ղուանս, մնայր այգուն լինելոյ. և խաղացոյց յառաջոյ զմեկնակազէն գունդս, հրամայեալ շուրջ պատել զպարսպօքն, և 'ի հեռուստ նախաձեռն առնել մարտի։ Բայց քաղաքացիք բացին կամակար զդրունս, և անձնատուր եղեն իւրեանցայովքն 'ի հռովմայեցիս. կեցին անձինք նոցա, այլ քաղաքն 'ի հուր դատեալ՝ կործանեցաւ հիմնայատակ. զի չէր մերթ պահել զայն առանց հզօր գնդի պահապանաց վասն ընդարձակութեան պարսպացն, և չէին մեզ զօրք բաւական 'ի պահ քաղաքին և 'ի պատերազմ։ Իսկ 'ի թողուլն զայն կանգուն և անպահապան՝ կորուսանէին և զփառս և զօգուտ առման քաղաքին։ Ա.ւանդեն և երկնից յայտնեալ նշանօք զկամս իւր, զի լոյս արփիափայլ փարեր շուրջ զքաղաքաւն և գեր 'ի վերոյ տանեաց։ Իսկ քաղաքն պարսպօք չափ ծածկէր ամպապատ, և 'ի մռայլ ամպրոպաց խաղային շանթիք որպէս թէ 'ի դիցն ցասմանէ՝ 'ի կորուստ ցուցանելով մատնեալ զքաղաքն։ Վասն այսր յաղթութեան Ներոն ողջունեցաւ ինքնակալ, և վճռով ծերակուտին սահմա-

նեցան գոհութիւնք դից, և նմա անդրիք և յաղթա-
կան կամարք, և կալ ինալ՝ի սպառ՝ի բդեշխութեան։
Եւ՝ի տօնս տարեկանս կարգեցան՝ որ օր կանգնեցաւ
յաղթութիւն, որ օր ծանուցաւ՝ի Հռովմ, և որ օր
աւետեցաւ ծերակուտին, և այլ ևս սոցին սակի պա-
տիւք առաւելագանգք. որպէս զի Կ. Կասիոս՝ի տալ
առաջնոցն հաւանութիւն՝ յաւել, զի եթէ ըստ բա-
ղերարութեան բաղդին գոհութիւնս պարտ էր մա-
տուցանել դից, ամն՝ի բուն ոչ բաւէր՝ի պաղատանս.
վասն որոյ արժան էր զարգոյ աւուրս խտրել՝ի սրբա-
զանից, և պաշտել զաստուածայինս՝ առանց զմարդկա-
յինս խափանելոյ։

Խբ. Պ. Սուիլիոս ընդ բազում վտանգս անցեալ, և
զբազմաց յինքն ձգեալ զատելութիւն, յետոյ ապա դա-
տապարտեցաւ՝ ոչ առանց ատելի առնելոյ և զՍենեկա։
Սա այր զոշաքաղ, յաւուրս Կլաւդեայ Ճարտարխօսու-
թեամբն իւրով եղեալ ահարկու, կործանեցաւ ապա
յեղափոխութեամբ ժամանակին թէպէտ և ոչ որչափ
ցանկային թշնամիք նորա։ Ընտրեաց նա երևել պար-
տաւոր քան աղերսաւոր։ Առ՝ի կորուստ նորա ասի
խնդրեալ վՃիռ ծերակուտին՝ի հաստատութիւն պա-
տուհասի կինկեան օրինաց ընդդէմ այնոցիկ՝ որ շա-
հավաՃառ առնէին զպաշտպանութիւն դատից. զի
այս ևեթ շատ համարէր՝ի դատապարտութիւն նո-
րին։ Իսկ նա ոչ՝ի բողոք խնայէր և ոչ՝ի թշնամանս.
վայրենի ըստ բարուցն և ազատ համարձակ վասն զա-
ռամութեանն, կշտամբէր զՍենեկա, և ասէր. Այրդ
այդ թշնամի է բարեկամաց Կլաւդեայ, յորմէ արդա-
րապէս աքսորեցաւ. այրդ այդ անձնատուր յանգործ
մակացութիւնս և սովորեալ ընդ տխմար մանկտին, նա-
խանձի ընդ այնոսիկ՝ որ պարապին ժիր և անեղծ Ճար-
տարխօսութեան՝ի պաշտպանութիւն քաղաքացեաց։
Մինչ ես դանձապետ Գերմանիկեայ էի, հրապուրէր
դա զդուստր նորա՝ի շնութիւն. արդ ծանրագոյն հա-
մարիցիք ոՃիր՝ ընդունել՝ի դատափետելոյ պարգև կա-
մակար ընդ օրինաւոր սպասաւորութեան, քան ապա-
կանել զառագաստ արքայազին. զինչ իմաստութիւն
ի՞նչ, և որպիսի՞ վարժք իմաստասիրութեան՝ի քա-
ռեամ ժամանակի մթերել երեսուն բիւր սեստերաս.

վկայեն կտակք 'ի Հռովմ հետաղօտեալք 'ի նմանէ, որք զրկեալք, և Իտալիա և գաւառք ամբաւ տոկոսեօք սպառեալք։ Իսկ իմ ընդ տաժանաւոր աշխատութեան դոյզն ինչ ընկալեալ շահ, յանձն առնում մտադիր զդատափետութիւն և զվտանգ և զամենայն ինչ, քան թէ զվաղեմի և ընդ երկար վաստակօք ստացեալ պատիւ՝ ներքոյ արկանել վաղանցուկ երջանկութեան։—

ԽԳ. Ոչ պակասեցին՝ որ զայսոսիկ նոյն նորին բանիւք և կուտակութեամբ պատմեցին Սենեկայ։ Ոմանք ևս ամբաստան եղեն զՍուիլեայ՝ իբր թէ հարըստահարեալ էր նորա զազգս դաշնաւորս 'ի կուսակալել իւրում յԱսիա, և խորեալ 'ի գանձուց հասարակաց։ Ընկալան նոքա զամ մի վասն ածելոյ հաւաստիս զամբաստանութեանցն. այլ ապա համառօտ ևս թուեցաւ նոցա ցուցանել նախ զյանցանսն գործեցեալս 'ի նմանէ 'ի Հռովմ, որոց առ ձեռն պատրաստ կային վկայք։ Սոքա պնդագոյն ևս չարախօսէին զնմանէ՝ զկ. Պոմպոնիոս հարկաւորեալ ամբաստանութեամբքն 'ի մարտ քաղաքական, զՅուլիա դուստր Դրուսոսի և զԱբինա Պոպպէ ստիպեալ 'ի մահ կամակար, զՎալերիոս Ասիացի, զԼուսիոս Սատուրնինոս և զԿուռնելիոս Լուպոս չարարուեստ հնարիւք մատնեալ 'ի կորուստ, զգունդս ասպետաց հռովմայեցւոց դատապարտեալ, և ամենայն անգթութեանցն Կլաւդեայ եղեալ պատճառ։ Իսկ նա պատասխանի տայր՝ ոչ ինչ յանձնէ արարեալ, այլ զամենայն 'ի հրամանէ ինքնակալին. բայց Ներոն կարկեցոյց զնա, ասելով. Զիք ուրեք հօր իմոյ հրամայեալ քեզ չարախօսել, և հաւաստիք իրացն կան 'ի յիշատակագիրս նորա։ Յայնժամ Սուիլիոս զհրամանս Մեսսալինայ 'ի մէջ էած, այլ ոչ զօրէր այն 'ի պաշտպանութիւն իւր. զի ընդէ՞ր ինքն և ոչ այլ ոք ընտրեալ էր 'ի պատասխանատրութիւն ջատուկ կնոջն մոլեգնութեանց. պարտ էր պատուհասել զարբանեակս անողորմ հրամանացն, որք զվարձս եղէրանցն ընկալեալ՝ յայլս զեղերունսն հանէին։ Վասն որոյ զկէս ընչից իւրոց կորուսեալ, զի միւս կէսն թողաւ որդւոյ նորա և թոռին՝ հանդերձ հրիտակաւ մօր նոցա և հանոյ, աքսորեցաւ 'ի բալէարեան կղզիս. այլ ոչ յա-

տենի անդ և ոչ՝ի դատապարտն լինել բեկաւ գոռ-
զութիւն նորա. և աւանդեն՝ զեղխ և մեղկ կենաց
սիրեալ նորա զաքսորանս իւր։ Յարձակեցան չարա-
խօսք և յորդի նորա Ներուլինոս առ ատելութեան հօր
նորա, ամբաստանել զնա՝ի յանցանս հարստահա-
րութեան. այլ լռեցոյց զնոսա ինքնակալն համարելով
լցեալ բաւականապէս զվրէժխնդրութիւն։

Խդ. Զայնու ժամանակաւ Ոկտաւիոս Սագիտտա,
հազարապետ ժողովրդեան, հարեալ սաստկապէս՝ի
սէր կնոջ ուրուք արամբաւոյ՝ որոյ անուն էր Պոնտիա,
հրապուրեաց զնա մեծամեծ պարգևօք՝ի շնութիւն.
և ապա առ՝ի մեկնել զնա յառնէն՝ խոստացաւ առ-
նուլ զնա իւր՝ի կնութիւն։ Բայց Պոնտիա, թէպէտ և
թողեալ զայր իւր, այլ յերկարաձգէր լինել նմա
կնութեան՝ զդժկամակութիւն հօրն պատճառելով,
մինչև գտեալ փարթամագոյն հարսանիս՝ դրժեաց
խոստմանն։ Իսկ Ոկտաւիոս մերթ բողոք կալեալ, և
մերթ սպառնացեալ վասն կորստեան համբաւոյ իւրոյ
և յընչիցն անկանելոյ, զկեանս ևս՝ որ միայն մնայր
իւր՝ նուիրէր նմա. և մերժեալ՝ի նմանէ՝ի սպառ,
գիշեր մի ևեթ խնդրեաց՝ի նմանէ, որպէս թէ՝ի յա-
գուրդ ցանկութեանն, և այնուհետև ժուժկալելոյ։
Սահմանեցաւ գիշերն, և կացոյց Պոնտիա՝ի պահ սե-
նեկին զաղախին իւր մտերիմ։ Ոկտաւիոս ընդ միում
՝ի ձերբազատից իւրոց հասեալ՝ եմուտ՝ի ներքս, սու-
սեր ընդ ձորձովք ծածկեալ։ Ի սկզբան անդ, որպէս
յաձախ ընդ հոմանիս գժտեալս պատահէ, վէճ և
աղերս, կշտամբանք և հաշտութիւն. և ապա զմանն
գիշերոյ՝ի յագեցումն ախտին անցուցեալ, բրդի յան-
կարծ Ոկտաւիոս՝ի ցասումն. և յանկասկածից Պոն-
տիայ՝ զսուր՝ի սիրտ նորա մխէ, և զաղախինն անդր
՝ի ներքս դիմեալ՝ հարեալ կարեվէր վանէ՝ի բաց, և
խոյս տայ՝ի սենեկէ անտի։ Ի վաղիւ անդր՝ի յայտ
եկն սպանութիւնն, և սպանօղն աներկբայելի, զի էր
հաւաստի գիշերել նորա ընդ Պոնտիայ. բայց ձերբա-
զատ նորա յանձն է առ զոճիրն, որպէս թէ զվրէժ
նախատանաց տեառն իւրոյ խնդրեալ։ Խոստովանու-
թիւնն արիական համոզէր զկէս, բայց աղախինն
կաղդուրեալ՝ի վերայ՝ի վեր ելհան զձշմարտութիւն։

Ոկտաւիոս 'ի հօրէ սպանելոյն դատախազէալ, դատա-
կնքով ծերակուտին՝ ըստ օրինաց սահմանելոց ընդ-
դէմ սպանողաց՝ դատապարտեցաւ։

ԽԵ. Ի սմին ամի լկտութիւն իմն, ոչ ինչ նուազ
հռչակաւոր, պատճառս ետ աղետից չարեաց հասա-
րակապետութեան։ Էր 'ի Հռովմ Պոպպէ դուստր
Տ. Ուլլիոսի, որ կոչէրն Սաբինա՝ յանուն մայրենի հա-
ւոյն իւրոյ՝ ականաւորին Պոպպէոսի Սաբինեայ, որ
բդեշխութեամբն և շքով յաղթանակի գերահամբա-
ւեալ էր։ Ուլլիոս չև հասեալ 'ի բարձ աւագութեան,
վասն բարեկամութեան իւրոյ ընդ Սէանու՝ մատնե-
ցաւ 'ի մահ։ Պոպպէի էին ամենայն բարեմասնու-
թիւնք, բաց 'ի բարութենէ սրտի. 'ի մօրէ իւրմէ, որ
գերազանցէրն գեղով քան զամենայն կանայս ժամա-
նակին, ընկալեալ էր զգեղեցկութիւն ընդ փառս. մե-
ծութիւնք համեմատ պայծառութեան տոհմին. խօսք
նորա վայելուչ, և հանճար՝ ոչ անհաճոյ. վեր'ի վերոյ
պարկեշտութեամբ զվաւաշոտ բարս իւր ծածկէր.
դուն ուրեք երևէր արտաքոյ, և սքողեալ միշտ զկէս
դիմացն՝ առ 'ի վայելչագոյն ևս երևել, և զշոտել
զաչս տեսողաց։ Ոչ խնայէր նա երբէք 'ի համբաւ իւր,
և ոչ խտրէր ընդ ամուսին և ընդ հոմանի. ոչ իւրումն
և ոչ սիրոյ այլոց զանձն ներքոյ արկանէր, զի ուստի
օգտի իմիք ակն ունէր՝ անդր զսէր իւրյեղաշրջէր։ Վասն
որոյ Հռուփոսի Կրիսպինեայ ասպետի հռովմայեցւոյ
եղեալ կնութեան, և ծնեալ 'ի նմանէ որդի, հարաւ
ապա 'ի սէր Ոթոնի վասն մանկութեան նորա և պեր-
ճութեան, և վասն համբաւոյ նորա ունելոյ շնորհս
առ Ներոնի, և սիրելի գոլոյ նմա. շնութեանն ընդ
հուպ յաջորդեցին հարսանիք։

ԽԶ. Եւ ոչ դադարէր Ոթոն 'ի գովելոյ առաջի Նե-
րոնի զգեղ և զշնորհս կնոջն անզգոյշ սիրով, կամ առ
'ի բորբոքել զսիրտ նորա, որպէս զի յառնուլ զնա ինք-
նակալին կնութեան՝ յաւելցի զոդիւն այնուիկ զօրու-
թիւն իւր։ Ի յառնել յընթրեաց ինքնակալին՝ սովոր
էր ասել. Գնամ առ ազնիւն իմ, առ գեղանին, առ
ցանկալին ամենեցուն, առ բերկրութիւնն բարեբաղ-
դից։ Ասյոցիկ և այսպիսի հրապուրանաց ոչ յամե-
ցին արգասիք. Պոպպէ ածաւ յարքունիս, և քնքշա-

նոք և արուեստիւք զօրացեալ՝ կեղծաւորէր տարփանս անմուաՀելի 'ի գեղ ինքնակալին։ Եւ իբրև ետես վառեալ զնա 'ի սէր իւր, էառ գոռոզանալ՝ յայտ առնելով՝ զի էր ինքն ամուսնացեալ, և եթէ կամք էին ինքնակալին աւելի քան զմի կամ զերկուս գիշերս ունել զնա առ իւր, չկարել ասէր հրաժարել յառնէ իւրմէ, անձկալի կենոք զոդեալ ընդ Ոթոնի՝ որում ոչ ոք հաւասարէր, մեծանձին և առատի, առ որում էր վայելել յարքունական պերճութիւն։ Եւ յաւելոյր՝ զի Ներոն կապեալ սիրով ընդ Ակտեայ ջատուկ ստրկի, անմեկնելի 'ի նմանէ, ոչ այլ ինչ 'ի ծառայական բնակացութենէն ձգէր յանձն՝ բայց նուաստութիւն և անարգանս։ Մերժեցաւ Ոթոն՝ նախ 'ի մտերմութենէ ինքնակալին, և ապա յարքունեաց և 'ի սպասաւորութենէ. և զի մի կացցէ նմա ոսոխ նախանձընդդէմ 'ի քաղաքին, առաքեցաւ կուսակալ 'ի Լուսիտանիա՝ ուր եկաց մինչև 'ի քաղաքական պատերազմն, ոչ որպէս յառաջն անուանարկ՝ այլ պատշաճ և անբստգիւտ կենոք. և որ անսանձելին էր յանգործութեան, զգուշագոյն գտաւ յաւագութեան։

Իսկ. Ոչ ևս այնուհետև հնարէր Ներոն պատրուակել զոՀիր իւր և զիսոհերս. բայց մեծապէս կասկածէր զԿուռնելեայ Սիլլայէ, որոյ յուլութիւն և անհոգութիւն թուէին նմա ընդ հակառակն խորամանկութիւն և կեղծիք։ Գրապտոս, մի 'ի ձերբազատից ինքնակալին, ծերացեալ յարքունիս անդստին յաւուրց Տիբերի և փորձ, յաւել զկասկած նորա ստութեամբս այսուիկ։ Կամուրջն միլուեան էր յայնժամ տեղի հուչակաւոր գիշերային հրապուրանաց, և յաՀախէր Ներոն անդր՝ համարձակագոյնս զեղխիլ արտաքոյ քաղաքին. անդ Գրապտոս ստայօդէր դարան եդեալ ինքնակալին 'ի փլամինեան ուղղոջ, դաւել զնա 'ի միում աւուրց 'ի դարձի նորա, և ըստ բախտի պատահեալ նմա զերծանել անտի, դարձ առնելով 'ի նմին աւուր ընդ այլ Ճանապարհ ընդ սալլուստեան բուրաստանս. և առաջնորդ դաւոյն ասէր զՍիլլա։ Սպասաւորք ինքնակալին՝ 'ի դառնալն իւրեանց՝ հանդիպեալ էին ոմանց ղբք ըստ Համարձակութեան մանկտոյ ժամանակին՝

երկեցուցանէին զանցաւորս ընդ խաղ։ Բայց Թէպէտ և ոչ ոք 'ի ծառայիցն Սիլլայ, և ոչ 'ի բարեկամաց էր ընդ նոսա, զի և խորշէր իսկ Սիլլա անարի բնաւորութեամբն յեղեռանէ, սակայն որպէս պարտաւորելոյ հրամայեցաւ նմա մեկնել 'ի հայրենեաց՝ աքսորեալ 'ի Մասսիլիա։

ԽԸ. Առ նովին ըդեշխիւք ընկալեալ եղէն 'ի լուր պատգամաւորք, զորս աւագանին և ժողովուրդ Պուտէոլայ ուրոյն ուրոյն առաքեալ էին առ ծերակոյտն հռովմայեցւոց։ Աւագանին բողոք ունէր զբռնութեանց ռամկին, և ժողովուրդն զզօշաքաղութենէ աւագանւոյն և զիշխանաց. և զի զայրացեալ էր խռովութիւնն մինչև 'ի քարաձգութիւն և 'ի սպառնալիս հրձգութեան, և պատրաստէին 'ի զ'ն և 'ի նախճիրս արեան, ընտրեցաւ Կ. Կասիոս գնալ ցածուցանել զաղմուկն. այլ 'ի չհանդուրժել ռամկին խստութեանն Կասիոսի, ըստ աղերսանաց նորա յանձնեցան իրքն 'ի Սկրիբոնեան եղբարս, տուեալ 'ի ձեռս նոցա զմի յատենական գնդաց. ահարկութիւն նոցա և պատուհաս ոմանց դարձուցին 'ի Պուտէոլ զխաղաղութիւն։

ԽԹ. Հարևանցի առնեմ յիշատակ զմնոտի վճռոյ ծերակուտին, որով ներէր սիրակուսացւոց յաւելուլ զսահմանեալ թիւ սուսերամարտկաց. Պետոս Թրասէաս հակառակ կացեալ այնմ, ետ պատճառս չարախօսաց եպերելոյ զկարծիս նորա։ Զի եթէ կարևոր համարէր, ասէին, հասարակապետութեան զազատութիւն ծերակուտին, ընդէ՞ր զդուշնաքէից յարուցանէ վէճ. ընդէ՞ր զխաղաղութենէ և զպատերազմէ, զհարկաց և զօրինաց, և որ ինչ զհաստատութիւն հասարակապետութեան տնօրինեն՝ ոչ ճառէ։ Իրաւունք են ատենակալաց ծերակուտին, ըստ կարգի իւրեանց խօսելոյ զոր կամին, և խնդրել զքննութիւն առաջարկութեան իւրեանց. մի՛թէ խնայութիւն ևեթ ծախուց տեսարանացն սիրակուսացւոց ի՞նչ արժանի բարեկարգութեան, իսկ այլ ամենայն մասունք ինքնակալութեան ի՞նչ բարեկարգ, որպէս թէ ոչ Ներոնի՝ այլ Թրասեայ զայնոսիկ յանձանձելով. եթէ զկարևորքն զանց առնէ լռութեամբ, ո՞րչափ ևս առաւել պարտ էր նմա լռել զմնոտւոց։ — Յայնժամ Թրասէաս

առ բարեկամն իւր, որք ինդրէին 'ի նմանէ պատաս-
խանի, ասէ. Ոչ անտեղեակ առաջնակայիցս պիտոյից՝
հակառակ կամ վնասոյն, այլ առ 'ի պահել զպատիւ
ծերակուտին, յայտ արարեալ՝ զի որք դուշնաքէից ևս
միտ դնեն, ոչ անտես արասցեն զմեծամեծս։ —

Ծ. Ի նմին ամի վասն յոգնաթախանձ բողոքոյ ժո-
ղովրդեան զբռնութենէ մաքսապետաց՝ խորհեցաւ
Ներսն բառնալ 'ի սպառ զմաքս, պարգև ցանկալի ազ-
գի մարդկան շնորհելով։ Բայց ծերակոյտն գովեալ
մեծապէս զառատասրտութիւն նորա՝ զդէմ կալաւ
խորհրդոյն, ցուցանելով զի 'ի վտանգ անկանէր ինքնա-
կալութիւնն 'ի նուազել հասից՝ որ հաստատուն ու-
նէին զայն։ Զի 'ի բառնալ մաքսից, զհետ գայր և բար-
ձումն հարկաց նոյնպէս վասն թախանձանաց. և դար-
ձեալ զի յոլովք 'ի մաքսից սահմանեալ էին 'ի բդեշխից
և 'ի հազարապետաց ժողովրդեան, մինչ դեռ ազա-
տութիւն հռովմէական յաստիս զօրութեանն էր, և
ապա այնպէս տնօրինեալ, զի մուտք հաւասարեսցեն
ելից։ Պարտ էր զզօշաքաղութիւն մաքսապետացն
սանձահարել, զի մի զտուրս՝ յայսքանեաց ամաց հե-
տէ անտրտունջ հատուցեալս՝ ատելի արասցեն հարըս-
տահարութեամբք։

ԾԱ. Եւ հրովարտակ արար ինքնակալն, զի օրէնք
որոց և իցէ տրոց՝ մինչև ցայնժամ 'ի ծածուկ կալեալք՝
հրատարակեսցին, և տուրք անպահանջ մնացեալք՝ մի
ևս յետ տարւոյ պահանջեսցին. զի 'ի Հռովմ ատենա-
կալք, և 'ի գաւառս փոխանորդք կուսակալաց և բդեշ-
խից, դատեսցին ըստ ոչ սովորութեան զմաքսապետս.
զի ազատ 'ի մաքսից լիցին զինուորք, բաց յայնցանէ՝ որ
պարապեն վաճառականութեան. և այլ բազում ար-
դար օրինադրութիւնք՝ որ սուղ ինչ ժամանակ պա-
հեալ, և ապա խափանեցան։ Բայց յարատևէ բար-
ձումն քառասնորդ և յիսնորդ բաժից, և որ այլ ինչ
գիւտք զօշաքաղութեան հնարեալք 'ի մաքսապետաց։
Նուազեաց և մաքս ածելոյ ցորեան 'ի գաւառաց՝ որ
յայնկոյս ծովու, և սահմանեցաւ ազատ 'ի համարա-
կալութենէ կացուցանել և ապահարկ զնաւս վաճա-
ռականաց ցորենոյ։

ԾԲ. Զ Ասուլլիկիոս Կամերինոս և զ Ռամպոնիոս Սի-

լուանոս պարտաւորեալս, որք փոխանակ բդեշխի կա-
ցեալ էին յԱփրիկէ, անպարտս արձակեաց Ներոն։
Կամերինեայ դատախազք էին նուազունք ոմանք սոս-
կականք, որ ամբաստանէին զնա 'ի խստապահանջու-
թիւն քան 'ի հարստահարութիւն։ Սիլուանեայ բա-
զում յոյժ էին դատախազք, և խնդրէին ժամանակ
ածելոյ վկայս. այլ նա խնդրեաց տալ առ ժամայն ընդ
անձին պատասխանի. և վասն անժառանգ ծերու-
թեանն և փարթամութեան յաղթող գտեալ, յերկա-
րակեաց եղև քան զայնոսիկ՝ որք յուսով անյապաղ
մահու նորա զերծուցինն զնա։

ԾԳ. Մինչև ցայսվայր 'ի խաղաղութեան կայր Գեր-
մանիա՝ խոհականութեամբ զօրավարաց, որք 'ի յա-
ճախել շքոյ յաղթանակի՝ մեծագոյն պատուոյ ակն
ունէին յարատևութեամբ խաղաղութեան։ Զօրավա-
րէին յայնժամ բանակաց Պաւլինոս Պոմպէոս և Լ.
Վէտոս. և առ 'ի զգուշութիւն չյուլանալոյ զօրակա-
նին յանգործութեան՝ Պոմպէոս աշխատեցուցանէր
զիւրսն, ածել 'ի կատարումն զթումբն՝ վաթսուն և
երիւք ամաք յառաջ սկսեալ 'ի Դրուսոսէ առ 'ի նուա-
ճել զՀռենոս. և Վէտոս զիւրսն աշխատ առնէր՝ առ 'ի
կցորդել զՄոսելլա ընդ Սրարիս, առու 'ի միջի բանա-
լով, ընդ որ զօրականն՝ անցեալ ընդ ծոփն միջերկրա-
կան և եղեալ ընդ Հռոդանոս՝ կարասցէ մտանել ընդ
Մոսելլա 'ի Հռենոս, և անտի յՈվկիան։ Զի այսպէս
բառնայր դժուարութիւն չուոյ զօրականին, և կցոր-
դէր նաւարկութիւն զծովեղերս հիւսիսոյ ընդ արև-
մտից։ Նախանձեցաւ Ելիոս Գրակիլ՝ տեղակալ 'ի Բել-
գիա՝ ընդ փառս գործոյն, և շրջեաց զմիտս Վէտոսի՝
մի ածել զլեգէոնս 'ի գաւառս արտաքոյ իւրոյ իշխա-
նութեան, և մի ջանալ սիրելի լինել գալլիացւոց, զի
մի կասկածելի լիցի ինքնակալին։ Վտանգ, որ խափան
արկանէ յաճախս ջանից գովելեաց։

ԾԴ. Բայց 'ի յերկարել բանակաց 'ի խաղաղու-
թեան, լուր եղև՝ իբր թէ ոչ ևս էր իշխանութիւն
զօրավարաց ածելոյ զզօրս ընդդէմ թշնամեաց. վասն
որոյ փրիսացիք զմանկտին պատերազմիկ յառաջ մա-
տուցին 'ի գետեղերս ընդ անտառս և ընդ եղտիւրս,
և զհասակն ապիկար ընդ լեռն. և կալան զանդաստանս

անմարդիս, պահեալս 'ի պետս զօրականին, ըստ իրա-
տու Վերրիտոսի և Մալորիդեայ, որք իշխէին 'ի վե-
րայ ազգին՝ որչափ է իշխել 'ի վերայ գերմանացւոց։
Եւ իբրև այն ինչ կառուցին անդ տունս, սերմանեցին
զանդաստանս, և որպէս զերկիր Հայրենի մշակէին,
Դուբիոս Աւիտոս ընկալեալ յաջորդութեամբ 'ի Պաւ-
լինեայ զգաւառն, սպառնայր ածել 'ի վերայ նոցա
զզէնս հռովմայեցւոց՝ եթէ ոչ ամիոփէին յառաջին
սահմանս իւրեանց, կամ եթէ ոչ խնդրէին յինքնակա-
լէն վայրաբնակել անդ. հաւանեցոյց զՎերրիտոս և
զՄալորիքս դիմել յաղերս ինքնակալին։ Հասին նոքա
'ի Հռովմ. և մինչդեռ մնային յանդիման լինելոյ Նե-
րոնի, յամեալ վասն զբաղանաց նորա յայլ հոգս, ցու-
ցան նոցա հրաշակերտք քաղաքին, և մուծան 'ի տե-
սարան Պոմպէի՝ տեսանել անդ զմեծութիւն հռով-
մէական ժողովրդեան։ Եւ քանզի 'ի լուր թատերա-
խաղիցն ոչ զբօսնուին վասն տգիտութեանն, կային 'ի
զնին ակմբահոյլ շրջափակին, կարգացն զանազանու-
թեան, ուր ասպետացն էին կայք, և ուր ծերակոյտն
բազմէր։ Եւ տեսեալ 'ի կարգ ատենակալաց զոմանս 'ի
ձև այլազգի, հարցին թէ ոյք այնոքիկ էին. և գիտա-
ցեալ զի պատիւն այն շնորհէր հրեշտակաց ազգաց՝
որք արիութեամբ և հաւատարմութեամբ ընդ հռով-
մայեցիս առաւելուին, Եւ ոչ յազգաց հզօրագոյն զի-
նուք և հաւատարմագոյն քան զգերմանացիս ասելով՝
անցին բազմեցան ընդ ատենակալս ծերակուտին. զոր
տեսօղք մարդասիրաբար բարւոյ մասին վարկան, որ-
պէս վաղնջուց ժամանակաց համարձակութիւն և բա-
րենախանձ փառասիրութիւն։ Ներոն երկոցունցն ևս
զքաղաքակցութեան Հռովմայ շնորհեաց զպատիւ.
բայց փրիսացւոց հրամայեաց մեկնել 'ի բաց յանդաս-
տանաց անտի. և 'ի ստունդանել նոցա՝ արձակեաց
զՀեծելազօրն օժանդակ յեղակարծում, և հարկեցոյց
զնոսա 'ի հնազանդութիւն, հարեալ և դերեալ զյա-
մառեալս 'ի դիմամարտ։

ԾԷ. Զնոյն անդաստանս կալան ապա Անսիբարը,
ազգ հզօրագոյն բազմութեամբն և շրջակայ ազգաց
բարեկամութեամբ. զի հալածեալ 'ի քաւկացւոց և
կարօտք բնակութեան՝ խնդրէին նժդեհութիւն ան-

երկեան։ Բոյոկալ, այր երևելի 'ի մէջ ազգացն այնոցիկ և առ մեզ հաւատարիմ, պատսպարան եղև խընդրոյ նոցա, և ասէր. Ի վտարանջել Բերուսկաց՝ Աքմինիոս արկ զիս 'ի կապանս, զինուորեցայ ապա ընդ զօրավարութեամբ Տիբերի և Գերմանիկեայ. 'ի վերայ յիսնամեայ վաստակոց իմոց յաւելում արդ արկանել և զազգ իմ ընդ տերութեամբ ձերով։ Որչափ ինչ երկիր կարևոր ի ցէ յարօտ խաշանց և արջառոց 'ի պէտս զօրականին, թողցի նոցա՝ որպէս ամենայն ուրեք պահեն այլք 'ի բաժին արօտականաց, ևս և 'ի սովի. բայց միայն մի՛ լիցի նախամեծար առնել զանապատ լայնատարը և ամայի քան զժողովուրդ բարեկամ։ Քամաւաց երբեմն էր երկիրդ այդ. տուբացիք ապա կալան զայն, և ապա ուսիպացիք. որպէս երկինք դից, այսպէս և երկիր տուաւ մահկանացուաց. վայրք ամայիք հասարակաց են։ — Եւ ապա վերակնեալ յարեգակն, և ձայնարկեալ յաստեղս, գոգցես իմն բողոքէր՝ թէ ընդէ՞ր ծագէին յերկիր ամայի, և առ ծով՝ թէ առ ինչ ոչ ծածկէր զյափշտակողս երկրի։

ԾԶ. Ընդ որ դժկամակեալ Աւիտոսի՝ ասէ. Լաւագունացն տերութեան պարտ է ներքոյ անկանել, զի նոցին իսկ դից՝ որոց աղերս արկանէք՝ հաճոյ թուեցաւ կացուցանել տեարս զհռովմայեցիս, տալոյ և բառնալոյ ինքնահրաման։ — Զայսոսիկ առ Անսիբարս առ հասարակ պատասխանեալ, ապա ասէ առ Բոյոկալ. Սակայն վասն բարեկամութեան քո տացին քեզ անդաստանքն։ — Այլ նա չէաւ յանձն որպէս վարձս մատնութեան ընդունել զայն, և յաւել. Պակասեսցէ մեզ երկիր առ 'ի կեալ, այլ ոչ առ 'ի մեռանել։ — Եւ խոժոռեալ ընդ միմեանս մեկնեցան։ Անսիբարք կոչէին յօգնութիւն զԲրուկտերս զՏենկտերս և զազգս՝ ևս հեռաւորս. իսկ Աւիտոս գրեաց առ Կուրտիլիոս Մանկիաս զօրավար բանակի վերնակողմանցն Հռենոսի՝ անցանել ընդ գետն, և երևել յետկուսէ զօրաց. իսկ ինքն խաղացոյց զլեգէոնս յերկիր Տենկտերաց, սպառնացեալ նոցա աւեր և կոտորած՝ եթէ ոչ հրաժարէին 'ի նիզակակցութենէ Անսիբարաց։ Եւ 'ի նահանջել նոցա, նովին երկիւղիւ ահացոյց և զԲրուկտերս, և այլք ևս յետս կացին 'ի վտանգէն՝ զոր

վասն օտարի հասանէր նոցա կրել։ Յայնժամ Անսիբա-
րաց մեացեալ անօգնական, ընկրկեցան առ ուսիպացիս
և առ տուբացիս. և 'ի նոցանէ ևս մերժեալ, դիմեցին
առ Կատտիս և առ Բերուսկս՝ սահեալք նժդեհու-
թեամբ և կսրօտք, և թափառեալք ընդերկար 'ի
սահմանս թշնամեաց՝ ողբ զարբունս նոցա կոտորեցին,
և զհասակն ապիկար առեալ յաւարի՝ բաժանեցին
յիւրեանս։

ԾԼ. Ի նմին ամարայնի եղև պատերազմ սաստիկ
ընդ Երմենդուրս և ընդ Քատտիս վասն գետոյն՝ որ
բաժանէ զսահմանս նոցա, և բերէ աղ առատ։ Ի բնա-
կան վայրենութիւն նոցա զամենայն ինչ զինուք սահ-
մանելոյ՝ յաւելուին և նանրահաւատ կրօնք, զի համա-
րէին մերձաւորագոյնս երկնից զվայրն զայնոսիկ, և
զի ոչ ուստեք այնպէս 'ի մօտոյ աղօթք իւրեանց լսելի
լինէին դից. վասն որոյ 'ի գթութենէ նոցա ասէին
ընորհեալ գետոյն այնմիկ և գետեղերեայ անտառացն
բերել աղ, ոչ որպէս առ այլս յազգաց գոյացեալ յո-
ղողելոյ ալեաց զծովեզերս և 'ի ցամաքելոյ՝ այլ զմայ-
րեօք լուցելովք հեղեալ, և 'ի տարերց հակառակաց՝
'ի ջրոյ և 'ի հրոյ թանձրացեալ։ Յաջողեցաւ Երմենդու-
րաց պատերազմն, իսկ Քատտեաց եղև 'ի կորուստ. զի
յաղթողաց ուխտ եդեալէր նուիրել Արիսի և Հեր-
մեայ զբանակն ընդդիմամարտ, և ըստ այսմ՝ ուխտի՝
ձիանն և որեար և ամենայն ինչ պարտելոցն կորեաւ, և
սպառնալիք թշնամեաց 'ի գլուխս իւրեանց դարձան։
Բայց յոհինացւոց քաղաքին, նիզակակցայ մերոց,
հասին արկածք անակնկալ. զի հուր յերկրէ բղխեալ՝
արար այրեացաւեր զանդաստանս զհունձս և զշէնս՝
մինչև 'ի պարիսպս նորատունկ դաղթականին։ Եւ ոչ
ինչ կարէր զհրդեհն շիջուցանել, ոչ տեղատարափք
անձրևաց, ոչ հեղեղք գետոց, և ոչ այլ ինչ, մինչև շի-
նականաց ոմանց առ 'ի չգոյէ հնարից զայրացեալ՝ քա-
ղինս 'ի հուր անդր հոսէին. և 'ի ցածնուլ առ վայր մի
բոցոյն՝ մօտ մատուցեալ, 'ի հարուած ջնից և խարա-
զանաց՝ որպէս դաղան ինն վանէին զայն։ Բայց ապա
զցնցոտի դրդեակս իւրեանց արկին զհրոփն, ողբ ըստ
առաւելագոյն աղտեղութեանն՝ պատկանաւորագոյնք
էին խափուցանելոյ զհրդեհն։

ԾԸ. Ի ամին ամի՝ ծառն Հռոմինեան, այն որ ժողովեցաւ ընտրութեան ատենակալացն էր, և յառաջ քան զամն չորեքարիւր քառասուն, 'ի տղայութեան Հռոմոսի և Հռոմուլեայ՝ հովանի լեալ էր նոցա, ցամաքեցաւ՝ գօսացեալ ոստոց նորա և կոճեղն. և չարագոյժ համարեցաւ այն՝ մինչև ցընձիւղել նորա անդրէն։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Յունիոսի Սիլանեայ փոխանակի բդեշխին Ասիոյ սպանութիւն. և Նարկիսեայ երթալ զնա։

Բ. Սենեկայ և Բուրրոսի կալ դաստիարակ ինքնակալին։ Ճիգն նոցա ընդդէմ խստութեանն Ագրիպպինայ, և առաւելագոյն պատիւք մատուցեալք նմա։

Գ. Ներոնի Ճառ արձանական 'ի պատիւ Կլաւդեայ, գրեալ 'ի Սենեկայ։

Դ. Մուտ Ներոնի 'ի Ծերակոյտն, և յայտ առնել նորա ըստ որոց օրինաց առաջի կայր նմա վարել զիշխանութիւն. և խոստումն բառնալոյ զզեղծմունս։

Ե. Ծերակուտին սահմանել բարեկարգութիւնս ինչ։ Ագրիպպինայ առընթեր կալ ժողովոց՝ թաքուցեալ յետկոյս վարագուրի ծածուկ դրան։ Կամել նորա բազմել 'ի բեմի ընդ ինքնակալին՝ յընդունել նորա 'ի լուր զպատգամաւորս Հայոց, և Սենեկայի խափանել զայն Ճարտարութեամբ։

Զ. Դիմեցումն Պարթևաց 'ի Հայաստան։ Վէճք վասն նորոյ պատերազմիս։

Է. Ներոն թագաւորացուցանել զորս 'ի Հայաստան, և Պարթևք մեկնին անտի 'ի բաց, 'ի մտի եդեալ դառնալ անդրէն։

Ը. Մարգահաճութիւն Ծերակուտին յառաւելագոյն գրուատիս այսր յաղթութեան։ Կորբուլոն և Ումմիդիոս Կուադրատոս կան զօրավարք արևելեան բանակին. նախանձընդդէմ հակառակութիւն սոցա։

Թ. Վաղոգէս աքքայ Պարթևաց ազատել զպատանդս տուեալս Կորբուլոնի։

Ժ. Ներոն խնդրէ կանգնել անդրի հօր իւրում Կն. Դոմիտեայ։ Առաջարկութիւն կանգնելոյ նմին ինքեան անդրիս, և չառնուլ նորա զայն յանձն։ Հակառակ կալ նորա երկուց ամբաստանութեանց։

ԺԱ. Բդեաշխս կոչեալ՝ արդելուլ նորա զիշխանակից իւր յերդմանէ 'ի վերայ օրինագրութեանց իւրոց, և դարձուցանել 'ի Ծերակոյտն զՊլաւտիոս Լատերան՝ որ արտաքսեալն էր անտի։

ԺԲ. Ներոնի հարկանել 'ի սէր Ակտեայ ազատագրի, և տապկանալ յՈկտաւիայ կնոջէ իւրմէ։ Աղդեցութիւն 'ի Ներոն երկուց պատանեաց մտերմաց նորին՝ Ոթոնի և Սենեկիոնի։

ԺԳ. Սրոմտութիւն Ագրիպպինայ. Ներոնի 'ի բաց դնել զամենայն մեծարանս մօր իւրոյ, և մօր նորա յեզաշրջել զփառաւորութիւն 'ի հեղութիւն և 'ի գրգռանս։ Ներոնի պարգև առ մայր իւր, որով գԺդմնեցուցանէ զնա՝ փոխանակ յինքն յանկուցանելոյ։

ԺԴ. Ընկենուլ Ներոնի զՊալլաս 'ի դանձապետութենէ։ Միւսանգամ զայրացումն Ագրիպպինայ, և սպառնալիք դիմելոյ ընդ Բրիտանիկեայ յաղերս օգնականութեան զօրականին։

ԺԵ. Տգնապ Ներոնի 'ի ընուլ Բրիտանիկեայ զչորեքտասներորդ ամ տիոց իւրոց, և 'ի սկսանելն 'ի յայտ գալ բնաւորութեան պատանւոյն և լինելոյ սիրելի։ Ներոն արբուցանէ նմա մահագեղ խառնեալ 'ի Լոկուստայ, այլ ոչ ազդէ 'ի նա դեղն։

ԺԶ. Միւսանգամ արբուցանէ նմա դեղ չարաթոյն, և անդէն 'ի սեղանի ինքնակալին զսաւի նա 'ի կենաց։

ԺԷ. Ցուղարկաւորութիւն Բրիտանիկեայ։ Ներոնի 'ի չքմեղս լինել հրովարտակաւ, և մեծապարգև մեծարել զչլխաւորս 'ի բարեկամաց իւրոց։

ԺԸ. Ագրիպպինայ յեղաշրջել 'ի կողմն Ոկտաւիայ։ Զարարուեստս հնարք նորա առ 'ի գտանել օգնականութիւն և կուսակիցս իւր։ Ներոնի բառնալ 'ի նմանէ զթիկնապահս, և հեռացուցանել զնա յարքունեաց։

ԺԹ. Թշնամութիւն Ագրիպպինայ ընդ Ցունիա Սիլանա։ Սագրանոք Սիլանայ Իտուրիոս և Կալուիսիոս յայտնեն Ասիմեսեայ, ձերբազատին Դոմիտիայ, հօրաքեռ Ներոնի, զստայօգեալն դաւ Ագրիպպինայ 'ի ձեռնտուութիւն Հռուփիլլեայ Պլաւտոսի։ Ասեմետոս հաստատեալ զամբաստանութիւնն 'ի ձեռն Պարեայ գուսանի յունկն ինքնակալին։

Ի. Ներոն կամի սպանանել անդէն զԱգրիպպինա և զՊլաւտոս։ Բուրրոս համոզէ զնա տեղի տալ պատասխանւոյ մօր իւրում։

ԻԱ. Հարցփորձ Ագրիպպինայ 'ի ձեռն Բուրրոսի և Սենեկայ, և խրոխտ պատասխանի նորա։ Խնդրէ նա խօսել ընդ որդւոյ իւրում, և տայ պատուհասել զամբաստանօղս իւր։

ԻԲ. Բարեկամաց Ագրիպպինայ ամբառնալ 'ի բարձ աւագութեան։ Աքսոր Իտուրիոսի և Կալուիսեայ. պատուհաս Ասիմեսեայ։ Խնայել ինքնակալին 'ի Պարիս, կարևոր 'ի զբօսանս իւր։

ԻԳ. Պալլաս և Բուրրոս զրպարտին, իբր թէ գուն գործեալ կացուցանել ինքնակալ զՍիլլա զփեսայ Կլաւդեայ։ Խրոխտումն Պալլասայ, և զրպարտչին վարել յաքսոր։

ԻԴ. Բարձումն պահապան գնդին 'ի հանդիսից խաղուց։ Ներոն քաւէ զՀռովմ վասն շանթից անկանելոյ 'ի վերայ երկուց մեհենաց։

ԻԵ. Ներոն շրջի գիշերախառն 'ի Հռովմ 'ի ձև սարկի, աւար հարկանէ 'ի վաճառանոցս, տայ և առնու վերս։ Յուլիոս Մոնտանոս վանեալ ընդ նմա ուժգին յանծանօթս, 'ի չքմեղս լինի, այլ սարկի յինքնաձեռն մահ։ Զեղծումն թատերաց, զառածեալ 'ի Ներոնէ։ Հալածումն կատակագուսանաց յԻտալիոյ, և դարձ զօրականին 'ի հանդէս խաղուց։

ԻԶ. Խնդիր ծերակուտին դարձուցանելոյ զձերբազատս ստահակս անդրէն 'ի սարկութիւն։ Ներոնի գումարել վասն այնորիկ ատեան առ 'ի տալ վճիռ։

ԻԷ. Ներոն գրէ առ ծերակոյտն՝ առնուլ ուրոյն 'ի քնին զբողոք տերանցն զձերբազատից, և ոչ սահմանի ինչ վասն ամենեցուն առ հասարակ։ Պարիս ձերբազատ դատի ազատ 'ի ծնէ։

ԻԸ. Ամփոփումն իշխանութեան հազարապետաց ժողովրդեան և շինուածապետաց։ Բարձումն արձանագրութեան 'ի գանձապետաց, և վերակացուաց անյողդողդ հաստատութիւն առ այս։

Լ. Դատախազութիւնք ընդդէմ հարստահարողաց։ Կանինիոսի Հռեփիլեայ ինքնակամ մահ. Լ. Վոլուսեայ մահ 'ի հասակի ինեսուն և վեց ամաց։

ԼԱ. Ներոնի կառուցանել շուրջ տեսանելեաց կայս յարիսական դաշտին փայտակերտ։ Հինաւուրց զօրականին առաքումն 'ի Կապուա և 'ի Նուկերիա 'ի յաւելուած բնակչաց։ Բաշխոյք 'ի Ժողովուրդն։ Զորեքհարիւր բիւր սեստերաք տուեալ 'ի գանձ աշխարհին առ 'ի կացուցանել զվարկ նորա։

ԼԲ. Վաճառ ծերակուտին, զի 'ի սպանանել ուրուք 'ի սարկաց զտէր իւր՝ պատուհասեսցին ընդ նմա և այլք ամենեքեան, որ կատակաւ արձակեալ իցեն 'ի սարկուութենէ։ Լուսիոս Վարիոս ընդունելի լինի դարձեալ 'ի ծերակոյան։ Պոմպոնիոս Գրեկինա ամբաստանեալ 'ի նանրահաւատ կրօնս, և դատեալ յընտանեաց իւրոց, արձակի անպարտ։

ԼԳ. Պ. Կեղեր Կոսուտիանոս Կապիտոն և Եպրիոս Մարկելլոս, դատափետին 'ի յանցանս հարստահարութեան։

ԼԴ. Բազմաց յատենակալաց ծերակուտին սահմանէ Ներոն հաստատուիլ։ Պատերազմ սաստիկ 'ի Հայաստան ընդ Պարթևս և ընդ հռովմայեցիս։

ԼԵ. Կորբուլոն զբանակն, մեղկեալ յընդերկար խաղաղութեան, ածէ անդրէն 'ի խիստ հրահանգս։ Վշտակրութիւն բանակին 'ի խստութենէ ձմերայնոյ։

ԼԶ. Պակիոսի Որսիիտայ յարձակումն ինքնահրաման 'ի Թշնամիս, և պարտութիւն։ Կորբուլոն դատապարտէ զնա 'ի պատուհաս՝ բնակելոյ արտաքոյ պատնիշաց։

ԼԷ. Ասպատակ և աւարհարութիւն Տիրիթի. և Կորբուլոնի ամենայն ուստեք 'ի վերայ նորա յարձակումն։ Տիրիթ բողոքէ 'ի ձեռն պատգամաւորաց, և յայտ առնէ զհասանել Վոլոգեսայ յօգնականութիւն իւր։ Պատասխանի Կորբուլոնի։

ԼԸ. Երկոցունց զօրավարացն ժամադրութիւն գալոյ 'ի մի վայր յանդիման բանակացն իւրեանց, և յամեցմամբն Տիրիթի 'ի դերև ելանել ժամադրութեանն։

ԼԹ. Կորբուլոնի 'ի միում աւուր զամուրս երիս զբռամբ ածել, և դիմել յԱրտաշատ։

Խ. Երևել Տիրիթի 'ի Ճակատու, նեղել զբանակն հռովմայեցւոց, և 'ի խոնարհել արեգական յեռս ամիսոքել։

ԽԱ. Արտաշատայ նուաճումն, և լինել այրեացաւեր։

ԽԲ. Սուիլիոս Ջարախսու ականաւոր ամբաստանի. Թշնամանք նորա ընդդէմ Սենեկայ։

ԽԳ. Կէս ընչից նորա հատեալ 'ի գանձ աշխարհին, աքսորի ինքն 'ի բալէարեան կղզիս։

ԽԴ. Սպանումն Պոնտիայ Պոկտաւիոսէ Սագիտտայ տարփաւորէ իւրմէ։ Տիրասիրութիւն ուրումն 'ի ձերբազատից։

ԽԵ. Նկարագիր բարուց Պոպպէի. հրապոյրք նորա և հարսանիք ընդ Ոթոնի։

ԽԶ. Տոփումն Ներոնի ընդ նմա, և աքսորել զՈթոն 'ի Լուսիտանիա։

ԽԷ. Սիլլա ամբաստանեալ 'ի դաւաճանութիւն ընդդէմ ինքնակալին, աքսորի 'ի Մասսիլիա։

ԽԸ. Աղմուկ պուտէոլացւոց. զորս ցածուցանեն Սկրիբոնեանք երկոքին եղբարք։

ԽԹ. Հակառակութիւն Թրասեայ ատենակալի ընդդէմ վճռոյ իրիք դուզնաքէի ծերակուտին. ոսոխաց նորա ընդ վայր հարկանել զկարծիս նորա, և նորա պատասխանի։

Ծ. Խորհուրդ Ներոնի բառնալոյ զհարկ և զմաքս, և ծերակուտին նմա ընդդէմ դառնալ։

ԾԱ. Հրովարտակ սանձահարելոյ զզօշաքաղութիւն հարկապահանջից, և թեթևաբեռնելոյ զԺողովուրդս յանիրաւ հարկաց:

ԾԲ. Սուլպիկիոս Կամերինոս և Պոմպոնիոս Սիլուանոս ամբաստանին 'ի հարատահարութիւն, և արձակին անպարտ:

ԾԳ. Պաւլինոս Պոմպէոս ածէ յամբոկ զթուրքս Հռենոսի, սկսեալ 'ի Դրուսոսէ: Լ. Վէտոս խորհի կցորդել զմիջերկրականն ծով ընդ ովկիանին, բացեալ առու ընդ Մոսելլայ և ընդ Արարիս: Ելիոս Գրակիլ, կուսակալ Բելգիոյ, ոսոխ նախանձընդդէմ խափան արկանէ խորհրդոյն:

ԾԴ. Փրիսացիք յափշտակեն զերկիրն անբնակ, պահեալ 'ի հռովմայեցւոց յարօտ անդէոց: Համարձակութիւն երկուց զօրավարաց բարբարոսացն, եկելոց 'ի Հռովմ յիրաւախոհութիւն:

ԾԵ. Դիմեն անդր և Անսիբարք, և խնդրեն բնակել անդ ընդ օրինաց հռովմայեցւոց:

ԾԶ. Մերժէ զնդիր նոցա զօրավարն հռովմայեցի: Առաջարկութիւն նորա առ զօրավար նոցա, և արիական պատասխանի բարբարոսին: Անսիբարք հալածեալ, և երկիր յերկրէ թափառական, յետոյ ապա 'ի կորուստ կամ 'ի գերութիւն մատնին:

ԾԷ. Պատերազմ Երմանդուրայ ընդ Կատտիս 'ի վերայ գետոյ միոյ աղաբերի: Պարտութիւն Կատտեաց: Ի հրոյ բղխելոյ յերկրէ այրեցաւեր լինել կալուածոց, անդաստանաց և շինից:

ԾԸ. Հռովմինեան թզենւոյն ցամաքել, և անդրէն դալարանալ:

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցիս չորից ամաց. յորս կացին բգեաշխք.

Ներոն Կլաւդիոս կեսար, և Լ. Անտիստիոս Վէտոս.

Կ. Վոլուսիոս, և Պ. Կուռնելիոս Սկիպիոն.

Կլաւդիոս Ներոն կեսար Բ. և Լ. Կալպուրնիոս Պիսոն:

Կլաւդիոս Ներոն կեսար Գ. և Վալերիոս Մեսալլա:

Ա. Հ. 808.

Ա. Ք. 55.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ ԺԴ.

Ա. Ի հիւպատոսն Կ. Վիպստանոսի և Փոնտէոսի, ոչ ևս յամեցոյց Ներոն զեղեռնն՝ զոր 'ի բազմաց հետէ երկնէր 'ի մտի։ Ընդերկար ժառանգութեամբ ինքնակալութեանն յաւելեալ 'ի յանդգնութիւն, և օր ըստ օրէ և ևս բորբոքեալ էր նա տուփանօք 'ի Պոպպէ։ Իսկ սա՝ որ կենդանեաւ Ագրիպպինայ ոչ յուսայր լինել կնութեան ինքնակալին, և ոչ 'ի բաց մերժելոյ Ոկտաւիայ, յաճախ ստգտանօք՝ և մերթ ևս ընդ խաղ՝ մեղադրէր ինքնակալին, և կոչէր զնա կրտսեր և ստրուկ կամաց այլոց, և ոչ միայն յինքնակալութենէ՝ այլ և յազատութենէ անկեալ, և ասէր. Ընդէ՞ր իցէ յապաղել զՀարսանիս. թերևս չիցէ՞ քեզ հաճոյ գեղ իմ, և ոչ քաջայաղթ նախնիք, ոչ արգասաւորութիւն իմ և ոչ սէր անկեղծ։ Երկնչիս զի հարսանիք մեր լիցին 'ի թշնամանս ծերակուտին, 'ի զայրոյթ ժողովրդեան և ընդդէմ ազահութեան և գողութեան մեր քո։ Եթէ Ագրիպպինա կամի ընդունել 'ի նու զթշնամի զոք որդւոյ իւրում, դարձուսցի Պոպպէ առ այր իւր Ոթոն՝ երթալ ընդ նմա տարադէմ, լսել ևեթ և մի՛ տեսանել զթշնամանս ինքնակալին, և մի՛ կցորդել նմա 'ի վտանգս։ — Զայս և զայսպիսի բանս, զորս ա-

բուեստ սիրատարի և արտասուք պոռնըկի ազդողա-
գոյնս գործէին, չէր ոք որ խափանէր. զի ամենեցուն
էր ցանկալի ընկճել զիշխանութիւն մօրն, և ոչ ոք
կասկածէր՝ զի ատելութիւն որդւոյն հասցէ մինչև 'ի
մայրասպանութիւն։

Բ. Աւանդէ Կլովիոս, ցայն վայր զառածեալ Ագ-
րիպպինայ առ 'ի պահել անկորուստ զիշխանութիւն
իւր, մինչև զմիջաւուրբ 'ի Ճաշու՝ 'ի ջեռնուլ Ներոնի
'ի գինեբբուս և 'ի խրախունս՝ ընծայէր զանձն յաձախ
արբեցելումն 'ի գործ անարժան, պՃնեալ և պատրաս-
տեալ Ցվաւաշոտ համբոյրս նորա և զգգուանս՝ յա-
ռաջընթացս պղծութեան՝ տեսանելով դրանկաց, զե-
կուցին Սենեկայ. որ զկանացի լկտութիւնն 'ի ձեռն
կնոջ խափանել կամելով, մատոյց առ նա զԱկտէա՝
զմի 'ի ձերբազատ աղախնայց նորա։ Որոյ խռովեալ
ընդ նախատինս Ներոնի, ցուցանէր նմա համբաւեալ
զպղծութիւնն 'ի պարծելոյ մօր նորա ընդ այն, և զզո-
բականին չհանդուրժել կալ ընդ մծղընէագործ ինք-
նակալաւ։ Փաբիոս Հռուստիկոս, ոչ Ագրիպպինայ՝ այլ
Ներոնի ասէ կանխեալ 'ի տուփանս մօրն, և Ճարտա-
րութեամբ միոյ 'ի նորին ինքեան ձերբազատից խա-
փանեալ զեղեռնն. բայց այլք 'ի պատմագրաց միաբա-
նին ընդ Կլովեայ՝ որում Թուի երաշխաւորել և համ-
բաւ իրացն, թէպէտ ստուգիւ Ագրիպպինայ զսոսկալի
ոՃիրն երկնեալ, և թէ անլուր պղծութեանն խոր-
հուրդ հաւանելի ևս 'ի նմա թուեցեալ, զի 'ի մանուկ
տիս անկեալ էր ընդ Լեպիդեայ՝ յուսով իշխանու-
թեան, և նովին ըղձիւք մինչև 'ի կամն Պալլասայ
հրապուրեալ, յազգապիղծ հարսանեաց անտի ընդ
հօրեղբօրն՝ յամենայն պղծութիւնս էր հակամէտ։

Գ. Վասն որոյ Ներոն խոյս տայր 'ի կալոյ ընդ մօրն
միայնակ. և 'ի մեկնել գնալ նորա 'ի բուրաստանս իւր,
կամ 'ի Տուսկուլոն և յԱնտիոն գիւղս, գովէր զա-
ռանձնասիրութիւն նորա. մինչև տակաւ դժպՀի լեալ
նմա մայր իւր ուր ուրեք և կայրն, եդ 'ի մտի բառնալ
զնա 'ի կենաց։ Բայց ընդ հնարս ևեթ մահուն վարա-
նէր՝ զթոյն թէ զսուր առնուլ 'ի կիր, և կամ այլազգ
տալ զնա արկանել յարևէ։ ՀաՃոյ թուեցաւ նմա զա-
ռաջինն՝ դեղամահ առնել զնա, այլ եթէ 'ի սեղանի

անդ իւրում մատուցանէին նմա զդեղն, չէր մարթ դիպաց համարել զայն արդասիս՝ այլ հանգոյն մահուն Բրիտանիկեայ պատրաստեալ նմա կորուստ։ Փորձել զսպասաւորս դժուարին թուէր առ'ի դաւել զկին, որ սովորութեամբն յեղեռնագործութիւն՝ ուսեալ էր զգուշանալ'ի դաւոյ, և յաճախ դեղթափիւ պարսպէր զանձն 'ի թունից։ Իսկ զսուր և զարիւն չէր հնար ծածկել, և կասկածէր Ներոն՝ թէ գուցէ զոր ոք ընտրէրն յարբանեկութիւն ծանու եղեռանն, ստունդաւնէր հրամանին։ Յառաջամատոյց եղև 'ի հնարս Անիկետ ձերբազատ, հրամատար նաւատորմին՝ որ առ Միսենեաւ, այն որ մանկածու լեալ էր Ներոնի, և ատեայր զԱգրիպպինա որչափ էր նմա ատելի։ Եցոյց ինքնակալին՝ զի մարթ էր կազմել նաւ մի այնպիսի, որոյ մասն ինչ զատուցեալ արուեստիւ՝ ընկղմեսցէ զնա յեղակարծում'ի ծովու. և զինչ քան զծով բերրի արկածից. և 'ի կորնչել Ագրիպպինայ նաւաբեկ, ո՞ ոք և 'ի կարի անիրաւաց համարէր ինքնակալին յեղեռն զարկածս հողմոց և ալեաց։ Խրատ ևս տայր նմա մեհեանս և բագինս յայնժամ 'ի յիշատակ մոր իւրոյ հրամայել, և որ ինչ այլ ցոյց որդիական գորովոյ։

Դ. Հաճոյ թուեցան հնարքն, և ժամանակն ևս ձեռնտու էր 'ի գործ. զի յաճախ երթևեկէր ինքնակալն 'ի Բայս վասն տօնիցն Ամենասայ։ Անդր և զմայր իւր հրաւիրեաց, և ասէր թէ պարտ է համբերել ցասման ծնողաց, և 'ի բաց դնել զքէն, որով հաստատէր զհամբաւ հաշտութեան իւրոյ ընդ մօրն. և Ագրիպպինա հաւատս ընծայէր համբաւոյն, որպէս բնաւորեալ են կանայք դիւրահաւան յրղձալիսն գոլ։ Եւ 'ի դալ նորա յԱնտիոնէ՝ էլ Ներոն ընդ առաջ նորա 'ի ծովեզրն, էտ նմա աջ, և գիրկս արկեալ՝ էած զնա 'ի Բաւուլս, զի այս անուն է ամարաստան ապարանիցն՝ որ է 'ի մէջ միսենեան հրուանդանին և բայեան լճին, շրջապատեալ 'ի ծովէ։ Մի'ի նաւաց առաւել զարդարեալ՝ մնայր ընդ այլս 'ի սպաս դշխոյի մօրն, քանզի սովոր էր նա նաւարկել եռաթիով, և թիավարքն նաւատորմին ածէին զնա։ Եւ էր նա հրաւիրեալ'ի խրախուն, որպէս զի դիշերախառն ծածկեսցի ոճիրն։ Կարծի իբր հաւաստի՝ մատնիչ ոք լեալ դաւոյն, և Ագ-

ըիպպինայ կասկածեալ, և դեսպակաւ երթեալ 'ի Բայս. անդ գգուանք որդւոյն փարատեցին զամենայն կասկած 'ի նմանէ, զի քաղցրութեամբ ընկալեալ զնա Ներոնի, 'ի վեր քան զինքն բազմեցոյց. և բանիւք բազմօք մերթ իբրև որդի ընտանեբար, և մերթ լուրջ և ծանր որպէս թէ զկարևորաց խօսակցելով, յերկարաձգէր զխրախուսնն։ Զոգաւ ապա ընդ նմա 'ի յուղարկ, և գրկախառն ողջագուրմամբ, զաչսն մայրենիս համբուրելով, մեկնեցաւ 'ի նմանէ, թէպէտ 'ի լրումն կեղծեացն, և թէ արդեօք 'ի յետին տեսիլ մօրն՝ որ գնայր 'ի կորուստ՝ գորովեալ սիրտն վայրենի։

Ե. Գիշեր աստեղափայլ և ծով հողմախաղաղ ետուն դէք, գոգցես իմն առ 'ի յայտ ածել զոՀիրն։ Զև էր 'ի խորս նաւն խաղացեալ. և էին ուղեկիցք Ագրիպպինայ 'ի նաւին երկուք ոմանք յարքունեացն, Կրեսպեր Գալլոս և Ակերրոնիա։ Կրեսպեր ոչ ինչ հեռի 'ի ղեկացն կայր. իսկ Ակերրոնիա յեց 'ի բազմոց դշխոյին զստրջանս որդւոյ նորա և զդարձ 'ի շնորհս մօրն ուրախութեամբ յուշ ածէր նմա։ Եւ ահա 'ի տալ նշանի՝ անկաւ յարկ սենեկին կապարապատ ծանրաբեռն։ Կրեսպեր ՀմՀեալ 'ի ներքոյ, անդէն անշնչացաւ. Ագրիպպինա և Ակերրոնիա պատսպարեցան ընդ բարձրաբերձ քանոնիւք բազմոցին, որ հաստատագոյն էին և անտեղիտալի ծանրութեան բեռինն. այլ ոչ զՀետ եՀաս բացումն նաւուն՝ վասն խռովելոյ ամենեցուն, և վասն բազմաց 'ի դաւակցաց՝ որ չէին իրազեկ՝ խափան լինելոյ։ Հրաման եղև թիավարաց՝ ամենեցուն 'ի մի կողմն խոնարՀել՝ և ընկղմել զնաւն. այլ ոչ ամենեքին պատրաստ գտան 'ի կատարումն յեղակարծ հրամանին, և կիսոց 'ի հակառակն կոյս նկրտեալ՝ ետուն տեղի յամրագոյնս ծովամոյն լինելոյ։ Բայց Ակերրոնիա յանդգնաբար գոչելով Ագրիպպինա եմ, հասէք յօգնութիւն դշխոյի մօր ինքնակալին, Հանկիւք և թիով հարեալ սպանաւ։ Իսկ Ագրիպպինա, որ լուռ և էթ զանխլանայր, ընկալաւ վերս 'ի թիկնամէջս իւր. և սուղ ինչ 'ի լոդ, ապա մակուկաւ, եՀաս 'ի լիՀն լուկրինեան. և անտի ածաւ յամարանոց իւր։

Զ. Անդ զմտաւ ածեալ զՀրաւէր խաբուսիկ նամա-

կանուոյն, զմեծամեծաբ ընդունելութիւնն, զբեկումն նաւուն մերձ 'ի ծովեզր առանց մրրկի և ժայռից՝ կործանեալ 'ի վերուստ կուսէ որպէս շինուած 'ի ցամաքի, յուշ ածելով և զսպանութիւն Ակերրոնեայ և զվերս իւր, խելամուտ եղէ զի միայն հնար զերծանելոյ 'ի դաւոյն էր յանդէտս լինել. և առաքեաց զԱգերինոս ձերբեալսառ որդի իւր, աւետելնման զկեալ իւր շնորհիւ դից և ըստ բարեբախտութեան նորա՝ 'ի ծանր արկածիցն. և աղաչէր, զի թէպէտ և զարհուրեալ նորա ընդ վտանգն մայրենի, այլ մի՛ փութասցի գալ յայց, զի հանդստեան առ ժամն էր կարօտ։ Եւ անկասկած աներկեան 'ի վերին երեսս պատճառեալ, սպեղանիս վիրացն և դարման առնէր անձին։ Խընդրեաց ապա զկտակ Ակերրոնեայ, և հրամայեաց կընքել զամենայն ինչս նորա, զայս ևեթ անկեղծութեամբ արարեալ։

Է. Բայց Ներոն մինչդեռ մնայր լսելոյ զելս դաւոյն, եհաս առ նա լուր զերծանելոյ Ագրիպպինայ թեթև ինչ վիրօք, և հասու լինելոյ առաջնորդի դաւոյն։ Եւ այլայլեալ յերկիւղէ՝ համարէր հասանել առ ինքն Ագրիպպինայ վաղ 'ի վրէժխնդրութիւն, զինուորեալ զատրուկս իւր և դրդեալ զզօրականն, կամ առ ծերակոյտն և առ ժողովուրդն դիմեալ՝ յանդիման առնել նոցա զնաւաբեկութիւն իւր և զվիրառնութիւն, և զսպանումն բարեկամաց իւրոց։ Եւ ոչ պատսպարան էր Ներոնի ընդդէմ նոցին. վասն որոյ կոչեաց զԲուրրոս և զՍենեկա առ 'ի հնարս ինչ իմանալ. և չէ յայտ թէ էի՞ն նոքա յառաջնմէ իրազեկ։ Երկոքին ևս լուռ կացին ընդ երկար, թէ դուցէ 'ի զուր ջանայցեն շրջել զմիտս նորա. և կամ զի թերևս ցայն վայր համարէին զկրն հասեալ, զի եթէ ոչ զառաջս առնուին Ագրիպպինայ, անհրաժեշտ հասանէր Ներոնի կորուստ։ Սենեկա, որ մինչև ցայնժամ պատրաստն լեալ էր 'ի խորհուրդ, դարձաւ 'ի Բուրրոս և եհարց՝ թէ մնրթ էր հրամայել զօրականին սպանանել զնա։ Նա պատասխանի ետ զի զօրքն ատենականք, հաւատարիմք կայսերական աղգատոհմին և անմոռացք Գերմանիկեայ, ոչ իշխեին զէն առնուլ ընդդէմ դստեր նորա. և զի Անիկետեայ պարտ էր ածել 'ի գլուխ զոր խոստա-

ցեալն էր։ Եւ ոչ յամենայ Անիկետ յանձն առնուլ զկատարումն եղեռանն։ Յայնժամ գոչեաց Ներոն. Այսօր շնորհի ինձ ինքնակալութիւնս, և մեծի շնորհիս պարգևատու խոստովանիմ զԱնիկետ. փութացի նա, առեալ ընդ իւր արս հաւատարիմս պատրաստս 'ի լուր հրամանացն։ Իսկ ինքն զԱգերինեայ՝ պատգամաւորին Ագրիպպինայ՝ լուեալ զգալուստ, պատրաստեաց տեսարան եղեռնաւոր. և 'ի տալ Ագերինեայ զպատգամն՝ սուսերը ընդ մէջ ոտից նորա ետ արկանել, և հրամայեաց կապել զնա իբրև սպանող 'ի ձեռս անկեալ, որպէս զի զրպարտել կարասցէ նիւթեալ իւր դաւ 'ի մօրէն, և Ագերինեայ ընդ նշաւակել դաւոյն՝ ամօթահար անձին արարեալ։

Ը. Բայց 'ի համբաւել վտանգին Ագրիպպինայ, որ յարկածս համարեալ էր, դիմեաց ամբոխ բազում 'ի ծովեզը անդր. կէսք 'ի ժայռս արկեալս 'ի թումբ ընդդէմ ալեաց, այլք 'ի նաւակս, այլք 'ի ծով անդր հասակաւ չափ յառաջ ընթացեալ, և ոմանք աջ կարկառէին նմա։ Հնչէր ծովեզրն յաւաղանաց, յուխտից, 'ի խառնաձայն աղաղակէ բիւրուց պէսպէս հարցուածոց, և 'ի բիւրաւոր անստոյգ պատասխանեաց։ Եւ մինչդեռ բազմութիւն ամբաւ խռնէր անդ ջահիւք, և 'ի լուր կենդանութեան Ագրիպպինայ պատրաստէր խնդալ ընդ նմա, 'ի տեսիլ սպառազէն և սպառնալից զօրականին ցրուեցաւ 'ի բաց։ Անիկետ շուրջ պահ արկեալ ապարանիցն, և խորտակեալ զդրունս, ձերբակալ արար զստրուկս՝ որ զդէմ ունէին, և ետհաս մինչև 'ի մուտս բնակութեան նորա, ուր սակաւք ոմանք կային պահապանք, այլոցն ամենեցուն խոյս տուեալ յերկիւղէ յարձակելոցն։ Այս նուաղ էր 'ի սենեկին, և մի ևեթ 'ի նաժիշտաց կայր առ նմա։ Ագրիպպինա խռովեցաւ յոյժ, զի չտեսանէր զոք եկեալ 'ի դիմաց որդւոյն, և ոչ զԱգերինոս. և զի դարձեալ տեսանէր կերպարանափոխս զծովեզրն, միայնակ զինքն մնացեալ, և աղմուկ յեղակարծում յարուցեալ և սպառնալիս անհնարին։ Եւ 'ի նաժիշտին ևս խոյս տալ 'ի բաց, ասէ. Դու ևս թողուս զիս։ Եւ Անիկետեայ, որ հասանէր անդր ընդ Հերակլեայ տրիերապետի և ընդ Հարիւրապետի նաւատորմին, ասէ. Եթէ յայցելութիւն դաս,

տար որդւոյ իմում զրոյց աւետաւոր զողջունէ իմմէ. իսկ եթէ ամբաստանել զնա յեղեռն, ոչ ինչ զորդւոյ իմմէ կասկածեմ, և չհաւատալի է ինձ թէ հրամայեսցէ նա 'ի մահ մատնել զմայր իւր։ Շուրջ եղեն սպասնողք զմահձաքն, և նախ տրիերապետն Եհար գաւազանաւ զգլուխ նորա, այլ ոչ առ 'ի մահ. իսկ 'ի մերկանալ հարիւրապետին զվաղակաւորն, յառաջ մատոյց Ագրիպպինա զարգանդ իւր, և գոչեաց. Զսա հար։ Եւ սպանաւ 'ի հարուածս բազումս։

Թ. Զայսոսիկ միաբան աւանդէն պատմիչք. իսկ թէ Ներոնի զննեալ զդիակն մօր իւրոյ, և զգեղ մարմնոյ նորա գովեալ ասէ, կէսք հաստատեն, այլք ժխտեն։ Ի նմին գիշերի այրեցաւ դիակն նորա 'ի բազմականին անփառունակ յուղարկաւորութեամբ. և ցորչափ ինքնակալերն Ներոն, ոչ հողակոյտ և ոչ շրջափակ զաճիւն նորա պահպաներ ուրեք. այլ ապա սպասաւորաց նորա խնամով՝ կանգնեցաւ նմա շիրիմ փոքրիկ 'ի Ճանապարհին Միսենեայ, մերձ յապարանս Կեսարու իշխանապետի, ուստի 'ի բարձուէ՝ ուր կառուցեալ կայ՝ է տեսանել զծոցն շուրջանակի։ Մնեստեր, մի 'ի ձերբազատից Ագրիպպինայ, առ խարուկաւ տիկնոջ իւրոյ չոգաւ զիւրովին. առ սիրոյ նորին թէ առ ահի կորստեան անձին՝ ոչ է յայտ։ Ագրիպպինայ յառաջ քան զամն բազումն գիտացեալ զսպառնալիս մահուն իւրոյ, և արհամարհեալ էր. զի 'ի հարցանել նորա զՔաւդեայս վասն Ներոնի, ընկալեալ էր պատասխանի՝ թէ թագաւորեսցէ Ներոն առ 'ի մատնել զմայր իւր 'ի մահ. և պատասխանի տուեալ էր. թող սպանցէ զիս, միայն թէ թագաւորեսցէ։

Ժ. Բայց Ներոն յետ կատարման եղեռանն՝ յայնժամ զգաց զարհաւիրս գործոյն. և 'ի մնայուած գիշերոյն մերթ լուռ կայր և անշարժ, և ստէպ ևս ընդոստուցեալ ահիւ և խելայեղեալ, մնայր այգուն առ 'ի կորուստ իւր ծագելոյ։ Շողոմք հարիւրապետաց զօրականին և հազարապետաց ժողովրդեան, ըստ խրատուն Բուրրոսի, կանխեցին 'ի սիրոփուն յուսահատութեան նորա. քանզի կալեալ զձեռանէ նորա, ինդակից լինէին ընդ ազատութիւն նորա 'ի յեղակարծ վտանգէն և 'ի դաւաճանութենէ մօրն։ Եւ ապա բա-

ըեկամք նորա դիմեցին 'ի մեհեանս, և ըստ օրինակի նոցա քաղաքանին Կամպանիոյ զոհիւք և հրեշտակու-թեամբ զինդուութիւն իւրեանց յայտ առնէին։ Իսկ ինքն ներհակակիր կեղծեաք՝ տխուր և գոգցեալ ինն ընդ կեանս իւր դժկամակ, ողբայր զմօրն մահ։ Ա.յլ քանզի վայրք ոչ որպէս զդէմն փոփոխին, տեսիլ ծովուն այնորիկ և ծովեղերաց դժպհի էր նմա, և թուէր լսել զգոչիւն փողոց շուրջ զբլրովքն, և ողբս 'ի տեղւոջէ՝ ուր աձիւնք մօրն կային. վասն որոյ մեկնեալ 'ի Նէապոլիս, գրեաց անտի առ ծերակոյտն գիր, որոյ այս էին իմաստք.

ԺԱ. Ագերինոս, մի 'ի մտերիմ ձերբազատից Ագրիպպինայ, գտաւ սուսեր սպանութեանն 'ի ձեռին. և Ագրիպպինա զեղեռանն՝ զոր պատրաստեալն էր, ելոյծ ինքնին զվրէժ՝ հարեալ 'ի խղձէ։ Ի սոյն ամ բաստանութիւն յաւելոյր զվաղագոյն գործեցեալս 'ի նմանէ, որպէս թէ հնարէր բաժանակից լինել ինքնակալութեանն, և յուսայր ուխտելոյ ատենական գընդաց հնազանդել կնոջ, և ծերակուտին և ժողովրդեան զնոյն նախատինս յանձն առնուլ. այլ 'ի ցրել յուսոյն՝ թշնամացեալ զօրականին և ծերակուտին և ժողովրդեան, խափանէր զբաշխոյս և զպարգևս, և արանց երևելեաց նիւթէր կորուստ. և բազում ձգանց պէտք եղեն առ 'ի խափանել զմուտս նորա 'ի խորհրդարանն, ուր կամէր ազգաց օտարաց տալ պատգամս։ Եւ ապա զաւուրց ինքնակալութեանն Կլաւդեայ հարևանցի 'ի ներքս ածեալ պարսաւանս, զամենայն յոռութիւնս նորա զմարքն արկանէր, ըստ բախտի ամենեցուն համարելով զմահ նորա. յաւելոյր և զնաւաբեկութիւն նորա պատմել։ Ա.յլ ո՞ և 'ի կարի անմտագունից կարէր համարել զայն դիպաց արդասիս, և հաւատալ 'ի նաւակոծ կնոջէ յղեալ զոք մեկնակազէն՝ առ 'ի սպանանել զինքնակալ շուրջ պատեալ 'ի զօրաց և 'ի նաւատորմէ։ Վասն որոյ համբաւ հասարակաց ոչ զնէրոն ամբաստանէր, որոյ անգթութիւն 'ի վեր էր քան զամենայն բողոք, այլ զԱենեկա՝ որ այնպիսի բաւնիւք ինքնադատ զնա կացուցանէր 'ի գրին։

ԺԲ. Սակայն զարմանալի նախանձաւորութեամբ աւագանւոյն՝ սահմանեցան պաղատանք գոհութեան

յամենայն մեհեանս, և զաւուրս տօնից Ա.Թենասայ՝ յորս եղև յայտնութիւն դաւոյն՝ կատարել հանդիսիւ խաղուց տարեկանաց, արձան ոսկեղէն կանգնել դիցուհւոյն 'ի տաճարին խորհրդոց, և առ նմին զպատկեր ինքնակալին, և զօր ծննդեան Ագրիպպինայ ընդ օրաչարս կարգել։ Թրասէաս Պետոս, որ լռութեամբ կամ վեր 'ի վերոյ հաւանութեամբ զայլովք շողոմիւք զանց առնէր, ել 'ի բաց յայնժամ 'ի ծերակուտէն. այլ այն նմա եղև 'ի վտանգ, և ոչ այլոց սկիզբն ազատութեան։ Նշանք ևս յոգունք, այլ անարգասաւորք, պատահեցին. ծնանել իժի 'ի կնոջէ, այլոց ուրուք կնոջ շանթահար 'ի ծոց ամուսնոյն մեռանել, խաւարել յանկարծ արեգական, և ամպահարել չորեքտասան թաղից Հռովմայ։ Այլ այսոցիկ ոչ 'ի դիցն խնամոց պատահել՝ յայտ անտի է, զի և յետ այնորիկ ընդ բազում ամս ինքնակալութիւն և ոճիրք Ներոնի յարատևեցին։ Բայց նա վասն ատելի ևս առնելոյ զյիշատակ մօրն, և առ 'ի ցուցանել զմարդասիրութիւն իւր՝ յուսելեալ անխափան այնուհետև 'ի նմանէ, դարձոյց 'ի հայրենիս իւրեանց զՑունիա և զԿալպուրնիա տիկնայս, զՎալերիոս Կապիտոն, և զԻկինիոս Գաբուլոս երբեմն վերակացուս ատենական զօրաց, որք առ հասարակ աքսորեալ էին յԱգրիպպինայ։ Հրաման ևս ետ ածել զաՀիւն Լոլլիայ Պաւլինեայ, և կանգնել նմա շիրիմ։ և զԻտուրիոս և զԿալուիսիոս, զորս իւր իսկ փոքր մի յառաջ էր աքսորեալ՝ անպարտ արձակեաց։ Իսկ Սիլանա օրհասիւն իւրով վախճանեալ էր 'ի Տարենտոն, 'ի հեռաւոր աքսորանաց անդր դարձ արարեալ՝ 'ի տկարանալ զօրութեան կամ ատելութեան Ագրիպպինայ, յորմէ հասեալ էր նմա կործանումն։

ԺԳ. Բայց ինքն Ներոն դեգերէր 'ի քաղաքս Կամպանիոյ՝ վարանեալ ընդ դարձ իւր 'ի Հռովմ; թէ գուցէ ոչ ևս գտցէ հաւատարիմ ընդ իւր զծերակոյտն, և ոչ զսիրելութիւն ժողովրդեան. այլ ընդ հակառակն արք ժանտք, որոց ոչ ուրեք յայլոց արքունեաց էր առաւելագոյն բաղմութիւն, ասէին ատելի լեալ զանուն Ագրիպպինայ, և մահուամբ նորա յաւելեալ զսէր ժողովրդեան առ ինքնակալն, և յորդորէին զնա դառնալ աներկիւղ 'ի Հռովմ; և զմեծարանաց երեսաց իւրոց

առնուլ զփորձ։ Խնդրէին իսկ կանխել ինքեանց անդր յառաջ քան զինքնակալն։ Եւ արդարև յոժարագոյն քան զխոստումն իւրեանց գտին զժողովուրդն ըստ ցեղից իւրաքանչիւր հանդերձ ծերակուտիւն պատրաստեալ պայծառազգեաց և զուարթագին ելանել նմա ընդ առաջ, ծնողաց և որդւոց երամովին ըստ տիոց և ըստ ազգի ուստերաց և դստերաց՝ի կարգ անկեալ, և շուրջ տեսանելիս՝ ընդ որս անցանելոցն էր՝ կազմեալ որպէս՝ի զնին յաղթանակի։ Իսկ ինքն գոռոզ և վատութեան հասարակաց յաղթական՝ էլ՝ի Կապիտոլ, գոհութիւնս մատուցանել դից. և ապա ետ զանձն յամենայն քարուսկանս, զորս ցայնժամ՝ ակնածութիւն՝ի մօրէ՝ յորպիսւոյ և իցէ՝ սանձահարէր։

ԺԴ. Ի բազմաց հետէ իղձք էին նմա զքառաձիս վարելոյ, և միւս ևս ոչ ինչ նուազ անարգ՝նուագելոյ քնարաւ՝ի սեղանի երգս գուսանականս. և ասէր՝ թագաւորաց և զօրավարաց նախնեաց սովորութիւն լեալ զայն, գովութեամբ՝ի քերթողաց հռչակեալ, և՝ի պատիւ դից նուիրեալ, և յաւելոյր. Երգք սրբազանեալ են Ապոլոնի, և անդրիք նորա քնար՝ի ձեռին կան, ոչ միայն՝ի քաղաքս Հելլենաց՝ այլ և՝ի մեհեանս Հռովմայ, այն որ մին է՝ի դիցն վեհագունից և պատգամատու։ Եւ իբրև ոչ ևս կարէր հրաժարել՝ի կրիցն, խորհեցան Սենեկա և Բուրրոս տեղի տալ միումն, զի մի յերկոսին ևս զակատեսցի։ Շուրջ փակեցաւ ձորն վատիկանեան, կառավարել նմա անդ անտես՝ի խուռնէ. այլ ընդ հուպ ժողովուրդն հռովմէական ինքնահրաւէր ըստ ռամկական զբօսասէր բնաւորութեանն անդր խռնեալ, խրախուսէին զնա դրուատեօք՝ ուրախամիտք՝ի տեսանել՝ի նոյն կիրս զիշխանն իւրեանց. և հրատարակել ամենապարտ գործոյն չեղև նմա՝ի զիջումն կրիցն, որպէս էր ակնկալութիւն, այլ և ևս՝ի գրգիռ։ Եւ նուազել կարծելով զնախատինս, նախատակից իւր զբազումս առնէր, զսերեալս յազնուական ազգատոհմից արծաթասէրս առ կարօտութեան, հանեալ զնոսա ընդ իւր՝ի տեսարան. զորս ոչ յանուանէ յիշատակեմ, առ՝ի մեծարանս նախնեաց նոցա, թէպէտ և անկեալս ընդ օրհասիւ։ Եւ որ անօրինագոյնն է, ՝ի նպաստ չարեաց՝ի կիր արկանէր զարծաթ, որով

պարան էր խափանել զայնս. զասպետս ևս Հռովմայեցիս ականաւորս մեծամեծ պարգևաք ստիպէր ի ջանել յասպարէզ, և պարգևք այնորիկ՝ որ կարէն հրամայել՝ զբռնութիւն հարկի 'ի վերայ ածեն։

ԺԵ. Ա.յլ զի մի՛ անդէն 'ի հասարակաց տեսարանի նշաւակ զանձն կացուսցէ, սահմանեաց զանուանեալ պատանեկան խաղս՝ յորս գրեցան բազմութիւն քաղաքացւոց. ոչ ազնուականութիւն, ոչ հասակ, և ոչ պատիւ երբեմն աւագութեան, խափան եղէն նոցա վարելոյ զարուեստ Յոյն և Լատին գուսանաց, մինչև 'ի շարժուածս իսկ և յերգս կանացիս։ Տիկնայք ևս մեծուհիք ուսան զանարժանս. և կառուցան յանտառին՝ զոր տնկեալ էր Աւգոստեայ շուրջ զծովալճիւն նաւամարտութեան՝ սրահք և աշխարհաւանդք առ 'ի վաճառ ածել զլուցկիս ախտից, և տալ արծաթ՝ զոր լաւորեարն 'ի պիտոյս, և ցուիք վարէին 'ի սնափառութիւն. ուստի 'ի ներքս մտին ծանականք և քարուսկանք. և ոչ այլ ուրեք ապականութիւն բարուց յորդեաց զխոհերս գարշութեան, որպէս 'ի ժանտն յայն ժողովարան։ Հնարք հայթայթանաց զգաստութեան հաղիւ պահպանեն զամօթխածութիւն, և որ պատկառանք, որ պարկեշտութիւն և որ լաւութիւն բարուց 'ի մրցանս անդ յոռութեան ախտից կարէր տոկալ։ Ի վերջէ և ինքն Ներոն ելեալ 'ի տեսարան, բազում խնամով և նախակրթութեամբ և պաշտօնէից ձայնակցութեամբ՝ նուագէր քնարաւ. շուրջ կային անդ գունդ զինուորաց, հարիւրապետք և հազարապետք, և Բուրրոս Թախիծ 'ի սրտի և դրուատիք 'ի շրթունս։ Անդ նախ ասպետք Հռովմայեցիք քաջք, կէսք 'ի հրապուրանաց ցուիութեան, այլք յուսով իշխանութեան գրեցան 'ի գուսանս՝ յորջորջեալ աւգոստականք. սոքա զցայգ և զցերեկ ծափս հարկանէին՝ զգեղ ինքնակալին և զձայն նորա կոչելով դիցական. և եղէն անուանիք և փառաւորեալք, որպէս թէ առաքինութեամբ։

ԺԶ. Բայց Ներոնի ոչ շատացեալ թատրերգութեամբ ևեթ լինել երևելի, փառասիրէր և 'ի յօրինուած տաղից, ժողովեալ առ իւր պատանիս վարժս 'ի տաղաչափութիւն, չևևս կատարելահասակս. որոց բազմեալ 'ի միասին, զածեալս 'ի մէջ կամ անդ յօրի-

նեալս 'ի Ներոնէ տողս՝ յարմարէին, զնորին իսկ տողից որպէս և էին յօրինեալ՝ ընդով զչափս. որով նոյն իսկ կերպարան տաղիցն յայտ առնէր՝ ոչ 'ի սրտէ և ոչ անդրստին 'ի նոյն շրթանց զայնոսիկ բղխեալ։ Տայր և և իմաստասիրաց ժամ յետ ընթրեաց, և զբօսնոյր 'ի լուր վիճաբանութեան և հակաճառութեանց նոցա. և ոչ պակասէին արք խստակրօնք և լուրջք, որ ցանկային երևելի լինել անդ 'ի զբօսանս ինքնակալին։

ԺԷ. Զայնու ժամանակաւ 'ի թեթև ինչ գժտութենէ ահագին կոտորած ընդ նուկերացիս և ընդ պոմպէացիս գաղթականս պատահեաց։ Լիւինէոս Հռեգուլ, զորմէ ասացի արտաքսեալ 'ի ծերակուտէն, էած 'ի հանդէս տեսարան սուսերամարտից. և համարձակութիւն բնակչաց շինից խաղ առնելոյ զիրերօք՝ զառածաւ 'ի թշնամանս, 'ի քարընկէց, և մինչև 'ի զէն։ Զօրացաւ ռամիկն պոմպէացւոց, առ որս կատարէր հանդէս տեսարանին, և յոգունք 'ի նուկերացւոց ածան 'ի քաղաքն խեղք և վիրաւորք, և բազում ծնողք և որդիք լացին զմեռեալս իւրեանց։ Զդատ նոցա ինքնակալն 'ի ծերակոյտ անդր արար ապաստան, և ծերակոյտն 'ի բդեաշխս. և 'ի նոցանէ դարձեալ առաջարկեալ Հարց ատենակալաց, արգելաւ պոմպէացւոց հրովարտակաւ՝ մի՛ և ս ցտասն ամ առնել կացուրդ այնպիսի. և լուծան ժողովք, զորս ընդդէմ օրինաց սահմանեալ էր նոցա։ Լիւինէոս և այլ խռովարարք աքսորանք պատուհասեցան։

ԺԸ. Արտաքսեցաւ 'ի ծերակուտէն և Պետիոս Բլեսոս, ամբաստանեալ 'ի կիւրենացւոց 'ի սեղանակապտութիւն գանձուց Աբկլեպեայ մեհենին, և իբր զեղծեալ կաշառով և փառասիրութեամբ 'ի լինելն իւրում զօրաժողով։ Նոքին ինքեանք կիւրենացիք պարտաւոր առնէին և զԱկիլիոս Ստրաբոն երբեմն կուսակալ, զոր Կլաւդեայ յղեալ էր՝ Թափեալ զերկիրն Թողեալ յԱփիոնէ արքայէ ժողովրդեան Հռովմայ, զոր սահմանակցաց յափշտակեալ, և ընդերկար ժառանգութեամբ վասն չպահանջելոյ ուրուք զայն 'ի նոցանէ՝ արդար իրաւունս համարէին տիրել անդ։ Վասն որոյ 'ի վարել Ստրաբոնի ընդդէմ նոցա դատաստան՝ ատելի լեալ էր նոցա. և ծերակոյտն, զի անծանօթ էր նմա

հրաման Կլաւդեայ, պարտ համարեցաւ հարցանել զինքնակալն. և Ներոն հաստատեաց զվՃիռ Ստրաբոնի, սակայն գրեաց՝ի նպաստ նիզակակցայ շնորհել զերկիրն յափշտակեալ։

ԺԹ. Յետ այսորիկ վախՃանեցան Դոմիտիոս Աֆեր և Մ. Սերուիլիոս, պայծառացեալք գերագոյն փառօք և բաղում Ճարտարխօսութեամբ, Դոմիտիոս՝ի պաշտպանութիւն դատից, իսկ Սերուիլիոս՝ի հրապարակախօսութիւն և՝ի յանձանձել զիրս աշխարհին. և պերՃութեամբ ևս կենաց երևելի լեալ, որով զանազանէրն՝ի Սերուիլեայ ըստ բարուց, հաւասարեալ ընդ նմա ըստ հանՃարոյ։

Ի. Յաւուրս Կուռնելեայ Կոսսոսի, և Ներոնի չորրորդ անգամ բդեշխութեան, սահմանեցան՝ի Հռովմ խաղք հնգամեակք ըստ օրինակի Հելլէն մրցամարտից. և եղեն զայնմանէ զրոյցք այլևայլ, որպէս զամենայն նորաձևութեանց։ Կէսք ասէին զկն. Պոմ պէոս պարսաւելի լեալ ծերունեաց վասն կառուցանելոյ իւրոյ տեսարան կայուն, զի յառաջագոյն առժամայն աստիՃանօք՝ի Թատերս ըստ ժամուն պիտոյից յօրինեալս՝ ածէին՝ի հանդէս խաղք սովորականք. և՝ի վաղնջուց ժամանակս ժողովուրդն յոտին կայր անդ՝ի զնին, զի վտանգ էր՝ի բազմելն՝ անցուցանելոյ անդ զօրն ողջոյն անգործ։ Եւ յաւելուին՝ զի պարտ էր գէթ պահել զնախնի օրէնս տեսարանաց, որպիսիս ատենակալք ածէին՝ի հանդէս, առանց ստիպելոյ զքաղաքացիս՝ի մրցումն. սովորութիւնք հայրենիք եղծեալ տակաւ, արդ և՝ի հիմանց կործանին՝ համարձակ ազատութեան՝ի ներքս անկեալ, մինչև լիցի մեզ տեսանել՝ի քաղաքիս զամենայն ապականութիւն և զառիթս նոցին, և օտարոտի կրթութեամբք խորթասցի մանկտին յերիտասարդանոցս՝ յանգործութեան և յանարժան տուիանս սովորեալ օրինակաւ իշխանին և ծերակուտին, որք ոչ միայն ազատութիւն՝ այլ և զօրութիւն ընծայեն ախտից. թող եղցէ աւագանին Հռովմայ՝ի տեսարան, նշաւակել զանձն պատՃառանօք քերթողութեան և Ճարտարխօսութեան. և զի՞նչ այլ մնայ նոցա, բայց մերկամարմին՝ի կուփամարտ իջանել, և փոխանակ զինուորութեան՝ի մրցոյ-

մունս յայնոսիկ մտաբերել. լաւ ևս արդեօք զկրա-
ւունս հմայից և զաղնուական պաշտօն դատաւորի կա-
տարեսցեն տամնեակք ասպետաց՝ ի լսել հմտօրէն զբեկ-
բեկ եղանակս և զքաղցրաձայնութիւն. զգիշեր ևս
յաւելուն՝ ի տգեղութիւնս տունջեան, առ՝ ի չթողուլ
տեղի պատկառանաց, զի՝ ի խառն՝ ի խուռն ակումբս
անդ որ ինչ ոք ժանտութիւնս ըղձանայ՝ ի տուէ՝
ժպրհեսցի գործել՝ ի խաւարի։ —

ԻԱ. Բայց այլոց բազմաց հաճոյ թուէր համարձա-
կութիւնս այս, և ընդ համեստ անուամբ բարե-
քէին զայն, և ասէին. Նախնեաց ևս ընդունելի եղեն
թատերական զբօսանք՝ ըստ այնր ժամանակի հան-
գամանաց. յետրուրացւոց անտի կոչեցին նոքա գու-
սանս, ՝ի թուրացւոց զձիընթացս. և՝ ի տիրելն յելլա-
դա և յԱսիա՝ յաւելին զհանդէս խաղուցն, թէպէտ և
ընդ ամ երկերիւր յետ յաղթանակին Մումմեայ՝ որ
ինքն եմոյծ նախ՝ ի Հռովմ զայն նոր ազգ տեսարանաց՝
ոչ ոք յաղնուականաց՝ ի թատերական արուեստ նուաս-
տանայր. և վասն խնայութեան ծախուց՝ կառուցան
տեսարանք մնայունք փոխանակ այնոցիկ, յորս ամի ամի
լինէին ծախք ամբաւ. և ոչ ևս հարկ լիցի աւագան-
ւոյն սպառել զինչս իւր առ՝ ի հանդէս ածել՝ վասն
թախանձանաց ժողովրդեան՝ զհելլենաց տեսարանս,
հայթայթելով ծախուցն՝ ի հասարակաց գանձուց։
Ճարտասանից և քերթողաց յաղթանակք արծար-
ծեսցեն զհանճարս, և ոչ ծանր թուեսցի դատաւորաց
կալ՝ ի լուր ազնուական վարժից և բերկրալեաց, և
գիշերս քանի մի՝ ի հնգամենի օրէն իցէ տալ՝ ի զբօ-
սանս՝ քան՝ ի համարձակ ազատութիւն, ՝ի լոյս ջահից
այնքանեաց՝ որ ոչ ներեսցեն ծածկել զանարժանս։
— Եւ արդարև առանց ծանուցց խայտառականաց ան-
ցին տօնք խաղուցն, և ոչ դոյզն ինչ վէճ գրգռեցաւ
յամբոխին. զի թէպէտ և դարձան անդրէն տեսա-
րանք, այլ՝ ի սրբազան խաղս չէր մուտ մնջկատակաց։
Ճարտարխօսութեան ոչ ոք տարաւ անդ զմրցանակ,
Ներոնի պահեալ զյաղթութիւն. և Հելլէն վերարկու,
զոր բազումք՝ ի տօնսն յայնոսիկ կրէին, թողաւ յայն-
ժամ՝ ի բաց։

ԻԲ. Մինչ այս մինչ այն, երևեցաւ ընդ երկինս վար-

սամ՝ զոր ռամիկն յեղափոխութեան թագաւորութեանց կարծէ նշանակ. վասն որոյ, անդստին անկեալ յինքնակալութենէ համարելով զՆերոն, խընդրէին՝ թէ զո՛ արժան էր ընտրել 'ի յաջորդ, և 'ի բերան ամենեցուն էր Հռուփիլլիոս Պլաւտոս, որոյ ազնուականութիւն 'ի մօրէ կողմանէ էր 'ի յուլեան ազգատոհմէ, և ինքն նախնեացն իմաստից նախանձաւոր, խստակրօն ձևով, զգաստ և անզբօս կենցաղավարութեամբ, և որչափ թաքուցեալ երկիւղիւ՝ նոյնչափ առաւել հռչակեալ։ Զօրանայր համբաւն 'ի հմայից՝ ոչ ինչ նուազ մնոտեաց, շանթի յերկնից անկելոյ. զի յընթրել Ներոնի առ սիմբրոնեան լճիւ՝ որ լճեզրական կամ սուբլականն կոչի, ամպահարեալ և կործանեալ էր սեղանն համադամաք հանդերձ, և արկածիցն 'ի տիբուրեան սահմանս դիպեալ՝ ուստի էր հայրենեաք Պլաւտոս. վասն որոյ 'ի դիցն ակնարկութենէ համարէր նա սահմանեալ յինքնակալութիւն։ Զեռնտու ևս լինէին համբաւոյն բազումք, որք շահասէր և յոգնապատիր փառամոլութեամբ զնորանշան և զկեղակարծ դէպս հետազօտեն։ Յայսցանէ խռովեալ Ներոնի, գրեաց առ Պլաւտոս՝ օգնել խաղաղութեան Հռովմայ, և զերծուցանել զանձն 'ի նոցանէ՝ որ հանէին համբաւ զինքենէ, մեկնել 'ի հայրենի ագարակս իւր՝ որ էին յԱսիա, և անդ անտրկևան և անխռով վայելել 'ի հասակ իւր առոյգ. վասն որոյ Պլաւտոս Անտիստեաւ կնաւ իւրով և սակաւուք բարեկամաք մեկնեցաւ գնաց անդր։ Յաւուրսն յայնոսիկ Ներոն վասն հեշտասիրութեան անկաւ 'ի նախատինս և 'ի վտանգ, երթեալ 'ի լոգ յաղբերակունս՝ ուստի մարկեանն ջուր գայ 'ի Հռովմ. զի համարեցան պղծեալ լուացմամբ նորա սրբ բազան ջուրքն և վայրն դիցանուէր. և զհետ եկեալ հիւանդութեամբն ցաստումն դից ընդ նմա եղև աներկբայելի։

Իգ. Բայց Կորբուլոն յետ քանդելոյ զԱրտաշատ, մինչդեռ յերկիւղի կայրն թշնամիք, խորհեցաւ հասանել առնուլ զՏիգրանակերտ. և կործանմամբ երկոցունց քաղաքացն յաւելուլ զարհաւիրս բնակչացն, կամ խնայեալ 'ի նոսա՝ առնել իւր փառս գթութեան։ Եւ խաղացոյց անդր զբանակն խաղաղութեամբ՝ առ

'ի չբառնալոյ զյոյս թողութեան, այլ ոչ զանց արա-
բեալ զնախահոդ զգուշութեամբ, գիտելով զոր-
դողդ բարս ազգին, զյուլութիւն նոցա 'ի վտանգի, և
զհաւատարժութիւն 'ի տալ պատեհի։ Բարբարոսքն
ըստ իւրաքանչիւր բնաւորութեան՝ կէսք յաղերս մա-
տուցեալ, այլք փախուցեալ 'ի շինից, անկան յանա-
պատս. եղեն և ոմք 'ի նկուղս գետնափորս ամրացան,
առեալ ընդ իւրեանս որ ինչ առաւել ցանկալին էր
նոցա։ Զօրավարն հռովմայեցի այլևայլ հնարս 'ի կիր
արկեալ, ներէր աղերսաւորաց, զհետ փախստէից ա-
րագամէտ հասանէր, և անողոքելի ընդդէմ այնոցիկ՝
որք 'ի խորափիտս էին ամրացեալ, զբերան և զելս ան-
ձաւացն խռուվք և ոստովք խցեալ՝ հուր զնոցանէ
հարկանէր։ Բայց 'ի խաղալն ընդ սահմանս Մարդեաց,
նոքա սովորեալք յաւազակութիւն՝ նեղէին զնա, պա-
տրսպարեալ 'ի լերանց։ Կորբուլոն զվիրս ընդդէմ
նոցա արձակեալ՝ եհար զնոսա, զյանդգնութիւն թշնա-
մեաց օտար արեամբ պատուհասեալ։

ԻԴ. Բայց ինքն և զօրք իւր թէպէտ և զերծք 'ի
տուժից պատերազմի, սակայն ընկճէին սովով և աշ-
խատութեամբ. հարկն՝ մնով ևեթ անդէոց բուժելոյ
զքաղց, կարօտութիւն ջրոյ, ամառն տօթակէզ, և չու
երկայն, վշտակրութեամբ միայն զօրավարին ամոքէր՝
յոլովագոյնս կրելով նորա քան զսինքքոր զօրականն։
Հասին ապա 'ի մշակեալ անդաստանս, և արարին
հունձս. և յերկոցունց բերդից, յորս ամրացեալ էին
Հայք, զմին առին յարձակմամբ. իսկ զմիւսն, որ առաջ
նուին բռնութեան զդէմ կալաւ, 'ի նեղ արկին պա-
շարմամբ։ Անտի անցեալ 'ի սահմանս տաւրացւոց, 'ի
յեղակարծ վտանգէ մազապուր զերծաւ ըստ բախտի։
Ոչ ինչ հեռի 'ի խորանէ նորա ըմբռնեցաւ զէն 'ի ձե-
ռին մի 'ի բարբարոսաց, ոչ յանդգնանից, և 'ի խոշտան-
գանս հարցափորձի՝ խոստովան եղև զդաւն պատրաս-
տեալ, և զինքն առաջնորդ դաւոյն, յայտնելով և զդա-
ւակիցս իւր. և դատապարտեալ պատուհասեցան, որ
կեղծեաք բարեկամութեան նիւթէին զնենգ։ Ընդ
հուպ հրեշտակք 'ի Տիգրանակերտ քաղաքէ հասեալ,
ցուցին զդրունս քաղաքին առաջի նոցա բացեալ, և
զբնակիչսն պատրաստս 'ի հնազանդել, ածելով նմա

պակ ոսկի 'ի նշանակ ընդունելութեան։ Կորբուլոն ընկալաւ մեծարանօք զՀրեշտակն. այլ ոչ ինչ էառ աւար 'ի քաղաքէն, որպէս զի յօժարագոյն զսպաս հնազանդութեան մատուցցէն։

ԻԵ. Բայց դղեակն արքունի, յորում մանկտին ամենի ամրացեալ կայր, ոչ առանց պատերազմի առաւ. զի և 'ի Ճակատամարտ առ պարսպօքն իշխեցին, այլ վանեալ 'ի հողաբլուր պատնէշս՝ յետոյ ապա տեղի ետուն յարձակման թշնամեաց։ Յաջողութեանցս այսոցիկ օգնեաց պատաղումն Պարթևաց 'ի պատերազմ ընդդէմ Վրկանաց, որոց հրեշտակս արարեալ էր առ ինքնակալն՝ խնդրելով նիզակակցութիւն, առ հաւատչեայ բարեկամութեան իւրեանց 'ի մէջ ածեալ զխափանել իւրեանց պատերազմաւ զՎոլոգէս։ Կորբուլոն 'ի դառնալ նոցա ետ գունդ առաջնորդ մինչև ցեզը Կարմիր ծովու, զի մի յանցս Եփրատայ պաշարեսցին 'ի պահապանաց թշնամեաց. ուստի առանց անցանելոյ ընդ սահմանս Պարթևաց՝ դարձան նոքա 'ի հայրենիս իւրեանց։

ԻԶ. Տիրիթ մնեալ էր յայնժամ ընդ երկիրն Մաբաց 'ի հայաստան։ Կորբուլոնի զօրահատոյց արարեալ արձակեաց ընդդէմ նորա զՎերուլանոս տեղակալ իւր, հանդերձ օժանդակ զօրօք. և ինքն լեգէոնօքն հասեալ զՀետ, հարկեցոյց զՏիրիթ խուսել յուսակորոյս 'ի բաց. և որք միանգամ հակառակն կային մեզ վասն արքային իւրեանց՝ դատեալ զնոսա 'ի սուր և 'ի հուր, կալաւ զՀայաստան։ Եւ յղեցաւ Թագաւոր Հայոց 'ի Ներոնէ Տիգրան, յարքայազանց կապադովկացւոց, թոռն Արքեղայոսի արքայի, այն որ 'ի բազում ամաց պատանդ 'ի Հռովմ կացեալ՝ մինչև 'ի ծառայութիւն խնարհեալ էր։ Ոչ յամենեցունց եգիտ նա ընդունելութիւն, զի տակաւին կէսք կամէին զոք յարշակունեաց, այլ բազումք տաղտկացեալ 'ի դառնութենէ Պարթևաց, լաւ համարէին զառաքեալն 'ի Հռովմայեցւոց անտի ունել 'ի Թագաւոր։ Եւ տուան Տիգրանայ 'ի զօրաւիգն հազար այր 'ի լեգէոնականաց, գունդք երեք 'ի նիզակակցաց, և թևք երկու հեծելոց, առ 'ի դիւրաւ պահպանել զնորոգ Թագաւորութիւնն. և յանձնեցան կողմանք հայաստանի սահ-

մանակցաց նորա, Փարսմանայ, Պոլեմոնի, Աքիստոբուլեայ և Անտիոքոսի. և Կորլուլոն դարձաւ յԱսորիս, ուր՝ի մեռանել Վինիտիոսի տեղակալի՝ չէր ոք կուսակալ, և նմա Թողեալ էր երկիրն։

ԻԷ. Ի նմին ամի կործանեցաւ՝ սասանութենէ երկրի Լաւոդիկէ, մի յերևելի քաղաքաց Ասիոյ, և առանց ինչ առ՝ի մէնջ նպաստից կանգնեցաւ վերստին յիւրոցն. և Պուտէոլ, քաղաք Իտալիոյ վաղեմի, ընկալաւ՝ի Ներոնէ զիրաւունս և զպատիւ հռովմէական գաղթականի։ Աղաքեցան՝ի Տարենտոն և յԱնտիոն հինգերեայ զօրականք, այլ ոչ ինչ օգնեցին՝ի բազմամարդութիւն քաղաքացն. քանզի բաղումք՝ի նոցանէ ցրուեցան՝ի գաւառս՝ ուր զինուորեալն էին, և ոչ սովորեալք յամուսնութիւն և՝ի մնուցանել որդիս՝ Թողին զտունս իւրեանց անզաւակ։ Զի ոչ ևս, որպէս երբեմն, լեգէոնք ամբողջ՝ հանդերձ հազարապետօք և հարիւրապետօք և իւրաքանչիւր իւրեանց դասուն զօրականօք՝ արձակէին գաղթականք, որք համախոհ և միասիրտ կազմէին քաղաքաժողով միաբանութիւն. այլ աստ անծանօթք իրերաց յայլ և այլ գնդաց, առանց առաջնորդի և առանց ընդ իրեարս կարեկցութեան, որպէս թէ օտարք ազգաւ՝ի մի վայր եկեալ էին ամբոխ խառնիխուռն՝ քան թէ գաղթական։

ԻԸ. Զընտրութիւն ատենակալաց սովորութիւն էր Թողուլ՝ի կամս ծերակուտին. ՝ի յառնել սաստկագոյն հետամտութեան՝ ցաճոյց զայն ինքնակալն, կացուցանելով երիս՝ի հետամտից անտի առաւել քան զսահմանեալն թիւ՝ հրամատարս միոյ՝ի լեգէոնաց։ Յաւել ևս զպատիւ ատենակալաց ծերակուտին, սահմանելով՝ զի որք՝ի հասարակ դատաւորաց բողոքէին՝ի ծերակոյտն՝ հատուսցեն զնոյն տուրս, որպէս որք բողոքէին յինքնակալն. զի յառաջագոյն ազատ էր և անտոյժ բողոք նոցա։ Ի վերջկոյս ամին՝ Վիբիոս Սեկունդոս ասպետ հռովմայեցի ամբաստանեցաւ՝ի Մաւրեաց՝ի սաստկապահանջ հարստահարութիւն, և դատապարտեալ աքսորեցաւ յԻտալիոյ, զերծեալ՝ի ծանրագոյն պատուհասէ՝ի շնորհս վաստակոց Վիբիոսի Կրիսպեայ եղբօր իւրոյ։

ԻԹ. Առ բդեշխութեամբ Կիսոնիոսի Պետոսի և

Պետրոնիոսի Տուրպիլիանոսի, կրեցին հռոմայեցիք սաստիկ կոտորած 'ի Բրիտանիա։ Ալբոսի Դիդիոսի տեղակալի, որպէս յառաջ ասացաք, շատ համարեալ էր պահել անդ զաշխարհակալութիւն իւր, և յաջորդի նորին Վերանոսի դոյզն ասպատակօք աւար հաբեալ զՍիլուրս, և խափանեալ օրհասիւն իւրով 'ի մըղելոյ անդր և զպատերազմ։ Ի կենդանութեան իւրում համբաւէր նա խստակրօն, այլ 'ի մահուն ծանուցաւ փառամոլութիւն նորա յետկոյս կտակին, ուր բազում փաղաքշանօք շնթեալ Ներոնի, յաւելոյր՝ զի եթէ զերկեամ մի ևս կեցեալ էր իւր, նուաճէր ընդ նովաւ զգաւառն ողջոյն։ Յետ նորա Պաւլինոս Սուետոնիոս կալաւ զԲրիտանիա. հանձար պատերազմական, և ձայն հասարակաց՝ որ ոչ ներէ վաստակոց կալ առանց ոսոխի, կացուցին զնա նախանձորդ Կորբուլոնի. և ցանկայր նա հաւասարել փառաց նուաճման հայաստանի, հարկանելով զապստամբս։ Վասն որոյ առ 'ի յարձակել 'ի Մոնա կղզի, որ հզօրն էր բնակչօք և ապաստան փախստականց, լաստափայտս տափարակս ետ կառուցանել վասն ծանծաղ և վտանգաւոր ծովեզերացն, որովք հասոյց անդր զհետևակ զօրականն, զհեծելազօրն անցուցեալ ընդ հուն կամ 'ի լոր՝ ըստ ջուրցն խորութեան։

Լ. Կայր առ ծովեզերքն Ճակատեալ թշնամին ամբարակուռ զինուք և զօրաք. ընթանային 'ի միջի կանայք 'ի ձև վշկապարկաց գիսախուիք և սևազգեացք, ջահ 'ի ձեռին. և քրմուհիք շուրջ կացեալ, ձեռս յերկինս ամբարձեալ, հեղուին անէծս ահագինս։ Ի նորանշան տեսլենէն պակեան զօրքն, և որպէս թէ երիթացեալ՝ կային անշարժ 'ի նշաւակ նետից. մինչև ապա քաջալերեալ 'ի զօրավարէն՝ խրախուսեցին ընդդէմ կանացի և մոլեռանդն գնդին, և զընդդիմակացս տապաստ արկեալ, խանձողք նոցա շուրջ պաշարեցին զնոսա։ Եւ ապա պահս 'ի վերայ պարտելոցն կացուցեալ, հատին զանտառս նուիրեալս խուժադուժ կրօնից՝ որ արժան համարէր արեամբ գերեաց թանալ զբագինս, և յընդերս մարդկան հմայել զկամն դից։ Եւ մինչդեռ այսոցիկ պարապէր Սուետոնիոս, ազդ եղև նմա ապստամբել գաւառին յեղակարծումն։

ԼԱ. Պրասուտագ արքայ Իկենաց, բազմամեայ մթերեալ Հոխութեամբն անուանի, թողեալ էր ժառանգ իւր կտակաւ զինքնակալն ընդ երկուս դստերս իւր, կարծեցեալ յապահովել այսուիկ'ի վտանգէ զթագաւորութիւն իւր և զտուն. այլ հակառակն պատահեաց, զի զարքայութիւն նորա հարիւրապետք, և զտուն նորա գերիք, որպէս թէ յաւարի առեալ, աւերեցին։ Նախ առաջին զկին նորա Բովադիկէ գան հարին, և զդստերս նորա բռնաբարեցին. և ապա, իբր այն թէ երկիրն ողջոյն ինքեանց էր պարգևեալ, զմեծամեծս ազգին 'ի հայրենի ընչից կողոպտեցին, և զարքայազունս 'ի գերութիւն վարեցին։ Բայց Իկենք 'ի թշնամանաց աստի և յերկիւղէ ծանրագունիցն, տեսանելով զաշխարհն իւրեանց 'ի մարզ յեղաշրջեալ, զէն առին. և միաբանեալ ընդ իւրեանս յապստամբութիւն զՏրիենոբս և զայլս յազգաց՝ որ չևևս նուաճեալ էին 'ի ծառայութիւն, ուխտ եդին ստանալ դաւով զազատութիւն։ Ոխերիմ թշնամութիւն նոցա էր ընդ հինաւուրց զօրականին, որ հատուած 'ի Կամուլոդոն դեռևս էկեալ՝ զընակիչս 'ի տանց իւրեանց և զտեարս յանդաստանաց հալածէին որպէս գերեալս, ստրուկս զնոսա կոչելով. և զօրականն օգնէր ապիկարութեան նոցա, զինուորակցութեամբն և յուսով հանգունատիպ ազատութեան։ Հանդերձ սոքիմբք և մեհեանն, կառուցեալ'ի պատիւ դիւցազնին Կլաւդեայ, թուէր նոցա որպէս դղեակ մշտնջենաւոր տիրապետութեան 'ի վերայ իւրեանց. և ընտրելոցն 'ի քրմութիւն հարկ լինէր սպառել զգոյս իւրեանց 'ի սպաս նորոյ պաշտամանն։ Եւ ոչ դժուարին ինչ թուէր ցրուել զգաղթականն անպատասպար, որում զօրաւորքն մեր ոչ զգուշանային, պարապեալք զբօսանաց քան կարևորաց։

ԼԲ. Մինչ դեռ այս անցք անցանէին, անկաւ 'ի Կամուլոդոն՝ առանց իրիք յայտնի պատճառի՝ պատկեր դիցն յաղթութեան յետս կոյս 'ի կերպ փախստի յերեսաց թշնամեաց։ Կանայք մոլեգնեալք գուժէին զմօտալուտ կորուստ, և ձիչ արտաքուստ 'ի խորհրդարանի անդ լսելի լինէր. հնչէր տեսարանն յողբոց, և տիպ կործանելոյ քաղաքին 'ի ծուփս Ցամեսեայ գետոյ երևութանայր. Ովկիան ներկեալ յարենէ, և տատանէին 'ի

մկանունս նորա պատկերը մարդկեղէն դիականց։ Զայս ամենայն պատմէին բրիտանացիք 'ի յոյս բարենշան, իսկ հինաւուրց զօրք առ տագնապ երկիւղի։ Սուետոնիոս հեռի կայր յայնժամ, և խնդրեցին նորա 'ի Կատոսէ Դեկիանոսէ փոխանորդէ նորա օգնականութիւն. այլ սա ոչ ինչ աւելի քան զերկերիւր մեկնակազէն զինուորս առաքեաց. իսկ 'ի նեղքս անդ էր գունդ սակաւաձեռն։ Բայց վստահացեալ յամրութիւնս մեհենին, և համախոհից ապստամբացն խռովս արկանելով 'ի խորհրդեան, ոչ փոսս հատին, ոչ պատնէշս կանգնեցին, և ոչ զծերս և զկանայս զերծուցին. այլ մանկտին ևեթ անզգոյշ որպէս 'ի ժամանակի խաղաղութեան զդէմ կալեալ՝ յամբոխէ բարբարոսացն պաշարեցաւ։ Այնենայն ինչ յասպատակելոյ նոցա եղև այրեացաւեր. մեհեանն իսկ, ուր զօրքն էին համախմբեալ, երկօրեայ պաշարմամբ առաւ. և 'ի գալ հասանել Պետիլիոսի Կերիալեայ փոխանորդ զօրագլխի ինքներորդ լեգէոնին յօգնութիւն, ելին բրիտանացիք յաղթողք ընդդէմ նորա, հարին զլեգէոնն, և կոտորեցին զայրուձի նորա։ Կերիալ խոյս ետ հեծելովքն իւրովք 'ի բանակն, և պատսպարեցաւ 'ի պատնէշս։ Կատոս ահաբեկեալ կոտորածիւն, և ատելի լեալ գաւառացնոց՝ զի 'ի զօշաքաղութենէ ածեալ էր 'ի պատերազմն, փախեաւ 'ի Գալլիա։

ԼԳ. Բայց Սուետոնիոս նորանշան արիութեամբ ընդ մէջ թշնամեաց անցեալ գնաց 'ի Լոնդինիոն, որ թէպէտ և ոչ պատուեալ անուամբ գաղթականութեան՝ այլ վաճառականացն և եկաւորաց բազմութեամբ էր յոյժ հռչակաւոր։ Խորհէր առնել անդ ասպարէզ մարտի. բայց զի սակաւք էին զօրք զիւրև, և օրինակաւ պարտութեան Կերիալեայ խրատեալ, ընտրեաց լքանել զքաղաքն՝ առ 'ի պահել զգաւառն ողջոյն. և անտես արարեալ զաղերս և զարտասուս բնակչացն՝ որ խնդրէին զպաշտպանութիւն նորա, փող եհար 'ի չու, ընկալեալ 'ի բանակն՝ զորս կամէին գալ ընդ իւր։ Իսկ որք 'ի տկարութենէ անաւագ բնութեանն և 'ի ծերութենէ կամ 'ի քաղցրութենէ հայրենեաց խափանեցան, սրախողխող եղեն 'ի թշնամեաց։ Ջնոյն աղէտս կրեցին և վերուլայիք. զի թողեալ բարբարոսաց զա-

մուրս և զզօրանիստ վայրս, դիմէին ուր առատագոյն էր կողոպուտ անպատսպար'ի զօրաց, խնդամիտք աւարաւ, անփոյթք զայլմէ ամենայնէ։ Հաւաստեն, եօթանասուն հազարաց՝ ընդ քաղաքացի և ընդ դաշնաւոր՝ լեալ կորուստ'ի տեղիս, զորս յիշատակեցի. զի չէր ինչ նոցա փոյթ գերի առնուլ կամ վաճառել և կամ որ այլ ինչ տուրևառ պատերազմի, այլ կոտորած, կախաղան, հուր և սուր, և գուշակելով իմն զի զչարեացն մնայր ինքեանց կրել զպատուհաս, կանխէին'ի վրէժխնդրութիւն։

ԼԴ. Սուետոնիոս ունէր ընդ ձեռամբ զչորեքտասաներորդն լեգէոն՝ հանդերձ դրօշակրօք քսաներորդին, և'ի շրջակայից ազգաց օժանդակ զօրաց բիւր մի սպառազէն. և փութացեալ ելանել'ի ճակատամարտ՝ ընտրեաց վայր անձուկ'ի մուտս, և փակեալ յետկուսէ անտառաւ՝ լինել յասպահովի, զի'ի դիմաց ևեթ կային իւր թշնամիք, և դաշտ բացարձակ զառաջեաւ աներկիւղ'ի դարանաց։ Ընդ զկայ առեալ՝ կացոյց'ի միջի զլեգէոնն կուռ'ի ռազմն, շուրջանակի զհետևակազօրն մեկնակալէն, և զայրուձին համախումբ'ի թևս։ Իսկ բրիտանացիք հեծեալք և հետևակք խառն'ի խուռն յարձակէին, առաւելագոյն բազմութեամբ քան յայլ պատերազմունս, և այնու խիզախմամբ՝ զի ականատես յաղթութեան իւրեանց ածեալ էր նոցա ընդ իւրեանս զկանայս, և'ի սայլս վաչեայս շուրջանակի յեզերս դաշտին կացուցեալ։

ԼԵ. Բովադիկէ ածէր զդստերսն ընդ իւր'ի կառս. և ազգաց՝ ընդ որս անցանէրն՝ ասէր. Սովոր են բրիտանիկք ընդ հրամանաւ դշխոյին իւրեանց պատերազմել. այլ ես թէպէտ և'ի թագաւանց նախնեաց սերեալ՝ ոչ'ի խնդիր թագաւորութեան և գանձուց գամ; այլ որպէս զմի'ի հասարակածին ռամկէն՝ զկորուսեալոյ ազատութեանս իմոյ և զմարմնոյս կոշկոձելոյ, և զթշնամանելոյ համեստութեան դստերաց իմոց խընդրել զվրէժ. ցայն վայր հռովմայեցւոցն ցանկասիրութեան զառածեալ, զի ոչ զմարմին, ոչ զհասակ ծերութեան, և ոչ զկուսութիւն թողուն անապական։ Բայց օգնական են դիք արդար վրէժխնդրութեան. բեկաւ լեգէոնն յանդգնեալ'ի պատերազմ, և այլք յամուրս

թագեան կամ՝ի փախուստ դառնան. ոչ կարասցէն նոքա հանդուրժել և ոչ դրընդման և աղաղակի այնքա-նեաց բիւրաւորաց, թող թէ յարձակման և հարուա-ծոց։ Եթէ զբազմութիւն զօրաց և զպատճառս պա-տերազմիս զմտաւ ածիցէք ընդ իս, ՝ի միտ առնուցուք՝ զի պարտ է ինձ յաղթել կամ մեռանել՝ի ձակատա-մարտի աստ. այս պահի կնոջ. արանց է կեալ և զծա-ռայութիւն յանձն առնուլ։ —

ԼԶ. Եւ ոչ Սուետոնիոս՝ի մեծի վտանգին լուռ կայր. թէպէտ և վստահ՝ի քաջութիւն իւրոյն, սակայն յոր-դորէր զնոսա և աղերսէր՝ արհամարհել զորոտընդոստ և զնոտի սպառնալիս բարբարոսաց, և ասէր. Այստա-նօր կանանի քան զօրականս տեսանէք, ամբոխ ապի-կար և ապաշէն, որ՝ի բազում պատերազմունս՝ի պար-տութիւն մատնեալ, ընդ տեսանել զզէնս և զզօրու-թիւն յաղթականաց՝ խոյս տացեն՝ի բաց։ Ի յոգնա-խումբ իսկ լեգէոնս՝ նուազունք առաքինացեալ յաձա-խեն իւրեանց փառս, և գունդ սակաւաձեռն զբոլոր բանակին ստանայ զհամբաւ. ամրակուռք արդնընկեցք՝ի թշնամիս՝ սուր ընդ վահան շկահեալ, լերուք ան-դադար՝ի կոտորած, և մի՛ զաչս յաւար արձակիցէք. զի՝ի յաղթելն՝ ամենայն ինչ ձեր լիցի։ — Եռանդն այնպիսի՝ի բանից աստի զօրավարին արծարծեցաւ՝ի նոսա, և այնպիսի ձօձել նիզակաց հինաւուրց և պա-տերազմափորձ զօրականին, զի Սուետոնիոս աներկե-ւան՝ի յաղթութիւն՝ փող եհար՝ի պատերազմ։

ԼԷ. Լեգէոնն՝ի սկզբան անդ անշարժ կայր՝ ամրա-ցեալ կրձիւն, և՝ի մօտել թշնամւոյն՝ սպառեալ՝ի նա անվրէպ հարուածովք զնետս, ապա գունդ կազմեալ՝ի դուրս յարձակեցաւ։ Ձհետ նորա փողեցին և գունդք օժանդակք, հարան ընդդիմամարտք՝ի հեծելոց, և այլք թիկունս դարձուցեալ՝ դժուարին փախստեամբ զերծան ընդ մէջ սայլից, որ խափանէին զանցս։ Ոչ խնայեցին զօրքն և ոչ՝ի կանայս. և դրաստք իսկ ան-կեալք նետահար յաձախէին զշեղջակոյտս դիականց։ Յաղթութիւնն այն նախնեացն՝ յաղթութեանց հաւա-սարեալ փառօք, եկաց նշանաւոր, զի են՝ որք իբր ութ-սուն հազարս՝ի բրիտանացւոց անտի աւանդեն ան-կեալս. իսկ՝ի մերոց չորեքարիւր միայն, և սակաւ ինչ

աւելի վիրաւորեալք։ Բովադիկէ դեղ առեալ զրաւեցաւ 'ի կենաց. և Պենիոս Պոստումոս, հրամատար երկրորդի լեգէոնին, 'ի լուր յաղթութեան չորեքտասաներորդ և քսաներորդ լեգէոնաց՝ վասն զրկելոյ զիւրն 'ի փառաց անտի և ընդդէմ զինուորական հրահանգաց չհնազանդելոյ զօրավարին, ընդ իւր զէնս ելանէր։

ԼԸ. Եւ ապա համախմբեալ բանակն առ հասարակ կայր ընդ խորանօք կազմ 'ի կատարել զպատերազմն։ Յաւել ինքնակալն առաքել անդր 'ի Գերմանիոյ երկուս հազարս 'ի լեգէոնականաց, ութ գումարտակս 'ի նիզակակցաց, և հազար այրուձի. որոց գալըստեամբն լցաւ ինն երորդի լեգէոնին պակասորդ. գումարտակք և հեծեալք զկայ առին 'ի նորակերտ ամրոցս, և որք միանգամ յազգաց կեղակարծքն լեալ էին կամ հակառակորդք, 'ի հուր և 'ի սուր դատեցան։ Այլ առաւել քան զամենայն ինչ տագնապէր զնոսա սով, զի անպիտոյթ լեալ էր նոցա վարել զանդաստանս՝ զինուորեալ զսրբունս առհասարակ, և զհամբարս մեր իւրեանց համարեալ. սակայն ազգքն այնոքիկ վայրենիք դժուարամիտք են 'ի խաղաղութիւն։ Յուլիոս Կլասսիկիանոս, յաջորդ Կատոսի և հակառակորդ Սուետոնիոսի, զատելութիւն իւր խափան էարկ օգտի հասարակաց, և համբաւէր զի այլոյ տեղակալի պէտք էին, որ առանց թշնամաբար սաստից և յաղթողաբար գոռոզութեան՝ գթութիւն ընդ զէնընկէցս առնիցէ։ Եւ արար նամականի 'ի Հռովմ, զի չէր հնար զրաւ առնել պատերազմին՝ եթէ ոչ այլ ոք գայր 'ի տեղի Սուետոնիոսի, զձախողութիւն զամենայն 'ի նա հանեալ վասն ոչ բարւոք առաջնորդութեանն, և զյաջողակս 'ի բարեբաղդութիւն հասարակապետութեան։

ԼԹ. Վասն որոյ Ներոն յղեաց 'ի տեղեկութիւն իրաց Բրիտանիոյ զմի 'ի ձերբազատից իւրոց զՊոլիկլետ, յուսով մեծաւ՝ ոչ միայն միաբանելոյ զտեղակալն ընդ գործակալին, այլ և զվտարանջութիւն ապստամբացն ցածուցանելոյ։ Եւ յաջողեցաւ Պոլիկլետեայ անցանել ընդ Ովկիան՝ հանդերձ յոգնախումբ գնդօք Իտալիոյ և Գալլիոյ, ահարկու եղեալ մերոց իսկ զօրաց, այլ թշնամեաց ծաղր կացեալ. զի սոքա սիրով աղատութեան վառեալ, չևևս ճանաչէին զզօրութիւն ձերբազատից,

և զարմանային՝ զի զօրավարն և բանակ նորա, յաղ-
թողք մեծի պատերազմին, մեծարէին զստրուկն։ Բայց
Պոլիկլետեայ մեղմաբար ցուցեալ Ներոնի զամենայն,
ետ կալ մնալ Սուետոնիոսի 'ի զօրավարութեան. այլ
ապա 'ի կորուսանել նորա նաւս քանի մի առ ծովե-
զերքն՝ հանդերձ թիավարօք, հրամայեցաւ որպէս
չեւեւ 'ի գլուխ տարեալ զմարտն՝ աւանդել զբանակն
'ի ձեռս Պետրոնիոսի Տուրպիլանեայ, որոյ լցեալ էր
ժամանակ բդեշխութեան։ Սա ոչ զայրացուցեալ ըզ-
թշնամիս, և ոչ նեղեալ 'ի նոցանէ, զփառս խաղաղու-
թեան յոյլ անգործութեամբ ստացաւ։

Խ. Ինքին ամի ՃԻրք կրկին չարահռչակք գործեցան
'ի Հռովմ, մին ժպրհութեամբ միոյ յատենակալաց ծե-
բակուտին, և միւսն միոյ 'ի ստրկաց։ Դոմիտիոս Բալ-
բոս, երբեմն կուսակալ՝ այր Ճոխ և անորդի, վասն
ալևորեալ ծերութեանն կայր 'ի վտանգի որոգայթից.
մի յազգականաց նորա Վալերիոս Փաբիանոս՝ որ թեկն
ածէր զաւագութեան, արար կտակ ստայօդ համա-
խոհութեամբ Վինիկեայ Հռուփինոսի և Տերեն-
տեայ Լենտիոսի, ասպետաց հռովմայեցւոց, որք միա-
բանեցին ընդ իւրեանս զԱնտոնիոս Պրիմոս և զԱսի-
նիոս Մարկելլոս 'ի նենգն։ Անտոնիոս էր յանդուգն,
ձեռներէց ամենայնի. իսկ Ասինիոս Մարկելլոս ա-
նուանի 'ի նախահաւ իւր Պոլլիոն, և ոչ ըստ բա-
ցուցն արհամարհելի, բայց միայն զի ծայր չարեաց
համարէր զչքաւորութիւն։ Արդ Փաբիանոս զկտակն
զայն տիրացոյց համախոհիւքն՝ զորոց ասացի, և այ-
լոլք ոմանք՝ ոչ հանգոյն նոցին երևելեօք։ Ցուցաւ
նենգութիւնն յատենի ծերակուտին, և դատապար-
տեցան ըստ կուռնելեան օրինաց Փաբիանոս և Ան-
տոնիոս՝ ընդ Հռուփինեայ և ընդ Տերենտեայ։ Մար-
կելլոս 'ի յիշատակ հաւուցն նախնեաց, և ըստ աղեր-
սանաց ինքնակալին զերծաւ 'ի պատուհասէ, այլ ոչ և
'ի վատահամբաւութենէ։

ԽԱ. Ինքին աւուր և Պոմպէոս Ելիանոս պատանի, որ
գանձապետն կացեալ էր, պատուհասեցաւ որպէս գի-
տակից չարեացն Փաբիանոսի, և աքսորեալ յԻտալիոյ,
արգելաւ նմա չերթալ 'ի Սպանիա՝ ուստի էր հայրե-
նեօք։ Ցնոյն նախատինս կրեաց և Վալերիոս Պոնտի-

կոս, որ առ 'ի զերծուցանել զպատժապարտս 'ի հարցափորձէ քաղաքապետին Հռովմայ՝ ածեալ էր զնոսա յատեան դատաւորին, պատճառանօք մեծարելոյ զօրէնս՝ խոյս տալ 'ի վրէժխնդրութենէ նոցա։ Յաւելաւ 'ի վՀիւռ ծերակուտին, զի որք գնէին կամ վաճառէին զՀամախոհութիւն այսպիսի, զնոյն կրեսցեն պատիժ՝ որ ինչ զրպարտօղք՝ յատենի հասարակաց դատապարտեալք։

ԽԲ. Յետ ոչ բազում աւուրց՝ քաղաքապետն Հռովմայ Պետանիոս Սեկունդոս սպանաւ 'ի միջէ 'ի ստրկաց իւրոց, որ կամ զի չէր ընկալեալ զազատութիւն յետ դաշնադրութեան փրկանացն, և կամ զի տրտփեալ 'ի մի 'ի պատանեաց՝ դժկամակէր ընդ տէր իւր հակատրփող։ Եւ իբրև ըստ նախնի սովորութեան զամենայն իսկ գերին բնակակից 'ի տան անդ 'ի խոշտանգանս հարցափորձի մատուցանել կամէին, յարեաւ աղմուկ 'ի խռան ժողովրդեան՝ որ պաշտպանէրն անմեղաց բազմաց. և 'ի ծերակուտէն իսկ յոգունք պարսաւէին զկարի խստութիւնն զայն. այլ բազմագոյնք ոչ բարուք համարէին փոխել ինչ։ Յորոց Կ. Կասիոս, 'ի հասանելն նմա տալ դատաստան, խօսեցաւ այսպէս.

ԽԳ. Հարք ատենակալք, բազում անգամ գտայ ես յատենի աստ 'ի խնդիր՝ վՀիւռս տալոյ ծերակուտին ընդդէմ նախնեացն սահմանադրութեան և օրինաց, և ոչ կացի հակառակ. իբր ոչ եթէ երկբայելով՝ զի լաւ քան զմեզ խորհէին զամենայնէ նախնիք մեր, և որ ինչ նորոգէրն՝ փոխէր 'ի յոռեգոյն, այլ զի երկնչէի թէ գուցէ ծայրայեղ նախանձու նախնեացն սովորութեան՝ զՅանս իմ կացուցանել թուիցիմ։ Եւ դարձեալ՝ զի ոչ բարուք թուէր ինձ, որ ինչ զօրութիւն է մեզ՝ կորուսանել յաճախ ընդդիմաբանութեամբ, այլ անանուազելի ունել զայն վասն ժամուց՝ յորս պէտք իցեն խորհրդոց յոգուտ հասարակապետութեան. և ահա ժամն այն հասեալ։ Զի այր՝ որ երբեմն բդեաշխն էր՝ սպանանի 'ի տան իւրում դաւաճանեալ 'ի ծառայից իւրոց, առանց ծառայակցացն արդելոյ զդաւն կամ յայտնելոյ զայն, մինչ դեռ ևս հաստատուն կայ վՀիւռ ծերակուտին՝ որ ամենեցուն նոցա սպառնայ պատուհաս։ ՎՀռեցէք արդ աղէ զազատութիւն

'ի պատժոց. այլ ո՞ այսուհետև կարասցէ պահել զպա-
տիւ իւր, որում և ոչ քաղաքապետութիւն Հռովմայ
օգնեսցէ. ո՞ այսուհետև 'ի բազմութիւն ծառայից վըս-
տահասցի, ուր չորեքհարիւր ծառայք ոչ պաշտպանե-
ցին Պետանիոսի. ո՞ւմ օգնեսցեն սպասաւորք, որք եր-
կիւղիւ իսկ պատժոց անկարեկիր 'ի վտանգս մեր կան։
Թերևս, որպէս ոչ ամօթ համարին ոմանք պատճառել,
զի զվրէժ իւր խնդրէր սպանօղն յանիրաւէ. իբր թէ 'ի
հայրենի գոյից հայթայթեալ էր զիրկանն, կամ 'ի
հաւուց ժառանգեալն ազատութիւն յափշտակէր 'ի
նմանէ. գրեսցուք ևս՝ զի իրաւամբք լինէր տիրասպան.

ԽԴ. Օրէ՞ն իցէ խնդիրս յարուցանել զնրաց, որ յի-
մաստնագունից քան զմեզ են սահմանեալ. եթէ արդ
իսկ առաջի կայր մեզ սահմանել, համարիք զի ծառայ՝
որ զտէր իւր մտաբերէ սպանանել՝ կարասցէ ծածկել
զխորհուրդ իւր առանց ինչ սպառնական և յանդուգն
բանից։ Ա.յլ թող ծածկեալ իցէ զխորհուրդ իւր,
թող յանգէտս այլոց պատրաստեալ զսուսեր, և ո՞րպէս
մարթ էր նմա անցանել ընդ գիշերապահս, փակել
զդրունս սենեկին, լոյս ածել, և գործել զսպանու-
թիւնն յանզգաստից ամենեցուն։ Նշանք յոգունք կա-
րապետեն եղեռան. եթէ սպասաւորք մեր լինին մեզ
գուշակ, կարեմք ամենեքեան կեալ 'ի մէջ բազմաց, և
աներկեանք 'ի մէջ կասկածաւորաց. և եթէ կորընչ-
էլ իսկ հասանիցէ, ոչ առանց պատուհասի ճնասցէ
յանցաւորն։ Միշտ կասկածելի եղեն ստրուկք առ
նախնիս, ևս և ընդոծինք՝ սովորեալք 'ի տիրասիրու-
թիւն. այլ յորմէ հետէ յայլ և այլ ազգաց ունիմք ըստ-
րուկս 'ի տան՝ հակառակս սովորութեամբք, օտարո-
տիս ըստ կրօնից, կամ ընաւ իսկ անկրօնս, երկիւղիւ
եթէ զխառնաղանձ խուժանն մարթէ մեզ սանձահա-
րել։ Կորիցեն և անպարտք ոմանք ընդ պարտաւորս,
զի և 'ի տասանորդել զգունդս փախըստեայս 'ի գանա-
կոծ մահ՝ քաջք ևս ոմանք ընդ վատս վիճակին. պա-
տուհասք ծանունք ոչ անմասն են 'ի չարեաց, այլ չա-
րեօք ոմանց՝ օգուտ հասարակաց տնօրինի։ —

ԽԵ. Ա՛ռ այս դատաստան Կասիոսի, որում ոչ ոք իշ-
խէր կալ հակառակ, շշնջէին տարաձայն պատասխա-
նիք՝ խնայել 'ի բազմութիւն 'ի հասակ և յանաւագ

բնութիւն պատուհասելեացն, և մանաւանդ 'ի յայտնի անմեղութիւն բազմաց. սակայն յաղթեաց կալաւ վՀիւ այնոցիկ՝ որ կամէին ընդ պատուհաս նոցա, այլ չէր մարթ նուաՀել զամբոխն խռնեալ անդր, որ զքաջանոց և զջահիլ բուռն հարկանէր։ Յայնժամ ինքնակալն հրովարտակաւ սաստեալ ամբոխին, զՀանապարհն զամենայն՝ ընդ որ դատապարտեալքն ածէին 'ի պատուհաս՝ ետ պատել զօրօք առ 'ի պահ։ Կինգոնիոս Վարրոն առաջարկէր, զՁերբազատս՝ բնակակիցս յանցաւորացն՝ աքսորել Լոտալիոյ. բայց արգել զայն ինքնակալն, զի մի 'ի վաղեմի սովորութիւնն՝ զոր գթութեան չէր մեղմեալ՝ յաւելցի խստութիւն։

Խզ. Առ նովին բդեշխիւք Տարկուիտիոս Պրիսկոս ամբաստանեալ 'ի բիւթանացւոց 'ի յանցանս հարստահարութեան, դատապարտեցաւ 'ի խնդութիւն ատենակալաց ծերակուտին, որք յիշէին զՍտատիլիոս Տաւրոս՝ զփոխանակն բդեշխի տեղակալ նորին՝ դատափետեալ 'ի նմանէ։ Յանձնեցաւ Կ. Վոլուսեայ, Սեքստիոսի Աֆրիկանոսի, և Տրեբելլեայ Մաքսիմոսի, աշխարհագիր առնել միւսանգամ բնակչաց Գալլիոյ. և 'ի վիՀել Վոլուսեայ և Աֆրիկանեայ ընդ միմեանս զազգնուականութենէ, նախամեծար եղև արհամարհեալն 'ի նոցանէ Տրեբելլիոս։

Խէ. Ի սմին տարւոջ մեռաւ Մեմմիոս Հռեգուլ, այր երևելի և մեծարոյ ըստ անյողդողդ հաստատութեանն և ըստ բարեհամբաւութեան, որչափ ընդ հովանեաւ բարձրութեան ինքնակալի է հնար. որպէս զի 'ի միում աւուրց յորժամ խօթացեալ կայր Ներոն, շուրջ պատեալ 'ի մարդահաՀոյից՝ որք ասէին կործանել ինքնակալութեան եթէ հասանէր նմա մահ, ասէ. Գոյ իսկ միւս այլ նեցուկ հասարակապետութեան։ Եւ 'ի հարցանել նոցա թէ ո՞, ասէ. Մեմմիոս Հռեգուլ։ Եւ յերկարակեաց եղև Հռեգուլ 'ի լուռ կենացն պաշտպանեալ, և զի դարձեալ չէր մեծազգի 'ի նախնեաց, և ոչ Ձոխ 'ի գրգիռ նախանձոտաց։ Ի սմին ամի արար Ներոն զնաւակատիս կրթարանին կառուցելոյ յիւրմէ, և յունական առատաձեռնութեամբ բաշխեաց ձէթ ասպետաց և ծերակուտին։

Խր. Առ Պ. Մարիոսիւ և Լ. Աւինեաւ բդեշխիւք,

Անտիստիոս դատաւոր՝ որ յորժամ հաղարապետն էր ժողովրդեան՝ նշանաւոր լեալ էր համարձակութեամբն, որպէս ասացի, յօրինեալ տաղ երգիծական ընդդէմ ինքնակալին, և ընթերցեալ զայն յակըմբ բահոյլ կոչուն Ոստորիոսի Սկապոլայ, ամբաստանեցաւ 'ի քրէական յանցանս 'ի Կոստուտիանոսէ Կապիտոնէ, որ 'ի նոյն աւուրս ընկալեալ էր 'ի ժողով ծերակուտին՝ ըստ աղերսանաց Տեգելլինեայ աներոյ իւրոյ։ Անդ նախ նորոգեցան օրէնքս այս, և խնդիր նորոգմանն թուէր ոչ 'ի կորուստ Անտիստեայ՝ այլ 'ի պատիւ ինքնակալին, համարելով անդատապարտ արձակել զնա Ներոնի հաղարապետական իշխանութեամբն։ Ոստորիոս կոչեալ 'ի վկայութիւն, ասէր՝ ոչ ականջալուր լեալ իւր, այլ հակառակորդաց վկայից հաւատս ընծայեալ։ Յունիոս Մարուլ ընտրեալ 'ի բդեշխութիւն, ասէր՝ ընկենուլ զյանցաւորն 'ի դատաւորութենէ, և մատնել 'ի մահ ըստ նախնեացն սովորութեան. և 'ի հաւանել այլոց ընդ այն, Պետոս Թրասէաս՝ բազում մեծարանօք ինքնակալին՝ սաստկապէս կշտամբեալ զԱնտիստիոս, յաւել. Ոչ որ ինչ յանցաւորին արժան է կրել՝ պարտ իցէ վճռել առ բարեգութ ինքնակալաւ, ազատ գոլով ծերակուտին 'ի հարկէ. վաղ իսկ բարձան դահիճք և խեղդք, և օրինադրեցան պատիժք՝ որովք առանց խստութեան դատաւորաց, և չարահամբաւելոյ զաւուրս մեր, պատուհասին յանցաւորք։ Անտիստիոս կապտեալ 'ի դոյից, աքսորեալ 'ի կղզի ուրեք, ցոր վայր զյանցաւոր կեանս իւր յերկարաձգեսցէ, խելամուտ լիցի թշուառութեան անձին, և կացցէ օրինակ մեծ հասարակաց զթութեան։ —

Խթ. Համարձակութիւն Թրասեայ ետ և այլոց ամենեցուն ազատութիւն. և 'ի ներել բդեշխին տալ զիւրաքանչիւր դատաստան, ամենեքին 'ի կարծիս նորա անկան, բաց 'ի սակաւուց ոմանց՝ յորս էր և Ա. Վիտելլիոս, այր մարդահաճոյ, թշնամանօղ լաւաց, և համր 'ի պատասխանել առարկութեանց՝ որպէս սովորութիւն է վատաց։ Սակայն բդեշխից ոչ իշխեալ հատանել վճիռ, գրեցին միաբան առ ինքնակալն. նորա վարանեալ զառաջինն ընդ ամօթ և ընդ ցասումն, գրեաց ապա պատասխանի՝ զի Անտիստիոսի, քանզի

առանց անիրաւութիւն ինչ կրելոյ՝ Թշնամանս ծանունս արարեալ էր ինքնակալին, պարտ էր ծերակուտին զվրէժ Թշնամանաց նորա խնդրել, և յաւելոյր. Ապաքէն արժան է ըստ ծանրութեան յանցանաց կրշռել զպատուհաս. այլ իմ յառաջադրեալ արգելուլ ըզխստութիւն, ոչ ընդդէմ դառնամ գթութեան. սահմանեցէք զոր կամիք, տուեալ ձեզ իշխանութիւն՝ անպարտ իսկ արձակելոյ զնա։ — Յընթեռնուլ գրոյն, յորում յայտնի երևէր զայրոյթ ինքնակալին, անդրդուելի կացին բդեաշիք, և ոչ տեղի ետուն 'ի կարծեաց իւրեանց՝ ոչ Թրասէաս, և ոչ համախոհք նորին. կէսք՝ զի մի ատելի արասցեն զինքնակալն, և բազումք 'ի Թիւ իւրեանց վստահացեալ. իսկ Թրասէաս անյողդողդ հաստատութեամբն, և վասն անկորուստ պահելոյ զփառս իւր։

Ծ. Ի հանգոյն ինն յանցանս ամբաստանեցաւ Փաբրիկիոս Վէենտոս, վասն բազում Թշնամանալից բանս ընդդէմ Հարց ծերակուտին և քրմաց գրելոյ 'ի մատենին՝ զոր մակագրէր յաւելուած 'ի կտակ իւր։ Դատախազ նորա Տալիոս Գեմինոս ամբաստանէր զնմանէ և ևս՝ վաճառեալ նորա զշնորհս ինքնակալին, և զիրաւունս բարձի և աւագութեան. վասն որոյ Ներոն անձին պահեաց զդատաստան նորա։ Վէենտոս պարտաւորեալ՝ աքսորեցաւ յԻտալիոյ, դատապարտեցաւ 'ի հուր մատեան նորա՝ զոր ամենեքեան խնդրէին 'ի ձեռս բերել յորժամ վտանգաւորն էր, այլ ապա ազատութիւն 'ի վտանգէ էարկ զայն 'ի մոռացօնս։

ԾԱ. Բայց 'ի ծանրանալ տակաւ հասարակաց չարեաց, նուազէին օգնականք պետութեանն։ Բուրրոս զրաւեցաւ 'ի կենաց, օրհասիւ թէ դեղով՝ ոչ է յայտ. համարեցաւ օրհասիւ վասն ուռուցից 'ի կոկորդն զայրանալոյ և բառնալոյ ընդ շնչոյն զկեանս նորա. բայց բազումք հաստատէին՝ թացեալ 'ի հրամանէ Ներոնի զկոկորդ նորա թունով իբր սպեղանեաւ. զոր զգացեալ Բուրրոսի, 'ի գալ Ներոնի առ ինքն յայց՝ դարձուցեալ ասեն զերեսս իւր 'ի բաց, և առ հարցուած նորա զողջունէ իւրմէ՝ պատասխանի տուեալ թէ բարուք կեայր։ Յիշատակ նորա եկաց մնաց 'ի Հռովմ միշտ մեծարոյ վասն առաքինութեան նորա, ևս առաւել

վասն միոյ 'ի յաջորդաց նորա անգործ յուլութեան, և միւսոյն ապիրատութեանց և շնութեանց. զի ինքնակալին հրամատարս երկուս 'ի տեղի նորա կացուցեալ էր 'ի վերայ քաղաքական գնդաց, զՓենիոս Հռուփոս՝ զի ունէր շնորհս առ ժողովրդեան վասն յանձանձելոյ զպարէնս առանց զօշաքաղութեան, և զՍոփոնիոս Տիգելլինոս վասն բազմամեայ զեղծ բարուցն և չարահամբաւութեան։ Ըստ ծանօթ բարուց նորա եղեն և ելք իրացն. Տիգելլինոս եկաց հզօր առ ինքնակալին, և գործակից պղծութեանց նորա գաղտնեաց. իսկ Փենիոս մեծարեալ 'ի ժողովրդենէ և 'ի զօրաց, որ չէր ինչ հաճոյ ինքնակալին։

ԾԲ. Մահուամբն Բուրրոսի բեկաւ զօրութիւն Սենեկայ. զի ոչ ևս նոյն յաջողութիւն էր լաւ որերոյ՝ 'ի բառնալ միոյ յառաջնորդացն, և Ներոն յօժարէր 'ի չարս. որք սկսան իսկ յարձակիլ չարախօսութեամբք 'ի Սենեկա, զի ասէին թէ մեծութիւնք նորա ամբաւք 'ի վեր էին քան զչափ առն սոսկականի, և զի տակաւին գուն գործէր մեծանալ, և ընդ հուպ գէր 'ի վերոյ քան զինքնակալն գտանէր մեծագործ և բազմազուարճ ամարաստանօք։ Ամբաստանէին դարձեալ՝ զի զպարծանս ճարտարիմաստութեան յինքն գրաւէր, և յաճախագոյն յօրինէր տաղս՝ յորմէ հետէ Ներոնի իղձք էին տաղաչափելոյ. և զի պարսաւադէտ լեալ զբօսանաց ինքնակալին՝ եպերէր յայտնապէս զձիավարութիւն նորա, և զձայն նորա 'ի նուագել նորին ծաղրէր։ Եւ յաւելուին. Մինչև ցՁրբ արգասիք հնարագիտութեան նորա համարեսցին որ ինչ 'ի հասարակապետութեան գործին բարիք. լցեալ է ապաքէն ժամանակ մանկութեանն Ներոնի, և յաստիս պատանեկութեան ժամանեալ. ժամ է արդ զերծանելոյ նմա 'ի մանկածուէ, շատ իսկ վարժեալ 'ի վեհագոյն վարժապետաց 'ի նախնեաց իւրոց։ —

ԾԳ. Իրազեկ եղև Սենեկա 'ի ձեռն ոմանց, որոց տակաւին փոյթ ինչ էր լաւութեան. և 'ի մերժել իւրում՝ 'ի մտերմութենէ ինքնակալին, խնդրեաց խօսել ընդ նմա. և հրաման ընկալեալ, սկսաւ այսպէս. Զորեքտասան ամք են, կէսարդ, յորմէ հետէ մատեայ 'ի յոյսդ ինքնակալութեան, և ութ՝ յորմէ հետէ ինք-

նակալէսդ. այնքան շնորհս և Ճոխութիւն յամենայն ժամանակի աստ զեղեր զինև, զի ոչ ինչ պակասէ երջանկութեանս իմում; բայց չափ և սահման նորին։ Օրինակս մեծամեծս ածից, ոչ յիմումն կարդէ՝ այլ'ի քումմէդ. նախահաւ քո Աւգոստ ներեաց Մ. Ագրիպպայ մեկնել առանձնանալ 'ի Միտիլինէ, և Կենիոսի Մեկենասայ 'ի Հռովմ՝ որպէս նժդեհ անզբաղ կեալ. յորոց մին համահարզ նորա 'ի պատերազմունս լեալ էր, և միւսն անցեալ ընդ ամենայն ազգի ազգի աշխատանս 'ի Հռովմ; և մեծամեծ մրցանակս փոխարէն բազում վաստակոցն ընկալեալ էին երկաքանչիւր։ Իսկ ես զի՞նչ այլ արժանիս բարերարութեանց քոց կարացի տալ, բայց վարժս գոգցես 'ի խաւարի անտեսաբար հայթայթեալ. որոց ամենայն պայծառութիւն անտի է, զի թուիմ նախակրթեալ զքոյդ մանկութիւն, որ մեծ իսկ վարձք են ինձ։ Իսկ դու լցեր զիս ամբաւ շնորհօք և գանձիւք, որպէս զի ասել ինձ յաճախ 'ի մտի՝ թէ ուստի՞ է ինձ, ասպետիս լոկոյ 'ի գաւառի ուրեք ծնելոյ, գալ'ի համար ընդ աւագանին Հռովմայ, և'ի մէջ ազնուականաց՝ ընդերկար պայծառացելոյ՝ ծագել նորանշոյլ։ Ասեն. Ո՞ւր ի՞նչ իմաստասիրութիւն սակաւապէտ. 'ի պարտէ՞զս արդեօք տընկեալս յիւրմէ, յորոց 'ի սէր դեգերի շուրջ զքաղաքաւս՝ ուր յաճախեն նմա անդաստանք, և զեղուն անսպառ մեծութիւնք։ Ընդդէմ այսպիսեաց բանից միակ պատասխանն այն է ինձ, զի չկարէի զպարգևս քո մերժել։

ԾԴ. Երկաքանչիւր լցաք արդ զչափ, դու որչափ ինքնակալ կարէ տալ բարեկամի, իսկ ես որչափ բարեկամ կարէ ընդունել յինքնակալէ, որպէս զի աւելին քան զայն դրդէ զնախանձ։ Ատորև են այդոքիկ, որպէս և ամենայն ինչ մարդկեղէն, քան զքոյդ մեծութիւն. այլ ծանրաբեռնեալ զինև՝ ընկճեն զիս, և կարօտ եմ օգնականութեան. որպէս զինուոր վաստակաբեկ, և ուղևոր պարտասեալ, խնդրեմ զհանգիստ 'ի Ճանապարհի կենցաղոյս. ծեր և ապիկար 'ի տոկ թեթև իսկ հոգոց, ոչ ևս զօրեմ; չկարեմ բառնալ զբեռն գոյից. ձեռն տուր ինձ, հրամայեա գործակալաց քոց տնտեսել զայնոսիկ, և 'ի քոյդ ընդունել։ Ոչ լիցի ինձ

այսուիկ անկանել՝ի կարօտութիւն. այլ՝ի բաց եղեալ զփայլ զբաղեցուցիչ, որ ինչ՝ի խնամոց ամարանոցաց հրաժեշտ յաւելու ինձ պարապ, հատուցից մտաց։ Դու յաստիս տիոցդ դեռ ևս կաս, և ինքնակալութիւն քո ամրացեալ է յայսքան ամաց. մեզ բարեկամաց քոց ծերունեաց լիցի այսուհետև կեալ շնորհապարտս՝ի հանգըստեան. որ և այս իսկ յաձախէ քեզ փառս, ամբառնալ յաւագութիւն զորս գիտենն համբերել տրուպ կենաց։ —

ԾԵ. Աւ այսոսիկ Ներոն արար ըստ այսմ պատասխանի. Ի քէն է ինձ պարգև եթէ պատրաստելոց բանիցդ հետ ընդ հետ առնեմ պատասխանի, որ ուսուցերդ ինձ և զբեղակարծից իրաց ապ յափոյ ձառել։ Աւգոստ նախահաւ իմ Ագրիպպայ և Մեկենասայ հանգիստ՝ի վաստակոց, այլ՝ի հասակի՝ յորում ալիք անընտգիւտ զնա կացուցանէին յամենայնի՝ որ ինչ և առնէրն և շնորհէր. սակայն ոչ զոք՝ի պարգևաց տուելոց յիւրմէ մերկացոյց։ Նոքա՝ի պատերազմունս և՝ի վտանգս, յորս Աւգոստ զպատանեկան հասակ իւր անցոյց, արժանի լեալ էին այնոցիկ. և ոչ ինձ զէն և բազուկ քո պակասէր, եթէ և ես պատերազմէի. այլ դու, որպէս հանգամանք ժամանակիս պահանջէին, բանիւք խորհրդով և վարժիւք զմանկութիւն իմ և զպատանեկութիւն խնամեցեր. և պարգևք քո առ իս յարատևեսցեն մինչև կեցից։ Որ ինչ ունիսդ յինէն, պարտէզք դանձք և ամարաստանք, ներքոյ արկածից բաղդին կան. և թէպէտ թուիցին յոլովք, այլ առաւելագոյնք քան զայնս եղեն այլոց՝ որք ոչ հաւասարեն վաստակոց քոց։ Սմանչեմ՝ի համար ածել զձերբազատս, որք ձոխագոյն քան զքեզ յօրանան. և ամենայն համարիմ, զի դու՝ սիրելագոյնդ ինձ՝ չև ևս առաւել քան զամենեսին իցես բարեկեցիկ։

ԾԶ. Զօրաւոր ես դու և առոյգ տիոքք, բաւական՝ի յանձանձանս իրաց և՝ի վայելս արգասեաց վաստակոցդ. իսկ ես դեռ ևս՝ի մուտս կամ ինքնակալութեանս։ Ոչ կարծեմ թէ դու զքեզ քան զՎիտելլիոս՝ որ երիցս եկաց բդեաշխ, և զիս քան զՎլադիոս ստորև համարիցիս, և զի չկարիցէ առատաձեռնութիւն իմ ընուլ որչափ ինչ Վոլուսիոս բազմամեայ ինա-

յուԹեամբն մԹերեաց։ Գիտես իսկ յորում մասին պատանեկուԹիւն իմ է գիւրասահ, և զգուշացուցանիցես զիս. և զկորով մտաց, զարդարեալ'ի քէն, առաւելագոյն խնամով զօրացուսցես։ Ոչ հրաժեշտ քո յրնչից՝ չափաւորուԹեան քում ընծայեսցի, և ոչ մեկնել քո յինէն խաղաղասիրուԹեան քում. այլ ագահուԹեան և անգԹուԹեան իմում համարեսցի յամենեցունց. եԹէ անընչասիրուԹիւն քո գովեսցի, այլ առն իմաստնոյ ոչ է վայելուչ վատահամբաւուԹեամբ բարեկամի առնել փառս անձին։ — Յայսոսիկ յաւելնէրն և համբոյր գրկախառն, որպէս բնաւորեալն էր և սովորուԹեամբ վարժեալ՝ ծածկել զատելուԹիւն ընդ նենգաւոր փաղաքշանօք։ Սենեկա շնորհս մատոյց նմա, որպէս սովորուԹիւն է վերջաբանել միշտ առ իշխանս. այլ փոխեաց զեղանակ առաջնոյ իշխանական կենացն, արգել զեկաւորաց ամբոխ յայցելուԹիւն, 'ի բաց արար զսպասս ուղեկցաց, և դուն ուրեք ելանէր արտաքս՝ որպէս անզօր առ խօԹուԹեան, կամ 'ի պարապմանէ գիտուԹեանց արգելեալ'ի տան։

Ծէ. Ի կորուսանել այսպէս Սենեկայ զշնորհս առաջի ինքնակալին, ոչ ինչ դժուարին էր չարախօսաց արկանել և զՓենիոս 'ի զօրուԹենէ, համարեալ նմա 'ի յանցանս զբարեկամուԹիւն Ագրիպպինայ։ Հզօրանայր օրըստօրէ Տիգելլինոս, և զչարարուեստ հնարս իւր՝ որովք ևեԹ Ճոխանայր, համարէր սիրելի ևս ընծայեցուցանել ինքնակալին՝ գործակից անօրէնուԹեանց նորա լինելով։ Վասն որոյ հետազօտեալ զկասկածանս նորա, գիտաց զի ոչ յումեքէ այնպէս երկնչէր՝ որպէս 'ի Պլաւտոսէ և 'ի Սիլլայէ, որք 'ի սակաւուց հետէ աքսորեալ կային, Պլաւտոս յԱսիա, և Սիլլա 'ի նարբոնեանն Գալլիա։ Յիշեցուցանէր ինքնակալին զաշնուականուԹիւն նոցա, և զմերձակայուԹիւն Սիլլայի 'ի բանակն արևելեան, և զՊլաւտոսի 'ի գերմանականն, և յաւելոյր. Ոչ այլ ինչ խնդիր է ինձ որպէս Բուրրոսի, այլ զապահովուԹիւն ևեԹ զքո խնդրեմ։ յերեսաց քոց սարսեն որ ինչ աստ 'ի քաղաքիս գործիցին դարանք, այլ զՀեռաւոր խլրտմունս զիաՀդ հնար իցէ նուաՃել. պատրաստ կայ Գալլիա 'ի ձայն իշխանապետական անուան, և ոչինչ նուազ կասկածելի են ազգք

Ասիոյ վասն պայծառութեան անուան Թոռինն Դրուսոսի։ Սիլլա չքաւոր է, վասն որոյ և յանդգնագոյն. կեղծաւորի նա կալ անփոյթ մինչև տացի նմա պարապ 'ի գործ դնելոյ զյանդգնութիւն. Պլաւտոս մեծափարթամ, 'ի վերին երեսս ոչ ցանկայ հանգստեան, այլ փառասիրէ հաւասարել նախնի հռովմայեցւոց. բերէ նա յանձին զստոյիկեան ժպրհութիւն, ըստ աղանդոյն՝ որ խռովարարս և ապստամբս յարդարէ։։ — Անյապաղ 'ի վեց աւուրս ածաւ Սիլլա 'ի ձեռն դահճաց 'ի Մասիլիա, և վաղ քան զամենայն կասկած և երկիւղ՝ սպանաւ 'ի բազմէն 'ի սեղան. և 'ի բերել սպանողաց զգլուխ նորա առ Ներոն, խաղ արար նա՝ ասելով տգեղացեալ զնա կանխահաս ալեօք։

ԾԸ. Զեղև հնար գաղտ պատրաստել մահ Պլաւտեայ, զի բազումք ցանկային կենաց նորա. և երկայնութիւն ուղղոյն ընդ ծով և ընդ ցամաք՝ տեղի ետ իրացն հռչակելոյ։ Համբաւէր՝ դիմեալ նորա առ Կորբուլոն՝ որ վերակացու էր յայնժամ մեծաց բանակաց, և առաւել քան զայլս կայր 'ի վտանգի՝ ուր փառք և անմեղութիւն՝ էին դատակնիք մահու։ Ցաւելոյր նմա 'ի յանցանս, որպէս թէ զէն առեալ ասիացւոց 'ի նպաստ պատանւոյն, և զինուորացն արձակելոց 'ի գործ անօրէնութեանն սակաւաւորք գոլով և ոչ յօժարք 'ի գործն, չկարացեալ կատարել զհրամանն՝ 'ի յոյս նոր ձեռնտու լեալ էին։ Զրոյցքս այսոքիկ ստայօդք կուտակէին յանգործ լսողաց, որպէս և ամենայն հռչակ համբաւոյ։ Բայց միոյ 'ի ձերբազատից Պլաւտեայ յաջողակ հողմով վաղ հասեալ առ հարիւրապետն, էած զպատուէր աներոյ նորա Լ. Անտիստեայ, մի դանդաղել 'ի պահպանութիւն կենաց իւրոց, զի մնայր նմա ապաւէն զայրոյթ ժողովրդեան, և գթութիւն 'ի շնորհս մեծի անուան նորա, և զի ոչ պակասէր լաւ որեար՝ ընդ որում միաբանէին յանդգունք, և զի դարձեալ եթէ ինքն վանէր և եթէ զվաթսուն զինուորս յղեալս 'ի վերայ իւր, մարթ էր՝ չև ազդ լեալ Ներոնի, և չև յղեալ նորա այլ զօրս, յաջողութեանց բազմաց 'ի դէպ պատահել՝ որովք զօրանայր ինքն 'ի պատերազմ։ Եւ կնիք բանիցն յաւելոյր, զի կամ գտանէր նա այսու խորհրդով զփրկութիւն, և կամ ոչ ինչ աւելի կրէր արիութեամբն քան վատութեամբ։

ԾԹ. Բայց Պլաւտոս ոչ շարժեցաւ 'ի բանից աստի. զի յերկիր օտար նժդեհ և անզօր՝ ոչ ուստեք ակն ունէր օգնականութեան, կամ զի տաղտկացեալ էր 'ի կենաց՝ ալէկոծ ընդ յոյս և ընդ երկիւղ. և կամ դարձեալ առ սէր կնոջն և որդւոց՝ զի մի՛ անողոքելի ընդ նոսա կացուսցէ զՆերոն, խռովելով զխաղաղութիւն նորա։ Են որք և այլ պատգամաւորս ասեն ընկալեալ նորա յանէրոյ իւրմէ, որպէս թէ ոչ ինչ 'ի դժնդակաց հասանէր նմա, և զի իմաստասէրքն Կերանոս յոյն և Մուսանիոս Ետրուրացի քաջալերէին զնա՝ յանձն առնուլ արիաբար զմահ քան զկեղակարծ և երկիւղալից կեանս։ Եւ գտաւ նա մերկ զմիջաւուրբ 'ի կրթանս մարմնոյ 'ի հասանել հարիւրապետին փողոտել զնա յանդիման Պելագոնի ներքինւոյ, զոր Ներոնի հրամատաբ կացուցեալ էր 'ի վերայ գնդապետին և գնդի նորա՝ որպէս արքունի պաշտօնեայ արբանեկաց իւրոց։ Այծաւ գլուխ սպանելոյն. և 'ի տեսանելն զայն ինքնակալին, ասաց այսպէս. Ջերծեալ արդ 'ի վտանգէ, և ընդէ՞ր ի՛ցէ ինձ չածել 'ի կատարումն զհարսանիս Պոպպէի՝ յամեալ ցարդ առ կասկածանաց, և չարձակել 'ի բաց զՈկտաւիա, որ թէպէտ և զգաստ՝ այլ վասն անուան հօր իւրոյ և սիրելութեան առ ժողովուրդն դժպհի է ինձ։ — Եւ արար նամականի առ ծերակոյտն, յորում լռեալ զսպանութենէ Սիլլայի և Պլաւտեայ՝ զերկոսին ևս ցուցանէր խռովարարս, և բազմազեղ զինամն իւր 'ի պահպանութիւն հասարակապետութեան։ Յայնժամ սահմանեցաւ գոհութիւնս մատուցանել դից, և զՍիլլա և զՊլաւտոս արտաքսել 'ի ծերակուտէն, առ 'ի ծաղր առնել զինքնակալն, քան մեռեալոց 'ի նախատինս։

Կ. Ներոնի ընկալեալ զվճիռ ծերակուտին, և տեսեալ զի ոՀիրք իւր յառաքինութիւնս համարէին, արձակեաց զՈկտաւիա պատՀառանօք ամլութեան, և ամուսնացոյց իւր զՊոպպէ։ Սա 'ի բազմաց հետէ հարՀ ինքնակալին չնացողի, և արդ ամուսին նորին դշխոյ մեծազօր, հարկեցոյց զմի 'ի պաշտօնէից Ոկտաւեայ զլպարտել զնա որպէս թէ չնացեալ ընդ միումն 'ի ստրկաց՝ որ կոչէրն Եւքեր, ազգաւ աղեքսանդրացի, հմուտ 'ի նուագել սրնգաւ։ Ի խոշտանգանս հար-

ցափորձի մատուցան նաժիշտք Ոկտաւեայ, և ոմանք 'ի բռնութենէ տանջանացն յաղթեալ՝ սուտ վկայեցին, այլոց ամենեցուն պինդ կացեալ 'ի վկայել անմեղութեան տիկնոջ իւրեանց. և մի 'ի նոցանէ ստիպեալ 'ի Տիգելլինեայ՝ ետ պատասխանի. Զիք յանձին Ոկտաւեայ մասն, որ չիցէ սուրբ քան զշրթունս քո։ Յայնժամ 'ի բաց արձակեցաւ Ոկտաւիա 'ի կերպ ապահարզանի, և տուան նմա ապարանք Բուրրոսի, ագարակք Պլաւտեայ, պարգևք չարագուշակք. և ապա աքսորեցաւ 'ի Կամպանիա, և կարգեցան 'ի վերայ նորա պահք զինուորաց։ Եւ 'ի բողոքել ժողովրդեան զայնմանէ ստէպ և համարձակ՝ ըստ անխոհեմութեան ռամկին, որ ոչ ածէ զմտաւ՝ զի չափաւորութիւն բախտի առաւել է անվտանգ, յետս դարձոյց Ներոն զՈկտաւիա, այլ առանց ստրջանալոյ ընդ անիրաւութիւն իւր։

ԿԱ. Յայնժամ ելին հռովմայեցիք ուրախութեամբ 'ի Կապիտոլ գոհանալ զդից. կործանեցին զպատկերս Պոպպէի, և զանդրիս Ոկտաւեայ 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերէին, և ծաղկապսակս կանգնէին զայնոսիկ 'ի մեծի հրապարակին և 'ի մեհեանս. և դիմէին 'ի դրուատիս ինքնակալին։ Այլ 'ի խռնել նոցա յաղքունիս աղաղակաւ, գումարտակք զօրաց առաքեալք 'ի ներքուստ՝ խարաղանօք և սուսերօք վանեալ ցրուեցին զնոսա, դարձուցին յետս որ ինչ բարձեալ էր յամբոխէն, և պատիւ Պոպպէի կանգնեցաւ անդրէն։ Բայց զայրոյթ նորա և ևս գրգռեալ յերկիւղէ՝ թէ գուցէ 'ի զօրանալ ամբոխին զիջանիցի Ներոն 'ի կամս նոցա, և փոխեսցի 'ի մտաց, անկաւ յոտս նորա և ասէ. Ոչ զիմ ինչ գամ 'ի խնդրել առ 'ի չկորուսանել զաջ քո՝ որ առաւել է ինձ քան զկեանս իմ, այլ զքո կեանս խնդրեմ՝ որ 'ի յետին վտանգի կայ յերեսաց ձեռականաց և սպասաւորաց Ոկտաւեայ, որք յանուն ժողովրդեան ժպրհին գործել 'ի խաղաղութեան՝ որ ինչ հաղիւ 'ի պատերազմի օրէն է գործել։ Ընդդէմ քո ածէին նոքա զենս, առաջնորդ ևեթ պակասէր նոցա, և դիւրաւ գտանէր յաղմկի անդ 'ի մեկնել վաղ ընդ փոյթ 'ի Կամպանիոյ և 'ի գալ հասանել 'ի Հռովմ այնորիկ՝ որոյ ակնարկութիւն ևեթ յարոյց 'ի հեռուստ զաղմուկն զայն։ Եւ ո՞ր յանցանք

են իմ, ուստ մեղայ. թերևս զի հարազատ ժառանգ հանդերձիմ տալ ինքնակալութեան, և ժողովուրդ Հռովմայ կամի առաւել զորդի եգիպտացւոյն սրնգահարի ամբառնալ յաթոռ։ Իսկ եթէ օգուտ հասարակապետութեան այսպէս հարկ առնէ, կոչեսջիր ազատօրէն զտիրուհին՝ առանց յումեքէ բռնադատելոյ, կամ զապահովութիւն քո խնդրեսջիր արդար վրէժխնդրութեամբ։ Զաղմուկսն զառաջինս դոյզն ինչ սաստիւ նուաճեցեր. եթէ միանգամ յուսահատեսցի ամբոխն 'ի տեսանելոյ կին Ներոնի զՈկտաւիա, գոցէ նմա այր։ —

ԿԲ. Ճարտարահնար բանքս այսոքիկ, քաջադէպք յահարկութիւն և 'ի գրգիռ, ազդեցին երկիւղ և զայրոյթ 'ի Ներոն. բայց կասկածն այն զբստրբկէն չէր հաւանելի, և 'ի հարցփորձ ևս աղախնայցն ցրեալ էր. վասն որոյ հարկ եղև խնդրել զոք, որ յանձն առնուցու, և զորմէ մարթ իցէ կասկածել զեղեռն յեղափոխութեան իրաց աշխարհին։ Պատկանաւոր առ այս դատեցաւ սպանող մօր ինքնակալին Անիկետ, հրամատար նաւատորմին առ Մեսենեաւ. որ 'ի սկզբան անդ անկեալ 'ի ընորհաց ինքնակալին, և ապա ատելի ևս լեալ էր նմա. զի արբանեակք անօրէնութեանց 'ի կշտամբութիւն են անօրինին։ Արդ կոչեցեալ զնա Ներոնի առ ինքն, յուշ առնէր նմա զառաջին սպասաւորութիւն նորա, և ասէր. Ի դաւաճանութենէ մօր իմոյ փրկեցեր դու զիս, ժամ է արդ լինելոյ քեզ ոչ ինչ նուազ ընորհակալեաց արժանի՝ զերծուցանելով զիս յոխերիմ կնոջէ. ոչ բազկաւ և ոչ զինուք, այլ զմեղանս ևեթ յանձն առեալ՝ որպէս թէ ընացեալ իցէ քո ընդ նմա։ — Յաւել և խոստանալ նմա՝ առ ժամն 'ի ծածուկ՝ պարգևս մեծամեծս և ամարաստանս զուարճալիս. յաւել և սպառնալիս և զմահ, եթէ չառնոյր նա յանձն զառաջարկութիւնն։ Այրս այս ժանտ 'ի ընէ, և սովորեալ յանօրէնութիւն, առաւել ևս քան զառաջարկեալն ստայօդեալ՝ խոստովան եղև առաջի բարեկամաց ինքնակալին, յորոց ատեան իմն էր կազմեալ, և աքսորեցաւ 'ի Սարդենիա. ուր եկեաց անկարօտ՝ մինչև ցօրհաս իւր։

ԿԳ. Բայց Ներոն հրովարտակաւ յայտ արար, որ-

պէս թէ Ոկտաւիա յուսով յինքն գրաւելոյ զնաւատոր-
միղն՝ զեղծուցեալ էր զՀրամատար նորին. և զոր սուղ
ինչ յառաջ ամբաստանէրն յամբութիւն, յաւելոյր
յայնժամ՝ զի ամաչեցեալ նորա ընդ պղծութիւն իւր,
անցուցեալ էր զսաղմն. և որպէս 'ի ձեռին ունելով
զՀաւաստիս իրացն, հրամայէր արգելուլ զնա 'ի Պան-
դատարիա կղզւոջ։ Ոչ ուրուք յաքսորելոց 'ի գութ այն-
պիսի զաչս տեսողաց էր շարժեալ. յիշէին տակաւին
ոմանք զԱգրիպպինա աքսորեալ 'ի Տիբերեայ, և 'ի մօտոյ
իսկ զՅուլիա 'ի Կլաւդեայ, բայց երկոցունց ևս նոցա 'ի
բերկրութիւնս ինչ յաստիս տիոցն վայելեալ էր, և
զխստութիւն չարեացն՝ զոր կրէին՝ յիշատակաւ երբեմն
բարեկեցութեանն կարէին ամոքել. իսկ Ոկտաւեայ ա-
ռաջին իսկ օր հարսանեացն լեալ էր եղերական, ա-
ծեալ յարքունիս՝ յորում աղէտս ևեթ գտանէր, դե-
ղամահ լեալ զՀայր իւր, հուպ ընդ հուպ և զեղբայր,
զաղախին քան զտիկին իւր զօրացեալ, և զՀարճ 'ի կո-
րուստ ամուսնոյ հարսնացեալ, և 'ի վերայ այսոցիկ
զրպարտութիւն՝ քան զամենայն կորուստ ծանրագոյն։

ԿԴ. Ա. յսպէս մանկամարդ 'ի քսանամենի վարէր
յաքսոր՝ շուրջ պատեալ 'ի հարիւրապետաց և 'ի զի-
նուորաց, և վաղ իսկ առանց հանգստեան մահու՝ գու-
շակութեամբ առաջիկայ չարեացն մահացեալ։ Ոչ յետ
բազում աւուրց հրամայեցաւ նա 'ի մահ, ընդունայն
կոչելով զանձն այրի և քոյր ինքնակալի, և հաւ իւ-
րեանց զԴերմանիկ. 'ի զուր անուանէր և զԱգրիպպի-
նա, որոյ կենդանեաւն՝ թէպէտ և ամուսին հէք և
թշուառ՝ սակայն զերծ էր 'ի մահուանէ։ Արկաւ նա
'ի կապանս, բացան երակունք նորա. և զի մածեալ ա-
րիւն նորա յերկիւղէ՝ յամր հոսէր, ածաւ 'ի ջերաջերմ
բաղանիս, և 'ի գոլորշեաց անտի եղև հեղձամահ։
Յաւելաւ դժնդակ ևս անդթութիւն. զի գլուխ նորա
հատեալ ածաւ 'ի Հռովմ 'ի տեսիլ Պոպպէի, և ձօնիք
'ի մեհեանս այսր աղաղաւ սահմանեցան։ Զայս վասն
այն առնեմ 'ի գրի, զի որք զանցս այնց ժամանակաց
'ի գիրս յայս կամ այլոց ընթեռնուցուն, ծանիցեն՝ զի
քանիցս և աքսոր կամ մահ հրամայեաց Ներոն՝ գոհու-
թիւնք մատուցան դից. և որ ինչ համարեցան երբեմն
ի յաջողուած, յայնժամ աղէտից հասարակաց էին

դրաւականք։ Եւ ոչ զայն լռեցից, որ ինչ ծերակուտին նորանշան մարդահաճութեամբ և ամենավատ ծառայութեամբ սահմանեցան վճիռք։

Կե. Ինմին տարւոջ հզօրագոյնք 'ի ձերբազատս ասին դեղամահ սպանեալ 'ի Ներոնէ. Դորիփոր վասն հակառակ կալոյ իւրոյ հարսանեացն Պոպպէի, և Պալլաս վասն ամբաւութեան գանձուց՝ երկարակեաց ծերութեամբն մթերելոց։ Հռոմանոսի ամբաստանեալ էր զՍենեկա 'ի գաղտնի համախոհութիւն ընդ Կ. Պիսոնի. այլ նա յաղթողաբար 'ի գլուխ չարախոսին զամբաստանութիւնն շրջեաց. ուստի ահափիտք Պիսոնի, և պատրաստութիւն՝ մեծ ևս դաւակցութեան ընդդէմ Ներոնի, թէպէտ և ոչ հանդիպեալ յաջողութեան։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Զայրանալ օրըստօրէ տուփանացն Ներոնի ընդ Պոպպէի, և հնարք սորա առ 'ի լինել նմա կնութեան։

Բ. Ագրիպպինայ հրապոյրք առ 'ի հաստատուն ունել զիշխանութիւն իւր. և Սենեկայ 'ի ձեռն Ակաեայ աղախնոյ ձերբազատի զդէմ ունել նմա։

Գ. Ներոնի յատելութիւն գրգռեալ ընդդէմ մօրն, խորհել հնարս զերծանելոյ 'ի նմանէ սպանութեամբ։

Դ. Զգել նորա զմայր իւր 'ի Բայս 'ի տնախմբութիւն Աթենասայ։

Ե. Նաւաբեկութիւն Ագրիպպինայ, և մազապուր լինել նորա 'ի լոյզ։

Զ. Ծածկել նորա զաղմուկ սրտին, և զեկուցանել Ներոնի զապրել իւր 'ի ծանր վտանգէն՝ շնորհիւ դից, և ըստ բարեբախտութեան նորա։

Է. Խռովել Ներոնի ընդ ազատել նորա 'ի վտանգէն, և խորհրդակցել ընդ Սենեկայ և ընդ Բուրրոսի։ Անիկետեայ յանձն առնուլ 'ի կատարումն ածել զոճիրն։

Ը. Մահ Ագրիպպինայ։

Թ. Յուզարկաւորութիւն նորա. և միոյ 'ի ձերբազատիցն երթալ զիւրովին առ խարուկաւ նորա։

Ժ. Խայթ խղճին Ներոնի. մարդահաճութիւն հաղարապետաց ժողովրդեան, հարիւրապետաց, և քաղաքացն Կամպանիոյ։ Ներոնի մեկնել գնալ 'ի Նէապոլիս, և գրել անտի առ ծերակոյտն։

ԺԱ. Ամբաստանել նորա զմայր իւր 'ի հնարս սպանութեան իւրոյ, և յիշեցուցանել զդուռողութիւն նորա և զփառամոլութիւն։ Պարսաւ Սենեկայ վասն շարադրելոյ զդիրն զայն։

ԺԲ. Ամոթապարտ շողոմք ծերակուտին, և Թրասեայ կշտամբել զայն և մեկնել 'ի բաց։ Ներոնի դարձուցանել զբաղումս յաքսորելոցն յԱգրիպպինայ։

ԺԳ. Ներոնի դարձ 'ի Հռովմ. Ժողովրդեան և ծերակուտին ընդառաջ ելանել նմա, և ընդունել զնա ցնծութեամբ. ելանել նորա 'ի Կապիտոլ, և գոհութիւնս մատուցանել դից։

ԺԴ. Ներոնի զակատուն 'ի ձիավարել և 'ի քնար հարկանել։ Սենեկայ և Բուրրոսի զուր ջանք խափանելոյ զՆերոն չելանել 'ի Թատերախաղս 'ի տեսիլ։ Սոփել նորա զասպետս հռովմայեցիս ելանել 'ի Թատր և ելանել յատպարէզ։

ԺԵ. Սահմանել պատանեկան խաղուց. և արանց և կանանց աւագուհեայ գրիլ ընդ գուսանս նորահնար խաղուցն. հեղեղատատ յորդել խոհերաց ախուից. ինքնակալին երևել 'ի Թատեր շուրջ պատեալ յաքքունեայ, և նուագել քնարիս։ Գունդ Աւգոստականացն դրուատողաց։

ԺԶ. Ներոնի ափ յափոյ յօրինել տաղս, և զբօնուել յետ կոչնոց 'ի լուր վիճաբանութեան իմաստասիրաց։

ԺԷ. Պատերազմ սաստիկ ընդ Նուկերացիս և ընդ պոմպէացիս։

ԺԸ. Պեգիոս Բլեսոս և Ակիլիոս Սարաբոն ամբաստանին 'ի կիւրեանացւոց։ Ներոն շնորհէ սոցա զերկիրն՝ զոր յափշտակեալ էին 'ի հասարակաց, և 'ի բազում ժամանակաց հետէ կալեալ զայն։

ԺԹ. Մահ Դոմիտեայ Աֆերի և Մ. Սերուիլեայ։

Ի. Սահմանել Հնգամեակ խաղուց ըստ օրինակի հելլենականացն. մտածութիւնք խստակրօնից զայնցանէ։

ԻԱ. Ամլոց ջատագովել զայնս։

ԻԲ. Վարսամոյ և որոարընդոտս շանթից գուժել զմօտալուտ անկումն Ներոնի։ Հռուփել Պլաւտոս համբաւի յաջորդ նմին։ Ներոն սաստիկ զնա մեկնել գնալ յԱսիա, ուր էին նորա կալուածք։

ԻԳ. Դիմեցումն Կորբուլոնի 'ի Տիգրանակերտ։

ԻԴ. Վշտակրութիւնք հռովմէական բանակին 'ի չուն։ Ըմբռնի մի 'ի բարբարոսաց, 'ի գնալն առ 'ի խողխողել զզօրավարն։ Տիգրանակերտ անձնատուր լինի։

ԻԵ. Պաշարումն և առումն միջնաբերդին։ Հրեշտակութիւն Վրրկանաց։

ԻԶ. Տիգրանայ տիրել 'ի Հայաստան։ Կորբուլոնի թողուլ առ նմա գունդ մի հռովմայեցւոց և օժանդակ զօրաց, և մեկնել յԱսորիս։

ԻԷ. Սասանութիւն երկրի 'ի Լաւոդիկէ։ Պուտէոլացւոց ընդունել զիրաւունս հռովմէական գաղթականաց։ Հինաւուրց զօրաց առաքումն յԱնտիոն և 'ի Տարենտոն, առ 'ի բազմամարդացուցանել զքաղաքն անդրէն։

ԻԸ. Օրինադրութիւն եկեղեցի յատեան ծերակուտին. դատապարտութիւն Վիբիոսի Սեկունդեայ ամբաստանելոյ 'ի հարստահարութիւն։

ԻԹ. Սուետոնիոսի Պաւլինեայ կառուցանել նաւս տափարակս, առ 'ի յարձակել 'ի Մոնա կղզի։

Լ. Ահարկու տեսիլ բանակին Թշնամեաց. յաղթութիւն հռովմայեցւոց, և նստուցանել նոցա պահակազանս 'ի կղզւոջն։

ԼԱ. Ապստամբել Բրետոնաց. ոխերիմ ատելութիւն նոցա ընդ կամալոգունաց գաղթականին։

ԼԲ. Նշանք չարագոյժք. առումն քաղաքին և այրեցումն. բեկումն Պետիլիոսի Կերիալեայ հանդերձ միով 'ի լեգէոնաց։

ԼԳ. Սոսկալի կոտորած 'ի Լոնդինոն և 'ի Վերուլա։

ԼԴ. Սուետոնիոսի բիւր զօրք պատրաստել 'ի Ճակատամարտ, և ընտրել զբանակեալ։

ԼԵ. Դշխոյին Բովադիկեայ խրախուսել զբարբարոսս։

ԼԶ. Խրախուսել և Սուետոնիոսի զզօրս իւր, և փող հարկանել 'ի պատերազմ։

ԼԷ. Յաղթութիւն հռովմայեցւոց, անբաւ կորուստ Բրետոնաց. ինքնակամ մահ Բովադիկեայ։

ԼԸ. Խաղաղել գաւառին 'ի սպառ. յամառութիւն Բրետոնաց. զբարպարտութիւնք ընդդէմ Սուետոնեայ։

ԼԹ. Պոլիկլետեայ ձերբազատի առաքումն 'ի Ներոնէ, առ 'ի գիտել զՀանգամանս Բրիտանիոյ։ Պետրոնիոսի Տուրպիլանեայ յաջորդել զՍուետոնիոս։

Խ. Կոտակ ստայօգ, և ստողացն դատապարտութիւն։

ԽԱ. Վալերիոսի Պոնտիկոսի սքսոր, վասն նախամեծար առնելոյ ըզկամս կուսակալին քան զքաղաքապետին Հռովմայ:

ԽԲ. Սպանումն Պեդանիոսի Սեկունդեայ 'ի միոջէ 'ի ստրկացն, և խորհուրդ պատուհասելոյ զամենայն բնակիցս նորա. Ժողովրդեան խափանել զխորհուրդն զայն. և վէճ 'ի ծերակուտին զայսմանէ:

ԽԳ. ԽԴ. Կայիոսի Կասիոսի ունել զկոչմն խատութեան, և առենաբանութիւն նորա:

ԽԵ. Ութանիցն չարաբաստից ածիլ 'ի մահ ընդ մէջ զինուորաց, կարգելոց երկուստէք ընդդէմ սպառնալեաց Ժողովրդեան: Միոյ յատենակալաց ծերակուտին առաջարկութիւն տարագրելոյ զՀերբազատս՝ որ 'ի տան անդ բնակէին. Ներոնի չհաւանել ընդ այն:

ԽԶ. Դատապարտութիւն Տորկուատոսի Պրիսկեայ 'ի յանցանս հարստահարութեան. աշխարհագիր գալլիացւոց:

ԽԷ. Մահ Միմմիոսի Հռեգուլեայ. խոստովանել Ներոնի զվաստակս նորա. նաւակատիք միոյ 'ի կրթարանաց:

ԽԸ. Ամբաստանել Անտիստիոսի 'ի քրէական յանցանս, վասն յօրինելոյ նորա և ընթեռնլոյ 'ի լուր ամենեցուն երգեծաբանութիւն ընդդէմ ինքնակալին. Յունիոսի Մարուլլոսի դատել զնա 'ի մահ, իսկ Թրասեայ յաքսոր 'ի մի 'ի կղզեաց:

ԽԹ. Ծերակուտին գրեթէ առ հասարակ բերել 'ի կարծիս Թրասեայ. բդեշխից ոչ իշխել յօրինել զվճիռ ծերակուտին, և գրել զայնմանէ առ Ներոն: Պատասխանել Ներոնի՝ զի ազատ էր ծերակոյտն անպարտ արձակել զնա, բայց երևեցուցանել ցասումն 'ի գրին: Հաստատել վճռոյ ծերակուտին:

Ծ. Փաբրիկիոսի Վէենտոսի յօրինել պարսաւագիր ընդդէմ ատենակալաց և քրմաց. և ամբաստանեալ 'ի վաճառաշահութիւն շընորհաց ինքնակալին, աքսորել յԻտալիոյ:

ԾԱ. Մահ Բուրրոսի Փենիոսի, և Տիգելլինեայ կալ վերակացու քաղաքական ատենին:

ԾԲ. Հնարք ատելի առնելոյ Ներոնի զՍենեկա:

ԾԳ. ԾԴ. Սենեկայ աղերսել զշնորհս Ներոնի, և խնդրել կեալ յառանձնութեան. Ճառ նորա:

ԾԵ. ԾԶ. Կեղծ պատասխանի Ներոնի: Սենեկայ կալ մնալ յարքունիս, հրաժարեալ 'ի շքոյ, և փակեալ կալ առանձին:

ԾԷ. Փենիոսի անկանել 'ի շնորհաց. զրպարտութիւնք Տիգելլինեայ ընդդէմ Սիլլայի և Պլաւտեայ, և սպանումն Սիլլայի 'ի Մասիլիա:

ԾԸ. Առաքումն սպանողաց յԱսիա 'ի սպանութիւն Պլաւտոսի. զբոյգք զայսմանէ:

ԾԹ. Գլուխ նորա ածի 'ի Հռովմ: Խօսք Ներոնի 'ի տեսանելն զայն, և ծերակուտին սահմանել գոհութիւնս դից:

Կ. Ներոնի առնուլ կնութեան զՊոպպէ: Մերժումն Ոկտաւեայ, և զրպարտութեամբ աքսորել նորա 'ի Կամպանիա. 'ի գժկամակութենէ Ժողովրդեան սիրիլ Ներոնի դարձուցանել զնա:

ԿԱ. Ամբոխին ընուլ ցնծութեամբ, և կործանել զանդրիս Պոպպէի, և դիմեալ յարքունիս՝ խնդրել տեսանել զՆերոն. զօրականին մերժել զամբոխն. կանգնել վերատին անդրեացն Պոպպէի. և սորա գրգռել զՆերոն ընդդէմ Ոկտաւեայ:

ԿԲ. Ոկտաւեայ վերատին ամբաստանութիւն: Անիկետեայ արքանե-

կութիւն 'ի գործ անարժան, և վեր 'ի վերոյ տարագրութիւն եղեռնագործին 'ի Սարդենիա, և անդ կատարել զկեանս 'ի բարեկեցութեան։

ԿԳ. Սոսկալի զրպարտութիւն Ներոնի ընդդէմ Ոկտաւիայ, և աքսորել զնա 'ի կղզին Պանդատարիա. կարեկցութիւն ամենեցուն ընդ աղէտս նորա։

ԿԴ. Անողորմ սպանութիւն նորա. ածի գլուխ նորա առ Պոպպէ։ Մերակուտին անդրէն վերստին սահմանել գոհութիւնս դից։

ԿԵ. Մահ Ձերբազատիչն, Դորիփորի և Պալլասայ, և համարել նոցա գեղեալս 'ի Ներոնէ։ Սենեկայ ամբաստանել 'ի դաւակցութիւն ընդ Պիսոնի, և արդարանալ։ Ահափեսք Պիսոնի առաջնորդի դաւոյն, որ յետոյ ածաւ 'ի կատարումն։

Եւ ունին գիրքս այս չափ ժամանակի իբր չորից ամաց, յորս կացին բդեաշխս։

Կ. Վիպստանոս Ապրոնիանոս և Կ. Փոնտէոս Կապիտոն։

Ներոն Կլաւդիոս Կեսար Դ. և Կոսսոս Կուռնելիոս Լենտուլոս։

Կ. Կեսոնիոս Պետոս և Կ. Պետրոնիոս Տուրպիլիանոս։

Պ. Մարիոս Կելսոս և Լ. Ասինիոս Գալլոս։

Ա. Հ. 812.

Ա. Ք. 59.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ ԺԵ.

Ա. Ի ժամանակին յայնմիկ Թագաւորն Պարթևաց Վոլոգէս իրազեկ լեալ անցիցն Կորբուլոնի, և զի Տիգրան օտարազգի Թագաւորեալէր 'ի Հայաստան, խորհէր 'ի սկզբան անդ խնդրել զվրէժ ազգին արշակունեաց՝ որ Թշնամանեալն էր Հալածմամբ Եղբօր իւրոյ Տիրիթայ. այլ ապա զմտաւ ածեալ զզօրութիւն հռովմայեցւոց, և ակն ածեալ բազմամեայ նիզակակցութեանն ընդ նոսա, վարանէր։ Յամր էր նա բնաւորապէս 'ի գործ, և խափանէին զնա ևևս վտարանքութիւն հզօր ազգին Վրկանաց, և որ անտի զհետ եկեալ պատերազմունք։ Այլ մինչդեռ 'ի վարանս անդ կայր, գրգռեցաւ 'ի լուր նորոց Թշնամանաց. զի Տիգրանայ մեկնեալ 'ի Հայաստանէ՝ ասպատակէր անդադար 'ի սահմանակիցս իւր յԱդիաբենս, հինահար աբարեալ շուրջանակի։ Նախարարքն աշխարհին դառնապէս բողոք բարձեալ, ասէին. Ցո՞ր վայր արհամարհեալ գտանիմք, զի ոչ ևս զօրավար հռովմայեցի նեղէ զմեզ, այլ պատանի յանդուգն՝ կեցեալ զամս բազումս ընդ ստրուկս 'ի պատանդ։ Զայրացուցանէր զվէրս նոցա ևևս Մոնոբազ իշխան ազգին, զի ասէր. Ուստի՞ իցէ մեզ խնդրել օգնութիւն. Թողաք վաղ 'ի

բաց զՀայաստան, լեցի մեզ և զայլ աշխարհս տալ՝ի դուրս, եթէ ոչ պաշտպան կացցէն մեզ Պարթևք. թեթևագոյն է ծառայութիւն անձնատուր եղելոց՝ի հռովմայեցիս քան զնուաճելոց։ — Ի վերայ այսորիկ և Տիրիթ ընկեցեալ յաթոռոյ և փախստական՝ սաստկագոյն ևս առնէր ազդեցութիւն լռութեամբ իւրով և զանխուլ արտնջմամբ, զի ասէր. Ոչ վատութեամբ կանգուն կան ինքնակալութիւնք մեծամեծք, պարտ է պաշտպանել նոցա զինուք և զօրօք, ՝ի ծայր մեծութեան՝ հզօրագունին է արդարութիւն, շատ է իւրաքանչիւր ումեք պահել զիւրն. վերամարտիկ այլոց լինել՝ թագաւորաց են փառք։ —

Բ. Ի բանից աստի շարժեալ Վոլոգէս, կոչեաց ատեան, և առ իւր կացուցեալ զՏիրիթ, խօսել կալաւ այսպէս. Ցսա, որ եղբայր իմ է հարազատ, ՝ի տալ իւր տեղի երիցութեանս իմում՝ կացուցի թագաւոր Հայաստանի, որ երրորդ իշխանութիւն է պետութեանս, զի զՄարս Բակուրայ յառաջագոյն կալեալ էր. և համարէի այսուիկ ընդդէմ վաղեմի ատելութեան և պատերազմաց եղբարց՝ զընտանիս մերոյ ազգատոհմի միաբանել։ Հակառակ կան այսմ հռովմայեցիք. և զխաղաղութիւն մեր՝ զոր միշտ խռովեցին ձախողակի, խռովեն և այժմ՝ ՝ի կորուստ իւրեանց։ Յարդ իրաւամբ քան արեամբ, պատճառօք քան զինուք կամեցայ պինդ ունել զաշխարհակալութիւնս նախնեաց իմոց. այլ եթէ սխալեցի յամեցմամբ, զգաստացայց արիութեամբ. զօրութիւն ձեր և փառք կան անթերի, յաւելեալ յայնոսիկ և համբաւ չափաւորութեան՝ զոր և գերակայից մահկանացուաց ոչ է պարտ արհամարհել, զառ՝ի դիցն իսկ մեծարեալ առաքինութիւն։ — Եւ զայս ասացեալ՝ էդ՝ի գլուխ Տիրիթայ զթագ, և ետ Մոնեսի՝ որ մի էր յազնուականաց ազգին՝ զՀեծելագունդն պատրաստական, որ սովոր էր զՀետ գնալ արքայի. յաւել յայն և զգունդն օժանդակ զԱդիոբենաց։ Եւ հրամայեաց վանել զՏիդրան՝ ՝ի Հայաստանէ. իսկ ինքն՝ ՝ի հաշտութիւն ածեալ զՎրկանս, զօրաժողով եղև յաշխարհէն, և կազմեալ բանակ ահաւոր՝ սպառնայր մարզիցն հռովմայեցւոց։

Գ. Եւ իբրև լուաւ Կորբուլոն զայս ամենայն՝ ՝ի հա-

ւատարիմ պատգամաւորաց, առաքեաց յօգնութիւն Տիգրանայ զերկուս 'ի լեգէոնաց ընդ առաջնորդութեամբ Վերուլանոսի Սևերեայ և Վերտիոսի Բոլանեայ, պատուէր գաղտ տուեալ նոցա՝ զգուշութեամբ քան փութով գործել զամենայն, վանել քան մղել պատերազմ։ Գրեաց և առ ինքնակալն՝ զի զօրավար ուրոյն պիտոյ էր 'ի պահ աշխարհին Հայոց, և զի Աստրիք 'ի մտանել անդր Վոլոգեայ՝ կայրն 'ի մեծ ևս վըտանգի։ Իսկ զայլս 'ի լեգէոնաց բանակեցոյց առ Եփրատաւ, և գուգազ 'ի գաւառէ անտի զինուորեալ, պահս ընդդէմ հինից Թշնամեացն կացոյց։ Եւ քանզի անջրդի է երկիրն, ամրոցս յաղբերակունս անդ կառոյց, և զոմանս 'ի վտակաց Թաքոյց՝ աւազակոյտս շուրջ ամբարձեալ։

Դ. Մինչդեռ Կորբուլոն պատրաստէր 'ի պահ Աստրոց, Մոնէս շտապ տագնապաւ յառաջ խաղայր կանխել ժամանել նախ քան զՀամբաւ. սակայն ոչ անգէտ և անպատրաստ եգիտ զՏիգրան։ Անկեալ էր նա 'ի Տիգրանակերտ քաղաք ամուր՝ պաշտպանեալ 'ի բազմութենէ զօրաց, 'ի բարձրաբերձ պարսպաց, և 'ի Նեկեփոր գետոյ՝ որ պատի զմասամբ պարսպացն ոչ դոյզն ինչ լայնութեամբ. և պարկէն ընդարձակ շուրջ ածեալ էր ուր ուրեք ոչ յոյժ դժուարին են անցք գետոյն։ Էին յամուրս անդ զօրք հռովմայեցիք պաշարապինդք. և 'ի համբարակաց անտի սակաւք ոմանք յանդրգնագոյնս յառաջ մատուցեալ, յեղակարծում պաշարեցան 'ի Թշնամեաց, որք զայրոյթ քան երկիւղ յայլս արկին։ Բայց Պարթևք 'ի պաշարումն քաղաքաց տարտամք 'ի մօտոյ, ճիգն ընդունայն անօգուտ նետուքն գործէին 'ի հեռուստ, և ոչ ահ 'ի պարսպապահս արկեալ։ Ադիաբենք սանդուղս և կաղմածս պարսպամարտս յառաջ մատուցեալ, դիւրաւ յետս վանեցան, և ապա 'ի յարձակմանէ մերոյն կոտորեցան։

Ե. Կորբուլոնի, Թէպէտ և յաջողէին իրք, սակայն պարտ համարեալ զչափոյս 'ի բարեբաղդութեան, հրեշտակ արար առ Վոլոգէս՝ բաղդել զմտից նորա 'ի սահմանս հռովմէական գաւառի, զպաշարելոյ նորա զարքայն նիզակակից և զչօրս հռովմայեցւոց, սպառնալով բանակ հարկանել յերկրի նորա՝ եթէ ոչ լու-

ծանէր նա զպաշարումն։ Կասպերիոս հարիւրապետ ընտրեալ՝ի հրեշտակութիւնն՝ չոգաւ առ Վոլոգէս՝ի Մծբին, երեսուն և եօթն մղոնիւք հեռի՝ի Տիգրանակերտ քաղաքէ, և խրոխտով ետ պատգամ։ Վոլոգեայ՝ի բազմաց հետէ հաստատուն եղեալ էր՝ի մտի չպատերազմել ընդ հռովմայեցիս, և իրք ևս իւր յայնժամ ոչ յաջողէին, և պաշարումն քաղաքին՝ի դերև ելեալ էր։ Տիգրանայ ոչ պակասէին զօրք և ոչ համբարք, հաւաքածեալ էին՝ի բաց պարսպամարտք, և լեգէոնք յղեալք՝ի Հայս և այլք յԱսորիս՝ պատրաստ կային՝ի մտանել։ Իսկ իւր հեծելագունդ մի, և այն վաստակաբեկ, և ձիանն անձարակ վասն բազմութեան մարախից ծախելոյ զամենայն դեղ դալար և զտերևս ծառոց։ Վասն որոյ ծածկեալ զերկիւղ իւր, այլ զիջուցեալ զպահանջմունս, ետ պատասխանի՝ յղել պատգամաւորս առ ինքնակալն՝ի Հռովմ, խնդրել զՀայաստան, և հաստատել զխաղաղութիւն. և հրամայեալ Մոնեսի թողուլ ազատ զՏիգրանակերտ, մեկնեցաւ ինքն՝ի բաց։

Զ. Զայսոսիկ բազումք յերկիւղէ թագաւորին և՝ի սպառնալեաց Կորբուլոնի համարեալ, դրուատեօք բարձրացուցանէին զնա. այլք գաղտնածածուկ իմն համախոհութեան տային զդադարումն մարտին երկուստեք, և զմեկնել Տիգրանայ յաշխարհէն Հայոց՝ հեռի կալով Վոլոգեայ, և ասէին. Սո՞ւ ինչ յետս կոչել՝ի Տիգրանակերտքաղաքէ զբանակն հռովմէական, և առ իմ՞ լքանել՝ի խաղաղութեան զպաշտպանեալն՝ի պատերազմի, լաւագոյն թերևս էր ձմերել՝ի ծայր Կապադովկիոյ, ՝ի հիւղս հարևանցի կանգնեալս, քան յոստանին՝ որ այն ինչ՝ի նոցանէ էր պաշտպանեալ։ — Եւ յիրաւի իսկ դադարումն մարտին երկաքանչիւրոց էր ցանկալի. Վոլոգեայ, զի ընդ այլում և մի՛ ընդ Կորբուլոնի մարտիցէ. և Կորբուլոնի, զի զփառս՝ որոց բազմամեայ վաստակօք լեալ էր արժանի՝ մի՛ արկցէ՝ի վտանգ կորստեան. զի, որպէս ասացի, խընդրեալ էր նորա այլ զօրավար՝ի պաշտպանութիւն Հայաստանի, և համբաւէր գալուստ Կեսեննիոսի Պետոսի։ Եհաս նա ընդ հուպ. և այնպէս բաժանեցան գունդք, զի չորրորդն և երկոտասաներորդ լեգէոնք ընդ հինգերորդումն՝ որ այն ինչ կոչեցեալն

էր 'ի Մեսիոյ, և ընդ օժանդակ դունդս Պոնտոսի Գալատիոյ և Կապադովկիոյ՝ իցեն ընդ ձեռամբ Պետոսի. երրորդն և վեցերորդ, տասներորդն և նախնի զորք Ասորւոց կացցեն մնասցեն ընդ ձեռամբ Կորբուլոնի. իսկ այլք ըստ հարկի իրաց համախմբեսցին կամ զատուսցին։ Բայց Կորբուլոն ոչ հանդուրժէր ունել իւր ոսոխ նախանձընդդէմ. և Պետոս՝ որում պարտն էր շատանալ ընդ պատիւն իշխանակից գոլոց զօրավարին, անգոսնէր զքաջութիւնս նորա և ասէր՝ ոչ կոտորած ինչ արարեալ նորա և ոչ աւար առեալ, այլ 'ի պիտակ անուն պարսպամարտի պանծացեալ. և խոստանայր ինքն հարկս արկանել և օրէնս դնել պարտելոց, և փոխանակ ստուերակերպ թագաւորութեան՝ արկանել զնոսա ընդ հռովմէական օրինաց։

Է. Ընդ այն ժամանակս պատգամաւորք Վոլոգեայ յղեալք առ ինքնակալն, որպէս 'ի վեր անդր ասացի, դարձան ունայնաձեռն. և Պարթևք ձեռն արկին յայտնապէս 'ի զէն, և ոչ Պետոս հրաժարեաց 'ի պատերազմէ. այլ երկոքումբք լեգէոնաց, յորոց չորրորդին հրամայէր յայնժամ Փունիսուլանոս Վետտոնիանոս, և երկրորդումն Կալաւիոս Սաբինոս, եմուտ 'ի Հայաստան չարագոյժ հմայիւք. զի յանցանել ընդ կամուրջն Եփրատայ, երիվարին՝ որ տանէր զօրէնս պատուոյ բըդեշխութեան նորա՝ խրտուցեալ առանց ուրուք ըզվանէրն գիտելոյ, յետս ընդդէմ ընկրկեցաւ. և զոհն զենլի կացեալ առ ձմերոցի՝ զոր ամրացուցանէին, փլոյզ զվաստակն թերակատար՝ փախուցեալ արտաքս 'ի պատնիշացն. և 'ի գեղարդանց զօրականին, քանզի Պարթևք հեռաձիգ զինուք մարտնչին, նորանշան ըսքանչելեօք բոցք հատանէին։

Ը. Բայց Պետոսի արհամարհեալ զհմայս, չև ևս քաջ ամրացուցեալ զձմերոցս, և ոչ զհամբարս պատրաստեալ, էած զբանակն յայնկոյս լերինն Տաւրոսի՝ առնուլ անդրէն զՏիգրանակերտ, որպէս ասէրն, և աւերել զգաւառս՝ զորս Կորբուլոնի թողեալ էր ազատ։ Եւ էառ իսկ արդարև ամուրս քանի մի, և աւար ոչ սակաւ, և արար իւր փառս. այլ ոչ գիտացեալ, ոչ զփառսն 'ի չափս ունել, և ոչ պահ աւարին կացուցանել, յաւաղ

խաղաց, էանց ընդ սահմանս բաղումն՝ զորս չկարէր պահպանել. ապականեցան համբարք՝ զորս յաւարի առեալ էր. և 'ի հասանել ձմերայնոյն 'ի վերայ՝ դարձոյց զզօրսն, և գրեաց առ ինքնակալն՝ որպէս թէ զբրաւ արարեալ մարտին, մեծամեծս պանծալով թափուր յարդեանց։

Թ. Բայց Կորբուլոն յաւելոյր զպահս յեզր Եփրատայ, ոչ ինչ վերջացեալ 'ի զգուշութենէ. և զի մի գունդք թշնամեաց՝ որք կազմութեամբ մեծաւ երթևեկէին յայնկոյս գետոյն՝ խափանեսցեն զկառուցումն կամրջի զգետոնն, նաւս մեծամեծս կցեալ յիրեարս գերանօք, և մարտկոցս 'ի նոսա յաւելեալ, էած զզօրս իւր ընդ գետն, և բաբանօք և բաղստրօք խառվեր ըզբարբարոսս, վէմն և գեղարդունս արկեալ զնոքօք 'ի հեռուստ ուր նետք նոցա ոչ հասանէին։ Կառուցաւ կամուրջն, և բլուրք հանդիպակացք այնու փութով և քաջութեամբ յօժանդակ զօրաց և 'ի բանակէ լեգէոնաց գրաւեցան, զի լքեալ Պարթևաց զպատրաստութիւնս իւրեանց մնանելոյ յԱՒորիս, զամենայն յոյս իւրեանց դարձուցին 'ի Հայս։

Ժ. Մինչդեռ Պետոս՝ անգէտ մերձակայ վտանգին՝ զՀինգերորդ լեգէոնն ունէր հեռի 'ի Պոնտոս, և զայլսն տկարացուցեալ էր՝ անխտիր տալով հրաման զօրացն 'ի բաց կալոյ, ազգ եղ'ւ նմա յանկարծ՝ զի Վոլոգէս մեծաւ սպառնալից բանակաւ գայր հասանէր։ Կոչեաց զլեգէոնն երկոտասաներորդ. և որով յուսայրն ցուցանել յաւելեալ զզօրութիւնս իւր, մատն եղև նուազելոյ նոցա։ Բայց թէպէտ և կարէր նա կալ 'ի պատնէշս, և 'ի դերև հանել զխորհուրդս Պարթևաց՝ յերկարաձգելով զպատերազմն, եթէ անյողդողդ կայր 'ի միտս իւր և 'ի խորհուրդս այլոց, սակայն այն ինչ արք քաջահմուտք իրաց պատերազմի զերծուցանէին զնա 'ի հասեալ վտանգաց, նա առ 'ի ցուցանել՝ զի չէր կարօտ խրատուց այլոց, 'ի հակառակն և 'ի յոռեգոյն խորհուրդ մտաբերէր։ Յայնժամ թողեալ զձմերոցս, և գոչելով՝ Ոչ փոսք ինձ և ոչ պատնէշք պիտոյ են ընդդէմ թշնամւոյ՝ այլ զօրք և զէնք, խաղացոյց զլեգէոնս 'ի պատերազմ։ և 'ի կորնչել հարիւրապետին և սակաւուց զինուորաց՝ զորս յղեալ էր 'ի լրտեսել զբանակ

թշնամեաց, զահի հարեալ՝ դարձաւ յետս։ Այլ քան-
զի Վոլոգէս ոչ պնդագոյնս զհետ մտեալ հալածէր զնա,
դարձեալ վերստին յանդուգն վստահութեամբ երեք-
հազար այրընտիր 'ի հետեւակաց կացոյց 'ի մերձակայ
ուրեք բարձրաւանդակի Տաւրոս լերին, խափանել
զանցս Թագաւորին. և զպանծանիացիս, որ 'ի Թեւս բա-
նակին զօրավիգն էին հեծելոց, կացոյց 'ի կողմն մի դաշ-
տին։ Իսկ զկին և զորդի իւր ամրացոյց յԱրշամուշատ
բերդ, տուեալ նոցա գունդ 'ի պահ. և համասփիւռ
զզօրսն ունէր, զի դիւրաւ ամենայն ուրեք զդէմ կալ-
ցին յարձակմանց՝ հասեալ յօգնութիւն միմեանց։ Ա-
ւանդէն՝ դժուարաւ յանձն առեալ նորա խոստովան
լինել Կորբուլոնի զվտանգ իւր, և ոչ Կորբուլոնի փու-
թացեալ առ նա յօգնականութիւն, որպէս զի 'ի սաստ-
կանալ ևևս վտանգին՝ յաւելցին իւր փառք, հասեալ
նմա յայնժամ 'ի զօրավիգն. բայց հրամայեաց զի յիւ-
րաքանչիւրոց երեցունց լեգէոնացն հազար այր և ութ
հարիւր հեծեալ, նոյնչափ յօժանդակ զօրականէն
պատրաստ կացցեն 'ի չու։

ԺԱ. Վոլոգէս, Թէպէտ և գիտացեալ՝ զի հեծեալք
աստի, և անտի հետեւակազօրք Պետոսի պահ ունէին
անցից, ոչ փոխեցաւ 'ի խորհրդոցն. այլ զօրութեամբ
և սպառնալեօք ահացոյց զհեծելազօրն՝ որ 'ի Թեւս
բանակին, և խորտակեաց զլեգէոնականս։ Միայն Տար-
կուիտիոս Կրեսկենտ հարիւրապետ իշխեաց պաշտ-
պանել ամրոցին՝ որ իւր էր յանձն, յարձակմունս ան-
տի ստէպ առնելով, և կոտորած բարբարոսացն յառաջ
մատուցելոց, մինչև պատեալ պաշարեցաւ 'ի հրձգու-
թեանց։ Յայնժամ անխոցք 'ի զօրացն գնացին փախըս-
տեայ յանապատ անկոխ, իսկ վիրաւորք դիմեալ 'ի բա-
նակն՝ պատմէին զզօրութիւն Թագաւորին, զվայրե-
նութիւն և զամբոխ ազգացն, և զամենայն ինչ երկիւ-
ղիւ ստուարացուցանէին, հաւատարիմ եղեալ դիւրա-
հաւանութեան այնոցիկ՝ որք 'ի նմին երկիւղի կային։
Զօրավարն ինքնին վհատեալ յարկածիցն, եթող զա-
մենայն հոգ զօրականին, արձակեալ ևեթ անդրէն
առ Կորբուլոն աղերսաւորս՝ վաղ հասանել յօգնու-
թիւն, փրկել զդրօշս և զարծուիս, և զանուն նշխա-
րաց հէք բանակին, և խոստանայր կալ 'ի հաւատար-
մութեան մինչ 'ի շունչ յետին։

ԺԲ. Կորբուլոն անվեհեր, Թողեալ զկէսս 'ի զօրացն յԱսորիս 'ի պահ ամրոցացն, խաղաց այլովքն ընդ կարճոյ ճանապարհ, ընդ երկիր՝ ուր դիւրագիւտ էին պարէնք, 'ի սահմանս Կոմագենայ և 'ի Կապադովկիա, և անտի 'ի Հայս։ Այծէր ընդ բանակին 'ի վերայ այլոց մարտացու պիտոյից՝ բազմութիւն յոյժ ցորենաբարձ ուղտուց, անվտանգ 'ի սովոյ հալածել զթշնամիս։ Առաջին 'ի փախստականից դիպաւ նմա Պակտիոս հարիւրապետ առաջնոյ լեգէոնին, և ապա զինուորք ոչ սակաւք. առ որս՝ 'ի պատճառել նոցա պատճառս փախստեան իւրեանց, խրատ ետ դառնալ 'ի դրօշս իւրեանց, զի ներեսցէ նոցա Պետրոս, և 'ի կանգնել նոցա զկորանս իւրեանց՝ յայնժամ և ինքն ներեսցէ նոցա։ Այնցեալ ապա ընդ ռազմն լեգէոնացն, խրախուսէր ըզնոսա. յիշեցուցանէր նոցա զառաջին քաջութիւնս, առաջի առնէր նոր հանդէս փառաց, և ասէր. Ոչ ևս գիւղք և քաղաքք Հայաստանի, այլ բանակ հռովմէական և կրկին լեգէոնք պաշարեալք՝ լեցին վարձք վաստակոց ձերոց. եթէ իւրաքանչիւր զինուորի՝ որ զմի ոք 'ի քաղաքացւոց փրկեսցէ՝ պահի պսակ 'ի ձեռանէ զօրավարին, որպիսի և քանիսն լեցին փառք՝ առնուլ պսակս ըստ թուոյ փրկելոց քաղաքացւոց։ — Այսոքիւք և այսպիսի բանիւք վառեալ եռանդն ամենեցուն, յորոց բազումք և վասն վտանգի եղբարց իւրեանց և աղգականաց պատրաստականք, ճեպէին յընթացս անդուլ և անդադար զտիւ և զգիշեր։

ԺԳ. Իսկ Վոլոգէս ևս քան զևս 'ի նեղ արկանէր զպաշարեալս, մերթ 'ի ղակիշ լեգէոնացն յարձակելով, և մերթ յամրոցն՝ ուր հասակն ապիկար 'ի զէն պատսպարեալ էր՝ յառաջ մատչէր մօտ ևս քան զորսովորէին Պարթևք, առ 'ի դրդել յանդգնութեամբն 'ի մարտ զթշնամիս։ Այլ նոքա հազիւ 'ի վրանացն ելանէին, շատ համարեալ պահպանել զամուրս. կէսք առ 'ի հնազանդել զօրավարին, այլք առ վատութեան՝ պատճառելով կալ մնալ Կորբուլոնի, յօժարք 'ի ստիպել հարկին՝ զկաւդինեան լծոյն և զնումանտեան կոտորածին նորոգել զօրինակս, և ասէին. Ոչ սամնիացւոց, և ոչ այլումէ ումեք յազգաց Իտալիոյ և ոչ Կարքեդոնացւոց ոսոխաց հռովմէական ինքնակալութեան

այսպիսի էր զօրութիւն, սակայն հզօր և փառաւորեալ որեարն նախնի 'ի ձախողել բաղդին՝ նախամեծար առնէր զփրկութիւն։ — Ի յուսահատութենէ աստի զօրացն բռնադատեալ զօրավարին, արար նամականի առ Վոլոգէս. բայց յառաջնումն գրին ոչ աղերսանաց պայմանաւ, այլ 'ի ձև բողոքոյ գրէր զպատերազմելոյ նորա 'ի վերայ Հայաստանի՝ որ յամենայն ժամանակի ընդ տէրութեամբ Հռովմայեցւոց լեալ էր, կամ Թագաւորի՝ զոր ինքնակալն տայր նոցա։ Յաւելոյր ցուցանել օգտակար երկաքանչիւրոց և կողմանց զխաղաղութիւն, և մի յառաջիկայն և եթէ Հայել՝ ընդդէմ երկուց և եթէ լեգէոնաց ամենայն զօրութեամբ աշխարհին իւրեանց ելանելով. քանզի Հռովմայեցւոց մնային ծագք երկրի, որովք կարող էր զօրավիգն լինել 'ի յաղթութիւն։

ԺԴ. Բայց Վոլոգէս առանց ընդդիմաբանելոյ գրէր՝ մնալ եղբարցն իւրոց Բակուրի և Տրդատայ, և զի այն էր տեղի և ժամանակ առեան գումարելոյ՝ առ 'ի սահմանել զբաղդ Հայաստանի, և դիցն շնորհիւ ըստ արժանի փառացն արշակունեաց՝ զլեգէոնացն ևս Հռովմայեցւոց տալոյ վՃիռ։ Յայնժամ Պետոս հրեշտակս աբար առ Թագաւորն, խնդրելով խօսել ընդ նմա. այլ նա յղեաց զՎասակ զօրագլուխ հեծելազօրուն. յուշ առնէր նմա Պետոս զՎուկուլլոս և զՊոմպէոս, և որ ինչ ինքնակալացն արարեալ էր առ 'ի նուաՃել և 'ի պարգևել զՀայաստան։ Սա որ պատասխանի ետ Վասակ. Եթէ ինքնակալաց էր իշխանութիւն ինն ունելոյ կամ տալոյ զՀայաստան, սակայն տիրէին անդ զօրութեամբ Պարթևք։ — Եւ բաղումն վիՃեալ ընդ միմեանս, 'ի վաղիւ անդր կոչեցին զՄոնոբազ ադիաբենացի 'ի վկայ իրաւախոհութեան իւրեանց, և միաբանեցին ազատել զլեգէոնս 'ի պաշարմանէ, զօրաց ամենեցուն ելանել 'ի սահմանաց Հայաստանի, և ըզբերդս և զհամբարս Թողուլ Պարթևաց. և 'ի կատարել այսր ամենայնի, տալ Վոլոգեայ ժամանակ՝ առաքելոյ հրեշտակս առ Ներոն։

ԺԵ. Յայնմ վայրի արկ Պետոս կամուրջ զԱրածանեաւ՝ որ մերձ 'ի բանակ անդր հոսէր, որպէս թէ պէտս ունելով անցանելոյ ընդ այն, այլ ստուգիւ Պար-

թեաց զայն նմա հրամայեալ էր առհաւատչեայ յաղ-
թութեան իւրեանց, և պիտոյ իսկ էր նոցա յանցս.
իսկ մերքն ընդ այլ ճանապարհ չու արարին։ Յաւել
համբաւ՝ ընդ լծով ևս անցուցեալ Պարթևաց զլե-
գէոնս, և զայլոց ևս թշնամանաց պարտութեան յա-
ւելեալ զձև, և 'ի պատնէշս անդր մտեալ նախ քան
զմեկնել անտի հռովմէական զօրաց, և կացեալ յելս
նոցա երկուստեք՝ համար առնելով որպէս ստրկաց,
կամ գրաստուց՝ 'ի վարելն զնոսա 'ի վաստակ, և ըզ-
գրատս նոցա մերկացեալ, և զզէնս 'ի բաց բարձեալ.
իսկ զօրականին պակուցելոյ ոչ իշխեալ ընդդէմ դառ-
նալ նոցա՝ թէ գուցէ 'ի մարտ ստիպեսցին։ Վոլոգէս 'ի
ցոյց պարտութեանս մերոյ՝ ետ շեղջակուտել զզէնս և
զդիակունս անկելոցն 'ի զրահանս. բայց հրաժարեաց
'ի տեսանելոյ զլեգէոնս փախստեայս՝ փառասիրելով
ստանալ զհամբաւ կարեկցութեան, 'ի յագեցուցանել
անդ զգոռոզութիւն իւր։ Եւ էանց նա ընդ Արածանի,
նստեալ ինքն 'ի փիղ, և թիկնապահք նորա հեծեալ
'ի ձի, բայց ահիւ բեկանելոյ կամրջին ընդ այն-
քան բեռամբ. զի դաւ 'ի կառուցողացն համբա-
ւէր նիւթեալ. այլ յորոց խիզախեցինն անցանել ընդ
այն, ծանուցաւ զի հաստատուն էր, և ոչ դարան ինչ
պատրաստեալ կայր անդ։

Ժ.Զ. Բայց յայտնի եղև՝ զի պաշարելոցն էին համ-
բարք այնչափ, մինչև հուր 'ի համբարանոցս անդր
արկանել. ուր ընդ հակառակն կարօտս պարենից
ասէր Կորբուլոն զՊարթևս, և ստիպեալս զնոսա 'ի
լուծանել զպաշարումն, զի սպառեալ էր նոցա ճարակ
ձիոց, և երեքօրեայ ճանապարհաւ հեռի կայր ինքն
անտի։ Յաւելոյր Կորբուլոն՝ երդուեալ Պետոսի առ
ոտս դրօշուց առաջի վկայից յղելոց 'ի Թագաւորէն,
ոչ ումեք 'ի հռովմայեցւոց կոխել 'ի Հայաստան՝ և
հասեալ նամականուոյն առ Ներոն, և հաւանեալ նորա
ընդ խաղաղութիւն։ Այսոքիկ թերևս 'ի յաճախու-
թիւն թշնամանաց ստայօդեալ, բայց էն ևս անժըխ-
տելի հաւաստիք՝ Պետոսի քառասուն մղոնս առօրին
առնելոյ, թողեալ զվիրաւորս յուղևոջ. որ այս ահաբեկ
փախուստ՝ ամօթապարտ ևս էր քան կապարձս առ
թշնամին դարձուցանել։ Կորբուլոն 'ի հանդիպելն առ

նոսա յեզը Եփրատայ՝ ոչ կամեցաւ շքով դրօշուց և պայծառութեամբ զինուց զզօրս իւր ածել՝ի տեսիլ, առ՝ի չնշաւակելոյ զիստիր նոցա յիւրոցն. և զի դարձեալ իւրքն տխուրք և կարեկիցք ընդ հէք զինուորաց կիցս իւրեանց՝ չկարէին ժոյժ ունել արտասուաց, և հաղիւ հեկեկանօք ողջունէին զմիմեանս։ Ոչ ևս անդ ելևեալս քաջութեան զիրերօք և նախանձ փառաց էր տեսանել՝ որպէս՝ի յաջողուածս, բայց միայն գթութիւն՝ որ հզօրագոյն է՝ի տրուպ բախտի։

ԺԷ. Զօրավարացն երկոցունց սուղ ինչ ընդ միմեանս եղեն բանք։ Կորբուլոն քանքատէր՝ի զուր վաստակեալ. Զի մարթ էր, ասէ, զրաւ առնել մարտին՝ի փախչել Պարթևաց։— Պետոս ասէ. Ոչ ինչ կորուսաք, դարձուսցուք զարծուիս, դիմեսցուք համախումբ՝ի Հայս տկարացեալս՝ի մեկնել անտի Վոլոգեայ։— Կորբուլոն ասէ. Զէ ինձ այդ պատուէր ինքնակալին. վտանգ ևեթ լեգէոնացն ձգեաց զիս այսր՝ի կուսակալութենէ իմմէ.՝ի յողդողդել Ջանիցն Պարթևաց, դարձայց յԱսորիս։ Պարտ է ինձ խնդրել զյաջողութիւն բախտի, զի հետևակազօրն վաստակաբեկ՝ի բազում երկայն ճանապարհէն՝ հասցէ զհետ հեծելազօրուն, որ արագ արագ ընդ հարթարդակ դաշտս ձիավարէ։ — Յայնժամ Պետոս ձմերեաց՝ի Կապադովկիա. բայց Վոլոգեայ հրեշտակս արարեալ առ Կորբուլոն՝ ասէր ամիոփել նմա զամրութիւնս իւր յայնկոյս Եփրատայ, և թողուլ անջրպետել գետոյն որպէս յառաջն՝ ընդ երկուս պետութիւնս. իսկ Կորբուլոն պահանջէր՝ պահակապանացն Պարթևաց ելանել յաշխարհէն Հայոց, զոր յանձն էառ թագաւորն։ Ամրոցքն կառուցեալք՝ի Կորբուլոնէ յայնկոյս Եփրատայ փլուզան, և մնացին Հայք անիշխան։

ԺԸ. Բայց՝ի Հռովմ կանգնեցան ախոյեանք ընդդէմ Պարթևաց՝ անպարտելի երկուստեք կալով դեռևս մարտին, և կամաքք յաղթականք՝ի սարահարթ Կապիտոլին, վճռեալք՝ի ծերակուտէն՝ի յաջողել մարտին. և ոչ՝ի ձախողել անդ՝ դադարէին յայնցանէ հռովմայեցիք, առ՝ի պատրել զտեսօղս՝ թէպէտ և գիտակք արկածիցն։ Եւ Ներոն առ՝ի ծածկել զտրրտմութիւն իւր վասն անցիցն՝ որ արտաքոյ անցանէին,

զՀամբարս ցորենոյ Ժողովրդեան՝ ապականեալս 'ի հնութենէ՝ եւ ամալ 'ի Տիբերիս, 'ի ցոյց առատութեան համբարոց, և արդեալ զյաւելուած գնոց արմատեաց, թէպէտ և նաւք իբր երկերիւր ցորենաբերք ընկղմեալ էին անդ 'ի նաւահանգստին 'ի մրրկէ, և այլք հարիւր ածեալք ընդ գետն՝ հրդեհեալ ծախեալ էին 'ի չար պատահարէ։ Եւ կացոյց Ներոն համբարապետս երիս 'ի կարգէ բդեշխից, զԼ. Պիսոն, զԴ. Դուկենիոս Գեմինոս, և զՊոմպէոս Պաւլինոս, եպերելով զնախորդս իւր՝ զի յաձախութեամբ ծախուց յաւելեալ էր նոցա զելս գանձուն քան զմուտս. և պարծէր ընդ առատաձեռնել իւր ամի ամի վեցհարիւր բիւրս սեստերտից հասարակապետութեան։

ԺԹ. Ցայնու ժամանակաւ յաձախէր սովորութիւն չար, զի 'ի մերձենալ ժողովոյ վիճակ արկանել գաւառաց՝ բազումք 'ի քաղաքացւոց անորդիք, կեղծ որդեգրութեամբ կացուցանէին իւրեանց որդիս, և յետ արկանելոյ զատենակալութեանց և զկուսակալութեանց վիճակս 'ի վերայ հարց, նոյնհետայն արձակէին որդեգիրքն 'ի բաց։ Բողոք մեծ եղև զայսմանէ յատեան ծերակուտին, 'ի մէջ ածեալ զիրաւունս բընութեան և զվաստակ դաստիարակութեան ծնողաց, ընդդէմ նենգութեան և չարարուեստ հնարից առօրեայ որդեգրութեան. զի ասէին. Շատ իսկ վարձք են անորդւոց՝ լինել զերծ 'ի հոգոց և 'ի բեռանց, և առ ընորհս և առ պատիւս բաց և պատրաստ ունել ուղի. պաՀրտ իցէ մեզ յետ ընդերկար ակնկալութեան 'ի դերև ելանել 'ի խոստմանէ օրինաց, և որք թարմատար առանց հոգոց և առանց ողբոց են հարք անորդիք՝ հաւասարել երկարատև ակնկալութեան ստոյգ հարց։ — Վասն որոյ եւ ծերակոյտն վՃիռ, մի՛ ումեք պաՀուՃեալ որդեգրութեամբ ունել իրաւունս 'ի յանձանձանս իրաց աշխարհին, և մի՛ 'ի ժառանգութիւն։

Ի. Յետ այսորիկ Կլաւդիոս Տիմարքոս կրետացի յատեան կոչեցաւ, զի 'ի վերայ անիրաւութեանց՝ որովք սովոր են հզօրք և Ճոխք բռնանալ ընդ անաւադս յամենայն տեղիս՝ ամբաստանութիւն էր վնմանէ, 'ի թշնամանս ծերակուտին ասացեալ. Ցիմ ձեռս է փոխանակի բդեշխին Կրետայ ընդունել, կամ ոչ, ընորհա-

կալիս 'ի ծերակուտէն։ — Ցայս պատեհ առեալ Թը-
րասեայ յօգուտ աշխարհին դատապարտել զյանցաւոր-
յաքսոր, յաւել. Ցայտ է 'ի փորձոյ, Հարք ատենակալք,
զի բարեկարգութիւնք և օրէնք գերազանցք՝ յանօրէ-
նութենէ չարաց տնօրինին լաւաց. այսպէս 'ի յանդգը-
նութենէ Ճարտարախօսաց՝ կինկեան օրէնք, 'ի չարա-
բուեստ հնարից թեկն ածելոյ զաւագութեան՝ յու-
լեան սահմանադրութիւնք, և 'ի զօշաքաղութենէ ա-
ւագանւոյն՝ կալպուրնեան վՃիռք յառաջ եկին. քանզի
յանցանք երիցագոյնք են ժամանակաւ քան զպա-
տիժս, և ուղղութիւն կրտսեր քան զմեղանս է. կալցուք
ապա՝ ընդդէմ նորոյ ամբարտաւանութեան գաւա-
ռայնոց՝ խորհուրդ արժանի հռովմէական արդարու-
թեան և հաստատութեան, որ առանց ինչ ստանանելոյ
պաշտպանութեան նիզակակից ազգաց՝ տացէ դնել
մեզ 'ի մտի, զի որպիսի ինչ ուրուք և ի՞նչ համբաւ, ոչ
յայլ ինչ՝ բայց միայն 'ի վարկ քաղաքակցացն իւրոց է
հաստատեալ։

ԻԱ. Ոչ դատաւորք միայն և բդեաշխք, այլ և լոկ
քաղաքացիք առաքէին երբեմն յայցելութիւն գաւա-
ռաց՝ առնուլ համար զիւրաքանչիւրոցն հնազանդու-
թենէ, և սասանէին ազգք 'ի դատաստանէ նոցին.
իսկ այժմ՝ մեք զօտարս պաշտեմք և շողոմեմք, և որ-
պէս 'ի կամաց միոյ ուրուք շնորհակալիք՝ դիւրագոյն
ևս ամբաստանութիւնք սահմանին։ Թող սահմանեա-
ցին, թողցին գաւառայնոց հնարք ցուցանելոյ զզօրու-
թիւն իւրեանց. այլ դրուատիք սուտք և մուրացածոյք
խափանեսցին՝ խստիւ ևս քան զչարութիւն և զանգը-
թութիւն։ Բազումս 'ի շնորհելն է յանցանել քան 'ի
պատժելն. նա աւանիկ են իսկ առաքինութիւնք ա-
տելիք, որպէս յամառ խստութիւն, և առ շնորհս ան-
դրդուելի հաստատութիւն։ Վասն որոյ սկիզբն իշխա-
նութեան մերոյ լաւագոյն է, և ապա յոռենայ, խըն-
դրելով վարկս հանգոյն այնոցիկ՝ որ թեկն ածեն զա-
ւագութեան. որ եթէ խափանեսցի, արդարագոյն
և հաստատագոյն յանձանձեսցին գաւառք. զի որպէս
երկիւղ դատաստանի հարստահարութեան նուաՃեաց
զզօշաքաղութիւն, նոյնպէս և արդելք շնորհակալեաց
սանձահարեսցէ զփառամոլութիւն։

ԻԲ. Գովութեամբ բաղման ընդունելի եղեն կարծիք Թրասեայ, այլ ոչ հաստատեցան վՃռով ծերակուտին՝ 'ի հրաժարել բդեշխից հանել զայն 'ի խորհուրդ. բայց ապա յառաջարկել զայն ինքնակալին, սահմանեցաւ՝ մի ևս 'ի ժողովս նիզակակից ազգաց խօսել զխնդրոյ շնորհակալեաց 'ի ծերակուտէն առ կուսակալս և առ փոխանորդս բդեշխից, և մի ումեք հրեշտակութիւն վասն այնորիկ առնել 'ի Հռովմ։ Այս նովին բդեշխիւք շանթահարեալ այրեցաւ կրթարանն, և որ 'ի նմա պատկերն Ներոնի պղնձակերտ՝ կիսահալ եղծաւ անկերպարան։ Պոմպէա, քաղաք ականաւոր 'ի Կամպանիա, 'ի սասանութենէ երկրի մեծաւ մասամբ կործանեցաւ. և Լէլիա՝ մի յեստեան կուսանաց մեռաւ, և զտեղի նորա կալաւ Կուռնելիա 'ի Կոսեանց ազգատոհմէ։

ԻԳ. Յաւուրս բդեշխութեան Մեմմիոսի Հռեգուլեայ և Վիրգինեայ Հռուփոսի ընկալաւ Ներոն խնդութեամբ մեծաւ դուստր 'ի Պոպպէէ, և անուանեաց զնա Աւգոստա, զնոյն անուն յաւելեալ և մօրն. վայր ծննդեան մանկանն դիպաւ 'ի գաղթականին յԱնտիոն, ուր և ինքն Ներոն էր ծնեալ։ Ծերակուտին վաղ իսկ աշխարհօրէն ուիտիւ յանձն արարեալ էր դից զՊոպպէ յերկունս անդ. և առաւելաւն զայն կատարեաց յայնժամ, հանդերձ համաշխարհի պաղատանօք. յաւելեալ սահմանել և մեհեան դիցուհւոյն բեղնաւորութեան, և հանդէս մարտի ըստ օրինակի խաղուցն՝ որ յակտիական տօնս կատարին։ Սահմանեցաւ դարձեալ կանգնել և պատկերս ոսկեղէնս երկաքանչիւրոց դից Բախտի առ սեամն կապիտոլեանն Դիոսի, և ըզխաղս կրկիսականս հաստատեալս 'ի Բովիլ 'ի պատիւ Յուլեանց տոհմին՝ կատարել և յԱնտիոն յանուն դոմիտեան և կլաւդեան ազգատոհմից, որ ապա խափանեցան՝ 'ի վաղամեռիկն լինել մանկանն չորեքամեայ։ Անդրէն 'ի վեր երևեցան մարդահաճութիւնք. վՃռեցաւ նուիրել մանկանն պատիւ դիւցական, բագին և մեհեան և քուրմ, ծայրայեղ զառածեալ Ներոնի, որպէս 'ի խնդութեան՝ նոյն և 'ի տրտմութեան. ծանուցաւ ապա զի 'ի ծննդեան մանկանն 'ի դիմել ծերակուտին առ հասարակ յԱնտիոն՝ Թրասէաս արդե-

լեալ՝ի գնալոյ ընդ նոսա, անյողդողդ սրտիւ ընկա-
լեալ էր զթշնամանսն չարագոյժս մօտալուտ մահուն
իւրոյ։ Աւանդեն՝ լուր եղեալ յայնժամ պարծելոյ
ինքնակալին առ Սենեկա, որպէս թէ հաշտեալ ընդ
Թրասեայ. և Սենեկայ ուրախակից վասն այնորիկ
լեալ ընդ ինքնակալին. սակայն փառք և վտանգ էր-
կոցունցն իսկ արանց երևելեաց անտի յաճախեին։

ԻԴ. Ի մուտս գարնայնոյ հասին հրեշտակք՝ի
Պարթևաց, պատգամաւորեալք՝ի Վոլոգեայ, որ զի-
մաստս պատգամացն նամականուով ևս այսպէս յայտ
առնէր. Լուեմ զհին և զյաճախակի անցեալ վէճս
զտիրապետութենէ հայաստան աշխարհի, զի դիք՝
հզօրագունից ևս ազգաց դատաւորք՝ ետուն Պար-
թևաց, ոչ առանց նախատանաց հռովմայեցւոց, զժա-
ռանգութիւն նորին։ Սակաւ աւուրք են յորմէ հետէ
պատեալ պաշարեցի զՏիգրան. կարէի և զՊետոս և
զլեգէոնս նորա խորտակել, այլ թողի զնոսա ազատս.
շատ իսկ ցուցեալ զզօրութիւն իմ, զչափաւորութեան
ևս իմոյ ետու զառհաւատչեայ։ Ոչ հրաժարէր Տիրիթ
գալ՝ի Հռովմ՝ առնուլ թագ, եթէ ոչ՝ի պաշտամանէ
քրմութեան խափանէր. երթիցէ նա առաջի դրօշուց
և պատկերաց ինքնակալութեան՝ յանդիման լեգէո-
նաց զնաւակատիս թագաւորութեան իւրոյ կատա-
րել։ —

ԻԵ. Ա.յս գիր Վոլոգեայ հակառակ գրելոցն էր՝ի
Պետոսէ, որ անպարտելի ասէր լեալ երկուստեք զպա-
տերազմն. վասն որոյ հարիւրապետն, որ ընդ հրեշտակ-
սն երթեալ էր, հարցաւ՝ թէ յո՞ր ձեռս կայր հա-
յաստան. և՝ի պատասխանել նորա թէ հռովմայեցիք
առ հասարակ՝ի բաց մեկնեալ էին անտի, խնդրեին ընդ
Եղև Ներոն՝ զի բարբարոսք զոր ունէին խնդրեին ընդ
հենգն. և խորհեցաւ ընդ աւագանին՝ զոր յերկոցունց
ընտրել, զպատերազմ կեղակարծ թէ զխաղաղութիւն
կորանօք. և առանց երկբայութեան ընտրեցաւ պատե-
րազմ։ Յայնժամ զկորբուլոն՝ որ՝ի բաղում ամաց հետէ
ճանաչէր զզօրն և զթշնամիս՝ կացուցին զօրավար, զի
մի դարձեալ և այլոց ուրուք տգիտութեամբ սխալեալ
ստրջասցին։ Վասն որոյ՝ առանց պատասխանի տալոյ՝
յետս դարձուցին զհրեշտակս, տուեալ ևեթ պար-

գեւս նոցա՝ առ 'ի Թողուլ տեղի յուսոյ չելանելոյ Տի-
բիթի 'ի դերև, 'ի գալ Իւրումարկանել զնոցն աղերս։
Կինկեայ յանձն եղև տեսչութիւն գաւառին Աւորուոց,
իսկ Կորբուլոնի առաջնորդութիւն զօրացն՝ յաւելեալ
'ի նոսա զՀնդետասանեորդն լեգէոն, զոր Մարիոսի
Կելսոսի ածեալ էր 'ի Պանոնիոյ։ Գրեցաւ և առ չոր-
որդապետս և առ արքայս, առ վերակացուս առ գոր-
ծակալս և առ կուսակալս՝ որք հրամայէին 'ի գաւառս
մերձակայս, հնազանդել հրամանաց Կորբուլոնի, իշ-
խանութիւն տուեալ նմա որպէս գրեթէ հաւասար
այնմ՝ զոր ժողովրդեանն Հռովմայ տուեալ էր Կն.
Պոմպէի 'ի պատերազմին ընդդէմ հինից ծովայնոց։
Պետոս ծանուցեալ խիթայր 'ի դարձին Իւրում՝ 'ի Հռովմ,
բայց ինքնակալն շատ համարեցաւ ծաղրել զնա՝ ասե-
լով. Փութամ՝ ներել քեզ, զի մի՛ 'ի յերկարաձգել հո-
գոյդ խօթասցիս յերկիւղէ՝ պատրաստականդ յահա-
բեկութիւն։

ԻԶ. Բայց Կորբուլոն զչորրորդ և զերկոտասանե-
որդ լեգէոնս, անզօրս 'ի պատերազմ վասն կորստեան
բազմաց, և վասն մնացելոցն վհատութեան, արձա-
կեաց յԱւորիս. և զվեցերորդն և զերրորդ՝ ամբողջ և
'ի յաճախաւոր յարձակմունս փորձ և յաղթող՝ էած 'ի
Հայաստան։ Յաւել 'ի նոսա և զՀինգերորդն, որ կայր
'ի Պոնտոս զերծ 'ի կոտորածէն. դարձեալ և զՀնգե-
տասանեորդն այն ինչ հասեալ, և զդրօշս ընտրելոց լիւ-
բիկեցւոց և եգիպտացւոց. և որչափ ինչ հեծեալ և
հետևակ և օժանդակ զօրք էին արքայից՝ համախըմ-
բեալ մերձ 'ի Մելիտենէ, ուստի պատրաստեալն էր
անցանել յայնկոյս ընդ Եփրատ. և քաւութիւնս ըստ
օրինի արարեալ բանակին, հրապարակախօս եղև
ապա առ զօրսն՝ խրախուսելով զնոսա 'ի պայծառ յաղ-
թութիւնս ընդ հովանեաւ ինքնակալին. յուշ ածէր
նոցա, մխայաղթ զինուցն ազդեցութեամբ՝ որ Ճար-
տարախօսն է յայր պատերազմող՝ գյաղթութիւնս իւր,
և անհմտութեան Պետոսի տայր զձախողութիւնս։

ԻԷ. Խաղացոյց ապա զբանակն ընդ Ճանապարհ՝
զոր Լուկուլլոսի երբեմն հատեալ էր, բացեալ անդրէն
ուր ուրեք ժամանակին խցեալ էր զայն. և 'ի հասա-
նել հրեշտակաց 'ի Տիրիթէ և 'ի Վոլոգեայ խօսել 'ի

խաղաղութիւն՝ ոչ մերժեաց, այլ յղեաց ընդ նոսա հարիւրապետս ողջբական պատգամաւք, և ասէր. Ոչ ցայն վայր հասեալ են իրք, զի վերջին պատերազմի հարկ 'ի վերայ կայցէ։ Բազում յաջողեցին դէպք հռովմայեցւոց և դուն ուրեք Պարթևաց, առ 'ի խրատ և 'ի կորանս ամբարտաւանութեան։ Տիրիթի օգուտ է ընդունել 'ի պարգև զթագաւորութիւն 'ի վերայ անաւեր աշխարհի, և Վոլոգեայ մեծ ևս օգուտ մարթ է տնօրինել Պարթևաց՝ նիզակակցութեամբ հռովմայեցւոց, քան թշնամութեամբ՝ որ երկաքանչիւրոց ևս կողմանց է 'ի տոյժ։ Ոչ ինչ զանխուլ է յինէն քանի՛ հերձուածք են 'ի ձեզ, և որպիսեաց աննուաճելի և ամենի ազգաց իշխէ Վոլոգէս. Իսկ ինքնակալին ամենայն ուրեք խաղաղութիւն է անշարժ, աստ ևեթ պատերազմ։ — Ի խրատս յայսոսիկ յաւել և զսաստ, հալածելով 'ի կայից իւրեանց զնախարարս Հայոց զառաջնորդս վտարանջելոցն 'ի մէջ, և զամուրս նոցա կործանեաց, զդաշտս և զլերինս, զհզօրս և զտկարս լցեալ արհաւրօք։

ԻԸ. Զէր ինչ դժպհի բարբարոսաց իսկ՝ անուն Կորբուլոնի, և ոչ ատէին զնա որպէս թշնամի. վասն որոյ և զիսորհուրդ նորա հաւատարիմ համարէին։ Վոլոգէս ինքնին ոչ յամառեալ 'ի վերջին փորձ պատերազմի, խնդրէր միայն դուլ զինուց վասն նախարարութեանց ոմանց, և Տիրիթ՝ ժամ և տեղի բանակցութեան։ Ժամադրութիւն 'ի մօտ աւուրս սահմանեցաւ, և տեղի՝ ուր լեգէոնք սուղ ինչ յառաջ պաշարեալ էին ընդ Պետոսի. բարբարոսք առ զուարթ յիշատակի ընտրեցին զայն տեղի, և Կորբուլոն ոչ մերժեաց, զի յեղափոխութիւն բաղդին յաւելցէ զփառս իւր։ Դարձեալ և ոչ Պետոսի յաձախէին կորանք, մանաւանդ զի զորդի նորա զՀազարապետ զօրականին յղեալ էր Կորբուլոնի ջոկատիւ միով, առ 'ի թաղել զանկեալս 'ի չարաբախտ պատերազմին։ Ի պայմանեալ աւուրն Տիբերիոս Ալեքսանդր՝ ասպետ հռովմայեցի ականաւոր՝ օգնական Կորբուլոնի 'ի պատերազմին, և Վիւիանոս Ենոիոս փեսայ նորին ինքեան Կորբուլոնի, որ չև ևս լեալ 'ի տիս ծերակուտական իշխանութեան՝ փոխանակ տեղակալի տուեալ էր նմա, եկին 'ի բանակն Տի-

ըլթի 'ի պատիւ երեսաց նորա՝ առ 'ի բառնալ 'ի նմանէ գրաւականաց այնպիսեաց զամենայն կասկած նենգութեան։ Ընկալեալ եղեն հեծեալք քսան, և 'ի տեսիլ Կորբուլոնի կանխեաց Թագաւորն էջ 'ի ձիոյ. և ոչ Կորբուլոն յամեաց իջանել. և մատուցեալ, ողջոյն ետուն միմեանց՝ ոտն 'ի յոտն աջոյ խառնեալ։

ԻԹ. Գովեաց հռովմայեցին զարքայն մանկահասակ, զի զանց արարեալ զյանդուգն պատերազմաւ՝ ընտրէր զանվտանգ և զիրկաւէտ խորհուրդն. իսկ նա Ձառս ոչ սակաւ զաղնուականութենէ իւրմէ արկեալ, զիջաւ ապա և ասէր գնալ 'ի Հռովմ, յաւելուլ նոր փառս ինքնակալին տեսանելոյ աղերսաւոր առաջի իւր զարքայ արշակունի՝ առանց պարտութեան Պարթևաց։ Յայնժամ յանձն էառ Տիրիթ գնել առաջի պատկերի ինքնակալին զթագն արքունի, և ընդունել ապա զայն 'ի ձեռանէ նորին. և գրկախառն հտմբուրիւ եղև վախճան բանակցութեանն։ Յետ սակաւ աւուրց երկոքին կողմանք բազում երևելի սպասուք, անտի հեծեալք կարգեալ ըստ գնդից և ըստ հայրենի դրօշուց, և աստի լեգէոնք բազմափայլ արծուեաքն և նշանաք և դրօշելովք դից կացին մեհենաձև. բեմ 'ի միջի կանգնեալ, և 'ի վերայ գահաւորակ՝ վերբերելով զպատկեր Ներոնի։ Առ որ մատուցեալ Տիրիթի, զենմամբ նախ զոհից ըստ օրինի, եբարձ զթագն 'ի գլխոյ իւրմէ, և եդ առ ոտս պատկերին. յուզեցան սիրտք ամենեցուն, մանաւանդ զի առաջի աչաց նոցա կայր տակաւին կոտորած և պաշարումն հռովմէական բանակաց։ Քանի՞ արդ յեղափոխեալ դէպք. Տիրիթ կացեալ անդ 'ի տեսիլ ազգաց, ոչ ինչ ընդհատ 'ի գերւոյ։

Լ. Կորբուլոն յաւել 'ի փառս իւր և զպարծանս մարդասիրութեան. արար խրախուսս, և առ ամենայն հարցուածս Թագաւորին 'ի տեսիլ նորանոր իրաց, թէ առ ի՞նչ 'ի ձեռն հարիւրապետի քարոզէր սկիզբն պահուց դիշերայնոց, և ընդէ՞ր փողով զրաւ լինէր կոչնոց, և ջահիւ լուցանէր հուր 'ի բագնի առ տեղեաւ հմայիցն կանգնելոյ, տայր Կորբուլոն բարձրագոյն իմաստս, և զարմացուցանէր զնա ընդ վաղնջուց սովորութիւնս մեր։ Ի վաղիւ անդր Տիրիթ յառաջ քան

զերկայն ուղևորութիւնն, խընդրեաց այց առնել մեր իւրում և եղբարց, թողեալ զդուստր իւր 'ի պատանդ, և աղերսագիր առ Ներոն։

ԼԱ. Եւ մեկնեալ՝ եգիտ զԲակուր 'ի Մարս, և զԼոլոգէս յՆեկբատանս՝ որ 'ի հոգս կայր զեղբօրէն, և խընդրեալ իսկ էր 'ի ձեռն հրեշտակաց 'ի Կորբուլոնէ՝ զստուեր իսկ ծառայութեան մի՛ ածել զնովաւ, մի՛ տալնմա 'ի բաց դնել զսուսերը, մի՛ զգրկախառն ողջոյն կուսակալաց արգելուլ նմա, և մի՛ առ դրունս նոցա տալնմա սպասել. այլ և 'ի Հռովմ հանդիտապատիւ բդեշխից զնա կացուցանել։ Քանզի սովորելումն հանդէս առնել ամբարտաւանութեան՝ անծանօթ էր հռովմէականս սովորութիւն, որ զզօրութիւն ևեթ իշխանութեան խնդրէ՝ զանց զնոտուովք արարեալ։

ԼԲ. Ի նմին ամի ետ Ներոն ազգայն Ալպեաց ծովեզերեայց զկրաւունս Լատինի, և ասպետացն հռովմայեցւոց սահմանեաց կայս 'ի տեսարանի 'ի վեր քան զժողովրդեան, զի ցայնժամ խառն բազմէին՝ ռոսկեան օրինաց զչորեքտասան ևեթ կարգս տեսարանին ամենեցուն նոցա սահմանեալ։ Եւ դարձեալ տեսիլս սուսերամարտից շքեղս որպէս զառաջինսն հաստատեաց, ուր յոգունք յաւագուհեաց և յատենակալաց ծերակուտին զսպատիւ իւրեանց անարգեցին, 'ի կրկէս անդր իջեալ։

ԼԳ. Առ Կ. Լեկանիոսիւ և Մ. Լիկինեաւ բդեշխիւք, Ներոն ևս քան զևս յաւելոյր 'ի տենչ ելանելոյ 'ի հասարակաց տեսարանս, զի դեռ ևս առանին միայն 'ի պարտէզս իւր նուագէր 'ի պատանեկան խաղս. բայց տեսարանքն այնոքիկ անհաճոյ էին նմա, վասն սակաւուց անդ 'ի զնին կարելոյ կալ, և վասն անձկութեան նոցա ըստ ոչ արժանի 'ի լուր այնքանոյ գեղեցկաձայնութեանն։ Այլ 'ի սկզբան անդ ոչ համարձակեալ 'ի Հռովմ, ընտրեաց զՆեապոլիս՝ որպէս քաղաք յունական, անդ սկսանել. և անտի անցեալ յԱքայիա՝ զերևելի և զառ 'ի հնութենէ սրբազանեալ պսակս համբարել, և ապա գերադոյն համբաւով զդրուատիս հռովմէականս ընդունել։ Բնակիչք քաղաքին, և որք 'ի մերձակայ քաղաքաց և 'ի գաղթականաց 'ի լուր համբաւոյն դիմեալք, և որք 'ի սպաս ինքնակալին և

ընդ նմա յայլևայլ պէտս եկեալ էին, ևս և գունդք զօրաց, խռնեցան լցին զտեսարան քաղաքին։

ԼԴ. Արկածք իմն անդ պատահեցին՝ չարագոյժ 'ի բազմաց համարեալ, զոր Ներոն 'ի խնամոց բարերար դից վարկանէր. զի յելանել անտի ժողովրդեան՝ կործանեցաւ տեսարանն դատարկ, առանց ինչ ումեք ստանանելոյ. վասն որոյ Ներոն յօրինեաց երգս 'ի գոհութիւն դից, հռչակել զբարեբախտ դէպսն. և 'ի նաւէն դէպ 'ի Հանդրին ծով՝ զկայ էառ 'ի Բենևենտ, ուր Վատինիոս 'ի հանդէս ածէր զտեսիլ սուսերամարտից գերահռչակ։ Վատինիոս մի 'ի գարշելեաց հրէշից արքունեաց նորա էր, համբակ կարուակի, խեղաթիւր մարմնով, և խեղկատակ. 'ի սկզբան անդ խաղալիկ արքունեացն, և ապա այնպէս հզօրացեալ ամբաստանութեամբ լաւ որերոյ, մինչև անցուցանել զանցուցանել քան զևս չարագոյնս 'ի մարդկանէ իշխանութեամբ Հոխութեամբ և վնասակարութեամբ։

ԼԵ. Մինչ դեռ Ներոն 'ի խաղս յայսոսիկ զբօսանէր, 'ի հեշտութիւնս իսկ անդ ոչ դադարէր յեղեռանէ։ Ի սոյն աւուրս Տորկուատոս Սիլանոս ստիպեցաւ անձին առնել. զի 'ի պայծառութիւն յունեան տոհմին յաւելեալ էր նորա զդիւցազնն Աւգոստ ընդ նախահարս Յունեանց դասել։ Հրամայեցաւ չարախօսաց ամբաստանել զնա 'ի շռայլութիւն պարգևաց՝ յուսով յեղափոխելոյ պետութեան, և ունել նմա առ իւր արս՝ զորս դպրապետս իւր և ընկալուչս աղերսագրաց և համարակալս կոչէր, յորմէ՝ յանձանձանաց՝ յորս մտաբերէր։ Յայնժամ մտերմագոյնք 'ի ձերբազատից նորա բարձան 'ի նմանէ, և արկան 'ի կապանս. և զի դաստապարտութիւն առաջի կայր նմա, եհատ զզարկս բազկացն, և զրաւեցաւ 'ի կենաց։ Եւ Ներոն ըստ իւրումն սովորութեան 'ի վերայ էած՝ զի թէպէտ և պարտաւոր էր նա յիրաւի՝ անյոյս 'ի պաշտպանութենէ անձին, սակայն զերծանէր 'ի մահուանէ՝ եթէ սպասեալ էր ողորմութեան դատաւորին։

ԼԶ. Եւ յետ ոչ բազում աւուրց մեկնեալ Ներոնի յԱքայիոյ՝ դարձաւ 'ի Հռովմ, և ոչ է գիտել զպատճառս դարձին. բայց միտք նորա յուզեալ էին վասն դաւառացն արևելից, և մանաւանդ զԵգիպտոսէ։

Ծանոյց ապա հրովարտակաւ՝ զի չյամէր 'ի բացեայ, և զի ոչ ինչ 'ի բացակայութենէ իւրմէ տոյժք իրաց հասարակապետութեան հասանէին, այլ ամենայն ինչ բարւոք յաջողէր։ Եւ մինչ չև ուղղոյ լեալ՝ էլ 'ի Կապիտոլին յերկրպագութիւն դից. և 'ի մտանելն 'ի մեհեան Եստեայ՝ յանկարծակի դողումն կալաւ զանդամն նորա, յահարկութենէ թերևս դիցուհւոյն, կամ 'ի խղձէ չարեաց՝ որ տագնապէրն զնա հանապազ. և հրաժարեաց 'ի խորհրդոյ ուղևորութեան, ասելով. Թեթևագոյն քան զսէր հայրենեաց են ինձ հոգք ամենայն. թաղծադէմն տեսանեմ զձեզ, ո՛ հռովմայեցիք. և տրտունջ զանխուլ լսեմ զտարադէմ ուղեգնացութենէս 'ի ձէնջ, որք և ընդ սուղ ինչ հեռաւորութիւն իմ ոչ ունէիք ժոյժ՝ սովորեալք 'ի խրախուսել ընդդէմ արկածից յերեսաց ինքնակալիդ։ Եւ որպէս 'ի կարիս ընտանեաց կարևորագոյնք 'ի սիրելեաց առաւել ազգեն 'ի սիրտ, սոյնպէս և ժողովրդեան Հռովմայ ազգողագոյն է զօրութիւն 'ի սիրտ իմ։ պարտ է ինձ տեղի տալ դժկամակութեան ձերոյ։ — Ա.յսոքիկ և այսպիսի բանք նորա ախորժելի էին ժողովրդեան՝ որ հեշտալեաց էր 'ի խնդիր, և զի դարձեալ հոգ մեծ էր նորա ընդ նուազութիւն ցորենոյ՝ զորմէ խիթայր 'ի հեռանալ ինքնակալին։ Իսկ ծերակոյտն և աւագանին յերկեայս կային՝ 'ի մտոյ թէ 'ի հեռուստ առաւել էր նա ՀԷնասակար, և զկալ մնալ նորա վասն արհաւրացն՝ յոռեգոյն համարէին։

Ա.. Բայց Ներոն առ 'ի հաւատարիմ առնել զի հաճոյագոյն էր նմա կալ 'ի Հռովմ, առնէր խրախուսս 'ի հասարակաց տեղիս, որպէս թէ ամենայն Հռովմ արքունիք իւր էին։ Ցհռչակաւորագոյնն զեղխութեամբ և համբաւով համադամոցն՝ զոր Տիգելլինոսի էր պատրաստեալ՝ ածից յօրինակ, զի մի՛ լիցի ինձ հարկ պատմել յաճախս զնոյնպիսի շռայլութիւնս։ Լաստ մեծ յապրիպեան ընդ կառուցեալ, 'ի վերայ նորա պատրաստեալ էր սեղան, ՛ձգեալ ածէին զլաստանաւք, ոսկւով և փղոսկերք դրուագեալք. և թիավարք 'ի նոսա գեղանիք, ըստ տիոց և ըստ առաւելագոյն լկտութեան դասակարգեալք։ Հաւուց և երեկոց որք յայլ և այլ կողմանց երկրի, և ձկունք մինչև յովկիանան ծովէ 'ի

սեղան անդրէն ածեալ. և առ ափամբք ծովակին բո-
զանոյք կառուցեալ, լի ականաւոր կանանուով, որք
դէմ յանդիման երևէին հոլանի։ Ի հանդէս ածան
նախ մինչկատակք և կայթք խենէշք. և 'ի նսեմանալ
երեկոյին, անտաւն՝ որ մերձ կայր անդ, և տունք շրջա-
կայք հնչէին 'ի նուագաց՝ լուսաւորեալք ջահիւք։ Եւ
Ներոնի, որ ամենայն յազգի ազգի պղծութիւնս
ըստ բնութեան և ընդդէմ բնութեան՝ անկղիտա-
ցեալն էր, թուէր չմնալ ինչ անօրինագոյն 'ի գործել.
սակայն յետ աւուրց ինչ զմի 'ի ժանտագործաց անտի
բազմութենէ, որում անուն էր Պիւթագոր, ըստ օրի-
նակի հարսանեաց ամուսնացոյց ընդ իւր, քօղ բոցա-
գոյն արկեալ զգլխով նորա որպէս հարսին. հաւա-
հմայք, օժիտ, առագաստ, ջահք հարսանեկանք, և
ամենայն ինչ 'ի տեսիլ ածեալ, զորս վասն անաւագ
բնութեանն իսկ ծածկէ գիշեր։

ԼԸ. Ի վերայ եհաս հրդեհ, յարկածից թէ 'ի հրա-
մանէ ինքնակալին՝ ոչ է գիտել, զի զերկոսին ևս աւան-
դեն պատմիչք. այլ քան զամենայն հրայրեացս՝ որ 'ի
քաղաքի անդ պատահեալ՝ սաստիկ և դժնդակ։ Սկիզ-
բն 'ի կողմանէ կրկիսին առեալ՝ որ կից է պալատեան
և կելեան ելլոց, և անդ 'ի վաճառանոցս այրեցական
նիւթոց արագ արագ բորբոքեալ, հողմավար ճարա-
կեցաւ ընդ երկայնութիւն կրկիսին. զի չէին անդ
տունք որմափակք, ոչ մեհեանք պարսպապատք, և ոչ
այլ ինչ՝ որ զընթացս հրդեհին խափանէր։ Որոյ նախ
զհարթարդակս լափլիզեալ, եկ ապա 'ի բլուրս. և ի-
ջեալ անդրէն՝ կանխէր քան զամենայն հնարս հայ-
թայթանաց, օժանդակեալ յանձուկ և 'ի ծամածուռ
հետոց անկարգ փողոցաց, որպիսիք էին նախնոյն
Հռովմայ. յաւել զկական և զձիչ կանանցն ահաբե-
կելոց, և զապիկար 'ի փախուստ հասակ ծերունեաց
և զանփորձ մանկտին։ Յամբոխէն բազմութենէ կէսք
անձանց, այլք այլոց օգնէին. զօրաւորք 'ի թիկունս
հասանէին տկարաց՝ 'ի բաց ածել զնոսա 'ի հրոյն,
կէսք զկայ առեալ՝ այլք խուճապեալ, արգել և խա-
փան ամենայն ուստեք լինէին։ Յաճախ 'ի հայելն
յետկոյս՝ շուրջ պատէր զնոսա հուր 'ի դիմաց կամ
'ի կողմանց, և 'ի խուսեալն այլուր՝ հասանէր բոցն

զՀետ, և 'ի կարծելն 'ի բաց զերծեալ՝ 'ի նմին վտան-
գի գտանէին. ուստի յանՀնարին վարանս ըմբռնեալ՝
ոչ գիտելով ուր խոյս տալ՝ յո՛ դիմել, խռնէին ընուին
զՃանապարՀս, և ծածկէին համասփիւռ զանդաս-
տանս։ Կէսք զամենայն ինչ իւրեանց կորուսեալ՝ ա-
ւուրն պարենի կարօտք, այլք առ սէր ընտանեաց՝ զորս
չէր կարացեալ նոցա զերծուցանել՝ կամակար 'ի մահ
մատնէին, ուր առ ձեռն կայր նոցա փախուստ. և ոչ
ոք կարէր գուն գործել ընդդէմ հրոյն, վասն ստէպ
սպառնալեաց այնոցիկ՝ որ արգելուին շինուցանել
զայն, և վասն այլոց խանձողս յայտնապէս 'ի նոսա
արկանելոյ՝ իշխանութիւն ասելով ունել, որպէս զի
համարձակագոյն թերևս աւար հարցեն, և կամ զի
արդարև էր նոցա հրաման արգելոյ։

ԼԹ. Յաւուրս հրդեհին Ներոն կայր յԱնտիոն. և
ոչ դարձաւ 'ի Հռովմ մինչև 'ի մերձենալ հրոյն յապա-
րանս իւր՝ զոր կառուցեալ էր առ 'ի կցորդել ընդ ար-
քունիս Աւգոստեայ և ընդ պարտէզս Մեկենասայ.
այլ ոչ կարաց զերծուցանել, ոչ զարքունիս, և ոչ զա-
պարանս իւր, և ոչ զշինուածս շուրջանակի։ Յայնժամ
'ի սփոփումն ժողովրդեան՝ որ խուճապեալ թափառա-
կան շրջէր՝ եբաց զդաշտն Աւրիսի, զձեռակերտս Ագ-
րիպպայ, և զիւր իսկ պարտէզս. և ետ կառուցանել
'ի նոսա ափ յափոյ բնակարանս կարօտելոցն բազմու-
թեան, և ածել կահ և կարասի յՈստիոյ և 'ի մերձա-
կայ քաղաքաց. և զգինս ցորենոյ նուազեցոյց մինչև 'ի
սեստերտս երիս։ Այլ այս ամենայն բարերարու-
թիւնք նորա առ ժողովուրդն եղեն անարգասաւորք.
զի 'ի հրդեհել քաղաքին՝ համբաւէր եղեալ նորա 'ի
տեսարան իւր առտնին՝ զաւեր Տրովադայ ողբերգա-
բար նուագել, զարկածս ժամանակին 'ի նմանութիւն
անցելոցն վաղնջականաց պատկերելով։

Խ. Այս 'ի վեցերորդում աւուր եկաց հուրն առ
ստորոտովք Եսկուիլեան բլրոց՝ կործանմամբ անբաւ
շինուածոց առաջի լափելոյ բոցոյն, և թողեալ դաշտ
և այեր ունայն։ Զև ևս փարատեալ էին արհաւիրք ա-
ւերածոյ հրդեհին, և ահա վերստին արծարծեցաւ
հուրն՝ այլ ոչ յոյժ սաստիկ, զի յընդարձակագոյն վայր
քաղաքին Ճարակէր. վասն որոյ և նուազագոյնք 'ի

նմա կորեան։ Բայց մեհեանք դից և գաւիթք կամարակապք առ 'ի զբօսանս կառուցեալք՝ թողին աւերակ լայնածաւալ. և երկրորդս այս հրդեհ յաւել զկասկածանս չարութեան, զի յապարանից Տիգելլինեայ ցոլացեալ յեմիլեան փողոցէ, համարէր 'ի փառասիրութենէ Ներոնի հայթայթեալ՝ առ 'ի կառուցանել քաղաք նոր յանուն իւր։ Հռովմայ էին թաղք չորեքտասան. յորոց չորեքին զերծեալ 'ի հրոյ, երեքին հիմնայատակ աւերեալ, և յեօթանեսին յայլս նշխարք խարխարելոց և կիսայրեաց տանց երևէին։

ԽԱ. Դժուարին է 'ի համար ածել զտունս և զապարանս և զտաճարս հրդեհեալս. հնագոյն մեհեանք կրօնից, այն որ 'ի Սերուիոսէ Տուլլիոսէ նուիրեալ լուսնի, բազինն մեծ և մեհեան յԵւանդրեայ արկաղացւոյ սրբազանեալ Ամենուրեքն Հերակլեայ, մեհեանն Դիոսի Ստատորի 'ի Հռոմուլեայ նուիրեալ, պալատն Նումայ և տաճարն Եստեայ, եղեն առհասարակ ճարակ հրդեհին։ Թող զմեծութիւնս աւար առեալս 'ի բազում այնքան յաղթութիւնս, և զհրաշակերտս Հելլէն ճարտարաց, և զարձանս հանճարոյ վաղնջականս անեղծս յիշատակեալս 'ի ծերունեաց, աննորոգելիս՝ 'ի կանգնել իսկ անդրէն Հռովմայ նովին մեծագործութեամբ։ Եղեն՝ որք ոչ վայրապար համարեցան զսկիզբն հրդեհին լեալ 'ի չորեքտասանեորդի աւուր կաղանդացն Աւգոստոս ամսեան, յորում աւուր սինոնացւոց առեալ զՀռովմ և այրեացաւեր արարեալ էր. այլք անդր ևս զհետազօտութիւնսն ձրգեալ, նոյնչափ ամս և ամիս և աւուրս 'ի համար ածէին 'ի հիմնարկութենէ Հռովմայ մինչև ցառաջին հրայրեացս, որչափ ժամանակ յառաջնմէն մինչև ցերկրորդն էր անցեալ։

ԽԲ. Բայց Ներոնի զաւէր հայրենեացն յօգուտ 'ի կիր արկեալ, կառոյց իւր ապարանս. ուր ոչ ոսկի և ոչ ականք պատուականք էին առաւել հրաշալի՝ վաղ իսկ առ զեղխութեան 'ի սովորութիւն փոխեալք, այլ դաշտք և լիճք և միայնոց անտառախիտ ձեռագործ, և արօտ անդր քան զկշիռ ական լայնածաւալ, որոց ճարտարապետք կացին Կելեր և Սեւերոս՝ քաջայանդուգն հանճարով մտաբերեալ արուեստակերտել

զթողեալս 'ի բնութենէ անգործ, և գանձիւք ինքնակալին յարդիւնս ածել։ Խոստանային և բանալ առուն նաւագնաց յաւերնեան լճէ մինչև 'ի բերան Տիբերի ընդ երկիր անջրդի, կամ ընդ լերանցամէջս՝ ուր չէին վայրք խոնաւուտք 'ի բղխումն ջուրց՝ բաց 'ի պոմտեան Ճահճաց. զի այն ամենայն երկիր ոստին էր և լեռնախիտ։ Եւ թէպէտ վաստակ անհնարին էր բացումն առուի ընդ այն, և ոչ բաւականապէս օգտակար, սակայն Ներոն չհաւատալեաց ձեռներէց՝ ետ հրաման հատանել զբարձունս մերձակայս Աւերնեայ, որպէս կան և մնան ցարդ ընդունայն ջանիցն հետք։

Խգ. Բայց 'ի վայրս այրեցելոցն տանց, ոչ որպէս յետ գալլական հրդեհին վարկպարազի և անկարգ կառուցան շինուածք, այլ 'ի կարգ ածեալ փողոցք, արահետք ընդարձակեալ, բարձրութեան տանց չափ սահմանեալ, և բակս 'ի նոսին. և Ներոն գաւիթս կամարակապս առաջի նոցա 'ի գանձուց իւրոց խոստացաւ կառուցանել, պարգևելով տանուտերաց զերկիրն սրբեալ 'ի փլատակաց։ Յաւել և մրցանակս ըստ իւրաքանչիւր աստիճանի և ճոխութեան, որոց կատարեսցեն զշինուածս տանց կամ ապարանից մինչև 'ի ժամանակակէտն յիւրմէ սահմանեալ։ Եւ նաւաց՝ որ ածէին ցորեան ընդ Տիբեր՝ հրամայեաց բառնալ վաւերակս 'ի դարձին իւրեանց, ածել թափել յոստեան Ճահիճս, և տանուտերաց կառուցանել առանց գերանաց զտունս մինչև 'ի չափ ինչ բարձրութեան՝ 'ի քարանց Ալբեայ և Գաբեայ անկիզելեաց։ Եւ հասարակաց ջուրց՝ զորս իւրաքանչիւր ոք 'ի տուն իւր դարձուցանէր՝ կացոյց պահապանս, որպէս զի առատագոյն և յաճախս ուրեք հոսեսցեն, և ամենեցուն ունել առ ձեռն պատրաստ զհայթայթանս 'ի խափուցումն հրոյ. և մի ունել տանց միջնորմ, այլ իւրաքանչիւր ուրոյն որմած։ Այսոքիկ, վասն օգտակարութեան ընկալեալ օրինադրութիւնք, ձեռնտու եղեն և 'ի շուք նորակերտ քաղաքին. սակայն ոմանք օգտակարագոյն զառաջին ձևն համարէին վասն առողջութեան, իբր զի անձկութիւն փողոցաց և բարձրութիւն տանց մեղմէին զհրատապ ճառագայթս արեգական, ուր լայնութիւն ուղեաց անպատասպար 'ի ստուերաց՝ բոցակիզագոյն գործէր զտօթ ամարայնի։

ԼԴ. Զայս ամենայն մարդկօրէն խորհրդով այսպէս տնօրինեալ, դիմեցին ապա քաւութեամբք առ դիս. և զմատեանս Սիբիլլայից առեալ 'ի խորհրդակցութիւն, մաղթանս Հեփեստեայ և Դեմետրի և Պրոսերպինեայ մատուցին. և տիկնայք աղերսաւորք Հերայ 'ի Կապիտոլին, 'ի մերձաւորագոյն ծովեզեր առեալ ջուր 'ի ծովէ՝ սրսկէին 'ի քաւութիւն զմեհենաւ և զպատկերաւ դիցուհւոյն, մինչդեռ առնականայք զԲազմականաց դից զպաշտամունս և զհսկմունս կատարէին։ Այլ ոչ Ճիգն մարդկեղէն, ոչ առատաձեռնութիւնք ինքնակալին, և ոչ հաշտարար պաշտամունք դից կարացին խափանել զհամբաւն չար՝ որ 'ի հրամանէ ինքնակալին համարէր լեալ զհրձգութիւնն. իսկ Ներոն առ 'ի լռեցուցանել զչարախօսութիւնն, զայլս ցուցանէր չարեացապարտ, և չարաչար խոշտանգանօք պատուհասէր զայնոսիկ՝ զորս ռամիկն քրիստոնեայս անուանէ, զատելիս վասն յոռութեանցն։ Սոքա 'ի Քրիստոսէ ումեմնէ, որ առ ինքնակալութեամբն Տիբերեայ 'ի ձեռն պոնտացւոյ Պիլատոսի գործակալի մատնեալն էր 'ի մահ, ունին զանուանակոչութիւնն։ Անապաշտութիւն սոցա վնասակար [1] ընկճեալ առ ժամանակ մի՝ անդրէն ապա 'ի վեր երևեցաւ, ոչ միայն 'ի հրէաստան՝ ուր սկիզբն լեալ էր չարին, այլ և 'ի Հռովմ՝ուր ամենայն ուստեք յորդէն և ասպընջականին անկարգութիւնք և չարիք։ Որք միանգամ խոստովան լինէին զաղանդ իւրեանց՝ այնոքիկ ըմբռնեալ, և ըստ խոստովանութեան նոցա բազմութիւն անբաւ՝ ոչ ևս վասն հրդեհին եղեռան, այլ առ ատելութեան ազգի մարդկան դատապարտէին։ Զի 'ի պատուհաս նոցա յաւելուին և ձաղանք. կէսք մորթովք էրէոց ծածկեալ՝ խածատմամբ շանց սպանանէին, այլք 'ի խաչի բևեռեալ կամ այրեցական նիւթովք օծեալ՝ առ 'ի լոյս գիշերային 'ի խոնարհել տունջեան վառեալ բորբոքէին. որովք Ներոնի զպարտէզս իւր ջահաւորեալ, զկրկիսական խաղս անդ ածէր 'ի տեսիլ, մերթ 'ի ձև կառավարի խառն ընդ ռամկին կալով անդ 'ի զնին, և մերթ 'ի կառս բազմեալ։ Վասն որոյ տեսողացն յու-

1 Աստանօր ցնորի պարմաքիր հելլանոսաբար։

զէին գութք 'ի վերայ պատուհասելոցն, թէպէտ և ինասապարտից, և սաստիկ պատժոյ արժանաւորաց. զի ոչ ևս յօգուտ հասարակաց վարէին նոքա 'ի մահ, այլ անգթութեան միոյ ուրուք 'ի ձարակ։

ԽԵ. Ի սմին ժամանակի առ 'ի ընուլ զպակասութիւն գանձուց՝ կողոպտէր Իտալիա, աւերէին գաւառք, և սահմանք նիզակակից ազգաց, և քաղաքանին իսկ կոչեցեալ ազատ։ Եւ ոչ դիք զերծ գտան յաւարառութենէն. կապտեցան մեհեանք 'ի Հռովմ, և յափշտակեցաւ ոսկին՝ զոր 'ի յաղթանակս և զոր 'ի ձօն արգադիր նուիրեալ էր անդր ժողովուրդ Հռովմայ, դարուց 'ի դարս 'ի յաջողութեան և 'ի վտանգի։ Իսկ Ասիա և Աֆրիկա ոչ նուէրք միայն՝ այլ և պատկերք դից յափշտակեցան 'ի ձեռն Ակրատոսի և Սեկունդեայ Կարինայ, որք այսր աղագաւ 'ի գաւառն յայնոսիկ յղեալ էին։ Ակրատոս էր մի 'ի ձերբազատից, առ ամենայն անօրէնութիւն կազմ և պատրաստ. իսկ Կարինաս զՀելլէն իմաստասիրութիւն առ 'ի վարժապետել ևեթ ուսեալ, և ոչ առ 'ի բարեկրթել զանձն։ Լուր եղև, զի խնդրեալ էր Սենեկայ յինքնակալէն՝ 'ի գիւղ ուրեք հեռաւոր առանձնանալ, առ 'ի խուսել յատելութենէ սեղանակապտութեանց. և յոչն լինել լսելի, պատճառանօք ոտնառութեան չէլեալ երբէք 'ի սենեկէն։ Ասանդէն ոմանք՝ դեղ 'ի ձեռն միոյ 'ի ձերբազատիցն Սենեկայ, որում անուն էր Կլէոնիկ, պատրաստեալ նմա 'ի հրամանէ Ներոնի. այլ նորա կասկածանօք՝ կամ ձերբազատին ինքեան զեկուցմամբ՝ զգուշացեալ, և անպաճոյճ պարենիւ՝ մրգօք վայրենեօք և վտակահոս ջուրբ զկեանս իւր պահպանեալ։

ԽԶ. Զայսու ժամանակաւ սուսերամարտիկք 'ի Պրենեստ գուն գործեալ 'ի վտարանջութիւն, նուաճեցան 'ի զինուորաց՝ որ 'ի պահ կային նոցա։ Ժողովուրդն ցանկացող յեղափոխութեան, միանգամայն և երկչոտ, 'ի լուր համբաւոյն յուշ ածէր զՍպարտակոս և զանցեալ աղէտսն. և ոչ յետ բազմաց ինչ աւուրց լուեղև բեկումն նաւատորմին, այլ ոչ 'ի մարտի. զի չէր երբէք լեալ խաղաղութիւն խոր որպէս յայնժամ, այլ զի հրամայեալ էր Ներոնի յայս ինչ աւուր լինել նաւատորմ

մին 'ի Կամպանիա՝ անխափան յարկածից ծովու. վասն որոյ նաւապետք 'ի սպառնալիս մրրկի մեկնեալ 'ի Փորմեայ, և սաստկաշունչ հարաւով խիզախեալ պատել զՄիսենեաւ, բաղխեալ 'ի ծովեզերս Կումայ, զբազումս յեռաթիոց, և ոչ սակաւս յայլոց նաւաց կորուսին։

ԽԷ. Ի վերջկոյս տարւոյս համբաւէին նշանք հրաշալիք՝ գուժկանք մօտալուտ չարեաց, շանթահարութիւնք յաձախաւորք քան յայլ ամենայն ժամանակս, վարսամ երևեալ՝ զոր Ներոն արեամբ ազնուականի ուրուք միշտ հաշտ առնէր, ծնունդք երկգլխիք մարդկան և անասնոց՝ 'ի հասարակաց ձանապարհս ընկեցիկք, և 'ի զենմունս անդէոց յղեաց գտեալք 'ի զոհս օրինաւորս, և որթ 'ի պլակենտեան սահմանս զձանապարհայն ծնեալ՝ յազդեր զգլուխ իւր բերելով, յորմէ հաւահմայք առին գուշակել՝ զայլ ոք հանդերձեալ երկրէիցս իշխեցող, ոչ հզօր և ոչ անուշան, իբր զի արգելեալ որթն յարգանդի, և յուղղոջ էր 'ի լոյս ընծայեալ։

ԽԸ. Ի մուտս Սիլիոսի Ներուասայ և Ատտիկոսի Վեստինեայ 'ի բդեշխութիւն, սկսեալ և աձեցեալ էր համախոհութիւն իմն՝ յոր ատենակալք ծերակուտին, ասպետք, զօրականք և կանայք իսկ, ելևելս զի բերոք առնէին՝ 'ի յաւելուլ, կէսք առ ատելութեան Ներոնի, այլք առ սիրելութեան Կ. Պիսոնի։ Սա 'ի կալպուրնեան տոհմէ էր, և ընդ երևելի ազգատոհմս հայրենի ազնուականութեամբն կցորդեալ, բարեհամբաւ առաջի ժողովրդեան առաքինութեամբքն, կամ մանաւանդ կերպարանօք առաքինութեան։ Ձձարտարիսօսութիւն 'ի պաշտպանութիւն քաղաքացոյց 'ի կիր արկանէր, առատաձեռն առ բարեկամս, առ անծանօթս իսկ դիւրամատոյց և բարեհամբոյր. թողբզբախտին բարեմասնութիւնս, զհասակ բարձրադիտակ և զգեղեցկութիւն։ Այլ չէր նա ծանրաբարոյ, և ոչ ժուժկալ 'ի ցանկականին. 'ի մեղկութիւն և 'ի շռայլութիւն, ևս և 'ի զեղխութիւն դիւրամէտ, որովք հաձոյ լինէր բազմաց՝ որք 'ի հրապոյրս ախտից զգերագոյն իշխանութիւն ոչ ախորժեն զուսպ և խստակրօն։

ԽԹ. Սկիզբն համախոհութեանն ոչ 'ի փառասի-
րութենէ նորա եղև, և ոչ դիւրին է ասել զ այնմ լեալ
առաջնորդ, և զոր ուրուք ազդեցութեամբ այնքանեաց
յոլովից միաբանել։ Սոբրիոս Փլաւիոս հաղարապետ
ատենական գնդին, և Սուլպիկիոս Սպրոս, նորին
գնդի հարիւրապետ, նախանձաւորագոյնք էին 'ի նոսա,
որպէս վկայեցաւ 'ի յանձն առնուլ նոցա արիաբար
զմահ։ Լուկանոս Անիկոս, և Պլաւտիոս Լատերանոս՝
սահմանեալ 'ի բդեշխութիւն, ոմեքիմք ցուցան. Լու-
կանոս 'ի վրէժխնդրութիւն պատուոյ իւրոյ՝ զի զարգ
տաղից նորա խափանէր Ներոն, և արգելոյր նմա
նախանձընդդէմ փառամոլութեամբ՝ չտալ զայնս 'ի
լոյս. իսկ Լատերանոս ոչ աւ քինու ինչ ընդ Ներոնի,
այլ 'ի սէր հասարակապետութեան միաբանեալ ընդ
նոսա։ Փլաւիոս Սկևինոս և Սիրանիոս Կուինտիա-
նոս, երկոքին ևս 'ի կարգէ ծերակուտին, առաջինք
եղեն 'ի ձեռնարկել՝ հակառակ ակնկալութեան ամե-
նեցուն՝ 'ի կատարումն մեծի վտանգաւոր գործոյն.
զի Սկևինոս անառակ զեղխութեամբ կնատեալ՝ 'ի
թմբրութեան կեայր, իսկ Կուինտիանոս մեղկու-
թեամբն անուանարկ. այլ զի թշնամանալից տա-
զիւ նախատեալ էր 'ի Ներոնէ, զվրէժ թշնամանացն
խնդրէր։

Ծ. Արդ սոցա ընդ միմեանս և ընդ բարեկամս խոր-
հելով յեղեռնագործութիւնս ինքնակալին, և յահա-
հասեալ կործանումն ինքնակալութեանն, հարկ հա-
մարէին ընտրել զոք՝ որ փրկեսցէ զայն 'ի կործանմանէ։
Զամն որոյ միաբանեցին ընդ իւրեանս զՅուլիոս Սենե-
կիոն, զԿերուարիոս Պրոկուլ, զՎուլկատիոս Արարիկ,
զՅուլիոս Տուգուրինոս, զՄոնատոս Գրատոս, զԱնտո-
նիոս Նատալիս, և զՄարտիոս Փեստոս, ասպետս հռով-
մայեցիս. յորոց Սենեկիոն մտերմագոյն Ներոնի, հա-
նապազորդելով 'ի կերպարանս բարեկամութեան՝ ա-
ռաւելապէս կայր 'ի վտանգի։ Նատալիս հաղորդ էր
ամենայն գաղտնեաց Պիսոնի, և ընդ այլս առհասա-
րակ 'ի յեղափոխութիւն պետութեան հաստատեալ
զյոյս։ Ընդ Սոբրիոսի և Սուլպիկեայ, զորս յիշատա-
կեցի, յաւելան աջակից լինել զինուք՝ Գրանիոս Սի-
լուանոս և Ստատիոս Պրոքսիմոս հաղարապետք ատե-

նական զօրաց, և Մաքսիմոս Սկաւրոս և Վենետիոս Պաւլոս հարիւրապետք։ Ա.յլ հզօրագոյն զօրավիգն համարէր զօրավար ատենական զօրականին Փենիոս Հռուփոս՝ այր մեծարոյ համբաւուն և վարուք՝ զոր Տիգելլինոս՝ զօրաւորագոյն 'ի սիրտ ինքնակալին վասն անգթութեանն և լրբութեան, նեղէր ստէպ չարախօսութեամբք և 'ի վտանգ արկանէր՝ հոմանի զնա ցուցեալ Ագրիպպինայ և վրէժխնդիր մահու նորա։ Իբրև գիտացին համախոհք՝ զի և հրամատար ատենական զօրականին միաբանեալ էր ընդ իւրեանս, և հաւատարմացան 'ի յաձախ բանից նորա, խրախուսեցին սահմանել զժամ և զտեղի դաւաձանութեանն։ Ա.ւանդեն՝ Սոբրիոսի Փլաւեայ մտաբերեալ 'ի յանդգնութիւն յարձակելոյ 'ի Ներոն անդէն 'ի տեսարանի, 'ի նուագել նորա, կամ 'ի գնալ գիշերայն այսր անդր առանց թիկնապահայ՝ 'ի հրդեհել ապարանիցն իւրոց. զի աստ միայնութիւն և անդ բազմութիւն վկայից մեծի արիական գործոյն մղէին զքաջայանդուգն սիրտ նորա. այլ իղձ անպատուհաս ազատութեան, արգել և խափան ամենայն ուրեք ջանից մեծաց, ընկրկեաց զնա 'ի խորհրդոյն։

ԾԱ. Մինչդեռ յամէին համախոհք, և օր'ի յօր արկանէին զյոյս իւրեանց և զերկիւղ, կին ոմն Եպիքարիս անուն, ուստի գիտակ լեալ գաղտնեացն՝ ոչ է յայտ, զի և ոչ յառաջագոյն զբարեաց ինչ իրաց փոյթ լեալ էր նմա, քաջալերէր զնոսա յորդորանօք և կշտամբութեամբ. և տաղտկացեալ 'ի դանդաղելոյ նոցա, չոգաւ 'ի Կամպանիա դրդել զպետս միսենական նաւատորմին՝ միաբանել ընդ դաւակիցս, սկիզբն այսպէս արարեալ դաւոյն։ Վոլուսիոս Պրոկուլ՝ մի 'ի հազարապետաց նաւատորմին, գործակից լեալ էր մայրասպանութեանն Ներոնի ընդ այլ պաշտօնեայս, և ոչ ըստ արժանի ծանու եղեռանն համարէր ընկալեալ վարձ. և զի ծանօթ էր սա յառաջագոյն Եպիքարեայ, կամ յայնժամ ծանօթացեալ, պատմեաց նմա զվաստակս իւր մատուցեալս Ներոնի, և թէ որպէս 'ի դերև ելեալ էր 'ի յուսոյ փոխարինաց, և ընդ տրտնջանս՝ յաւել յայտնել զիղձս վրէժխնդրութեան՝ եթէ գտանէր պարապ։ Որովք Եպիքարիս յուսացաւ յինքն ձգել զնա, և

զբաղումն զՀետ նորա. զի ոչ թեթև ինչ պատսպարան էր նոցա նաւատորմն, և դէպս բաղումն բարեպատեհս մատուցանէր 'ի գործ, ախոյժելով Ներոնի նաւել յաձախս 'ի Պուտէոլ և 'ի Միսէն առ 'ի զբօսանս։ Երկարագոյն նուագօք խօսեցաւ Եպիքարիս, 'ի համար ածեալ զամենայն անօրէնութիւնս ինքնակալին, և յաւել. Թէպէտ և եբարձ Ներոն զամենայն իշխանութիւն 'ի ծերակուտէն, բայց պատրաստ կան հնարք խնդրելոյ 'ի նմանէ զվրէժ կործանման հասարակապետութեան. և եթէ դու յօգնել ևեթ յօժարիցիս, և զքաջս 'ի զինուորաց ունել աջակիցս, ընկալցիս վարձս արժանիս վաստակոցդ։ Բայց զանուանս համախոհիցն լռեաց. որով մատնութիւն Պրոկուլեայ էլ'ի դերև 'ի պատմել նորա Ներոնի՝ որ ինչ լուեալն էր յԵպիքարեայ։ Կոչեցաւ Եպիքարիս յանդիման չարախօսին. այլ առ 'ի չգոյէ վկայից՝ հերքեաց նա դիւրաւ զամենայն. բայց պահս 'ի վերայ նորա կարգեաց Ներոն, կասկածելով զիրացն ստուգութենէ, Թէպէտ և առանց հաւաստեաց։

ԾԲ. Վասն որոյ խռովեալ համախոհից յահէ մատնութեանն, խորհեցան փութալ'ի կատարումն դաւաձանութեանն 'ի Բայս՝ յամարանոցին Պիսոնի, ուր ինքնակալն առ զուարձութեան վայրացն յաձախէր 'ի բաղանիս և 'ի ձաշ՝ առանց թիկնապահաց և իշխանական սպասուց։ Բայց Պիսոն հրաժարեաց, դժպհի համարեալ շաղախել զսրբութիւն հիւրընկալ սեղանոյ և զդից ասպնջականաց՝ արեամբ ինքնակալին, Թէպէտ և անօրինի։ Լաւագոյն է, ասէր, 'ի քաղաքի անդ յատելի ապարանս նորա, կառուցեալս յաւարէ քաղաքացւոց, կամ յայտնապէս հրապարակաւ կատարել՝ զոր վասն բարւոյ հասարակապետութեան յանձն առեալ էին։ Ցայսոսիկ առ նոսա. բայց 'ի նեբրս 'ի սրտին խիթայր՝ Թէ գուցէ Լ. Սիլանոս, հռչակաւորն ազնուականութեամբ և հրահանգօք Կ. Կասիոսի՝ առ որում դաստիարակեալն էր, փառաց 'ի փառս ամբարձեալ՝ հասցէ ինքնակալութեան. զի օգնական նմա լինէին ամենեքեան, որք չէին ընդ համախոհս, և որք գթայինն 'ի Ներոն վասն դաւաձանաբար սպանութեանն։ Բազումք ևս համարէին երկնչել Պիսոնի 'ի

խորամանկութենէ Վեստինեայ բդեշխի՝ թէ գուցէ յաղատութիւն մտաբերիցէ, կամ յընտրութիւն այլոց ինքնակալի՝ առ 'ի շնորհապարտ կացուցանել զնա իւր վասն իշխանութեանն. քանզի Վեստինոս անկցորդ էր համախոհութեան, թէպէտ և Ներոնի համախոհ զնա համարեալ՝ ած թափեաց 'ի վերայ նորա տարապարտ զվաղեմի մթերեալ ոխութիւնն։

ԾԳ. Հուսկ ապա խորհուրդ կալան կատարել 'ի կրկիսական խաղս տօնին Դեմետրեայ զդաւաճանութիւնն. քանզի Ներոն, որ դուն ուրեք արտաքս ելանէր՝ յապարանս իւր և 'ի պարտէզս փակեալ, յաճախէր 'ի խաղս կրկիսին, և ազատ էին մուտք անդր 'ի զբօսանս։ Եւ էր օրինակ դաւաճանութեանն պատրաստեալ այսպէս. Լատերանոսի՝ պատճառանօք շնորհս ընտանեացն իւրոց աղերսելոյ՝ յոտս ինքնակալին խոնարհել, և զգետնեալ զնա յեղակարծում՝ պինդ ունել ընդ իւրև խիզախ ոգւոյն և հսկայաձև մարմնով. և հազարապետաց և հարիւրապետաց և այլոց համախոհից ըստ իւրաքանչիւր արիութեան դիմել 'ի վերայ անկելոյն անխուսելի, և սրախողխող զնա առնել։ Զառաջին հարուածն Սկևինոս խնդրէր իջուցանել սուսերաւն, զոր բարձեալ 'ի մեհենէ դիցուհւոյն փրկութեան յԵտրուրիա, կամ ըստ այլոց 'ի մեհենէ բախտին 'ի Փերենտոն, կրէր առ 'ի գործ մեծ նուիրական։ Պիսոնի յայնժամ պարտ էր կալ մնալ 'ի մեհենին Դեմետրեայ, և Փենեայ զօրավարի և այլոց գնալ անդր և ածել զնա 'ի բանակն, ուղեկից առեալ զԱնտոնիա դուստր Կլաւդեայ ինքնակալի՝ առ 'ի շարժել զամբոխն 'ի կուսակցութիւն զօրացն, ըստ Կ. Պլինիոսի աւանդութեանն, զոր ի՞նչ առ մեզ հասեալ՝ ոչ կամիմ անյիշատակ առնել. թէպէտ և անտեղի ինձ թուի յանձն առնուլ Անտոնեայ մնոտի յուսով ատելի առնել զանուն իւր, և 'ի վտանգ մահու զանձն արկանել. և Պիսոնի՝ զորոյ ամենեքեան գիտէին զկաթոգին սէր ընդ կնոջն՝ այլում խոստանալ զաջ իւր. սակայն իշխանասիրութիւն քան զամենայն կիրս է բռնագոյն։

ԾԴ. Բայց զարմանք են, զի յայնքան բազմութեան ազգի ազգի և այլ և այլ կարգաց և տիոց, արանց և կանանց, ճոխից և չքաւորաց, ամենայն ինչ 'ի լուս

թեան ծածկեալ կայր, մինչ չև մատնութեանն 'ի տա-
նէ Սկևինեայ 'ի վեր երևեալ։ Սա յառաջ քան զօր
դաւաճանութեանն յերկարեալ ընդ Անտոնիոսի Նա-
տալեայ 'ի խօսս, և ապա մտեալ 'ի տուն, կնքեաց զկը-
տակ իւր, մերկացաւ 'ի պատենէ զսուսերն՝ զոր յիշա-
տակեցի, և քրթմնջեալ՝ զի հնութեամբն գլացեալ էր
ժանգահար, հրամայեաց Միլիքեայ ազատագրի ի-
րում յեսանել զայն և սլաքել։ Յայնժամ ետ պատ-
րաստել սեղան բազմախորտիկ քան զօրէն հանապա-
զօր, և սիրելագունից 'ի ծառայից իւրոց ազատու-
թիւն շնորհեալ և այլոց ընձեռայս, կայր տխրագին
'ի վարանս՝ թէպէտ և վտարանդի բանիւք զուարթու-
թիւն կեղծաւորէր։ Յետ այսորիկ պատուէր ետ նմին
ինքեան Միլիքեայ պատրաստել պատանս վերաց, և որ
ինչ պիտոյն էր 'ի դադարեցուցանել զհոսումն արեան.
զի թերևս գիտակ էր նա դաւաճանութեանն և ցայն-
ժամ խորհրդապահ. և կամ եթէ անտեղեակ գաղտ-
նեացն էր, անտի նախ կասկած էառ՝ որպէս աւանդեն
բազումք ըստ հետևանացն։ Այրս այս նուաստախոհ, 'ի
վարձս մատնութեան յառեալ՝ 'ի գանձս և յիշխանու-
թիւն, 'ի մոռացօնս էարկ զպարտս ծառայութեան,
զկեանս տեառն իւրոյ, և զազատութիւնն 'ի նմանէ
ընկալեալ. և զխորհուրդ կնոջ իւրոյ ևս հետազօտեալ՝
խրատ յոռեգոյն 'ի նմանէ առեալ էր. զի նա զերկիւղ
նախ առաջի եդեալ առն իւրում, յաւելոյր՝ զի բա-
զումք էին՝ որք առընթեր կային ծառայք և ձերբա-
զատք ակնատեսք իրացն, և ումպէտ էր լռել. իսկ 'ի
վաղագոյն գուշակն լինել՝ ընդունէր վարձս։

ԾԵ. Այդ ընդ այդն փութացեալ Միլիքեայ 'ի պար-
տէզս Սերուիլիոսի, արդելաւ զառաջինն 'ի մտից. բայց
'ի թախանձել իւրում՝ զի կարևոր և սոսկալի ածէր
զրոյց, մուծաւ առ Եպաֆրոդիտ ձերբազատ ինքնա-
կալին. և ածեալ 'ի նմանէ 'ի նեղքս առ Ներոն, պատ-
մեաց նմա զվտանգն՝ որ 'ի վերայ կայր, զդաւաճանու-
թիւնն ահագին, և որ ինչ այլ լուեալն էր և գուշա-
կեալ. եցոյց նմա և զսուսերն պատրաստեալ 'ի սպանու-
թիւն նորին, և խնդրէր ածել անդր զպարտաւորն։
Անդէն վաղվաղակի կալեալ ածաւ Սկևին 'ի զինուո-
րաց, և տայր վասն անձին պատասխանի. Երկաթն,

վան որոյ ամբաստանիմն, 'ի հայրենաժառանգ կրօնից պաշտեցեալ՝ 'ի սենեկի իմում կայր 'ի պահ, անտի տիրադրուժ ձերբազատին իմոյ բարձեալ է զայն. բազմիցս կնքեալ էր իմ զիմ կտակ՝ առանց խտրելոյ զաւուրս, և վաղ իսկ տուեալ սպասաւորաց արծաթ և ազատութիւն, այլ առատագոյնս արդ 'ի նուազել ընչից տամ. զի նեղեալ 'ի պարտատերաց, ոչ աներկեան համարիմ զկտակ իմ։ Միշտ իսկ առատ լեալ է ինձ սեղան, և կեանք բարեկեցիկ, դժպհի պարսաւադիտաց. իսկ զՀայթայթանս 'ի դարման վիրաց չիք իմ պատուիրեալ, այլ առ 'ի հաւաստիս յայտնի զրպարտութեանցն՝ յաւելու դա յիս խորհուրդ եղեռնաւոր, որոյ ինքն միայն է ամբաստանող և վկայ։ — Զայսոսիկ այնու անյողդողդ արիութեամբ խօսեցաւ, և այնպէս անայլայլակ բարբառով եցոյց անօրէն զչարախօսն, զի 'ի դերև ելանէին ամբաստանութիւնքն, եթէ կնոջ Միլիքեայ չէր յաւելեալ վկայել զերկար և զգաղտնի խօսակցութիւն նորա ընդ Անտոնիոսի Նատալեայ, և զերկաքանչիւրոցն մտերմութիւն ընդ Կ. Պիսոնի։

ԾԶ. Կոչեցաւ և Նատալիս, և ուրոյն 'ի միմեանց մատուցան երկոքին 'ի հարցփորձ՝ զորոց ինչ իրաց լեալ էր նոցա խօսակցութիւն. և այլևայլ ազգ պատասխանեաքն կասկածելի եղեալ, արկան 'ի կապանս. և 'ի տեսիլ և 'ի սպառնալիս տանջանարանաց չկարացին հանդուրժել։ Նախ Նատալիս, զի տեղեկագոյն էր հանգամանաց դաւոյն, և Ճարտարագոյն 'ի չարախօսել, խոստովան եղև զդաւակցութիւն Պիսոնի. յոր յաւել և զԱննէոս Սենեկա, որ թերևս միջնորդ լեալ էր ընդ ինքն և ընդ Պիսոն. կամ առ 'ի գտանել արդեօք շնորհս առաջի Ներոնի, որ ոխայր ընդ Սենեկայ, և զամենայն հնարս խնդրէր 'ի կորուստ նորա։ Սկևինոս իբրև գիտաց զխոստովանութիւն Նատալեայ, նովին վեհերոտութեամբ կամ համարելով վաղ իսկ յայտնեալ 'ի նմանէ զամենայն և անօգուտ զլռութիւն իւր, մատն եղև այլոց ևս դաւակցաց. յորոց Լուկանոս, Կուինտիանոս և Սենեկիոս յուրաստ կացին ընդերկար. այլ ապա հրապուրեալ 'ի խոստմանէ անպատուհաս ազատութեան, և առ 'ի քաւել զյամեցումն խոստովանութեան իւրեանց, մատնեցին՝ Լու-

կանոս զմայր իւր զԱստիլա, Կուինտիանոս զԿլիտիոս Գալլոս, և Սենեկիոն զԱնիոս Պոլլիոն, զմտերմագոյնս 'ի բարեկամաց իւրեանց։

ԾԼ. Յուշ եղև յայնժամ Ներոնի՝ զի Եպիքարիս 'ի Վոլուսեայ Պրոկուլեայ ամբաստանեալ՝ 'ի կալանս կայր, և անընդհատ ցաւոց զանազան բնութիւնն վարկուցեալ՝ ետ 'ի խոշտանգանս հարցափորձի զնա մատուցանել։ Այլ ոչ գանք, ոչ հուր, և ոչ դահճացն զայրոյթ ընդ իւրեանցն պարտութիւն 'ի կնոջէ, յաղթեցին նմա, զի ուրանայր նա զամենայն ամբաստանութիւնս. այսպէս յաւաջնու

աւուր արհամարհեալ նորա զխոշտանգանս, 'ի վաղիւ անդր՝ յորժամ ածէին զնա անդրէն 'ի հարցափորձ դեսպակաւ, քանզի լուծեալ անդամոց նորա՝ ոչ ևս կարէր կալ յոտին, եղերծ զերիզն պատեալ զկրծովք, և խեղդաձև 'ի կամար դեսպակին արկեալ, եմոյծ անդր զպարանոց իւր, և բեռամբ մարմնոյն առկախեալ՝ եհան զնուաղեալ ոգին։ Օրինակ մեծ 'ի կին ձերբեալատ, որ 'ի փորձ այնպիսի՝ ոչ մատնեաց զոք յօտարաց իսկ գրեթէ անծանօթից. ուր արք ազատազգիք, ասպետք հռովմայեցիք, և ատենակալք ծերակուտին, չև 'ի տանջանս մատուցեալ՝ մատն եղէն մտերմագունիցն իւրեանց. զի և Լուկանոս և Սենեկիոն և Կուինտիանոս ոչ դադարէին 'ի յայտնելոյ և զայլս 'ի դաւակցաց, մինչև Ներոնի յահ և յերկիւղ ընթռնել, թէպէտ և 'ի բազմութենէ թիկնապահաց պատսպարեալ։

ԾԸ. Ի վերայ պարսպաց իսկ քաղաքին կացոյց նա պահապանս, պաշարեաց զծով և զգետ, և թուէր թէն 'ի գերութիւն քաղաքն մատնեալ. երթևեկէին ընդ հրապարակս, ընդ տունս, ընդ գիւղս իսկ և ընդ մերձակայ քաղաքս, հետևակազօրն և հեծելագունդ խառն ընդ գերմանացիս օտարազգիս՝ յորս առաւել վստահէր։ Եւ էր տեսանել խումբս ամբաստանելոց ձգեալ ածեալ արկեալ առ դրունս պարսիզացն. իսկ մուծելոցն յատեան 'ի պատասխանատուութիւն՝ համարէր 'ի յանցանս, եթէ ուրուք 'ի նոցանէ զուարթ 'ի դաւակից ոք ակնարկեալ էր, եթէ յանկարծ դէպ լեալ ումեք խօսել ինչ ընդ ումեք 'ի նոցանէ կամ՞ ձաշել, կամ՞ 'ի տեսարան 'ի միասին երթալ։ Ի խիստ հար-

ցափորձս Ներոնի և Տիգելլինեայ՝ խստագոյն ևս յաւելոյր Փենիոս Հռուփոս, առ 'ի ցուցանել զանձն անկցորդ դաւոյն՝ դժնեացեալ 'ի դաւակիցս. և յանկարկել առ նա Սոբրիոսի՝ որ անդն կայր և խորհեր դիմել սուսերամերկ 'ի Ներոն 'ի հարցափորձի անդ, մերժեաց նշանացի, և արգել զթափ բազկի նորա 'ի ձեռնարկել նորա 'ի պատեան սուսերին։

ԾԹ. Եղեն ոմանք՝ որք 'ի յայտնել դաւաճանութեանն, մինչդեռ Միլիք 'ի հարցափորձի կայր և Սկևինոս 'ի տարակուսի, յորդորէին զՊիսոն գնալ 'ի բանակն կամ ելանել 'ի բեմ, հետազօտել զսիրտ զօրականին և ժողովրդեան, և ասէին. Եթէ գայցեն գումարեսցին համախոհք ընդ քեզ, այլք ևս զհետ եկեսցեն, և յաւելցի վտարանքելոց զօրութիւն մեծ՝ կարևոր 'ի ձեռնարկս. Ներոն անպատրաստ գտցի, քաջորեարն իսկ յեղակարծում լիցի ահաբեկ, և ոչ կարասցէ գուսանն այն զէն առ զէն բերել, մարտակից ևս իւր զՏիգելլինոս հանդերձ հարձիւքն առեալ։ Բազում ինչ յաջողէ 'ի փորձ, դժուարին թուեցեալ վերհերոտաց. 'ի զուր է յուսալ այնքան բազմութեան գիտողաց ըզգաղտնին՝ քաջասրտութեամբ և աննկուն զօրութեամբ մարմնոյ պահել լռութիւն, և կալ հաւատարիմ. տանջանաց և վարձուց տեղի տայ ամենայն։ Եկեսցեն արկանել և զքեզ 'ի կապանս, և թշնամանալից մահուամբ վաղ կամ անագան սպանանել. քանի փառաւորագոյն լիցի քեզ գնել զկեանս 'ի վերայ հասարակապետութեան, օգնութիւն կարդալով ազատութեան. եթէ զօրականն յետնեսցի, եթէ լքցէ ժողովուրդն զքեզ, և զկեանս քո եթէ կորուսցես, սակայն նախնիք և յետինք արժանի իւրեանց զայնպիսի մահ քո համարեացին։ — Այլ նա հակառակ ամենայն բանից այսոցիկ եկաց անդրդուելի. և իբրև վայրիկ մի ելեալ արտաքս՝ եմուտ 'ի տուն իւր, պատրաստել 'ի ժամ յետին, ահա եհաս գունդ զինուորաց՝ զոր Ներոնի 'ի նորընտիր մանկտոյ կազմեալ էր, և այն ինչ նոցա սահմանեալ ռոճիկ. զի կեղակարծ զհինաւուրց զօրականն համարէր։ Պիսոն զրաւեցաւ 'ի կենաց՝ ըզզարկս բազկաց իւրոց հատեալ, և եթող կտակ՝ յորում ընթեր շողոմեր զՆերոն առ սէր կնոջ իւրոյ, զոր վանս

գեղեցկութեանն բարձեալ էր յումեմնէ 'ի բարեկամաց իւրոց, զանարժանն ազգատոհմի իւրում: և էր անուն կնոջն Ավրիա Գալլա, և առաջնոյ առն նորա Գոմիտիոս Սիլլոս. սա համբերութեամբն իւրով և նաև լկտութեամբ զնախատինս անուանն Պիսոնի յաձախեին։

Կ. Յետ այսորիկ հրամայեաց Ներոն սպանանել զՊլաւտիոս Լատերանոս, զսահմանեալն 'ի բդեշխութիւն, ոչ նեղեալ նմա և սուղ ինչ վայրկեան դիրկս արկանելոյ որդւոյն, և ոչ զեղանակ մահուն յընտիր արարեալ նմա։ Յաւիշտակեալ ածաւ նա 'ի տեղի սպատուհասի գերեաց, և խողխողեցաւ 'ի ձեռանէ Սատոտիոսի հազարապետի՝ արիական լռութեամբ, և ոչ ըզնորին ինքեան դաւակցութիւն յանդիմանելով։ Յետ այսր սպանութեան յաջորդեաց Սենեկայն, հաձոյագոյն Ներոնի քան զայլոցն ամենեցուն. իբր ոչ էթէ հաւատիք էին համախոհութեան սորա ընդ դաւակիցս, այլ զի ցանկայր Ներոն սրով վճարել՝ զոր գեղով չէր կարացեալ։ Նատալեայ Աեթ ամբաստանեալ էր զՍենեկա, իբր զի յառաքել իւրում յայց խօթութեան նորա, և 'ի հարցանել՝ թէ ընդէր չտայր մուտս Պիսոնի, ուր լաւագոյն էր յաձախել ընդ նմա ընտանեբար զբարեկամութիւն, պատասխանի ընկալեալ էր՝ զի երկաքանչիւրոց ևս էր այն միտասակար, և զի կեանք իւր 'ի կենդանութիւն Պիսոնի էին հաստատեալ։ Գրանիոս Սիլուանոս, հազարապետ միոյ յատենական գընդաց, ընկալաւ պատուէր ածել առ Սենեկա զայս վճիռս։ Հարցանել թէ ստոյգ էին բանք Նատալեայ և պատասխանի իւր։ Յայնմ աւուր ըստ դիպուածոյ կամ խորհրդով դարձեալ էր Սենեկա 'ի Կամպանիոյ, և զկայ առեալ յամարանոցի ուրեք 'ի մի 'ի մերձակայ գիւղից Հռովմայ, չորիւք աեթ մղոնիւք հեռի։ Ընդ հազարապետն հասեալ ընդ երեկս, պաշարեաց զամարանոցն զօրօք, մինչ կային անդ Սենեկա և Պոմպէա Պաւլինա կին նորա, և երկուք 'ի բարեկամաց սեղանակիցք ընդ նոսա, և եցոյց նմա զբանս ինքնակալին։

ԿԱ. Պատասխանի ետ Սենեկա և ասէ. Արդարև առաքեցաւ առ իս Նատալիս 'ի Պիսոնէ, և եհարց թէ

ընդէ՞ր մերժէի զայցելութիւն նորա. և ես զխոթութիւն իմ և զսէր խաղաղութեան ածի յաղերս. այլ զկեանս այլոց ուրուք նախամեծար քան զիմն առնելոյ ոչ գոյին պատճառք. և զի չեմ բնաւորեալ'ի մարդահաճութիւն, զայն տեղեկագոյն քան զամենայն որ գիտէ Ներոն՝ որոյ ստէպ զհամարձակախօսութեան իմոյ քան զշողոմից առեալ է զփորձ։ — Ի պատմել հազարապետին զայս ամենայն լու 'ի լու Պոպպէի և Տիգելլինեայ, որ խորհրդակիցք էին անգթութեանցն Ներոնի, եհարց ինքնակալն՝ թէ խորհէ՞ր Սենեկա ինքնակամ զբաւել'ի կենաց. և 'ի պատասխանել հազարապետին՝ ոչ ինչ ցոյցս երկիւղի 'ի նմա տեսեալ, ոչ ինչ տխրութիւն 'ի բանս և 'ի դէմս նորա, հրաման ետ ինքնակալն՝ դառնալ յայտ առնել նմա զդատակնիքս մահուն։ Փաբիոս Հռուստիկոս աւանդէ ոչ ընդ նոյն ճանապարհ դարձ արարեալ հազարապետին՝ ընդ որ եկեալն էր, այլ խոտորեալ առ Փենիոս զօրավար՝ ցուցանել նմա զհրաման ինքնակալին, թէ պարտ էր կատարել զայն. և նորա, ըստ անհրաժեշտն վատութեան՝ որ տիրէրն ամենեցուն, խրատ տուեալ՝ կատարել. զի և Սիլուանոս ընդ դաւակիցս էր, և յաւելոյր զոճիր յոճիրս՝ զորոց յանձն առեալ էր զվրէժխնդրութիւն. սակայն խնայեաց 'ի շրթունս իւր և 'ի տեսութիւն, և միում՝'ի հարիւրապետաց յանձն արար մնանել առ Սենեկա, առ 'ի յայտ առնել նմա զդատակնիքն։

ԿԲ. Նա անխռով խնդրեաց զկտակ իւր. և 'ի ժրխտել զայն հարիւրապետին՝ դարձաւ առ բարեկամս իւր և ասէ. Եւ քանզի անսերելի է ինձ շնորհս ունել վաստակոցդ ձերոց, զպատկեր կենաց իմոց՝ որ միայն մնայ ինձ պատուականագոյն՝ թողում ձեզ. եթէ գնիշատակ գովելեացն՝ որ 'ի նմա՝ պահիցէք, լիցի ձեզ 'ի փառս բարեկամութիւն ձեր անյողդողդ։ — Եւ 'ի հարկանել բարեկամացն յարտասուս, մերթ յորդորանաք և մերթ սաստիւ քաջալերէր զնոսա, և ասէր. Ո՞ւր թողէք զպատուէրս իմաստասիրութեան, ո՞ւր զբազմամեայ հանդերձանս ընդդէմ չարեաց'ի վերայ հասելոց. ո՞ զանգթութիւն Ներոնի չգիտիցէ. և զի՞նչ այլ մնայր նմա յետ մայրասպանութեանն և եղբայրասպանու-

թեան, բայց և զդաստիարակ իւր և զվարժապետ մատնել՝ի մահ։ —

ԿԳ. Յետ այսոցիկ և այսպիսեաց բանից առ ամենեսին խօսելոյ, գիրկս արկեալ կնոջ իւրում, և վայրիկ մի գորովեալ՝ի տագնապ պահուն, աղաչէր զնա և Թախանձէր՝՝ի չափու ունել զվիշտ իւր, և մի՝՝ի սպառ յերկարաձգել, այլ յիշատակաւ առաքինասէր կենցաղավարութեան առն իւրոյ՝ աղնուական մխիթարութեամբ զկորուստ իւր սփոփել։ Իսկ նա՝՝ի մտի եդեալ ինքնակամ մեռանել, խնդրէր զբաղուկ սպանող զի. յայնժամ Սենեկա ոչ ընդդէմ դարձեալ փառաց մահու նորա, միանգամայն և ոչ կամեցեալ թողուլ նշաւակ թշնամանաց զմիակ սիրելին իւր, ասէ. Ցուցի քեզ զհնարս ամոքելոյ զդառնութիւն կենաց քոց. այլ զի ընտրես զմահ փառաւոր, առաքինութեան քում ոչ լինիմ խափան. քաջութիւն արիական մահու լիցի երկաքանչիւրոցս հաւասար, այլ քոյդ պայծառագոյն։ Յետ այսորիկ նովին երկաթով հատին երկաքանչիւր զզարկս բազկաց իւրեանց. այլ զի մարմին Սենեկայ՝ ծերագոյն և սակաւապիտութեամբ նիհարեալ՝ յամր հոսէր զարիւն, եբաց նա և զերակս յետկոյս ծնգանցն և զսրունանց. և յանհնարին տառապանսն երկուցեալ՝ թէ գուցէ կնոջն իւրոյ բեկցի՝՝ի ցաւոց արիութիւն, և ինքն իսկ՝՝ի տեսիլ տուայտանաց նորա լքանիցի, հաւանեցոյց զնա գնալ յայլ սենեակ. և մինչև՝՝ի շունչ յետին՝՝ի վար արկեալ զձարտարխօսութիւն, բազում ինչ փաստաբանից և դպրաց ետ՝՝ի գրի առնել. զորովք, քանզի հրատարակեալ էն նորին իսկ բանիւք, զանց առնեմ։

ԿԴ. Բայց Ներոնի, զի չէր ինչ ատելութիւն ընդ Պաւլինայ, երկուցեալ՝՝ի գրգռելոյ զհեռ հասարակաց ընդդէմ անգթութեան իւրոյ՝ հրամայեաց ապրեցուցանել զնա. և յորդորմամբ զինուորացն՝ սպասաւորք և ձերբազատք նորա կապեցին զերակս, և արգելին զհոսումն արեանն, յանգէտս արդեօք նորին թէ գիտութեամբ՝ չէ յայտ. զի որպէս պատրաստ է ռամիկն՝՝ի չարախոհութիւն, ոչ պակասեցին՝ որք համարէին փառասիրեալ Պաւլինայ զհամբաւ մահակից ընդ առն իւրում լինելոյ՝ ցորչափ երկիւղ էր նմա՝՝ի Ներոնէ,

այլ ապա՝ի մեղմանալ երկիւղին՝ պարտեալ ասէին զնա՝ի քաղցրութենէ կենաց։ Եւ եկեաց նա այնուհետև զամս ինչ, միշտ հաւատարիմ՝ի յիշատակ առն իւրոյ. այլ յայտնի երևէր՝ի տժգոյն դէմս նորա և՝ի մեռելատիպ անդամս նուաղուն կենսական ոգւոց։ Իսկ Սենեկա՝ի յամել և յերկարաձգել մահուն իւրոյ՝ աղաչեաց զՍտատիոս Անեոս զհաւատարիմ իւր և բժիշկ Ճարտար, ածել զդեղ մահուն՝ի բազմաց հետէ հայթայթեալ՝ որով դատապարտեալք յատենի աթենացւոց զրաւին՝ի կենաց. այլ ընդունայն եղև առնուլ զայն յարբունն, զի վասն պաղելոյ անդամոցն և վտառաց մարմնոյն խնլոյ՝ ոչ ևս ազդէր՝ի նա զօրութիւն թունոյն. վասն որոյ եմուտ՝ի ջուր ջերմ, և սրսկեալ՝ի ջրոյ անտի զսպասաւորաց՝ որ մերձն կային, ասէ. Արամազդայ Ազատչի հեղում քաւութիւն։ Յետ այսորիկ ածեալ՝ի բաղանիս, ՝ի շոգւոյ անտի հեղձամղձուկ՝ եհան զոգի. և դիակն նորա առանց հանդիսի յուղարկաւորութեան այրեցաւ, որպէս յաւելեալ էր նորա՝ի կտակին մինչդեռ Ճոխն էր և մեծազօր՝ նախահոգ եղեալ օրհասին։

Կե. Զրոյցք լինէին Սոբրիոսի Փլաւեայ խորհուրդ կալեալ ընդ Հարիւրապետս, ոչ զանխուլ՝ի Սենեկայ, սպանանել զՊիսոն յետ սպանութեանն Ներոնի՝ի նմանէ, և կացուցանել ինքնակալ զՍենեկա՝ որ անմեղութեամբն և պայծառ առաքինութեամբք թուէր սահմանեալ՝ի գերագոյն իշխանութիւն. և համբաւէր իսկ իբրև՝ի Փլաւեայ ասացեալ՝ թէ ոչ ինչ ընդհատ նախատինք էին փոխանակել գուսանի ընդ քնարահարի. զի Ներոն քնարաւ, և Պիսոն՝ի ձև գուսանի նուագէր։

Կզ. Զօրականաց ևս համախոհութիւն եկն՝ի վերջ՝ի յայտ, զայրանալով դաւակցաց ընդդէմ Փենիոսի Հռուփոսի, որ դաւակից և ինքն գոլով՝ քննիչ համախոհիցն բազմէր. և՝ի նորին սպառնալից հարցափորձէ ստիպեալ Սկևին, ասաց ընդ դառն ժպիտ՝ զի ոչ ոք աւելի ինչ քան զնա գիտէր. և յաւել խրատել զնա՝ի շնորհակալիս բարւոյ ինքնակալին։ Այ այսոսիկ Փենիոս ոչ կարաց լռել, այլ բանք նորա հատկլեալք մատն լինէին երկիւղին։ Յայնժամ այլոց, և մանաւանդ կե-

բուարիոսի Պրոկուլեայ ասպետի, հաւատիս նմա 'ի դէմն ածեալ, հրամանաւ ինքնակալին արկաւ նա 'ի կապանս, 'ի ձեռն Կասիոսի զօրականի՝ որ անդն կայր, և էր ականաւոր ուժեղութեամբ։

ԿԷ. Նոցին ամբաստանութեամբ 'ի կորուստ մատնեցաւ և Սոբրիոս Փլաւիոս հազարապետ. որ 'ի սկզբան անդ 'ի պաշտպանութիւն անձին ածէր զանհամեմատութիւն բարուց, անհնարին ցուցանելով զինուորի ընդ անզէն և ընդ կնամարդի որերոյ միաբանելայլ ապա 'ի նեղ անկեալ, ընտրեաց զարիական խոստովանութիւն. և հարցեալ 'ի Ներոնէ զպատճառ հաւատադրժութեանն, ասէ. Քանզի ատելի եղեր ինձ. ոչ ոք 'ի զօրականէն հաւատարմագոյն քան զիս էր քեզ՝ ցորչափ արժանի էիր սիրոյ. ատել զքեզ սկսայ՝ յորժամ զմայր քո և զկին սպաներ, և կառավար և գուսան և հրձիգ ցուցար։ — Զնորին իսկ բան, ածեմ, զի ոչ որպէս զՍենեկայն այսոքիկ հրատարակեցան, և զի դարձեալ ոչ ինչ նուազ արժանի յիշատակի են զինուորականի առնն բանք անկեղծք և զօրաւորք։ Ի հարցափորձս դաւաճանութեանն այնորիկ ոչ ինչ այսպիսի ծանր ազդեաց 'ի լուր Ներոնի, որ որչափ պատրաստն էր յանօրէնութիւն՝ այնչափ անսովոր 'ի լսել զանօրէնութիւնս իւր։ Վէնոսի Նիգերի հազարապետի յանձն եղև պատուհաս Սոբրիոսի. և քանզի 'ի մօտակայ ուրեք ագարակի տայր Նիգեր պեղել փոս, Սոբրիոսի տեսեալ զայն անձուկ, և ոչ խորը ըստ բաւականին, ասէ ցզինուորս՝ որ անդն կային. Ոչ ըստ օրինի զփոսդ գիտացիք պեղել։ Եւ յաղդել հազարապետին՝ զի քաջ զպարանոցն կարկառեսցէ, ասաց. Իցէ թէ նոյնպէս քաջ գիտասցես դու հարկանել զայն։ Եւ արդարև զդողանի հարեալ հազարապետին, հազիւ կրկնակի հարուածովք կարաց գլխատել զնա. և պարծէր առաջի Ներոնի ընդ անգթութիւն իւր՝ որպէս թէ կրկնամեռ գյանցաւորն արարեալ։

ԿԸ. Զհետ Սոբրիոսի Սուլպիկիոս Ասպեր հարիւրապետ ետ օրինակ արիութեան. քանզի հարցեալ 'ի Ներոնէ՝ թէ ընդէր 'ի սպանութիւն իւր լեալ էր համախոհ, ետ հակիրճ պատասխանի. Զի ոչ ևս կարէի արբանեկել այնքանեաց անօրէնութեանց քոց։ —

Եւ ածաւ 'ի հրամայեալն պատուհաս։ Այլք ևս 'ի հարիւրապետաց կրեցին արիաբար զնոյն պատուհաս. այլ ոչ զնոյն արիութիւն եբեր յանձին Փենիոս Հռուփոս, որ և 'ի կտակին ևս իւրում յաւել քանքատանս։ Այն ունէր Ներոն զի ամբաստանեսցի և Վեստինոս բը-դեաշխ, այր բուռն՝ զոր թշնամի իւր համարէր. բայց դաւակիցք չէին յայտնեալ նմա զգաղտնիս իւրեանց, կէսք վասն յառաջագոյն թշնամութեանն իւրեանց ընդ նմա, և բազումք զի անհամբոյր և անմիաբանելի զնա համարէին։ Աստելութիւն Ներոնի ընդ Վեստինեայ պատճառս առեալ էր 'ի մտերիմ բարեկամութենէ նոցա ընդ միմեանս. զի այնուիկ Վեստինոս քաջ 'ի վերայ կացեալ վատութեանն Ներոնի, արհամարհէր զնա. և Ներոն յամեհութենէ բարեկամին երկրնչէր, զկծանող զուարճախօսութեանց նորա առեալ զփորձ. որք յորժամ զճշմարտութիւն յայտ առնեն, թողուն 'ի մտի զդառն յիշատակ իւրեանց։ Յաւելաւ միւս ևս պատճառ յեղակարծ. Վեստինեայ ածելիւր կին զԱտատիլիա Մեսալլինա, գիտելով չափ զի ընդ հոմանիս նորա էր և ինքնակալն։

ԿԹ. Արդ զի ոչ յանցանս ինչ 'ի նմա գտանէր, և ոչ դատախազ ոք նմին՝ որով զկերպարանս դատաւորի կարասցէ յանձին բերել, ձեռն էարկ 'ի բռնութիւն։ Աւաքեաց զԳերելանոս հազարապետ ջոկատիւ միով զօրաց, որպէս թէ առ 'ի խափանել զՀնարս վտարանքութեան բդեշխին, գրաւել զամրոց նորա, և նուաճել զգունդ ընտրելոց պատանեաց՝ որոց նա հրամայէր։ Ապարանք նորա հայէին 'ի բարձուէ 'ի հրապարակն, և թիկնապահք գեղանիք էին նորա. և յայնմ աւուր կատարեալ զամենայն պաշտամունս բդեշխի, կամ առ 'ի ծածկել զկասկածանս իւր, առնէր խրախուն աներ-կիւղ. և ահա մտին առ նա զինուորք և ասեն. Հազարապետն կոչէ զքեզ։ Յարեաւ նա իսկոյն, և ամենայն պատուէրք ինքնակալին կատարեցան 'ի նմա. փակեցաւ 'ի սենեկի՝ ուր պատրաստ կայր բժիշկ, և եհատ զերակս նորա, և յուժի դեռ ևս կալով՝ ածաւ 'ի բաղանիս, և մուծաւ 'ի ջուր ջերմ, առանց ճիկ հանելոյ ընդ կորուստ իւր աւաղելի։ Յայնժամ կոչնականքն՝ շուրջ պատեալք 'ի պահպանութենէ զինուորաց՝ որ-

ձակեցան զիշերախառն յաղատութիւն, մինչ Ներոնի զմտաւ ածեալ զերկիւղ նոցա՝ 'ի կոչնոց անտի 'ի կորուստ գնալոյ, և զծաղու եկեալ, ասէր. Շատ իսկ հատուցին նոքա զգինս խորտկաց բդեշխին։

Հ. Յետ այսորիկ հրաման ետ Ներոն 'ի մահ մատնել և զՄ. Անդրէաս Լուկանոս. սա 'ի Հոսել արեանն, 'ի ցրտանալ ոտիցն և ձեռաց, և 'ի պարզել ոգւոցն տակաւ 'ի ծայրից մասանց մարմնոյն, դեռ ևս եռանդն 'ի սրտի և զգաստ 'ի միտս, յիշեաց զեղերերգութիւնն յօրինեալ յիւրմէ, յորում զկարեվէր զինուորի նկարագրէր զմահ համանման, և տողքն եղերականք արտասանեալք 'ի նմանէ՝ եղեն խօսք նորա վերջինք։ Եւ ապա Սենեկիոն և Կուինտիանոս և Սկևին ետուն արիաբար զանձինս 'ի մահ, որպէս չէր ակն ունել վասն մեղկութեան կենաց նոցա. և այլք ևս 'ի դաւակցաց սպանան, ոչ ինչ արժանի յիշատակի գործեալ կամ ասացեալ։

ՀԱ. Ընդոյր յայնժամ քաղաքն յուղարկաւորութեամբ, և Կապիտոլ զոհիւք. ոմն զորդի, այլ ոք զեղբաչր կամ զազգական կամ զբարեկամիւր կորուսեալ, սակայն շնորհս մատուցանէր դից՝ զարդարէին դափնեօք դրունք տանց, և կէսք զծնգովք ինքնակալին փարեալ՝ համբուրէին ստէպ զաջ նորա. իսկ նա ուրախութեան արգասիս համարէր զայն ամենայն։ Անտոնիոսի Նատալեայ և Կերուարիոսի Պրոկուլեայ վաղ ընդ փոյթ մատնութեանն վարձ՝ եղև ազատութիւն անպատուհաս։ Միլիք Ճոխացեալ գանձիւք, զփրկչի [1] հելլէն ձայնիւ ընկալաւ զանուն՝ Գրանիոս Սիլուանոս, մի 'ի հազարապետաց, թէպէտ և անպարտ արձակեալ՝ չոգաւ զիւրովին։ Ստատիոս Պրոքսիմոս զթողութիւն յինքնակալէն ընկալեալ, փառասիրութեամբ մահու մերժեաց զայն։ Պոմպէոս և Կուռնելիոս Մարտիալիս, Փլաւիոս Նեպոս, և Ստատիոս Դոմիտիոս, ընկեցան 'ի հազարապետութենէ, թշնամիք համարեալ ինքնակալին՝ թերևս յանիրաւի։ Նովիոս Պրիսկոս վասն բարեկամութեանն ընդ Սենեկայ, Գլիտիոս Գալլոս, և Անդրիոս Պոլլիոն, դատափետեալք

1 Այս ինքն զէ հոլէցաս Սոտեր։

քան դատապարտք վարեցան յաքսոր։ Պրիսկէայ նըժ-դեհակից եղև յաքսոր Անտոնիա Փլակելլա կին նորա, և Գալլոսի՝ Եգնատիա Մաքսիմիլլա։ Տիկնոջս այսմիկ էին մեծութիւնք բազումք՝ որ 'ի սկզբան թողան նմա. այլ յետոյ կորոյս և զայնոսիկ, փառաւորեալ 'ի ժառանգելն և 'ի կորուսանել։ Աքսորեցաւ և Հռուփիոս Կրիսպինոս պատճառանօք համախոհութեան, այլ ստուգիւ՝ զի ատելի էր Ներոնի վասն Պոպպէի յառաջագոյն ընդ նմա ամուսնութեան։ Տարագրեցան և Վիրգինիոս և Հռուփոս վասն պայծառութեան համբաւոյ իւրեանց. զի Վիրգինիոս 'ի հրահանգս Ճարտարիսօսութեան և Մուսոնիոս Հռուփոս 'ի վարժս իմաստասիրութեան կրթէին զմանկտին։ Կլովիտիենոս Կուիետ, Յուլիոս Ագրիպպաս, Բլիտիոս Կատուլլին, Պետրոնիոս Պրիսկոս և Յուլիոս Ավտինոս, խմբովին որպէս գաղթական իմն առաքեցան 'ի կղզիս եգէական ծովուն. իսկ Կատիկիա կին Սկևինեայ, և Կեստնիոս Մաքսիմոս եղեն արտասահման Իտալիա, պատուհասիւն այնուիկ գիտացեալ՝ զի ամբաստանեալ էին. իսկ Ատիլլա մայր Լուկանոսի, ոչ անպարտ արձակեալ, և ոչ դատապարտեցաւ։

ՀԲ. Ներոնի զայս ամենայն մահունս և զպատիժս պատուհասից կատարեալ, հանդէս արար ապա զօրականին, միում միում'ի նոցանէ բաշխեաց սեստերտս երկու հազար, և հրամայեաց ձրի ունել նոցա ցորեան՝ զոր յառաջագոյն գնոց առնուին։ Եւ ապա՝ որպէս թէառ 'ի տալ համարս զիրաց պատերազմի՝ կոչեաց զծերակոյտն, և ետ Պետրոնիոսի Տուրպելիանեայ՝ երբեմն բդեշխի, զօրէնս պատուոյ յաղթանակի. զնոյն և Կոկէոսի Ներուասայ՝ հանդերձելոյ ատենակալի, և Տիգելլինեայ հրամատարի ատենական զօրականին. յաւելեալ երկոցունց սոցա զշնորհս կանգնելոյ առ ապարանօք ինքնակալին զպատկերս իւրեանց, թող զյաղթական անդրիսն կանգնեալս 'ի հրապարակի։ Նիմֆիդիոս ընկալաւ զշուք բդեշխութեան. և քանզի աստ նախ անուն նորա յիշատակի, ասացից սուղ ինչ զնմանէ. զի և նա մի 'ի հարուածոց հասարակապետութեան պատրաստի։ Արդ ծնաւ սա յազատագիր մօրէ՝ որ զգեղ մարմնոյ մատնեալ էր 'ի պղծութիւն ծառա-

յից և ձերբազատից ինքնակալացն. և ասէր զանձն որդի Կայիոսի կեսարու, զի էր ըստ դիպուածոյ՝ հանգոյն նմին բարձրահասակ և դժնէադէմ, կամ զի արդարև Կայիոս՝ որ ոչն գարշէր 'ի բոզ կանանուց՝ ընդ մօր ևս նորա անկեալ էր։

ՀԳ. Բայց Ներոնի ոչ շատացեալ գումարել զծերակոյտն, և առաջի հարցն ատենակալաց ատենաբանել վասն իւր, հրովարտակ ևս եհան առ ժողովուրդն, յաւելեալ 'ի նմա զամբաստանութիւնս և զխոստովանութիւնս դատապարտելոց արձանագրեալս. զի 'ի բերան ռամկին ստէպ չարահամբաւէր սպանեալ արս անպարտս առ ոխութեան կամ առ երկիւղի։ Բայց դաւակցութեանն սկիզբն և աճումն և նուաճումն չեղև երբէք ՀՇմարտասիրաց յայնժամ երկբայելի, և վկայեցին զայն աքսորեալք ևս 'ի դառնալ իւրեանց յետ մահուն Ներոնի 'ի Հռովմ։ Ա.յլ 'ի ծերակուտին՝ ուր ամենեքեան, և մանաւանդ որք առաւել վշտացեալքն էին՝ 'ի մարդահաճութիւն նուաստանային, Սալլիանոս Կլեմէս զՅոնիոս Գալլիոն՝ որ մահուամբն Սենեկայ եղբօր իւրոյ ահաբեկեալ՝ աղերս վասն կենաց իւրոց արկանէր ինքնակալին, կշտամբեաց՝ կոչելով զՆերոն Թշնամի հայրենեաց և մայրասպան. մինչև ծերակուտին միաբարբառ կարկեցուցանել զնա ահիւ, զի մի հասարակաց տառապանօքն զեղծանել Թուիցի առ ատելութեան, և մի զանգթութիւն ինքնակալին՝ զցածուցեալն և զմոռացեալ՝ անդրէն գրգռեսցէ։

ՀԴ. Յայնժամ նուէրք և գոհութիւնք սահմանեցան դից, և մանաւանդ սպասք Արեգական՝ որոյ վաղեմի մեհեան է առ կրկիսին, ուր ոՀիրն հանդերձեալ էր կատարել, և ակնարկութեամբ նորա գաղտնիք դաւաճութեանն եկին 'ի յայտ։ Սահմանեցաւ և 'ի հանդէս կրկիսական խաղուց՝ որ 'ի պատիւ Դեմետրեայ կատարէին՝ յաւելուլ զթիւ երիվարաց 'ի կառարշաւս, և տալ ապրիլի ամսեան զանուն Ներոնի, և մեհեան դիցն Երկայնաւուրց կանգնել 'ի տեղւոջ՝ ուստի Սկևինեայ զսուսերն բարձեալ էր. և Ներոն նուիրեաց զայն 'ի Կապիտոլին՝ արձանագրեալ զնովաւ Դիոսի վրէժխնդրի. յոր չեղև ոք յայնժամ մտադիր, այլ յետ պատերազմին Յուլեայ Վիտիկեայ՝ հմայք և

գուշակութիւնք հանդերձելոյ վրէժխնդրութեանն նկատէին 'ի նմա։ Գտանեմ յարձանագրութիւնս ծերակուտին, Կերիալեայ Անիկիոսի՝ սահմանելոյ 'ի բը-դեշխութիւն՝ ասացեալ յայնժամ վճռաբար, կանգ-նել վաղագոյն մեհեան Ներոնի 'ի գանձուց հասարա-կաց. զոր ինքն իմանայր 'ի սպաս դիւցազին՝ գեր 'ի վե-րոյ մահկանացու բնութեան ամբարձելոյ, և արժա-նաւորի առնուլ երկրպագութիւն 'ի մարդկանէ. բայց մարթ էր շրջել զայն 'ի հմայս մահու նորին, զի ոչ ըն-ծայի իշխանաց պատիւ դիւցական՝ մինչ չև դադա-րեալ նոցա 'ի կենակցութենէ ընդ մարդկան։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Վոլոգէս խորհի նուաճել անդրէն զՀայաստան ընդ ձեռամբ եղբօր իւրոյ Տիրիթի։ Վարանել նորա. և գիմեցումն Տիգրանայ յԱդիաբենս. բողոք աւագանւոյ երկրին։

Բ. Վոլոգէս գումարէ ատեան. թագաւորեցուցանէ զՏիրիթ. հրամայէ հալածել զՏիգրան 'ի Հայաստան աշխարհէ 'ի սպառնալ նորա ընդդէմ մարզպանն հռովմայեցւոց։

Գ. Կորբուլոն արձակէ զերկուս 'ի լեգէոնաց յօգնութիւն Տիգրանայ, զայլսն բանակեցուցանէ յեզը Եփրատայ, յապահովել զԱսորիս։

Դ. Մոնէս, մի 'ի տեղակալաց Վոլոգեայ, յարձակի 'ի Տիգրանակերտ՝ ուր ամրացեալն էր Տիգրան, և 'ի գերև ելանէ։

Ե. Կորբուլոն ազդ առնէ Վոլոգեայ բառնալ զպաշարումն քաղաքին։ Վոլոգէս հնազանդի, և յղէ պատգամաւորս առ Ներոն՝ խնդրելով 'ի նմանէ զՀայաստան։

Զ. Կեսենիոս Պետոս հասանէ յարևելս, բաժանել զհրամատարութիւն զօրաց ընդ Կորբուլոնի. նախանձընդդէմ հակառակութիւն երկոցունց զօրավարացս։

Է. Պատգամաւորք Վոլոգեայ դառնան ունայնաձեռն, և սկսանի անդրէն պատերազմ։

Ը. Պետոս անցանէ ընդ Հայաստան առանց տիրելոյ անգ, և դարձուցանէ զզօրս իւր 'ի մերձենալ ձմերայնոյ։

Թ. Կորբուլոն արկանէ կամուրջ զԵփրատաւ։ Պարթևք ոչ ևս յարձակին յԱսորիս, դարձուցեալ զաչս 'ի Հայաստան։

Ժ. Անխոհեմութիւն Պետոսի. և յետ բազում սխալանաց՝ խնդրել նորա օգնութիւն 'ի Կորբուլոնէ, և դանդաղել սորա 'ի յղել։

ԺԱ. Վոլոգէս յառաջ վարէ սաստկապէս զպատերազմն։ Պետոս աղաչէ վերստին զԿորբուլոն, վաղ հասանել փրկել զբանակն։

ԺԲ. Կորբուլոն խաղայ գնայ հասանէ 'ի Հայաստան։

ԺԳ. Վոլոգէս ևս քան զևս սաստկացուցանէ զպաշարումն բանակին Պետոսի։ Պետոս փորձի խօսել ընդ նմա 'ի հաշտութիւն, այլ առանց խոնարհելոյ յաղերս։

ԺԴ. Վոլոգէս պատասխանի տայ սպասել եղբարց իւրոց, առ 'ի սահմանել ընդ նոսա զբախտ Հայաստանի և զլեգէոնացն հռովմայեցւոց։ Պետոս խնդրէ խօսել ընդ նմա, և նա յղէ փոխանակ իւր զերկուս 'ի տեղակալաց։ Հաւանին սոքա բառնալ զպաշարումն, եթէ միայն մեկնեսցին 'ի Հայաստանէ զօրք հռովմայեցւոց։

ԺԵ. Պետոս ստիպի 'ի Պարթևաց կամուրջ արկանել զԱրածանեաւ. կորանք հռովմայեցւոց։

ԺԶ. Խուճապաւ փախուստ Պետոսի. հանդիպել նորա Կորբուլոնի յեզը Եփրատայ։

ԺԷ. Խօսակցութիւն երկոցունց զօրավարացս։ Պետոս մեկնի գնայ

ձմերել'ի Կապադովկիա։ Քանդումն ամրոցաց կառուցելոց 'ի Կորբուլոնէ յայնկոյս Եփրատայ. և մեկնել Պարթևաց 'ի հայաստանէ, թողեալ զայն անիշխան։

Ժ.Ը. Ախոյեանք և յաղթական կամաքք կանգնեալք 'ի Հռովմ վասն կարծեցեալ բեկման Պարթևաց։ Ներոն զգինս ցորենոյ ունի 'ի նմին սակի 'ի կորնչել երեքարիւրոց ցորենաբեր նաւաց ընկղմելոց և այրելոց 'ի Տիբերիս։ Եպերել նորա զչայլութիւն նախորդաց իւրոց։

Ժ.Թ. Վաճառ ծերակուտին ընդդէմ կեղծ որդեգրութեան։

Ի. ԻԱ. Դատ Տիմարքոսի կրետացւոյ վասն պարծելոյ նորա իբր թէ 'ի կամս իւր էր կուսակալացն Կրետայ արժանի լինել կամ ոչ, շնորհակալեաց ծերակուտին զտեսչութենէ իւրեանց։ Թրասէաս առաջարկէ բառնալ 'ի գաւառաց զիրաւունս խնդրելոյ զայն վասն և ոչ միոյ ուրուք յաւագաց։

ԻԲ. Բգեաշնք չառնուն յանձն ածել զառաջարկութիւնն 'ի քուէայս. այլ սուղ ինչ յետոյ ածէ զայն ինքնակալն յանուն իւր, և լինի ընդունելի։

ԻԳ. Խնդութիւն Ներոնի ընդ ուսոր իւր ծնեալ 'ի Պոպպէայ։ Մարդահաճութիւն ծերակուտին։ Թրասէաս թշնամանի յինքնակալէն։ Զորեքամսեայ մեռանել մանկանն, և դիւցական ընդունել պատիւս։

ԻԴ. Հրեշտակութիւն Վոլոգեայ. պահանջել նորա դարձուցանել զեղբայր իւր Տիրիթ 'ի թագաւորութիւն Հայոց յանդիման լեգէոնաց, և առաջի պատկերի ինքնակալին։

ԻԵ. Ունայնաձեռն դարձ հրեշտակացն. զօրավար պատերազմին սահմանի Կորբուլոն. դարձ Պետոսի 'ի Հռովմ. Ներոնի ծաղր ևեթ առնել զվատութիւն նորա 'ի պատիժ։

ԻԶ. Կորբուլոն համախմբէ զզօրս իւր, և պատրաստի անցանել ընդ Եփրատ։

ԻԷ. Բանագնացութիւնք. հրեշտակ հաշտարար յղեալ 'ի նմանէ առ Վոլոգէս և առ Տիրիթ։ Խստութիւն նորա ընդ գլխաւորս ապըստամբութեան Հայոց։

ԻԸ. Բանակցութիւն Կորբուլոնի ընդ Տիրիթայ 'ի տեղւոջ, ուր Պետոս լեգէոնաքն պաշարեալն էր։

ԻԹ. Տիրիթ աւանդէ զԹագն առաջի պատկերի ինքնակալին, և խոստանայ գնալ 'ի Հռովմ ընդունել զայն 'ի ձեռաց Ներոնի։

Լ. Կորբուլոն առնէ կոչունս Տիրիթայ, և բացատրէ նմա զսովորութիւնս բանակացն հռովմայեցւոց։

ԼԱ. Տիրիթ յառաջ քան զերթալ իւր 'ի Հռովմ՝ այց առնէ Պակորոսի 'ի Մարս և Վոլոգեսի յԵկբատանս. հայցուած Վոլոգեսի 'ի Կորբուլոնէ վասն նորա։

ԼԲ. Ծովեզերեայք Ալպեաց ընկալեալք յիրաւունս Լատինի։ Սահմանին կայք ասպետաց 'ի կրկիսի. խաղք սուսերամարտից։

ԼԳ. Երթ Ներոնի 'ի Նէապոլիս, և երգել անդ 'ի տեսարանի, մինչև երթեալ առնուլ պսակ 'ի տեսարանս Ելլադայ։

ԼԴ. Կործանումն տեսարանին յելանել ամբոխին։ Ներոնի կալ 'ի զնին սուսերամարտից 'ի Բենեւենա, ածելոց 'ի Վատինեայ 'ի հանդէս. նկարագիր Վատինոսի։

ԼԵ. Տորկուատոս Սիլանոս ամբաստանեալ, երթայ զիւրովին. կեղծաւորեալ բանք Ներոնի զայսմանէ։

ԼԶ. Ներոն փոխանակ գնալոյ 'ի յունաստան՝ դառնայ 'ի Հռովմ. ասէ

ուղևորել յԵգիպտոս, և ապա յայտ առնէ ոչ ևս գնալ՝ թէ գուցէ տրտմեսցի Ժողովուրդն Հռովմայ ընդ երթիւր։

ԼԷ. Կոչունք Տիգելլինի յագրիպպեան ծովակին. տեսարանք խենէշք. նողկալի նշաւակութիւնք Ներոնի։

ԼԸ. Աւերած Հռովմայ 'ի հրդեհէ, արկածից կամ թէ արդեօք կամաց Ներոնի արգասիք։

ԼԹ. Ներոնի դարձ յԱնտիոնէ 'ի հրդեհել Հռովմայ, և 'ի հանդէս ածել, որպէս ասի, զայրեցումն Տրովադայ յառաջին տեսարանի։

Խ. Շիջումն հրդեհին յետ վեց աւուր, և բորբոքել անդրէն 'ի տան Տիգելլինի, և այրել զգեղեցկագոյն կողմն Հռովմայ։

ԽԱ. Անհամար ասանց և մեհենաց այրեցումն. և կորուստ ցանկալի հրաշակերտից գեղարուեստից և բանասիրութեան։

ԽԲ. Ներոնի կառուցանել իւր ապարանս 'ի վերայ աւերակաց հայրենեացն. պալատն յորջորջեալ ոսկեղէն։

ԽԳ. Հռովմայ նորաձև կառուցումն։

ԽԴ. Ակարողութիւնք 'ի քաւութիւն։ Քրիստոնեայք զբպարտին չարեացապարտք հրդեհին, և 'ի սոսկալի խոշտանգանս մատնին։

ԽԵ. Առ 'ի ընուլ զպակասութիւն գանձուց՝ յաւեր մատնի Իտալիա և մարզք առ հասարակ. կողոպտին մեհեանք, և բառնան անդրիք իսկ դիցականք։ Կասկած կամելոյ Ներոնի գեղամահ առնել զՍենեկա։

ԽԶ. Սուսերամարտք 'ի Բրենեստ գուն գործեն խորտակել զշղթայս իւրեանց։ Ակրածք նաւատորմին առ Միսենեաւ, պատճառս առեալ յանպայման հրամանաց Ներոնի։

ԽԻ. Նշանք, և գուշակութիւնք հաւահմայից զայնցանէ։

ԽԸ. Դաւակցութիւն Պիսոնի. հայրենիք և բնաւորութիւն նորա։

ԽԹ. Անուանք գլխաւորաց դաւակցութեանն։

Ծ. Միաբանել նոցա ընդ իւրեանս և այլ դաւակիցս, ընդ որս զՍենեկիոն երբեմն բարեկամինքնակալին, և զՓենիոս հրամատար ատենական զօրականին։

ԾԱ. Եպիքարիս յաւելեալ 'ի դաւակիցս, գուն գործէ ձգել անդր և զՊրոկուլ՝ մի 'ի հրամատարաց նաւատորմին։ Պրոկուլ յայտնէ զամենայն ինքնակալին, առանց ածելոյ ինչ հաւաստիս։ Եպիքար մատնի 'ի բանտ։

ԾԲ. Տագնապ դաւակցաց. խորհուրդ դաւաճանելոյ զՆերոն յամբանոցի անդ՝ ուր յաճախէրն Պիսոն. Պիսոնի չառնուլ զայն յանձն։

ԾԳ. Վերջին խորհուրդ դաւակցաց՝ 'ի կատարումն դաւաճանութեանն։

ԾԴ. Սկևինոս, մի 'ի դաւակցաց, տայ զսուսեր իւր Միլիքեայ ձերբազատի առ 'ի սրել. Միլիքոս գրգռի 'ի կնոջէ իւրմէ մատն լինել խորհրդոյ դաւաճանութեան տեառն իւրոյ։

ԾԵ. Դիմէ նա առ Ներոն, ցուցանէ զսուսերն, և յայտնէ նմա զամենայն հանգամանս դաւոյն։ Սկևինոս գուն գործէ արդարացուցանել զանձն։

ԾԶ. Նատալիս, որոյ լեալ էին իրք ընդ նմա, մատուցանի 'ի հարցափորձ, և յայտնէ ինչ ինչ. Սկևինոս ևս խոստովան լինի, և յայտ առնէ զայլս 'ի դաւակցաց։ Լուկանոս մատնէ զմայր իւր։

ԾԷ. Արիութիւն Եպիքարեայ 'ի հարցափորձի. անձնամահ լինել նորա առ 'ի չայտնելոյ ինչ։

ԺԸ. Ներոնի ածել զիւրև Թիկնապահս, և ընուլ զօրաք զՀռոմ և զշրջակայս։ Բազմութիւն յոյժ ամբաստանելոց, զորս ինքնին Ներոն հարցափորձէ ընդ Տիգելլինեայ և Փենիոսի, չևևս լեալ զնոցանէ ամբաստանութիւն։

ԺԹ. Պիսոն մեռանի, չառեալ յանձն 'ի յայտնել դաւոյն զվերջին ձիգն արիութեան։

Կ. Պատուհաս Լատերանեայ սահմանելոյ 'ի բդեշխութիւն, սպանեալ 'ի Սատիրոսէ հազարապետէ՝ որ մի էր 'ի դաւակցացն։ Գրանիոս Սիլուանոս, միւս այլ 'ի դաւակցաց, առաքի յայտ առնել Սենեկայ զվկայութիւնն՝ զոր Նատալէայ տուեալ էր ընդդէմ նորա։

ԿԱ. Պատասխանի Սենեկայ։ Սիլուանոսի վերսին առաքումն առ 'ի յայտ առնել նմա զդատակնիք մահուն։

ԿԲ. Սենեկա պատրաստի 'ի մահ, և քաջալերէ զբարեկամս իւր՝ որ ողբային։

ԿԳ. Պաւլինա կին նորա տայ բանալ զերակունս իւր ընդ նմա։

ԿԴ. Ներոն հրամայէ փակել զերակունս Պաւլինայ, և կեցուցանել զնա։ Մահ Սենեկայ։

ԿԵ. Ծաւալի համբաւ, կիսոց 'ի դաւակցացն կամելոց տալ Սենեկայ զինքնակալութիւնն։

ԿԶ. Համախոհութեանն Փենիոսի յետոյ ուրեմն գալ 'ի յայտ։

ԿԷ. Սոփրիոս ևս ամբաստանեալ՝ ազատօրէն և քաջայանդուգն խօսի առ Ներոն. արիական մահ նորա։

ԿԸ. Անյողդողդ հաստատութիւն Սուլպիկիոսի Ափերի, և այլոց հարիւրապետաց։ Տկարութիւն Փենիոսի։ Ատելութիւն Ներոնի ընդ Վեստինեայ բդեշխի, զորմէ չէր ինչ լեալ ամբաստանութիւն։

ԿԹ. Ներոնի մատնել զնա 'ի մահ առանց ինչ հարցափորձի։

Հ. Մահ Լուկանոսի, Սենեկիոնի, Կուինտիանոսի և Սկևինեայ։

ՀԱ. Վատ մարդահաճութիւնք։ Նատալիս և Կերուարիոս փոխարէն խոստովանութեանն անպատուհաս արձակին։ Մելիքիոս ընու մեծութեամբք։ Աքսորեալք և ընկեցեալք յիշխանութենէ։

ՀԲ. Ներոնի առատաձեռնութիւնք առ զօրս, և տալ զչուք յաղթանակի բազմաց 'ի ծերակուտէն, ևս և Տիգելլինեայ՝ հրամատարի ատենական զօրաց։ Հայրենիք Նիմֆիդեայ։

ՀԳ. Ներոն հրատարակէ զբանս վկայից և զխոստովանութիւնս դատապարտելոց։

ՀԴ. Զոհք և շնորհակալիք մատուցեալք գից. յանուն Ներոնի յորջորջումն ապրիլի ամսեան. վճիռ կանգնելոյ մեհեան Ներոնի առուածարելոյ։

Եւ ունին գիրքս այս զպատմութիւն անցից կատարածի ամին 815 շինութեանն Հռովմայ, և զերկուց յաջորդ ամաց, հանդերձ սկզբամբ 818 ամին, յորս կացին բդեաշխ.

Կ. Մումմիոս Հռեգուլ, և Լ. Վիրգինիոս Հռուփոս.

Կ. Լեկանիոս Բասսոս, և Մ. Լիկինիոս Կրասսոս.

Պ. Սիլիոս Ներուաս, և Կ. Յուլիոս Ատիկոս Վեստինոս.

Ա. Հ. 816.

Ն. Ք. 63.

ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՏԱԿԻՏԵԱՅ

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՐՔ ԺԶ.

Ա. Յետ այսորիկ Ներոն յուսով մնոտեաւ, և խոստմամբն Կեսելլեայ Բասսոսի կարքեդոնացւոյ, խաբեցաւ 'ի բախտէն։ Բասսոս, այր երազայոյզ, զգիշերային հանգստեան ցնորս՝ համարեալ յոյս աներկբայելի, եկն 'ի Հռովմ. և ձեռնհաս լեալ կաշառօք յանդիման լինել ինքնակալին, ասէր գտեալ յագարակի իւրում 'ի լայնատարը քարայրի ոսկի բազում յոյժ, ոչ դրամաձև՝ այլ անկոփ 'ի կշիռ վաղնջական. ուրեք քծուարս ոսկւոյ ծանրաբեռինս, և այլ ուրեք սիւնաձևս, 'ի դարուց հետէ խորասուզեալ գանձ՝ արդեացս 'ի Ճոխութիւն։ Եւ յաւելոյր գուշակել՝ Դիդէի փիւնիկկեցւոյ 'ի փախչելն 'ի Տիւրոսէ, և 'ի հիմնարկել զԿարքեդոն, ծածկեալ զայն՝ զի մի ժողովուրդն նորատունկ զեղծցի առաւելագանց Ճոխութեամբ, և արքայք նուիրագացւոց և այլք 'ի թշնամեաց ցանկութեամբ ոսկւոյն 'ի պատերազմ դրդեսցին։

Բ. Արդ Ներոնի ոչ զհաւատարմութիւն պատմողին, և ոչ զիրացն ստուգութիւն հետազօտեալ, և ոչ արձակեալ արս առ 'ի գիտել եթէ Ճշմարիտ էին պատմեալքն, յաւել և ևս հաստատել զհամբաւն՝ հրամանն տուեալ երթալ բերել զաւարն, որպէս թէ զբռամբ

ածեալ. և առ 'ի վաղվաղել զչու երթելոցն՝ զընտիրս 'ի նաւաց և եռաթիս ետ նոցա։ Դիւրահաւան ռամկին զայնմանէ ևեթ յաւուրսն յայնոսիկ էին բանք. իսկ խոհականագունիցն հակառակ նմին։

Դեպ եղև զի կատարէին յայնժամ երկրորդ անգամ խաղք հնգամեակք, և 'ի զրուցաց անտի առաւելապէս զպատճառս ճառիցն առեալ ճարտասանից 'ի գովեստ ինքնակալին, ասէին՝ ոչ ևս հունձս միայն և ոսկեխառն գուղձս բերել երկրի, այլ 'ի դիցն շնորհաց նորահրաշ բեղնաւորութեամբ առ ձեռն պատրաստ ճոխութիւնս։ Եւ բազում այլ ինչ սոցին տակի շողոմն ճարտարիմաստութեամբ բազմաւ, և ոչ ինչ նուազ մարդաձուութեամբ յեղյեղին՝ վստահք ընդ արդիւնս դիւրահաւան յուսոյ ինքնակալին։

Գ. Յայնժամ զեղխութիւն՝ անգոյիցն ակնկալութեամբ 'ի ներքս անկեալ՝ սպառէին գոյք, որպէս թէ գանձս 'ի ձեռին ունելով առաւել քան զբաւական ամաց բազմաց, և պարգևս առատաձեռնէին, ակնկալեալ մեծութեանցն յաւելեալ պատճառս չքաւորութեան հասարակաց։ Բասոսի պեղեալ զագարակ իւր, և շուրջ զնովաւ մինչև 'ի բացեայ, մերթ աստ և մերթ անդ զտեղի խոստացելոց գանձուցն գտանել հաստատէր. և զհետ երթային նմա, ոչ միայն զօրականն, այլ և ամբոխ շինականաց վարեալք 'ի վաստակն. մինչև սթափեալ 'ի ցնորից անտի Բասոս, զարմանալ ասէր՝ զի մինչև ցայնժամ երազք իւր յարդիւնս եկեալ, անդ նախ 'ի վրէպ անկանէին. և ինքնակամ մահուամբ զամոթ և զերկիւղ իւր կարճէր։ Իսկ ոմանք աւանդեն արկեալ զնա Ներոնի 'ի բանտ, և գրաւեալ զինչս նորա փոխանակ գանձուց դշխոյին, և ապա արձակեալ զնա 'ի բաց։

Դ. Յայնմ ժամանակի ծերակոյտն 'ի մերձենալ հնգամեակ խաղուց, առ 'ի խուսափել յանպատշաճից, մատոյց ինքնակալին զմրցանակ երաժշտութեան, հանդերձ պսակաւ ճարտարիմաստութեան, պատրուակել այնու զտգեղութիւն գուսանականին։ Բայց Ներոն անկարօտ զինքն շնորհաց ծերակուտին վարկուցեալ, հաւասարել կամեցաւ ընդ ոսոխս, և ընդունել յանաչառութենէ դատաւորաց զարժանաւորն

մրցանակ. վասն որոյ տաղս նախ 'ի տեսարանին արտասանեաց, և ապա ըստ Թախանձանաց ռամկին էլ 'ի Թատր՝ զամենայն մասունս հանձարոյ իւրոյ ածել 'ի հանդէս, քանզի սովին բանիւ զնա Թախանձէին. և հպատակեալ ամենայն օրինաց քնարականին մրցման, ոչ 'ի վաստակելն բազմելով, և ոչ Թաշկինակաւ զքիրտն սրբելով, այլ ձորձոփն՝ զոր կրէր, և զլորձունս և զՀիւԹս ընչաց՝ անտեսաբար 'ի բաց վՀարելով։ Եւ ապա 'ի ծունր իջեալ, և ողջունեալ աջով զՀանդիսատեսս, մնայր՝ որպէս ԹԷ երկիւղիւ՝ վՀռոյ դատաւորաց։ Իսկ խաժամուժն հռովմայեցի, սովորեալ կըցորդել ևս և շարժմանց գուսանայն, դաշնակաւոր ձայնիւ և կայԹիւք ձեռաց առնէր դրուատիս՝ գոգցես առ ցնծուԹեան, ԹԷրևս և իսկապէս ցնծալով՝ վասն ոչ ինչ փոյԹ լինելոյ նմա ընդ աղէտս հասարակաց։

Ե. Այլ որք 'ի հեռաւոր քաղաքաց եկաւորք, առորս տակաւին խստակրօն բարք նախնեաց անեղծ պահէին Յիտալիա, դարձեալ և որք 'ի գաւառաց հեռաստանեայց գային 'ի հրեշտակուԹիւն կամ 'ի պէտս իւրեանց, անփորձք լկտի համարձակուԹեան, չՀանդուրժէին ընդ տեսիլն, և ոչ զանարժան աշխատուԹիւնն յանձն առնուին. զի և անկիրԹ մատուանք նոցա վաստակեալ՝ շփոԹ արկանէին 'ի հմուտս, յաՀախ գանս ևս 'ի զինուորաց կացելոց յելս աստիՀանաց ընդունէին, զի մի՝ անյարմար նոցին նուագաւք կամ 'ի դանդաղուԹենէ նոցա, վայրիկ մի Հանդէսն ընդ Հատեսցի։ Պատմի ևս Հաւաստի՝ յոգունց յասպետաց, 'ի նկրտելն ընդ անձուկ ելս, յամբոխէ մտելոց կոխոտեալ. և այլոց, 'ի կալոյ զտիւ և զգիշեր անշարժ 'ի բազմոցս աստիՀանաց, մահաբեր ախտիւ Հարեալ։ Ծանրագոյն ևս վտանգ այն էր՝ մեկնելոցն 'ի բաց 'ի տեսարանէն. զի բազումք յայտնապէս և բազմագոյնք 'ի ծածուկ՝ զանուանս և զդէմս, զզուարԹուԹիւն և զտխրուԹիւն ընկերակցացն հետազօտէին. և սինքրոքք յամբաստանելոցն 'ի նոցանէ՝ նոյնհետայն 'ի մահ մատնէին, իսկ աւագորեարն առ ժամն անտես լեալ՝ և ապա տայր վրէժս։ Վեսպասիանոս ասի կշտամբեալ 'ի Փեբեայ ձերբազատէ՝ որպէս ԹԷ նիրհեալ 'ի տեսարանի անդ,

և հաղիւ աղաչանօք լաւաց զերծեալ. և միւսանգամ 'ի մօտալուտ վտանգէ առաւելագոյն բարեբախտու-թեամբ եղեալ մաղապուր։

Զ. Ի կատարել խաղուցն մեռաւ Պոպպէ 'ի յանկարծակի ցաստմանէ առն իւրոյ հարեալ աքացի՝ յղի գոլով. զի թէպէտ և ոմանք 'ի պատմագրաց դեղամահ զնա ասեն եղեալ 'ի Ներոնէ, այլ ոչ է հաւատալ բանից նոցա՝ յատելութենէ քան 'ի մտաց հաւանութենէ ասացելոց. զի Ներոն ցանկայր ունել որդիս, և սիրէր իսկ զկին իւր։ Դիակն Պոպպէի ոչ այրեցաւ ըստ հռովմէական սովորութեան, այլ ըստ օրինի այլոց թագաւորաց արևելեայց խնկովք պատեալ՝ ածաւ 'ի շիրիմ Յուլեանց. սակայն սպասք յուղարկաւորութեան մատուցան նմա հանդիսիւ, և Ներոն բարձր 'ի բեմէ գովասանեաց զգեղ նորա, և զի մայր եղև դիւցազին մանկան, և զայլ բարեմասնութիւնս նորա, զտուրս բախտին փոխանակ առաքինութեանց։

Է. Մահ Պոպպէի, 'ի վերին երեսս ողբացեալ, այլ ախորժելի որոց յիշէին զլկտութիւն նորա և զանգթութիւն, ատելի ևս կացոյց զՆերոն՝ վասն խափանելոյ նորա զկ. Կասիոս 'ի գնալոյ 'ի սպաս յուղարկաւորութեանն. և այս եղև նախկին նշանակ կորստեան Կասիոսի, որ ոչ յամեաց։ Յաւելաւ ընդ նմա և Լ. Սիլանոս. և յանցանք նոցա, զի Կասիոս հայրենաժառանգ Հոխութեամբն և ծանրաբարոյ բնաւորութեամբ, իսկ Սիլանոս աշնուականութեամբ տոհմին և համեստ մանկութեամբն գերազանցէին։ Արդ Ներոնի նամականի արարեալ առ ծերակոյտն, ասէր մերժել զերկաքանչիւր 'ի հասարակապետութենէ, 'ի յանցանս գրելով Կասիոսի՝ զի ընդ պատկերս նախնեաց իւրոց կանգնեալ էր և զկ. Կասիոսին, արձանագրեալ Առաջնորդի հանմախտից. որպէս թէ խանձ քաղաքական մարտի այնուիկ արկանէր՝ վտարանջելոյ 'ի տանէ կայսերաց. և զի դարձեալ ոչ միայն յիշատակաւ ոխերիմ անուանն զարթուցանէր զՀերձուած, այլ և զՍիլանոս միաբանեալ էր ընդ իւր, զպատանին տոհմիկ և ձեռներէց 'ի բնէ, առ 'ի ցուցանել զնա վըտարանջելոյ պառաջնորդ։

Ը. Եւ ապա զնոյն ինքն զՍիլանոս կշտամբէր իբր

յանցաւորակից հօրեղբօրն. որպէս թէ անդատին զյանցանսն հինգնակալութեան սկսեալ՝ կացուցանէր նա համարակալս և ատենադպիրս և ընկալուչս աղերսագրաց զձերբաղստս իւր։ Զրպարտութիւնք մնոտիք. զի Սիլանոս ահիւ կորստեան հօրեղբօր իւրոյ զարհուրեալ՝ յաւելոյր 'ի զգուշութիւն։ Յետ այսորիկ յառաջ մատուցանէր Ներոն որպէս թէ վկայս, որք զրպարտէին զԷպիդա կին Կասիոսի, հօրաքոյր Սիլանեայ 'ի մեղանչութիւն ընդ եղբօրորդւոյ իւրում, և 'ի մոգական անօրէն հմայս. և որպէս կցորդք չարեաց նորա դատափետէին Վուլկատիոս Տուլլինոս և Մարկելլոս Կուռնելիոս, ատենակալք ծերակուտին, և Կալպուրնիոս Փաբատոս ասպետ հռովմայեցի. որոց 'ի կայսր բողոքեալ՝ զերծան 'ի հասեալ վտանգէ դատապարտութեան, և զբաղմամբն Ներոնի 'ի դատել զմեծամեծ ոճիրս՝ անտես եղեն յանցանք նոցա իբր դուզնաբերայք։

Թ. Յայնժամ վճռով ծերակուտին սահմանեցան Կասիոս և Սիլանոս յաքսոր, իսկ Էպիդայ թողաւ դատ 'ի կեսար։ Կասիոս ածաւ 'ի Սարդենիա կղզի, և եկեաց անդ մինչև ցօրհաս ծերութեան. իսկ զՍիլանոս, իբր թէ 'ի Նաքսոս դէմ եդեալ, ածին յՈստիա. և ապա արգելաւ 'ի Բարիոն քաղաք Ապուլիոյ, ուր իմաստասիրաբար համբեր անիրաւ բաղդին. և 'ի հասանել հարիւրապետին՝ որ գայրն 'ի սպանանել զնա, և յաղդել նմա՝ տալ զղարկ բաղկին 'ի հատուն՝ ասաց. Պատրաստ եմ՝ 'ի մահ, այլ ոչ թողից քեզ զփառս մահուան իմոյ։ Եւ թէպէտ էր նա անզէն, բայց տեսանելով հարիւրապետին զհուժկու զօրութիւն նորա և զզայրոյթքան զերկիւղ՝ հրամայեաց զինուորաց իւրոց յարձակել 'ի նա։ Սիլանոս ոչ դադարէր 'ի դիմակալելոյ, և որչափ կարէրն՝ բռնցի ևեթ հարկանէր զնոսա, մինչև հարուած 'ի հարիւրապետէն 'ի դէմս իւր ընկալեալ՝ անկաւ որպէս 'ի մարտի։

Ժ. Ոչ ինչ ընդհատ արիութեամբ և Լ. Վետոս, և սկեսուր նորա Սեքստիա, և դուստր նորա Պոլլուտիա, զմահ յանձն առին. ատելի էին նոքա Ներոնի, զի կեանք նոցա 'ի կշտամբութիւն էր նմա՝ վասն մատնելոյ նորա 'ի մահ զՀռուփիլլիոս Պլաւտոս զփեսայ Վետոսի։ Բայց պատճառս դրդռելոյ ատելութեան

նորա ետ Փորտունատոս ձերբազատ, որ 'ի կործանումն տեառն իւրոյ յաւելոյր և ամբաստանութիւնս, առեալ իւր զօրաւիգն զԿլաւդիոս Դիմիանոս՝ զոր Վետոսի, յորժամ կայրն փոխանակ բդեշխի յԱսիա, 'ի բանտ արկեալ էր վասն եղեռնագործութեանցն, և զոր Ներոնի թողեալ էր յաղատութիւն 'ի վարձ չարախօսութեանն։ Վետոն իբրև գիտաց զի ամբաստանեալ էր, և զի ընդ ձերբազատին իւրում հասանէր նմա դէմընդդէմ դատ վարել, մեկնեցաւ գնաց 'ի փորմեան ագարակս իւր, ուր զինուորք շուրջ պահ ունէին 'ի ծածուկ։ Էր առ նմա դուստր իւր, որ նախ քան զաղէտս առաջիկայ վտանգին վշտակրեալ էր 'ի տեսիլ դահճաց առն իւրոյ Պլաւտեայ, և յընդունել զարիւնաշաղախ գլուխս նորա 'ի գիրկս իւր. և պահէր նա զարիւնն զայն և զձորձս թաթաւեալս յարենէ անտի, այրի ընկղմեալ 'ի սուգ հանապազօր, և ոչ առնոյր կերակուր՝ բայց որչափ ինչ առ 'ի չմեռանել։ Յայնժամ յորդորեալ 'ի հօրէ իւրմէ՝ չոգաւ 'ի Նէապոլիս. և զի խափանէր մատչել առ Ներոն, սպասեալ ելից նորա արտաքս՝ 'ի ձայն բարձր խընդրէր ընդունել զանպարտն 'ի լուր, և մի զերբեմն իշխանակից իւր 'ի բդեշխութեան՝ մատնել 'ի ձեռս ազատագրին։ Եւ մերթ կանացի կականաւ, մերթ առնացի սրտառուչ բարբառով աղաղակէր, մինչև տեսեալ զնա անողոքելի յաղաչանաց և յաղերսական յանդիմանութեանց, լքաւ յուսահատ։

ԺԱ. Եւ ծանոյց հօր իւրում գրով՝ զամենայն յոյս 'ի բաց դնել, և տեղի տալ հարկին։ Այլ եղև յայնժամ Վետոսի՝ զի և 'ի ծերակուտին պատրաստէր ընդդէմ իւր վճիռ դժնդակ, վասն որոյ ոմանք խորհուրդ տային նմա՝ մեծի մասին գոյիցն կացուցանել ժառանգ զինքնակալն, որպէս զի թողանց իւրոց տացի մնայորդն. այլ նա մերժեաց զխորհուրդ նոցա առ 'ի չանարգելոյ մարդահաճութեամբն այնուիկ զաղատական կեանս իւր. և որչափ ինչ ունէր արծաթ առ իւր՝ պարգևեաց ծառայից իւրոց, և հրաման ետ առնուլ տանել 'ի բաց 'ի կահուց անտի որ ինչ մարթէրն նոցա, թողեալ ևեթ մահիճս երիս 'ի յուղարկաւորութիւն։ Յայնժամ 'ի նմին սենեկի՝ նովին երկաթով հատին երեքեան զերակունս իւրեանց. և մեկնակահանդերձ ծածկեալք

առ Համեստութեան՝ մինն վաղվաղակի 'ի բաղանիս, հայրն 'ի դուստր իւր ակնկառոյց, հանն 'ի թոռնեակ իւր, իսկ դուստրն յերկոսին եւս. և ցանկայր իւրաքան չիւր զնուաղեալ ոգիսն վաղագոյն քան զայլս հանելոյ, զի մի՛ տեսցէ զմահ սիրելեաց իւրոց. և ըստ բախտի յաջողեալ նոցա բնութեանն կարգի, նախ երիցագոյնն 'ի նոցանէ, և 'ի վերջէ կրտսերագոյնն զրաւեցաւ 'ի կենաց։ Եւ յետ թաղման իւրեանց ամբաստանեալ, դատապարտեցան 'ի պատուհասն սահմանեալ 'ի նախնեաց. և յետ այնորիկ եթող Ներոն յընտիր նոցա զեղանակ մահուն, 'ի սպանութիւն անդր յաւելեալ ըզշնորհն ծաղրելի։

Ժ.Բ. Պ. Գալլոս ասպետ հռովմայեցի, քանզի բարեկամէր Փենիոսի, և ոչ օտար 'ի բարեկամութենէ Վետոսի, արգելաւ 'ի ջրոյ և 'ի հրոյ. և ազատագրին, որոյ ամբաստանեալն էր զնա, տուաւ 'ի վարձ տեղի 'ի կայս տեսարանին ընդ պատուիրակս հազարապետաց։ Վասղ իսկ յանուն Ներոնի կոչեալ էր ամիսն ապրիլ. յայնժամ և մայիս յանուն Կլաւդեայ և յունիս յանուն Գերմանիկեայ յորջորջեցան։ Կուռնելիոս Որփիտոս, որոյ առաջարկեալն էր զայս, վկայէ՝ վասն այն զյունեայ ամսեան փոխեալ զանուն, զի երկոքին եւս Տորկուատեանք 'ի նմին ամսեան սպանեալ վասն եղեռնագործութեան, չարագուշակ արարեալ էին զայն։

Ժ.Գ. Զամն զայն շաղախեալ 'ի բազում այնչափ անօրէնութեանց՝ դիք եւս կացուցին նշանաւոր մրրկաք և ժանտ ախտիւք. Կամպանիա աւերեցաւ 'ի փոթորկեալ հողմոց՝ որ զշէնս և զծառաստանս և զհունձս առեալ տարան, և բռնութիւն նոցա եհաս մինչև մերձ 'ի Հռովմ, առանց անհարթութեան օդոց ընդ երկինս երևելոյ, մինչդեռ անդ հարկանէր սրածութիւն զմարդ և զանասուն։ Ի էին տունք դիակամբք, և փողոցք յուղարկաւորաց. ոչ այր և ոչ կին, ոչ ալիք և ոչ արբունք զերծ էին 'ի վտանգէն. ծառայք և ազատք յանկարծ մեռանէին 'ի ձայն աղիողորմ ողբոց ամուսնացն և որդւոց, որք 'ի խնամէն զնոսա և յաշխարէ՝ 'ի նմին խարուկի յաձախս և ինքեանք այրէին։ Ասպետաց և ատենակալաց յոգունց մահ, թէպէտ և խառն ընդ այլս անխտիր, բայց նուազ լինէին ողբալի՝ որպէս թէ

'ի հասարակաց աղէտս յանգթութենէ ինքնակալին զերծեալք։

Ի նմին ամի եղև զօրաժողով 'ի Նարբոնեանն Գալլիա, յԱսիա և յԱֆրիկէ, առ 'ի ընուլ զթիւ լեգէոնացն 'ի Լիւրիկէ, յորոց բազումք արձակեալ էին յերդմանէ իւրեանց վասն ալեացն և խօթութեան։ Ներոն 'ի շինութիւն աւերածոյն Լուգդունի ետ քառասուն հազար սեստերտ, որչափ ինչ լուգդունացիք տուեալ էին յարկածս Հռովմայ։

ԺԴ. Առ բդեշխութեամբ Կ. Սուետոնեայ և Լ. Տելեսինեայ, Անտիստիոս Սոսիանոս՝ որ վասն երգիծական տաղից յօրինելոյ ընդդէմ Ներոնի աքսորեալն էր, որպէս ասացի, իբրև գիտաց զվարձս ամբաստանողաց և զբերումն ինքնակալին յարիւնհեղութիւն, անխաղաղասէր բարուքն պատրաստ 'ի կիր արկանել զպատեհութիւն, զՊամմենէս՝ որ 'ի նոյն տեղի աքսորեալն էր, և ականաւոր յարուեստքաւդէական՝ որով և ընդ բազումս բարեկամացեալ, յանկոյց յինքն նմանավիշտ դժբաղդութեամբն։ Ոչ անօգուտ համարէր և զյաձախութիւն հրեշտակաց եկելոց առ նա 'ի խորհրդակցութիւն. ծանեաւ զի և հաս տարևոր կարգեալ էր նմա 'ի Պ. Անտէոսէ, և ոչ անգիտանայր զի Անտէոս ատելի էր Ներոնի վասն բարեկամութեանն ընդ Աֆրիպպինայ, և մեծութիւնք նորա առաւելպէս գրգռէին զարծաթասիրութիւն Ներոնի, որպէս և այլոց բազմաց պատճառք լեալ էին կորստեան։ Արդ ըմբռնեալ նորա զմի 'ի նամականուցն Անտէոսի, և գողացեալ զթղթեանն՝ յորում Պամմենէս զախտարաց նորա զգաղտնիս և զպատահարս ցուցանէր, գտեալ և զայնոսիկ՝ յորս զծննդեան և զկենաց Ոստորիոսի Սկապոլայ պատմէր զհմայս, գրեաց առ Ներոն այսպէս. Մեծամեծս և կարևորս վասն կենաց քոց ածից առ քեզ, եթէ սուղ ինչ թողութիւն արասցես աքսորանացս։ Անտէոս և Ոստորիոս պարապոյ մնան յեղափոխութեան իրաց, զիւրեանցն և զինքնակալութեանդ հետազօտեալ զձակատագիր։ — Եռաթիք առաքեցան՝ ածել փութանակի զՍոսիանոս, և 'ի համբաւել ամբաստանութեան նորա՝ Անտէոս և Ոստորիոս ընդդատապարտեալս համարէին քան ընդ յանցաւորս,

որպէս զի ոչ ոք իշխէր ձեռնարկել՝ի կտակ Անտէոսի, եթէ Տիգելլինեայ չէր ձեռնարկեալ. նորա և ազգ իսկ արարեալ էր Անտէոսի մի յապաղել զկտակ իւր։ Յայն-ժամ Անտէոսի դեղ առեալ անձամբ, և ոչ մնացեալ յամր ազդեցութեան դեղոյն, եհատ զերակ իւր՝ վաղ վաղել զմահ։

ԺԵ. Յայնմ ժամանակի Ոստորիոս կայր յամարաստանի իւրում հեռի, առ սահմանօք Լիգուրիոյ. և յղեցաւ առ նա մի՝ի հարիւրապետաց սպանանել զնա անդէն. զի Ոստորիոս անուանի էր՝ի զինուորականին, և արժանի լեալ՝ի Բրիտանիա քաղաքական պսակի, և՝ի կորով անհեղեղ մարմնոյն և հմտութեամբն՝ի սուսերամարտ՝ ահարկու էր Ներոնի, որ միշտ իսկ վատասիրտ՝ իսկ յայնժամ ահաբեկեալ ևս՝ի դաւաճանութենէ, խիթայր թէ գուցէ՝ի վերայ իւր յարձակեսցի։ Արդ հարիւրապետին փակեալ զամենայն ելս փախըստի ամարանոցին, զհրաման ինքնակալին յայտ արար Ոստորիոսի. նա զքաջութիւնն, զոր յաձախ ցուցեալ էր ընդդէմ թշնամեաց, առ ինքն դարձոյց. և զի յերակացն հատելոց դանդաղէր սպառել արիւնն, բազկաւ միոյ՝ի սպասաւորացն օգնեալ՝ ունել անշարժ ըզսուսեր, մատոյց զաջ նորա՝ի պարանոց իւր և փողոտեցաւ։

ԺԶ. Թէպէտ և պատերազմունս արտաքինս, և մահունս՝ի վերայ հասարակապետութեան յանձն առեալս պատմիցեմ, սակայն նմանութիւն այնոցիկ ընդ իրեարս տաղտկալի է ինձ, ոչ ինչ ընդհատ և այլոց։ Եւ եթէ մահունք քաղաքացնոց փառաւորեալք՝ վասն մի օրինակ յաձախութեանն թուին ծանրատաղտուկք, քանիօն առաւել այժմուցս անմռունչ գերութիւն, և բազում այսչափ առտնին արիւնհեղութիւնք, աշխատառնիցեն զոգի ընկճեալ տխրութեամբ։ Սակայն նեղել մաղթեմ յընթեռնլեաց, զի ոչ կամեցայ անյիշատակ առնել և զայնոսիկ՝ որք զմահ վատութեան յանձն առին. զի զանցս՝՝՝ի ցասմանէ դից տնօրինեալս՝ չէ օրէն լռել, որպէս և ոչ զկոտորած բանակաց և զգերութիւն քաղաքաց։ Շնորհեսցի այս ազգատոհմից ջրանց երևելեաց. զի որպէս ոչ խառն՝ի խուռն առնի նոցա յուշարկաւորութիւն, այսպէս և՝ի վէպս կատա-

բածի նոցա լեցի խտիր, և պահեսցի նոցա ուրոյն յի-
շատակ։

ԺԷ. Ի սակաւ ինչ աւուրս նմանապէս 'ի կորուստ
մատնեցան հետզհետէ Անդրէաս Մելլա, Կերիալ Անի-
կիոս, Հռուփոս Կրիսպինոս, և Կ. Պետրոնիոս։ Մելլա
և Կրիսպինոս, ասպետք հռովմայեցիք 'ի կարգէ ատե-
նակալաց։ Կրիսպինոս երբեմն հրամատար ատենական
զօրականին, և որոյ զօրէնս պատուոյ բդեշխականս ըն-
կալեալ էր, և յայնժամ որպէս մի 'ի դաւակցաց 'ի Սալ-
դենիա աքսորեալ, իբրև գիտաց զի դատապարտեալ
էր 'ի մահ, չոգաւ զիւրովին։ Մելլա, համահայր և
համամայր եղբայր Գալլիոնի և Սենեկայ, որոյ չէր եր-
բէք թեկն ածեալ զաւագութեան, նորանշան փառա-
սիրութեամբ որպէս ասպետ հռովմայեցի խնդրէր հա-
ւասպրել իշխանութեան սահմանելոյն 'ի բդեշխու-
թիւն, և համարէր կարձոյ ձանապարհ ստանալոյ ձո-
խութիւնս՝ զտնտեսութիւն ստացուածոց ինքնակալին.
և էր նա հայր Անդրէասի Լուկանեայ, որ յաւելոյր նմա
պայծառութիւն համբաւոյ։ Եւ իբրև սպանաւ Լուկա-
նոս, Մելլայ համարս խիստս պահանջելով զընչից նորա՝
պատճառս ետ Փաբիոսի հռովմայեցւոյ, որ մի էր 'ի
մտերիմ բարեկամաց Լուկանոսի, դատախազ կալոյ ընդ-
դէմ իւր. և նամակաւ միով յանուն Լուկանեայ ստա-
յօդելով համարեցաւ որդւոյն զհայր իւր ձգեալ 'ի
դաւակցութիւն։ Զայն թուղթ ընթերցեալ Ներոնի,
հրամայեաց ածել ցուցանել Մելլայ, ակն եդեալ ըն-
չից նորա։ Մելլա ընտրեաց զմահ առ ձեռն պատրաստ՝
յաձախեալ 'ի ժամանակին, հատմամբ երակաց. և յա-
ւել թողուլ 'ի կտակի իւրում գումար մեծ Տիգելլի-
նեայ, և փեսայի նորա Կոսսուտիանոսի Կապիտոնի,
առ 'ի զերծուցանել զմնացորդ դանձուցն։ Միւս այլ
յաւելուած ասէն արարեալ նորա 'ի կտակին այսպէս,
բողոքելով զտարապարտ մահուանէն. Մեռանիմ ես
անպարտ, իսկ Հռուփոս Կրիսպինոս և Անիկիոս Կե-
րիալ վայելեն 'ի կեանս թշնամիք ինքնակալին։ Յո-
գուածս այս թուէր պաձուձեալ ընդդէմ Կրիսպի-
նեայ՝ որ սպանեալն էր, և ընդդէմ Կերիալեայ՝ որ զի
սպանցի, քանզի սուղ ինչ յետոյ անձին արար նա. և
նուազ քան զայլս կարեկցութեան գտաւ արժանի՝

վան մատնելոյ իւրոյ Կայիոսի կեսարու զգաղտնիս դաւակցաց։

ԺԸ. Իսկ յաղագս Կ. Պետրոնեայ փոքր մի՛ի վերուստ հարկ է ինձ սկսանել։ Սա զտիւ՛ի քուն, և զգիշեր՛ի գործ և՛ի զբօսանս անցուցանէր. և ուր այլք վան վաստակոց, սա վան յուլութեան իւրոյ լեալ էր անուանի. և համարէր ոչ բոզարած ոք և զեղխ՝ որպէս զբազումս՛ի շուայլից, այլ ճարտար՛ի հեշտախտութիւն. և խօսք նորա և գործք որչափ ազատք էին և անյարդարք, այնչափ ախորժելիք թուէին՝ ըզկերպարանս անկեղծութեան բերելով։ Սակայն փոխանակ բդեշխի կացեալ՛ի Բիւթանիա, և ապա բըդեաշխ, եցոյց զօրութիւն և բաւականութիւն՛ի գործ. այլ ապա յախտս իւր կամ յախտաձև գնացս դարձ արարեալ՝ ընդ մտերիմն Ներոնի նուազունս դասեցաւ, և ոստիկան կիրթ ախորժակաց եկաց յարքունիս, մինչև ինքնակալին յուղիս անդ փափկութեան ոչ ինչ զուարճալի և հեշտալի համարել՝ առանց խորհրդոյ նորա։ Յորմէ զարթեաւ նախանձ Տիգելլինեայ ընդդէմ հզօրագունի ոսոխին՛ի գիտութիւն հեշտալեաց, և դիմեաց նա յանգթութիւն Ներոնի՝՛ի բռնագոյնն քան զամենայն կիրս նորա, պատճառս առեալ զբարեկամութիւն Պետրոնիոսի ընդ Սկևինեայ. և կաշառեալ զմի՛ի ծառայից նորա առ՛ի չարախօսել զնմանէ, զայլս բազումս արկ՛ի կապանս՝ առ՛ի բառնալ՛ի նմանէ զամենայն պաշտպանութիւն։

ԺԹ. Յաւուրսն յայնոսիկ դէպ եղև Ներոնի գնալ՛ի Կամպանիա, և Պետրոնիոս երթեալ ընդ նմա մինչև՛ի Կումա, անդ հրամայեցաւ զկայ առնուլ. և թէպէտ չհանդուրժէր նա կեալ ընդ յոյս և ընդ երկիւղ, սակայն ոչ վաղվաղեաց՛ի մահ. մերթ բանայր զերակունս իւր և մերթ փակէր, և անդրէն միւսանգամ ըստ յեղյեղել կամայն՝ թոյլ տայր հոսելոյ արեանն. զրուցատրէր ընդ բարեկամս առանց լրջմտութեան, և առանց ցոյցս առնելոյ արիութեան. և ունկնդիր լինէր խօսից նոցա, ոչ զանմտութենէ հոգւոյ, և ոչ զիմաստասիրացն կարծեաց զայնմանէ, այլ զուարճալի տաղից և դիւրիմաց քերթուածոց։ Կիսոց՛ի ծառայիցն պարգևս բաշխէր, զայլս դանաձեռ առնէր. Էլանէր՛ի

հրապարակ, և որպէս թէ թմբրեալ՝ զքնով անկա-
նէր, որպէս զի ըստ դիպուածոյ համարեսցի զրաւել
'ի կենաց, և ոչ բռնամահ։ Զէառ նա յանձն շողոմել
հանգոյն այլոց բազմաց 'ի սպանելոցն, զՆերոն կամ
զՏիգելլինոս և կամ զայլ ոք 'ի հզօրաց 'ի կտակի իւ-
րում. այլ զանօրէնութիւնս ինքնակալին յանուանէ
լիրբ պատանեաց և լկտի կանանոյ, հանդերձ անլուր
խայտառականօքն նկարագրեալ և կնքեալ՝ յղեաց առ
նա. և զմատանին իւր խորտակեաց՝ թէ գուցէ 'ի վը-
տանգ այլոց արկցի 'ի կիր։

Ի. Եւ 'ի հետազօտել Ներոնի՝ թէ որպէս գիշերա-
խառն գաղտնիք իւր 'ի յայտ եկեալ էին, յուշ եղև նմա
Սիլիա կին միոյ յատենակալաց ծերակուտին՝ ծանօթ
իւր, և գիտակից պղծութեանց իւրոց, մտերիմ Պետ-
րոնեայ. և առ ատելութեան ետ վարել զնա յաքսոր՝
որպէս մատնիչ գաղտնեացն, զորս տեսեալ էր և
կրեալ։ Եւ զՄինուկիոս Թերմոս, երբեմն ատենակալ,
մատնեաց ոխութեանն Տիգելլինեայ. զի մի ոմն 'ի
ձերբազատիցն Թերմեայ զրպարտեալ էր զնա յեղեռն,
թէպէտ և ինքն չարաչար խոշտանգանօք և տէր իւր
տարապարտ մահուամբ հատուցեալ էին զվրէժ։

ԻԱ. Ներոն յետ սպանութեան այնքանեաց արանց
երևելեաց, կամեցաւ պատուհասել և զառաքինու-
թիւն սպանմամբ Թրասեայ Պետոսի և Բարեայ Սո-
րանոսի։ Երկոքին իսկ ատելի էին նմա, այլ մանաւանդ
Թրասէաս այլևայլ պատճառանօք. զի որպէս 'ի վեր
անդր պատմեցի, էլ նա 'ի ծերակուտէն 'ի բաց՝ յոր-
ժամ խորհուրդ սպանութեանն Ագրիպպինայ առաջ-
արկէր. և զի դարձեալ չէր ինչ լեալ նմա փոյթ զպա-
տանեկանացն խաղուց, և արհամարհութիւնս այս
խորագոյն 'ի սիրտ Ներոնի էր տպաւորեալ. մանաւանդ
զի 'ի Պատաւիոն, ուր Թրասէաս ծնեալն էր, 'ի կըռ-
փամարտին սահմանելոյ յԱնտինորէ տրովացւոյ՝ նուա-
գեալ էր նա 'ի ձև ողբերգուի, և զի յորում աւուր
Անտիստիոս ատենակալ դատապարտէրն 'ի մահ՝ վասն
երգիծական տաղիցն ընդդէմ ինքնակալին, վՃիռ մեղ-
մագոյն առաջարկեալ էր, և ընդունելի արարեալ. ևևս՝
զի յորժամ սահմանէին Պոպպէի սպասք դիւցազանք՝ 'ի
բացեայ գտեալ էր կամաւ, և ոչ 'ի յուղարկաւորու-

թիւն նորա եկեալ։ Զայս ամենայն անմոռացյուշի ունէր Կապիտոն Կոստուտիանոս, որ պատրաստ 'ի բնէ 'ի չարութիւն՝ մթերեալ ևս պահէր ոխս 'ի սրտի ընդդէմ Թրասեայ, վասն պատուպարան լինելոյ նորա պատգամաւորացն կիլիկեցւոց՝ որ եկեալ էին ամբաստանել զինքն 'ի հալոստահարութիւն։

ԻԲ. Յաւելոյր և այլ չարախօսութիւնս զԹրասեայ, զի 'ի տարեմտին խոյս տուեալ էր նա 'ի հանդիսէ երդման և ուխտից, թէպէտ և մի 'ի հնգետասանից քըրմացն էր, և ոչ երբէք վասն կենաց ինքնակալին և գերաշխարհիկ քաղցրաձայնութեան նորա զոհեալ։ և զի դարձեալ որ հանապազորդէրն երբեմն անխոնջ 'ի պաշտպանել կամ 'ի մերժել զվնիռս ծերակուտին՝ ևս և դուշնաբեայս, յերից ամաց հետէ և ոչ զսեամն ատենին կոխեալ էր, և 'ի մօտ իսկ աւուրս յելևելս առնել ամենեցուն 'ի նուաճել զդաւակցութիւն Սիլանեայ և Վետոսի՝ նախամեծար արարեալ էր նորա զյանձանձանս պաշտպանելոցն յիւրմէ, որ էր հերձուած ի մեն և կուսակցութիւն հաւասար մարտի՝ եթէ բազումք իշխէին առնել զնոյն, և 'ի վերայ ածէր։ Որպէս երբեմն զԿայիոսէ կեսարէ, և զՍ. Կատոնէ, այսպէս և այժմ զքէն, Ներոն, և զԹրասեայ խօսի քաղաքս պատրաստ 'ի հերձուած։ են իսկ նորա հետևողք, մանաւանդ թէ արբանեակք, որք թէպէտ չեևս զանդրգնութիւն խօսից նորա, սակայն զձև և զկերպարանս բերեն յանձինս, խստակրօնք և տխրատեսիլք առ 'ի կշտամբել զբարեկեցութիւն քո։ Նմա միայնոյ չէ ինչ փոյթ զկենդանութենէ քումմէ և զբարեմասնութեանց քոց։ ունչս առնէ նա յաջողութեանց ինքնակալիդ, և չյագի տակաւին ընդ սուգ և ընդ վիշտս քո։ նոքին ոգւով հակառակութեան չընդունի նա զՊոպպէ 'ի դիցուհի, և չառնու յանձն երդնուլ 'ի վերայ օրինադրութեանց դիւցազնին Աւգոստեայ և Յուլեայ։ արհամարհէ նա զկրօնս, և եղծանէ զօրէնս։ 'ի բանակս և 'ի գաւառս մտադիր բազոյն ընթերցանին օրագիրք առ 'ի գիտել՝ թէ զինչ Թրասեայ իցէ անընդունելի։ Արդ ուրեմն կամ զսահմանադրութիւնսն զայնոսիկ՝ եթէ լաւագոյն քան զմերքս իցեն՝ ընկալցուք, և կամ նորասիրացն բարձցի 'ի բաց առաջնորդ։ ա-

զանդս այս 'ի վեր երևեցոյց զՏուբերոնեանս և զՓաւոնեանս, նախնոյն ևս հասարակապետութեան ատելիս. խօսին նոքա աղատ համարձակ 'ի կործանումն իշխանութեան, և յետ կործանելոյ զայն՝ յարձակեսցին և ընդդէմ ազատութեան։ Ի զուր 'ի բաց վարեցեր զԿասիոս, եթէ ներես նկրտելոցն 'ի նմանութիւն Բրուտոսի մտանել 'ի նեղքս և զօրանալ. մի՛ դու գրեր ինչ զԹրասեայ, թող ծերակուտին դատել ընդ իս և ընդ նա։ — Զհակառակութիւն Կոսսուտիանոսի և ևս զայրացոյց Ներոն, և յաւել նմա օգնական զԵպրիոս Մարկելլոս Ճարտարախօս դժնեայ։

ԻԳ. Պստորիոս Սաբինոս, ասպետ հռովմայեցի, խնդրեաց զդատախազութիւն Բարեայ Սորանոսի 'ի մեկնելն յԱսիոյ՝ ուր կայր փոխանակ բդեշխի, և ուր ատելի ևս լեալ էր Սորանոս ինքնակալին՝ արդարութեամբն իւրով և Ճարտարութեամբ և Ջանիւք 'ի բացումն նաւահանգստին Եփեսոսի. և դարձեալ զի անպատուհաս թողեալ էր զպերգամացիս, որ ոչ թոյլ ետուն Ակրատիոսի ձերբազատի ինքնակալին՝ բառնալ տանել զանդրիս և զնկարակերտ պատկերս 'ի քաղաքէն իւրեանց։ Բայց Սորանեայ 'ի յանցանս համարէր բարեկամութիւն իւր ընդ Պլաւտեայ, և Ճիգն յինքն յանկուցանելոյ զդաւառն՝ իբր թէ 'ի յոյս յեղափոխութեան պետութեանն. այլ վՃիռ դատապարտութեանն պահեցաւ 'ի գալուստ Տիրիթի առնուլ զթագաւորութիւն Հայոց, որպէս զի արտաքին աղմկաւն անտես լիցի ոՃիրն նեղքին. համարէր ևս արդեօք Ներոն ցուցանել զփառս ինքնակալութեան իւրոյ՝ սպանմամբ արանցն երևելեաց, որպէս թէ ազբունական մեծագործութեան հանդէս առնելով։

ԻԴ. Արդ 'ի դիմել ամենայն քաղաքին՝ յընդունելութիւն ինքնակալին և առ 'ի տեսանել զթագաւորն, արգելաւ Թրասեայ չերթալ ընդ առաջ. այլ նա ոչ ինչ վՀատեալ, գրեաց առ Ներոն՝ խնդրելով գիտել զյանցանս իւր, և խոստանայր անպարտ ամենևին ցուցանել զանձն՝ եթէ յայտնէին յանցանքն, և շնորհէր իւր տեղի պատասխանւոյ։ Փութացաւ էառ Ներոն զգիրն յընթերցումն, կարծելով գրեալ Թրասեայ առ ահին իրս՝ որ յաւելուին իւր փառս, և համբաւոյ

նորա ածէին նուաղութիւն. այլ վրէպ գտեալ՝ի յուսոյն, երկնչէր յերեսաց անպարտականին և յարիութենէ և յաղատախօս համարձակութենէ նորա. և կոչեաց զծերակոյտն յատեան։ Յայնժամ Թրասէաս խորհեցաւ ընդ բարեկամս իւր եթէ պարտ էր նմա անդ պատասխանել վասն անձին, թէ արհամարհել զամբաստանութիւնսն. և եղեն այլ և այլ կարծիք նոցա։

Ի՝Ե. Որոց միանգամ հաճոյ թուէր ելանել նմա յատեան ծերակուտին, ասէին. Ոչ ինչ երկբայիմք զանվեհեր արիութենէ քումմէ, զի որ ինչ և խօսեսցիս անդ՝ յաւելցեն քեզ փառս. տկարաց է և երկչոտաց ծածկել զկատարած իւրեանց. տեսցէ ժողովուրդն զքեզ դիմագրաւեալ՝ի մահ, լուիցէ ծերակոյտն բանս գերաշխարհիկս որպէս յումեքէ՝ի դից բարբառեալ։ Ներոն իսկ թերևս՝ի հրաշից անտի սասանեսցի. իսկ եթէ նա կացցէ անսասանելի յիւրումն անգթութեան, սակայն ծանիցեն յետինք խտիր ընդ մահ արիական և ընդ վեհերոտ լռութիւն մատնելոցն՝ի կորուստ։ —

Ի՝Զ. Իսկ որք լաւ համարէին կալ մնալ նմա՝ի տան, ոչ այլ ինչ էր խորհուրդ նոցա՝ բայց զերծուցանել զնա՝ի կատականաց և՝ի թշնամանաց, և՝ի լսելոյ տարապարտ սաստ և կշտամբանս, զի ասէին. Ոչ Կոստուտիանոս միայն և Եպրիոս պատրաստ կան յանիրաւել, իցեն արդեօք և այլք՝ որք առ կատաղութեան ժպրհեսցին ձեռն իսկ ձգել՝ի քեզ. երկիւղ զլաւս իսկ ձգէ ըզհետ։ Թնայեսջիր՝ի նախատանաց անօրէնութեան մեծի զծերակոյտն՝ որում էիրդ շուք, թողցէ նա յերկրայս զվճիռ իւր՝ զոր հասանէ նմա տալ՝ի տեսանելն զքեզ դատափետեալ։ Կարծել զի Ներոն ամաչեսցէ ընդ անօրէնութիւնս իւր, է յոյս մնոտի. նա աւանիկ վտանգ մեծ է՝ զի և՝ի կին քո և յընտանիս և յայլս՝ի սիրելեաց քոց ոչ խնայեսցէ. վասն որոյ զանարատ և զանբծդիւտ կեանս քո կատարեսջիր փառօք ըստ օրինակի այնոցիկ՝ որոց շաւղացն զհետ գնացեր։ —

Էր՝ի խորհրդի անդ Հռուստիկոս Արուլենոս պատանի եռանդուն, որ ըղձիւք դրուատեաց՝ խիզախեր զդէմ ունել վճռոյ ծերակուտին, որպէս հազարապետ ժողովրդեան. բայց Թրասէաս արդել զեռանդն նորա,

մի ձեռնարկել՝ ի գործ՝ անօգուտ ամբաստանելումն, և ինասակար բարեխօսին, և յաւել. Ի վախճան կենաց իմոց հասեալ՝ չկարեմ հրաժարել՝ ի կարգաց, որովք ընդ այսչափ ամս վարեցայ. իսկ քո դեռևս սկիզբն է աւագութեան, և ամբողջ առաջի կայ քեզ ասպարէզ. խորհեաց քաջ զի՛ր ուղի յայսպիսում ժամանակի պարտ է քեզ ունել յօգուտ հասարակապետութեան։ Իսկ ինձ թէ արժան իցէ երևել յատենի ծերակուտին, խորհեցայց պարապով։ —

ԻԷ. Ի վաղիւ անդր գումարտակք երկու ատենական զօրաց զինեալք, շուրջ կացին զմեհենաւ Աստղական Ծնողի. ամբոխ քաղաքացւոց պատմուճանաւորաց պատէր զմուտս ատենի ծերակուտին, սուսեր ընդ մէջ ածեալ՝ ոչ՝ ի ծածուկ. և պահք զինուորաց ամենայն ուրեք՝ ի հրապարակս և յարքունական տեղիս կարգեալ կային։ Ի տեսիլ նոցա և՝ ի լուր սպառնալեաց՝ եմուտ ծերակոյտն յատեան. ուր մի՝ ի գանձապետաց ընթերցաւ ձառ՝ ի դիմաց Ներոնի, յորում ոչ զոք յանուանէ յիշատակեալ՝ կշտամբէր նա զատենականս թերահոգս՝ ի յանձանձանս իրաց հասարակաց, և զասպետս հռովմայեցիս ըստ օրինակի նոցին հատեալս՝ ի պղերգութիւն, և յաւելոյր. Զինչ զարմանք իցեն ընդ պակասել որոց՝ ի հեռաւոր գաւառս կան, ուր բազումք աստ՝ ՝ի բդեշխութիւն և՝ ի քրմութիւն յառաջ մատուցեալք՝ պարապեն՝ ի զարդարել զպարտեզս իւրեանց։ — Այս բանք որպէս զէնք եղեն՝ ի ձեռս չարախօսաց։

ԻԸ. Նախ Կոստուտիանոս, և ապա բռնագոյն ևս Մարկելլոս, գոչեցին բարձրաձայն. Զկենաց հասարակապետութեան խնդիր է աստ. ստահակութիւն հպատակաց նուազէ զհեզութիւն իշխանի։ Կարի յոյժ նեղողամիտ գտայք, Հարք ատենականք, ՝ի թողուլ ցարդ անպատիժս զթրասէաս գրգռիչ հերձուածոյ, զՀելուիտիոս Պրիսկոս փեսայ նորին և զգործակից չարեաց, զՊակոնիոս Ագրիպպինոս հայրենի ատելութեանն ժառանգ ընդդէմ ինքնակալին, զԿուրտիոս Մոնտանոս գյօրինիչ տաղիցն Եպերելեաց։ Եկեսցէ արդ յատեան այսր սահմանեալն՝ ի բդեշխութիւն, եկեսցէ՝ ի մաղթանս՝ նուիրեալն՝ ի քրմութիւն, եկեսցէ տալ եր-

դումն քաղաքացին. ապա թէ ոչ, ցուցցի նա յայտնապէս հակառակորդ նախնեացն սահմանադրութեանց և արարողութեանց, մատնիչն և թշնամի Թրասէաս։ Եկեսցէ ատենակալն նախանձայոյզ, պաշտպանն չարախօսաց ինքնակալին, եկեսցէ դատել որ ինչ ուղղել կամ փոփոխել կամիցի. դիւրագոյն է հանդուրժել ստգտանելոյ նորա զմասունս ուրոյն, քան դատապարտելոյ լուութեամբն զամենայն առ հասարակ։ Դ.ժպհի է նմա տեսանել զխաղաղութիւն տիրեալ ընդ ոլորտս երկրի, և գյաղթութիւն առանց կորուստեան զօրաց կալեալ. եթէ երջանկութիւն հասարակաց 'ի տխրութիւն է նմա, եթէ զհրապարակս, զտեսարանս և զմեհեանս միայնութիւն համարի, եթէ սպառնայ գնալ ինքնահալած յաքսոր, մի տացուք ըղձից 'նորա չարաց տեղի. չէն նմա ընդունելի վճիռք ձեր, ոչ համարի զձեզ յատենակալս, և քաղաքս իսկ այս ոչ ևս թուի նմա Հռովմ։ Խզեսցէ ապա զկենակցութիւն ընդ քաղաքիս, և որ զսէր սորա վաղ իսկ տարագրեալ է 'ի սրտէ՝ կորուսցէ արդ և զտեսիլ սորա յաչաց։ —

ԻԹ. Մինչդեռ Մարկելլոս, վայրագ 'ի բնէ և ահարկու, սրտմտութեամբ և հրացայտ դիմաք և աչօք զայսոսիկ և զայսպիսի բանս խօսէր, ատենակալք ծերակուտին կային տխուր. ոչ եթէ ծանօթ և սովորական վեհերոտութեամբն 'ի հանապազորդ վտանգաց, այլ 'ի նոր և 'ի խորագոյն արհաւիրս ընկղմեալ 'ի տեսիլ զինուցն և զօրաց. և նորին իսկ Թրասեայ պատկառելի կերպարան յաչս նոցա նկարէր։ Էին ևս՝ որք խնայէին 'ի Հելուիտիոս, որում վասն անսպարտ խնամութեանն առաջի կայր կրել պատուհաս. իսկ Սգրիպպինեայ զինչ այլ յանցանք էին, բայց աղէտք հօրն. զի և նա անգթութեամբն Տիբերեայ տարապարտուց էր սպանեալ. և Մոնտանոսի առաքինասէր պատանւոյ ոչ զոք երգիծուցանէին տաղք, բայց զի հանձար նորա փայլէր 'ի նոսա՝ վարեցաւ յաքսոր։

Լ. Յայնժամ Եմուտ Ոստորիոս Սաբինոս դատախազ Սորանեայ, և սկսաւ նախ կշտամբել զնա վասն բարեկամութեանն ընդ Հռուփիլլեայ Պլաւտոսի, և վասն վարելոյ նորա փոխանակութեամբն բդեշխի յԱսիա

'ի սիրելութիւն ժողովրդեան քան յօդուտ հասա-
րակաց, տածելով հերձուածս 'ի քաղաքս։ Այսոքիկ
նորա վաղեմի յանցանք, իսկ ապա շռայլել նորա
զարծաթ 'ի քաւդեայս, յորում և զդուստր նորա
յանցաւորակից հօրն ցուցանէր։ Եւ արդարև Սերուի-
լիա, զի այս անուն էր դստերն, ըստ անփորձ տիոցն
առ սէր հօր իւրոյ 'ի սնոտիսն զառածեալ էր, այլ
ոչ այլ ինչ հարցեալ՝ բայց միայն զազատութիւն տան
իւրոյ 'ի վտանգէ, և թէ ողոքելոց էր Ներոն, կամ
թէ ծերակոյտն դժընդակ ինչ տալոց էր վճիռ։ Կոչե-
ցաւ Սերուիլիա յատեան ծերակուտին, և կացին ա-
ռաջի բդեշխից հանդէպ միմեանց հայրն ծերունի, և
դուստրն քսանամեայ, Անտիոսի Պոլլիոնի աքսորելոյ
հարսն անմխիթար՝ այն ինչ այրիացեալ, ոչ իշխելով և
ոչ յերեսս հօրն հայել զի մի՛ զվտանգ նորա ծանրա-
ցուսցէ։

ԼԱ. Ի հարցանել դատախազին՝ թէ ո՞չ ապաքէն զո-
ժիտ իւր և զքառամանեակ խլեալ յուլանէն և վա-
ճառեալ էր, առ 'ի ծախել զգինսն 'ի հմայս Քաւ-
դեայց, նուաղեալ անկաւ նա 'ի գետին. և յետ երկա-
բաձիգ ողբոց և լռութեան, փարեալ զբազնաւ և ըզ-
սեղանով, ասէ. Ոչ առ դիս անողորմս կարդացի, և ոչ
չարիս ումեք մաղթեցի. ոչ այլ ինչ չարաբաստիկ աղո-
թիւք հայցեի յերկնից՝ բայց զի դու, Կեսար, և դուք
Հաբք ատենակալք, շնորհեսջիք զկեանս հօր իմում
բարեալաւի. առ այս զականս իմ պատուականս և ըզ-
ձորձս և զօրէնս պատուոյ ետու 'ի բաց, զի և զարիւն
իմ և զկեանս տայի՝ եթէ խնդրէին։ Դոքա, անծա-
նօթքդ ինձ յառաջագոյն արք, տացեն համար զանուա-
նէ և զարուեստէ իւրեանց. իսկ ես ոչ այլազգ, բայց
ընդ դիս զինքնակալդ կոչեցի յօգնութիւն, յանգէտս
հօր իմոյ հիւթի և թշուառի. եթէ յանցանք այսոքիկ
ինչեն, ես միայն յանցաւոր գտանիմ։ —

ԼԲ. Եւ մինչդեռ խօսէրն զայսոսիկ Սերուիլիա, 'ի
վերայ էած Սորանոս. Ոչ ընդ իս եկն դա 'ի գաւառ
կուսակալութեան իմոյ, և ոչ Պլաւտոսի մարթ էր ճա-
նաչել զդա վասն մանկութեան տիոց դորա, և ոչ յան-
ցանաց առն իւրոյ էր դա գիտակից. վասն կարի հայ-
բասիրութեանն եթէ գտանի դա պարտաւոր. բաժա-

նեցէք զդատ դորա, և կրեսցէ զիւրն միայն որ ինչ և իցէ պատուհաս։ Այսց և դիմեաց գիրկս արկանել դստերն՝ որ դիմէր առնա, մինչև նուիրակաց 'ի մէջ նոցա մտեալ՝ արգելուլ զերկաքանչիւր։ Յայնժամ տեղի տուաւ վկայից. և որչափ անգթութիւն ամբաստանութեանն շարժեալ էր զատեանն 'ի գութ, նոյնչափ Պ. Եգնատեայ վկայութիւն շարժեաց զնա 'ի զայրոյթ. քանզի սա բարերարեալ 'ի Սորանեայ, իսկ յայնժամ կաշառակուրծ 'ի կորուստ բարեկամին, ստոյիկեան կերպարանս յանձին բերէր, 'ի ձև և 'ի դէմս զպատկեր լաւութեան կեղծաւորեալ, այլ 'ի սրտէ հաւատադրուժ և չարանենգ՝ զագահութիւն և զպղծութիւն իւր թագուցանէր. այլ 'ի մերկանալ զայնոսիկ արծաթոյ, եկաց նա 'ի խրատ զգուշութեան՝ ոչ միայն 'ի ժանտից և յանօրէնութիւնս թաթաւելոց, այլև ի կեղծաւոր առաքինեաց և 'ի նենգաւոր բարեկամաց։

ԼԴ. Ի նմին աւուր օրինակ առաքինութեան եկաց Կասիոս Ասկլեպիոդոտ, այր երևելի Ճոխութեամբ 'ի բիւթանացիս. որ որպէս մեծարէրն զՍորանոս 'ի պայծառութեան նորա, նոյնպէս և յանկանել նորա՝ ոչ ելիք զնա. վասն որոյ կապտեալ յամենայն գոյից՝ վարեցաւ յաքսորս, այսպէս դիցն զբարւոյ և զչարի ցուցեալ միանգամայն զօրինակ։ Եղանակ մահուն Թրասեայ և Սորանեայ և Սերուիլեայ թողաւ նոցին ինքեանց յընտրութիւն. Հելուիտիոս և Պակոնիոս աքսորեցան յԻտալիոյ. Մոնտանոս 'ի շնորհս հօր իւրոյ եկեաց, զրկեալ յամենայն աւագութեանց։ Իսկ Եպրիոսի և Կոստուտիանեայ, փոխանակ ամբաստանութեանց նոցա, տուան մէն միում յիսուն բիւր սեստերտ, և Ոստորիոսի հարիւր և քսան բիւր, հանդերձ պատուով գանձապետութեան։

ԼԴ. Թրասէաս կայր յայնժամ 'ի պարտէզս իւր, ուր գանձապետ բդեշխին յղեցաւ ընդ երեկս. ակումբ մեծ արանց և տիկնաց երևելեաց ժողովեալ էր անդ 'ի լուր իմաստասիրաց, մանաւանդ Դեմետրեայ շնական աղանդոյն իմաստասիրի. և որպէս էր գուշակել 'ի դիմաց նորա և 'ի բանից ինչ լու ի լու ասացելոց, զբնութենէ հոգւոյ և զբաժանմանէ նորա 'ի մարմնոյ առ-

ներ խնդիր։ Եւ ահա Դոմիտիոս Կեկիլիանոս մի'ի մտե-
ցիմ բարեկամաց նորա հասեալ անդր, պատմեաց որ
ինչ'ի ծերակուտին սահմանեալ էր վասն նորա։ Ամե-
նեքեան՝ որ անդն կային՝ սկսան լալ և բողոքել. բայց
Թրասէաս ստիպեաց զնոսա փութալ ելանել'ի բաց,
և մի՛ վտանգել զկեանս իւրեանց ընդ իւր. և Աբրիայ՝
որ ըստ օրինակի մօր իւրոյ կամէր մահակից լինել առն
իւրում՝ խրատ ետ պահել զկեանս իւր, և մի՛ զդուստր
իւրեանց թողուլ որբ անօգնական։

Ա. Եւ ապա ել'ի գաւիթ տանն, ուր եհաս առ
նա գանձապետն, և եգիտ զնա գոգցեալ յուրախու-
թեան՝ վասն Հելուիտեայ փեսայի իւրոյ յաքսոր ևեթ
դատապարտելոյ 'ի սահմանաց Իտալիոյ. և 'ի լսել
զմիւս ծերակուտին՝ ետ մուծանել զՀելուիտիոս և
զԴեմետր առ իւր, և զզարկս երկոցունց բազկացն
միանգամայն մատոյց առ նոսա հատանել. և 'ի հոսել
արեանն՝ սրսկեալ անտի ընդ երկիր, կոչեաց զգանձա-
պետն մերձ առ ինքն, և ասէ. Քաւեսցուք Դիոսի Ա-
զատչի. լուր պատանի դու, իցէ թէ շրջեսցեն դիք
զդուշակութիւն իմ; բայց ծնեալ ես դու 'ի ժամա-
նակի՝ յորում պարտ է քեզ արիանալ ըստ օրինակի
առաքինեաց։ — Եւ ապա 'ի յամելոյ մահուն չարա-
լուկ, դարձաւ 'ի Դեմետր....

Պակասէն հայորդ։ փոբեգրոյս։

Գլխակարգութիւն գրոցս։

Ա. Կարքեդոնացւոյ ուրուն ցնորք, որպէս թէ գտեալ զդանձս դշխոյին Դիդէի, և Ներոնի հաւատալ այնմ։

Բ. Ներոնի արձակել նաւս 'ի խնդիր գանձուն. քերթողաց և Ճարտասանից ելևելս առնել զիրերօք 'ի հռչակ յաջողութեանն մեծի։

Գ. Ծախք 'ի յոյս ցնորական գիւտիցն կանխեալք. և ընդունայն հետազօտութիւնք։

Դ. Ներոնի ելանել 'ի Թատր հնգամեակ խաղուց. դրուատիք ժողովրդեան։

Ե. Զինուորաց առնուլ կայս 'ի մէջ հանդիսատեսից. լրտեսութիւն և պատուհասք։ Վեսպասիանոսի վտանգ 'ի նիրհելն։

Զ. Մահ Պոպպէի. դիակն նորա զմուսեալ՝ դնի 'ի շիրիմ Ցուլեանց։ Ներոն առնէ 'ի վերայ նորա Ճառ դամբանական։

Է. Ը. Ներոնի առնել նամակաւի առ Ծերակոյտն ընդդէմ Կասիոսի և Սիլանոսի։ Լեպիդա, կին Կասիոսի, մօրաքոյր Սիլանեայ, դատափետի ընդ նոսա։

Թ. Կասիոսի աքսոր 'ի Սարդենիա կղզի։ Սիլանոս դատապարտի յաքսոր, և սպանանի 'ի միոջէ 'ի հարիւրապետաց՝ արիաբար պաշտպանեալ անձին։ Լեպիդայ դատ 'ի կայսր առնի ապաստան։

Ժ. Լ. Անտիստիոս Վետոս ամբաստանի յումեմնէ 'ի ձերբաղատիցն։ Պոլլուտիա դուստր նորա, այրին Հռուբելլեայ Պլաւտոսի, աղերսէ զՆերոն վասն հօրն, և չլինի լսելի։

ԺԱ. Վետոս և դուստր նորա, և Սեքստիա սկեսուր իւր, լինին անձնամահ 'ի միասին, հատեալ զերակս իւրեանց։ Ցեսյուղարկաւորութեան նոցա Ծերակոյտն դատապարտէ զնոսա 'ի պատուհաս, և Ներոն յընտիր առնէ նոցա զօրինակ մահուն։

ԺԲ. Աքսորի Լ. Գալլոս բարեկամ Փենեայ և Վետոսի։ Մայիս և յունիս ամիսք կոչին յանուն Կլաւդեայ և Գերմանիկոսի։

ԺԳ. Մրրիկք և ժանտ ախտք. զօրաժողով 'ի նարբոնեանն Գալլիա, յԱսիա և յԱֆրիկէ։ Ներոն քառասուն բիւր սեստերաս տայ քաղաքին Լուգդունի հրկիզելոյ։

ԺԴ. ԺԵ. Պ. Անտէոս և Ոստորիոս Սկապուլա ամբաստանին յԱնտիստիոսէ Սոսիանոսէ աքսորելոյ, և ստիպին անձնամահ լինել։

ԺԶ. Հարկ մասենագրին պատմելոյ այնքան մահուանս հանդուգնապիսս և անընդդիմամարտս։

ԺԷ. Աննէոս Մելլա հայր Լուկանոսի, Կերիալիս Անիկիոս, Հռուսիոս Կրիսպինոս, և Կ. Պետրոնիոս բարեկամ Ներոնի, հետզհետէ մատնին 'ի կորուստ։

ԺԸ. Բարք Պետրոնիոսի. ամբաստանել նորա 'ի Տիգելլինեայ առ Ներոն։

ԺԹ. Մահ Նորա մանրապատում. պատմագրել Նորա զամենայն խայտառականս Ներոնի, և յղել առ նա կնքեալ զնկարագիր վարուց Նորա։

Ի. Աքսոր Սիլիայ, մահ Մինուկիոսի Թերմեայ։

ԻԱ. Ներոն խորհի կորուսանել զՊետոս Թրասէաս, և զԲարէաս Սորանոս. պատճառք ատելութեան Նորա ընդ Թրասեայ։

ԻԲ. Ճառ դատախազի Նորա Կոստուտիանոսի Կապիտոնի։

ԻԳ. Պատճառք անկանելոյ Սորանոսի 'ի ընդհաց, ամբաստանեալ յՈստորիոսէ Սաբինոսէ։ Ներոն սահմանէ դատապարտել զերկոսին ամբաստանեալս 'ի ժամ ընդունելոյ Տիրիթի զԹագ Հայաստանի։

ԻԴ. Թրասէաս խորհի ընդ բարեկամս իւր, փորձել թէ ոչ զպատասխանատուութիւն յատենի ծերակուտին։

ԻԵ. ԻԶ. Պատճառք 'ի դէմս ածեալք 'ի հակառակէն. Հռուստիկոս Արուլենոս, հաղարապետ ժողովրդեան, յառաջ մատչի զդէմ ունել վճռոյ ծերակուտին։ Թրասէաս չառնույանձն զաշնուական բարեխօսութիւնն անօգուտ։

ԻԷ. Ծերակոյտն գումարի շրջապատեալ 'ի զօրաց։ Գիր Ներոնի, յորում յանդիմանէ՝ առանց անուանելոյ զոք՝ զվերջանալ ատենակալաց ծերակուտին 'ի պարտուց պաշտաման իւրեանց։

ԻԸ. Եպրիոս Մարկելլոս ամբաստանէ սաստկապէս զԹրասէաս, յաւելեալ ընդ նմա զՀելուիտիոս Պրիսկոս, զՊակոնիոս Ագրիպպինոս, և զԿուրտիոս Մոնտանոս։

ԻԹ. Արհաւիրք ծերակուտին յաճախեն 'ի տեսիլ զօրացն և զնուց։

Լ. Ոստորիոս ընդդիմաբանէ Սորանեայ և դստեր Նորա Սերուիլեայ, ամբաստանեալ զնոսա 'ի հարցուածս ըստ։

ԼԱ. Սերուիլեայ պատասխանիք։

ԼԲ. Սորանոս յանձն առնու զամենայն, միայն զի դուստր իւր ապրեսցի։ Անարգ մատնութիւն ատոյիկեան սուտանուն իմաստասիրի։

Պ. Եգնատեայ Կելերի։

ԼԳ. Հաւատարմութիւն Կասիոսի Ակլեպիոդոտի բիւթանացւոյ, և պատուհասել Նորա յաքսոր։ Թրասէաս, Սորանոս, և Սերուիլիա դատապարտին 'ի մահ, Հելուիտիոս և Պակոնիոս 'ի տարագրութիւն։ Շնորհի ազատութիւն Մոնտանոսի՝ հրաժարելով Նորա յամենայն աւագութեանց։ Վարձք ամբաստանողաց զԵպրիոս զԿապիտոն և զՈստորիոս։

ԼԴ. Վճիռ ծերակուտին ազդեալ Թրասեայ 'ի զբուցատրել Նորա զէութենէ հոգւոյ ընդ Դեմետրեայ իմաստասիրի։ Սիրել Նորա զբարեկամս իւր ելանել 'ի բաց, և խափանել զԱրրիա զկին իւր՝ որ կամէրն լինել ընդ նմա մահակից։

ԼԵ. Տալ Նորա հատանել զերակս իւր առաջի Հելուեատեայ փեսայի իւրոյ, և Դեմետրեայ։ Առնել Նորա քաւութիւն Դիոսի Ա. զատչի արեամբ իւրով։

Եւ ունին գիրքս այս զանցս կատարածի 818 ամին Հռովմայ, և զմասին ինչ յաջորդ տարւոյ, յորս կացին բդեաշխք։

Կ. Սուետոնիոս Պաւլինոս, և Լ. Պոնտիոս Տելեսինոս։

Ա. Հ. 819.

Ա. Ք. 66.

ՅՈՒՅԱԿ

Գրոց և գլխակարգուրեանց մատենիս

Գիրք Ա 5
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 59
Գիրք Բ 63
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 114
Գիրք Գ 118
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 165
Գիրք Դ 170
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 221
Գիրք Ե 225
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 268
Գիրք Զ 271
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 296
Գիրք ԺԲ 298
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 337
Գիրք ԺԳ 341
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 381
Գիրք ԺԴ 384
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 424
Գիրք ԺԵ 428
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 474
Գիրք ԺԶ 478
Գլխակարգութիւն բովանդակելոցն 'ի նմա . . . 498

		Վրիպակ	Ուղիղ
9	8	Տեբերի	Տիբերի
22	29	զորդի իւր	զորդի իւր զԴրուսոս
28	16	հաւոյն	հանոյն
42	12	Տաւրոս	Տաւնոս
43	26	քաղաքացւոց	քաղաքացւոյ
55	38	Աւսինիոս	Ասինիոս
94	31	հաւոյ	հանոյ
109	13	զՊլանկինա	զՊլանկինայ
155	29	Պերպերնայ	Պերպերնայ՝
170	17	Վալսինիա	Վուլսինիա
219	23	Կուպպորեայ	Կուպտորեայ